

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԱՐՊԻՍ Լ. ՆԱԶԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ԹԻՒ 14

**ՎԿԱՅԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**

ԳԻՐԷ Լ

**Պատրաստեց՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ**

**Պէյոուք
2010**

Խմբագիր՝

ԳԵՈՐԳ ԵԱԶՈՇԵԱՆ

Հանակարգչային շարուածք եւ էջադրում՝

ՍԱԳՕ ՕԳՆԱՅԵԱՆ

————— hiskahadian@hotmail.com —————

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1915ի Հայկական Ցեղասպանութեան մասին լաւ պատկերացում ունենալու համար, պէտք է անպայման կարդալ այս մասին գրուած յուշագրութիւնները: Անոնք ընդհանրապէս տեղեկութիւններ կու տան բռնագաղթէն առաջ տիրող տնտեսական եւ ընկերային կացութեան, բռնագաղթի ընթացքին, ինչպէս նաեւ զինադադարին յաջորդող հանգրուանին մասին:

Բռնագաղթի եւ աքսորի ճանապարհներուն մեծ մասը կը յանգին Հալէպ եւ Տէր Ջօր կամ անոնց շրջակայքը: Անոնք որոնք ճողոպրած են եւ չեն քշուած Տէր Ջօր՝ կը նկատուին բախտաւոր, որովհետեւ անոնցմէ շատերը վերապրեցան: Ասոնք տարուեցան Հալէպի գիւղերը, Համա, Հոմս ինչպէս նաեւ Տամասկոս, նոյնիսկ Հաուրան եւ ներկայիս Յորդանանի մէջ գտնուող ճարաշ, Իրպիտ եւ աւելի հեռուները...:

Արեւմտեան Հայաստանէն (Սեբաստիա, Խարբերդ, Արաբկիր, Շապին Գարահիսար, Բաբերդ, Եւայլն) բռնագաղթուածներն իջան հարաւ՝ մինչեւ Հալէպ կամ մօտակայքի գիւղերը, իսկ մաս մը տարագրուեցաւ Տէր Ջօր: Ասոնց տղամարդիկը տեղահանութենէն առաջ ձերբակալուեցան ու բանտարկուեցան կամ աշխատանքային գումարտակներ տարուեցան եւ ապա բոլորն սպաննուեցան: Շատ քիչեր միայն հրաշքով ազատեցան: Իսկ կիները, ծերերը եւ երախաները շատ վատ պայմաններու տակ աքսորուեցան ու անմարդկային աներեւակայելի չարչարանքներու ենթարկուեցան: Շատ քիչեր վերապրեցան:

Նման եւ աւելի խիստ պայմաններու տակ աքսորուեցան Պոլիսէն եւ անոր շրջակայքէն հայ մտաւորականներ, արհեստաւորներ, վաճառականներ եւ ուրիշ զբաղումներու տէր շատ հայեր: Ասոնք նոյնպէս երկար ճամբայ անցան: Յարաբերաբար աւելի նուազ չարչարանքներու

ենթարկուեցան Կիլիկիայէն բռնագաղթուածները, որոնք իրենց առջեւ աւելի կարճ ճանապարհ ունէին Դալէպ հասնելու համար: Պոլիսէն բռնագաղթուածներուն մասին լաւագոյն տեղեկութիւնները կու տան Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեանի «Հայ Գողգոթան» եւ Երուանդ Օտեանի «Անիծեալ Տարիներ»ը, որոնց պատումները տարբեր աշխարհագրական ճանապարհներով կ'ընթանան: Վարդապետը կը յաջողի փախուստ տալ եւ ետդարձ ընել երբ կը հասնի Ամանոսի լեռները, իսկ Օտեան կը ճաշակէ Տէր Զօրի բոլոր դառնութիւնները՝ կեանքը պահպանելու համար նոյնիսկ իսլամանալու հարկադրուելով:

Ընդհանրապէս աչքառու եւ նկատելի է, թէ անոնք որոնք սկիզբէն չեն վստահած թուրքին եւ փախուստ տալով կամ զինեալ պայքար մղելով վերաբերած են անոր հետ, միշտ յաջողած են փրկուիլ կամ նուազագոյն կորուստներ ունենալ, իսկ անոնք որոնք միամտաբար հաւատք ընծայած են թուրքին կեղծ խոստումներուն, զոհ գացած են անոր նենգութեան:

Տարագրութեան ճամբուն վրայ հայ պատանիներ, տեսնելով թէ իրենց առջեւ ստոյգ մահ է, բաժնուելով իրենց սիրելիներէն, որդեգրուած են թուրք կամ քիւրտ աղաներէ կամ աշխատած են անոնց մօտ: Ասոր ամենէն պերճախօս վկայագրութիւնն է Արամ Դայկազի «Չորս Տարի Քիւրտիստանի Լեռներուն Մէջ» երկը, որ մանրամասն տեղեկութիւններ կու տայ - բացի իր անձնական կեանքէն - իր շրջապատին եւ հոն գտնուող մարդոց մասին:

Տարագրութենէն բացի, կայ նաեւ ուրիշ պատկեր մը՝ Արեւմտահայաստանի հիւսիսէն եւ մանաւանդ Չմշկածագէն կարգ մը հայոց կամաւոր տարագրութիւնը դէպի Երզնկա եւ Կարին, ապա Կովկաս: Այս հայերը, տարագրութենէն ազատելով, ապաստանած են Տերսիմի զազա քիւրտերուն գիւղերը՝ իրենց քիւրտ բարեկամներուն մօտ, որոնք մօտաւորապէս մէկ տարի, մինչեւ 1916ի աշունը, իրենց տուններուն մէջ բարեացակամօրէն հիւրասիրած են զանոնք: Անցնելով ռուսերուն եւ Զօրավար Անդրանիկի զօրքերու գերակշռին տակ գտնուող Երզնկա եւ ապա Կարին, անոնք ազատած են:

Շատ քիչեր, որոնց ամուսիները զինուորագրուած են եւ կամ լաւ արհեստաւորներ եղած են եւ որոնց կարիքն ունէին թուրքերը, մնացած են իրենց քաղաքներուն եւ գիւղերուն մէջ: Ասոնք յարաբերաբար նուազ

տառապանքներ կրելով վերապրած են նուազագոյն կորուստներով, սակայն վերջաւորութեան գաղթած են արտասահման:

Տրուած ըլլալով, որ Մեծ Եղեռնի սերունդն այս աշխարհէն արդէն մեկնած է, նոր յուշագրութիւններու արձանագրումը ուղղակի վերապրողներէն՝ անհնար դարձած է, հետեւաբար եւ արդէն արձանագրուածները, մասնաւորապէս՝ հրատարակուածները ձեռք կը բերեն շատ կարեւոր նշանակութիւն որպէս պատմական մեծարժէք վաւերագրութիւններ, Հայոց Ցեղասպանութեան անհերքելի փաստագրութիւններ, աշխարհին ու յատկապէս թուրք ցեղասպանի ճակատին դրոշմուած անարդարութեան անջնջելի խարաններ:

Հայկական Ցեղասպանութիւնն ուսումնասիրողները չեն կրնար շրջանցել այս յուշագրութիւնները, քանի որ յուշագրողները կամ իրենց յուշերն ուրիշներուն պատմողները անձամբ ապրած են Եղեռնը եւ, վերապրելով, գրի առած կամ գրի առնել տուած են իրենց եղեռնապատումները:

Ժողովածուն կ'ընդգրկէ ոչ միայն սովորական պատումները, այլեւ անոնց՝ գեղարուեստական գրականութեան տեսքով անդրադարձները, քանի որ վերջիններս եւս վաւերագրութիւններ են՝ թէկուզ արտայայտուած գրականութեան միջոցով:

Ներառած ենք այն հրատարակութիւնները, որոնք կը վերաբերին 1894-1923 ժամանակահատուածին: Արդարեւ, Հայոց Ցեղասպանութիւնը այս երեսնամեակին ընդգրկեց տարբեր փուլեր, ժամանակային աւելի ճշգրիտ տեսքով՝ 1894-1896 տարիները (սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի կազմակերպած ջարդեր), 1909-ի Ապրիլը (Կիլիկիոյ եւ Հալէպի վիլայէթի արեւմտեան հայաբնակ տարածքներու հայութեան ջարդեր), 1915-1918 (Մեծ Եղեռնը), 1918-1921 (Արեւելեան Հայաստանի տարածքին քեմալականներու կազմակերպած ջարդերը), 1920-1922 (Կիլիկիոյ հայութեան երկրորդ բռնագաղթը) եւ 1922-ը (Զմիւռնիոյ [Իզմիր] աղէտը): Հայկական Ցեղասպանութիւնը շարունակուեցաւ յաջորդ տարիներուն եւ տասնամեակներուն, մինչեւ այսօր, բայց արդէն ուրիշ ձեւերով՝ հայութեան մնացորդացի արտաքսում հայրենի տարածքներէն, բռնի իսլամացում, թրքացում կամ քրտացում, հայկական ճարտարապետական կոթողներու հետեւողական եւ պետականօրէն կազմակերպած

ոչնչացում, զանազան տեսակի բռնություններ Թուրքիոյ Հանրապետութիւն կոչուող պետութեան տարածքին ապրող հայութեան նկատմամբ, Հայաստանի վերանկախացած հանրապետութեան շրջափակում, հոգեբանական-տեղեկատուական պատերազմի մղում եւ այլն, եւ, ի վերջոյ, որեւէ ցեղասպանութեան վերջին փուլը հանդիսացող՝ ցեղասպանութեան ուրացում եւ ժխտում, նաեւ՝ թրքական պետութեան հետեւողական պայքար Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման դէմ:

Այս գիրքը կ'ամփոփէ իբրեւ առանձին հրատարակութիւն կամ հրատարակութեանց առանձին մաս կամ հատուած լոյս տեսած եղեռնապատումներու շուրջ 90 գիրքեր, որոնք այս ժողովածուին մէջ տեղադրուած են ըստ կարելւոյն, իրենց առաջին հրատարակութեան ժամանակագրական յաջորդականութեան կարգով, ի բացառեալ Արամ Հայկազի «Չորս Տարի Քիւրտիստանի Լեռներուն Մէջ» (էջ 229), որ էջադրական սխալ է: Գիրքերուն զգալի տոկոսը լոյս տեսած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն, ոմանք՝ Կիլիկիոյ Աբ. Աթոռի միաբան, լուսահոգի Ներսէս արք. Բախտիկեանի նախածնունդէն հրատարակուած «Ապրիլեան Եղեռնի մատենաշար»ի ծիրին մէջ: Ուրիշներ լոյս տեսած են բնօրրաններու պատմութեանց նուիրուած հատորներու մէջ: Կարգ մը գիրքերու պարագային, որոնք իրենք իսկ բազմաթիւ, երբեմն բազմահարիւր եղեռնապատումներու հաւաքածոներ են (ինչպէս, օրինակ, բազմավաստակ տիկ. Վերժինէ Սվազլեանի «Հայոց Ցեղասպանութիւն . Ականատես Վերապրողների Վկայութիւններ», Երեւան, 2000, կոթողային հատորը), բաւարարուած են ամփոփելով պատմողներուն կամ յուշագրողներուն պատումները՝ ըստ անոնց բնօրրաններուն կամ տարածաշրջանին, երբեմն նշելով միայն վերապրածներուն անունները, ծննդեան թիւերն ու բնօրրաններուն անունները: Հասկնալի է, որ այլապէս ստիպուած պիտի ըլլայի վերաշարադրել արդէն իսկ սեղմ միւթը, ինչն անհիմաստ պիտի ըլլար: Կեդրոնացած են վերապրողներու եղեռնապատումներուն վրայ՝ հպանցիկ ակնարկ նետելով նախաեղեռնեան ու յետեղեռնեան շրջաններու անոնց կեանքին վրայ, քանի որ վերջիններս իմ հետաքրքրութիւններու ծիրին մէջ չեն մտներ անմիջականօրէն: Բազմածեւութենէ խուսափելու նպատակով, տարբեր աղբիւրներու մէջ հանդիպող

միեւնոյն տեղանուններն ու անձնանունները միօրինականացուցած են: Տեղանունները հայացուցած են, քանի որ թուրք թշնամիի ցեղասպանութեան զոհ եւ անոր հակահայկական քաղաքա-կանութեան թիրախ դարձած են նաեւ հայկական տեղանունները, զորս մենք պարտաւոր ենք վերականգնել ու միայն այդ ձեւերով գործածել զանոնք:

Ժողովածուին մէջ տեղ-տեղ կը հանդիպին խմբագիրին ծանօթագրութիւնները՝ փակագիծերու մէջ, «խմբ.» նշումով ուղեկցուած: Խմբագիրը երբեմն կատարած է լրացումներ՝ փակագիծերու մէջ:

Շնորհակալութիւն կը յայտնեն ազգային բարերար Կարպիս Լ. Նազարեանի անունը կրող հրատարակչական հիմնադրամին, սոյն հատորի հրատարակութեան առիթով: Ինչպէս նաեւ շնորհակալութիւն կը յայտնեն «Սփիւռք» պարբերաթերթի անձնակազմին, որ սիրայօժար կերպով տրամադրեց թերթի գրադարանին մէջ գտնուող գիրքերը եւ օգտակար խորհուրդներով նպաստեց այս աշխատանքին:

Ծրագրած են յաջորդական ժողովածուներով ներկայացնել զոնէ այն եղեռնապատումները, զորս ընթերցելու հնարաւորութիւն կու տայ տարբեր լեզուներու իմ իմացութիւնը: Շատ շնորհակալ կ'ըլլամ, եթէ ուրիշներ եւս կատարեն նման աշխատանքներ, յատկապէս այն լեզուներով հրատարակութեանց, որոնք հասու չեն ինձի:

Այս ժողովածուն պարզապէս փորձ մըն է ներկայացնելու Հայկական Եղեռնապատումի գրաւոր արձագանգներուն համապատկերը, սակայն առանց մերձենալու նեղ մասնագիտական սեղմումներու:

Յարութիւն Իսկահատեան

**Մխարզիս] Մ. Ծոցիկեան, «Հայկականք», րպ.
«Երիտասարդ Հայաստան», Փրավիդենս, 1916,
փոքր չափի 207 էջ:**

**1) «Հայ պինտորին բաժինը»,
էջ 1-37:**

Ռուբէն Պալաքեան 1914ին օսմանեան բանակին մէջ է: Իբր պեղութեան հայ քաղաքացի, ան պարկեշտօրէն կը ծառայէ օսմանեան բանակին մէջ: Մակայն, ակներու է թորք սպաներուն եւ պինտորներուն վապ վերաբերմունքը անոր հանդէպ:

Հայաստանի հողին վրայ իրար դէմ ելած ռուսական եւ թրքական բանակները ամենէն կարողի ճակատամարտը կը մղէին: Սպանութեան, բռնաբարումներու, ասարառութեան եւ ամէն տեսակ վայրագ խժոճութեան չափն ու սահմանը անցած էր: Ռուբէն մասնակցած էր պատերազմին ու հմուտ վարպետ դարձած պատերազմի «արհեստին» մէջ: Ներկայ պատերազմին՝ ան ակամայ սրիպուած էր իր արհեստիներուն դէմ մարտնչի, քանզի գիտէր, թէ ռուսական բանակին մէջ բազմաթիւ ռուսահայտակ հայեր կային: Դասալիք ըլլալ բնաւ չէր թելադրեր ինքզինքին, սակայն առանց այդ պարճառին ալ եթէ պինտորութենէն փախչէր, իրատնք ունէր, որովհետեւ թորքերը շատ գէշ կը վարուէին իրեն եւ ընդհանրապէս բոլոր հայ պինտորներուն հետ:

Բռուն կռիւներու ընթացքին Ռուբէն ուսէն կը վիրատրուի: Կը պարպուի, թէ վիրատրուած էր հակառակորդի բանակին մէջ եղող հայ պինտորէ մը, որ երբ կը մօտենայ իրեն եւ հայ ըլլալը կը գիտնայ, ներողութիւն կը խնդրէ:

Ռուբէն Կարնոյ պինտորական հիւանդանոցներէն մէկը կը փոխադրուի: Հոն պզտի կերպով կը հասկնայ եւ կը տեսնէ թորքերուն խորականութիւնը: Անոնք լաւ հոգ կը տանէին թորք վի-



րատրներուն, իսկ հայերը աննկատ կը ձգէին: Կար ատելի սարսափելին: Ռուբէն ականատես կ'ըլլայ հայ վիրատր զինուորի մը թունատրուելուն թուրք բժիշկներու կողմէ: Ռուբէն կը մտադրէ փախչիլ: Երեկոյ մը իր մտադրութիւնը կ'իրականացնէ եւ կ'անյայտանայ Կարնոյ փողոցներուն մէջ: Երկու ժամ թափառելէ ետք, ան հայու մը տունը ապաստան կը գտնէ, սակայն, հետապնդուելու վախէն, չի կրնար այստեղ երկար մնալ եւ ուրիշ տուն մը կը փոխադրուի: Այս նոր տան մէջ կը համակրի Եփրատ անունով հայ աղջկայ մը, որու կ'իմացնէ դէպի Կովկաս փախչելու իր մտադրութիւնը: Տանտէրը գիտի թահանան էր: Ռուբէն եւ Եփրատ կը նշանուին:

Գիտէն ուրիշ երկու հայ երիտասարդներու հետ միասին, Ռուբէն եւ Եփրատ ճամբայ կ'ելլեն դէպի Կովկաս: Բոլորն ալ մտադրած են կամատր դառնալ: Ճամբուն վրայ՝ դէպի Կովկաս փախչող հայ գաղթականներու խումբի մը կը հանդիպին: Եփրատ այս խումբին մէջ գթութեան քոյր կը դառնայ եւ հիւանդները կը խնամէ, իսկ Ռուբէն իբր բժիշկ հոգ կը տանի անոնց:

Խումբը Կովկաս կը հասնի առանց որեւէ վտանգի: Անոնք կ'այցելեն Թիֆլիսի Վանքի տաճարը, Շուշանիկի բանտը, Խոջիվանքը, հայոց կուսանոցը, դպրոցներ եւ ընթերցարաններ: Կարճ ժամանակ ետք Ռուբէն եւ Եփրատ Թիֆլիսէն դէպի գործունէութեան դաշտ՝ ռազմաբեմ կ'ուղղուին: Կամատրներու խումբին հետ կը մտնեն Վան, ուր Ռուբէն եւ Եփրատ կ'ամուսնանան ու կը շարունակեն պաշտօնավարել:

2) «Երազ Մը», էջ 40-47:

Միսաք եւ Եսթեր պոյզը իրենց երկու պատկներով քաղաքին բոլոր հայոց պէս կը բռնագաղթուին: Երբ քիչ մը կը յառաջանան, փղամարդիկը կ'ինտրէն ու երախաներէն կը պատեն:

Կիներու կարաւանը կը հասնի տեղ մը, ուրկէ պէտք էր գետը անցնիլ: Ոստիկանները զիրենք լաստի մը վրայ կը հանեն: Լաստը ջուրերուն վրայ՝ ոստիկան մը կը փորձէ հայուի մը բռնաբարել: Այս իրարանցումէն յառաջացած շարժումին պատճառաւ, լաստին ծայրը գտնուող երկու կիներ իրենց երախաներով ջուրը կ'իյնան: Ոստիկաններն այս տեսարանը տեսնելով կը պուարճանան:

Ասոր վրայ՝ թուրք նստրիկանները կը սկսին աղջիկներ եւ կիներ բռնաբարել: Ապա իրենց սուրերը մերկայնելով, լաստին վրայ գտնուող «աւելորդ» կիները կը վիրաւորեն եւ ջուրը կը նետեն: Այս միջոցին, նստրիկան մը կը փորձէ Եսթերը բռնաբարել: Երբ դիմադրութեան կը հանդիպի, ան Եսթերի գիրկին կաթընկեր մանուկը առեւանգելով կը հեռանայ կարաւանէն քիչ անդին ու կը սպառնայ մանուկին գլուխը ջարդել: Երբ Եսթեր կը շարունակէ ընդդիմանալ, նստրիկանը, իրօք, երախային գլուխը կը ջարդէ: Հրէշն ապա կը մօտենայ Եսթերի միւս երախային: Մայրը յառաջ կը նետուի եւ կը գրկէ իր սիրասունը: Ոստրիկանը կը սպաննէ նաեւ Եսթերի երկրորդ զաւակը: Եսթեր խիզախ շարժումով մը կը նետուի, սուրը կը խլէ նստրիկանին ձեռքէն ու կը վազէ անոր ետեւէն, բայց վերջինս կը յաջողի գետնին գլուխը ջախջախուած երախայի դիակը Եսթերի երեսին շարժել: Եսթեր գետնին կը փռուի: Միւս նստրիկաններն ալ կը հաւաքուին: Անոնք կը թողուն Եսթերը, որպէսզի տանջուելով մեռնի:

Կարաւանը յոգնած եւ սպառած կը հասնի անապատ: Արդէն մէկուկէս ամիս անցած է: Ո՛չ ջուր կար, ո՛չ ալ ուտելու յարմար բոյսեր: Հիւծած եւ մաշուած Եսթերը խելագարի տեսք ունէր: Հիւանդները անդարման կը մեռնէին: Վերջապէս, Եսթեր ալ գետնին կը փռուի յաւիտենական քունով:

3) «Գերագոյն Բաղձանք», էջ 49-61:

1914ին, պարտերապմի ընթացքին, Բզնունեայ գաւառի գիւղերէն մէկուն մէջ տասը քաջեր կը դիմադրեն թուրքերու եւ քիւրդերու յարձակումներուն: Անոնց ղեկավարն էր Տրդատ Պահլաւունեանը, որ քանի մը թուրք եւ քիւրդ գետնին փռելէ ետք կը փախչի: Երեւէն արձակուած գնդակներէն մէկը կը դաչի անոր ու ան գետնին կ'իյնայ վիրաւոր: Թուրքերը կարծելով, թէ մեռած է՝ կը հեռանան:

Տրդատ վիրաւոր վիճակի մէջ կը պառկի գետնին, մինչեւ որ երեկոյեան հայերէն խօսակցութեան ձայներ կը լսէ: Նոյն գիւղի վերապրողներն էին, որոնց մէջ կը գտնուէր Տրդատի հայրը, որ անոր կ'իմասնէ իր մօր, կնոջ եւ զաւակներուն նահապակուիլը:

Բոլորը միասին կ'ողորմին դէպի Կովկաս: Ճամբան Տրդատի

հայրն ալ կը մեռնի խոնջած, սպառած, սովաբանջ ու ցրտահար: Աւելի առաջ երթալով, խումբը ամուսինը կորսնցուցած խելագար դեռատի աղջկայ մը կը հանդիպի: Երբ գեւրը կը հասնին՝ աղջիկն ինքզինքը ջուրը կը նետէ: Կը շարունակեն ճամբան եւ կը հանդիպին ձիատր հայ կամատրներու, որոնք վիրենք դէպի Կովկաս կ'առաջնորդեն:

Տրդատր կամատրներուն միանալու մեծ փափաք ունէր: Ան այս նպատակով Էջմիածին կը մեկնի, կը տեսակցի Վեհափառ Հայրապետին հետ (Պէտրոս Ե. Սուրբնեանց խմբ.), որ կը քաջալերէ վինք: Սակայն Տրդատր Պահլաւունեան ստացած վէրքին պատճառաւ կը հիանդանայ, կը փոխադրուի հիանդանոց, բայց ջուրով կ'ապաքինի եւ կամատրներուն կը միանայ:

4) «Ինքնապաշտպանութիւն», էջ 63-100:

Հայաստանի նշանատր քաղաքներէն մէկուն մէջ կ'ապրէր Արսէն Տէրեան անունով բարի ծերունի վաճառական մը, որ բոլորին կ'օգնէր: Արսէնն ունէր երեք դուստր եւ երկու որդի, որոնցմէ մէկը 1896ի դէպքերուն գոհ գացած էր: Գուսպրերն ամուսնացած էին:

Երբ 1914ին պատերազմը կը պայթի, թրքական կառավարութիւնը ծանր փութեր կը դնէ ժողովուրդին, մանաւանդ հայոց վրայ, ապա, իբր պատերազմական փութ, կը բռնագրաւէ խանութներուն մէջ եղած ապրանքները: Յելուպակ թութերը Արսէնի տունն ալ կը կողոպտեն, որով ան իր հարստութիւնները կը կորսնցնէ: Հակառակ ասոր, ան կը շարունակէ կարելի միջոցներով օգնել աղքատներուն:

Արսէն երկար ապրենէ ի վեր ոչ մէկ լուր առած էր իր դուստրերէն եւ փեսաներէն: Օր մը ան իր մէկ փեսայէն կը տեղեկանայ, թէ միւս երկու փեսաներն ու երկրորդ որդին մահացած են:

Օրին մէկը ան քիչ մը կաթ ու հաց առած, հայ որբեւայրիի մը տունը կ'երթայ: Տասնապետ ոստիկան մը հոն գալով կ'ուզէ կողոպտել վիրենք: Այրի կինը եւ ծերունի Արսէնը կը դիմադրեն ու կը յաջողին փասնապետին ձեռքէն ստրն ու արորճանակը խլել: Այրի կինը երբ կը պատրաստուի սպաննել ոստիկանը, Տէրեան արգելք կը հանդիսանայ, ու սուրը ոստիկանին վերադարձնելով խաղաղութեամբ կը ճամբէ պայն: Ծերունին այրի կինն ու անոր

երախսան իր փունը կը փանի:

Հայոց փուները խուփարկելու համար ոստիկաններ կը շրջին քաղաքին մէջ: Տէրեանի փունն ալ կու գան: Երբ վէնք չեն գտնուիր՝ ծերունին կը ծեծեն, պայն կը ձերբակալեն եւ բանտ կը փանին: Տասնապետը կ'ուզէ առեւանգել փան մէջ գտնուող կիները, որոնք փունէն դուրս կը փախչին: Ոստիկանն ու անոր ընկերակցող պաշտօնեան կ'առեւանգեն մանուկները: Տէրեանի կինը սաստիկ կերպով կ'ընդդիմանայ եւ կը պայքարի: Ոստիկանները վայրկեանապէս կը սպաննեն պայն: Անոնք սպաննուած կնոջ եւ ամուսնոյն գրպանները կը պարպեն, Տէրեանը քաշկոպելով կառավարչափուն կը փանին, կը բանտարկեն եւ սաստիկ կերպով կը խռովանգեն: Անոր մարմնէն վրայէն եղունգները աքցանով կը քաշեն: Տէրեան այս միջոցին ընդոստ կը յարձակի կառավարչական պաշտօնէսին եւ ոստիկանին վրայ ու սորաւոր հարուածով մը պաշտօնէսին աջ աչքը դուրս կը հանէ:

Տէրեան ուխտած էր մինչեւ վերջին վայրկեանը չընկճուիլ: Յաջորդ օրը, թուրք կրօնաւոր մը կը մտնէ իր խցիկը: Ան Տէրեանին կ'առաջարկէ թրքանայ, բայց կը մերժուի:

Բանտէն դուրս բերելով, ոստիկանները խարապանի հարուածներու փակ Արսէնը մշտապէս կը քալեցնեն: Արսէն չորս կողմը հայոց դիակներ կը տեսնէ: Ջարդը նոր կապարուած էր: Կը տեսնէ նաեւ թուրքի մը եւ թուրք վիճուորի մը դիակները, ու կը հասկնայ, թէ ընդդիմութիւն եղած էր եւ բոլորը գառնուկներու պէս չէին մորթուած:

Արսէն վեց կալանաւորներու խումբի մը մէջ կը գտնուէր: Չանոնք քաղաքէն դուրս կը հանեն ոստիկաններու հսկողութեամբ: Կը հասնին ամառի տեղ մը: Տասնապետը անոնց կը հրամայէ հողը փորել: Գերեզման պիտի փորէին: Արսէն Տէրեան համարձակութիւնը կ'ունենայ փասնապետին հարցնելու, թէ ո՞ր մեռելներու համար են այս փոսերը: Ոստիկանապետը սպառնազին կը գոռայ, բայց տեղէն չի կրնար ելլել օդի խմելու ի հետեւանք գլխապտոյտի պարճառով: Արսէն այս պահուն կը մտածէ ինքնապաշտպանութեան մասին, որ այլեւս անպարտաւորութի պարտականութիւն մըն էր իր եւ ընկերներուն կեանքը փրկելու համար: Արտով հայերն իրենց վրայ վաղուց ծանրացած մեղք մը

պիտի քաւէին: Տասնապետը եւ ոստիկանները գինով էին եւ կ'երերային: Տէրեան իր միտքը փափսալով կը յայտնէ ընկերներուն: Երբ ոստիկաններն իրենց սուրերը մերկացուցած կը յառաջանան, Տէրեանի ապդանշանով, երիտասարդները բահերով եւ բրիչներով կը խոյանան անոնց վրայ: Տասնապետը վիրատր վիճակի մէջ գետին կ'իյնայ: Ոստիկանները դէպի քաղաք կը փախչին:

Արսէն եւ երիտասարդները մեծապէս կ'ոգետորուին: Անոնք ծունկի կու գան եւ Աստուծոյ կ'աղօթեն: Արսէն կ'աղաչէ Աստուծո՛ւմէ, որ բոլոր հայերը ինքնապաշտպանութեան գաղափարով օժտուին:

Քիչ անդին անոնք մտրթուած հայոց դիակներ կը տեսնեն: Տէրեան եւ երիտասարդները բահերն ու բրիչները եւ մեռած տասնապետին արքճանակն ու սուրը իրենց հետ առնելով կը հեռանան: Մօտակայ լեռներուն վրայ, խումբ մը հայ երիտասարդներ վէնքերով ապաստան գտած էին: Իրենք ալ կ'երթան եւ անոնց կը միանան:

5) «Գաղապարտեալի Մը Վախճանը», էջ 101-112:

Թուրքերը հայերը բնաջինջ ընելու գործին անցած էին: Նախ՝ անոնց ազգային, կրթական ու կրօնական գլխատր դեկավարներէն սկսած էին: Վեղինակատր ազգային գործիչ Միհրդադ եւս ձերբակալուած էր Պոլսոյ մէջ: Ան բախտակից ընկերներու հետ շարունակ քշուած էր, ու քալելով հասեր էր քաղաք մը, որու բանտին խուցը նետած էին վայն:

Անցեալի դառնութիւնները մոռնալով, Միհրդադ եւ բոլոր հայերը Մահմանադրութեան վրայ գորգորացած էին սրտագին եռանդով: Իսկ այժմ բանտապահէն կ'իմանար, թէ իր ընկերները կախաղան բարձրացուած էին: Ջինք ալ կախաղան պիտի հանէին: Կը մտածէր կնոջ եւ զաւակներուն մասին: Աչքի առջեւ ունէր հայ ազգին դժբախտ կայութիւնը:

Երեք անձանօթներ իր խցիկը կը մտնեն Միհրդադը կախաղան առաջնորդելու համար: Ան կը քալէ ճակատը միշտ բարձր բռնած: Միհրդադ իր կտակը կ'ընէ Աստուծոյ աղօթելով, որ պաշտպան կանգնի անմեղ հային եւ վայն ազատէ թուրքին:

ձեռքէն:

6) «Արմիկ», էջ 113-161:

Մեւ Ծովի ափերուն վրայ գրնտող քաղաքի մը մէջ Արմիկ եւ Եղեկ նոր ամուսնացած էին եւ հանրօգուր գործին նուիրուած:

Առաջին Համաշխարհային Պատերազմը կը պայթի: Ռուսիա եւ Թուրքիա պատերազմի մէջ կը մտնեն իրարու դէմ: Հայոց մասնակի եւ ընդհանրական կոտորածներու լուրեր կը հասնին: Նկատելով վերահաս վտանգը, շրջակայ գիւղերու հայ բնակիչները լուր կու տան քաղաքի հայութեան, որ իրենց ինքնապաշտպանութեան միանան: Քաղաքին բնակչութիւնը կը մերժէ: Արմիկի եւ Եղեկի նման, ուրիշ քանի մը երիտասարդներ համաձայն են ինքնապաշտպանութեան գաղափարին: Այս երիտասարդները, անկախ վիճակ ունենալով, կը միանան գիւղի քաջերուն, թէեւ քաղաքը կը մնան:

Զինուորագրութենէ ապա մնալու համար, Եղեկ սովորականէն շատ աւելի մեծ գումար կը վճարէ: Սակայն, շատ չանցած, կը ձերբակալեն վայն: Եղեկի գործադէրը, չէպոք պետութեան մը հպարակը ըլլալով, ապա արձակել կու տայ վայն: Եղեկ չի կրնար գործի երթալ, որովհետեւ բանտին մէջ վայրագօրէն ծեծած էին պինք: Քաղաքին մէջ անխնայ կոտորած մը կը սկսի թուրք ոստիկաններուն եւ խուժանին ձեռքով: Բանտին մէջ գրնտող հայերը կը նահապակուին: Տուները կը խուլարկեն եւ հայերը, այդ թիւին՝ Եղեկը կը ձերբակալեն: Հարիւրաւոր հայեր կը բանտարկուին: Եղեկը եւ միւս բանտարկեալները նաւակով ուրիշ քաղաք մը կը փոխադրեն: Նաւակավար թուրքը թէեւ Եղեկի բարեկամն էր, բայց ապերախստ դուրս կու գայ. ան ոչ միայն չ'ապարեր Եղեկը, այլ կ'ապարակէ վայն եւ թիով հարուած մը կու տայ անոր: Աւելին, ան ոստիկաններէն կը խնդրէ Եղեկի հաշիւը մաքրելու գործը իրեն վերապահել:

Երբ նաւակը կը հեռանայ նաւահանգիստէն՝ ջարդը կը սկսի: Նաւուն վրայ գրնտող հայ կալանատուները ջուրը կը նետեն մէկ առ մէկ, իւրաքանչիւրին ձեռքերը ետեւ կապելէ եւ սուրի հարուածով վիրատուելէ ետք: Կարգը կու գայ Եղեկին:

Եղեկ իր լրիւ գիտակցութեան մէջ էր: Իր դիմաց վեց պին-

եալներ կային: Ապերախար նաուակավարը կը մօտենայ ոստիկաններուն՝ սուր մը առնելու համար: Այդ պահուն Եղեկ կը նկատէ, թէ նաուակը մէկ կողմի վրայ ծռած է: Ցարկելով իր տեղէն, ան նաուակը անելի ետ կը ծռէ եւ վեց ոստիկանները ակնթարթի մը մէջ ծովը կ'իյնան ու կը խեղդուին: Նաուակավարը փակաւին կը մարտնչի եւ կը փորձէ հասնիլ Եղեկին, որ թիով ուժգին հարուած մը կու տայ այդ վասրելի արարածի գլխուն: Հարուածը վերջնական կ'ըլլայ:

Եղեկ փուն կը վերադառնայ: Ծնողներուն եւ Արմիկին ուրախութիւնը չափ ու սահման չունէին:

Եղեկ քաղաքին մէջ չէր կրնար մնալ: Արմիկին թելադրութեամբ՝ ան կ'որոշէ երթալ եւ գիտի քաջ երիտասարդներուն միանալ:

Եղեկ եւ Արմիկ ճամբայ կ'ելլեն ծպտուած: Իրենց կողմը եկող երկու ոստիկաններ կը նկատեն, ոստի գետին կը պտակին եւ մեռած կը ձեւանան: Ոստիկանները կարծեցեալ դիակները երբ կը սկսին կողոպտել, Արմիկ աչքերը յանկարծ կը բանայ: Ոստիկաններէն մէկը կը փախչի, իսկ միւսը, վախէն սրտաճաք, գետին կ'իյնայ ու կը մեռնի:

Եղեկ կը յաջողի քաջերուն միանալ, իսկ Արմիկ փուն կը վերադառնայ:

Քաղաքին մէջ կը սկսի վերապրող հայոց բռնագաղթը: Ոստիկանները նաեւ Եղեկի փունը կու գան: Եղեկի հայրը կ'ընդդիմանայ: Ոստիկանները կը խեղդեն վայն:

Կարաւանը կը շարժի: Քաղաքէն դուրս կու գան: Երեկոյեան, բաց դաշտի մը մէջ, ջարդ, սպանդ, կողոպուտ եւ առեւանգում կը պատահին: Ոմանք թոյն խմելով կը մահանան:

Շերիֆ անունով թուրք պաշտօնեայ մը, ոստիկանի մը օգնութեամբ կը փորձէ առեւանգել Արմիկը: Շերիֆ իր ձեռքին մէջ ապրճանակ մը ունէր: Արմիկ խելացի հնարք մը կը մտածէ: Սկիսքը կը համակերպի եւ կը ծրագրէ յարմար առիթով մը պգետնել թշնամին եւ կամ նահապակուելով իր պարսիւր պահել: Շերիֆը եւ ոստիկան մը կը փանին Արմիկը: Անոնք քաղաք մը կը մտնեն: Շերիֆ Արմիկը պանդոկ մը կը փանի ու ժամերով կը փորձէ ծուղակը ձգել վայն: Ան անդադար կը խմէ: Արմիկ ժամա-

նակ կը շահէր: Ան հնարամտութեամբ կը յաջողի պատուհանէն փախչիլ ու կը միանայ Եղեկին եւ քաջերուն:

7) «Մովորական Պատմութիւն», էջ 163-186:

Հայ ծերունի մը իր քանդուած մեծ տան աւերակներուն տակէն ինքզինք քաշկռտելով դուրս եկած էր: Անորէն թուրքերն ու քիւրտերը իր տան առջեւի հրապարակին մէկ անկիւնը կապած էին պայն եւ բազմատեսակ չարչարանքներու ենթարկած, իր աչքերուն առջեւ սպաննած իր պատկերը, կիներ եւ սպգականները: Թուրք խուժանին հեռանալէն ետք, ան գիշերը առանձին մնացած էր իր սիրելիներուն դիակներուն հետ եւ նկատուած, որ իր 12 տարեկան կրտսեր որդին՝ Բենիամինը տակաւին ողջ էր հրաշքով: Քաղաքին մէջ վերապրող հայերը հաւաքուած էին, եւ զինք ու Բենիամինը միասին առնելով գաղթած էին դէպի արեւելք: Ուղղակի Էջմիածին յառաջացած էին:

Էջմիածնի մէջ մեծ թիով գաղթականներ կային: Հիւանդութիւն, անօթութիւն եւ թշուառութիւն անպակաս էին: Բենիամին ու հայրը բոլորին պէս դժուարին պայմաններու մէջ կը գտնուէին: Վերջապէս, Բենիամին հիւանդանոց կ'ընդունուի՝ արժանանալով խնամող բժիշկներու մասնատր հոգաբարոյութեան: Բժիշկներէն աւելի ջերմ վզացումով գթութեան քոյր մը կար հոն՝ Սաթօ անունով: Բենիամին շատ տկարացած եւ նիհարացած էր: Բժիշկները կ'որոշեն անոր հօր ամենօրեայ այցելութիւնները դադարեցնել: Բենիամին պէտք ունէր հանգիստի, քոր միայն մահուան մէջ կը գտնէ:

8) «Թուրքերը Կը Ջուարճանան», էջ 187-207:

Ցեղասպանութեան տարիներուն եկաւ արեւն մը, երբ թուրքերը ըսին, թէ իսլամացող հայերը սպաննուելէ կամ գաղթելէ վերժ պիտի մնան:

Կիլիկիոյ մէկ քաղաքին մէջ, թուրքերը հայ գեղեցիկ աղջիկներն ու կիները հաւաքած էին մզկիթին մէջ: Ծերուկները, տղաներն ու տղարները իսլամանալու իրատունք չունէին: Մզկիթի դրան առջեւ յանկարծ աղմուկ կը բարձրանայ. մզկիթ կը բերէին Տէր Ղեւոնդ քահանան:

Իսլամ կրօնատրը մզկիթին մէջ իսլամանալ կը հրամայէ Տէր

Ղևոնդին: Երբ կը մերժուի՝ կը հրամայէ իր ծառաներուն, որ սպաննեն վայն առանց արիւն թափելու, որպէսզի մվկիթը անհաւարի արիւնով չպղծուի: Քահանային 16 փարեկան դուստրը՝ Շողիկ կը փորձէ պաշտպանել հայրը եւ անոր վրայ խոյացած թուրքի ծոճրակին կը խրէ գրպանէն հանած վմելին: Թուրքերն իրենց կապաղութենէն կը փրփրին, միասնաբար կը յարձակին Շողիկի վրայ եւ սկիպըը վայն, ապա քահանայ հայրը կը սպաննեն:

Թուրք կրօնատրը դառնալով մվկիթին մէջ խռնուած հայոց, կ'առաջարկէ իսլամանալ: Անոնց լռութիւնը անհամաձայնութեան նշան կը սեպէ ու կը հրամայէ փղաքը թլփափել, իսկ կանանց փաթթոց հագցնել: Թուրքերը ապա անոնց մէջէն աղջիկներ կը վարեն ամուսնանալու, եւ երախսաներ՝ վանոնք իրենց քով աշխարհացնելու համար: Վեց փարեկան հայ փղեկ մը կ'ըմբոստանայ: Մվկիթին մէջ գրնտող թուրք խուժանն այնուհետեւ կ'ողողուի դէպի հայոց եկեղեցին: Կը հասնին դուռը գոց եկեղեցիին առջեւ: Շօր գերաններ ու գործիքներ կը բերեն եւ մեծ դժուարութեամբ դուռը կը բանան, ներս կը խուժեն, քարութանդ կ'ընեն, կը պղծեն եկեղեցին եւ անոր թանկարժէք իրերը կը գողնան: Ոստիկան մը Աստուածածնի պարկերը կը պատռէ դաշոյնով: Եկեղեցիին վանգերը կը սկսին դողանջել:

Այս պահուն, քանի մը փասնեակ հայ պինեալ երիտասարդներ յանկարծօրէն կը յարձակին եկեղեցոյ վրայ: Դողանջները լսած ըլլալով մօտակայ լեռներուն վրայ՝ վար իջած էին: Շայ քաջերը կրակ կը տեղայնեն թուրքերուն վրայ ու անոնցմէ շարեր շանսարակ կ'ընեն:

Լուրեր, «Ուրֆայի Վերոսամարտը», ԿԱԿ. «Արդակ» օրթի, Պէյրութ, 1933, միջակ չափի 266 էջ: [էջ 1-161]

27 Մայիս 1915ին թուրքերը կը պաշարեն Եդեսիոյ (Ուրֆա) Մր. Սարգիս վանքը եւ Ազգային վարժարանի րնօրէնն ու ուրիշ յայտնի դաշնակցական մը կը ձերբակալեն: Եւսքան այս դէպքը, Եդեսիա ժամանած էր իթթիհապական՝ Ալի Վայտար պէյը՝ Տիգրանակերտի (Տիարպէթիր) երկու յայտնի ջարդարարներու՝ Խալիլ եւ Մհմէլ պէյերուն հետ: Ձերբակալուածները Վալէպ կը դրկուին: Առաջնորդարանին մէջ ժողով կը գումարուի ինքնապաշտպանութեան դիմելու նպատակով, սակայն համաձայնութեան չեն յանգիր: Յունիս Ցին 18 երեւելիներ կը ձերբակալուին եւ Ռաքքա կ'աքսորուին:



Դաշնակցութեան հրաւերով ժողով կը գումարուի, սակայն կրկին համաձայնութիւն չի գոյանար ինքնապաշտպանութեան դիմելու հարցին շուրջ: Կ'որոշեն ինքնապաշտպանութիւնն սկսիլ այն արեւն միայն, երբ Եդեսիոյ հայ բնակչութիւնը գաղթելու հրահանգ ստանայ:

25 Յունիս 1915ին Եդեսիոյ մէջ 200է աւելի հայեր կը ձերբակալուին ու կը բանտարկուին: Ասկէ առաջ կը սպաննուին 1500 հայ երիտասարդներ, որոնք քինոտրագրուած էին եւ Եդեսիոյ մօտակայ Գարա Քէօփրի եւ Գուլամէ վայրերուն մէջ չարաչար կ'աշխատեցնէին:

Մկրտիչ Եօթնդրայրեանն իր եղբայրներուն ու Յարութիւն Ռասթկէլէնեանի հետ անջատ կռիւներ կը Կանի թուրքերուն դէմ: Երբ ձերբակալուած Գրիգոր Զօհրայան ու Վարդգէսը Եդեսիա կու գան, Մկրտիչ կը ջանայ համոզել Կանոնք, որպէսզի ինք փախսնէ Կանոնք եւ վերօ մնան սպանութենէն: Անոնք կը մերժեն: Վայց պէնքերը հաւաքելու հրաման կը Կրուի: Վնարամութիւն մը ի

գործ դնելով՝ հայերը անգործածելի պէսքերը կը յանձնեն միայն:

26 Յուլիս 1915ին թուրքերը կը ձերբակալեն Եդեսիոյ Առաջնորդ Արքայապետ վարդապետը (Միսմէլեան - խմբ.): Յուլիս 28ին անոնք ճամբայ կը հանեն բոլոր հայ բանտարկեալները եւ Տիգրանակերտի ճամբուն վրայ գտնուող «Շէյթան Տէրէսի» վայրին մէջ կը սպաննեն: Մկրտիչ Եօթնեղբայրեան երբ կը գտնուէր Ռասթկէլէնեաննոց տունը, կը պաշարուի: Ռասթկէլէնեան իր տան մէջ կը սպաննէ Պաքըր Չաուշը: Մկրտիչ դուրս կ'ելլէ եւ Յովհաննէս Միմեանի տունը կ'ապաստանի: Այս դէպքէն անմիջապէս ետք թուրքերը շուկան գտնուող հայերը եւ ասորիները կը ջարդեն: Հայկական թաղերը աստիճանաբար կը պաշարուին: Հայերը ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ կը տեսնեն:

29 Մեպտեմբեր 1915ին թուրք ոստիկաններ կը պաշարեն Սանտրչոյ տունը՝ ձերբակալելու համար տան տղաքը, որոնք միակ ապագուածներն էին Գուրեմէի կոտորածէն: Մկրտիչն ալ հոն է: Կրակոցը կը սկսի: Այս դէպքերուն մանրամասնութիւնները գրուած են ֆրանսացի Բըպուքի յուշերուն մէջ:

Ընդհարումը մէկ ժամ կը տևէ: Լռութիւն կը տիրէ: Թուրքերը հայոց պատգամաւոր կը դրկեն, որ կեղծիքով եւ սուր խոստումներով կը փորձէ բթացնել անոնց պզօնութիւնը: Հայերը չեն վստահիր: Յաջորդ օրը, 30 Մեպտեմբերին, թուրքերը երկրորդ յարձակում մը կ'ընեն եւ կը բռնուին ծովակին մէջ: 450 մեռեալ տալէ ետք՝ անոնք կը նահանջեն:

Այսպէս՝ հայերը կը յաղթանակեն, մինչեւ որ թուրքերը կը սկսին թնդանօթներ գործածել: Մէկ ամիս դիմադրելէ ետք՝ հայկական դիրքերը տակաւ առ տակաւ կ'իյնան: Սակայն տեղ-տեղ կռիւները մինչեւ Նոյեմբերի վերջը կը շարունակուին:

Հայկական թաղերէն հաւաքուած մարդիկը կը տեղաւորեն Միլլէթ Խանին մէջ: Անոնց մէջէն 200 հոգի առանց դատարարութեան կախաղան կը բարձրացուին:

Մկրտիչ եւ ընկերները Միմեանի տան թաքստոցը կը պահուրդէին: Հայ մարտիչներու ցուցումով, անոնցմէ ոմանք կը ձերբակալուին: Մկրտիչ անձնասպան կ'ըլլայ:

Եդեսիոյ ապստամբութեան թուրքերը 2000ի չափ սպաննուած կ'ունենան:

**Նապարէթ Փիրանեան, «Խարբերդի Եղեռնը»,
պպ. «Պայքար», Պոսթըն, 1937, փոքր չափի 541
էջ:**

Հեղինակը Խարբերդի Եփրատ
Գոլէճի ուսուցիչ է 1915ին, կը բնա-
կի Մեզիրէ (Խարբերդի մօտ): Ըն-
տանեօք կ'որոշեն փարագրութեան
չելլել՝ մօրը համար որբեայրիի
արքօնագիր մը ապահովելով: Նա-
պարէթ եղբայր մը եւ քոյրեր ունի:
Կը սինտորագրուի եւ կ'աշխատի
Մեզիրէի հիւանդանոցին մէջ: Յե-
տագային կը փախչի եւ քիւրտ ծա-
նօթի մը գունը կը մնայ, յետոյ
ամերիկեան հիւանդանոցը կ'ա-
պաստանի: Կ'որոշէ փախչիլ եւ
կ'անցնի Տերսիմ, ապա՝ Երիզա:



«Զուիցերիայի Հայասէր «Եագոյ Քինցլեր». Իր Հայանպասար Գործունէութեան 40-ամեակին Առթիւ», Կայ. «Ռոթոս», Պէյրութ-Հալէպ, 1946, միջակ չափի 214 էջ: [էջ 57-110]

Եագոյ Քինցլեր ծնած է 1871ին, Զուիցերիոյ Ափենսել գաւառի Հունսփիլ գիւղին մէջ: 1899ին ան Եդեսիա կը մեկնի:

Եագոյ Քինցլեր ականաբար կ'ըլլայ Սահմանադրութեան վերահռչակման (1908), անոր յաջորդող օրերուն ծայր փուստ խանդավառութեան եւ 1909ի Արանայի ջարդերուն:

Կու գայ 1914ի ամառը եւ Առաջին Համաշխարհային Պատերազմը կը պայթի: 1915ի գարնան 18 ուրֆայի հայ ընտանիքներ բռնի կերպով կ'աքսորուին Ռաքքա: Կը սկսին ձերբակալութիւններն ու բանտարկութիւնները: Կարգ մը փոփոխութիւններ կը սկսին: Քինցլեր կը դիմէ Հալէպի օտար հիւպատոսարաններուն, սակայն ձեռնունայն կը վերադառնայ Եդեսիա, ուր կը հասնին Խարբերդէն արտոն հանուած կիներու եւ մանուկներու առաջին կարաւանները: Մելիփինէ (Մալաթիա) հասնելով՝ այր մարդիկը փարուած էին ուրիշ ուղղութեամբ: Այսպէս, մինչեւ 1916ի ամառը, գրեթէ ամէն օր, Եդեսիա կը հասնին հայ փարագիրներու նոր խումբեր, վարթարայած վիճակով:



Թուրքերը, Եդեսիոյ բանտերուն մէջ գրնտող բոլոր հայերը կը փանին Տիգրանակերտի ճամբան ու կը ջարդեն: Անոնք կը կոտորեն նաեւ Եդեսիայէն հիւսիս, բանտորական վաշտին մէջ աշխատող 400 հայ երիտասարդները:

19 Օգոստոս 1915ին ջարդ մը փոփոխ կ'ունենայ Եդեսիոյ մէջ: Հայեր հիւանդանոցը կ'ապաստանին: Փողոցները լեցուած էին


հայոց դիակներով: Այս իրադարձություններէն ելլելով, Եդեսիոյ հայերը կ'որոշեն ինքնապաշտպանութեան դիմել: Անոնք հայկական թաղերը պարունէշներ կը բարձրացնեն եւ կռիւր կը սկսի: Թուրքերը դուրսէն օգնութիւն կը բերեն Ֆախրի փաշայի գլխաւորութեամբ: Շաբաթներով անհաւասար կռիւ տեղի կ'ունենայ: Ջէնքի չգոյութեան պարճառով հայերը կը համաձայնին յանձնուիլ: Թուրքերը յանձնուող հայերը կը ջարդեն: 15000 կիներ եւ մանուկներ կը բռնագաղթեն: Շատ հայեր անձնատուր չեն ըլլար եւ իրենց տուները քաշուելով՝ կը կռուին: Ամիս մը ժամանակ կ'առնէ հայկական թաղերն ամբողջութեամբ գրաւելու համար:

1916ի երկրորդ կէսին մէջ, հոս ու հոն ապաստանած հայ անհատներ կը վերադառնան Եդեսիա: Այս ժամանակ Իթթիհարը քիւրտերն ալ տեղահան կ'ընէ:

Պարտերազմը վերջ կը գտնէ: Ամէն տեղ թշուառ հայեր կը թափառին: Քիւնյէր իր կարելին կ'ընէ անոնց օգնելու համար: «Նիր Իսթ Ռիլիֆ»ը հրապարակ կ'իջնէ Ապրիլ 1919ին եւ շատ օգնութիւններ կ'ընէ հայոց: Գլխաւորաբար ան որբերը կը խնամէ: Որբանոցները յեղափոխին կը փոխադրուին Սուրիա եւ ապա Լիբանան:

Միքայել Եամփանձեան, «Հայ Մտքին Հարկը Եղեռնին», մատենաշար «Նայիրի»-ի թիւ 3, քաղ. «Նայիրի», Հայէպ, 1947, փոքր չափի 95 էջ:

Մտաւորական Միքայել Եամփանձեան 24 Մարտի 1915ին Պոլսոյ մէջ կը ձերբակալուի եւ միւս մտաւորականներուն հետ կ'աքսորուի Չանկըրի, ուր կը մնայ երկուքուկէս ամիս: Ապա կ'արտօնուի իրեն, որ երթայ Էնկիւրի, ուրկէ չորս ընկերներով կը հեռանան ու կը հասնին Զմիւռնիա, սակայն հոն չեն արտօնուիր մնալ, ուստի կ'ապաստանին Ուշաք (Ալաշէհիքէն Գարահիսարի միջեւ կէս ճամբան), ուրկէ հայերը տակաւին չէին տարագրուած: Մինչեւ 1918ի Նոյեմբերը հոն կը մնան, ապա Պոլիս կ'անցնին:



**Աղանի Պոռնուեան (գրի առաւ՝ Ա. Ս.), «Արեան
Չայնը», րպ. «Հայկ», Պէյրուօ, 1948, փոքր չափի
76 էջ:**

Տեղահանութեան փարին Աղանի
նրթնամեայ, Շաքէ քոյրը՝ վեցամեայ
աղջնակներ էին, ծնած ու մեծցած
Արաբապարի մէջ: Մայրը մահացած
էր, եւ հայրն ու մեծ մայրը կը խնա-
մէին վառնը: Երկյարկանի փան մը
մէջ կ'ապրէին: Ունէին նաեւ պար-փէշ
մը եւ փան առջեւ ծաղկանոց մը:

Երբ փեղահանութիւնը կը սկսի,
ճամբայ կ'ելլեն կարաւանի հետ: Երբ
կը հասնին Արիֆիէ գիւղը, կողոպու-
րի կ'ենթարկուին: Ոստիկանները
չեն միջամտեր: Առաջին հանգրուա-
նը, ուր կը հանգստանան, կ'ըլլայ
Կէյվէ Աղապար գիւղը: Պիլեփիք չհասած, կը
հրամայուի, որ փղամարդիկ բաժնուին կարաւանէն՝
մօտակայ լեռներու հանքերուն մէջ
աշխատելու համար: Հայրը արցունքով կը
բաժնուի իրենցմէ եւ կը միանայ խումբին:
Գիշերը բազմաթիւ աղջիկներ կ'առեւանգուին:
Անցնելով Գարաքէօյ գիւղէն, Էսկիշէ-
հիրի մօտերը կը հասնին: Մեծ մայրը կը
հիւանդանայ: Առանց Էսկիշէհիր
մտնելու՝ Քէօթաքիայի լեռները կ'ողողուին:
Կարաւանէն գաղտագողի անջատուելով՝
հիւանդներ ունեցող փարագրեալ-
ներ քսան օրէ աւելի քարայր մը կ'ապաստանին:
Աղանիին հայրը եւ երկու ուրիշ փղամարդիկ
յաջողած էին փախչիլ եւ քարայր
հասնիլ: Մեծ մայրիկը իր փղուն գրկին
մէջ կ'աւանդէ հոգին: Հայրը եւ երկու
աղջիկները կը փորձեն Էսկիշէհիր
ապաստանիլ, սակայն ոստիկաններէ կը
բռնուին եւ աղտոտ խան մը կ'առաջնորդուին:
Անցնելով Գոնիայէն՝ կը հասնին Իսլահիէ,
ուր խրճիթ մը կը վարձեն բնակութեան
համար: Հայրիկը ծանրօրէն



կը հիւանդանայ: Կը հարկադրուին ճամբայ ելլել ուղի մը վարձելով: Կը հասնին Գաթմա: Հոս կարաւանը կը կողոպտուի ոստիկաններուն հաշիւ աչքերուն առջեւ: Կը ստիպուին կիսամեռ հայրիկը Գաթմա թողելով հեռանալ կարաւանին հետ միասին: Կը հասնին Պապ, ուր գնչուներ կ'առեւանգեն Շաքէն: Աղանին, յուսահար եւ յոգնած, կ'իյնայ մեռած մարմիններու վրայ: Գնչու դիակապուր մը պայն կողոպտած արեն անոր վրայ կը գտնէ Գայեանէի մասունքը, եւ պայն գրկելով՝ կը փանի իր վրանը: Երբ Աղանի կ'արթննայ, նոյն դիակապուրի առեւանգած երկու հայ աղջիկներ կը տեսնէ: Աղանի գնչուին կովերը կ'արածէ: Գնչու կիները ասեղներով անոր դէմքը կը դաջեն: Ութ ամիսներ ետք գնչուն փնք Հալէպ կը փանի եւ կը ծախէ Համիտ պէյի հարուստ ընտանիքին:

Ամբողջ երեք փարի, մինչեւ 1918ի փնադադարը, այս ընտանիքը կը խնամէ փնք հարապարտ փախի մը նման:


Վերջապէս, փնադադարէն ետք, Աղանի նամակ մը կը ստանայ Պոլիս գրնոտող իր հորաքոյրէն: Երկու ամիս որքանոյ մնալէ ետք, Աղանի իր հորաքոյրը կը միանայ: Սկիզբը ութ ամիս Արաբապար կը մնան, այնուհետեւ Աղանի կը փոխադրուի Պոլիս՝ ամերիկեան գիշերօթիկ վարժարան մը:

Երբ քեմալական շարժումը կը սկսի, Աղանի շար կը յուզուի ու կը յուսահարի: Իրեն կը հասնի Արաբապարի մէջ գրնոտող հորաքոյրը եւ վաւակներուն զոհուելու գոյժը: Ամերիկեան Գոլէճը կ'աւարտէ եւ Առնավուր Քէօյի Աղջկանց Ամերիկեան Գոլէճը կը մտնէ: Երեք փարի վերջ կը հետեւի հիւանդապահութեան: Աղանի բժիշկ Փօսթի ձեռամբ վիրաբուժական գործողութեան կ'ենթարկուի եւ իր դէմքին վրայի կապոյտ դաջուածքները կ'անհետանան: Կը մեկնի Հալէպ եւ կ'աշխատի բժիշկ Ալթունեանի հիւանդանոցը 1929ին: Կը փնտռէ քոյրը՝ Շաքէն, սակայն ապարդիւն: Յաջորդ փարին կը փոխադրուի Պէյրութ՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ աշխատելու համար: Իրեն կը յանձնուի Թրիփոլիի Մինա հիւանդանոցին կազմակերպումը: Կը խնամէ նաեւ Սուրիոյ նախագահ Շիքրի Քուաթիլի եւ գնահատական գիրի կ'արժանանայ: Աղանի պաշտօնի բերումով Տամասկոս կը մեկնի: Դիպուածով ան կը գտնէ իր Շաքէ քոյրը: Արդարեւ, Շաքէի

դուստրը՝ Լեւոն Աղանիին աշակերտուիին էր Տամասկոսի մէջ, որ երկու ամիս ետք գիտցած եւ համոզուած էր, որ իր ուսուցչուիին իր մօրաքոյրն էր: Լեւոն արցունքներով կ'իմացնէ այս իրողութիւնը Աղանիին, որ շատ կը յուսուի եւ նոյն օրը Լեւոնին հետ կ'ուղղուի Վալէպ եւ կը վերամիանայ Եաքէին: Ողջագործումի եւ վերամիացումի ընթացքին Լեւոն կը բացագանչէ, թէ արեւան ձայնն էր խօսած իր մէջ...:

Զապել Եսայեան, «Աւերակներուն Մէջ», մատենաշար «Ապրակ» օրթի, թիւ 61, Պէյրութ, 1952, միջակ չափի 294 էջ Թ. փպագրութիւն՝ «Էրվան» հրատարակութիւն, Պէյրութ, 1957):

1909ի Կիլիկիոյ ջարդը կատարուած իրողութիւն էր: Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի պատուիրակութիւնը եւ Պատերազմական Արեանի անդամները Պոլսէն Մերսին կ'ուղղուէին նոյն շոգենաով: Զապել Եսայեան շոգենաին վրայ է: Որպէս պատրիարքարանի պատուիրակութեան անդամ ան Կիլիկիա կ'երթայ որբերու խնամակալութեան գործին օգնելու համար: Կը հասնին Մերսին ու յաջորդ օրը Արանա կ'անցնին:



«Բոլոր եկեղեցիները, բոլոր դպրոցները ու բոլոր բնակարանները խանձուած քարի կոյրերու վերածուած էին»: Վերապրած այրիներու, որբերու եւ ծերերու խումբ մը կը ներկայանայ իրենց: Տառապածներ են ասոնք:

Արանայի մէջ առաջին կիրակին եկեղեցիին մէջ պատարագ եւ հոգեհանգիստ կը մատուցուի: Այրիներ, ծերեր եւ սգաւորներ եկած են մխիթարուելու:

Դէպի Մերսին իրենց ճամբուն վրայ, անոնք Զմիռնիոյ գերմանական որբանոցին մէջ Արանայէն բերուած որբերու այցելած էին: Հայ որբեր պատսպարուած էին նաեւ Մերսինի Ազգային Վարժարանին ու եկեղեցիին մէջ: Անոնք նաեւ հիւանդանոցը կ'այցելէն: Հեղինակը հոս կը տեսնէ շատ սրտաճմլիկ տեսարաններ եւ իրազեկ կը դառնայ ջարդի անցուդարձերուն:

Զապել Եսայեան եւ իր ողեկիցները կ'այցելեն աղիտեալներուն եւ իւրաքանչիւր աղիտեալէ կը լսեն անոր պատմութիւնը: Մթնոլորտին մէջ ողբն ու լացը փիրական են: Իւրաքանչիւր սգաւոր եւ այրի կին իր պատմութիւնն ունի: Պոլսի պատուիրակները

պարհուրելի պարմութիւններ կը լսեն:

Շար հայ ծերունիներ, երիտասարդներ, հիւանդներ եւ վիրաւորներ բանփերը նետրուած էին: Անոնց անձկութիւնն ու մտահոգութիւնը չափ ու սահման չունէին:

Անմեղ հայեր կախաղան կը բարձրացուին Արանայի մէջ:

Կ'այցելէն Միսիս, ուր գրեթէ հայ չէր մնացած. ջարդարար խուժանը միայն մէկ փան մէջ 60 հոգի այրած էր: Կը գիշերեն Միսիսի մէջ եւ առփուն կ'երթան Միս: Հոս կանայք ու տղաները վանքը ապաստանած էին: Պոլսի պարտիքակները Կիլիկիոյ Սահակ Բ. Խաչայեան վեհափառ հայրապետին կ'այցելէն:

Հաճըն ամենէն շար փոռ փուած քաղաքն է, որովհետեւ անոր երիտասարդները սրուած էին Կիլիկիոյ մէջ:

Կ'այցելէն նաեւ Կարս Պապար, որ հակառակ փառապանքներուն, դիմադրած է շնորհիւ հաճընցի Ճին Թորոսին, որ ոստիկան էր Կարս Պապարի մէջ: Այս քաղաքի հայերը կռուել էին ինքնապաշտպանութեան համար եւ ինքզինքնին մխիթարուած կը զգային:

Կարս Պապարէն ետք կ'ողողուին Օսմանիէ: Հոս շար կիներ եւ տղամարդիկ այրած էին: Ետք կիներ այրի մնացած էին:

Կ'անցնին Էրզինի բանփէն, ուր հաճընցի եւ փէօրթեոյցի հայ բանփարկեալներ կային: Կու գան Տէօրթ Եոյ, ուր եւս ցաւալի պարմութիւններ կը լսեն: Տէօրթ Եոյն ելլելով եւ Էրզինէն կրկին անցնելով կը հասնին Համիլիէ, որմէ վերջ Արանա կը վերադառնան: Հոն կը լսեն, թէ հայ բանփարկեալներէն քանի մը հոգի ապար արձակուած է: Եկեղեցիին բակը ապաստանածներէն շարերն իրենց փուները եւ արքերը կ'երթային: Փողոցին մէջ եռուվեռը կը շարնար: Կեանքը հետպետէ բնականոն կը դառնար Արանայի մէջ:



**Լեւոն Լանիս, «Կեանքի Վէպը՝ Գրուածներով»,
Միւլթարեան տպ., Վենետիկ, 1952, փոքր չափի
184 էջ:**


Ահարոն (Լեւոն Լանիս) ծնած է հաւանաբար 1894ին, Մեքասպիա: 1895ի արիւնալի դէպքերուն ընթացքին հայրը անհետ կը կորսուի: Իրենց թուրք դրացին՝ Ապրուլ Շոճա, կը յարձակի Կոնստանտնուպոլիս վրայ: Մայրը իր երեք զաւակներն առնելով Կոնստանտնուպոլիս կը փախչի եւ ապահով վայր մը կ'ապաստանի: Լեւոնի հօրեղբորորդին, որ իրենց Կոնստանտնուպոլիս ապաստանած էր, կը սպաննուի:

Լեւոն դպրոցը կ'աւարտէ եւ Ռուսաստան կը մեկնի: Առաջին Համաշխարհային Պատերազմին իբր կամաւոր կը հասնի Թիֆլիս: Ջայն շոգեկառքով կ'ողտարկեն Պաքու, ապա Օրեսա եւ անկէ Պուրթէ: Ռուս-ռումանական սահմանին վրայ թիրիմացութեան իբր արդիւնք կը ձերբակալուի եւ ամիսներով բանտը կը մնայ շարժառայ պայմաններու մէջ: Կը փոխադրեն Օրեսայի բանտը, ուր քանի մը օր յետոյ թիրիմացութիւնը կը լուսաբանուի եւ ան ազատ կ'արձակուի:

Օրեսայէն կ'անցնի Թիֆլիս եւ կ'ողտարուի «Կարմիր Խաչ»ի կեդրոնը, ուր կը ներկայանայ իբր կամաւոր, որ կ'ուզէ Կարին երթալ: Կ'օգնեն անոր ամէն փութակէտով եւ երկու օրէն Կարին կը հասնի:

Ռուս-թրքական ռազմաճակատին վրայ Լեւոն կը կռուի զանազան քաղաքներու եւ գիւղերու մէջ: Հոն էին նաեւ սերասպրայի Կարօն եւ Տերսիմի մէջ քիւրտերու կողքին կռուած երզնկայի Կայծակը:

11 սերասպրայիներ փախչելով կը հասնին Երզնկա՝ Գլորճի




Համբարի առաջնորդութեամբ: Հոն Ահարոն կը գտնէ իր մօրաքրոջ ամուսինը՝ Սարգիսը եւ անոր երկու պառակները՝ Էլմաստն ու Մուրէնը: Անոնցմէ կ'իմանայ իր մօրը եւ հարազատներուն սպաննուիլը Ղանդայի ձորին մէջ:

Երեք տարի կամատրական գունդին մէջ ծառայելէ վերջ Թիֆլիս կը վերադառնայ եւ հոնկէ Ռումանիա կը մեկնի:

Սեբաստիոյ մէջ, Ահարոնի տան դրացի Սպարուլ Հոճայի տղան՝ Սապրին շար ոճիրներ գործած էր հայ գաղթականներուն հանդէպ, այդ թուին՝ Ահարոնի քոյրն ու մայրը սպաննած էր: Ռումանիոյ մէջ, Սեւ ծովուն եզերքը Ահարոն կը հանդիպի Սապրինին, որ հայկական անուն մը առած՝ կը զուարճանար: Ահարոն հարուածելով Սապրին ջրամոյն կ'ընէ եւ իր վրէժը կը լուծէ:

**Գաբրիել Թագուրեան, «Նշոյլներ Անհեղափոխ
Մեր Աշխարհէն - Գորշ Գայլը Կապողեր Էր - 1915
- Վկայութիւններ Ու Տպաւորութիւններ», քաղ.
«Յուսարեր», Գահիրէ, 1953, փոքր չափի 424 էջ:**


1915ի Ապրիլին Գաբրիել իր տիկնոջ եւ աղջկան հետ կը գտնուի Պոլիս իբր դպրոցի տեսուչ: Իրեն անծանօթ պատճառներով, ոստիկանութիւնը օրերով կը փնտրէ պայն, մինչ ան հոս ու հոն, բարեկամներու տուները կը պահուրդի: Կը մտածէ երթալ Սկիւարի Սբ. Խաչ եկեղեցին եւ խորհրդակցիլ Գանիէլ եպիսկոպոսին հետ: Հոն կը գտնուի Հմայեակ քահանայ Էքսէրճեանը, որ Գաբրիէլը ոստիկանութեան կը մատնէ: Գաբրիէլ կը ձերբակալուի: Օրերով ճամբորդելէ ետք, պայն Կեսարիոյ հարաւը գտնուող Էվէրէկ հայկական գիղին բանտը կը ներսնան:



Գաբրիէլ արեն մը ետք կը ներկայանայ Կեսարիոյ արեանին առջեւ ու կը պարմէ բանտին մէջ հաւաքուած ազգայիններու մասին: Կ'իմանայ, որ զինք մատնողը իրեն հայրենակից է՝ Էվէրէկի մօտակայ Ֆէնէսէ հայաբնակ գիղէն: Ջինադադարէն ետք, 1919ին անապարտ կ'արձակուի եւ Պոլիս կը մեկնի:

Սմբատ Փանոսեան, «Որ Մորկաւ Էին Չարուած», մարենաշար «Անի» ամսագրի թիւ 5, Պէյրութ, 1953, միջակ չափի 317 էջ (վէպը նախապէս հայրուածաբար լոյս տեսած է Վահէ-Վահեանի իմբագրած «Անի» ամսագրի թիւերուն մէջ - իմբ.):

Հեղինակը՝ Սմբատ Փանոսեանն իր արտոյի կեանքը կը ներկայացնէ վէպի ձեւով: Գիրքին մէջ ինք՝ տիգրանակերպոյցի Մուրադը, ջարդերէն փախչելով, բարեբաստիկ պայմաններու տակ ապաստան կը գտնէ աշիրաթապետ Եւլիս Խալաֆի բանակապետիին մէջ: Եւլիս Խալաֆ ազնիւ պգայումներով, բարի արար քոչուոր մըն է, որ իր ամբողջ գերդաստանով կ'ապրի սուրիական անապատներուն մէջ: Նախքան շէյխին մօտ ապաստանիլը, Մուրադ երկու թուրք ոստիկաններ սպաննելով փախած էր ջարդերէն:



Եւլիս Խալաֆի բանակապետիին մէջ Մուրադ կը հանդիպի Խալէտ աղային, որ նոյնպէս արար է, սակայն նենգ եւ թրքասէր: Վրաններու բնակիչներէն շարերը կը համակրին Մուրադի: Անոնցմէ է Հասանը, որ երկու կին ունի՝ Մալամը եւ Խալիճէն: Հասան Մուրադը իր վրանը կը հրաւիրէ եւ կը հիւրասիրէ պայն: Հասանի պնդումին վրայ՝ Մուրադ գիշերները կ'անցընէ վրանին մէջ, Հասանի եւ անոր կիներուն կողքին: 22 տարեկան Մուրադ սեռային յարաբերութիւն կ'ունենայ այս կանանց հետ: Հասան կը սկսի կասկածիլ Մուրադին, որ պզալով վտանգը, կը հեռանայ անոնց մօտէն ու կը վերադառնայ գոմի տաղտալի աշխատանքներուն: Մուրադ կը դառնայ Եւլիս Խալաֆի անձնական ձիուն հոգատարն ու պահակներէն մէկը:

Օրին մէկը ահապանգ կը հնչէ վրանաբանակին մէջ. գաղթական հայեր կը մօտենան վրաններուն՝ ձիատր թուրք զինուորներու առաջնորդութեամբ: Շէյխ Խալաֆի մարդիկը առաջ կը ներուին հայ գաղթականները թուրքերու ձեռքէն եւ ստոյգ մահէն ապարելու համար: Մուրափ կը կենայ ժողովուրդին առջեւ եւ հայերէնով կը հանգստացնէ զայն: Հայ գաղթականները կ'առաջնորդուին վրանները եւ կը տեղատրուին: Թուրք ոստիկանները առերես հիւրասիրութեան կը հրաւիրուին եւ ապա կը մեկնին ոսկիներ ստանալով: Հասան եւ ընկերները ստրալով անոնց երեւէն՝ կը սպաննեն զանոնք, ոսկիները ետ կը բերեն ու Շէյխ Խալաֆին կը յանձնեն:


Հայ գաղթականները 81 հոգի են: Անոնց հոգաբարը կը կոչուի քոյր Հելէն, որ սերտօրէն կը գործակցի Մուրափի հետ: Ամէն տեսակ հանգստութիւն կը տրուի գաղթականներուն:

Մուրափ կ'իմանայ, թէ Սալամը յի է իրմէ: Այս միջոցին քոչուորները ջորի պակասի պատճառաւ տեղ կը փոխեն: Մուրափ Շէյխ Խալաֆի համակրանքը կը շահի անոր ձիուն գողը երեսան հանելով: Ան Շէյխ Խալաֆի առաջին օգնականը կը դառնայ: Հասան իմանալով իր կնոջ՝ Սալամի եւ Մուրափի յարաբերութեան մասին, կը սպաննէ Սալամը ծննդաբերութեան ժամանակ: Ծնած երախտան սկիզբը քոյր Հելէնին, ապա Խալաֆի ձէին հոգածութեան կը տրուի: Հասան կը փախչի: Փախուստի ժամանակ ան կռիւի կը բռնուի թուրք ոստիկաններու հետ եւ կը սպաննուի: Մուրափն իր ընկերներով նոյնպէս գերի կ'իյնայ թուրքերուն ձեռքը: Խալաֆիձէ կ'ապարէ Մուրափը: Անոնք կը վերադառնան վրանները:

Օրին մէկը Մուրափ հայ վաճառականներէ կ'իմանայ, թէ զինադադար եղած է եւ հայերը Հալէպ կը վերադառնան: Բոլոր հայերը Մուրափի հետ Հալէպ կը վերադառնան: Մուրափի պաակը՝ Աքսորը, քոչուորներուն հետ կը մնայ վրաններուն մէջ: Աւելի ուշ, հայերու հանդիպելով, Աքսոր կու գայ Հալէպ, ապա կ'անցնի Պէյրութ եւ կը հայրենադարձուի Խորհրդային Հայաստան:

Բարզէն քահանայ Արայանեան (Մաղաքիա Արայանեան), «Բաբերդ Եւ Իր Շրջանները», րպ. «Արարք», Փարիզ, 1954, փոքր չափի 308 էջ: Ունեցած է երկրորդ րպագրութիւն մը՝ րպ. «Արարք», Փարիզ, 1955, միջակ չափի 307 էջ:

Նեղինակը ծնած է 1890ին, Բաբերդի Լսոնք գիւղը: Երբ 1914ին պատերազմը կը պայթի, հայերը շատ մեծ նեղութեան կը մատնուին՝ պարէն հայթայթելու համար թրքական բանակին: Ինքնապաշտպանութեան խմորումներ մէջփոխ կու գան Բաբերդի մէջ, սակայն վերապահ կողմերու արգելքին կը հանդիպին: Խումբ մը վիճումով երիտասարդներ, անոնց շարքին՝ Մաղաքիա եւ ընկերները, Լսոնքի լեռները կ'ապաստանին:



Մաղաքիա 10 Մայիս 1915ին կը վիճուորագրուի եւ Մուրափ Խան Օղլու կը դրկուի: 27 Մայիսին թուրք չէթէներ կը խուժեն գիւղը եւ չարչարելէ ետք կը սպաննեն իր քահանայ հայրը: Բաբերդի եւ անոր 29 գիւղերու հայերը փեղահան ընելու որոշում կու գայ: Անուանի հայերն ասկէ մէկ շաբաթ առաջ արդէն ձերբակալուած եւ բանտարկուած էին: Այսպէս, մէկ ժամուան մէջ, Բաբերդի 29 գիւղերու հայ բնակիչները ճամբայ կը հանուին երկու ուղղութեամբ՝ մէկ մասը՝ Աւերակի եւ Պոտնուպի ձորերէն, իսկ միւսը՝ Խուրսի ձորէն: Անոնք ի վերջոյ կը հասնին Ղարաղուլաղի դաշտը եւ Այ-Տողան լեռան ստորոտը կը մորթուին: Այս ջարդէն ապաքած խումբ մը աղջիկներ եւ կիներ երբ Բաբերդ կ'երթան, գայմագամ պէյի հրամանով անոնք կը փրուին թուրքերու, որոնք փեսակ-փեսակ վայրագութիւններով կը յագեցնեն իրենց անասնական կիրքերը:

Վեց օր ետք, Բաբերդ քաղաքի հայերը կը փեղահանուին Երզնկայի ուղղութեամբ:

Մուրադ Խան Օղլուի մէջ Մաղաքիա եւ ընկերները լսելով այս պարհուրելի դէպքերուն լուրերը, կը մտադրեն փախուստ փոխել: Անոնք անփառի մը մէջ կը հաւաքուին եւ այս մասին կը խորհրդակցին: Չորս հոգի միայն կ'որոշեն Լսոնքի լեռները ապաստանիլ եւ իրենց ընկերներուն միանալ: Ասոնցմէ մէկն է Մաղաքիան: Փախչող խումբը քանի մը հոգիով կ'աւելնայ: Անոնք պարէն առած իրենց հետ՝ կը փախչին: Երկու օր յետոյ 260 բաբերոյցի երիտասարդներ կը սպաննուին Սօրփաներու կիրճին մէջ:

Փախչողները եօթը հոգի են: Լսոնքի անփառներուն մէջ անոնք կը միանան իրենց ընկերներուն: Ասոնց թիւը 65ի կը հասնի: Այս փոքր զինուորները իրենց պարէնը կ'ապահովեն շրջակայ գիւղերէն: Ասոնցմէ քիչեր միայն վէնք ունին հետերնին: Երբեմն, հայախօս թուրքեր կը փորձեն զիրենք ծուղակը ձգել: Մաղաքիա ապա կը միանայ վարպեհանցի երիտասարդ փախստականներու խումբին, որուն հետ արկածախնդրութիւններով լեցուն կեանք մը կ'ապրի: Կը միանան միւս ընկերներուն: Ընդհանրապէս կը պարենատրուին յունաբնակ Մարէն գիւղէն: Խումբին խմբապետն է Վարպեհան գիւղացի Մելքիսէթը, որ Խնծաւերակի մէջ ունի թուրք բարեկամներ, որոնց քով կը մնան իր եղբայրներուն կիներն ու պառակները: Օգոստոս 1915ին, թուրքերու մօտ գտնուող բոլոր հայերը կառավարութեան յանձնելու խիստ հրաման կու գայ: Մելքիսէթի եղբայրներուն կիներն ու պառակները լեռ կը բերուին:

Այս խումբը կը յաջողի թուրք փախստական վիճակներէ ձերբակալել եւ անոնց հաշիւը մաքրել...: Կը գրաւէ նաեւ անոնց ունեցած դրամները: Կռիւի կը բռնուին թուրքերուն հետ, սակայն շուրջով կը տեղափոխուին՝ առանց հետք ձգելու: Անոնք կ'իմանան, թէ Խուրսի անփառն ապաստանած 65 քաջեր նահապետուած են:

Օրին մէկը, առաւօտը կանուխ, անոնք կը պաշարուին երեք հարիւր ռուսական վիճակներով: Գնդակներու տեղափոխումը կը սկսի: «Խըրսըզ Եաթաղը» լեռան վրայ բռն կռիւ մը տեղի կ'ունենայ: Խիստ կերպով կը պաշարուին: Մելքիսէթ կը վիրատրուի եւ իր ընկերէն կը խնդրէ սպաննել զինք՝ թշնամիին ձեռքը չմատնուելու համար: Մնացեալները կ'ապաստանին քարայր մը, սակայն կրկին կը պաշարուին: Զօրատր համապարկ մը կը սկսի,

եւ թշնամին, քելով դիրքերը, կը փախչի: Բոլորը մէկ ճամբայ կ'իյնան Մեզկէի ուղղութեամբ: Խումբը կը յառաջանայ եւ Ամրըկայ հայթոքական խառն բնակչութեամբ գիտը կը հասնի: Մելքիսէթի եղբայրը՝ Բարսեղ կ'որոշէ կիները եւ մանուկները հոն ձգել թուրքերու մօտ, որպէսզի մնայեալը ապահով հասնին ռուսական սահման: Մելքիսէթի կինը իր երկու պաւակներուն հետ կը մեկնի գիտ՝ Ճորոխ գետին մէջ անձնասպան ըլլալու համար...: Մելքիսէթի միւս եղբօր՝ Յարութիւնի կինն ու պաւակներն ալ կ'երթան գիտին ուղղութեամբ...: Խումբը ճամբայ կ'ելլէ դէպի արեւելք: Կ'անցնին Կօշկուրի յունաբնակ գիտէն եւ պարէն կը վերցնեն իրենց հետ: Յարութիւնը կը մահանայ:

Վարպեհանցի ընկերները կը բաժնուին: Մաղաքիա եւ լսնքցի ընկերները ճամբան կը շարունակեն դէպի արեւելք: Անոնք կը ձերբակալեն դասալիք (ֆիրար) թուրք պիւտրներ եւ կ'օգտուին անոնց վէնքերէն, դրամէն, եայլն, զանոնք սպաննելէ առաջ: Անոնք մեծ սարսափ կ'ապրեն Բաբերդի եւ շրջակայ գիտերու թուրքերուն:

Օր մը այս խումբը 28 դասալիք թուրք պիւտրներ կը ձերբակալէ: Ձեռական քննութիւն մը կատարելէն ետք եւ չորսը թող տալէն ետք, մնայեալին հաշիւը կը մաքրեն...: Վերջին անգամ ըլլալով կը մտնեն Մապէն յունաբնակ գիտը, կը պարենատրուին եւ 21 Սեպտեմբեր 1915ին ճամբայ կ'ելլեն դէպի ռուսական սահման: Ճամբուն վրայ բազմաթիւ գիտերէ կ'անցնին: Ծպտուած իբր թուրք պիւտրներ, անոնք կը հիւրասիրուին: Կը մտնեն Խելեկ գիտը, ուր գիտին հօճային եւ պիւտրականի մը կը հանդիպին ու կը հիւրասիրուին:


Ապահով կերպով կը հասնին ռուսական սահմանը, Մուրկուլի մօտ: Ջերմ ընդունելութիւն կը գտնեն ռուս պիւտրներէն: Կը հիւրասիրուին: Կը յանձնեն վէնքերը եւ բանակատրուի կը տարուին: 1 Շոկտեմբեր 1915ին կը հասնին Պաթում: Կը հարցաքննուին: Կը տեսակցին Ջօր. Սեպուիի հետ:

Կը մեկնին Պաթում միանալու հայ կամատրական գունդերուն: Մաղաքիա եւ քանի մը ընկերներ Ջօր. Անդրանիկի խումբին կը միանան:

**Ա. Գ. Պուրսապեան, «Մուսա-Լերան Վերսամար-
պր», Կոպ. «Արեւելք», Վալէպ, 1954, փոքր չափի 89
էջ:**

1914ին բոլոր Կղամարդիկը օսման-
եան բանակ կը Կարուին: Անոնք կ'եր-
թան այն յոյսով, որ իրենց ընդհանր-
ները Կարագրութենէ վերձ պիտի մնա-
յին: Բանակ Կարուած ճեպելմուսայի
հայ Կղամարդիկը կը Կեսնեն Վալէպ
թէ այլոր հայոց չարչարանքներն ու
սպանդը: Անոնցմէ ոմանք փախչելով
կու գան Ճեպել Մուսա եւ կը պարմեն
պարա-հաձ դէպքերը:

30 Յուլիս 1915ին Ճեպել Մուսայի
հայութիւնը եւս Կեղահանութեան հրա-
հանգ կը սԿանայ: Խորհրդակցութիւն-
ներ Կեղի կ'ունենան եւ լեռ բարձրա-
նալու որոշում կը Կրուի: Պիթիասցիներ
ուն եւ հաճիհապիպիցիներուն մեձ մասը սակայն կը մնայ իր
Կեղը: Անոնցմէ շարք քիչեր միայն կը բարձրանան լեռ: Երեք
օրուան ընթացքին լեռան վրայ բաականաչափ պարնէշներ կը
շինուին: Երբ լեռան վրայ հայ պարասխանաԿուները ժողովի
նսԿած էին, յանկարձ թորք Կինուորներ յարձակումի կը սկսին 8
ՕգոսԿոսին: Ջարհուրելի կրակ կը բացուի երկուսԿերք: Ճեպել-
մուսայի երիԿասարդները մեձ վնասներ կը պարձառեն թշնա-
միին, որ Կասէ աւելի սպանեալ կ'ունենայ: Երկու օր եԿք, 10
ՕգոսԿոսին, Կեղի կ'ունենայ երկրորդ ճակարամարԿը: Թուրքե-
րը մշԿապէս կը ոմբակոձեն հայոց պարնէշները: Այս աւերումին
չկարենալով դիմանայ, հայերը աւելի վեր կը բարձրանան եւ նոր
դիրքեր կը բռնեն: ՏեղաԿարափ անձրելու կու գայ եւ գորձը կը
դձուարացնէ: Պահ մը դադարէ եԿք, կռիւը կը վերսկսի: Անթիւ
ռումբերու հեղեղին Կակ թշնամին կը սկսի յառաջանայ: Երբ
ԳըԿըլ Չայի բանակաԿեղին կը վԿանգուի, հայերը կը լքեն Կայն



եւ կը նահանջեն Տամլաճրգ: Հայ կռուողներուն կայսրփինը կը վարթարանայ: Այս հերոսամարտի անդրանիկ նահապակը կ'ըլլայ Յակոբ Գարակէօպեանը: Խումբ մը պիթիասպիներ գերի կ'իյնան թշնամիին ձեռքը: Այս կռուին, թուրքերը հարիւրէ աւելի դիակներ կը ձգեն, իսկ հայերէն կը նահապակուին Պօղոս Անտիպեանը, Արրահամ Մետուկեանը (Մէքլէմեան) եւ քեսապցի Յակոբ Փառապեանը (վերջին մականունն ճշդութիւնը կասկածելի է - խմբ.), երկու հոգի ալ կը վիրատուրուին: Այս կռիւներէն ետք թշնամին առփու մը կը հեռանայ:

Ճեպելմուսայիները ժողովներ կը գումարեն լերան վրայ՝ ինքնապաշտպանութիւնը ամրացնելու նպատակով: Ամէն բան իր բնական վիճակը կը ստանայ: Հայ քաջերը գիշերները, իրենց դիրքերէն ցած իջնելով, կը հալածէին թուրք սինտորները գիտէրուն մէջ: Զինեալ երիտասարդներու պաշտպանութեամբ, ճեպելմուսայիները գիշերները խումբ-խումբ արտերը կ'իջնեն եւ ուրեւրեղէնով ծանրաբեռնուած կը վերադառնան իրենց հիւղակները:

Թէեւ ժողովուրդը իր յոյսը դրած էր իր պէնքին վրայ, ան մեծ հաւաք ունէր նաեւ ծովուն վրայ: Անհնարին էր կազմակերպուած պետութեան մը սօրքերուն երկար ամիսներ դիմադրել: Դաշնակից պետութիւններէն մէկուն պրահատր նաւու մը այցելութիւնը այս պիտերուն անհրաժեշտ էր՝ փրկուելու համար:

Հայերը ճերմակ մեծ սաւան մը կը ձօճեն օդին մէջ: Ուրիշ սաւան մըն ալ, վրան կարմիր խաչ մը, դրօշակի ձեւով կը ձօճեն նորէն: Պատուելի Տիգրան Անդրէասեան անգլերէնով աղերսագիր մը կը գրէ՝ ուղղուած ֆրանսական, իտալական, ամերիկեան եւ ռուսական նաւատորմիներու ծովակալներուն: Քաջ ծերունի լողորդ Մովսէս Գրորգեանը ծովուն բացերը կ'երթայ մարտանալի մը հանդիպելու յոյսով: Ասկէ պար, դէպի Բսկէնտրոն մարդ կը դրկեն իմացնելով իրենց օգնութեան կարիքը:

Երկու շաբաթ յարաբերական հանգիստէ ետք, տեղի կ'ունենայ երրորդ ճակատամարտը: Թշնամին կրակ բանալով ճեպել Մուսայի լեռներու փէշերուն, կը փորձէ ընկճել ժողովուրդը: Բուն յարձակողականը կու գայ Եօլ Աղզրի կողմէն: Թուրքերուն առաջին սորասիւնը, բաղկացած 2500 սինտորներէ, գրաւելէ ետք Եօլ Աղզրի, Քէօր Օսմանի եւ Լուրջ Ժայռի երեք կարեւոր դիրքերը,

կանգ կ'առնէ Թաթար Ալենքի եպերքը: Այս վերջին դիրքին պաշտպան քաջարի Կոպրը թոյլ չէին Կոպր, որ թշնամին յառաջանայ: Մակայն թուրքերը կը յաջողին այս անցքը կտրել: Վայկական դիրքերն անդադար կը ռմբակոծուին: Վարդեր Ջէյթլեան անունով կին մը, ջուրի դոյրը ուսին, դիրքէ դիրք վազելով, ջուր կը հայթայթէ քաջամարտիկներուն: Օգոստոս 23ին երեկոյեան, հայերը շար պօրատր հակայարձակում մը կը գործեն: Թշնամին մեծ էր ընդհանուր խուճապի կը մարնուի: Յաղթանակը ճեպելմուսայիներունն է: Ճեպել Մուսան բոլորովին մաքրագործուած էր: Թուրքի ոչ մէկ շունչ մնացած էր հոն:

Այս կռիւներուն երկու քեպուսիէցի եղբայրներ կը դաւաճանեն: Անոնք կածանէ կածան կ'առաջնորդեն թուրք զինուորները, սակայն վերջաւորութեան թուրքերը փախուստի կը մարնուին եւ երկու եղբայրները գերի կ'իյնան հայ կտրիճներուն ձեռքը: Գաւաճանները ամբողջ ժողովուրդին առջեւ դաշունահար ըլլալով կը պարտուին:

Այս երրորդ ճակատամարտին կը նահապարակուին Ճապրա Խոյոյեան, Յովհաննէս Գոճայեան, Գրիգոր Նգրուրեան, Պարսամ Խօշեան, Միսաք Պայրամեան, Սամուէլ Պօյաճեան, Սամուէլ Մարգարեան, Մարգիս Շաննագեան, Պաղտասար Մարտիկեան, Գրիգոր Գպուրեան եւ Պետրոս Ֆենէնեան: Կային նաեւ վիրատրներ: Ըստ հաւասարի աղբիւրներու՝ թշնամին վերջին երկու օրերու ընթացքին 800 սպաննուած էր կորսուած ու բազմահարիւր վիրատր կ'ունենայ:

Ճեպել Մուսայի կռիւներուն մէջ չարաչար պարտուած Ֆախրի փաշան կ'երթայ Եղեսիա՝ վրէժ լուծելու համար այնտեղի հայութենէն: Մկրտիչ Եօթնեղբայրեանի ղեկավարութեամբ ինքնապաշտպանութեան կռիւներ կը մղուէին Եղեսիոյ մէջ:

Թրքական կառավարութիւնն անխոնջ աշխատանքի մէջ էր Ճեպել Մուսան պաշարումի գօրիի մէջ առնելու համար: Պարունէշներ կը կառուցուէին: Ուրեստեղէնի եւ ջուրի մեծ նեղութեան մէջ ըլլալով հանդերձ, Ճեպել Մուսայի ժողովուրդը կարգապահութեամբ կը վարէր իր գործերը: Զինագործներ Լեւոն եւ Միքայէլ Գապանճեաններն ու Յովհաննէս Եղիայեանը անխոնջ աշխատանքի մէջ էին: Անմիջական ճար մը պէտք էր գտնել ծովուն

խորերը երթալու՝ փրկութիւնը փութայնելու համար: Քանի մը ապաղձագործներ, Պեպրոս Մարտիրեանի գլխատրութեամբ, փութային ծովափ՝ «փրկութեան նաակը» կերպելու համար:

Օգոստոսի վերջի մատախապապ օրերէն մէկը մարտանաւ մը կը նշմարուի ծովուն բացերը: Խարոյկներ կը վառուին լերան վրայ, սակայն նաւը վանոնք չի նշմարեր: 5 Սեպտեմբեր 1915ին, Կիրակի առաւօտուն, պապարագի արարողութեանց աւարտին, ծովուն բացերը ուրիշ մարտանաւ մը կը նշմարուի: Քիչ ետք յաճանաւը շոգեմակոյկ մը բաց կը թողու դէպի ծովափ, որ իր հետ առնելով հայկական պահակախումբը, առաջնորդութեամբ ֆրանսագէտ Խաչեր Տումանեանի, մարտանաւ կը վերադառնայ: Ապապարար նաւին անունը «Կիշէն» էր: Պէտք եղած կարգադրութիւնները կը տեսնուին:

9 Սեպտեմբեր 1915ին, երկու նամակներ կը հասնին Ճեպել Մուսայի ղեկավարութեան: Առաջինը ստրկամիտ է և սուր բժիշկ Բենիամինէն է, որ կը յանձնարարէր յանձնուիլ թուրքերու գութին: Ան հակառակ եղած էր ինքնապաշտպանութեան: Երկրորդ նամակը կու գար հապարապետ Ռիֆաաթէն, որ սուր ու պարտի խոստումներ կը շռայլէր, յանձնուելու պարագային:


Նոյն օրը՝ 9 Սեպտեմբերին Ելիս Օրտուի և Ճամուլ Եօլուի կողմերէն եկող պաշտպանութիւնը յարձակումի կ'անցնին: Անոնց կ'օժանդակեն թուրք սինտորներ: Ասիկա չորրորդ ճակատամարտն է: Թուրքերը մեծ վնասներու կ'ենթարկուին: Այս կռիւններուն կը նահապակուին լաւ կռուողներէն Յարէթ Վանայեանը և Պեպրոս Վաւթեանը:

«Կիշէն»ը կը վերադառնայ «Տեպեքս» պրահատրին ընկերակցութեամբ: Անոնք տեղեկանալով մէկ օր առաջ տեղի ունեցած ճակատամարտին մասին, բոռն կերպով կը ոմբակոծեն թուրքերուն պորանոցը և Գապագը գիւղը: Վայերը վերէն կրակելով կը հալածեն փախուստ տուող թուրք սինտորները, որոնք շատ մեծ վնասներ կը կրեն:

12 Սեպտեմբեր 1915ին, Խաչվերայի տունին, հայերը կը սկսին հեռանալ իրենց հայրենի հողերէն, լեցուելով նաւերուն մէջ: 18 հերոսներ նահապակուած էին: Գաղթականները 15 Սեպտեմբերին կը տեղատրուին Փոքր Մայիտի վրանաքաղաքին մէջ:

Կարապետ Քեշիշեան, «Վերլիշումներ Կեանքի Մը Էջերէն», րպ. «Շիրակ», Պէյրութ, 1954, փոքր չափի 224 էջ:

Ներկայումս ծնած է 1882ին, Վաճառ: 1898ին կը մեկնի Այնթապ եւ չորս տարի կը հետեւի Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճի դասընթացներուն: 1902ին ուսուցչութեան կը հրաւիրուի Վաճառնի մէջ: Անտարանական եկեղեցոյ մէջ տեղի ունեցած վէճերուն իբր հետեանք, զրպարտուելով կը ձերբակալուի եւ կը տարուի նախ Սիս, ապա Արսնա: Շուրջով ապա կ'արձակուի ու կը մեկնի Կեսարիա եւ ապա Թալաս՝ ուսուցչութեան համար: Ապա կը դասաւանդէ Այնթապի Գոլէճին մէջ: Վաճառնի մէջ կը ձեռնարկէ պիստակի արտադրութեան, հասարակութեան եւ ասեղնագործութեան՝ այսպիսով կ'ապահովէ բազմաթիւ ընտանիքներու ապրուստը: Բայց Արսնայի ջարդը վրայ կու գայ 1909ի Ապրիլին եւ թուրքերը մեծ վնասներ կը հասցնեն Վաճառնի, ուր անձուկ վիճակ մը կը ստեղծուի: Կարապետ Քեշիշեան Վաճառնի քաղաքապետ կը նշանակուի: Երկու տարի այդ պաշտօնը վարելէ ետք, կը հրաժարի եւ կը մեկնի Պոլիս՝ «Բահնիմա» շաբաթաթերթին իբր օգնական խմբագիր: Կ'ամուսնանայ Վաճառնի մէջ եւ նորէն Պոլիս երթալով տարան մը կը բնայ:



Առաջին Վամաշխարհային Պատերազմը կը պայթի: Կարապետ Ճամբայ կ'ելլէ դէպի Վաճառն, բայց վերջինս վրանգատու ըլլալուն՝ Գոնիա կը մնայ: Բժիշկ Արմենակ Վայկապեանի հրաւերով կը պաշտօնավարէ Գոնիայի Գոլէճին մէջ:

Փախուստ կու տայ դէպի Վաճառն: Հոն կը պիտուրագրեն պինդ: Զինուորներու խումբը երբ կը հասնի Օսմանիէ, հոն իր քրոջը

տունը կը տեսնէ իր տիկինը եւ պառակը, որոնց կ'արտօնուի հոն մնալ իբր պինտորի ընտանիք:

Մամուրիէի եւ Օսմանիէի մօտերը երեսուն ամիս պինտորութիւն կ'ընէ «ամէլիէ թապուր»ի մէջ: Գաղթական վեյթունցիներուն օգտակար կը դառնայ միսիոնարներէն ստացուած օգնութիւն բաշխելով: Ականատես կ'ըլլայ արտրեալ հայոց տառապանքներուն եւ ոչնչացումին: Հակառակ եղած ճնշումներուն՝ կը մերժէ իսլամանայ: Կը հրամայեն զինք եւ իր հայ ընկերը Մուսուլ արտրել, սակայն գերմանացի հրամանատար Շէօնի միջամտութեամբ անոնք կ'ապարհին վրանգէն եւ Մամուրիէ կը մնան: Հրամանատարը զինք իբր թարգման իր գրասենեակին մէջ կ'աշխատեցնէ 4-5 օր: Սակայն, վերէն եկած հրամանով մը բոլոր հայ պինտորները կը արկուին գրագիրի պաշտօնէն: Բարեկամի մը միջոցաւ ընտանիքին հետ Արանա կը փախչի: Քանի մը ամիս հոն պինտորական ծառայութիւն ընելէն յետոյ կը լրանայ իր 40 ամիսներու ծառայութիւնը՝ պինադադարին շնորհիւ:

Զինադադարէն ետք, Քեշիշեանը Արանայի մէջ կը գործէ իբր տնօրէն ամերիկեան եւ անգլիական բարեսիրական կազմակերպութիւններու: Այս պաշտօնով ան գործ կը հայթայթէ եւ նպաստ կը բաշխէ հայ արտրեալներուն, որոնք մեծ մասամբ Արանա հաւաքուած էին: Այս միջոցին, Մարաշի անկումը տեղի կ'ունենայ: Մարաշի հայերը կը սկսին Արանա հասնիլ թշուառ վիճակի մէջ: Ժամանակ մը ետք, խլրտումները եւ կռիւները հոս ալ կը սկսին: Կարապետ Քեշիշեան որբերուն հետ Լիմասոլ (Կիպրոս) կը ձամբորդէ, ապա, 1920ի վերջերը, որբերով միասին Պուլիս կը փոխադրուի: Որբերը ցրուելէ ետք, ան ընտանիքով Պուլիսու Այրէս կ'ողորմուի, ապա, գործի բերումով կը հաստատուի Նիւ Եորք:

**Գ[լորգ] Ս. Երևանեան, «Պարմութին Չարսան-
ճագի Հայոց», հրատ. «Համա-Չարսանճագի Հայ-
րենակցական Միութեան», րպ. «Տօնիկեան»
(Պէլլորթ), ՖրեյնօՒՄՆ., 1956, մեծ չափի 700 էջ:
[1894-1896ի ջարդերը՝ էջ 376-384]**

Երոպական հօր պեպութիւննե-
րու հակամարտութեան պարճա-
ռու, Հայկական Հարցը անլոյծ կը
մնայ: Հակառակ Սան Սթեֆանոյի եւ
Պերլինի պայմանագիրներու համա-
պարսպսանաբար 16րդ եւ 61րդ յօ-
րածներուն ու վեց պեպութիւններու՝
Բարձր Դրան ներկայացուցած ծա-
նուցագրին, սուլթան Ապրուլ Համիտ
պարտուակ կը բռնէ Սասունի ապս-
րամբութիւնը եւ Հայաստանի բոլոր
քաղաքներուն մէջ ջարդի հրաման
կու րպ 1895ին: Նոյն թուականի
աշնան Տերսիմի քիւրտերը, համա-
ճայնելով սուլթանին հետ, կը յար-
ճակին Չարսանճագի վրայ եւ ամէն կողմ կողոպուտ եւ սպանոյ
կը րարածեն:



Չարսանճագի գիւղերը կը թալանուին եւ հայոց կոտորած
րեղի կ'ունենայ: Նոյն ժամանակ Տերսիմի քիւրտերը կը յար-
ճակին Բերկրիի վրայ: Ժողովուրդը կը փախչի դէպի հարաւ եւ
Բերկրի գերն անցած արեն, կը կողոպուտի քիւրտ խաժամոժին
կողմէ: Բերկրիի մէջ Տէր Գրիգոր Մազմանեան քանի մը քաջե-
րով կը դիմադրէ քիւրտերուն: Այս մասին կը ներկայացնենք ուրիշ
քահանայի մը՝ Տէր Մեսրոպ Տէրպէրեանի յուշերուն սեղմ ամփո-
փումը:

23 Մեպր. 1895ին, երբ անտառէն կը վերադառնայի, վրաս յար-
ճակեցան: Դիմադրելով՝ հասայ գիւղս՝ Հոջէ: Բերկրիի մէջ քանի
մը հոգի դիմադրեցին: Տէր Գրիգոր, սինուած վէնքերով եւ դա-

շոյնով, ծխնելոյսին քով պառկած, կը կրակէր քիւրտերուն վրայ:

Հոշէի մոլլան կը պաշտպանէր մեզ: Ան մեզի քիչ մը պաշար փրուաւ ու բարձրացանք Տէմիրճինի լեռները: Լսելով, որ Հոշէի հայերը սպառնալիքի փակ են՝ վերադարձանք: Կառավարութիւնը մտնեփիկի միջոցաւ յայտարարեց, որ փախստական հայերը պէտք է հաւաքուին կալերը, իսկ Բերկրիի հայերը պէտք է լեցուին մզկիթը եւ իսլամանան: Չմշկածագցի ալսակալ (իմաստուն մարդ) Նշան էֆենդի, որ բարեկամ էր գայմագամին, միջամտեց եւ գայմագամը կեղծ հեռագիրներ դրկեց բոլոր գիւղերը՝ Բերկրիի հայերը սպաւ կայուցանելու համար՝ իսլամութիւնն ընդունելու պայմանով:

Այս ջարդերէն եւ կողոպուտներէն ետք հայերը մերկ եւ անօթի կը մնան իրենց փոստերուն մէջ:

[Մեծ Եղեռնը՝ էջ 440-469]

Կը պայթի Առաջին Համաշխարհային Պատերազմը: Ռուս-թրքական ճակատը կը բռնկի: Ճակատէն դասալիք թուրք եւ քիւրտ փնտորներ կու գան Բերկրի եւ կ'ապրին հայոց հաշտոյն: Էնվեր փաշայի հրամանով կը կազմուի ոճրագործներէ եւ աւազակներէ բաղկացած «Համիդիէ Արալի»ն: Ասոնք կը կողոպտեն հայերը, որոնցմէ շատեր կը մտածեն Տերսիմ ապաստանի:

Ապրիլ 1915ին Բերկրի կը հասնի նոր գայմագամ մը՝ Էրիհէմ պէյ անունով: Շուրտով կը սկսին հայեր ձերբակալել: Բերկրիի ազգային դէմքերէն 16 հոգի կը բանտարկուին եւ անօրինակ խոշտանգումներու կ'ենթարկուին: Ո՛չ մէկ խոստովանութիւն, ո՛չ մէկ անուն կ'ելլէ անոնց բերնէն: Կը հեղուին պանգուածային ձերբակալութիւններ: Առաջին հերթին ճամբայ կը հանուին 16 երեւելիները Խարբերդի ուղղութեամբ, սակայն ճամբան, Մնձուր (Մուզուր) գետին եզերքը կը սպաննուին:

Քիւրտերու մօտ ապաստանած հայ կիները, աղջիկները եւ փոքրը կը ձերբակալուին ու կը կոտորուին: Այս շրջանի բոլոր բանտարկեալները իրար կապած կը փանին Թլա բերդը ու գազանաբարոյ արարքներով կը մորթեն: Այս ոճրագործներուն մեծաւորը Քէօռ Պաշայուզն էր: Մէկ շաբթուան ընթացքին կը սպաննեն Բերկրիի բոլոր փղամարդիկը եւ 15 փարեկանէն վեր

երիտասարդները:

Նախ կը փեղահանուին Բերկրիի գիտերը: Հրաման կ'ելլէ քաղաքի հինգ փարեկանէն վեր բոլոր հայ մանուկները կառավարութեան յանձնել: 300է աւելի հայ մանուկներ կը հաւաքեն ու անոնց իսլամական անուններ կու տան:

Բռնագաղթը կը սկսի: Առաջին կարաւանով ճամբայ կը հանուին Ամերիկա սպգականներ ունեցողները, իբր թէ հոն պիտի դրկուին: Անոնց մէկ մասը Բալուի, իսկ միւս մասը՝ Խարբերդի ուղղութեամբ դուրս կը հանուի Չարսանձագէն: Այդ խեղճերէն շատ քիչեր միայն Տէր Զօր հասնելու բախտը կ'ունենան:

Բերկրիի վերջին կարաւանին մէջ կը գտնուի հեղինակը՝ այդ օրերուն 15 փարեկան Գէորգ Երեւանեանը: Կարաւանը Յունիս 1915ին ճամբայ կ'ելլէ 300-350 հոգիով: Երբ պարանի Գ. Երեւանեան յուսումնախառն պռոթկումով կը բացագանչէ՝ իր հօրը բարեկամ, Նիւֆիւս մեմուրի Մուսթաֆա Էֆենդին պայն իր մօտ կը կանչէ եւ թողթ մը գրելով կը կարգադրէ պայն իր մօրեղբօրը՝ Հաճի Եասինին յանձնել Չմշկածագի մէջ:

Առաջին օրը կը գիշերեն Բաշաղակ գիղը, ուր 60 այրեր կը փարուին եւ կը սպաննուին: Երրորդ օրը երբ կը հասնին Բերդակի մօտ՝ կը կողոպտուին: Երկու օր կը մնան Բերդակ: Տեղացի թուրքեր 10-12 փարեկան մանուկներէն ոմանք վարելով՝ իրենց փուները կը փանին աշխարհունելու համար: Մակայն ոստիկանները կը հաւաքեն վանոնք եւ խեղդամահ կ'ընեն Արածանիի ջուրերուն մէջ: Կը փանին նաեւ հեղինակին փոքր քոյրն ու եղբայրը:

Կրկին ճամբայ կ'ելլեն դէպի Չմշկածագ: Հոս չաուշ ոստիկանը Գ. Երեւանեանը, եղբայրը եւ մայրը կը փանի ու կը յանձնէ իր հօրը բարեկամ Մուսթաֆային: Գէորգը եւ մայրը չարաչար կ'աշխարհին ասոր փան մէջ եւ հոն կը մնան:

Աւերիս Գ. Թէքէեան, «Դրուագներ Ապրիլեան Մեծ Եղեռնէն - Պեհեսնիհայութեան Գողգոթան (1914-1918)», րպ. «Լա Ծօթօ Փրես», Պէյրութ, 1956, փոքր չափի 224 էջ:

1915ին թուրքերը կը ձերբակալեն եւ կը սպաննեն Պեհեսնիի ականաւոր հայ ղէմքերը, ներառեալ Աւերիսի հայրը: Ինք Հալէպէն եկած հայ արաբախօս վաճառականի մը հետ, երկու ընկերներու ուղեկցութեամբ, կը փախչի Այնթապ: Աւերիս գրի առած է իր մօր եւ հօրաքրոջ փարագրութեան՝ ստորեւ ամփոփուած դրուագները:



Ճամբայ ելած առաջին կարաւանը կը հաւաքեն դաշտի մը մէջ, ուր կու գայ ականաւոր թուրք մը, եւ հօրաքոյրը, մայրն ու փառակները իբր սպասաւոր իր փունը կը փանի: Թուրքին կինը հայասէր եւ ազնի է: Անոնք հոն մէկ ամիս կը մնան: Բոլոր մնացողներն արտօրելու հրաման կու գայ: Թուրքը կ'առաջարկէ իսլամանալ՝ հոն մնալու համար: Կը մերժեն: Ճամբայ կ'ելլեն եւ մեծ նեղութիւններու ենթարկուելով կը հասնին Եղեսիա, ուր չհասած, թուրքերը իր երկու փարեկան քոյրը կ'առեանգեն: Եղեսիայէն ճամբայ կ'ելլեն, սակայն կողոպտուելով եւ ծանր նեղութիւններու ենթարկուելով կը վերադառնան Եղեսիա: Կը ձերբակալուին եւ կը դրկուին հայկական թաղը, ուր հայ ընտանիքներ սիրենք քանի մը ամիս կը հիւրընկալեն: Դարձեալ ճամբայ կ'ելլեն դէպի հարաւ եւ կը հասնին Ազճէ Գալէ եւ կը բնակին այսօրեղի արտօրավայրին մէջ: Արաբ գայմագամը հոն իրենց հրաման եւ արտօնագիր մը կու փայ, որպէսզի ապաստանին Ռէսմի Գապա արաբ գիւղը, ուր երեք փարի արաբական հիւրասիրութիւնը կը վայելեն: Այնուհետեւ Հալէպ կ'երթան աշխատելու համար: Հոն կը ձերբակալուին եւ կը յանձնուին փէթթելուի հայ Զաքարիայի գործարանը, ուր մինչեւ փինադադարը կ'աշխատին:

**Ղապար Չարրզ, «Յուշամարեան Բարձր Հայքի -
Կարինապարում», րպ. «Մշակ», Պէյրուս, 1957,
մեծ չափի 792 էջ: [էջ 459-480]**

Բարենորոգումներու ծրագիրը եւ երոպայի քննիչներու ժամանումը յոյս կը ներշնչեն Կարինի հայութեան: Ֆրանսացիները արդէն սկսած էին Կարին-Տրապիզոն ճանապարհի շինութեան: Սակայն, Առաջին Համաշխարհային Պատերազմը կը պայթի: Մունտրիկներ Կարնոյ փողոցներուն մէջ կը յայտնեն, թէ զօրաշարժ կայ եւ թէ մինչեւ 45 րարեկան ամէն տղամարդ զօրակոչի գրասենեակը պէտք է ներկայանայ: Դէպի արտասահման բռնի ճամբաները կը փակուին: Ալիւրի եւ սննդանիւթերու զինները կը բարձրանան: Թուրքերը ամէն մի-



ջոյ ի գործ կը դնեն հայութիւնը սարսափի տակ պահելու համար: Քաղաքը լեցուած ըլլալով թուրք զինուորներով, Կարնոյ դաշտին գիւղերուն մէջ կը տեղատրուին նոր գումարտակներ, որոնք տեղոյն վրայ կը կերակրուէին հայ գիւղացիներու պաշարէն: Կարին կը հասնի Բթթիհարի կեդրոնական դէմքերէն Պահաէտրին Շաքիրը՝ չէթէական խումբեր կազմելու եւ ղեկավարելու համար: Ան ոճրագործ եւ անբարոյ բռնի թուրք բանտարկեալները կը միացնէ իր խումբին: Կարգ մը հայեր իբր լրտես կամ փախստական կախաղան կը բարձրացուին: Կարինը ռազմաճակատին շար մօտ ըլլալով, պէտք է թուրք զինուորները կերակրէր: Այս ծանրացած մթնոլորտին մէջ, կը տարածուի թիֆուս հիւանդութիւնը 1915ի սկիզբը: Պահաէտրին Շաքիրի չէթէները երկու երեւելի հայեր եւ Օձնի գիւղի քահանան կը սպաննեն: Թուրք խումբանին բերանով մօտակայ ջարդերու լուրեր կը տարածուին: Բայ-

մաթի հայ բժիշկներ կը հալածուին եւ կը ձերբակալուին: 1915ի Ապրիլի վերջերուն Կոնստանտնուպոլիսի 450 հայ մտաւորականներու ու երեւելիներու ձերբակալութիւնն ու բանտարկութիւնը: Արեւն մը ետք ապա կ'արձակեն զանոնք, բայց ետքը հոգիներէ, որոնք կ'առաջնորդուին դէպի Երզնկա եւ ճամբուն վրայ կը սպաննուին:

13 Մայիս 1915ին բռնագաղթի կը հանեն Կարնոյ դաշտի գիւղերուն հայութիւնը՝ մօտ 25000 հոգի: 26 Մայիսին չէթէները կը խուժեն հայոց գերեզմանատուն եւ կը քանդեն զայն: Խաժամուժը կը յարձակի քաղաքի հայոց վրայ: Անմիջապէս ժողով մը կը գումարուի առաջնորդարանին մէջ: Ոմանք կ'առաջարկեն դիմադրութեամբ մեռնիլ:

Կարնոյ 50 հարուստ ընտանիքներ ձիեր վարձած, որպէս առանձնաշնորհեալներ, կը մեկնին Բարբերոյ: Ասոնց կը յաջորդեն ունեւոր ուրիշ 300 ընտանիքներ դէպի Իլիճէ, Բարբերոյ: Մնացորդներուն վրայ թուրքերը ամէն տեսակ վայրագութիւններ կը գործադրեն:

Երկրորդ կարաւանը քանի մը օր Բարբերոյ հանգիստ ընելէ ետք, կը հասնի Երզնկա: Մօտ 15 օր կը մնան: Երբ ճամբայ կ'ելլեն, երեք օր վերջ Քեմալի կամուրջին մօտ 300 երիտասարդներ կը ձերբակալուին: Կարաւանը կը շարունակէ իր ճամբան: Ձերբակալուած երիտասարդներուն հետ տառապած, բայց հրաշքով ապարած ականատես վկայ մը այս մասին գրած է Պոսթընի «Հայրենիք» թերթի 17 Մեպր. 1953, թիւ 12592 համարին մէջ, «Ո՞ր է Գերեզմանը Կարնոյի 1328 Երիտասարդներու» խորագրով: Հոն հետեւեալը կը վկայէ.

«Դժբախտութիւնը ունէի Կարինէն մեկնող երրորդ կարաւանին մէջ գտնուելու, որ 7 Յուլիսին ճամբայ ելաւ Կարինէն: Քեմալքանցանք: Յաջորդ օր մեր քով հասան քառասուն չէթէներ Քեմալքան, զինուած մինչեւ արամները: Բոլոր այր մարդիկը հաւաքեցին եւ տարին ետ, Քեմալքա ու բանտարկեցին 5 օր: Անօթի, ծարաւ բոլորս ալ ուժասպառ եղած էինք: 1332 հոգի էինք, տարին մեզ «Դուրու Տէրէսի» կոչուած ձորը եւ կոտորեցին, 18 Յուլիս 1915ին: Ծակծկուած ու յօշոտուած մարմիններով ապարկեցանք չորս հոգի միայն»:

Դառնալով երկրորդ կարաւանին, ան կ'ուղղուի դէպի Ակն ու

Արաբկիր: Տարագրեալները կ'անցնին Մելիտինէի մօտերէն, ուր կը հանգստանան: Հանգիստի երրորդ օրը կարաւանին այցի կու գայ քիւրտ Ջէյնալ պէյը, որ կարաւանը յանձն պիտի առնէր իր երկու տասնեակ պինուած դուլամներով: Քանի մը օր ետք կը հրամայուի սայլերը տեղայն վրայ թողնելով յառաջանալ: Եւրով կը սկսի լերան վերելքը: Կը հասնին Ֆըրընճըլար կոչուող բացատ մը: Հոս բոլորը կը կողոպտուին քիւրտ պինեալներուն կողմէ, այրերը կը ձերբակալուին եւ կը սպաննուին: Սակայն հարիւրեակ մը տղամարդիկ գիշերով կը փախչին եւ կը միանան կարաւանին մէջ գտնուող իրենց սիրելիներուն: Բռնագաղթը կը շարունակուի դէպի Սամոսատ: Կ'անցնին Եդեսիոյ շրջանը: Հեղինակը իր եւ Ջաքարեան ու Ըահինեան ընտանիքներով կը հաստատուի Մեզլէ գիւղը, ուրկէ անոնք մաս առ մաս փախչելով կը հասնին Հալէպ:

**Մարտիրոս Սասունցի, «Սեւ Օրագիր», ԿԿ.
«Սեւան», Պէյրութ, 1957, միջակ չափի 291 էջ:**

Նեղինակը ծնած է Սասնոյ Տնկեկ գիւղը: Ընտանեկան պարագաները կը մահանան: Քրոջ հետ կ'երթայ Նափո քաղաքը: Նոն ծանօթներու միջոցաւ քիւրտերու քով հովուութիւն կ'ընէ: Ուսման տենչը վայն կը մղէ Տիգրանակերպ: Որոշ ապեն հոն դպրոց երթալէ ետք Պոլիս կը փոխադրուի եւ բաւական դժուարութիւններէ ետք վարժարան կը մտնէ: Սակայն պոլսահայ դասաւանդներ Մկրտիչ Արապեանն ու անոր որդին՝ Արմենակը վայն արտորել կու տան դէպի Տէր Զօր: Աքսորի եւ դժուարութեանց տարիներէն ետք, 1918ին կը վերադառնայ Պոլիս:



Արմէն Անոյշ (Արմէն Մարաշլեան), «Արեան Ճանապարհով», Կոպ. «Արեւելք», Վալէպ, 1959, միջակ չափի 195 էջ [գիրքը վերապրոնուեցաւ 2009ին, Վալէպ, «Ելիկիկիա» հրատարակչարան կողմէ, փոքր չափի 215 էջ]:

Վեղինակը ծնած է 1907ին, Եդեսիա: Արմէն կը յիշէ դպրոցին փակուիլը 1915ի գարնան: Ան մեծերուն խօսակցութենէն կը յիշէ հայ բանփարկեալները, թէ ինչպէս հայ պինագործը հակառակ տեսակփեսակ չարչարանքներու, հաստատ կը մնայ եւ չի խոստովանիր: Կը յիշէ եկեղեցիներուն պանգակներուն դողանջը եւ հերոսամարտին սկսիլը, երեք շաբաթ վերջ թորք ոստիկաններուն եւ թորք ամբոխին իրենց բակը խուժելը եւ պիրենք դէպի խան առաջնորդելը:



Խանին մէջ կը մնան երեք շաբաթ: Ճամբայ կ'ելլեն ինք, մայրը, 12 փարեկան Վիքթորիա քոյրը, գիրկը՝ իր երկուորեակ 9 ամսուայ եղբայրներէն Միհրանիկը, մօրը գիրկը՝ 3 փարեկան Աղանի քոյրը, երկու փոքր քոյրերը՝ 5 փարեկան Նուարդն ու 7 փարեկան Ռեբեկան: Արմէնը գրկած է երկուորեակ եղբայրներէն միւսը՝ Տիգրանիկը, Կոր երբ հանգստանալու համար քիչ մը գետին կը դնէ, ոստիկանը չի թողոր, որ ետ վերցնէ պայն եւ մտրակի հարուածով մը կը ստիպէ, որ Արմէն միանայ կարաւանին: 200 հոգիէ աւելի հայոց կարաւանը կը յառաջանայ: Անոնք գիտի մը մօտ կը գիշերեն: Վոս Միհրանիկը կը մահանայ: Այս առաջին գաղթակայանին մէջ կարաւանը քսանէ աւելի դիակներ կը թողու եւ կը յառաջանայ: Այս ընթացքով անապատ կը հասնին: Ճամբան Աղանին կը մահանայ: Յաջորդ գաղթակայանին մէջ

նստիկանները կը բռնաբարեն վեց հայ աղջիկներ, սակայն կիները մտնելով վրանը՝ երկու նստիկան կը սպաննեն: Մնացեալ նստիկանները կը սպաննեն կիներն ու վեց աղջիկները:

Կարաւանը կրկին կը յառաջանայ: Կը հանդիպին ուրիշ կարաւանի մը, կը գրկախառնուին: Կը գտնեն Արմէնի հօրեղբօր այրին իր երկու դուստրերով: Գիշերը թուրքերը կը փորձեն աղջիկներ եւ մանուկներ առեւանգել: Կը սկսի բռն վէճ մը, որու ընթացքին Արմէնի հօրեղբօր այրին դաշունահար կը սպաննուի, իսկ անոր դուստրը՝ Սրբուհին կ'առեւանգուի:

Վերադարձի սուր հրամանով մը կարաւանը Ռաքքա չմտած ետ կը դառնայ եւ հինգ օր կը թափառի: Կը հասնին գիւղ մը, ուր բարի արաբ կին մը վիրենք հացով եւ մածոնով կը հիւրասիրէ իր խրճիթին մէջ: Երբ կը բաժնուին ասկէ՝ Ռեբեկան ու Արմէնի հօրեղբօր աղջիկը՝ Լիան հոս կը մնան: Սպա կը հասնին ուրիշ վայր մը, ուր ախոռի մը մէջ կ'ապաստանին գիշերը:

12 օր վերջ կրկին ճամբայ կ'ելլեն դէպի Տէր Զօր: Արմէն հիւանդ ըլլալով, մայրը կը գրկէ Վինք, ապա Խորէն անունով 14-15 տարեկան պատանի մը կը գրկէ Արմէնը եւ կը յառաջանան: Տէր Զօրի ճամբուն վրայ անոնք ժայռերու խոռոչներուն մէջ կը գիշերեն: Յաջորդ օրը երբ ճամբայ կ'ելլեն, Խորէնի դիակը կը տեսնեն: Ան կայնահարուած էր: Կը հասնին Սապրա եւ խանի մը մէջ երկու շաբաթ ապաստան կը գտնեն: Հոս Արմէնի Վիք-թորիս քոյրը կը մահանայ:

Ճամբայ կ'ելլեն նորէն: Արմէնի Նուարդ քոյրը կը հիւանդանայ: Երբ կը գիշերեն վայրի մը մէջ՝ կը կողոպտուին: Կարաւանէն կը մնայ միայն քառասուն հոգի, պոքս կառքերու մէջ լեցընելով՝ Տէր Զօր կը դրկեն: Ուրիշ հայ գաղթականներու հետ ամբողջ ամիս մը կը մնան քարայրի մը մէջ: Կը կորսնցնեն նաեւ Նուարդը եւ կը մնան մայր ու որդի:

Ներսէս անունով ընկեր մը գտնելով, Արմէն հոս ու հոն կը թափառի՝ կտոր մը ուրելիք ճարելու յոյսով: Օր մը երբ Ներսէսին հետ քիչ մը կը հեռանայ, դիակներ եւ ջարդուած մարդիկ կը տեսնէ: Գիշերը հոն կ'անցընեն: Յաջորդ օրը գաղթակայան վերադարձի ճամբուն վրայ նստիկաններ վիրենք կը միացնեն կարաւանի մը, պոք կը տանին ու կը ջարդեն քարայրներու մօտ:

Արմէն հրաշքով կ'ապարհի ջարդէն: Ծերունի բարի մարդ մը կը կերակրէ Վինք եւ ձիուն վրայ նստեցնելով կը տանի իր մայրիկին քով:

Այս պատահարը եւ ջարդէն իր ապարհիլը ան իր մօրը եւ ուրիշ կիներու կը պարմէ: Մայրը կ'որոշէ հեռանալ այդ վայրէն: Մայր ու փոքր կ'ուղղուին դէպի քաղաք տանող տախտակէ կամուրջը: Զգուշութեամբ կ'անցնին եւ կը մտնեն քաղաք: Հայ կնոջ մը օգնութեամբ խան մը կ'ապաստանին: Ամէն օր դիակներ դուրս կը հանեն խանէն եւ կը թափեն սայլին մէջ: Անոնք կը քալեն քաղաքին փողոցներուն մէջ մուրաչկանի նման: Կ'անցնին ամիսներ, իսկ անոնք կը շարունակէին մնալ խանին մէջ: Տէր Զօր քաղաքին մէջ խաշ պատրաստող հայ մարդու մը խանութը կ'աշխատին: Սակայն երեք շաբաթ ետք, երեկոյ մը, գողեր եւ ոճրագործներ այս մարդը կը կողոպտեն ու կը սպաննեն: Այնուհետեւ իսլամական գերեզմանին մէջ անոնք կը ծանօթանան հայ կնոջ մը, որ մեծահարուստ արաբի մը տան մէջ կ'աշխատէր: Այս կինը մշտապէս կը կերակրէ Վինքն եւ կ'օգնէ իրենց: Մայրը կը բաժնուի Արմէնէն՝ այս մեծահարուստ արաբին քրոջ մօտ աշխատելու համար: Ասոնց մօտ աշխատող Աւագ անունով հայ պատանի մը կը բարեկամանայ Արմէնի հետ:

Քաղաքին մէջ թուրք ոստիկաններ կը ձերբակալեն հայերը եւ կամուրջէն անդին կը դրկեն: Փողոց ելլելն այլեւս վտանգաւոր կը դառնայ:

Օրին մէկը ոստիկանները կը պաշարեն խանը եւ կը հրամայեն շարժիլ: Այրերը, կիները եւ փոքրիկները անջատ խումբերու կը բաժնեն: Արմէն երախաներու շարքին մէջ է: Կը քալեն քաղաքին մէջէն եւ Եփրատի եզերքը գտնուող իրենց նախկին գաղթակայանը կը հասնին: Ճամբուն ընթացքին բնակիչներէն ոմանք կը փորձեն փողոցմէ մէկնումէկը իրենց հետ տանիլ, սակայն ոստիկաններու արգելքին կը հանդիպին: Արմէն այդ մարդոց մէջ կը տեսնէ Աւագը, որ նշան կ'ընէր իրեն: Արմէն կը վարանի, բայց վերջ ի վերջոյ կը բաժնուի կարաւանէն եւ Աւագին հետ քաղաք կը մտնէ: Արմէնը կը պահեն մօրը աշխատած տան մէջ:

Այս օրերուն, Արմէնի հօր բարեկամներէն մէկը՝ Եղիա անունով

կառապանը մօրը կը հանդիպի ու կը համաձայնին Արմէնը
Հալէպ փախցնել: Առաօտը մը, Արմէնը եւ կառապանը, իսլամ
ձեւանալով, ուրիշ ճամբորդներու հետ կ'ոտդոին դէպի Հալէպ:
Ճամբուն վրայ ոստիկանները կը հարցաքննեն Արմէնը: Անոր
իսլամ ըլլալուն կը կասկածին եւ կ'որոշեն վայն սպաննել: Եղիա,
հին օրերէն գիտնալով Արմէնի թլփափուած ըլլալը, հնարքով մը
ոստիկաններուն կը փաստէ այս իրողութիւնը: Ապահով կերպով
Հալէպ կը հասնին:

Անդրանիկ Ծառուկեան, «Մանկութիւն Չունեցող Մարդիկ», մաքենաշար «Համապգային», Պէյրութ, 1955, միջակ չափի, 243 էջ [Բ. հրատարակութիւն՝ «Հայպետհրատ», Երեւան, 1959]:

«Մանկութիւն է օրդ, հէ՛յ պպփիկ Պետրոս, երբ ամէն գիշեր ճիչերովդ կ'արթննայէիր ամբողջ որբանոցը ու կ'աղաղակէիր՝ "եկա՛ն, եկա՛ն". որովհետեւ աչքերովդ տեսած էիր մայրիկիդ ու մեծ եղբօրդ մորթուիլը "Մեծ ծառին տակէն անցնող ջուրին քով", ու տեսարանը ամէն գիշեր կը յաճախէր մղձաւանջներով լեցուն քունդ ու - "եկա՛ն, եկա՛ն..."»:

Այսպիսի դաժան ապրումներով մանուկներ հաւաքուած էին որբանոցը: Հեղինակը կորսնցուցած էր իր հարապարները մանուկ հասակէն: Ան կը պատմէ որբանոցային կեանքի մասին:

Հեղինակին ողջ մնացած մայրը Հալէպի մէջ կը գտնէ վայն եւ կը վերամիանան:



**Վահէ Հայկ, «Խարբերդ Եւ Անոր Ոսկեղէն Գաշ-
իր - Յուշամարեան Պարմական, Մշակութային
Եւ Ազգագրական», Եիւ Եորք, 1959, մեծ չափի
1500 էջ:**

**Քաղուածք Յարութիւն Փեք-
մեպեանի յուշերէն, էջ 1414-1427:**

Յի Յուլիս 1914ին Առաջին Հա-
մաշխարհային Պարերապմը կը
պայթի: Էնվեր փաշա անմիջապէս
երկրին բոլոր գաւառները կը դրկէ
կնքուած պահարաններ, որոնց
վրայ հրահանգուած էր չբանալ
պանոնք մինչեւ հրաման չտրուի:
Օգոստոս 1914ի կիսուն պահարան-
ները կը հասնին Խարբերդ: Մէկ
շաբաթ վերջ հրաման կու գայ եւ
պահարանները կը բացուին: Զօրա-
շարժի հրամանը կը հնչէ ամէն
անկիւն: Թալասթ փաշա 1914ին կը
ջնջէ բոլոր օրարահպարակներուն
առանձնաշնորհումներն ու Ազգային Մահմանադրութիւնը եւ կը
լուծէ Հայոց Երեսփոխանական Ժողովը:



Խարբերդի մէջ թուրք վիճակագրականներ անմիջապէս կը գրա-
ւեն հայ վաճառականներու ապրանքները մտրիակներու փոխա-
րէն: Դրայի թուրք վաճառականները վերծ կը մնան այս միջոցա-
ռումն: 18-45 տարեկան հայերը վէնքի տակ կ'առնուին: Օրական
8-10 ժամ իրական պարտապահ մարպանքներ ընել կու տան՝
պանոնք գնդակներու եւ ռումբերու տակ առնելով: Պարտասած
վիճակները մարպանքի հագուստով կը պառկեցնեն պօրանոցի
սալայապակներուն վրայ եւ հայ վիճակագրին սնունդը կը պակ-
սեցնեն:

Խարբերդի Առաջնորդը՝ Պսակ Ծ. վրդ. Խորէնեան իր հետը
առնելով գերմանացի հէր [գերմաներէնով՝ պարոն] Էհմանը, կը

բողոքէ այս անհրաւորեանց դէմ:

Ռուսիոյ ձարը կը հրապարակէ Մանիֆեսթը՝ Օսմանեան տիրապետութեան տակ գտնուող հայոց կոչ ուղղելով ռուսերուն միանալ: Կայտնութիւնը կը լարուի: Պոլսոյ Պատրիարքութիւնը շրջաբերական հեռագիր կը դրկէ բոլոր թեմական առաջնորդներուն եւ կը յորդորէ հաւաքարիմ մնալ Օսմանեան Պետութեան: Կովկասի ճակատին պատերազմի եւ սպանդներու լուրերը ամէն օր կը հասնին: Թուրքերը արելութեամբ կը լեցուին հայոց դէմ: 15 Փետրուար 1915ին, Բթթիհապի կեդրոնական վարչութիւնը երեք օր ժողով կը գումարէ: «Միլլի» աժանսը ամէն օր Կովկասի ճակատին ստացած լուրեր կը սփռէ, թէ հայ ֆեւրալիները թուրք ժողովուրդը կը կոտորեն: Ապրիլ 1915ի սկիզբը, վալի Սապիթ պէյ իր քով կը հրաւիրէ Մեյրէի հայ կղերականները եւ կ'իմացնէ, թէ վէնքերը պիտի հաւաքէ: Թուրքերը կը սկսին հայ ժողովուրդը խոչըրանգել: Առաջնորդ Պսակ Ծ. վրդ.ը կը ստանձնէ ժողովուրդին՝ վէնքերը յանձնել համոզելու դերը: Քիչ ետք ան կը ներուի բանօր եւ տանջալից մահուամբ կը դիմատրէ իր նահապարակութիւնը: Վեր Եօհաննէս Էհման նոյնպէս այս գործին մէջ է:

Յունուար 1915ին ձերբակալութիւնները կը սկսին Խարբերդի եւ Մեյրէի մէջ: Նախ երեւելի դէմքերն ու մտաւորականները կը ձերբակալուին եւ բանօր կը ներուին: 1914ին երիտասարդներն արդէն տարած էին ամելիէ թապուր եւ չարաչար կ'աշխատուէին: 1915ի կէսերուն վանոնք կը սպաննեն: Ատոնցմէ միայն քանի մը փախստականներ պատերազմը հասած էին գիտ կամ քաղաք:

Կարինէն բռնագաղթի հանուած առաջին կարաւանը կ'անցնի Խարբերդէն: Այրերը սպաննուած էին: Կային միայն կանայք եւ մանուկներ: Յուլիս 1915ին Խարբերդի փողոցներուն մէջ մունեպի կը կ'իմացնէ հայոց բռնագաղթի հրամանը: Առաջին կարաւանը Մեյրէէն Տիգրանակերտ կը դրկուի:

Նոս կը մէջբերենք Տիկ. Աղանի Պոյաճեանի վկայութիւնը, առնելով Նավարէթ Փիրանեանի «Խարբերդի Եղեռնը» անունով մատենանէն.

«1915ի Յուլիս 1ին կը բռնագաղթուինք Մեյրէէն: Մեր ամուսինները կը վարեն մեզմէ երբ քաղաքէն դուրս կ'ելլենք: Կը հասնինք Գեղվանք առաջին իրիկունը: Կը կողոպտեն մեզ: Յաջորդ

իրիկուն կը հասնինք Քէյին Խանի մօտերը: Մեր ամուսինները մեր քով կու գան: Քիրտը խուժանով շրջապատուած էինք: Առաւօտուն ճամբայ ելանք: Կրկին մեր ամուսինները կը բաժնեն մեզմէ: Երրորդ օրը կը գիշերենք Պագըր-Մարէնի պարտէզներուն մէջ: Մենք կու լանք մեր ամուսիններուն համար, որոնք չեն վերադառնար: Յաջորդ օրը Մարէն հասնելով, մեզ կը լեցնեն խաները եւ կը ստիպեն, որ թրքանանք: Ուրջ օրէն Խարբերդէն կը հասնինք Տիգրանակերտ: Ճամբան կը կողոպտեն մեզ եւ աղջիկները կ'առեանգեն: Տիգրանակերտէն ալ ուրջ օրէն կը հասնինք Մերտին: Ապա կը փարուինք Ռասուլ-Այն: Տէր Ջօրի կառավարիչը՝ ցեղով արար Ալի Սուար պէյը, խղճալով մեր վրայ, մեզ ապահով կերպով Տէր Ջօր կը հասցնէ: Աւելի ուշ, այս կառավարիչը պաշտօնանկ եղաւ եւ իր փեղը առաւ Ջէքի փաշա անունով արինարբու մը»:

Երկրորդ կարաւանը ճամբայ կ'ելլէ Խարբերդէն, երեք հազար հոգով, որուն մէջ կային հարուստները: Երբ Մելիփինէ կը հասնին, այրերը կը բաժնեն կիներէն եւ կը սպաննեն: Մնացեալը խաներու մէջ կը լեցնեն ու կը կողոպտեն: Այս կարաւանը Եդեսիա եւ ապա Տէր Ջօր կը քշեն:

Տերսիմ՝ Փրկութեան Ճանապարհ Մը, էջ 1446-1450:

1909ին Արանայի ջարդը մեծ դաս մը եղած էր Խարբերդի հայութեան համար: Խարբերդէն եւ Մելրէնէն երեւելի հայեր Մեծ Եղեռնէն երկու փարի առաջ Տերսիմ գային եւ քիրտը ցեղապետներու բարեկամութիւնն ու պաշտպանութիւնը ապահովելով հնարաւոր միջոցներ փնտրեցին՝ վրանգի մը պահուն Տերսիմ ապաստանելու համար:

Տերսիմի քիրտերը սկիպը կը մերժեն պիտորագրուիլ օսմանեան բանակին մէջ: Աւելի ետք, անոնք հնարամտութեան կը դիմեն. բանակ արձանագրուելով՝ Խարբերդ կ'երթան ու ահագին պինամթերք առնելով փախուստ կու փան եւ Տերսիմ կը վերադառնան:

Տեղահանութենէն ետք, Խարբերդի մէջ պահուրդած այրերը եւ փանափան պարձառներով հոն մնացած կիներն ու մանուկները փրկուած քիրտերու միջոցաւ եւ կաշառքով կ'անցնին Կովկաս:

Տերսիմի մէջ Աղստիկ գիւղը լայն լեռնադաշտ մըն է, ուր քանի մը հարիւր հայեր հանգստութիւն կը գտնեն: Անոնք շինարար աշխատանքի կը սկսին: Մա պարճառ կ'ըլլայ նորաւոր հայոց ապարման: Վարպէտ հիւսն է շինարար Գրիգոր Եղոյեան պաղ ջուրի ակեր գտնելով այս գիւղին մէջ՝ կը վարձաւնէ վանոնք:

Քանի Մը Գազանային Էջեր - Տիկ. Մառա Դուկասեան (նախկին Մառա Վարդանեան) կը պատմէ, գրի առաւ՝ Տոքթ. Յարութիւն Թումաճեան, էջ 1450-1451:

Մառա եօթը տարեկան էր, երբ գիւղը (Խուլագիւղ) կը տեղահանուի: Իր պարագաները իր աչքերուն առջեւ հրապանակարկ կ'ըլլան: Կը մնայ մինակ, եւ քարի մը վրայ նստած՝ կու լայ: Մարխաթուն Քորոն վինք կը տանի թուրք Մարո աղայի տունը, ուր ան սպասուի էր: Մառա կը սկսի Մարո աղայի 45 հորթերը արածել: Մարխաթուն տան գործերով կը վրադէր եւ իր երկու թռններուն կը նայէր: Անոր երկու հարսերը՝ Ջմոյ եւ Մարիամ ցորենի արտերը կ'աշխատէին: Մարխաթուն իր բոլոր սրայուածքը տուած էր Մարո աղային:

Մարխաթունի որդին եւ Մառայի երկու մօրաքորդիները դաշտերուն մէջ փախստական կը պահուրդէին: Մարո աղայի տղան կը սպաննէ Մարխաթունի որդին՝ Կարապէտը: Մարխաթուն երբ դիակը գտնելով կ'ողբայ անոր վրայ, Մարո աղա ասիկա տեսնելով՝ անմիջապէս ծառէն կը կախէ Մարխաթունը: Մարո աղա այս կիները ծեծելով կը տանի Մեպրէ՝ տարագրուելու համար: Ջմոյի տղան՝ ութը տարեկան Մարգիսը եւ Մառա կը փախչին Նուր Ալի կոչուած տեղը, ուր կը մնային Մառայի հարսը եւ քոյրը: Աւելի ուշ, Մարգիս Տերսիմի ճամբով կը փախչի դէպի Ռուսաստան: Երբ անտարանական հայոց ներում կու գայ, Մառա կը վերադառնայ գիւղ, ուր 120 հայեր կը գտնէ: Ապա Շալէպի ճամբով Ամերիկա կ'անցնի 1924ին:

Տիկ. Մարգարիտ Տէր Կարապէտեան (նախկին Գինուեան) կը պատմէ, էջ 1451-1453:

Խուլագիւղի բռնագաղթէն ամիսներ առաջ էրպրումի հաճի Պալօշենց Մեհմէտ աղան յաճախ գիւղ կու գայ եւ հայոց կը

սպառնայ, թէ գիտը ատրակ պիտի դարձնէ:

Խուլագիտի տղամարդիկը կը սպաննեն, իսկ մնացեալ բնակչութիւնը Յունիս 1915ին տեղահան կ'ընեն: Մարգարիտ չորս աղջիկներ ունէր եւ յոյ էր: Ամուսինը տղամարդոց հետ տարուած էր: Կը հասնին Բազմաշէն: Այստեղի ժողովուրդը կը միացնեն կարաւանին, որուն հետ քալող բոլոր ծերերը թուրքերը կայնահար կ'ընեն եւ անոնց միտով ապուր կ'եփեն տարագրեալներուն աչքերուն առջեւ: Մարգարիտ կը կորսնցնէ իր երկու տարեկան աղջիկը: Ուրիշ օր մը կը կորսնցնէ երկրորդ պաակը: Երրորդը գոհ կ'երթայ գիշերուան մը ահաբեկումին: Կը հասնին անապատները: Հոս կը ծննդաբերէ արու պաակ մը, որ քանի մը ժամ ետք կը մեռնի: Կը մնան 50ի չափ կիներ անապատին մէջ: Օր մը թուրքերը իրենց վրան կը յարձակին եւ հորին մէջ կը լեցնեն սիւնք: Մարգարիտ ողջ մնացած իր վերջին դստեր եւ ուրիշներու հետ փախուստ կու տայ: Ան կը յիշէ բազմաշէնցի հերոս Գեօն, որ թուրքի մը ձեռքէն կը խլէ լախտը եւ քանի մը վայրագ թուրքեր կը սպաննէ արագ շարժումներով:

Մարգարիտ իր դստեր հետ կը հասնի Եդեսիա: Հոս թուրք սուրիկաններ իրմէ կը խլեն իր դուստրը եւ արաբներու կը ծախեն: Եդեսիոյ մէջ Մարգարիտ ականատես կ'ըլլայ Տիգրան անունով հայ ապամնաբոյժի մը կախաղան հանուելուն: Թուրք պաշտօնեայի մը կինը սինք իր տունը կը տանի որպէս սպասուի: Հոս ան երեք տարի չարաչար կը ծառայէ: Զինադադարին՝ 1918ին, կը փախչի Պոլիս:

Մեծ Եդէնի պատասխանատուներու դատարարութեան ընթացքին, Մարգարիտ իր վկայութիւնը կու տայ Խարբերդի երկու դահիճներուն դէմ: Քաղաքի գայմագամ Ասիմ պէյ եւ էրպրումցի Մեհմէտ պէյ երկուքն ալ կ'աքսորուին Մալթա կղզին:

1922ին Մարգարիտ Ամերիկա կ'երթայ եւ կ'ամուսնանայ համագիտացի Կարապետ Տէր Կարապետեանի հետ:

Տիկ. Կիլթինէ Տէր Պօղոսեան (Կիլիսասեան) կը պատմէ, էջ 1453-1458:

Կիլթինէ 1915ին կ'ամուսնանայ եւ կ'ունենայ մանչ մը Խուլագիտի մէջ: Տեղահանութենէն առաջ մեկտէյի թուրք մը կու գայ

իրենց Կրօնը եւ կեարքը կը խոստանայ զիրենք իր ապահովութեան Կրօնը առնել, պայմանաւ որ իրենց ամբողջ սրբապատեմքը այս մարդուն Կրօնը: Կը յօժարին:

Այս թուրքին Կրօնը մէջ կը սպառնան Կիլիկիոյ պատրիարքին: Ան նորաձին մանչը առած կը փախչի իր քրոջ՝ Ազնիւին մօտ, որ թուրքի մը Կրօնը կը մնար: Հոսկէ դուրս կը հանեն զինք յաջորդօրէն իսկ: Համբան ոստիկանները լսելով իր պատրիարքին, կը Կրօնին առաջին թուրքին Կրօնը: Այս մարդուն եղբայրը զինք երգիտ կը Կրօնի իր խնդրանքին վրայ եւ հոն կը ձգէ: Կիլիկիոյ կը նախընտրէ Կրօնահան ըլլալ, քան թուրքի մը հետ ապրիլ:

Խուլագիտի Կրօնահանութիւնը կը սկսի 15 Յունիս 1915ին: Իսթուլի ջորէն անցնելէ ետք՝ կը կողոպտուին: Կարաւանը կը միացնեն Սեբաստիայի, Բաբերդի ու Երզնկայի կարաւաններուն: Տալը՝ Սրբոստիան իրեն կը միանայ: Նալ Թէքին կոչուած լեռան կարաւորը կը հասնին: Կը շարժարեն զիրենք եւ Կրօնարարը կը սպաննեն: Երբ Սամոսատ կը հասնին, կարաւանը երկուքի կը բաժնեն՝ դրամ ունեցողները՝ Եղեւիս, իսկ չունեցողները անապար կը դրկեն: Կրկին կը կողոպտուին եւ կը ջարդուին: Իրենք երկուքով ողջ կը մնան: Կիլիկիոյ բազմաթիւ Կրօնարարներէ ետք կը հասնի Սեբաստիայի մօտ Կրօնը մը, ուր կը դարմանեն իր վէրքերը: Հոսկէ ալ փախուստ կու Կրօնը եւ շատ շարժարարներէ ետք կը հասնի Խարբերդի որբանոցը եւ այսպիսով կ'ապարի:

**Asdghig Avakian, "Stranger Among Friends",
հրատ. «Christmas Eve», ՊԷՅՐՈՒԹ, 1960, միջակ
չափի 224 էջ [Աստղիկ Սազեան, «Օտարական`
Ընկերներու Մէջ», անգլերէն]: [էջ 20-83]**


Նեղինակը ծնած է Խարբերդի Քորբէ գիւղը: Երկու փարեկանին կը կորսնցնէ հայրը: Մայրը զինք որբանոց կը փոխէ: Արեւն մը ետք երբ մայրը կը վերամուսնանայ, զինք փոխ կը բերէ: Խորթ հայրը շատ վատ վերաբերմունք կ'ունենայ Աստղիկին հանդէպ: Մայրը ամբողջ օրը իբր հողագործ կ'աշխատի: Փոքրիկ Աստղիկ կ'օգնէ մօրը՝ չարաչար աշխատելով:

1914ին Առաջին Վամաշխարհային Պատերազմը կը սկսի: Գիւղին փղամարդիկը կը հաւաքեն եւ կը փոխին՝ բանակին մէջ ծառայելու պատրուակով: Նաեւ արջառը կը փոխին: Այնուհետեւ գաղթելու հրամանը կը յայտարարուի: Գիւղացիք կ'իմանան, թէ փարուած բոլոր փղամարդիկը Քրմըզը Քոնաք (Կարմիր Շէնք) բանտը կը գտնուին:

Գաղթի ճամբուն վրայ, երբ կը հասնին որբանոցի դրան առջեւ, մայրը որբանոցը կը թողու Աստղիկը, քանի որ դուրսը ամէն տեղ գաղթ, անօթութիւն եւ սպանութիւն կը տիրէին: Մայրը կը միանայ կարաւանին:

Որբանոցը գտնուած միջոցին Աստղիկ կը լսէ բազմաթիւ վայրագութիւններու մասին, որոնք թուրքերն ի գործ դրած են հայ գաղթականները սպաննելու ժամանակ: Շատ հայեր Տերսիմէն դէպի Արեւելեան Վայասփան կը փախչին:

Թուրքերը հայ բանտարկեալները չարչարելով կը բերէին որբանոցին բակը՝ հոնկէ գաղթեցնելու եւ ճամբան սպաննելու



համար: Աստղիկը եւ ընկերուհիները յստակօրէն կը տեսնէին վանոնք եւ իրենց համեստ ճաշերէն կու տային անոնց: Աղջիկները նոյնիսկ անոնց աղփոյտ հագուստները կը լուային:

Աստղիկ տառապեալ հայոց օգտակար կը դառնայ: Որբանոցի ուսուցչուհի Ասանթի բանտարկուած նշանածին ուրեղիք կը տանի: Ան ականատես կը դառնայ ամերիկացի եւ օտար մարդոց՝ տառապեալ հայոց կարարած օգնութիւններուն: Միս Ճէյքըպսըն (Ճիշդը՝ Եաքոպսոն - խմբ.) գաղթի ճամբաներէն կը հաւաքէ մանուկները եւ անոնց հոգ կը տանի որբանոցին մէջ:

Աստղիկ որբանոցին պարտէզը ապաստանած ծեր եւ կոյր կնոջ մը հոգ կը տանի: Ան ապաստան կու տայ եւ հոգ կը տանի նաեւ մահուան ճանապարհներէն եկած ուրիշ հայ կանանց, աղջիկներու եւ տղաներու:

Ամերիկեան Նպաստամատոյց ընկերութիւնը կ'որոշէ որբանոցի բոլոր մանուկները Լիբանան փոխադրել: Անոնք կը տեղափոխուին 1922ին՝ Շայր Քիւնցլըրի առաջնորդութեամբ: Աստղիկ Պէրութի Ամերիկեան հիւանդանոցը կը մտնէ եւ հիւանդապահուի կը դառնայ:

Այնի Տէր Գուրգէնեան, «Կեանքիս Սեւ Էջը...», մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 2, րպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1960, միջակ չափի 50 էջ:

Հեղինակը ծնած է Խարբերդ: Ուսումը սրապած է ֆրանսական միսիոնարութեան դպրոցը, զոր աւարտելէ ետք, ուսուցչութեան ասպարէզ կը մտնէ: Յետոյ կ'ամուսնանայ իր քրոջ ամուսինի որդիին՝ Ռափայէլի հետ եւ կը հաստատուի Բալո:

1914ին պատերազմը կը սկսի: 23 տարեկան Ռափայէլ բանակ կ'երթայ: Շատ չանցած, ան փախուստ կու տայ բալոյի երկու թուրք երիտասարդներու հետ եւ փոխ կու գայ: Կը խորհրդակցին ապստամբութեան համար ճարմը գտնելու մասին: Թուրք ընկերները, որոնք փախուստի համար օգտուած էին Ռափայէլի քով գտնուած քանի մը ոսկիներէն, Ռափայէլը կառավարութեան կը մատնեն: Կառավարութիւնը ամէն օր կը խուսաբկէ Ռափայէլի փոնը, բայց չի գտներ զայն: Ռափայէլի հօրեղբայրը ազդեցիկ բժիշկի մը խոհարարն էր: Անոր միջնորդութեամբ՝ բժիշկը կը պահէ Ռափայէլը՝ զայն իբր անձնական սպասաւորը արձանագրել տալով: Կարճ ժամանակ ետք բժիշկը այնպէս կը կարգադրէ, որ Ռափայէլը փոխանակելու հայ բժիշկի մը սպասաւորը դառնայ: Հայ բժիշկը ապեն մը Տիգրանակերտի մէջ կ'աշխատի, ապա Ռափայէլին հետ միասին կը փոխադրուի Կարին:

Քրոջը եւ քեռայրին հետ ընտանեօք ամառանոց կ'ելլեն գարնան: Կացութիւնը կը վարթարանայ գիտին մէջ: Չէթներ եւ փախստական վիճակներ ամէն օր փոխները կը մտնէին եւ հարսու աղջիկ կ'առեւանգէին: Իրենց երկու փոներէն մէկուն մէջ կը



հիրասիրեն թուրք պեղական պաշտօնեայ մը, որուն պաշտպանութիւնը կը վայելէին: Մակայն, թուրքերը այս գիտնալով, պաշտօնեան օր մը գիշերը գործի վրայ կը պահեն յարձակելու համար Ազնիի եւ քրոջ փան վրայ: Մակայն այս պաշտօնեան պարկեշտ գործուելով, իր սպասաւորը կը դրկէ եւ չարիքին առաջքը կ'առնէ: Թուրք պաշտօնեային խորհուրդով՝ անոնք Բալու կը վերադառնան:

Բալուի մէջ դժուար կայութիւն կը սրեղծուի: Ամէն օր ձերբակալութիւններ փռելի կ'ունենան: Բանտարկուած հայերը կը սպանուէին: Ռափայէլի հայրը բախարի բերմամբ ականջալուր կ'ըլլայ պեղական հեռագրի մը բովանդակութեան, որ կ'ըսէ թէ փարիքոր հայերը պէտք է մորթել, գեղեցիկ աղջիկները զարկել եւ մնացածները փռահան ընել...:

Շուրով, թուրք խուժանին եւ ոստիկաններուն յարձակումը կը սկսի: Վայերը կը փորձեն ապաստանիլ Սր. Աստուածածին եկեղեցին որ պահեստի վերածուած ըլլալով, պիրենք չեն ընդունիր: Պահեստի թուրք պաշտօնեան կը խոստանայ պաշտպանել պիրենք, պայմանաւ որ հարսը՝ Ազնիւր իրեն փրուէր: Իրենց կեանքը փրկելու համար՝ կը համաձայնին: Պաշտօնեան խոճա մը բերելով պաշտօնապէս կ'ամուսնանայ Ազնիւին հետ, որ արդէն դուստր մը ունէր Յուլեր անունով:

Այս ժամանակ Բալու քաղաքի արտորը կը սկսի:

Բալուի ամենամօտ, ամենահայեցի եւ քաջամարտիկ գիտը՝ Վաւարը ինքնապաշտպանական պինեալ պայքարի պատրաստ էր: Մակայն թուրքերը նենգ դաւադրութեամբ մը կը յաջողին ծուղակը ձգել հաւայիները եւ անոնց երիտասարդները ձերբակալել:

Շատ ընտանիքներ իրենց աղջիկները թուրքերու կու փային իրենց կեանքը ազատելու համար: Թուրքը եթէ գիտնար, որ աղջիկը աղքատ էր՝ չէր առնէր: Ամուսնանալէ ետք հայ հարուստի աղջկայ մը հետ, անոր ունեցածքին կը փիրանային, ապա աղջկան ծնողները եւ աղջիկը կը սպաննէին:

Շշուկներ կը շրջին, թէ ժուերը, Կարինը գրաւելէ ետք, Բալուի կը մօտենան: Ազնիւի թուրք ամուսինը վայն ու երախան առած, կարաւանի մը ընկերանալով, կը գաղթէ: Այս մարդը հոգածու կը գործուի Ազնիւի եւ Յուլերի նկատմամբ: Ճամբաները շատ վրան-

գառր էին: Ամէն քայլափոխի՝ անոնք լեռները եւ դաշտերը ապաստանած, կիսամերկ եւ անօթի հայ թշուառներ կը տեսնեն: Կը հասնին Խարբերդ եւ ապա Կիւմիշ Մարէն: Կ'անցնին Եփրատը եւ կը հասնին Արաբկիր: Ազնիւին թուրք ամուսինը Արաբկիրի մէջ տուն եւ երկու կիներ ունէր: Ազնիւ այս տան մէջ Բաբուի Սը. Աստուածածին եկեղեցոյ սկիհը եւ կոնք մը կը տեսնէ: Ուրեմն, իր ամուսինը Բաբուի եկեղեցին կողոպտողներէն մէկը եղած ըլլալու էր: Յետագային Ազնիւ երբ կը փախչի այս տունէն, իր հետ կը տանի սկիհը եւ կոնքը ու զանոնք Մեարէի Սը. Աստուածածին եկեղեցոյ կը յանձնէ:

Ազնիւի բնակած տան դրացուհիին ընտանիքը Իւզպաշէնք կը կոչուէր: Դրացուհին գրեկարդալ գիտէր: Երբ կը տեսնէ, թէ Ազնիւն ալ կարդալ գիտէ, անոր հանդէպ մեծ համակրանք կը տածէ: Մերսի բարեկամութիւն մը կը հաստատուի իրենց միջեւ, որ իր բարի արդիւնքը կ'ունենայ:

Օր մը երբ անոնց հետ Ազնիւ եւ իր երախտան՝ Յուրը բաղնիք կ'երթային, դրացուհին կ'օգնէ, որ անոնք փախչին դէպի Խարբերդ, ուր կը հասնին երկու օրէն: Ազնիւ անմիջապէս կ'ողողուի իր հօրը տունը, գոր սօրարներէ գրաւուած կը գտնէ: Յուսահատ, ան կ'երթայ Մեարէ եւ ըստ բախտի դուռ մը կը գտնէ: Ծեր կին մը ներս կ'առնէ վիրենք: Կը պարտուի, թէ Կարինէն գաղթած հայեր էին: Ետ չանցած՝ Ազնիւ Մեարէի մէջ կը գտնէ իր հօրեղբօր դուռը եւ որդին ու անոնց քով կը փոխադրուի: Թուրք ամուսինը իր փախուստէն ետք իմացած ըլլալով իր տեղը, կը հետապնդէ վինք, բայց չի կրնար համոզել որ ետ գայ: Ազնիւ կը հանդիպի Ռափայէի հօրեղբօր դստեր՝ Արաքսիին, որ թուրքի մը հետ կ'ապրէր: Ազնիւ վերջին երկուքը իր տունը կը տանի:


Ազնիւ մշտապէս կը փնտրէ իր հարստները: Ան կը լսէ, թէ հայրը տարած եւ սպաննած են: Մայրը տեղահան եղած էր եւ Միջագետքի մէջ մահացած: Կ'իմանայ, թէ իր նախկին թուրք ամուսինը կրկին կը հետապնդէ վինք: Թուրքի մը հետ ամուսնացած դրացի հայ կնոջ մը քով տեղ կը գտնէ:

Պարտերսկը կ'աւարտի: Ազնիւ Խարբերդի իր պապենական տան կը փոխանայ: Ապա ան կը հեռանայ Խարբերդէն եւ Յուրի հետ կը հասնի Պոլիս, ուրկէ Ամերիկա կը մեկնին:

Նապարէթ Գ. Եագուպեան, «Յանուն Երջանկութեան (Յուշեր)», ԿԿ. «Յուսարէր», Գահիրէ, 1960, փոքր չափի 139 էջ:

Նեղինակը ծնած է Մարաշ, 1885ին: 1896ի կոպորածին պոհ կ'երթան հայրը, մայրը եւ կրպսեր եղբայրը: Իր Աւերիս եղբօր հետ կը յաջողի վերականգնել հօրը ձգած պղինձի գործը: Ինք եւ եղբայրը արդէն ամուսնացած էին, երբ 1915ին կը փարագրուին եւ Հալէպ կը հասնին: Երկար հալածանքներէ ետք, որոնց ընթացքին թուրքերը կը փորձեն պիրենք Հալէպէն Տէր Ջօր քշել, կը յաջողի Ճեմալ Փաշային նամակ մը յանձնել եւ 13 հոգիով Տամասկոս մնալու արքօնութիւն ստանալ: Հոն կը վրադի ծխախոտի առեւտրով եւ ապա շինարարական գործերով:

1947ին սուրիական խորհրդարանին մէջ երեսփոխան կը դառնայ:



Հայկանոյշ Մելքունեան, «Կեանք Եւ Մահ», մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 9, րպ. Կարթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1960, միջակ չափի 34 էջ:

Նեղինակը ծնած է Բաբերդ, 1895ին: Հայրը Մկրտիչ Մոռոզումեանն է, մայրը՝ Մարգրիտը, քոյրերը՝ Զարուհին, Գեղանոյշը եւ Վարդանոյշը, եղբայրները՝ Մուշեղն ու Խաչատուրը: Վերջինս սինտոր գայած էր:


Մարգրիտը Մարգարեաններու աղջիկ էր, որբուհի: Մօրեղբայրը լեռներուն վրայ պայքարող ֆեւրայի մըն էր:

1906ին, երկաթագործ հայրը ընդանիքը կը փոխադրէ Մէլէրակ գիւղը, ուր թուրք եւ հայ բնակչութեան թիւը հաւասար էր:

1912-1913 փարեշրջանին համար, իբր ուսուցիչ, Լտնք գիւղէն Գրիգոր Արսլանեան անունով երիտասարդ մը Մէլէրակ կու գայ եւ կը նշանուի Հայկանոյշին հետ: Արեն մը ետք անոնք կ'ամուսնանան:

Մայիս 1915ին չէթէները Լտնք գիւղը կը շրջապարեն եւ կը գրաւեն: Թուրք մունտրիկը ձայն կը ձգէ, թէ երեք ժամէն պէտք է գիւղը պարպել եւ հեռանալ: Չէթէները կը մտնեն գիւղ եւ կայիտով կը գլխապեն գիւղին քահանան:

Տան ութը անդամներով ճամբայ կ'ելլեն: Երբ գիւղէն դուրս կու գան, կը նկատեն, որ իրենց գիւղը միակ տեղահանուածը չէր: Ուրիշ գիւղերէ եւս հապարատր հայեր կային: Բոլորը միասին մէկ կարաւանի մէջ կը միացնեն եւ յառաջ կը մղեն: Ամբողջ օրը ծարաւ կը քալեն: Իրիկուան կը հասնին արօտավայր մը, ուր ջուր կար: Թուրքերը կ'արգիլեն ջուր խմել եւ պայն կը ծախեն: Հոն կը



գիշերեն: Զրոյց կը դառնայ, թէ շրջակայքի թուրքերը եւ քիւրդերը իրենց վրայ պիտի յարձակին: Գիշերը ահ ու դողի մէջ կ'անցնեն:

Առաւօտուն կը պատրաստուին մեկնելու: Հասի կարաւանը իր շղթան կապմած, կը հաւաքեն փղամարդիկը, որոնց հրացանաւարկ կ'ընեն քիչ մը անդին: Թուրք խուժանը կը յարձակի կարաւանին վրայ: Ամէն փեսակ պէնքերով կը կողոպտեն ու կը սպաննեն: Այս վայրը Տէլուկ Տաշի կը կոչուէր: Ողջ կը մնան դիակներուն փակ ինկածները միայն:

Վերապրողներու յաջորդ կայանը կ'ըլլայ Ակնը, ուր կը մնան քանի մը օր: Ուրիշ կարաւան մը կու գայ եւ միաձուլուելով կը յառաջանան ու ճամբան կողոպտուելով՝ կը հասնին Արաբկիր եւ եկեղեցոյ բակը կը լեցուին: Հոս միայն մէկ գիշեր կը մնան: Մինչեւ Մելիփինէ, ճամբուն վրայ կողոպտուի, սպանդի եւ առեւանգումի կ'ենթարկուին: Ապա կը հասնին Ֆրընճըլար: Անհանգիստ գիշերներ կ'անցնեն: Իրենց մեկնումի օրը ոստիկանները կու գան եւ փոքրերը կը հաւաքեն: Սօփաւորապէս 200 փոքրիկներ կը փարուին...:

Կրկին ճամբայ կ'ելլեն: Ծարաւը կը փառապեցնէ վիրենք: Իւրաքանչիւր անձի օրական նարինջի մեծութեամբ հայ մը կու փան միայն: Ապա կը փանին Պերեճիկի դաշտը, ուր ջարդ մը եւս փռի կ'ունենայ: Վերապրողները կը քշեն դէպի Նեպիպ եւ անկէ Այնթապ: Հոս վարմանքով կը փեսնեն, թէ գոլէճին մէջ հայ փղաք կային, որոնք բռնագաղթածներու երախաները կ'ապարէին մեծ ջանքերու գնով: Հայկանոյշը հայ բժիշկ Գէորգի, իսկ քոյրը, իբր սպասուի, թրքապած հայ պաշտօնեայի մը փունը կը փանին: Հայկանոյշը եւ քոյրը կը փախչին ու գաղթականներուն կը միանան այգիի փուններուն մէջ: Քանի մը ամիս հոն կը մնան: Կառավարութիւնը այգին կը պաշարէ եւ վիրենք գիտերուն մէջ կը բաժնէ: Հայկանոյշը եւ քոյրը նոյն գիտը՝ Աղբունար կ'իյնան: Կառավարութիւնը օրական փոքրիկ հայ մը կու փար, որպէսզի մուրալու համար քաղաք չերթան:

Օր մը, ոստիկանապետը հարցաքննութեան ընթացքին քրոջը եւ Հայկանոյշին կը թելադրէ ամուսնանալ՝ փոխանակ գիտին մէջ իբրեւ սպասուի աշխատելու: Քոյրը խիստ սուտն էր կը պատրաս-

խանէ ոստիկանին. «Էֆենտի», սուրդ մէջքիդ կախուած է, մեր արիւնը քեզի հալալ թող ըլլայ, մեզի մեռցո՛ւր եւ այդ առաջարկը մի՛ ըներ...»:

Երկու քոյր Ադրունարէն կը փախչին ու կ'երթան Այնթապ, ուր կը միանան գաղթականներուն եւ կը փարուին Եփրատի եզերքը՝ Մեսքէնէ: Ապա կ'անցնին Ռաքքա: Յեղագային, Ռաքքա հասած Լեւոն անունով փոյս մը կը պարմէ հերետեալը.

«Մեզ փարին եւ լեցուցին հսկայ քարայրի մը մէջ: Մուրքը գոցեցին: Ո՛չ ուրելիք կար, ո՛չ խմելիք: Հոն մնալը հեղուհեղու անփանելի կը դառնար: Մեռելները կը հոսէին: Արեն մը վերջ դուռը բացուեցաւ: Երկու հրէշներ էին: Ջարմացած թէ ողջ եմ՝ Վիս դուրս կանչեցին: Ուժաթափ էի: Հարց փութիս ինձի, թէ ի՞նչ կը խմէի եւ կ'ուրելի: Մեռելներուն գրպանը ինչ որ գրայ՝ կերայ: Քարայրին ծայրը ծակ մը կար, ուրկէ պաղ հով մը կու գար: Հրէշներէն մէկը կ'ուզէր սպաննել Վիս, իսկ միւսը՝ ըսաւ՝ «Թող ապրի»: Ջիս ապար ձգեցին»:

Ռաքքայի մէջ Մերասպիոյ կողմերէն հայ կանայք Հայկանոյշն ու քոյրը իրենց փութը կը փանին: Բաւական արեն հոն կը մնան եւ կը կապողորմին:

Թորոս անունով երիտասարդ մը այս կիներէն մէկուն աղջկան հետ կ'ամուսնանայ: Թորոս Հայկանոյշն ու քոյրը իր փութը իր փութը անդամներ կ'արձանագրէ: Կը փոխադրուին Ճարապլուս: Արեն մը հոս մնալէ ետք, երկու քոյր կ'անցնին Այնթապ, ուր սպասուի կը դառնան թուրքերու փութերու մէջ: Հայկանոյշի փութը շար հանգիստ էր: Տանփէրը՝ Օմար էֆենտին կառավարական պաշտօնեայ էր, որ պոլսեցի հայասէր կին մը ունէր: Այս պարճառաւ փայն «կեառուրդէն փոփոմէ», այսինքն՝ «քրիստոնէայէ դարձած» կը կոչէին: Այդ օրերուն Այնթապի փողոցներուն մէջ կը խօսուէր, թէ Անդրանիկ փառան հայ Վիստրներով կու գար: Անդրանիկի գալուստը թուրքերը ահ ու սարսափի մարտնչութիւն էր: Թուրքերը կը սկսին կահ-կարասի ծախել եւ մեկնելու պարտաւարուի:

Արկածի մը պարճառով, խոհանոցին մէջ Հայկանոյշի գլուխը գամ կը մտնէ: Ջայն թրքացած հայ բժիշկի մը կը փանին: Դարմանումէն ետք բժիշկը կ'իմացնէ Հայկանոյշին, թէ ամերիկացիները հայոց համար որքանոց մը բացած են: Այս խօսակ-

ցութիւնը Վայկանոյշ ամբողջութեամբ կը պատմէ Օմար Էֆենտիի, որ շատ կը բարկանայ եւ ոստիկաններուն կը դիմէ ձերբակալելու համար Վայկանոյշը: Ոստիկանները կը հեղապնդեն Վայկանոյշը եւ վայն կը դրկեն որբանոց, ուր ան գոհ կը մնայ եւ աղային րունը վերադառնալէ կը հրաժարի:


Արեն մը Վայկանոյշ որբանոց կը մնայ:

Կը սկսի Այնթապի հերոսամարտը: Բոլոր որբ-որբուհիները Լիբանան կը փոխադրեն:

Վայկանոյշ 1925ին կը մեկնի Ամերիկա եւ Պօղոս Մելքոնեանի հետ կ'ամուսնանայ:

Երանուհի Միմոնեան, «Իմ Գողգոթաս», քաղ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, մայրենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 3, 1960, միջակ չափի 52 էջ:

Երանուհին իր ծննդավայր Արանայէն 1915-ի Յունիսին կ'աքսորուի ուր հոգինոց իր ընտանիքին հետ՝ մեծ մօր հոգածութեան փակ: Կը հասնին Ռաս-ու-Այն, ուր կը կորսնցնէ իր ասպականները եւ կը փարտի Մերփինի թրքական որբանոցը: Հոս կը մնայ մինչեւ 1918: Կը փոխադրուի Հալէպ, ապա դարձեալ Արանա, յետոյ Պոլիս՝ որբանոց: Կը վերադառնայ Արանա եւ կը գտնէ իր մօրեղբայրը: Կ'ամուսնանայ ամերիկահայ կամատր Ասատուր Միմոնեանի հետ:



Աննա Կ. Միրաքեան, «Վերքեր Ու Յատեր», րպ. Կարթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, մապենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 10, Անթիլիաս, 1960, միջակ չափի 67 էջ:

Հեղինակին՝ Արաբկիրի Մաշկերտ գիղայի ծնողները կը գաղթեն Հալէպ, ուր 1889ին Աննա կը ծնի: 1904ին կ'ամուսնանայ Կարապետ Միրաքեանին հետ եւ կը վերադառնան Մաշկերտ: 1912ին Կարապետ կը մեկնի Ամերիկա: 1915ին բաական նեղութիւններէ վերջ, Մաշկերտ եւ Արաբկիր կը տարագրուին: Սկիսքը Աննա իր երեք պաակաները կը թողու իր կեսրոջ մօտ եւ կը բռնէ գաղթի ճամբան: Բարեկամներու միջոցաւ կ'ապաստանի Ծապլվար գիղը, ուր շատ չանցած կը լսէ, թէ կեսուրը եւ պաակաները կը տարագրուին: Կը վազէ կարաւանին երեւէն, որայէսպի ապարէ իր երեք պաակաները, բայց, չար բախտէն, անոնք դաժան թուրքերու ձեռքով կը խլուին իրմէ եւ կը կորսուին: Կը վերադառնայ Մաշկերտ եւ իր կեանքը քարշ կու տայ իր տագրոջ որդիներուն չորս տարի հոգ տանելով: 1920ին կը հասնի Հալէպ, ուրկէ իր տագրոջ պաականերուն հետ կ'անցնի Պոսթըն եւ կը միանայ իր ամուսինին:



Մեսրոպ Տէօքմէճեան, «Արեան Վերքերով...», մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 8, քաղ. Կաթողիկոսութեան Վայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1960, միջակ չափի 69 էջ:

Մեսրոպի հայրը՝ Գարեգինը բանակ գալստի ըլլալով, ընտանիքը ատիկա ուշ կը տեղահանուի Կարինէն: Ճամբայ կ'ելլեն ութ տարեկան Մեսրոպը, երկու քոյրերը, մայրը եւ մեծ մայրը: Սկիզբը դաշտին մէջ հաւաքուած ժողովուրդը կը բողոքէ եւ փոխադրամիջոցներ կը պահանջէ: Կառավարութիւնը գերմանական բեռնատար ինքնաշարժներով վիրենք ճամբայ կը հանէ, բայց Իլիճա չհասած, կառքերու մէջ կը տեղափոխուի եւ այդպէս կը տանուի մինչեւ Իլիճէ: Ապա կը հասնին Աշխալա: Կ'անցնին Բաբերդ եւ Երզնկա, ապա Ակն: Ճամբան շարժումներու կը հանդիպին:



Ար միանան խտրաբոլորիներու կարաւանին: Մեսրոպ եւ մայրը կը փնտռեն հայրը՝ Գարեգինը, բայց ի վտի: Ար հասնին Մելիքիին (Մալաթիա): Ջանտնք գետին եզերքը կը տանին, ուր կը հանդիպին իրենց եկեղեցոյ դպիր Անդրանիկին, որ քրտալստի էր եւ իր քիւրտ աղային համար դրամ կը հաւաքէր կարաւանին: Անդրանիկ կը խաբէ, թէ քիւրտ աղան վիրենք հոն պիտի պահէ եւ պաշտպանէ: Հոս 15 օր կը մնան սովի մարտուած: Ժողովուրդին քով դրամ չէր մնացած: Ետեր իրենք վիրենք գետը կը նետեն, իսկ ուրիշներ իրենց եղած տեղը կը մեռնին: Մեսրոպի մեծ մայրը կը կորսուի. հաւանաբար ինքսիքը գետը նետած էր: Ոստիկանները արտակարգները նաւակներով կը սկսին գետին միւս կողմը փոխադրել՝ հիւանդներն ու տղաները գետին մէջ նետելով: Յուսահատները իրենք վիրենք գետը կը նե-

րեն եւ անձնասպան կ'ըլլան: «Պէտքիք պարխանա» կոչուող այս կարաւանը 16,000 հոգիէ կազմուած էր: Մայրեր, ճարահար, իրենց պատկները քիւրտերու կու տան:

Երկար ճամբայ կը կտրեն: Դրամը հարած էր: Կարնեցի կին մը, որ ջորի մը եւ դրամ ունէր, իրենց կ'օգնէ եւ միասին կ'ընթանան: Կը հասնին Թիթըրիճ անունով գիւղ մը, ուր մէկ ամիս կը մնան: Հոս քիւրտերը կու գան աղջիկ փախցնելու: Քիւրտ մը կը սպառնայ Մեսրոպն ու քոյրերը տանի, որոնք կը սկսին պոռայ: Մեսրոպի մայրը կը դիմադրէ եւ քիւրտը կը հեռանայ: Շար կիներ, իրենց փոքրիկները լքելով, քիւրտերու հետ կը փախչէին: Անպէր փոքրիկներն առանձին մնացած էին:

Օր մը առաւօտուն կը տեսնեն, թէ ոստիկանները փոխուած են: Մետրակի հայաբեայ եւ հրէշ Ահմէտ Չաուշի գլխատրած նոր ոստիկանները ծրագրած էին բնաջնջել այս կարաւանը, որով հետել Եդեսիոյ հայերը հերոսամարտ կը մղէին: Քիւրտ մը իրենց խորհուրդ կու տայ փախչիլ եւ Եդեսիոյ գիւղերը ապաստանիլ: Կրկին ճամբայ կը հանեն Վիրենք: Կը հասնին Դանթարա կոչուած գիւղին մօտերը, ուր կ'իջեանին: Ոստիկանները հոս կ'արգիլեն քիւրտերուն, որ ուրելիք վաճառեն իրենց, իսկ ժողովորդին, որ ջորին մօտենան: Ոստիկանները րոպքը հաւաքելու կը սկսին: Համաճարակի մը տարածման սուր լուրը պատրուակելով, ոստիկանները կը կողոպտեն իրենց հագուստներէն ու բոլոր ստացուածքներէն եւ Վիրենք խումբերու կը բաժնեն: Մեսրոպ եւ ընտանիքը առաջին 150 հոգիներուն մէջ կ'իյնան: Բաւական տեղ քալելէ ետք, Վիրենք քիւրտերը կը շրջապատեն կարաւանը: Ահմէտ Չաուշ եւ ոստիկանները կրկին կը կողոպտեն Վիրենք: Ահմէտ Չաուշ կը փորձէ թոքաթոյսի հայ աղջիկ մը առեւանգել: Ան ջարդն սկսելու հրաման կու տայ քիւրտերուն: Մեսրոպ առաջին հարուածէն գետին կը փռուի: Չարնուած կին մը իր վրայ կ'իյնայ եւ կը ծածկէ Վիրենք: Արեն մը ետք, ձայները կը կտրին եւ ջարդարարները կը հեռանան: Մեսրոպ երբ դիակներու մէջէն կը բարձրանայ, շուրջը փռուած մեռելները կը տեսնէ: Ան կը փնտռէ մայրը եւ քոյրերը, սորոնք կը գտնէ, բայց մայրը կը թելադրէ մեռած ձեւանալ: Քիւրտերն իրենց աչքերուն առջեւ կը սպաննեն իր քոյրերէն մէկը: Այս միջոցին իրենց մօտ կը

բերեն ուրիշ կարաւան մը ու վայն ալ կը ջարդեն: Մետրոպի մայրը ողջ մնալու ուրիշ կանանց հետ կը փախչի, խոստանալով որ ետքը պիտի գայ զինքն ալ տանելու: Մետրոպ ուրիշ երկու կանանց հետ կը փախչի: Կը բարձրանան լեռան գագաթը եւ հոն կը գիշերեն: Կիներէն մէկը, որ կարինցի էր, զինք քրոջ պէս կը հոգայ: Միս կինը կը հեռանայ գետին ուղղութեամբ: Քիւրտերը կը հալածեն զինքն եւ կը բռնեն: Երբ քիւրտերը կողոպտուի կ'երթան, Մետրոպ եւ կարինցի կինը, որուն ան «քոյր» կը կոչէ, կը փախչին: Անոնք ջարդերէն ճողոպրած հայ տղոց կը հանդիպին: Քիւրտ մարդ մը կը տանի «քոյրը»: Մետրոպ եւ տղաքը առանձին կը մնան: Անոնք քիւրտերուն մօտ կ'ապաստանին եւ «կ'աշխատին» ոսկի փնտրելով մեռելներու փորերուն մէջէն: Մետրոպ եւ ընկերը՝ Արսէնը մէկական ոսկի կը գտնեն ու կը պահեն: Այս տղաքը քարայրի մէջ ապրող հայ կանանց կը հանդիպին: Քիւրտ մարդ մը Մետրոպը թուրք ընտանիքի մը մօտ կը տանի: Մետրոպին անունը կը փոխեն Հասանի: Թուրք ընտանիքը կը կերակրէ եւ կը լոգանէ զինք: Արեն մը ետք ուրիշ քիւրտ մը կը տանի զինքն եւ կ'աշխատանէ: Մետրոպ (Հասան) ոչխարներ կ'արածէ: Այս գիտը կը մնայ երեք տարի: Գիտին մէջ քիւրտի մը հետ ամուսնացած Մարիամ անունով հայ կին մը կար: Մարիամ Մետրոպի պաշտպանը եւ ուսուցչուհին կը դառնայ:

Պարերապմը վերջանալէն ետք, Մետրոպին մայրը հայ ջորեպանի մը հետ գիտ կու գայ եւ Մետրոպն ու Մարիամը Եդեսիա կը տանի: Հոս կ'ապրին արեն մը, իսկ երբ ֆրանսացիները կը նահանջեն, կ'երթան Հալէպ: Մետրոպ «Քելեկեան» որբանոցը կը մտնէ: Որ ընտանիք ետք մայրը կու գայ եւ կը միանան:

Հալէպէն կը գաղթեն Պաղտատ, Հայաստան, Ռուսաստան եւ ապա Պարսկաստան: Սօր մահէն ետք Մետրոպ Ա.Ս.Ն. կը գաղթէ:

**Գէորգ Կ. Գանարեան, «Յուշեր Ու Խոհեր», քալ.
«Սեւան», Պէյրութ, 1961, միջակ չափի 317 էջ:**

Նեղինակը ծնած է 1895ին, Եւային Գարահիսար: Մօտակայքը կային մօտաւորապէս քառասուն մեծ ու փոքր գիւղեր, որոնք քաղաքին հետ միասին կը հաշուէին մօտ 30-35 հազար քուր հայ բնակչութիւն մը: Նեղինակը Մր. Փրկիչ Ազգային Վարժարանը կը յաճախէ: 1908ին Օսմանեան Սահմանադրութեան վերահռչակումով բոլոր քաղաքական բանարկեալները ներումի կ'արժանանան, որոնց շարքին՝ հայ քաղաքական գործիչները:



Նեղինակը 1911ին կ'երթայ Պոլիս եւ Կեդրոնական Վարժարանը կը յաճախէ: Կապ կը հաստատուի Դաշնակցութեան՝ Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ապարամարտ» շաբաթաթերթի անձնակազմին հետ: Արեն մը կ'աշխատի Զօնկուլտաքի մէջ իբր գրագիր: Երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը կը պայթի՝ կը վերադառնայ Պոլիս, ուր փակնուլրայ վիճակ մը կը պարպուէր սօրակոչի պարճառով: Ուրիշներու հետ Գէորգը կը ձերբակալեն եւ կ'աքտրեն: Նստով կը տանին Պանտրմա, ուրկէ ցամաքով կը քշեն Գրոգ Աղաճ, Զմիւռնիոյ մօտերը, անցընելով Պարթէսիք, Սոմա եւ այլ քաղաքներէ:

Այս միջոցին, 3 Յունիս 1915ին կը սկսի Եւային Գարահիսարի հերոսամարտը: Հայ բնակչութիւնը կը գրաւէ բերդը եւ մօտաւորապէս 5000 հոգի հոն կը հաւաքուի:

Գէորգ Գանարեան քանի մը ամիս ապաստան կը գտնէ Գրոգ Աղաճի մէջ: Երբը կը ձերբակալուի եւ սինտոր կը տարուի: Զինք Պոլիս կը փեղափոխեն: Ուրբը վիրատրուած ըլլալով, սինք հիւանդանոց կը փեղաւորեն: Հոս հանգստաւէտ պայմաններու տակ եւ

հայ բժիշկներու ու դեղագործներու օգնութեամբ կը մնայ երկար ապեն: Բժիշկին յանձնարարագիրով, օդափոխութեան կը դրկուի Գրոր Աղաճ, ուր կը յայտնաբերէ, թէ բոլոր հայերը արտորած են: Կ'անցնի Ագ-Վիսար: Հոն կը բոլորէ երեք ամսուան ապաքինման շրջան մը հանգիստ պայմաններու մէջ: Վերջացած ըլլալով երեք ամիսը, Գէորգ փախուստ կու տայ, բայց կը ձերբակալուի: Մալարիայէ վարակուած ըլլալով, զինք դարձեալ կը փոխադրեն հիւանդանոց՝ Սոմա քաղաքին մէջ: Հոս հայ բժիշկի մը օգնութեամբ ապաքինելէն ետք կը ծառայէ հիւանդանոցին մէջ:

Վրայ կու գայ 1918ի զինադադարը: Գէորգ կ'անցնի Պոլիս եւ «Ճակարամարտ» դաշնակցական թերթի խմբագրատունը կ'ուղղուի: Գաշնակցութիւնը զինք անմիջապէս կ'ուղարկէ Կիլիկիա՝ հոն հրատարակուելիք «Կիլիկիա» թերթին իբրեւ գրաշարապետ: Սօցաւորապէս 35 որբեր կը յանձնուին իրեն: Նստով ճամբայ կ'ելլէ դէպի Մերսին, ապա կ'անցնի Արանա:

Գիրքին մէջ Գէորգ Գանարեան լայն տեղեկութիւններ կու տայ Արանայի մէջ հաւաքուած գաղթականներուն եւ այնտեղի կուսակցական ու հայկական կեանքին մասին: Ան կ'անդրադառնայ Հայաստանի Հանրապետութեան հռչակման, Հաճնոյ անկումին եւ Միսի պարպումին, կը յիշէ, թէ ի՞նչ պայմաններու տակ Կիլիկիան կը պարպուի եւ ինք Պէյրութ կու գայ:

Հեղինակը գիրքի մնացեալ էջերուն մէջ տեղեկութիւններ կու տայ Պէյրութի հայ գաղութին մասին՝ մինչեւ Մեծ Հայրենադարձութիւնը:

Նուարդ Արծրունի, «Մահուան Չորին Մէջ», րպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1965, փոքր չափի 70 էջ:

Գիրքին սկիզբը «երկու խօսք» կայ Մուշեղ Իշխանին կողմէ:

Հեղինակը բնիկ սեբաստացի է՝ Տէր Յովսէփ Աագ քահանայ Արծրունիի թոռը, Յարութիւնի եւ Սրբոհիի որդին: Գաղթականութենէն առաջ հայրը կը սպաննուի թուրքերու ձեռքով: Կը մնան ինք եւ Չուիկ, Ջարոհի եւ Հայկանոյշ քոյրերը՝ իր մօր հոգածութեան տակ: Չուիկը Մեքսսպիոյ Հայ Սքուլը աւարտելէ ետք կ'ուսանի Խարբերդի «Եփրատ» Գոլէճը եւ կ'ամուսնանայ Ամերիկայի մէջ: Ջարոհին բժիշկի մը հետ կ'ամուսնանայ Եղոկիա (Թոքսթ) եւ




չորս փուսակ կ'ունենայ: Հայկանոյշը Մեքսսպիոյ Բարձրագոյն Վարժարանը (Հայ Սքուլը) աւարտելէ ետք ուսուցչութիւն կ'ընէ Արամեան Վարժարանին մէջ, ուր պաշտօնակից կ'ըլլայ Դանիէլ Վարուժանին: Հայկանոյշ Եղոկիա կ'երթայ եւ աղջկանց ճեմարանը ուսուցչական պաշտօն կը վարէ: Իսկ հեղինակը 1912ին աւարտելէ ետք Բարձրագոյն Վարժարանը, իր մօր հետ Եղոկիա կ'երթայ եւ ընտանեօք հոն կը հաստատուի: Հեղինակը աղջկանց ճեմարանը կը դասաւանդէ: Եղոկիոյ առաջնորդն էր Շաւարշ Ծ. վրդ. Սահակեանը, որ հերոս մըն էր: Ան կը նահապտակուի 1915ին:

Նուարդ յեղադարձ ակնարկով մը կը յիշէ 1908ի Օսմանեան Սահմանադրութեան վերստին հռչակումը: Հնչակեան եւ դաշնակցական ֆեդայիներ լեռներէն վար կ'իջնեն եւ Մեքսսպիա կու գան: 1909ին կու գայ նաեւ Մեքսսպացի Մուրափը (բուն անունով՝ Տօնական Խրիմեան, հռչակաւոր հայդուկ - խմբ.), որ չէր հաւատար Սահմանադրութեան եւ միշտ կը թելադրէր արթուն կենալ:

Եւրոկիոյ մէջ հալածանքը կը սկսի 1915ի Յունիսին: Նուարդին մայրը կը բանտարկեն, Ջարուիին քրոջ ամուսինը կը սպաննեն: Նուարդը եւ քոյրերը, իրենց զաւակներով, ուրիշ խումբ մը հայուհիներու հետ կը նախընտրեն արտորոյի, քան հաւաքափոխ ըլլալ: Անոնք կամովին ճամբայ կ'ելլեն եւ նոյն իրիկունը Եէնի խան կը հասնին: Նուարդը եւ Շայկանոյշը կնութեան առնել ուրող թուրք երիտասարդներ կը հետապնդեն զիրենք կարաւանին մէջ: Շայուիները հրաշքով կ'ազատին: Ճամբու ընթացքին, դաժան պայմաններու տակ կը մահանայ Նուարդի քրոջ ութամեայ աղջնակը՝ Արուսեակը: Քիւրտերը կը շարունակեն զիրենք հալածել: Մահացած Արուսեակին քոյրը՝ Արաքսիան, ճամբան կը մնայ: Մութասարիֆին (գաւառապետ) տղուն հետ շամուսնանալու համար, Շայկանոյշ ինքզինք Եփրատի ջուրերը կը նետէ: Կարաւանին մէջ կը մնան Ջարուիին իր երկու զաւակներով եւ Նուարդը: Երկու էջ կը վարձեն, սակայն իշապանը կ'առեանգէ փոքրիկները: Անելի ուշ՝ հիւանդ Ջարուիին ճամբան կը մնայ: Նուարդ քիւրտ մուխթարի մը տունը կ'ապաստանի եւ կ'աշխատի, սակայն հոնկէ ալ կը տարագրուի եւ Եդեսիա կը տարուի: Այնպէտէն կ'երթայ Մելերակ, ուր հասարակապետ մը կ'ուզէ ամուսնանալ անոր հետ: Օր մըն ալ Յակոբ անունով հայ երիտասարդ մը կ'ազատէ զինք եւ իր հետ կ'ամուսնանայ: Անոնք շատ հայեր կ'ազատեն: Վերջապէս կը հասնին Պէյրութ եւ հոն կը հաստատուին:

Օրորա (Արշալոյս) Մարտիկանեան, «Հոգիներու Աճուրդը - Մեծ Եղեռնէն Վերապրող Հայուհի Օրորա Մարտիկանեանի Վաւերական Պարմութիւնը», խմբագրեց՝ Հ. Լ. Կէլթս, «Ջարթօնք» օրթի թերթօն թիւ 58, թարգմ. Մարտիրոս Գոշազճեանի, Պէյրութ, 1965, միջակ չափի 189 էջ (հայերէն) խոսքին անգամ լոյս տեսած է անգլերէնով՝ "The Auction of Souls - The Story Of Aurora Mardiganian, The Armenian Girl, Who Survived The Great Massacres", interpreted by H.L. Gates, London, 1917]:

Օրորա Մարտիկանեան ծնած է Չմշկածագ, 1901ին: Մութասարիֆ Հիւսէյն փաշա կ'ուրէ պայն առնել իր հարեմին մէջ: Օրորային հայրը երեք անգամ կը մերժէ փաշային առաջարկը: Հայրը եւ եղբայրը ոստիկանապտուն կը րանին եւ ապա կը հրկիպեն բանտին մէջ: Ընտանիքին անդամները Արաբկիր կը րարագրուին: Ճամբան Օրորան կ'առեւանգուի, բայց կը յաջողի փախչիլ ու միանալ սիրելիներուն կարաւանին: Արաբկիր հասնելէն առաջ ոստիկանները կարաւանը կը շեղեցնեն դէպի հարա: Մպան կը սպաննէ քոյրը: Արաբկիրէն դուրս կը բնակին գաղթավայրի մը մէջ, ուր երեկոյ մը ան ուրիշ աղջիկներու հետ կ'առեւանգուի քիւրտերու կողմէ: Կը րարուի Ակն, ուր Օրորա միւս աղջիկներուն հետ կը մերժէ իւրամանալ: Կը քշեն պանոնք դէպի հարա՝ Մելիպինէ, ուր պանապան շրջաններէ (Ակն, Մերասպիա, Եղոկիա, Երպնկա, Էայլն) րարագրեալներ հաւաքուած էին: Հոս Օրորա կ'ապաստանի ամերիկացի միսիոնարուհի Միս Մըքլէյնի րունը, սակայն, այս վերջինին միջա-






մտութիւնները ապարդիւն կ'անցնին: Օրորա դարձեալ կը տարագրուի: Ճամբան ահագին խժոժութիւններ կը գործադրուին իրենց նկատմամբ: Օրորան հայ աղջիկներուն հետ կը տանին Տիգրանակերտ ու կը յանձնեն գերման սպաներուն, որպէսզի այս վերջինները զուարճանան: Օրորա կը փախչի, Կարինէն եկող կարաւանի մը կը միանայ եւ կ'ողողուի Եդեսիա, ուր իր հարազատներուն մնացորդացը կը գտնէ: Մուշի մօտերը, Անտոք լեռան ստորոտը, քիւրտերը կը յարձակին եւ կ'առեւանգեն Օրորան եւ չորս աղջիկներ ու կը ծախեն: Քանի որ Օրորան դեռ կը

մերժէր իսլամանալ, պայն նուէր կու տան Մուշի Ահմէտ պէյի տղուն՝ Նապըմի, որ կը բերէ Օրորային մայրը, քոյրը եւ եղբայրները ու բոլորը սպաննել կու տայ: Օրորան կը բանտարկեն: Չմշկածագի վարդապետը, որպէս հովի ծպտուած, կը յաջողի փախցնել Օրորան եւ պայն կը պահէ քիւրտ ընտանիքի մը տունը, սակայն ինք կը սպաննուի Ահմէտ պէյէն: Օրորա կը փախչի Տէրսիմ եւ ապա կ'անցնի Կարին, ուր կը հանդիպի Զօրավար Անդրանիկին, որ մաքանի մը կը նուիրէ իրեն: Օրորա կ'անցնի Փեթրուկրատ, եւ իր Գողգոթայի վերջաւորութեան Նիւ Եորք կը հաստատուի:

Թովմաս Գ. Մկրտիչեան (անգլիական նախկին դեր-հիւպարոս Տիգրանակերպի), «Տիգրանակերպի Նահանգի Չարդերը», մարտնաշար «Արարատ» օրթի, թիւ 51, րպ. «Արարատ», Պէյրութ, 1965, միջակ չափի 84 էջ: [էջ 1-68]

Գիրքը առաջին անգամ լոյս տեսած է 1919ին, Գահիրէ «Տիգրանակերպի Նահանգին Չարդերը Եւ Քիւրդերու Գապանութիւնները (Ականաբեւի Պարմութիւն)» խորագիրով՝ Գրիգոր Ճիհանեանի րպարանէն: Վերահրատարակութեան ժամանակ քիւրդերու մասը պեղչուած է:

Թրքական պետութիւնը, «Պարերապմական պէտք»ի անունով, Տիգրանակերպի մէջ հայոց բոլոր ապրանքները (բրդեղէն, կրաւեղէն, սննդեղէն, երկաթեայ անօթներ եւ գործիքներ, արջառ են.) կը հաւաքէ 1914ի Օգոստոսին: Վայ արհեստարարներ ստիպողաբար ձրիօրէն կ'աշխատին ւորանոցներու շրեմարաններուն եւ գործարաններուն մէջ: Տիգրանակերպի շուկան կը հրկիպուի եւ հայ վաճառականները հսկայական վնաս (շուրջ կէս միլիոն թրքական լիրա) կը կրեն: Այս միջոցին Տիգրանակերպի վալի կը դառնայ ուղղամիտ եւ անգլիամէտ մարդ մը՝ Վամիտ պէր:



Օսմանեան Թուրքիա պարերապմ կը յայտարարէ Գերմանիոյ կողքին՝ Դաշնակիցներուն դէմ: Թովմաս Տիգրանակերպի անգլիական հիւպարոսին հետ կը յաջողի փախչիլ եւ Փոր Սայիտ հասնիլ: Թովմասի՝ Խարբերդ գրնտող րիկինը ու վեց ւաակ-

ները Ռուսիոյ միջոցով Անգլիա կ'անցնին:

Համիտ պէյը դէմ էր Իթթիհատի դժոխային ծրագիրներուն գործադրման: Ան կը փոխանակուի Մուսուլի վալի «Ճէլլապ» բժիշկ Ռեշիտ պէյով, որ Տիգրանակերտ կու գայ իր չէրքէպ օգնականներով:

Բանտերէն արձակուած ոճրագործներէ եւ գողերէ բաղկացած «միլիս» մը կը հիմնուի հայերը ջարդելու նպատակով: Ինչպէս բոլոր քաղաքներուն ու գիւղերուն, Տիգրանակերտի մէջ ալ հայերը օսմանեան բանակ կը կանչուին: 1914ի վերջատրութեան Պատերազմական Սպարապետէն եկած հրամանով, հայ պինտորներուն ձեռքէն պէնքերը կ'առնուին եւ անոնք հայ բնակչութենէն հեռու տեղեր՝ «ամելիէ թապուրի» (գործատրական բանակ) կոչուած գունդը կը քշուին՝ ճանապարհաշինութեան եւ այլ գործերու համար: Տունը մնացած էին 17էն վար եւ 50էն վեր տղամարդիկ: Ոմանք ալ եռապարտիկ «պետեր» վճարելով հեռու մնացած էին պինտորական տաժանելի եւ «ամելիէ թապուրի»ի թիապարտի կեանքէն:

16 Ապրիլ 1915ին կը սկսին ձերբակալել Տիգրանակերտի հայ երիտասարդները, երեսփոխանական, թաղական, տնտեսական, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ ուրիշ ազգային մարմիններու բոլոր անդամները: Մայիսին կը ձերբակալուին հայ առեւտրականները, մտաւորականները եւ երեք յարանուանութիւններու եկեղեցականները, որոնք կեդրոնական բանտի պնտանները կը նետուին: Երեք կուսակցութիւններու պատասխանատուներն ալ կը ձերբակալուին: Բանտին մէջ տանջանքէ եւ ծեծէ մեռնողներ կ'ըլլան:

Աքտրուածները, տակաւին Տիգրանակերտէ դուրս չեկած, վալին լուր կը դրկէ անոնց ճամբուն վրայ գրնտող քիւրտ առապակապետներու, որպէսզի բնաջնջեն պանոնք: Այսպէս պատահեցաւ աշիրեթապետ Ամիրոյի մարդոց ձեռքով Շքավթան գիւղի հայոց սպանողը Պետուանի ձորին մէջ: 9 Յունիս 1915ի երեկոյեան Տիգրանակերտի հայութենէն 636 ընտրեալներ՝ մտաւորականներ, վաճառականներ եւ այլ կարեւոր դէմքեր կը տանին ու կը սպաննեն: Տիգրանակերտի վալին եւ երեսփոխան Ֆէյպի պէյ, Ամիրոն Տիգրանակերտ կը հրաւիրեն վարձատրելու պատրուա-

կով եւ պայն կը սպաննեն:

Տիգրանակերպի իսլամները 3 օր փեւած արտակարգ ժողով մը կը գումարեն եւ կ'որոշեն ջարդել Տիգրանակերպ գաւառի բոլոր հայերը, խնայելով միայն գեղեցիկ կանանց՝ պանոնք իրենց հարեմները փանելու համար:

Տիգրանակերպէն դրկուելով, մութասարիֆ Պէփրէփուրին եւ գումիսէր Մեմբուտի կը գործադրեն Մերփինի հայոց ջարդերը: Այս փոհերուն մէջ կը գտնուի հայ կաթողիկէ Բզնափոս արք. Մալոյեանը: Նոյնպէս փոհահան կ'ըլլան եւ կը ջարդուին Տիգրանակերպ գաւառի բոլոր գաւառակներու եւ գիւղերու հայերը:

Երեսփոխան Ֆէյլի պէյ եւ վալի Ռեշիփ պէյ կը գործադրեն Տիգրանակերպ քաղաքի ջարդերը: Անոնք նախ կը փարագրեն հայերը եւ ապա ճամբուն վրայ մաս առ մաս սպաննել կու փան պանոնք:

Օսմանեան կառավարութիւնը 1-3 փարեկան հայ որբերը կը հաւաքէ աւերարանականներու դպրոցը՝ անոնց հոգ փանելու պատրուակով: Որոշ ափեն մը ետք 400 հայ որբերը Տիգրիսի կամուրջէն վար կը նետեն: Առողջապահական քննիչը՝ բժիշկ Բամայիլ պէյ, չհանդուրժելով ասիկա երբ կը գանգափի, թուրքերը պայն Պոլիս կ'աքսորեն:


Անհափական մակարդակի վրայ, կարգ մը հերոսներ ինքնապաշտպանութեան կը դիմեն, փունէ փուն, փանիքէ փանիք, քարայրէ քարայր կը կռուին եւ իրենց հետ պատուով կ'ապարեն նաեւ ուրիշներ: Այսպիսիներէն են 1895ի հերոս Գապապեանը, Մերփինցի Մարփօն, Վարդուի Կիրակոսը, Զուպաւարձի Մընձօն եւ Բապիւրօղլու Մարփօն:

Տիգրանակերպ գաւառի 150 հազար բնակչութենէն կ'ապարին միայն 50 հազար հայեր, որոնք Վալէպ գալով պանապան փոհեր կը ցրուին:



Երուանդ Տէրենց, «Ես Տեսայ Տէր Զօրի Դժոխքը...», փպ. «Սեւան», Պէյրութ, 1966, միջակ չափի 64 էջ:


Երուանդ Տէրենց ծնած է Այնթապ, 1907ին: 1915ին հօրը, մօրը եւ երկու եղբայրներուն հետ կ'աքսորուի: Կը հասնին Պապ, Մումպուճ եւ ապա Տէր Զօր, ուր կը մահանան հայրն ու ապա մայրը՝ ծննդաբերելէ ետք: Երուանդը թուրքի մը կը ծախեն: Առերես թրքացած երկու հայեր օր մը վայն կը ճանչնան, կարգադրութիւններ կ'ընեն ու վայն Այնթապ՝ իր մեծ հօրը քով կը դրկեն: Հոն կը կապուրտուի եւ կ'աշխատի, ապա, սինադադարին, որբանոց կը մտնէ: Որբանոցը կը փոխադրուի Հալէպ, ապա՝ Պէյրութ



եւ Ճիւնի: Բարերարութեամբ՝ երկու փարի կ'ուսանի ֆրերներու դպրոցը եւ ապա կ'աշխատի: Կը նամակակցի Եթովպիոյ իր ազգականներուն հետ եւ հոն կը մեկնի: Կը հարստանայ եւ դիրքի տէր կը դառնայ. բայց գոհ չ'ըլլար կեանքէն, որովհետեւ կ'ուզէ Հայ Դատին համար բան մը նուիրել: Իր այս գրքոյկով կոչ կ'ուղղէ հայութեան, որ մոռնան բոլոր փարակարծութիւնները եւ միացած աշխատին Հայ Դատին համար:

Սարգիս Լալէեան, «Յուշամատենան Նուիրուած Արուր Յ. Լեւոնեանի», քաղ. «Արլաս», Պէյրութ, 1967, միջակ չափի 336 էջ:

Արուր Լեւոնեան ծնած է Այնթապ, 1894ին: Կ'ուսանի Այնթապի մէջ եւ 1915ին կ'աւարտէ քաղաքին ամերիկեան գոլէճը (Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճ - խմբ.): Կը Վինտրագրոյի օսմանեան բանակին եւ կը ծառայէ 1915-1916 Վարիներուն: Գերի կ'իյնայ անգլիացիներուն ձեռքը եւ կը ծառայէ անգլիական բանակին մէջ 1916-1919ին: 1919ին իբր անգլիական բանակի սպայ կու գայ Այնթապ, նաեւ կը պաշտօնավարէ Եդեսիոյ մէջ: Կը բաժնուի անգլիական բանակին եւ 1920ի սկիզբը կը ղեկավարէ Այնթապի ինքնապաշտպանութիւնը: 1922ին Այնթապը կը ձգէ եւ Հալէպ կը հաստատուի: 1940-1945ին կրկին կը ծառայէ անգլիական բանակին մէջ: Կը մահանայ 25 Մայիս 1963ին, Փենսիլվանիոյ մէջ, Ա. Մ. Ն.:



Վերապատուելի Միսակ Մանուկեան, «Քրիստոսի Անվեհեր Վկան - Ինքնակենսագրութիւն», քաղեց եւ թարգմանեց՝ Վեր. Յ. Յ. Սաղըրեան, Պէյրութ, 1967, միջակ չափի 320 էջ:

Վեր. Միսակ Մանուկեան ծնած է 1877ին, Կեսարիոյ շրջանի Նելզեհիք քաղաքին մէջ: Հայրը՝ Հաճի Ստեփան Մանուկեան բողոքական կը դառնայ: 1891ին Տարսոնի Գուլէճը («Մէյնթ Փոլ» Գուլէճ - խմբ.) կը մտնէ, ապա հայ աւերարանական պատուելի կը դառնայ: 1897ի ամառը իր հաշտոյն դպրոց մը կը բանայ: Քոյրը կը մահանայ որբուհի մը ձգելով: Կը ստիպուի իր անձնական դպրոցը փակել եւ ուսուցչութիւն ընել իր ազգականներուն նիւթապէս օգնելու համար:



1900-1901ին Տարսոն եւ Արանա հոգեւոր արթնութեան շրջան մը կ'անցընեն: Հեղինակը հոգեւոր դաշտին մէջ, հայ երիտասարդներու շրջանակին մէջ կը գործէ: Ամսականը պիտի հայթայթուէր Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան (Y.M.C.A.) Համաշխարհային Յանձնախումբին կողմէ: Ան մօտէն կը հետեւի Y.M.C.A.ի գործունէութեան: 1909ին Արանա գտնուելով՝ ականատես կ'ըլլայ քաղաքի հայութեան ջարդին:

Միսակ Մանուկեան կ'ամուսնանայ Ռոպա Թոփալեանի հետ: Անգլիոյ մէջ: 1913ին Ռոպան կը մահանայ հիւժախտով: Հեղինակը կրկին կ'ամուսնանայ Բրկիւս քաղաքէն Մարիքա Միրաֆիմիտի հետ:

Երբ տեղահանութիւնը կը սկսի 8 Մայիս 1915ին, հեղինակը Արանա կը գտնուէր: Ան տարագրութեան ճամբան կը բռնէ 1915ի Սեպտեմբերին կնոջ եւ զակին՝ Պետրոսին հետ, շոգեկառքով: Կը

հասնին Օսմանիէ, ուր արդէն Պոլսէն եւ այլ տեղերէ հայ գաղթականներ կային, եւ վրան կը լարեն: Կը հասնին Ռաճօ, ուր բախար կը ժպտի եւ իրենց կ'առաջարկուի Հալէպ երթալ շոգեկառքով: Կը հասնին Գաթմա, ուրկէ կ'ուղղուին Հալէպ եւ վեր. Էսքիճեանի տունը կ'իջեւանին: Ս. Մանուկեանը 1916ի Մայիսին Ըեքերիէ որքանոցի պատրաստանաբար կը նշանակուի եւ Հալէպ մնալու արտօնագիր կը ստանայ: Այդ ժամանակ Հաքքը պէյ Հալէպի որքանոցի 1600ի չափ որբերը Պոլսոյ կողմերը դրկելու գաղափարը կը յղանայ: 1917ի Մարտին 420 որբեր ճամբայ կը հանուին եւ Գոնիա կը հասնին: Մինչեւ Պոլիս հասնիլը բոլորն ալ կը ցրուին վանապան տեղեր՝ ոմանք հողագործութեան եւ ոմանք՝ դպրոց: Որբերուն կ'առաջարկուի իսլամանալ, սակայն անոնք կը մերժեն: Օգոստոս 1918ին, թուրք սպայ Ավնի պէյի օգնութեամբ, որուն կինը հայուհի է, հեղինակը Արանա կը փոխադրուի:

Նոյեմբեր 1918ին, Միսակ Մանուկեան որբահաւաքի գործին մէջ իր բաժինն ալ կը բերէ: 1919ին սկիսբը, հայ որբահաւաքին առընթեր, կը քարոզէ Արանայի եւ շրջակայ գիւղերուն մէջ, ինչպէս Հարունիէ եւ Օսմանիէ: Կ'այցելէ Չորք Մարպպան, Նաճարլը, Կարս Պապար, Միս ու այլ տեղեր եւ կը վերադառնայ Արանա: Ան ամերիկեան Մերձատր Արեւելքի Նպաստամարոյցի անունով օգնութիւններ կը բաշխէ:

Հեղինակը 16 Յունիս 1920ին ընտանիքը կ'ուղարկէ Կիպրոս 500 հայ որբերու հետ միասին: Ականատես կ'ըլլայ Կիլիկիոյ հանրապետութեան հռչակման: Յունուար 1921ին կ'այցելէ Կիպրոս՝ իր ընտանիքին, ապա Փոր Մայիտի ճամբով կը մեկնի Ֆրանսա եւ Անգլիա, ուր կու գայ ընտանիքը Կիպրոսէն եւ իրեն կը միանայ:

Անգլիոյ մէջ կը շրջի այլ տեղեր՝ քարոզչութեան համար: Կը հասնի Էտինպուրկ, ուր կը լսէ Կիլիկիոյ պարպումը Նոյեմբեր 1922ին: Ընտանիքը Անգլիա թողելով, Աղեքսանդրիայի ճամբով կը հասնի Կիպրոս եւ ապա Պէրոս:

Վերապատուելի կը ձեռնադրուի Անգլիոյ մէջ եւ ընտանեօք կը վերադառնայ Պէրոս: Կ'այցելէ Հալէպի մօտիկ տարագրութեան բոլոր վայրերը, ինչպէս Պապ, Մումպուճ, Մանճաք, Քեսապ, Գըրըքլիսան, Ճարապլուս (Քեսապն ու Գըրըքլիսանը կը մտնէին Աղեքսանդրիոյ Մանճաքի կապմին մէջ - խմբ.) եւ այլն:


**Եղուարդ Ռազուպեան, «Եղեռնաքաղ Որաներ»,
պպ. «Շիրակ», Պէյրուօ, 1968, փոքր չափի 344 էջ:**

Մեքաստիա. խաղաղ կեանք, պատյարներ, խաղեր: 1915ի գարնան Եղուարդի հայրը բանակ կ'երթայ: Քիչ ետք փարագրութիւնը կը սկսի: Ար կողոպտուին ընտանիքին գոհարեղէնը, ապա հագուստեղէնն ու ոսկեղրամը: Ար հասնին Մեքաստիոյ հարարը՝ Գանկալ գիղաւանը: Տեղացի կանայք դրամի դիմաց կ'օգնեն կարաւանին: Իր հետք են մայրը, չորս եղբայրները, քոյրը, մօրաքոյրը, մօրեղբայրը եւ մօրական մեծ մայրը: Ար հասնին Մելիփինէի մօտերը գտնուող, մեծ մասամբ քրտարնակ Վասան Չելեպի գիղը, որու հայ բնակչութիւնն արդէն փարագրուած էր, բացի քանի մը թրքացածներէ: Այս կարաւանին մէջ գտնուող Փրոֆ. Ռուբէն Ռազուպեան, դեղագործ մօրեղբայրը՝ Գրիգոր Թահմապեան եւ ուրիշներ կը նահապակուին: Կ'անցնին Ֆըրընճըլար գիղէն ու կը հասնին Մելիփինէ, ուրկէ հապի ճամբայ ելած՝ ընտանիքին անդամները մէկ առ մէկ կը նահապակուին: Ար մնան ինք, մայրը եւ քոյրը: Արաք մը կ'որդեգրէ քոյրը: Կ'անցնին Վերան Շեհիրէն, ուր արաբներ վիրենք կը հիւրասիրեն: Ար հասնին Ռասուլ-Այն, ուր արաք մը կ'որդեգրէ Եղուարդը: 1933ին կը բաժնուի արաբներէն ու կ'ապաստանի Վալէպ, հայրենակիցներու մօտ: Յետագային վերջնականապէս կը հաստատուի Լիբանան:



Լեւոն Կճիկեան (Առաքելեան), «Մօրենիկ Եւ Իր Սեւ Տարին», Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 14, Անթիլիաս, 1969, միջակ չափի 176 էջ:

Մօրենիկ գիտը կը գտնուի Խարբերդի արեւելքը: Լեւոնի հայրը զինուոր կը Կարուի 1915ին, իսկ ինք, քոյրը եւ մայրը կը Կարուին ծանօթ թուրքի մը գիտը, ուր թուրքը կը դաւաճանէ իրենց եւ արտօրել կու Կայ մօրը: Ինք եւ քոյրը կը մնան թուրքին մօտ, որովհետեւ քոյրը բռնի կ'ամուսնացուի այս թուրքին որդիին հետ: 1921ին Լեւոնը կը Կարագրուի եւ Հալէպ կը հասնի:



Տոքթ. Ալեքիս Նազգաշեան, «Եղեռնի Հեղքերով», քաղ. «Տօնիկեան», Պէյրուք, 1969, միջակ չափի 141 էջ:

1) «Հայ Մրաւորականներու Ձերբակալութիւնը Եւ Այաշի Բանարը», էջ 1-58:

Հեղինակը 24 Մարտի 1915ի գիշերը Պոլսոյ իր փան մէջ կ'իմանայ Կոմիտաս Վարդապետի, քիչ ետք՝ Ժագ Սայապալեանի եւ ուրիշներու ձերբակալութիւնը: Առփուան դէմ զինք ալ կը ձերբակալեն ու կը փանին Բանկալթիի ոստիկանարանը, եւ ապա կեդրոնական բանարը: Հոն կը փետնէ Պոլսոյ մրաւորականներէն, կրօնականներէն եւ երեսելիներէն շարքերը՝ Միամանթօ (Արոմ Եարճանեան), Կավոզ (Երուանդ Թուրաեան), Կիկօ, Միհրդար Հայկապն, պարուելի Քերովբէ, Յարութիւն Ճանկիլեան, նպարավաճառ Հայկ Թիրեաքեան, Միլլիօ Ռիչչի (Քրիս Ֆէնէրճեան), բժիշկներ Վահրամ Թորգոմեան, Գրիգոր Ճելալեան, Տիգրան Ալլահվերդի եւ ուրիշներ:



Առաջին գիշերը զիրենք ճամբայ կը հասնեն: Կը հասնին Մերայ Պորնուի ծովեզերքը, սուինաւոր զինուորներով շրջապարուած: Ընդհանուր կը մտնեն: Հայրարփաշայի կայարանը կը հասնին: Հոս երեք կարգերու կը բաժնեն զիրենք: Տոքթ. Նազգաշեան կ'իյնայ Ա. կարգին մէջ, ուր կային Կոմիտասը, Յովհան եւ Գրիգորիս Պալագեան վարդապետները, բժիշկ Թորգոմեանը, Տիրան Քէլէկեանը, Դոկտ. Յակոբ Թօփճեանը, Նարկիլէճեանը, Մագօ Աղամիրպալեանսը, Յարութիւն Ճանկիլեանը, Մինաս Չերապը եւ քանի մը ուրիշներ: Ընդհանրով զիրենք Նիկոմեդիա (Բւմիթ) կը փանին: Հետեւեալ գիշեր Էսկիշեհիր կը հասնին: Ճամբան հայ

կը ճարեն: Իրենց չարութիւնը շոգեկառքէն դուրս ելլել: Յաջորդ օրը, կէսօրին, Անգարայի մօտ Մինճան Քէօյ գիւղը կը հասնին: Շոգեկառքէն վար կը կանչուին Ժագ Սայապալեան, Ակնունի (Խաչատուր Մալումեան), Ռուբէն Զարդարեան, Մուրադ (Համբարձում Պոյաճեան) ու ապա հեղինակը: Կը նստին կառքերը: Իր կառքին մէջ կային Բարսեղ Եսայապալեան եւ նպարավաճառ Հայկ Թիրեաքեան: Ճամբան աղբիւրի մը մօտ կը կենան եւ կտոր մը հաց ու թէյ կը ճարեն: Կ'իմանան, թէ այս կարաւանը 71 հոգի է կը բաղկանայ: Կը հասնին Այաշ, ուր իրենց կը սպասէին գայմագամը եւ դարաւորը: Ետք դժուարին պայմաններու տակ, 71 հոգի կը սեղմուին սրահի մը մէջ եւ կը համակերպին իրենց վիճակին: Իրենց մէջ ձիթապտուղի եւ այլ բաներու մատակարարումը կը կատարէին Բարսեղ Եսայապալեան, Ժագ Սայապալեան եւ Միհրդատ Հայկապն: Հոս կային նաեւ բժիշկ Նապարէթ Տաղաւարեանը եւ Գարեգին Խաժակը (Չաքալեան), Միամանթօն, Մամուկօֆը, Մելքոն Կիրճեանը (Հրանդ) եւ ուրիշներ: Տեղը շարունակ է, անոնք մէկական ժամ հերթով կը պառկին գեղնին: Ոստիկաններուն արտօնութեամբ, երկու հոգիով շուկայ կ'իջնեն ուրելիք ճարելու համար: Անոնք տակաւ առ տակաւ բանտին մէջ կը կազմակերպուին կենցաղային հարցերը լուծելու համար: Անոնք իրենց բանտարկութեան պատճառը կամ իմաստը ի վտար կը փնտրէին: Եւ որովհետեւ հարցը կարելի չէր լուծել, ուստի կ'ուրէին, կը խմէին եւ կը պուրճանային բանտին մէջ: Կայութեան վտանգը եւ լրջութիւնը կը պայտին, սակայն իրարու հանդէպ բարոյական ոյժ եւ վտարժողութիւնը կը պայտին: Բժիշկ Տաղաւարեան իր սիրելի գրաբար լեզուէն կը ճառէր, Ենովք Եսայապալեան իր սիրելի գրաբար լեզուէն կը ճառէր, Ենովք Եսայապալեան մենախօսութիւններ կ'ընէր... Մտաւորական, յեղափոխական, գրագէտ, գործիչ, երեսփոխան՝ բոլորն ալ հոն էին: Կար նաեւ հայ շնահաւաք մը, որ շուրջով ազատ կ'արձակուի:

Մտաւորականները Այաշի բանտին մէջ ժողով կը գումարեն եւ հարցերը դասատրել կը փորձեն: Հեռագիր մը կը պատրաստեն Թալաթի ուղղելու համար: Այս հեռագրին իրաքանչիւր բառին համար վէճ ու վիճաբանութիւն տեղի կ'ունենայ եւ հեռագիրը կը մնայ առանց դրկուելու:

Անոնք տաքապալի օրեր կ'անցընեն Այաշի բանտին մէջ:

Պոլսէն քսան կախադաններու լուրը կը հասնի: Մուրադ եւ Մարգարէ կը կանչուին հսկողութեան փակ Կեսարիա երթալու եւ հարցաքննուելու: Ամիսներ ետք, հեղինակը փեղեակ կ'ըլլայ, թէ ինչպէս Մուրադը չարչարանքներու ենթարկուած է եւ կախադանի վրայ նահապարակուած: Մուրադէն ետք կը կանչուի Միհրան Աղաճանեան եւ Պոլիս փարուելով կախադան կը բարձրացուի: Բանտին մէջ կ'իմանան նաեւ ուրիշներու, ինչպէս Փրոֆ. Արմենակ Հայկապետանի եւ բժիշկ Յովսէփի Տէր Ստեփանեանի ձերբակալութեանց մասին, որոնք Գոնիայի կողմերը՝ Սուլթանիէ արքունիքում էին: Բարսեղ Շահապալին հրաման կու գայ Խարբերդ երթալու: Աւելի ուշ, անոնք կը փեղեկանան, թէ ինչպէս Շահապալ փարուած էր Այնթապ, Արդեաման եւ Մելիտինի կողմերը ու սուկայի փառապանքներէ ետք սպաննուած: Բժիշկ Աւերիս Նազգաշեան ուրեւի՞ք բերած արեւն, թուրք վաճառականէ մը կ'իմանայ, թէ Կեսարիոյ կողմը ջարդերն ու փեղահանութիւնները արդէն սկսած էին: Հրաման կու գայ, որ բժիշկ Նազարէթ Տաղաւարեան, Է. Ակնունի, Գարեգին Խաժակ, Մարգիս Մինասեան, Ռուբէն Զարդարեան եւ Յարութիւն Ճանկիւլեան Տիգրանակերպ դրկուին դատուելու համար: Այս ընկերները ստորագ մահուան առջեւ կը գրնուէին: Ապա անոնք Ռուբէն Զարդարեանէն նամակ մը կը ստանան եւ կ'իմանան, թէ ան Էնկիւրիի բանտը երկու օր մնալէ ետք կը փարուի Էսկիշեհիք: Կ'իմանան նաեւ, թէ Գրիգոր Զօհրապն ու Վարդգէսը անկէ անցուցեր եւ փարեր են Տիգրանակերպ՝ դատուելու:

Արդէն երեք ամիս եղած էր, որ բժիշկ Նազգաշեան Այաշի բանտը կը գրնուէր: Օր մը նամակ մը կը ստանայ իր եղբորմէն, որ իրեն կը յայտնէր իր ապագոյն հրամանը: Կ'ողջագործութիւն ընկերներուն հետ եւ ճամբայ կ'ելլէ դէպի Պոլիս: Ուր ամիս ետք ան կը լսէ, թէ ինչպէս բանտը մնացողներէն 30 հոգի Անգարա կը փանին եւ փեղի հայութեան հետ փարագրելով, քանի մը ժամ անդին կը ջարդեն, իսկ բանտէն 24 հոգի Այաշ Պէլի կոչուած փեղը կը գնդակահարեն:

2) Կիրակոս Տօնիկեան, «Հալէպի Ձերբակալութիւնս եւ Փախուստս», էջ 127-141:

Հայաստանի եւ Կիլիկիոյ բոլոր քաղաքներէն եւ գիւղերէն հայութիւնը արտորած էր եւ հասած Հալէպ: Հալէպի մէջ Մեպիլը եւ Կարլըխը գաղթակայաններ դարձած էին: Մէկ մասը այսօրէն կը դրկուէր հարաւ՝ Տամասկոս, Համա եւ ուրիշ տեղեր, միւս մասը՝ արեւելք՝ Տէր Զօր, ուր կը ջարդուէին:

1916ի Զապկուան Կիրակին, Կիրակոս Հալէպի մէջ կը ձերբակալուի: Ձերբակալուածներուն մէջ կան նաեւ Առաջնորդ Հայրը, քահանաներ եւ սասունցի հայագործներ: Բաւական ժամանակ վերջ կը սկսին հարցաքննութիւնները: Սհատը կերպով կը խոշտանգեն սիրենք: Թուրքերը կ'ուզէին կապ մը գտնել այս բանտարկուածներուն եւ Մասունի լեռներուն վրայ մարտնչած քաջերուն միջեւ: Անոնք բանտին մէջ կը լսեն Տէր Զօրի ահատը կոտորածին մասին: Օր մը բանտը կը բերեն Գրիգոր Զօհրապը, Վարդգէսը (Յովհաննէս Մերէնկիլեան), Տաղաւարեանը եւ Ճանկիլեանը: Յաջորդ օրը ստանք սայլերու մէջ տեղատրելով կը տանին հեռու՝ կառափնարան...:

Մեպիւնքերի սկիզբը բոլոր բանտարկեալները կը քշեն դէպի Ճեպիբէի կողմերը: Կը հասնին Ապու Հարար կոչուած խանը: Առտուն շար կանուխ հոն կու գան մօտերը աշխատող սասունցի ջաղայպաններ եւ կաշառքով քանի մը հոգի հեպերնին կը տանին: Յաջորդ գիշեր կը հասնին Մեսքէնէ, ուր հայ գաղթականները անոնց հայ ու պանիր կը բերեն, առանց մոռնալու նաեւ իրաքանչիւրին գրպանի փոքրիկ ծախս մը տալ: Զիրենք կառքերով կը փոխադրեն Համամ:

Տօնիկեան կը փախչի եւ կու գայ Մեսքէնէ: Հոն կը գտնէ քեռայրը՝ Լեւոն էֆենտին, ապա՝ ուրիշ բարեկամներ, որոնք կը կերակրեն սինք եւ հոգ կը տանին իրեն, գործ մըն ալ կը ճարեն: Մակայն չառու ռստիկան մը, կասկածելով, կը ձերբակալէ սինք եւ կը դիմէ գայմագամին: Վերջինս բարեացակամ կը գտնուի եւ Կիրակոսը ձերբակալութենէ կ'ազատէ:

Պետրոս Ծափուրեան, «Կեանքը Որ Ապրեցայ», մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 13, րպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, մարենաշար Ապրիլեան Եղեռնի թիւ 13, Անթիլիաս, 1969, միջակ չափի 63 էջ:

Պետրոս Ծափուրեան ծնած է Տրապիզոն՝ բաբերդցի ծնողներէ: 1913ին ան 9 րարեկան էր: Կը յիշէ իր մանկութեան դրուագները: Խորապէս ազդուած է իր մանկութեան կրած հալածանքէն թուրք մանուկներու կողմէ:

Պատերազմի սկիզբի րարին՝ 1914ին ընրանէօք կը փոխադրուին Կիրասոն: Մեծ եղբայրը՝ 35 րարեկան Սմբարը կը ծառայէ օսմանեան բանակին մէջ: Ան կը ձերբակալուի, կը բանրարկուի եւ կ'անյարանայ: Հաւանարբար կը գնդակահարուի: Միւս եղբայրը՝ Խաչիկ, փախսրական կ'ապրի Կիրասոնի անրառները: Երրորդ եղբայրը՝ Գառնիկ, 14 րարեկան, կը բանրարկուի, բայց մօրը ջանքերով ապար կ'արձակուի:

Հեղինակը նկարել կու րայ, թէ թուրքերը ամէն չարիք ծրագած էին հայոց համար: Ամէն առաւօր ծեր թէ երիրասարդ կը հաւարքէին: Շուկաները կ'ամայանան, խանութները կը փակուին: Ամէն գործողութիւն աճապարանքով կը կարարուի: Երեք օր միայն պայմանաժամ րալով՝ ժողովուրդը րեղահան կ'ընեն: Քանի մը ընկերներով կ'երթան կաղնիներուն մէջ պահուած քսանի չափ երիրասարդներուն կը հաղորդեն իրենց մեկնումը: Երիրասարդները կը միանան իրենց: Կարաւանը մօր հապար հոգի կը հաշուէ եւ կ'ոտղուի դէպի Շապին Գարահիսար: Հապի ճամբայ ելած, պերական պաշրօնեաներ ճամբան կը կրրեն եւ իրարան-



չիւր ընդհանրէն կը պահանջեն Կոստան Բալային՝ վերադարձին յանձնելու խոստումով: Կը հասնին Բալայ, ուր Կոստանը կը, այդ թիւին՝ Պետրոսի Խաչիկ եղբայրը, կը հաւաքեն ու կը Կոստանին...

Երեք օր Բալայ մնալէ ետք, ճամբայ կ'ելլեն: Պետրոսը, մայրը եւ Գառնիկ եղբայրը անյայտացած եղբայրներու կանանց եւ աղջկան հետ էին: Այդ օրը Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը վերջ կը գտնուի եւ ժողովուրդը անձնատուր կ'ըլլար:

Կարաւանը կը մեծնայ եւ ճամբայ կ'ելլեն դէպի Երզնկա: Գիշերը կը կողոպտուին: Ջիւրները կը Կոստանին քաղաքներէն հեռու, ամայի ճանապարհներով: Ջուրի պակասը շար մեծ նեղութիւն կը պատճառէ: Կը հասնին Տէօրթոս կոչուած գիղաքաղաքը: Ընդհանրի այդպէս պատասխանատուին հետ բռնի կերպով ամուսնացած Կոստանի կողմէն հայտնի մը, անոնք երեք օր հանգիստ կ'ընեն այս գիղաքաղաքին մէջ: Հոս իրենց կը միանան Բաբերդի, Կարնայ ու Մամախաթունի բռնագողթածները: Կարաւանը մօտ 20,000 հոգի կը հասնի: Կրկին ճամբայ կ'ելլեն եւ Եփրատի ափով կը յառաջանան: Քիւրդերը կը յարձակին իրենց վրայ, կը կողոպտեն, կը սպաննեն եւ կ'առեանգեն: Ապա կը հասնին Ակն քաղաքին մօտերը, ուր երկու օր կը մնան: Ոստիկանները հոս մանուկները ջուրը կը նետեն: Դրամ վճարողը կ'ապարհ: Գառնիկն ալ կը փրկուի: Կոստանին Արաբկիրէն եւ Կիւմիշ Մարէնէն ու կը հասնին Խարբերդ, որու գերեզմանատան մէջ կը նստին երեք օր: Երբ մեկնելու ժամանակը կը հասնի, Պետրոսի մայրը գերեզմանատունը կը մնայ: Պետրոսի երկու եղբայրներուն հարսերը, իրենց ազգականները գտնելով, անոնց կը միանան: Պետրոսը եւ Գառնիկ եղբայրը ձեռք-ձեռքի կը յառաջանան կարաւանին հետ: Կարաւանը երկուփ կը բաժնեն: Աւելի ուշ Պետրոս կ'իմանայ, թէ կարաւանին մէկ մասը Խարբերդի մօտ ջարդուած էր, իսկ մայրը գերեզմանափոսին մէջ նետուած էր ողջողջ...

Կարաւանը Տէվէ Պոյուն կը հասնի: Գիշերը կ'անցնեն Կէօլ-Ճիք լիճի ափերուն: Առաւօտուն ճամբայ կ'ելլեն եւ կը հասնին Տիգրանակերտի ճամբուն վրայ Քէլին Խան, ապա՝ Մալակա անունով գիղ մը: Հոս միւս կարաւանէն վերապրող Կոստանը կը միանան իրենց: Երբ կրկին ճամբայ կ'ելլեն, ոստիկանները կը կողոպտեն վիրենք: Քիւրդերը Կոստանին վէրքերով կը յարձակին

իրենց վրայ, կը հալածեն Պեպրոսը, Գառնիկը, անոնց երկու ընկերները եւ կը սպանեն Գառնիկը: Պեպրոս վիրատրուելով, մապապործ կ'ապարի եւ կը գրնէ ընկերներէն մէկը՝ Աստուրը: Երկուքով կը մնան մերկ, անօթի, վիրատր ու անպարսպար: Ընտանի բոյսերով կը փորձեն լեցընել իրենց սպամոքսները: Ասպը կը փորեն եւ գիշերը մէջը կը քնանան: Յաջորդ առաւօր լերան մը լանջին հասնելով՝ մորիով կը սնուին: Մակայն քիւրտերը կրկին կը հալածեն զիրենք եւ Աստուրը կը սպաննեն: Պեպրոս հրաշքով կ'ապարի եւ քիւրտերէն մէկուն հոգեպաակը կը դառնայ: Մարդը զինք իր տունը կը տանի: Քիւրտին մայրը կը լոզցնէ մանուկ Պեպրոսը եւ կը կերակրէ զայն: Բարի կիներ լա հոգ կը տանի Պեպրոսին եւ, ապահովութեան համար, զայն իր հօրը տունը կը դրկէ:

Օր մը, առաւօտուն, Պեպրոս ճամբայ կ'ելլէ եւ կողքի գիւղը կ'նողողոյ: Քիւրտ կնոջ հայրը՝ իննսունի մօտ ծերունի մը, կ'ընդունի զինք: Բայց գիւղացիք չեն ընդունիր Պեպրոսը: Ուրիշ կին մը կը վերցնէ զինք եւ իր տունը կը տանի, ուր տրապիպոնցի հայ կին մը կար իր 12 տարեկան մանչուն հետ: Կնոջ ամուսինը կը փորձէ արքանակով սպաննել Պեպրոսը, բայց մայրը թոյլ չի տար: Տան հայ տղան Պեպրոսը կը տանի ուրիշ կնոջ մը մօտ, որ կ'ընդունի զայն: Հոս, սակայն, կնոջ 18 տարեկան սպասուիք քիւրտ աղջիկը կը նախանձի եւ յաջորդ օր կը վտարէ Պեպրոսը: Պեպրոս կ'երթայ հնձուոր կիներու մօտ եւ կը մնայ կալին մէջ: Հոսկէ ալ կը վտարեն զայն: Այս անգամ ծերուկ մարդ մը կը վերցնէ զայն: Պեպրոս ցորենի հասկեր կը քաղէ: Բայց չար դիպուածի մը հանդիպելով հոսկէ ալ կը փախչի եւ կալուածի մը շունին հետ կ'ապրի: Հոս կը մնայ 20 օր: Օր մը դիպուածով մը կը հանդիպի իր նախկին ընկերոջը՝ 15 տարեկան եւ շար ճարպիկ Տաճարին, որ Պեպրոսի պաշտպանը կը դառնայ: Պեպրոս կ'ապաստանի Մալակա գիւղի ախոռներուն մէջ: Գիւղացիները զայն պահակ կը կարգեն, որ թռչունները փախցնէ եւ վարձք ու կերակուր կու տան: Օր մը Նէօֆէլ անունով քիւրտ մարդ մը կու գայ, Պեպրոսը իր տունը կը տանի Կէօլճիքի եկերքը եւ իր ախոռը անոր խնամքին կը յանձնէ: Նէօֆէլ թլփարել կու տայ զայն եւ կ'իսլամացնէ: Քիւրտին աղջիկը նեղութիւն կը պարճառէ Պեպրո-

սին, որ կը հեռանայ հոսկէ ալ:

Տաճապին թելադրանքով՝ Պեպրոս կը դիմէ այդ շրջանի Մսրօ անունով մուխթարին ու երկու փարի վերջինիս փունը կը մնայ: Երբ հեղապնդումները կը վերսկսին, Պեպրոս կ'ապաստանի մուխթարին աղջկան փունը՝ Մեզրէէն չորս ժամ հեռու գտնուող Քիւրփէմիլէք գիւղին մէջ:

Հոս գտնուած միջոցին ան կը հանդիպի հայոց, որոնք սինք եկեղեցի եւ որբանոց կ'առաջնորդեն: Այս փան մէջ գտնուող երկու հայոց հետ Պեպրոս կը փախչի եւ Խարբերդ կը հասնի: Անոնք որբանոց կը մտնեն: 1921-1922ին որբերը կը փոխադրուին Մուրիա, ապա Անթիլիաս, Լիբանան: Իսկ Տաճապ՝ կը փախչի դէպի Պոլիս:

Խաչեր Սարգիսեան, «Եօթանասուն Տարիներու Յուշերս», քաղ. «Տօնիկեան», Պէյրուս, 1970, միջակ չափի 1142 էջ:

Հեղինակը ծնած է 1890ին, Էվէրէկ: Չարաշուք նշաններ երեսն կու գան աղէտէն առաջ, 1914ին: 1915ին կառավարութիւնը ձեռքը եւ այլևայլ պիտոյք կը գրաւէ: Զինուորագրութեան կոչ կ'ըլլայ: Ամերիկայէն վերադարձած Գէորգ անունով երիտասարդի մը ձեռքերուն մէջ կը պայթի ռումբ մը, վոր ան կը պատրաստէր: Այս դէպքին վրայ, ռուսականները իրաքանչիւր փուն կը խուսարկեն եւ վէճերը կը հաւաքեն: Խաչերի պարտէզին մէջէն ալ վէճեր կը գտնեն, սակայն բարեբաւարիկ դիպուածով մը ան ձերբակալութենէ կ'ազատի:



Իր աներորդիները կը ձերբակալուին եւ Կեսարիոյ ափեանը կը դրկուին: Ապա, Զեքի գայմագամը կաշառելով եւ անոր օգնութեամբ աներորդիները կը փարուին Պոպանթի:

Կը սկսի Էվէրէկի շրջակայքի փեղահանութիւնը: Տեղահանութենէն առաջ, Խաչերը գրասպ կ'ապահովէ եւ կը պատրաստուին ճամբայ ելլել 19 Օգոստոս 1915ին: Այս շրջանին, հրէշ գայմագամ Զեքին, որ ետքը Տէր Զօր փոխադրուեցաւ եւ հոն 160,000 հայեր ջարդեց, օգտակար կը հանդիսանայ նախ իր աներորդիներուն եւ ապա իրեն: Իրենք ճամբայ կ'ելլեն, մութին կը հասնին Սոյսալը, կ'անցնին Գարահիսար եւ Նիկկէ: Չիֆթէ Խան գիտը կ'իջեանին, հետեւեալ օրը Պոպանթի կը հասնին: Կարաւանը Կիլիկիոյ մէջէն անցնելով կը հասնի Տարսոն: Հոս 5-6 օր մնալէ ետք կ'անցնին Օսմանիէ, ապա կ'իջեանին Գանլը Կէչիլ (Արիւնտ Կայք) կոչուող վայրը՝ Ամանուսի լեռներուն ստորոտը, ապա՝ Հասան

Պէյլի, որ իր հայ բնակչութենէն պարպուած էր: Ամանոսի լեռներէն վայրէջքով կու գան Իսլահիէ: Այս բնակավայրին մէջ Խաչերը սփիւղադարձ կը բաժնուի իր ազգականներէն:

Երեքշորս շաբաթ Գաթմա կը մնայ, ուրկէ ճամբայ կ'ելլէ եւ վերջապէս Հալէպ կը հասնի: Հոս կը բարեկամանայ Օմար աղա կոչուող արաբին հետ: Օմար բարիք կ'ընէ իրեն կաթ եւ մածուն հայթայթելով եւ կ'առաջարկէ, որ դիմացի գիղին մէջ գտնուող իր տուններէն մէկուն մէջ մնայ:

Խաչեր Պապ կը տեղափոխուի: Իր արաբ բարեկամը հոս եւս իրեն կ'այցելէ: Կը հրամայեն Մեսքէնէ փոխադրուիլ: Ապա պայն կը քշեն Տիպսի, Ապու Հարար, Համամ, Ռաքքա: Հոս լսելով, որ կառավարութիւնը Պապի մէջ գործաւոր կ'ուզէ, կը փորձէ փախչիլ եւ վերադառնալ Պապ, սակայն կը բռնուի եւ կը պարտուի: Ռաքքայի գաղթակայանէն հայերը միջոց դէպի առաջ՝ Տէր Զօր կը քշուին: Ինք եւս, բազմաթիւ հայոց նման, երեսանց կ'իսլամանայ Տէր Զօր գաղթելէ խուսափելու համար եւ կը բնակի Ռաքքա քաղաքին մէջ: Հոս տուն մը կը վարձէ եւ իր ընտանիքով կ'ապրի: Զեքի պէյ, որ արդէն Տէր Զօրի կառավարիչ նշանակուած էր եւ փաշայի տիրոջին արժանացած, Վիրենք բոլորը կը հրաւիրէ Տէր Զօր՝ խոստանալով հանգստաւէտ պայմաններ ապահովել: Մակայն, կատարեալ վստահութիւն չունենալով, անոնք կը մնան Ռաքքա, ուր կու գան աներորդիները Համամէն:

Թուրք բարեկամ Վիրենքի անհետացումներու օգնութեամբ կը տեղափոխուին Մեսքէնէ՝ անկէ Հալէպ անցնելու համար: Հալէպի մէջ Խաչեր գործի կը մտնէ եւ իր վիճակը կը բարելաւէ: Այս միջոցին օսմանեան կառավարութիւնը կը փորձէ բոլոր հայ գաղթականները հաւաքել քաղաքներու, մանաւանդ Հալէպի մէջ՝ Թալասի հեռագրին համաձայն վանոնք ջարդելու համար: Երջակայ գիղերուն հայերը Հալէպ կը թափին: Մակայն, այս ջարդը տեղի չ'ունենար եւ հայերը այս անգամ անվնաս կ'անցընեն վրանգը:

1918ի աշնան օր մը անգլիական պարտաւճարական օդանաւեր կ'երեւին Հալէպի վրայ: Օրէ օր Օսմանեան Կայսրութիւնը կը նահանջէ գերմանացիներուն հետ: Թուրքերը խուճապահար փախուստ կու տան Հալէպէն: Անոնք Հալէպի հարաւը, Խան

Թումանի մէջ յերին պաշտպանութեան գիծ մը հաստատել կը փորձեն: Կ'աշխատին նաեւ Էննայի արաբ պետելիներու ցեղապետը ճակատ դրկել, որպէսզի իրենք պահուրդին ետել գիծերուն վրայ:

Արաբները կողոպուտի կ'ենթարկեն թուրքերուն մթերանոցները Հալէպի մէջ: Խաչեր մթերանոցէն «Մարթէն» վէնք մը առնելով րուն կ'երթայ ինքնապաշտպանութեան համար: Անգլիական բանակը մուտք կը գործէ Հալէպ: Զինադադար կը կնքուի:

Հալէպի եւ Արանայի միջեւ աշխատող երկաթուղիի շնորհիւ քաջալերական եւ ուրախ լուրեր կը հասնին Հալէպ՝ մանաւանդ հայ կամաւորներու գունդին (Հայկական Լեգէոն) մասին: Բայց շուրջով վիստրիանը րեղ կը գրաւէ եւ հարցերը կը կնճռուին: Ֆրանսայիները կ'աշխատին Հայկական Լեգէոնը քայքայել: 1919ի ձմեռը 150 հայեր Հալէպի մէջ րոհ կ'երթան թուրքերուն կողմէ գրգռուած արաբներու վայրագութիւններուն (այս ջարդը րեղի ունեցած է 1919ի Փետրուարի վերջին օրերուն եւ ծանօթ է Հալէպի «Ճումաա Պապարի ջարդ» անունով - խմբ.):

Խաչեր Արանա կը մեկնի: Երկու շաբաթ վերջ ընտանիքն ալ կու գայ ու իրեն կը միանայ: Գործով կ'անցնի Այաս: Այս միջոցին հաշտարար արեաններ կը ստեղծուին երկրին մէջ: Կը վերադառնայ Արանա: Գործով կ'անցնի Գոնիա: Անկէ կ'անցնի Պոլիս, ուր կալուածներ ունէր: Գործերը կարգադրելէ ետք կ'անցնի Մերսին, ապա՝ Կիպրոս: Կիլիկիան նորէն կը պարպուի: Խաչեր կ'անցնի Զմիռնիա եւ ապա Պոլիս: Վերջապէս կը մեկնի Նիւ Եորք, ուր կը հաստատուի:

Ն. Վաճառեան [Յակոբ Թեճիրեան], «Տխուր Յուշեր», րպ. «Մշակ», Պէյրուս, 1970, փոքր չափի 80 էջ:

1) 1915ին, էջ 16-33:

Մելիմիէ քաղաքը կը գտնուի Վամայի եւ Վոմսի միջեւ: Արհաւիրքի օրերուն ան եղած էր մեծ մասամբ այնթապցիներու գաղթակայանը: Այստեղի ապնի արաբներու բարեպակամութեան եւ հիւրասիրութեան շնորհիւ հայ գաղթականները փանելի կեանք մը կ'ունենան, ինչը չի սպրդիր թուրք ղեկավարութեան աչքէն: 1917ի սկիզբը Էնվեր փաշան կը դրկուի շրջան՝ կայութիւնը ուսումնասիրելու (մանաւանդ Տամասկոսի շրջանին մէջ) եւ արաբները հայերը ջարդելու գրգռելու համար: Արաբները ծողակը չեն իյնար եւ Էնվեր ձեռնունայն կը վերադառնայ:



Վեղինակը իր ծնողքին հետ Մելիմիէ ապաստանած էր: Վայրը՝ Նապարէթը ու մօրեղբայրը՝ Միհրան Թերպիպաշեան, երկուքն ալ պիտոբցու, փախստական կ'ապրէին: Իրենց դրացի՝ բարի արաբ կին մը կար, որ երեք պառակ ունէր: Դուստրը՝ Ջեննուպը եւ կրտսեր որդին՝ Ալին հիւանդութենէ մեռած էին: Կը մնար միայն մեծ տղան՝ Ճաաֆարը, որ բանակ գացած էր:

Ճաաֆար բանակէն փախուստ կու տայ երրորդ անգամն ըլլալով եւ փրկու կու գայ: Մայրը կը գորգուրայ անոր վրայ: Ճաաֆար ընկերներով թաքստուց կը գտնէ մօտակայ հռովմէական բերդին աներակներուն մէջ: Վրահանգ կար ոստիկաններուն, որ վայն գտնելու պարագային փրկու ու փրկու գնդակահարեն:

Ծննդավայր Այնթապ եղած ապեն հեղինակին հայրը հինգ պառակներու տէր էր: Նուպար անունով եղբայրը կը հիւանդանայ եւ կը մեռնի: Երբ նոր փրկահանուած էին, կը հիւանդանայ փոքր

քայրը՝ Վարդուհին եւ կը մեռնի:

Մելիմիէի մէջ հայրը կը հիւանդանայ: Մայրը յի վիճակով դժուարութեան կը մաւրնուի, սակայն դրացուհին՝ Ըմ Ճաաֆարը (Ճաաֆարի մայրը) հոգ կը փոսնի անոր: Հայրը՝ Ապու Եագուպը (Նապարէթ) երկու ամիս՝ Ֆակկարի Ավէնի ազարակը, իր եղբօր մօտ մնալէ ետք կը կապորութի եւ փուն կը վերադառնայ: Եագուպ իր եղբօրը բարեկամ՝ Թեմիր էֆենդիին կարգադրութեամբ *վեսիգա* (արփօնագիր) կը սրանայ եւ իր խանութը կը բանայ: Սղութեան եւ անգործութեան պարճառով, Նապարէթի քսակը պարպուած էր: Սօր պարդեղէնը կը վաճառեն ապրելու համար: Սօրեղբայրը կարելի եղածին չափ կ'օգնէ իրենս: Այս միջոցին, մայրը կը ծննդաբերէ:

Տասնհինգ օր ետք, օր մը, յանկարծ թաղին հայ մուխթարը եւ երկու ոսրիկաններ կու գան, փան բակին մէջ կը փեսնեն հայրը, կը ձերբակալեն եւ սերայ (կառավարչափուն) կը փանին: Մայրը, նորածինը գիրկին, կ'ընկերանայ հօրը: Ճամբան մայրը կը մերժէ կաշառք փայ: Ան կ'ակնարկէ թրքացած իր քեռայրին՝ Ահմէտ էֆենդիի (Ռուբէն Եկաւեան) միջնորդութեան: Ոսրիկանները եւ մուխթարը վախնալով այս ապդեցիկ մարդէն՝ Նապարէթը ապար կ'արձակեն:

Երկու օր ետք, խանութին մէջ, ոսրիկան մը կը ձերբակալէ հայրը, որ սերայ փարուելով կը բանփարկուի: Բանակէն փախած եւ ձերբակալուած հայերն ու արաբները Տամասկոս կը փանին: Նապարէթ Թեմիրեան կը մեկնի անվերադարձ: Գրել-կարդալ գիրնալուն համար, բանակին մէջ Նապարէթին պաշտօն մը կու փան: Սակայն, աշխատանքը փաժանակիր էր: Ան կը հիւանդանայ եւ Տամասկոսի Մուհաճիրինի պողոտային վրայի հիւանդանոցը կը փարուի, ուր թուրքերը կը թունատրեն պայն ու կը մեռնեն 36 փարեկանին: Մայրը 29 փարեկանին կ'այրիանայ:

Նախքան Նապարէթի մահանալը, հիւանդանոցին մէջ անակնկալ դիպուածով մը ան Օսման անունով ծանօթի մը կը հանդիպի: Հաճար գիղայի այս քաջ եւ հաւատարիմ մարդն իրենս այգիները եւ պարփէվները խնամող հողագործին կիսորդն (օրթախ) էր: Օսման Նապարէթի կ'առաջարկէ օգնել եւ փախսնել սինք Հաճար գիղը եւ ընփանիքն ալ հոն բերել:

Նստարկը կը պարասխանէ.

- Օսմա՛ն, հայրա՛ն, պերտութեան դէմ դաւաճանել չ'ըլլար:

2) Մասունցի Պեքար Արոյի Պարմութիւնը, էջ 34-49:

Մասունցի Արօն Տէր Զօրէն փախուստ փութ էր երրորդ անգամն ըլլալով ու հասած իր ծննդավայրը՝ Այնթապ: Այս անգամ ալ ան ձերբակալուած էր եւ բանտարկուած Այնթապի Մր. Աստուածածին եկեղեցին:

Կառավարութիւնը կ'որոշէ վայն պինտորագրել եւ հեռու տեղ մը դրկել: Ամէն վրանգ աչքը առնելով՝ Արօ կը մտադրէ փախչիլ բանտէն: Ատորն, մինչ պահակները անոյշ քունի մէջ էին, կը յաջողի շէնքէն դուրս գալ: Պարէն վար ներուած արեւն, իր հագած արաբական հագուստին քղայքը կը կախտի մեղադին եւ Արօ օդին մէջ ճօճուած կը մնայ, ապա կ'իյնայ վար, փողոցին վրայ, ուշաթափ: Երբ կ'արթննայ՝ պինք հարուածելու պարտասար ոստիկան մը կը տեսնէ իր գլխուն վրայ: Ոստիկանը թրքացած հայ մըն էր: Յանկարծ դիմացէն թուրք մը ոստիկանին կը հրամայէ չհարուածել: Մարդը կը մօտենայ Արոյին: Շարքու-փորձելէ ետք, երեսն կ'ելլէ, թէ ան Արոյի հօրը բարեկամն էր: Ան՝ Արէֆ աղան, Արոյի նկարմամբ անհրաժեշտ պարտք կը զգայ անոր կեանքը փրկել: Այս ժամանակ խստի հրահանգուած էր, թէ հայ պարսպարող թուրքը պիտի գլխատուի եւ ընչպակուի: Քսան տարեկան պինտորցու Արօ աչքի վարնող երիտասարդ մը ըլլալուն, Արէֆ աղա հնարամտօրէն մը կը մտածէ վայն փրկելու մասին: Ան Արօն պինտորական հիւանդանոցը իբր հիւանդ, խնամքի կարօտ կ'արձանագրէ:

Միամիտ Արէֆ աղա եւ միամիտ Արօ չէին գիտեր, թէ թրքական կառավարութիւնը հիւանդանոցներուն մէջ հայերը թունաւորելով կը սպաննէր: Շիւանդանոցին մէջ բժիշկը կը փորձէ Արոյին թոյն խմցնել: Շիւանդապահուիին կը զգուշացնէ Արօն, որ այսպիսով ստոյգ մահէն կ'ապարի: Բժիշկը կը փորձէ երկրորդ գաւաթ մը թոյն խմցնել: Այս անգամ Արօ վէճի մէջ կը մտնէ եւ կը կռուի հիւանդապահներուն հետ: Այս միջոցին հապարապետ Ռիֆաթ պէյ հիւանդանոցը կ'այցելէր: Ան կ'ուզէ եղելութիւնը հասկնալ: Արօ կ'ըսէ, թէ հիւանդանոցին մէջ կը թունաւորեն

հիանդները: Ջինտորականը հարցաքննություն կ'ընէ բժիշկներուն հետ եւ ապա կը կանչէ հայ բժիշկ մը՝ Յովսէփ Պէզճեանը, որ ճշմարտութիւնը կը յայտնէ Վինտորականին: Հապարապետ Ռիֆաաթ պէյ անմիջապէս կը հրամայէ պարասխանատուները ձերբակալել: Երեսան կու գայ, թէ անոնք Քերմանիա ուսանած սելանիկցի երեք հրեայ բժիշկներ են: Հերետեալ օրը, արեւածագէն առաջ, Ռիֆաաթ պէյ գնդակահարել կու տայ Վանոնք հայոց գերեզմանատան մէջ:

Թուրք հրամանատարէն գնահատուելով, Արօ անոր պաշտպանութիւնն ու հոգածութիւնը կը վայելէ: Չ'ուշանար անգլիացիներու մուտքը Կիլիկիա, եւ Արօ ամէն տեսակ վտանգէ կ'ապարի:

Թովմաս Գ. Արապեան, «Յուշամատենան Մեներակի», ԿԿ. «Մեան», Պէյրոթ, 1971, մեծ չափի 504 էջ: [էջ 239-324]

Հայաստանի գաւառներէն շարան-շարան գաղթականներ կու գային ու կ'անցնէին Մեներակէն դէպի Գարաճորուն սպանդանոցը, իսկ այնպէս-դէն ողջ մնացողները մինչեւ Տէր Զօր կը բշուէին:

Թալասաթ փաշայի սերպ գործակից պարասխանատուներ կը հասնին Տիգրանակերպ եւ ապա՝ Մեներակ: Անոնք կը գործակցին Մեներակի ոստիկանապետ՝ Քաֆըր պէյին հետ: 10 Յունիս 1914ին, ոստիկանները հայոց Սր. Թորոս եկեղեցին եւ հայկական թաղերը կը պաշարեն: Հայոց դուրս ելլելը կ'արգիւտի: Ոստիկանները կը խարայնեն հսկողութիւնը եւ փունները կը խուսարկեն: Եւր չանցած՝ յիսուն հայ երիտասարդ կը ձերբակալեն եւ, իբր բռնակիր, իրաքանչիւրին կռնակը 50 քիօ ցորեն կը բռնցնեն ու Տիգրանակերպ, հոնկէ ալ Խարբերդ կը դրկեն: Նոյն ձեռով կը դրկեն ուրիշ 75, ապա՝ 100-150 եւ վերջը՝ 300 հոգի: Աստուծոյ բոլորը փանելով Գարաճորուն, Գարապաղչա եւ Ազաճան գիղերուն մօտերը՝ կը սպաննեն:

Կը ձերբակալեն երեւելիները եւ կը ջարդեն: Խոշտանգումներով ու չարչարանքներով կը սպաննեն նաեւ Մեներակի երկու քահանաները: Յաջորդաբար կը ձերբակալեն եւ կը կոտորեն կուսակցականները: Ազգադաւ դաւաճաններ կ'օժանդակեն թուրքերուն:

Այս բոլորին կը հետեւին կանանց եւ անչափահասներու գաղթն ու սպանդը: Ըստ Քաֆըր պէյի՝ Մեներակի 14500 հայերէն մօտ 3500 այրեր դրկուած են սպանդանոցները:



10 Յունիս 1915ին առաջին կարաւանը ճամբայ կը հանուի: Ասոնք 10-15 հարուստ ընտանիքներն են: Կը հաւաքեն նաեւ ուրիշ 15 ընտանիք եւ բոլորը մէկ կը տեղաւորեն Օրփոյ թաղին ասորիներու եկեղեցին, ապա վանոնք ճամբայ կը հանեն Գարախան գիւղին ուղղութեամբ: Ճամբուն վրայ ոստիկանները կը կողոպտեն վանոնք, գեղեցիկ աղջիկներն ու կիները կ'առեւանգեն: Ասորիներու եկեղեցիէն քշուած հայերը Տուրանի վազաներուն կողմէ կը կոտորուին:

Կիներու՝ 2000 հոգիէ բաղկացած երկրորդ կարաւանը կը տանին Տիգրիսի ուղղութեամբ՝ վանոնք ճամբան խոշտանգելով ու կողոպտելով: Անոնց մէկ մասը Խալլոքան գիւղին մէջ կը կոտորուի եւ միայն 1000 հոգի կը հասնի գետին ափը: Հոս ալ կը կոտորեն եւ միայն 300 հոգի կը հասնի Արքեաման:

Կիներու երրորդ կարաւանը 25 Յունիսին ճամբայ կ'ելլէ դէպի Եդեսիա: Ճամբան կը կողոպտուին եւ շարերը կը սպաննուին: Մնացեալը կը շարունակէ իր ճամբան եւ կը հասնի Մահմուտ Նէփիմի դաշտը՝ Եդեսիոյ մօտ: Հոս ալ շարերը կը կոտորուին: Ետք քիչեր կը հասնին Եդեսիա:

Կիներու չորրորդ կարաւանը ճամբայ կ'ելլէ Վերանշէհիի ուղղութեամբ 15 Յուլիս 1915ին: Չալթոք գիւղին մէջ կը հաւաքեն 10-15 տարեկան տղաքը եւ կը վարեն կարաւանէն: Կը տանին տղաքը եւ ձորի մը մէջ կը սպաննեն: Կարաւանը կը հասնի Հաճի Զամիլի կամուրջը, ուր մանուկները գետին մէջ կը նետեն իրենց մայրերուն աչքերուն առջեւ: Կիները կը խոշտանգուին ու կը կողոպտուին: Երբ կը հասնին Գարաճուրուն, 20-30 կիներ կ'այրեն փռուելու մէջ: Այս կարաւանէն շարեր կը տարուին Եֆրատէջ, իսկ ուրիշներ կը փախչին Եդեսիա եւ ապա կու գան Եֆրատէջ: Կարաւանը Եդեսիայէն կ'անցնի Սուրուճ, կը հասնի Մումպուճ, ապա՝ Մեսքէնէ եւ Պապ: Ոստիկանները վերադառնալով Մետրակ, դրամի ծրարները կը յանձնեն կուսակալին: Մետրակի մէջ կը մնայ 300-400 տուն հայ: Ասոնք կը բռնագաղթուին 1 Օգոստոս 1915ին: Զանազան չարչարանքներու ենթարկուելով, կոտորակուելով, չորսի բաժնուած եւ չորս ուղղութեամբ ճամբայ հանուած խումբերը կը հասնին Գարաճուրուն, ուր կը կոտորեն վանոնք: Ողջ մնացած խեղճերը, անօթի, ծարաւ եւ սպառած, կը շարու-

նակեն իրենց ճամբան:

Մեերակի մէջ, մինչեւ 1920 թուականը, կը մնան միայն սակաւաթիւ հայ վարպետ արհեստագործներ: Ատոնցմէ իրաքանչիւրին քով դրուած է 3-4 թուրք տղայ, որպէսզի սորվին արհեստը: Մեերակի հայոց տները կը յանձնուին Վանէն, Մուշէն եւ Կարինէն եկող թուրք գաղթականներուն: Թուրք պատասխանատուները ձեռք կը դնեն հայոց եկեղեցիներուն եւ դպրոցներուն վրայ: Այսպիսով անոնց ձեռքը մեծ հարստութիւն կ'անցնի: Սպա եկեղեցիները քանդելու եւ հայերէն գրատուած հարստութիւնները ծախելու հրաման կու գայ Թալաաթէն:


1918ի Հոկտեմբերի վերջին պինադադարի կնքումէն ետք, վերապրողները կը վերադառնան Մեերակ եւ կը սկսին աշխատիլ: Մեերակը դարձեալ կը շէննայ:

**Յարութին Մարտիկեան, «Թրքական Դժոխքի
Նայիական Դժոխք», Պէյրութ, 1973, միջակ չափի
193 էջ:**

Հեղինակը ծնած է 1899ին, Խարբերդի հարաւը գտնուող լճակի ափի Ծովք գիւղը, որ 100 տուներէ բաղկացած էր եւ եօթը հարիւր բնակիչ կը հաշուէր: 1895ի ապրիլի համարեան ջարդերուն ժամանակ իրենց գերդաստանը կը փրկուի քիւրտերու օգնութեամբ: Յարութին գիտին դպրոցը կը յաճախէ հինգ տարի, ապա հովի կը դառնայ:

1915ին Խարբերդի բանակները լեցուած էին հայ մտաւորականներով: Անոնք սաստիկ չարչարանքներու կ'ենթարկուէին: Ծովք գիւղը կը պաշարուի եւ շարքեր կը ձեռքակալուին: Ետերը լճակին

եկերքը գտնուող ծառերէն կախադան կը բարձրացուին: 18-55 տարեկան տղամարդիկը կը սնտուրագրեն: Կտորած տղի կ'ունենայ Խոյս գիտին մէջ: Կարգը կու գայ Ծովքի: Քիւրտ բարեկամ ոստիկան Սօրօն կը խրատէ սիրենք, որ լեռ բարձրանան: Յարութին Մարտիկեանի ազգական Մարտիկեան երկու եղբայրները լեռները կ'ապաստանին: Տեղահանութիւնը կը սկսի: Յարութին փախուստ կու տայ եւ չորս ընկերներով լեռ կը բարձրանայ: Կ'ապաստանին լճակին Մր. Նշան կոչին՝ իրենց հետ ուրիշներ առնելով: Յարութին կայ կը հաստատէ Հայտարենց ընտանիքին հետ եւ ուրեստեղէն կ'ապահովէ խումբին: Սակայն, կը պաշարուին եւ անհասարկ կռուի մէջ մտնելով թուրքերուն հետ՝ կը սպաննուին: Յարութին կրկին լեռ կը բարձրանայ չորս ընկերներով: Միւս խումբը կազմող վեց հերոսները ես կը կռուին եւ անձնասպան կ'ըլլան: Չորս հոգինոց խումբին մէջ կը գտնուի



նաև Յարութինի հորեղբայրը՝ վիրատր վիճակի մէջ: Զիրար կը կորսնցնեն լեռներուն մէջ: Յարութինը կը մնայ նոյն անունով անձի մը հետ: Կ'ապաստանին Յարութինենց գիւղը եւ ապա կը գտնեն իրենց երկու ընկերները: 27 օր գիւղը մնալէ յետոյ, Յարութինը կը բաժնուի իր ընկերներէն եւ կ'երթայ երկու պէլերու մօտ ծառայելու: Մնացած երեքը, որոնց մէջ՝ իր հորեղբայրը, կը բռնուին եւ կը սպաննուին:

Պէլերը կ'անուանափոխեն զայն եւ Արիֆ կը կոչեն: Հոն զայն կը դիմատրէ 14 փարեկան համագիտացի Մարիամը: Հոն կը հանդիպի նաև շապինգարահիսարցի Տիգրանուի Խըրլեանին եւ ապագային անոր հետ կ'ամուսնանայ:

Հայ ազգայիններու օգնութեամբ կը ձերբազատուի ստրկութենէ եւ 1922-1923ին Հալէպ կը մեկնի: 1924ին ընդամենը կը փոխադրուի Մարսէլ, Ֆրանսա, ուր կը մնայ մինչեւ Խորհրդային Հայաստան հայրենադարձութիւնը 1947ին:

Գիրքին մնացած մասին մէջ հեղինակը կը խօսի Ֆրանսայի մէջ իր անցուցած կեանքին մասին:

Ներսէս Երրինեան, «Անդունդէն Գէպի Բարձունք», րպ. «Մեւան», Պէյրութ, 1974, միջակ չափի 432 էջ:

Ներսէս ծնած է 1890ին, Պեհեսնի, որ 1895ի ապրուիսամիսի տեւան ջարդերէն վերո կը մնայ: Բարձրագոյն ուսում ստանալու համար պատանի Ներսէսը Այնթապի Գոլէճը (Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճ - խմբ.) կը դրկուի: 1915ին երբ ծննդավայրը անյուսած արձակուրդէն կը վերադառնայ Այնթապ, Պեհեսնիի հայերը կ'աքսորուին: Ներսէս կ'ուղղուի դէպի Պոլիս եւ ապա շոգեկառքով կը հասնի Համա, ուր կը փնտռէ իր ընտանիքը (մայր, երեք եղբայր եւ քոյր մը): Շոգեկառքին մէջ կը հանդիպի հայ սպաներու, որոնցմէ կը ձարէ սպայի զգեստ մը, որով կը ծպտուի: Ծնողքը գտնելու յոյսով կը միանայ պեհեսնիցի գաղթական կիներու եւ անոնց հետ կը բռնէ աքսորի ճամբան: Երբ կը հասնին Մելիմիէ, հոն, շնորհիւ իր ճարտիկութեան, կ'օգնէ 51 հայ կիներու, որ արաբ մեծ ազարակապանի մը քով օրավարձով աշխատին: Կ'երթայ Հալէպ, ուր թուրքի անունով ծպտուած, կ'աշխատի Տար-էլ-Մուալլիմիին (Ուսուցչաց Տուն) մէջ, ուր կը ձերբակալուի եւ բանտ կ'իյնայ: 101 տարուան բանտարկութեան վճիռ կ'արձակուի իր դէմ, սակայն 15 օր ետք, 1918ի աշնան, երբ Գաշնակիցները կը յաղթեն, բանտէն ազատ կ'արձակուի: Հալէպի մէջ կը գտնէ իր ծնողքը, որոնց հետ արեն մը վերջ կը վերադառնայ Այնթապ, ուր կ'աշխատի Ամերիկեան Նպաստամատչոյցին (Սիր Իսթ Ռիլիֆ) մէջ: 1920ին որբերուն հետ Լիբանան կը փոխադրուի:



Լեւոն Մեսրոպ [Լեւոն Տէր Մեսրոպեան], «Ապրիլ 24 - Մեծ Եղեռնէն Վերապրողներու Վկայութիւններ», «Զարթօնք» օրթ., 1975:


1) Արուշ (Յարութիւն) Վարդանեան - Կարմուրճցի (Եղեսիոյ շրջան), «Զարթօնք» օրթ., 16 եւ 18 Ապրիլ 1975:

Կարմուրճի հայութիւնը կը տարագրուի: 11 տարեկան Արուշը իր ընտանիքին հետ ճամբայ կ'ելլէ: Կը հասնին Ռաքքա, ուր 15-20 օր կը մնան, ապա իրենց տաժանելի ճամբորդութիւնը կը շարունակեն եւ Տէր Զօր կը հասնին: Հապի քանի մը օր կը մնան եւ կ'ուղղուին Սուվար: Արուշը կը փորձէ առանձին փախչիլ ետ՝ դէպի Տէր Զօր: Ուտիկանը կը բռնէ զինք եւ մօրը կը յանձնէ: Փախչելու երկրորդ փորձ մը կ'ընէ եւ կը յաջողի: Ուրը օրէն Տէր Զօր կը հասնի: Բաւական թափառումներէ ետք, օր մը տէրպօրցի արաբ ընտանիք մը, խղճալով իր վրայ, իր քովը կ'առնէ զայն եւ վեց ամիս կը հոգայ: Երբ բոլոր հայերը Տէր Զօրէն դուրս հանելու հրաման կու գայ՝ այս արաբ ընտանիքը վտանգաւոր դրութեան մէջ չդնելու համար, ինք ալ կ'ուղղուի դէպի Սուվար եւ ապա Մարկարէ՝ մորթուելու համար: Ան փախուստ կու տայ եւ կը վերադառնայ Տէր Զօր: Այսպէս ուրն անգամ Տէր Զօրէն Մարկարէ կը տարագրուի եւ փախուստ կու տայ: Վերջին անգամին Տէր Զօր հասնելով, ան իր արաբ պաշտպանները կը զգնէ ու անոնց մօտ կը մնայ մինչեւ անգլիացիներու մուտքը: Կ'ամուսնանայ եւ Սուվար կը հաստատուի:

2) Խանում Թօփճեան (Եղեսիացի), «Զարթօնք» օրթ., 18 եւ 19 Ապրիլ 1975:

Առաջին առթի Եղեսիոյ հարուստ եւ մտատրական այրերը կը հաւաքեն ու կը ջարդեն: Մնացեալները կը հաւաքեն երեք շէնքերու մէջ: 17 տարեկան Խանումը կարաւանին հետ ճամբայ կ'ելլէ եւ երեք ամիս տաժանելի թափառումներէ ետք Տէր Զօր կը հասնի: Քաղաք մտնելն արգիլուած է: Կը մնան անապատին մէջ: Յաջորդ օրը կը հաւաքեն ծերերը, տղայները եւ հիւանդները, կը տանին Եփրատի բայերը եւ կը խեղդեն: Մնացեալները կը տա-

նին Մնարվայ գիտը, ուր նաև ուրիշ հայ գաղթականներ հասած էին: Ար



յայտարարուի, թէ ներում եկած է բոլորին: Մակայն, անոնք կը տարուին Մուվար, ուր այրերը բաժնետով իրենցմէ, կը տանին ու կը մորթեն: Մնացեալները մէկ շաբաթ հետիոտն ճամբորդելով անապատին մէջ կը տանին Ետրտար: Հոս չէջները ջարդ կու տան հայ արտաբերներուն: Երբ կարգը կու գայ մնացեալ տասնեակ մը անձերուն, որոնց մէջն էին Խանումը, երկու քոյրերն ու մայրը, արագավայ ձիաուր մը կու գայ եւ ջարդը կը կեցընէ: Ետր նեղութիւններով քարշ կու տան իրենց կեանքը: Օր մը պատանի ձիաուր մը կու գայ եւ Խանումն ու երկու քոյրերը իր տունը կը տան: Քանի մը ամիս ետք Խանում կը լսէ, թէ մայրը սպաննած են: Քոյրը կը մահանայ եւ զինք ապարդդ պատանին կ'ամուսնանայ իր հետ:

3) Հայկանոյշ Խուպէսէրեան (Թալաս, Կեսարիոյ շրջան), «Ձարթօնք» օրթ., 22, 23 եւ 27 Մարիլ 1975:

Կեսարայի ընտանիքէ սերած Խուպէսէրեանները կ'ապրին Թալաս: Հայկանոյշին եղբայրը օսմանեան բանակ գացած է, իսկ միւս եղբայրը կ'աշխատի երկաթուղագիծի ընկերութեան մէջ: Այս պարագայով չեն տարագրուիլ եւ իսլամաբնակ գիտ մը կը փոխադրուին երեք պատկներով: Հայկանոյշին ամուսինը Ամերիկա կը գտնուի: Հայրը դաւաճանութեամբ բանտ կը դրուի ու կը մահանայ:

Հայկանոյշ ամուսինէն նամակ մը կը ստանայ, թէ Կեսարիայէն գանձուելիք փութ մը ունի: Երեք պատկները տունը ձգելով կ'երթայ Կեսարիա, ուր չարիքի կը հանդիպի: Հայկանոյշը բռնագաղթածներու կարասնին կը միացնեն եւ Հալէպ կը դրկեն: Ան Հալէպ՝ իր քրոջ եւ քեռայրին տունը կ'երթայ, ուր կ'աշխատի մինչեւ վիճադատար: Զինադատարէն ետք կը ճամբորդէ Պոլիս, ուր կը գտնէ եղբայրը՝ Պօղոսը եւ անոր երկու պատկները: Հոնկէ կը տեղափոխուի Պէյրութ, Լիբանան:

Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, «Հայ Գողգոթան - Գրուագներ Հայ Մարտիրոսութենէն Պերլինէն Գէպի Տէր Զօր (1914-1920)», Ա. հատոր, Բ. փայագրութիւն, Planeta Printing Press, Պէյրութ, 1977, միջակ չափի 496 էջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեանը իբրեւ աստուածաբանութիւն ուսանող Պերլին կը գտնուէր: Համալսարանական վեցամեակի վերջին օրն էր 1914ին: Փրոֆ. Հառնագ դասախօսութիւն մը պիտի փար: Մակայն Հառնագ փոխանակ սկսելու իր դասախօսութիւնը, ռազմաշունչ խանդավառութեամբ մը կը սկսի իր ճառը, ըսելով, թէ մէկերկու օրուան մէջ անխուսափելի պատերազմը պիտի յայտարարուի եւ թէ Նիւյշէ քարոզած է, որ գութն ու կարեկցութիւնը հոգեկան հիւանդութիւններ են...: Փրոֆ. Հառնագ հաւատարիմ հեղեղորդ մըն էր նիւյշէական այս վարդապետութեան եւ գերմանացի համալսարանական ուսանողութիւնը կ'ուզէր դէպի ռազմաճակատ մղել:



Հապի համալսարանէն դուրս եկած, վարդապետը խոտնէրամ բազմութիւն մը եւ պինտորականներ կը տեսնէ: Պիսմարքի եւ Մոլթթէի նկարները կը ցուցադրուէին վաճառատուներու ցուցափեղկերուն մէջ: Բոլոր եկեղեցիներուն պանգակները կը դողանջին:

Պատերազմ յայտարարուած էր: Մեծ պետութիւնները ուրքի վրայ էին: Իսկ հայ ժողովուրդը, ըլլայ Կովկասի մէջ, թէ Թուրքիա կամ արքայասահման, երկունքի ահաւոր ցաւերով եւ բազմադարեան պռոթկացող յոյսերու փոթորիկով մը կը գալարէր...:

Հեղինակը Պոլիս կը վերադառնայ: Ամէն մարդ եռուվեռի մէջ

էր: Ոչ ոք հաւար կ'ընծայէր քաղաքական «մեծ ծրագրի» մը կարելիութեան, նկատելով որ մարդկային նախապարմական շրջաններէն ասդին, ազգերու պայմութեան մէջ նմանօրինակ պարագայ մը, «ազգերու բռնապրօսիկ տեղահանութիւն» երբեք չի յիշուիր: Յաւալիօրէն, վերջին 30 տարուան արհիւնտր փորձառութիւնը դեռ չէր զգաստապուստած հայը եւ չէր կրցած նուազ անկեղծ եւ աւելի վերապահ ընել պայն...:

Պոլսոյ հայերն այնքան ակնյայտ կերպով սկսած էին արտա-յայտել իրենց ներքին զգայումները, որ թրքական թերթերը, ինչ-պէս «Գարակէօզ»ը, հեզնօրէն կը գրէին, թէ օրուան պատերապ-մական յաջողութիւնները կամ ձախողութիւնները իմանալու համար, ձեպի հանդիպող առաջին հայուն երեսը նայեցէք. եթէ ուրախ է՝ Ռուսիան է յաղթողը, եթէ տրտում է՝ ուրեմն՝ Գեր-մանիան:

Վանի ապստամբութեան պարագային, ըմբոստութեան որեւէ կանխորոշ նպատակ եւ մասնատր պատրաստութիւն չկային: Դաշնակցական ղեկավարները, ինչպէս Վռամեանը (բուն անու-նով՝ Օննիկ Դերձակեան - խմբ.), յաջորդաբար գաղտնի պատուի-րակներ կը դրկէին Սբ. Էջմիածին եւ Թիֆլիս՝ Ազգային Բիրոյին, որպէսզի կամատրական շարժումին վերջ տալով, վերապահ եւ սպասողական ընթացք մը բռնեն՝ իթթիհատական ոճրածարա-թրքական կառավարութիւնը չգրգռելու համար:

Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն Պեպրին մայրաքաղաքի բո-լոր պահականոցներուն շարքներ առաջ կնքեալ պահարաննե-րով պաշտօնագրեր դրկած էր՝ միայն որոշեալ օրին բանալու եւ ծայր աստիճան գաղտնապահութեամբ ու ճշդութեամբ գործադ-րելու ստիպողական յանձնարարութեամբ:

Մահաբոյր Շարաթ գիշեր մը՝ 11 Մարտի 1915ին, Գրիգորիս Վարդապետը ութը սկիւրարցի դժբախտ ընկերներու հետ Միրքէ-ճիի բանտը կը փոխադրեն: Մինչեւ առտու բանտը աւելի եւս կը խճողուի նոր ձերբակալուած ծանօթ ղէմքերու ժամանումով: Յա-ջորդ օրը՝ Կարմիր Կիրակին կ'անցընեն բանտին մէջ: Բանտար-կեալները փասէ աւելի ինքնաշարժներով կը փանին Սարայ-Պոտնուի կամ Կիլիանէի դատարանը, ապա, շոգեկառքով՝ Այաշ, անցընելով Էնկիւրիւն: Ականատր ղէմքեր, գրագէտներ, ուսուցիչ-

ներ եւ առեւտրականներ կը բանտարկուին Այաշի մէջ: Կրկին ճամբայ կը հանեն կառքերով եւ կը տանին Գալայճըզ կոչուած գայմագամանիսը գիողաքաղաքը: Անկէ անդին կը տանին Չանդըրը: Գրիգորիս Վարդապետը 69 ձերբակալուածներու խումբով կը բանտարկեն Չանդըրըի վիթխարի պօրանոցի գեղնայարկի մեծ սրահներէն մէկուն մէջ: Անոնց մէջն էին Կոմիտաս Վարդապետը, Ռուբէն Սեակը (Չիլինկիրեան), Դանիէլ Վարուժանը (Չպոլեարեան), Տիրան Քէլէկեանը, Բիւզանդ Քէչեանը եւ ուրիշներ: Հոս կեանքն անհանդուրժելի էր:

Երկու շաբաթ վերջ, Ապրիլի վերջին օրերուն, պօրանոցէն դուրս գալու ապարտութիւն կը ստանան: Ամէն մարդ կ'աճապարէ քաղաքին մէջ բնակարան մը ճարելու: Գրիգորիս Հայր Սուրբը երբեմն փոքրիկ գումար մը կը ստանայ Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքարանէն: Արեն մը ետք, Պոլսէն եկած արքայազները կառավարչութեան շէնքին առջեւ կը հաւաքեն: Ոստիկանապետը կը հրամայէ պատրաստ եղող կառքերը նստիլ անմիջապէս՝ մեկնելու համար: Աննկարագրելի էր իրենց մէջ տիրող խուճապը: Տէր Զօր կ'երթային:

Իթթիհատի Պոլսոյ կեդրոնէն եւ ներքին գործոց նախարար Թալաթէն հայերը կարաւան-կարաւան դուրս հանելով անխնայ կերպով կոտորելու հրաման կու գայ Էնկիպի: Մակայն Էնկիպիի կուսակալը կը մերժէ հնապանդիլ այս հրամանին: Շուտով պայն կը տեղափոխեն Պոլիս, եւ սելանիկցի երեսուն տարեկան ու Բարձր Դրան պաշտօնէութեան դիւանի դեր-տնօրէն Աթըֆ անունով մուլեանդ իթթիհատականը փոխ-կուսակալ կը կարգեն: Վերջինս հրամանը կը գործադրէ:

Միս կողմէ՝ Պոլիս ձերբակալուած 75ի չափ մտաւորականներ Այաշի մէջ կը կոտորուին: Կը նահապետուին նաեւ Գրիգոր Զօհրապ եւ Վարդգէս՝ Եղեսիայէն մէկ ժամ հեռու գրնոտող Գարաբէօփրի ուսուցիչը վայրին մէջ: Մինչեւ Փետրուար 1916ը Չանդըրըի հայութիւնը եւ արքայազները ահ ու սարսափի մէջ կ'ապրին: Կը հաւաքեն արքայազներն ու Չանդըրըի ժողովուրդէն տեղահանուածները եւ կարաւան մը կազմելով կը դրկեն Չորում: Ճամբան հետիոտն երթալով հինգ օր կը տեւէ: Չորումէն կ'երթան Եոզկատ եւ ապա Պողայլեան: Այս ճամբուն վրայ, վարդապետը

եւ անոր ընկերակցող գաղթականները 54 եռկարգիներէ բաղկացած կարաւան մը կը տեսնեն: Ամէնքն ալ կամ 60է վեր ծերունիներ են եւ կամ 13-16 տարեկան պատանիներ՝ հասարչուաններով իրար կապուած: Եռկարգի 3000 տուն հայերէն միայն ասոնք մնացած էին: 1915ի աշունէն ի վեր անոնք թաքնուած էին եւ հիմա յանկարծ երեւցած ու ձերբակալուած: Վարդապետը իրենց վրայ հսկող հարիւրապետ Եփրիմի թախանձագին կ'աղաչէ, որ փրկէ զանոնք: Մարդը կաշառք կը սպասէ: Գրիգորիս Վարդապետ կը խոստանայ գոհացնել զայն: Եփրիմ հրաման կ'ընէ ոստիկաններուն՝ եռկարգիներու այս խումբը միացնել կարաւանին: Ապա կ'աղաչեն հարիւրապետ Եփրիմին, որ անոնց կապերը արձակէ: Հարիւրապետը վարդապետին բարեխօսութիւնը կ'ընդունի միայն հնչուն ոսկիի ակնկալութեամբ: Եփրիմ 100 օսմանեան ոսկի կը պահանջէ: Վարդապետը կը սակարկէ եւ հանգանակութիւն ընելով կը վճարէ անոր: Զիչ ետք, միացեալ կարաւանը յարձակումի սպառնալիքի առջեւ կը գտնուի: Եփրիմի հրամանով՝ ոստիկանները կը կրակեն թորք խուժանին վրայ, որ կը փախչի:

Ոստիկաններէն մէկը կը պատմէ, թէ ինչպէս հայ քաջերը Չաթլեռներուն վրայ բռուն կռիւներ մղած են թորքերուն դէմ: Արդարեւ, անոնք շարունակեցին իրենց կռիւը մինչեւ Հոկտեմբեր 1918 եւ ապա յանձնուեցան Հալէպի անգլիական զօրքին:

Կարաւանը կը հասնի Պողոսկեան, որու մէկ ծայրը կ'առաջնորդուին գաղթականները: Հանգստանալէ ետք ճամբայ կ'ելլեն դէպի Կեսարիա: Ճամբան կը հանդիպին վրանգաւոր յարձակումներու հաւանականութեան: Անտէր եւ անպաշտպան, յոգնած, սպառած, անօթի ու ծարաւ, գաղթականները ահ ու սարսափի մէջ կ'ապրին: Կարաւանին կ'արգիլեն Կեսարիա մտնել, ու արտրականները քաղաքին ելերքէն կ'առաջնորդեն դէպի Թալաս:

Թալասի մէջ իսլամացած հայ կիներ իրենց պատանի տղաներով հայ, պանիր, ուրելիք եւ ջուր առած կու գան անոնց իջեւանած ախոռին առջեւ՝ զանոնք ձրիօրէն կերակրելու համար: Ոստիկանները կ'արգիլեն: Գիշերուան թանձր խաւարին մէջ, պատուհանին ներքեւը կանգնած այդ հայ կանայք ձայն կու տան ու կը յաջողին ճաշը պատուհանէն ներս փոխանցել: Բոլորն ալ

կ'ուրեն: Ապա կարաւանը ճամբայ կ'ելլէ: Կը հասնին Թումարպա: Հոս կապողորուելով, յաջորդ օրը ճամբայ կ'ելլեն դէպի Կապպէ, որ լեռներուն մէջ նեղ կիրճ մըն է, որուն բերանը կը գտնուի Քէօսէլէր գիւղը: Որոշ արեն մը հոս մնալէ ետք, ճամբայ կ'ելլեն դէպի Հաճըն՝ Կիլիկիա: Կը հասնին Հաճնոյ կառավարչութեան շէնքին առջեւ: Հոս չեն թողոր, որ հանգստանան: Մտրակի շաչիւններուն տակ կարաւանը կը յառաջանայ: Շարք քիչ արեն կը մնան Միս, ապա կ'ողողոյն Կարս Պապար գիւղաքաղաքը, որուն մօտէն կ'անցնին եւ կը հասնին Օսմանիէ, որ Ամանուսի լեռնաշղթային արեւմտեան դռուն է: Ապա կ'անցնին Հասանալէլիէն եւ Ղանլըկէչիտէն: Հոս Վարդապետը կը մտադրէ փախչիլ դէպի Պոլիս: Իրեն օգտակար կ'ըլլան երկու անձնուէր հայ երիտասարդներ, որոնցմէ մէկն էր Նիկոմեդիոյ Կէլվէ գիւղէն բժիշկ Սամուէլը, որ Հասանալէլիի պինտորական բժիշկն էր: Վարդապետը սակայն կ'ուզէ ամբողջ կարաւանն ապարել:

Արեւամուտին, կարաւանը կը հասնի Իսլահիէ: Հոս եւս չեն թողոր, որ քաղաք մտնեն, ուստի կը մնան բայ դաշտի մը մէջ: Այո՛, պէտք է փախչիլ եւ անլի առաջ, դէպի Տէր Ջօր չերթալ: Վարդապետը կը ծրագրէ փախուստը: Հոս կարաւանը երկուքի պիտի բաժնուէր: Անոնք որոնք կրնային վճարել, դէպի Հալէպ պիտի երթային շոգեկառքով, իսկ մնացեալները՝ հետիոտն:

Երկու հայ երիտասարդներ վարդապետը կը փախցնեն եւ վայն Այրան կը հասցնեն:

Գրիգորիս Պալաքեանի «Հայ Գողգոթան» առաջին տպագրութիւնը լոյս տեսած է 1922ին Վիեննայի Մխիթարեան տպարանէն, իսկ Գ. տպագրութիւնը հրատարակած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը 2003ին. իսկ 1991ին Երեւանի մէջ «Հայաստան» հրատարակչութիւնը նոյնպէս լոյս ընծայած է այս գիրքը: Ծ.Խ.

Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, «Հայ Գողգոթան - Գրուագներ Հայ Մարտիրոսութենէն Պերլինէն Դէպի Տէր Զօր (1914-1920)», Բ. հատոր, Բ. փայագրութիւն, Planeta Printing Press, Պէյրութ, 1977, միջակ չափի 294 էջ:

Երեք հոգի են փախստականները: Անտառին մէջ կերպարանափոխուելէ ետք, ինքնավարահոփին եկած էր Վարդապետին վրայ: Կը յառաջանան լեռներուն եւ ձորերուն մէջէն: Դէպի Այրան ճամբան Ինթիլիէն կ'անցնէր: Իրենց առջեւ ամէն տարիքի եւ հասակի, ցնցոփներու, ցեխի, աղտի ու թշուառութեան մէջ կորած հարիւրաւոր կիներ, աղջիկներ ու երախաներ կը տեսնէն: Ամէնքն ալ անբարար սնունդէ հիծած էին: Երեկոյեան, Սողոմոնեաններուն փունը կը մտնէն: Ծերունի փիկին Սողոմոնեան գրկաբայ կ'ընդունի Վարդապետը, որ աղպտութեան եւ ոջիլներու մէջ խեղդուած էր: Տիկինը մայրական գուրգուրանք կը ցուցաբերէ եւ ջուր կը փաքցնէ: Վարդապետը լաւ լոգանք մը առնելէ ետք մաքուր սգեստներ կը հագուի եւ հանգիստ կերպով կը քնանայ: Ան երկու ամիս հոս կը մնայ: Այս միջոցին կրկին կը հաւաքեն վերապրող հայերը եւ Հալէպի կողմերը կը քշեն:



Գրիգորիս Վարդապետը յաճախ առիթ կ'ունենար շփուելու գերմանացի սպաներու հետ, որոնք, հապուազիւր բացառութեամբ, թուրքերու չափ հայատեայ էին: Անոնք հայերը կը նկատէին պարտաւոր թրքական բանակը կոնակէն պարնելու եւ դաւադրելու, հետեւապէս եւ հայրենիքի դաւաճան ու ամէն պատիժի արժանի:

Ամանոսի հայոց ընդհանուր տարագրութենէն չորս օր ետք

Շվեյթթըր Փաուլա, որուն ծածկանունն էր Միս Շէֆիրտ, գերմանացի հիւանդապահուիչի մը հետ ու ընկերակցութեամբ իր թուրք ծառային ու երկու ոստիկան վինտորի՝ Մարաշէն ճամբայ կ'ելլէ Պաղչէ գալու համար, նպատակ ունենալով դրամական եւ այլ անհրաժեշտ օգնութիւն հասցնել Կարագրեալ հայոց: Շուրջ վեց ժամուան ճամբայ ձիավարելէ ետք, յանկարծ իրենք վիրենք կը գտնեն պարերազմի դաշտի մը մէջ: Մարտապղեցիկ տեսարան մը կը պարզուի իրենց աչքերուն առջեւ: Մարդկային հրէշութեան սարսափելի պարկերներ: Ամէնքն ալ, առանց բացառութեան, մերկացուած եւ դիակները՝ յօշոտուած: Գերմանացի հիւանդապահուիչն ձիէն վար իջնելով կը գրկէ աղջկնակի մը դիակը եւ կը համբուրէ: Ան դիակէ դիակ կը վազէ եւ փոքրերը կը գրկէ: Խելագարած է...: Ամանոսի այս ընդհանուր տեղահանութեան եւ ջարդերուն հեղինակը հասարակաբար Ավինին էր: Ան արքայազներու բոլոր կարասնները կողոպտել տալով իր վինտորներուն ձեռքով, առիծի բաժինը՝ մօտաւորապէս 1500 հնչուն ոսկի իրեն պահած էր: Զինադադարէն ետք երբ յոյները գրաւեցին Զմիւռնիան 1920ին, Ավինի Պրուսա փախչելով անձնասպան եղաւ:

Պաղչէի թուրք պաշտօնեաներուն ուշադրութիւնը մնացած սակաւաթիւ հայոց վրայ կեդրոնացած էր: Զրոյցներ կը շրջէին, թէ հայերը պիտի արքայութիւն: Վեռագրաբան մէջ աշխատող սելանիկցի տիօնմէ հրեայ մը հայոց կ'առաջարկէ իսլամանալ: Մասնաւոր առաջարկ մըն ալ կ'ընէ վարդապետին, որ կը մերժէ: Գերմանացի ճարտարագէտ Քլաուսի օգնութեամբ, Վարդապետը կը յաջողի ձեռք ձգել ուրիշ բարեսիրտ գերմանացիի մը՝ Քէկըլի անցագիրը: Այսպիսով Վարդապետը կը յաջողի Ինճիրլիք փախչիլ: Անտառներուն մէջ փախստական կ'ապրի: Կը հանդիպի «ամէլէ թապուրի»ի հայ վինտորներու, որոնք կարելի եղած չափով կ'օգնեն իրեն:

Վերջապէս կու գայ իր ապարարարը՝ Քէկըլ, եւ սինք շարնիհարցած տեսնելով՝ հրաման կ'ընէ իր օգնականներուն բնակութենէ հեռու, բլրան մը վրայ վրան մը հաստատել, որ կ'ըլլայ իր բնակարանը եւ թաքստոցը: Քէկըլ սինք նաեւ կը կերակրէ: Յուլիս 1916ին, հեղինակը հրաժեշտ կ'առնէ Քէկըլէն եւ Ամանոսի լեռներէն կ'ուղղուի դէպի Տարոսեան լեռները: Քէկըլի ընկերակ-

ցութեամբ կ'երթայ շոգեկառքի կայարանը եւ հայ պաշտօնեաներու օգնութեամբ շոգեկառք կը բարձրանայ: Կ'անցնի Արանայէն Եէնիճէ: Հոս հայ կայարանապետը՝ Տիրան Գոյումճեան պայն կը հիւրասիրէ իր փոստ մէջ: Ընտրուած ճիւղը մը եւ վստահելի թուրք ձիապանի մը հետ կը մեկնի Տօրաք, ապա ճամբան կը շարունակէ եւ Գուշըլար կը հասնի: Յանձնարարութեամբ համաձայն (նախապէս Քէլըլի կողմէն խօսուած), հոս կը գտնուի Կոնստանտնուպոլիսի ելեկտրագէտը, որ քրիստոնէական հաճոյակարարութեամբ կը հիւրասիրէ Վարդապետը, որ կը գիտակցի, թէ Գուշըլարի մէջ իր ինքնութիւնը գաղտնի պահելը անկարելի պիտի ըլլար: Զուգարկութեամբ խորհուրդով ու յանձնարարութեամբ, ան իր փոստը կը փոխէ եւ կ'ապաստանի Թաշտուրմաչի ելեկտրակայանէն գործարանին մէջ՝ ուրիշ ակնաբանի Կոնստանտնուպոլիսի մը հետ ըլլալով: Թաշտուրմաչ ձորը կը գտնուի Գուշըլարի եւ Պէլլիմէտիկի միջեւ: Երկու շաբաթ ետք վարդապետը կը հիանդանայ: Զայն Պէլլիմէտիկի հիանդանոցը կը փոխադրեն: Ընտրուած հայ բժիշկներու գաղտնապահութեան եւ օգնութեան՝ վարդապետը կ'ապաստանի: Այս միջոցին՝ Պոլսոյ Զաւէն Պարտիարքը Պաղատար կ'աքսորուի:

Վարդապետը վեց ամիս կը մնայ Պէլլիմէտիկի մէջ: Բարեկամներու օգնութեամբ եւ հնարամտութեամբ կը յաջողի փախչիլ դէպի Արանա, ուր երկար ատեն փախստական կ'ապրի եւ յաճախ իր թաքստոցը կը փոխէ: Կ'ապաստանի փոստը բժիշկ Վարդապետեանի, որո՞ւ միջոցաւ գերմանացի Վինքլերի կը ծանօթանայ: Արանա գտնուած միջոցին՝ Մայիս 1918ին հայկական հանրապետութեան հռչակումը կ'իմանայ:

Պարտիարքը հետզհետէ իր վախճանին հասնելու վրայ էր: Հայկական Լեզնոն յաղթանակ կը փոխի Արարայի ճակատամարտին: Անգլիական բանակը կը մտնէ Տամասկոս եւ կ'ողողուի դէպի Հալէպ:

Գրիգորիս Վարդապետ բարեկամներու օգնութեամբ կը ծախուի իբր գերմանացի պիտոտական եւ կ'ողողուի դէպի Պոլիս: Վերջապէս կը հասնի փոստ եւ կը գրկախառնուի իր սիրելիներուն հետ:

**Մարիա Ճէքըպարն [Ճիշդը՝ Եագոպսոն - խմբ.],
«Օրագրութիւն, 1907-1919, Խարբերդ», քաղ. Կարթ-
ղիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ,
Անթիլիաս, 1979, մեծ չափի 382 էջ, ձեռագիր
դանիերէն 963 էջ:**

Մարիա Ճէքըպարնի յուշերը կը նկարագրեն այրիին, որբին, հիանդին եւ թշուառին կեանքը: Խարբերդի մէջ ան ականապես կ'ըլլայ թուրքերու կա-տարած բոլոր խժոժութիւններուն եւ վայրագութիւններուն: Կը յիշէ մունեպիկին՝ զինուորագրութեան վերաբերեալ գոյժը եւ ուրիշ յուշեր:

Նշեցնելով իր յուշերուն մէջ կը նկարագրէ հայ ժողովուրդին ցաւերը, հալածանքն ու սարսափը:

Ճէքըպարն Խարբերդի հայկական գիւղերը կ'այցելէ մարդասիրական գործերով: Ան մանրամասնութեամբ կը յիշատակէ իր սրտացած եւ դրկած նամակներուն բովանդակութիւնները Վանէն, Տիգրանակերտէն, Եղեսիայէն, եւայլն: Ան կը խօսի նաեւ հայ բանտարկեալներուն եւ անոնց կրած չարչարանքներուն մասին, կը նկարագրէ թուրքերուն բիրտ վարուելակերպը բանտ-հիւանդանոցին մէջ հայոց հետ: Թուրքերը փոխադրէն ուրելիք եւ հագուելիք կը գրաւեն եւ դրամ կը պահանջեն: Կը յիշէ թուրքերու՝ հայոց փոխներուն կողոպտուող փեղահանութենէն անմիջապէս ետք, կը պարտէ, թէ ինչպէս թուրք զինուորներ հիւանդանոց կը մտնեն եւ հոն ապաստանած հիւանդ բոլոր հայերը կը պահանջեն՝ զանոնք փրկելով սպաննելու համար: Անոնք կը ստիպեն հայ աղջիկները եւ կիները, որ իսլամանան եւ իրենց հետ ամուսնանան: Շատ կը յիշուին թիֆուս եւ թիֆոյի պիւնտիւնները, որոնք բազմաթիւ պոհեր կը խլեն: Հայասէր դանիուիին կ'ուրախանայ, երբ մարդ-



կային յոռի յարկանիշներով գայմագամը պաշտօնանկ կ'ըլլայ:

Հայերը բռուն կերպով կը փափաքէին, որ ռուսերը գրաւէին երկիրը՝ ապարելու համար թուրքին եաթաղանէն:

Ամերիկացիք Դաշնակիցներու կողքին պարտերապմին մէջ կը մտնեն: Անգլիացիք Պաղտատը կը գրաւեն:

Կարգ մը հայեր Տերսիմ փախչելով, կը յաջողին ռուսական սահման հասնիլ: Ուրիշներ կը ձերբակալուին եւ կը բանտարկուին:

Կը խօսուի գերմանացի սինտորներուն Մուսուլէն նահանջին մասին: Վիլիելմ կայսրը Հոլանդա փախած է: Թալասթ փաշան եւ ուրիշ երիտասարդ թուրք պարագլուխներ փախած էին: Վերջապէս կը կնքուի սինադատարը Դաշնակիցներուն յաղթութեամբ:

Տոքթ. Մովսէս Տէր Յակոբեան, «Իրաքահայ Կեանքէն - Մուսուլ Վասնող Գաղթականութիւնը (1915-1918) Ընդելուպուած Գրիգոր Ասագ Քահանայ Տէր Յակոբեանի Ինքնակենսագրութեամբ», Ա. հատոր, րպ. «Մեան», Պէյրութ, 1981, միջակ չափի 174 էջ:

Գրիգոր Ասագ քահանայ Տէր Յակոբեան ծնած է 1884ին, Բաղէշի նահանգի Մղերդ սանձաքի Շէրուան գաւառի Քիքան գիւղին մէջ: 1912ին քահանայ կը ձեռնադրուի եւ Մուսուլ կը մեկնի: Տէր Վայրը մէկ փարի ետք իր ընտանիքը հոն բերել կու փայ:

1914ին, Մուսուլի գերման հիւպատոսը հայապետայ եւ ինքնահաւան մէկն էր:

Առաջին հայ գաղթականները կ'ըլլան պաշքալէյիները (210 հոգի), որոնք Մուսուլ կը հասնին երեք ամիս եւ վեց օր ճամբորդելէ յետոյ:

1915-1917ի կէսերը Մուսուլի կուսակալն էր ալպանայի Վայփար պէկը, որ շար բարեպետական էր հայոց հանդէպ:

16 Մայիս 1915ին Մուսուլ կը հասնին Մղերդի փարագրեալները, որոնք 1960 հոգիէն 760 հոգի մնացած էին, ըստ փարագրեալ Փանոսեան Խոճա Պեշիրոյի կնկան վկայութեան:

Տիգրանակերպի եւ շրջակայքի բռնագաղթած հայերը եւս Մուսուլ կը հասնին Մայիս 1915ին: Անոնց կը յաջորդեն կարնէյի փարագրեալները: Կառավարութիւնը արտօնութիւն կու փայ, որ կարողութիւն ունեցողները սենեակ վարձեն եւ բնակին:

Ռասուլ-Այնէն քուած չորս հապար հայ գաղթականներէն քանի մը հարիւր հոգի Նինուէ (Նեպի Եունիս) կը հասնին Յուլիս 1915ին: Ետքը կը հասնին Տէր Զօրէն: Մաս մը հիւանդ ըլլալով՝



Մուսուլ կը մնան: Մնացեալները Քերքուք կը դրկուին:

Տխրահոշակ Խալիլ պէկ Անդրանիկ Ջօրավարէն պարտուելով ճամբուն վրայ սուգ ու աներ սփռելով Սղերդէն Ճեպիրէ եւ Մուսուլ կու գայ, ապա կ'անցնի Պաղպար:

Տէր Գրիգորին հայրը՝ Տէր Յակոբը, Բաղեշի վանքին վանահայրն էր: Ան կը նահապակուի: Վանքին մէջ Տէր Յակոբը վեց ամիս խնամած արաբ զինուոր մը այս գոյժը ինք կը բերէ Տէր Գրիգորին:

Օսմանեան կառավարութիւնը Կ. Պոլսոյ Պապրիարքական Աթոռը կը ջնջէ եւ Ջալէն Պապրիարքը Դեկտեմբեր 1916ին Պաղպար կ'աքսորէ:

Այս միջոցին Տէր Ջօրէն եւ Ռասուլ-Այնէն եկող գաղթականներն անպակաս են:

Իթթիլաֆական Նազմի պէյը իր բարեկամն ըլլալով կը պատմէ Տէր Հօր, թէ ինչպէս Պոլսոյ մէջ կը հանդիպի Ջօհրայի, Վարդգէսի եւ Ակնունիի ու պանոնք կը պգուշայնէ Թալաաթի դաւերէն, սակայն միայն Վարդգէսը արթուն կը գտնուի:


Անգլիացիները Պաղպարը կը գրաւեն: Թուրքերը կը փախչին, Մուսուլ կը հաստատուին եւ հայ գաղթականները կը նեղեն: Մուսուլի հրամանատար Նամպաթ կ'որոշէ հայ գաղթականներէ կազմուած «ամելիէ թապուր» մը հիմնել: Պաղպար փախչիլ փորձող գաղթականները կը ձերբակալուին: Տէր Գրիգոր մեծ դժուարութեամբ կ'ազատէ պանոնք: Սակայն, Տէր Գրիգոր պրպարութեամբ կը ձերբակալուի, բայց շուտով կ'ազատի:

Անգլիացիները Մուսուլ կը մտնեն, որմէ ետք հայ մեծաթիւ գաղթականներ իրենց տեղերը կը վերադառնան, իսկ քաղաքը մնացածներուն վիճակը կը բարելաւուի:

Haroutun P. Boyadjian, "Musa Dagh and My Personal Memoirs", Rosekeer Press, U.S.A., 1981, միջակ չափի 135 էջ Յարութիւն Պոյաճեան, «Մուսա Տաղը Եւ Բ՛մ Անձնական Յուշերս», անգլերէն: [էջ 1-30]

Կեանքը խաղաղ կ'անցնի Մուսա Տաղի գիւղերուն մէջ մինչեւ Սոաջին Համաշխարհային Պատերապ մին ծագիլը 1914ի կէսին: Հրաման կու գայ, թէ 1845 փարեկան բոլոր այրերը պէտք է ներկայանան Անտիոքի կառավարչատունը՝ իրենց անձնաթուղթերը ստանալու համար: Ոմանք կը կասկածին այս հրամանին անկեղծութեան եւ թաքստոյները կը պահուրդին: Բոլոր ներկայացողները, այդ թիւին՝ Յարութիւնին հայրը, բանակ կը փարուին:

Հեռաբեւ գտնուելով՝ Յարութիւնի ընտանիքը գիւղին բնակչութեան հետ կը պատրաստուի լեռ բարձրանալու՝ թուրքին դիմադրելու համար: Այս նպատակով, Յարութիւնի Մովսէս եղբայրը կը պատրաստէ իր վէնքը: Ժողովուրդը, 5000 հոգի, լեռ կը բարձրանայ: Կռիւր կը սկսի 3 Օգոստոս 1915ին: Բարաբանչիւր յարձակումէ վերջ թուրքերը կը նահանջեն: Հայերը երեք անձ կը դրկեն Ալեքսանդրէթի նաւահանգիստը, ստուգելու համար, թէ դաշնակից նաւեր հոն հասա՞ծ են: Լաւ լողալ գիտցող Մովսէս Քիրիքեան ծովափ կը դրկուի, այն յոյսով որ ան դաշնակից նաւերու կը հանդիպի, բայց ան ձեռնտունայն կը վերադառնայ: Յուսահատութենէ մղուած, խումբ մը մարդիկ, կղերականի մը առաջնորդութեամբ լեռնէն վար կ'իջնեն՝ թուրքերուն յանձնուելու համար: Քիլիճեան անունով կռուող մը անոնց արգելք կը կենայ: Օգոստոսի կէսերուն, շրջապատող թուրք




սինտորներուն թիւը 5000ի կը հասնի: Թուրքերը քիչ մը կը յառաջանան եւ մեծ յարձակում մը կը գործեն: Հայերը կը հակադարձեն եւ եր կը մղեն վանոնք: Այնուհետեւ երկու շաբաթ հանգիստ կ'ապրին լեռան վրայ:

5 Սեպտեմբերին ֆրանսական նաւ մը կ'երեւի Միջերկրականի մէջ: Հայերը նաւուն հետ հաղորդակցութեան մէջ կը մտնեն: Նաւը կը մտնի թրքական դիրքերը: Քանի մը օրերու ընթացքին վեց ֆրանսական ռազմանաւեր կը հասնին Մուսա Տաղի ծովափը: 14 Սեպտեմբերին մուսակեցիք նաւ կ'ելլեն եւ Եգիպտոս կ'ողողոյն: Կը հասնին Փոր Սայիպ: Անգլիացիները յանձն կ'առնեն անոնց հոգաբարտութիւնը:

\

Ներսէս Արք. Բախարիկեան, «Խորշակահար Մանկութիւն», Գիրք Ա., տպ. «Ալթատիրէս», Պէյրութ, 1983, միջակ չափի 175 էջ:

Ներսէս Արք. Բախարիկեան 1915ին հինգ տարեկան էր, երբ արստորը կը սկսի: Մայրը, մեծ մայրը, քոյրը եւ ինք կը փորձեն Արաբկիր մնալ, սակայն վերջ ի վերջոյ կը տարագրուին Մելիտիին, ուր իր հարազատները կը ստանան: Որքայած՝ կը վերադառնայ Արաբկիր՝ իր հորեղբոր կնոջ քով: Կը սկսի մտորալ եւ դառն տարիներ կ'անցընէ մինչեւ պատերազմին վերջը, երբ օր մը զինք կը տանին Արաբկիրի որբանոցը, ուր աւելի լաւ կեանք մը կը սկսի իրեն համար:



Մարգիս Պալապանեան (Խօճա Պալապան), «Կեանքիս Տար Ու Պաղ Օրերը. Այնթապ, Քեսապ, Հալէպ», իմքագրեց բժ. Թորոս Թորանեան, րպ. «Արեւելք», Հալէպ, 1983, միջակ չափի 215 էջ:


Մարգիս Պալապանեան ծնած է Այնթապ, 1882ին: Ինը տարեկանին հայրը կը կորսնցնէ: Աւերարանական դպրոց եւ համալսարան կը յաճախէ: Երկու տարի կը պաշտօնավարէ Քեսապի մէջ: Աւերարանական ըլլալուն՝ 1915ին կը մնայ Այնթապ: Շար տարագրեալներ կը պահէ Ուստա Քարայի քարայրին մէջ: Անհիմն պատրուակով մը վայն կը ձերբակալեն եւ 10 Նոյեմբեր 1916ին Տէր Զօր կ'աքսորեն: Տարագրութեան ճամբուն վրայ երբ կը հասնի Աշար Պուճաղը գիտը, հոն արաբի տարապով ծպտուած այն-



թապցի Գրիգոր Գորուզեանը կ'ապարէ վայն, սակայն ժանտարմները կը հասնին ու կը ձերբակալեն: Տարագրուելով վանական տեղեր՝ վերջապէս կը հասնի Հալէպ: Կը միանայ անգլիական բանակի հայ կամաւորներու բաժնին ու կը մեկնի Այնթապ: Շար հայ ջարդած Հագօր եւ Շեֆիք փաշաները կը խնդրեն իրմէ, որ սիրենք Եգիպտոս փախսնէ: Կ'երթայ Հալէպ եւ անգլիացիներուն ու Դաշնակիցներուն լուր կու տայ, որպէսզի թակարդ մը լարելով սպաննեն երկուքը, սակայն դաշնակցական Մարգիս Տեմիրճեանի բերանբացութեան պատճառաւ հարցը երեսն կ'ելլէ: Այնթապի մէջ ֆրանսացիներուն եւ անգլիացիներուն մօտ գործելէ ետք, կը մասնակցի հայերը սիրելու գործին ու քաղաքի հայութեան հերոսամարտին: Սպրիլ 1921ին Հալէպ կ'անցնի:

**Վապգէն Անդրէասեան, «Հայարհապարտմ - Վէպ
Անսկիւք Եւ Անվախճան», Բ. հարոր, քաղ. «Տօ-
նիկեան», Պէյրութ, 1984, միջակ չափի 303 էջ:**

Վապգէն Անդրէասեան ծնած է Չմշկածագի Հայարի գիւղը: 1915ին ընտանեօք կ'ապաստանի Տերսիմի Ագրակ քրտարնակ գիւղը: Այս եւ մօտակայ գիւղերուն մէջ ապաստանած հայերը կ'որոշեն 1916ի աշնան երզնկա անցնիլ: Քրոջը հետ որոշ արեն մը Երզնկա մնալէն ետք կ'անցնի Կարին, ուր կը մնայ քոյրը, իսկ ինք կ'երթայ Թիֆլիս: Սօցաւորապէս 14 տարեկան էր երբ Թիֆլիսի մէջ կ'աշխատի «Հայաստան» թերթի խմբագրատունը, ուր կը ծանօթանայ Ջօրավար Անդրանիկի, Վահան Թոթովենցի եւ Լեւոն Թիթինճեանի հետ: Ջօր. Անդրանիկի յանձնարարականով կը մեկնի Էջմիածին՝ ուսանելու նպատակով: Երեք ամիս դասընթացքի հետեւելէ ետք կը փակուի Հոգեւոր Ճեմարանը եւ ինք հինգ ընկերներով կը մեկնի Ալեքսանդրապոլ, ապա Սանահին, ուր կը մնայ կարճ արեն եւ ուր իր քոյրը կը պաշտօնավարէ որբանոցին մէջ, Շուշանիկ մայրիկին հետ: Թիֆլիսի մէջ սպայից վարժարանի դասընթացքներու կը հետեւի: Կը միանայ կամաւորներու խումբի մը, որ սակայն կարճ արեն ետք կը լուծարուի: Կը փոխադրուի Վլադիկաւկայ:



**Գրի առաւ ու խմբագրեց՝ Թորոս Թորանեան,
«Փայտէ Դգալին Պարմութիւնը», քաղ. «Թեքնո-
փրես Մոսկոն», Պէյրութ, 1984, փոքր չափի 96 էջ
Թիրքը արաբերէն թարգմանութեամբ լոյս տե-
սած է Պէյրութ, 2008, 78 էջ]:**

**Յարութիւն Գոյումճեանը կը
պարմէ.**

Յարութիւնը Զէյթունի մօտ բայց Մարաշի վիլայէթին պարկանող Տէօն-կելէ գիւղէն է: Ընտանեօք կը տեղա-հանուի: Զանոնք կը քշեն Այնթապ, անկէ ալ՝ Հալէպ, ապա կը տանին Մեսքէնէի անապատները, ուր կը մնան մէկ ամիս: Չորս քոյրերը կ'առեան-գուին, մեծ եղբայրը կը կորսուի, հայրը կը մահանայ: Կը քշեն Տէր Զօր: Կը փախչին ու կու գան Սապրա: Չարչա-



րանքով կը շարունակեն իրենց ուղղութիւնը եւ կը հասնին Ապու Հարարա: Կը վերադառնան Մեսքէնէ: Հոս արաբ իշապան մը կ'առնէ Յարութիւնը եւ իր վրանը կը տանի: Իշապանին բարի քոյրը թանապուրով կը հիւրասիրէ Վիրենք: Իրեն կ'երկարեն կտորած կտրով փայտէ դգալ մը: Հինգ դգալ կը խմէ եւ դգալը ընկերոջը կը փոխանցէ: Չորս տղաք են՝ ինքը, Զաւէնը, Գրիգորը եւ Գէորգը: Այս գիւղը կը կոչուի Թէլ Ստուաբ: Արաբ իշապանն իրեն հայր կ'ըլլայ: Ան կ'ուզէ, որ Յարութիւնն իր ուղիերը արածէ: Թուրք երկու ոստիկաններ երբ կը տեսնեն Վիրենք ուղիին վրայ, վար կ'իջեցնեն եւ կարաւանին կը խառնեն: Արաբ իշապանը եւ անոր եղբայրը կը սպաննեն երկու թուրք ոստիկանները եւ կ'ապարեն Վիրենք:

Այս թափառաշրջիկ արաբները միշտ կը տեղափոխուին եւ օր մըն ալ Պաղպատի մօտերը կը հասնին: Այս մարդուն բոլոր անասունները հիւանդանալով կը սատկին: Յարութիւն կ'երթայ ուրիշ հարուստ մարդու մը մօտ: Կը սկսի գառնուկներ արածել:

Մալէի անունով հովիւ մը խորհուրդ կու տայ իրեն վերադառնալ Հալէպ՝ ապգակիցներուն քով: Կը փախչի եւ կ'ապաստանի Աննէ-վէներուն մօտ, որոնց շէյխը սինք կը պահէ երկու տարի: Յարութիւն հիւրերուն սուրճ կ'եփէր: Կը հասնին Տէր Զօր, ուր կը հանդիպի առաջին արաբ իշապանին: Անոր հետ կը հասնի Հալէպի մօտ Ռամլա գիւղը: Կ'երթայ գիտապետին քով եւ վէզիլ (փոխանորդ) կ'ըլլայ: Այսպէս կ'աշխատի մէկ տարի: Օր մը արաբէ մը կ'իմանայ, թէ գիղ եկած է Միսաք Չաուշ անունով հայ մը: Օր մը կը փախչի դէպի Հալէպ, ուր իր հօրեղբօրորդին կը գտնէ:

Յարութիւնը որքանոց կը դնեն: Հալէպի մէջ ինքնաշարժի նորոգութիւն կը սորվի, յետագային ֆրանսական բանակ կը մտնէ:

Զաւէն Սէրայտարեանը կը պատմէ.

Զաւէնը Կեյվէ գիտաքաղաքը կեդրոն ունեցող գաւառակի Գայլաբլուր փոքր հայաբնակ գիղէն էր: 17 Յուլիս 1915ին կը բռնեն բռնագաղթի ճամբան: Կ'անցնին Էսկիշեհիբէն եւ Գոնիա-յէն: Չարչարանքներով կը հասնին Մեպիլ՝ Հալէպ: Ապա կ'երթան Հալէպէն դուրս, ուր արաբ մարդ մը կը վերցնէ Զաւէնը եւ իր վրանը կը տանի: Հոն կ'ըլլան չորս հայ որբ մանուկներ եւ կ'ուրեն նոյն փայտէ կտրած դգալով:

Գէորգ Թիֆլէքճեանը կը պատմէ.

Գէորգը ծնած է Հռոմկլայ, 1905ին: Հայրը այնթապցի է: Այնթապի արեւմտեան կողմի Սր. Գէորգ գիղէն կը ձերբակալեն եւ կը տանին հայրը եւ երկու եղբայրները, փոքր կը գնդակահարեն: 4 Յունիս 1915ին կը բռնագաղթուին: Ճամբան Գէորգի երկու քոյրերը կը կայնահարուին: Կը մնան ինք ու մայրը: Մեպտեմբեր 1915ին կը հասնին Մեպիլ: Հալէպէն դուրս կ'ելլեն՝ դէպի անապատները եւ կը հասնին Մեսքէնէ, ապա Ապու Հարար: Յունուար 1916ին մայրը կը մահանայ:


Արաբ պետեւի մը սինք կը վերցնէ: Վրանին մէջ կը գտնէ ուրիշ երեք հայ որբեր՝ Զաւէն, Յարութիւն եւ Գրիգոր: Գէորգը հովիւ կը դառնայ:

Գրիգոր Տէրէեանը կը պատմէ.

Գրիգորը ծնած է Պրուսայի Կէօլփաղ գիւղը, 1907ին: 2 Մայիս 1915ին կը ձերբակալեն գիւղին երեւելիները: Աւելի ուշ՝ գիւղին բնակիչները կը բռնագաղթուին: Ճամբան իրենց կարաւանին կը միանան Մուրադչայի, Թիւրքմէնի եւ Մէօլէօսի հայ բնակիչները: Տունէն ելլելէն քառորդ ժամ ետք թուրքերը կը կրակեն իրենց վրայ: Քալելով կը հասնին Էսկիշեհիր, ապա, բազում չարչարանքներով կը հասնին Գոնիա: Նորէն Ճամբայ կ'ելլեն: Մայրը կը մահանայ: 20 Օգոստոսին կը հասնին Տարսոն, ուր թուրքերը դաշոյնով կը յարձակին իրենց վրայ եւ շարերը կը սպաննեն: Կը մորթեն իր քոյրը՝ Վարսենիկը: Գրիգոր առանձին կը մնայ: Կը հասնին Ռաքքայի կողմերը: Պետեի մը, որ որդեգրած էր ուրիշ երեք հայ որբեր՝ Ջալէնը, Յարութիւնը եւ Գէորգը, սինք եւս կ'որդեգրէ: Գրիգոր ուղտապան կը դառնայ, ապա սինագործութիւն կը սորվի: Զինադադարին Վալէպ կը փարուի եւ որբանոց կը մտնէ:

Լեւոն Նորաշխարհեան, «Ջէյթունը 1914-1921 Թթ», խմբագիր՝ Վ. Մ. Պողոսեան, Հայկական Ս. Ս. Վ. Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան, 1984, միջակ չափի 272 էջ:

Ընդհանուր պօրակոչ կը յայտարարուի Թուրքիոյ մէջ: Արձանագրութեանց կայան կը նշանակուի Ջէյթունը: Մարաշի երեւելի թուրքերը, իրենց երիտասարդութիւնը վիտորագրութենէ վերձ պահելու համար, հանրագրութիւն մը կը յանձնեն Բարձր Դրան, որուն մէջ կ'ըսեն, թէ իրենց ապահովութիւնը իբր թէ խաթարուած էր Ջէյթունի ապստամբ հայութեան կողմէ: Բթթի հատկանշներուն համար սահկա յարմար առիթ մըն էր արձուագոյն Ջէյթունը կործանելու համար: Մարաշի նոր կառավարիչ կը նշանակուի Ալի Հայտար անունով սպգայ-



նամոլ հայապետացը, Ջէյթունի նոր գայմագամ՝ Հիւսէյն Հիւսնին, իսկ ոստիկանապետը՝ հարիւրապետ Միտիաթը: Այս միջոցին, Պոլսոյ Պատրիարքարանէն եւ Սիսի Կաթողիկոսարանէն հնապանդելու եւ կայութեան հետ համակերպելու յորդորներ կը հասնին ամէն տեղ: Ջէյթունի Առաջնորդարանին մէջ տեղի ունեցած ժողովը կը յանգի Օսմանեան Պետութեան հնապանդ մնալու որոշումին: Հակառակ իր համոզումներուն, Նապարէթ Չատուզ կը համակերպի Առաջնորդարանի ժողովի որոշումին եւ Ջէյթունի կարգ մը ըմբոստ երիտասարդները կը յանձնէ կառավարութեան՝ վերջինիս ստիպումներուն ընդառաջելով:

Նապարէթ Չատուզ կը տառապէր, որովհետեւ թշնամիին ենթարկուիլը շատ աղէտներ կը բերէր հայոց գլխին: Ապգային ժողովը իր որոշումը տուած էր, սակայն պէտք էր գործել եւ կանխել

գալիք դժբախտությունները: Այս միջոցին, Առաջնորդ Յովհաննէս վրդ. Գարանֆիլեան եւ իշխաններ Նորաշխարհեան եւ Սուրէնեան կ'որոշեն փորձ մըն ալ կատարել մասնատր նամակ մը յղելով Միսի Կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանին: Անոնք Միս կ'ողարկեն վեյթունցի Աւերիս Ահարոնեանը, որ չորս օրէն ապահով վերադառնալով նամակ մը կը բերէ: Նամակին մէջ կ'ըստի, թէ Սահակ Կաթողիկոսը անձամբ խօսած է ծովային նախարար Ճեմալ փաշային հետ, որ խոստացած է ոչ մէկ բան խնայել հնապանդ եւ անմեղ ժողովուրդին հանգստութեան ու բարօրութեան համար: Կաթողիկոսը վեյթունցիներուն կը յորդորէ հնապանդ մնալ:

Ջեյթունի վանքին մէջ հայ քաջերը ժողով մը կը գումարեն Եղիայի նախագահութեամբ: Անոնք 1895ին քաջաբար կռուած էին եւ թուրքին չէին ենթարկուած: Վերջապէս Նապարէթ Չաուշ իր վէնքի ընկերներուն միանալու եւ ինքնապաշտպանութեան դիմելու որոշում կու տայ: Այս միջոցին, Հաճի Փանոսը, վախնալով իր անձին վրայ, կ'երթայ Ալի Հայրարին մօտ եւ անոր կը տրտնալանդ այս որոշումը՝ դաւաճանելով իր ընկերներուն: Նապարէթ Չաուշ խաբէութեամբ կը ձերբակալուի: Ասիկա սկիւբը կ'ըլլայ իթթիհապականներու՝ Ջեյթունի նկատմամբ բարբարոս եւ ահատր քաղաքականութեան իրագործումին: Ալի Հայրար կը կանչէ Ջեյթունի երեւելիներէն մաս մը, կը սպառնայ անոնց եւ կը հրահանգէ բոլոր վէնքերը յանձնել իշխանութեան: Քաղաքը կ'ամայանայ եւ թուրք սիւնտորներ կ'արգիլեն երթելէկը: Եղիա լուր դրկած էր Արեգին գիտը, որ 16 պատասխանատուներ Նապարէթ Չաուշի ամառանոցը գան խորհրդակցութեան համար: Եղիա կը ծրագրէ հայ քաջերը հաւաքել եւ Ջեյթունի սորանոցը պաշարել: Նապարէթ Չաուշի կինը՝ Կարար կը միանայ Եղիայի եւ կռուող քաջերուն:

Թուրքերը կը ջանային ապստամբութիւնն իր սաղմին մէջ խեղդել: Ժողովին ներկայ գտնուած Հայկ Ասմնեան, փառամտութենէ մղուած, կ'երթայ եւ Ալի Հայրարին կը մատնէ սորանոցը պաշարելու Եղիայի ծրագիրը: Յաջորդ առօրէ քաղաքին ամէն կողմը ստինատր սիւնտորներ կը վխտան: Անոնք կը ձերբակալեն Նապարէթ Չաուշի տղան՝ Յակոբը եւ հօրեղբօրորդին՝ Եղիան,

Առաջնորդ Յովհաննէս վրդ. Գարանֆիլեանը եւ ուրիշներ: Իբր վարձարարութիւն իր մատնութեան՝ Հայկ Ասմնեան կը նստի քաղաքապետի աթոռին վրայ:

Զօրանոցի բանտարկեալներուն վիճակը սարսափելի կը դառնայ: Անոնք չարչարանքներու կ'ենթարկուին: Հայկական գիւղերու բոլոր ղեկավարները կը ձերբակալուին եւ բանտ կը նետուին: 10 Մեպտեմբեր 1914ին ամէն ինչ լրացած էր, Ջէթունն իր շրջակայքով զինաթափ եղած էր եւ ղեկավարները՝ ձերբակալուած: Մալմիշ հայազգիներու օգնութեամբ՝ Ջէթունի հայոց բոլոր զէնքերը կը հաւաքուին: Այլ Հայտարի հետ Մարաշէն եկած հայազգի դաւաճաններ Մելքոնն ու Կարապետը կրկին կ'ընկերանան կալանաւորուած բանտարկեալներու թափօրին, որ Այլ Հայտարի առաջնորդութեամբ կը տարուի Մարաշ, որու փողոցներուն մէջ բոլոր կալանաւորները թուրք ամբոխի նախադիմաքին ու ծաղրին կ'ենթարկուին: Թուրքերը թունաւորելով կը սպաննեն Նապարէթ Չաուշը: Ան կը թաղուի Մարաշի մէջ:

Բանտարկեալներէն մաս մը Հալէպ կը դրկուի՝ դատուելու համար: Մնացեալները Մարաշ կը մնան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջամտութեան իբրեւ արդիւնք՝ Ջէթունի մէջ կայտնութիւնը կը մեղմանայ: Կարգ մը բանտարկեալներ, որոնց մէջ Առաջնորդը եւ Եղիա Նորաշխարհեան, ապա կ'արձակուին: Մակայն Առաջնորդը երեք ամիս ետք կրկին կը ձերբակալուի ու կը դրկուի Տէր Զօր, ուր կը վախճանի: Դաւաճան եւ քաղաքապետ Հայկ Ասմնեան այս միջոցին, գործակցելով Հիւսէյն Հիւսնիի եւ ոստիկանապետ Սուլէյմանի հետ, քմահաճ կերպով կը բանտարկէ, կը ծեծէ եւ կը հալածէ հայ երեւելիները:

Փանոս Չագրրեան եւ Մեսրոպ Չոլաքեան վերջապէս կ'որոշեն զինեալ պայքար տանիլ թուրքերուն դէմ: Անոնք Ալապոզան գիւղին մէջ կը սպաննեն զէնք փոխադրող թուրք ոստիկանները եւ 13 «Մաուլեր» հրացան կը գրաւեն: Իրենց կը միանան Եղիա Նորաշխարհեան, Նապարէթ Չաուշի Յակոբ եւ Ռուբէն որդիները եւ ուրիշներ: Երիտասարդութիւնը կ'ոգեւորուի: Խաչեր Միքայէլ Նորաշխարհեան մահափորձ կ'ընէ Հայկ Ասմնեանի դէմ, բայց կը ձախողի: Ընդդիմադիր տարրեր կը փութան միանալ ինքնապաշտպանութեան դիմող խումբին: Ասոնց մէջ է նաեւ Հայկ

Ասմնեանի կրպսեր եղբայրը՝ Փանոսը: Անոնք ապստամբութեան դրօշը կը բարձրացնեն: Դժբախտաբար, սակայն, վերապահները եւ դաւադիրները լուր կու տան կառավարութեան այս ապստամբութեան մասին: Թիով 40 քաջերը կը խմբուին Սբ. Աստուածածնայ վանքին մէջ եւ ինքնապաշտպանութեան պարտաստութիւններ կը տեսնեն: Տամասկոսէն եւ Արանայէն օգնական ուժեր կը հասնին թուրքերուն: Պատուիրակութիւն մը վանք կ'այցելէ բանակցութեանց համար, բայց ձեռնունայն կը վերադառնայ: Ինքնապաշտպանութիւնը որոշուած էր: Վանքին մէջ Եղիա եւ Նշան Նորաշխարհեան, Փանոս Չագրեան եւ Մեսրոպ Չուլաբեան կը կազմակերպեն ինքնապաշտպանութիւնը:

Թուրքերը կը ոմբակոծեն վանքը, ուրկէ ոչ մէկ ձայն կ'ելլէ: Կարծելով, թէ մարդ չէ մնացած վանքին մէջ, թուրքերը յարձակումի կ'անցնին: Հայ քաջորդիները կը պարասխանեն եւ բազմաթիւ դիակներ գետին կը փռեն: Քիչ ետք, ինքնապաշտպանները, վանքին դուռը բանալով, սուրներով կը կռուին թուրքերուն դէմ: Անոնք Սուլէյմանը եւ փասնեակ մը պինտորներ կը սպաննեն: Թուրքերը կը հեռանան: 40 հայ մարտիկները կը թողուն վանքը եւ կը խմբուին Ջէթունի հիւսիս-արեւմուտքը գտնուող Պապիկ փաշայի քարայրին մէջ:

Քանի մը օր վերջ Ջէթունի մէջ ձերբակալութիւններ կը սկսին, որով Մարաշ ղրկուած եւ մահուան գիրկը նետուած տղամարդոց թիւը 450ի կը հասնի:

26 Մարտ 1915ին, հեղինակը իր երկու եղբայրներուն հետ կը ձերբակալուի եւ բանտը կը դրուի: Նոյն գիշեր պանոնք կը միացնեն իրենց ընտանիքներուն (ընդամենը 22 ընտանիք), որոնք արդէն տեղահանուած էին դէպի Մարաշ: Մարաշի մօտերը երեք եղբայրները կը չարչարեն ձիերու պոչերէն կապելով եւ քաշկոտելով: Կը հասնին Էլ-Օղլու Խանը: Ապա ճամբայ կ'ելլեն եւ կը հասնին Պուլանըգ-Պախչէ գիւղը, որտեղի հայերը իրենց կարելի օգնութիւնները կը հասցնեն անոնց: Օսմանիէ կը հասնին, ուր այրերը կը տեղատրեն տեղույն հայկական վարժարանը, իսկ Լեւոնն ու անոր երկու եղբայրները բանտը կը նետեն: Այս կարաւանին կը հետեւին Ջէթունէն եկած երկու ուրիշ կարաւաններ: Հինգ օր Օսմանիէ կը մնան: Երկաթուղիով ճամբայ կ'ելլեն դէպի

Տարսոն, որտեղի հայերը կարելի եղած օգնությունները կը հաս-
ցնեն անոնց: Շոքեկառքով Վիրենք կը փանին Պոպանթի եւ ապա
Գոնիա: Ճամբայ կ'ելլեն կրկին: Ճամբուն վրայ ոմանք չարչա-
րանքներով կը սպաննուին: Կը հասնին Սուլթանիէ, ուր կը
հանդիպին 205 հայ արտրեալներու, որոնք կ'օգնեն իրենց: Հոս
Լեւոնը կ'իմանայ, որ Ջէթունը հայ բնակչութենէ պարպուած է:

Հեղինակը կ'անդրադառնայ Ջէթունի մէջ մնացած Եղիա
Նորաշխարհեանի կռուող խումբին եւ անցուդարձերուն: Արեգինի
գիտապետ Փանոս Եկանեան կ'ուխտէ իր գիտայիներով օգնել
այս խումբին: Ան մարտիկները Արեգին կը հրաւիրէ: Կ'որոշեն
բոլորով Կիւրեղիինի բերդն ապաստանիլ: Ջէթունէն եկած պատ-
ուիրակութիւն մը անմիաբանութիւն կը սերմանէ՝ ժողովուրդին
միամտութենէն օգտուելով: Մարտիկներուն առաջին բախումը
տեղի կ'ունենայ Շըրշըրի մէջ: Անոնք ծանր վնասներ կը պատ-
ճառեն թշնամիին: Մեսրոպ Չոլաքեանի խորհուրդով՝ հայ քաջերը
կ'որոշեն ճեպել Մուսա մեկնիլ: Յունիսի Յին անոնք ճամբայ
կ'ելլեն: Արգելքներու հանդիպելով կը վերադառնան Ջէթունի լեռ-
ները: Այնտեղտե, 22 հոգիւնց խումբը կը հասնի Ֆընտրճագ
գիւղը, որու հայ բնակիչներն իրենց կը միանան: Բոլորը մէկ կը
ծրագրեն Մարաշի բանտին վրայ յարձակիլ եւ ազատել բանտար-
կեալները: 15 Յունիս 1915ին Մարաշէն խումբ մը Վինտրներ
Ֆընտրճագ կու գան՝ գաղթի հրամանը գործադրելու համար:
Ֆընտրճագցիք կը ձերբակալեն զանոնք եւ Վէնքերը կը գրաւեն:
26 Յուլիսին թուրքերը թնդանօթներով կը յարձակին Ֆընտրճագի
վրայ: Սուինամարտ տեղի կ'ունենայ եւ ժողովուրդը անձնատուր
կ'ըլլայ թուրքերուն: Ինքնապաշտպանները կը սրտին: Անոնցմէ
մաս մը Մարաշ կը մտնէ եւ կը խառնուի փարագրեալներուն:
Թուրքերը կ'այրեն Ֆընտրճագի դպրոցն ու եկեղեցին՝ հոն
ապաստանած հայերով հանդերձ: Մարաշի բանտին մէջ արգելա-
փակուած 198 հայերը կը սպաննուին:

Կը վերադառնանք փարագրութեան ճամբան՝ Սուլթանիէ:
Ջէթուն վերադառնալու լուր կը հասնի փարագիրներուն: Սակայն,
գաղթականները կը խոշտանգուին եւ կը ծեծուին: Յուսալիս-
բութիւն կը տիրէ անոնց մէջ: Կրկին ճամբայ կ'ելլեն եւ կը հաս-
նին Էրեւիլ: Լեւոնն իր ազգականներով հետիոտն ճամբայ կ'ելլէ

դէպի Տարսոն: Քանի մը օր եկեղեցին մնալէ ետք ճամբայ կ'ելլեն դէպի Հալէպ: Վեց օր ետք կը հասնին քրտարնակ Ռաճօ գիւղը, ուր քիւրտերէն յարձակում կը կրեն: Ապա կը հասնին Գաթմա, ուր սարսափելի վիճակ կը տիրէր. ջուր եւ հաց չկային, համաճարակը սոսիս կը հնձէր: Եռն գիշեր կը հասնին Հալէպ:

Հալէպէն 23 երիտասարդներ պինուած եւ գաղտնօրէն կ'ուղղուին Ջէթունի լեռները, ուր կը միանան Եղիա Նորաշխարհեանին: Սակայն ձմեռնամուտին անոնք կը վերադառնան Հալէպ, իսկ Եղիա իր մարդոցմով կը մնայ Խունիսի լեռները՝ պաշարը միասին առած:

Լեռնը կարաւանին հետ կը տարուի Տամասկոս, ուրկէ կը քշուին Տարաա գիւղաքաղաքը եւ ապա Նխիլ գիւղը: Մէկ ամիս հոս մնալէ ետք կ'երթան Պալ կոչուած գիւղը, ուր մէկ տարի մնալէ ետք, կը հաստատուին Ճրէյտիէ քրիստոնէաբնակ գիւղը: Հոս Լեռն առեւտրորի կրպակ մը բանալով, ապրուստը կը ճարէ: Բաւական չարչարուելէ ետք, ազգասէր հայու մը միջնորդութեամբ, Լեռն կ'երթայ Տամասկոսի շրջակայքը գտնուող ազարակներէն մէկուն մէջ պարսպարուած 200 որբուհիներու հոգատարութիւնն ստանձնելու: Արեն մը ետք, ոստիկանները յանկարծակի կերպով ազարակ գալով կը ձերբակալեն պիւրէնք: Բարենպաստ միջամտութեամբ մը անոնք բանտէն ազատ կ'արձակուին, կը փախչին եւ կ'ապաստանին Ճեպել Տրուպ` Սուլթան Աթրաշի մօտ, անգլիական գօտի` Ազապա մտնելու յոյսով: Սուլթան Աթրաշ կը գործակցի ֆրանսայիներուն հետ եւ կը յարձակի թուրքերուն վրայ:

Հեղինակը հոս կ'անդրադառնայ Տէր Ջօր արքայուած վէթունցիներու փառապանքներուն՝ լսելով պայն կարգ մը վերապրողներու բերնէն:

Եղիայի խումբին մէկ մասը Ֆոնուպ երթալէն ետք, Եղիայի հետ Ֆոնուպի անառիկ լեռան վրայ կը մնան 17 քաջեր: Մարտ 1916ին անոնք կ'իջնեն Ֆոնուպ, ուր կը հանդիպին հայաբնակ Գոչող գիւղէն Պեւրոս Աշրգեանին, որ իրենց կ'իմացնէ, թէ ինք եւ գիւղապետ Վամբարձում Գարակէօպեանն իրենց ընտանիքներով լեռներն ապաստանած են: Եղիայի խումբը կ'այցելէ անոնց թաքստոցը, ապա ճամբայ կ'ելլէ դէպի Կոկիսոն: Կ'անցնին Պուն-

տուկ եւ Եիվիլի գիտերէն ու կը հասնին Կոկիսոն: Կ'այցելեն Կապան բերդը: Այս շրջանին մէջ անոնք կը մնան մէկ ու կէս ամիս՝ միշտ հետապնդուելով, ապա Ջէյթունի լեռները կը վերադառնան:

Ամանոս լեռներու Ինթիլի գիտին մէջ կը հաւաքուին հայեր, որոնք ընդհանրապէս կ'աշխատին ճանապարհաշինութեան մէջ: Ասոնց մէջէն ոմանք, այդ թիւին՝ վէթունցիներ, հայդուկային խումբեր կը կազմեն եւ կը պահեն իրենց գոյութիւնը: Այս խումբերէն մէկը կազմած է Եղիայի Խաչեր որդիին Կիկինը՝ Ջմրուխար: Խումբը կազմելէ ետք, Ջմրուխարը շատ քիչ վէնքերով եւ փասնեակ մը մարտիկներով լեռներ եւ դաշտեր կ'որոնէր կը հասնի Ընմպէ, կը հանդիպի Եղիայի խումբին ու կը միանայ իր ամուսինին: Այս հանդիպման ընթացքին թուրքերը յարձակում կը գործեն մարտիկներու խումբին վրայ: Ջմրուխար կը կորսնցնէ խումբը եւ օրերով կը թափառի՝ փնտրելով անոր անդամները: Ան վերջապէս կ'ուղղուի Սարը Կիւլել գիտը, ուր կը յուսայ գտնել Եղիան եւ խումբը: Միայնամբ կը հանդիպի թուրք հարկահաւար Ահմէտին, որ կ'ուզէ վինք կնութեան առնել: Ջմրուխար վճռականօրէն կը մերժէ: Այս անել կայութենէն ապարելու համար, օգտուելով հանգամանքներէ, ան ժայռի մը վրայէն նետուելով անձնասպան կ'ըլլայ: Այս պարամութիւնը իր բովանդակ մանրամասնութիւններով հեղինակը կը լսէ Սարը Կիւլելի գիտապետ՝ Ֆախունց Ահմէտէն 1919ին:

Եղիայի խումբը կը շարունակէ Ջէյթունի լեռներուն վրայ մաքառիլ: Սակայն, 1917ի գարնան, երբ խումբն ընդամէնը վեց մարտիկ կը հաշուէր, օր մը Ջէյթունի ճամբուն վրայ լարուած ծուղակի մէջ իյնալով, Եղիա Նորաշխարհեան կը նահապակուի: Անոր անդրանիկ որդին՝ երեսուն փարեկան Պապիկը կը սփանձնէ խմբապետութիւնը: Պապիկ կ'որոշէ Թընըպի լեռան կռիւին կորսուած հայ մարտիկները գտնել: Հինգ ընկերներով անոնք կը շարունակեն իրենց թափառումները եւ կը յաջողին գտնել Սուլազ Տէպէի բարձունքին վրայ կորսուած իննը մարտիկները: Բոլորը միասին 1917-1918ի ձմեռը ապահով կ'անցընեն Քեշ Տաղի բարձունքին վրան: 1918ի գարնան օր մը, ութը-փասը օրուան պաշար առած, անոնք Կոկիսոնի դաշտը կ'իջնեն ու եօթը օր

թափառելի երբ կը հասնին Կարս Պապարի հիւսիսը, անտառներուն մէջ բնակութիւն կը հաստատեն, իսկ քսան օր երբ Ջէյթունի լեռները կը վերադառնան: Կ'այցելեն Գրախտոկ լեռան վրան Համբարձում Գարակէօպեանի եւ Պեպրոս Աշըգեանի քարայրը, բայց մարդ չեն գտներ: Կ'իմանան, թէ անոնք մատնուելով, դէպի Հալէպ քշուած են եւ Համբարձում ճամբուն վրայ սպաննուած է: Խումբը կը շարունակէ ճամբան եւ կռուի կը բռնուի թուրք սինտորներու հետ: Պապիկի Խաչեր եղբայրը կը նահապակուի: Բաւական թափառումներէ ետք, անոնք կ'իմանան, թէ Դաշնակիցները յաղթած են պատերազմը եւ թուրքերը կը նահանջեն: Կը հասնին Քեշ Տաղ: Ընկերներուն հետ խորհրդակցելէ ետք, Պապիկ կ'որոշէ խումբով մեկնիլ Ամանոսի լեռները եւ միանալ հայազգի հայրուկ Մապրի պէյի խումբին: Չմտը հոն կ'անցընեն եւ ամառը կը վերադառնան Ջէյթունի լեռները: Խումբը ճամբայ կ'ելլէ դէպի Ամանոս լեռները: Ջէյթունի լեռներէն դուրս, երբ հապի կը տեղատրուին Քիշիֆի գիւղին մէջ, յարձակման կ'ենթարկուին: Բռան կռիւներ տեղի կ'ունենան: 12 Նոյեմբեր 1918ին խմբապետ Պապիկ կը նահապակուի:

1918ի աշնանը կը կնքուի սինտադարը: Անգլիացիք հայոց կ'արքօնեն իրենց բնակավայրերը վերադառնալ: Շեղինակը վէյթունցիներու կարաւանով Հալէպ կը հասնի 21 Մայիս 1919ին: Այստեղ ուրիշ վէյթունցիներ կը միանան վերադարձի կարաւանին եւ թիւը կը հասնի 1200 հոգիի: Կարաւանը ճամբայ կ'ելլէ, կ'անցնի Գաթմայէն, Քիլիսէն, Այնթապէն, Գարպըրքլար եւ Գում-Չամ գիւղերէն ու կը հասնի Մարաշ, ուր գտնուող վէյթունցիները եօթը հոգինոց սինտալ խումբ մը կը կազմեն եւ Ջէյթուն կը դրկեն: Անոնք ճամբուն վրայ թուրք ոստիկաններու հետ բախում կ'ունենան, 13 հոգի կը սպաննեն եւ Մարաշ կը վերադառնան: Գըվրագ Բպրահիմ անունով թուրք առաւակապետը Մարաշ գալով կը խնդրէ հայերէն հաշտութեամբ ապրիլ իրարու հետ: Ջէյթունցիները անգլիացիներէն արքօնութիւն կը վերցնեն եւ Ջէյթուն կը վերադառնան:

Ջէյթունի մէջ վերաշինութիւնը կը սկսի: Ազգային մարմինները Պոլսէն կ'այցելեն Ջէյթուն եւ կ'օժանդակեն վերադարձողներուն: Ջէյթուն կը հասնի Պոլսոյ Ազգային Խնամակալութեան լիազօր

ներկայացուցիչ բժիշկ Քաջբերունին (Վարդան Թովալեան):
Զեյթունցիներուն խնդրանքով եւ գալիք վրանգները նկարի
առնելով՝ ան կը խոստանայ սպառազինել պանոնք:

Նապլուսի ռազմաճակատին վրայ պարտուած Մութաֆա
Քեմալը եկած էր Սեբաստիա եւ համագումար մը կազմակերպած:
Ան կը սկսի քարոզչութիւն ընել եւ թուրք ժողովուրդը զինել:

Իրենց ուրնձգութիւններով, քեմալականները հերզիներէ դուռ
կը բանան բախումներու եւ ընդհարումներու: 1919էն Հոկտեմբեր
1921 ժամանակաշրջանին այս կռիւները կը շարունակուին:
Զեյթունի լեռներուն վրայ հեղինակը հայդուկային կռիւներ կը մղէ
իր ընկերներուն հետ: Քիլիս հասնելով՝ այս ապարագրուած
խումբը Հալէպ կը մեկնի Հոկտեմբեր 1921ին:


Լեւոն Վարուժեան, «Հակիրճ Պատմութիւն», առանձնապիսի, արքայապուստ «Հասկ Հայագիտական Տարեգիրք»ի Նոր Երջանի Գ.Բ. տարիներու հատորէն, 1983-84, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, մեծ չափի էջ 365-382:

Վերջաւորութեան ներկայացուած է Լեւոն Վարուժեանի «Հակիրճ Պատմութիւն Մեր Աքսորին» գրութիւնը, էջ 378-382:

Լեւոն Վարուժեան ծնած է 1906ին, Այնթապ:

1915ի գարնան՝ Հայաստանի քաղաքներէն եւ գիւղերէն ջարդի ու տեղահանութեան լուրերը կը լսուին:

Լեւոն ընդհանուր ճամբայ կ'ելլէ առաջին կարաւանով: Մինչեւ Ազճա Գոյուն գիւղը կ'երթան էջերով եւ ջորիներով: Հոնկէ շոգեկառքի մէջ կը թխմեն պիրենք եւ կը տանին Համայի մօտերը, ուր վրաններու տակ կ'ապրին: Երկու-երեք ամիս ետք վրանաքաղաքին մէջ համաճարակ կը սկսի: Ամէն օր պատգարակներով անդադար մեռելներ կը փոխադրեն եւ փոսը կը նետեն: Ընդհանուր կը փոխադրուին մօտակայ Մելիմիէ գիւղաքաղաքը: Հայրը կօշիկ կը կարէ: Հոս աղքատ վիճակի մէջ կ'ապրին երկու տարի: Ապրուստի դժուարութեան պատճառով, հայրը կ'որոշէ ընդհանուր Հոմս քաղաքը երթալ: Հասի Հոմս կը հասնին, թուրք խոճա մը յանկարծ կը կեցնէ կառքը եւ վայրագօրէն կը ծեծէ իր հայրը: Կը վերադառնան Մելիմիէ: Հայրը վախի եւ ծեծի ապոկեցութեան տակ կը հիւանդանայ ու կը մահանայ: Մայրը կը ստիպուի աշխատիլ բամպակ եւ բուրդ մանելով: Ապրուստն անբաւարար է:



Թրքական կառավարութիւնը տեսնելով, որ հայոց բնաջնջման

ծրագիրը լրի չէ յաջողած, վերապրող հայերը կը սպիպէ թրքացնել:

Լեւոնի մայրը յոգնած է սպառած վիճակ մը ունէր: Չդիմանալով չքատրութեան եւ թուրքերու կապարած անմարդկային արարքներուն, ան կը մահանայ: Մօրը կը հեկեի մեծ քոյրը: Լեւոն եւ կրտսեր քոյրը կը մնան որք ու կ'ապաստանին բարի հայ ընտանիքի մը մօտ:

Երբ պարերսկմը կը վերջանայ՝ անգլիացիներուն օգնութեամբ Այնթապ կը վերադառնան: Քոյր եւ եղբայր որբանոց կը դրուին: Քեմալական շարժումէն ետք երբ Այնթապ կը պարպուի հայութենէ՝ անոնք կը փոխադրուին Լիբանան եւ որբանոցը կը մնան: 1928ին Լեւոն կը սինտրագրուի ֆրանսական բանակին: Յետագային կ'ամուսնանայ եւ Անգլիա կը հաստատուի:

«Յուշարձան Ապրիլ (11) Քսանչորսի», վերահրատարակություն «Հայկական Տեղասպանության 70-ամեակի Ոգեկոչման Լիբանանահայ Կեդրոնական Մարմինի», Պէյրուք, 1985, միջակ չափի 128 էջ:

Ա) Բիւզանդ Պոպաճեան, «Գէպի Այաշ. Հին Ու Նոր Յուշեր», էջ 95-112:

24 Ապրիլ 1915ին Կոնստանդնուպոլսի մարտերի հայ մարտիկներուն ձերբակալութիւնը: Տարագրութեան ճիւղային ծրագիրը եւ ջարդերը նիւթած էին իթիհապականներն ու գերմանացիները: Առաջին անգամ ռուսական թերթերը եղան, որ մարտահիշ ըրին այս դիւային ծրագրին իսկական գոյութիւնը: Մոսկուայի մէջ հրատարակուող ռուսական «Կոլոս Մոսքովի» թերթը գրած էր Կոնստանդնուպոլսի հրէշային ու թաքուն ծրագրի մը գոյութեան մասին, թէ «Բզարմ» թրքական թերթը հերքած էր այս Կոնստանդնուպոլսի թերթը: Գերմանիա Անատոլիոյ հայկական նահանգները գերմանական գաղթականի վերածելու ծրագիր ունէր: Դժբախտաբար, հայոց ազգային իշխանութիւնը միամտօրէն անփութութիւն ցոյց տուած էր այս հարցին նկատմամբ:

Սկիւարի մէջ Բիւզանդ Պոպաճեան կը լսէ, թէ կարգ մը հայեր ձերբակալուած են: Սկիւարի հնչակեան ակումբին անդամներէն ոմանք եւ իր հօրեղբորդին՝ Թէոդիկը Շաբաթ գիշեր ձերբակալուած էին: Բիւզանդ Երկուշաբթի օրը կ'իջնէ Պոլիս՝ իր գրասենեակը: Երեկոյեան ան կ'առաջնորդուի ոստիկանատան եւ ապա բանար: Բանարին մէջ, թուրք բանարկեալներէն մէկուն հետ պրուպերով, անկէ կ'իմանայ, թէ թուրք բանարկեալներուն մեծամասնութիւնը ապար արձակուած է չէթէ արձանագրուելով (ջար



չանցած՝ այս չէթէներուն ձեռքով է, որ կոտորուեցաւ հայութեան մէկ մասը: Բանտէն վերենք կը տանին Հայրապետ Փաշայի կայարանը եւ ապա՝ Էսկիշէհիր: Հոս 29 բանտարկեալներ կ'արգելափակուին փոքր սենեակի մը մէջ: Ուղեւորութիւնը կը շարունակուի դէպի Էնկիւրի, ուր կը հասնին Չորեքշաբթի գիշեր եւ կ'արգելափակուին Կեղտոյն ոստիկանատան բանտին մէջ: Յաջորդ առաւօտ բանտին բակին մէջ թուրք բանտարկեալները ցնծութեամբ «կ'աւերեն» իրենց չէթէ արձանագրուիլը եւ մօտաւոր արձակումը: Հոսկէ մաս մը բանտարկեալներ Չանդըրը կը դրկուին, իսկ ուրիշ մաս մը՝ Այաշ: Բիւզանդ, իր խումբով Այաշի բանտը կը հասնի: Հոս բանտարկուած էին հայ մտաւորական դասակարգին ամենէն կարկառուն դէմքերը, որոնք իրենց բանտարկուելու կը կազմակերպէին իրաքանչիւրին պաշտօն մը յարկաւանդելով: Խորհրդակցական ժողովներ տեղի կ'ունենան: Օր մըն ալ Հ. Յ. Գ. կուսակցութեան պետերէն ոմանք, ինչպէս բժիշկ Կարապետ Փաշայեան եւ Է. Ակնունի (Խաչատուր Մալումեան), ոստիկանական քոմիսէրին կողմէ խորհրդակցութեան կը հրաւիրուին: Այս ժողովը գաղտնի կը մնայ: Աւելի ուշ սպորտած լուրերը կ'ըսեն, թէ «Բթթիհապ» կուսակցութիւնը դաշնակցականներուն առաջարկած է իրենց միանալ ռուսներուն դէմ: Հայ մտաւորականները բանտին մէջ մեծ հանդիսատրութեամբ կը փոսեն ազգային ներքին ինքնավարութեան (Ազգային Մահմանադրութեան - խմբ.) եւ սուրբանին (Մեհմէտ Ե. Ռեշապ) տարեդարձները:

Կառավարական հրամանով՝ Խաժակ, Ակնունի, Ռուբէն Զարդարեան, Սարգիս Մինասեան, Նապարէթ Տաղաւարեան եւ Յարութիւն Ճանկիլեան կը դրկուին Էնկիւրի, ըստ ոմանց եւ ըստ ուրիշներու՝ Պոլիս, դատուելու համար: Ասոնց երեւէին Միամանթօ եւս կը դրկուի: Շաբաթ մը ետք բժիշկ Փաշայեան Զարդարեանի ստորագրութեամբ հեռագիր մը կը ստանայ Պոլսանքիէն: Այս հեռագիրէն անոնք կը հասկնան, թէ խումբը Պոլսանքիէն Տիգրանակերտ պիտի դրկուի: Իմացած էին նաեւ Գրիգոր Զօհրապի եւ Վարդգէսի Տիգրանակերտ դրկուելուն եւ հայ ժողովուրդի տարագրութեան մասին:

Հինգ հոգի ազատ կ'արձակուին: Ասոնց շարքին է Բիւզանդը:

Բ) Միքայել Շամփրանձեան, «Չանդրըրէն Վերջիշումներ», էջ 413-421:

Չանդրըրի մէջ բանփարկուածները 150 հոգի են: Երկու կարաւաններ, առաջինը՝ 52, երկրորդը՝ 24 հոգի, ճամբայ կ'ելլեն դէպի Տէր Զօր: Ցանկերը պատրաստողը կ'ըլլայ Օղուպ անունով իթթի-հափական պիտուրականը, որ պատասխանատուն է հարիւրէ աւելի մփատրականներու արեան: Միքայել Շամփրանձեան անձնական շար յիշատակներով կապուած էր Դանիէլ Վարուժանին, Տիրան Քէլէկեանին եւ Ռուբէն Մեակին: Վերջինս արտարավայր քաղաքին մէջ բժշկութեամբ կը զբաղէր: Այս միջոցին Չէթէճի Արապաճը Իսմայէլ անունով թուրք մը, որուն աղջիկը կը բուժէր Մեակ, անոր կ'առաջարկէ իսլամանալ ու ապարիլ բանփրէն եւ կոտորածէն: Մնացած էին 37 հոգի, որոնց Պոլսէն գալ ուրիշ որեւէ տեղ ապար մնալու արփօնութիւն կու գայ, բացի հինգէն, որոնց մէջ են Դանիէլ Վարուժանը եւ Ռուբէն Մեակը: 1915ի Օգոստոսին այս հինգ անձերը կը դրկուին Այաշ: Նոյն գիշերը ժամը 12ին անոնց սպանութեան լուրը կը ստանան:

Տիրան Քէլէկեան ինքզինք ապահով կը զգար Պոլսոյ մէջ գերման դեսպան Վանկենհայմի միջնորդութեան շնորհիւ: Այս վերջինը յանկարծ կը մահանայ եւ յաջորդ օրն իսկ Քէլէկեան կը ձերբակալուի:


Ասկէ ետք Շամփրանձեան եօթը ընկերներու խումբով կը հեռանայ Չանդրըրէն: Մնացած քսան հոգին այդ շրջանի հայութեան հետ կը փարագրուին:

Գրիգոր Միսրճեան (գրի առաւ Պէտրօրիս Խաչապուրեան), «Կեանքիս Գողգոթան (Յուշեր Մեծ Եղեռնէն)», րպ. «Գարպաշեան», Պէյրութ, 1986, փոքր չափի 51 էջ:

Գրիգոր Միսրճեան ծնած է 1901ին, Պուրսա: Պարանի՝ կը սկսի գաղթը: Իր հօր, մօր, եղբօր եւ ամուսնացած քրոջ ու անոր զաւակներուն հետ Գրիգոր կ'անցնի Կուրինա, Գոնիա, Աֆիոն Գարաիսար, Գարա-ման եւ Էրէլի: Քրոջ ամուսինը բանակ գացած ըլլալով՝ քրոջը կ'արտօնուի իր չորս զաւակներով Էրէլի մնալ:

Ընտանիքի միւս անդամներուն հետ Գրիգոր հետիոտն կը հասնի Պոլսանքի: Ջանապան ձեռնով չարչարուած հայոց դիակներ կը տեսնեն ճամբան: Կ'անցնին Տարսոն, Արանա, Օսմանիէ, Հասան Պէլի, Քելլէր, Այրան, Ինթիլի եւ Իսլահիէ բնակավայրերէն: Իրենց խումբին մաս կը կազմեն Գրիգոր Ջօհրապ եւ Վարդգէս: Երբ Գաթմա կը հասնին, ապարտօն կը տրուի ժողովուրդին երթալու կա'մ արաբական երկիրներ եւ կա'մ թրքական գիւղեր: Իրենք կ'երթան Մէլիքան Էքաէպ, 1916ի ձմեռը: Ճամբան կը հասնին Թախթալը Քէօփրի, ուր Գրիգորի հայրը կը հիւանդանայ ու կը մահանայ: Քիւրտերու կողոպուտին կ'ենթարկուին: Ապա անցնելով Իսլահիէէն, Հասան Պէլիէն եւ Պախչէէն՝ Տարսուտան լեռները կը մագլցին: Այնտեղ կ'նոտողուին դէպի Մարաշ: Ճամբուն վրայ երիտասարդուիներէն շարտերը կ'առեւանգուին: Այնթապի քովէն անցնելով կ'երթան Նիպիպ (Մծրին): Մայրը կը մահանայ: Կը հասնին Պերէճիք՝ անկէ դէպի Տէր Ջօր քշուելու համար:

Գրիգոր Պերէճիքի մէջ եղբօրը եւ մէկ ընկերոջ հետ կը մնայ



քարայրի մը մէջ: Եղբայրը կ'երթայ թուրքի մը քով աշխատելու, իսկ ինք կը խայթուի կարիճներէ եւ պգայպիրկ կը պառկի: Կարապետ անունով էֆֆէրէցի հայ պարանի մը իմաց կու տայ մօտակայ վայր մը գտնուող հայոց, որոնք կ'ապարեն Գրիգորը ճաշ եւ հաց բերելով: Այնթապցի Յակոբ էֆենտի Մուրաբեան իր վրանին մէջ Գրիգորի ապաքինման հոգ կը տանի: Պետրոս ընկերոջ հետ կրկին կ'ապաստանի քարայրը եւ հոն կը մնայ մինչեւ 1917ի ձմեռան վերջը: Գրիգոր սկիզբը կը ստիպուի մտրալ Պերէճիքի մէջ: Թուրք կին մը պայն գործատրութեան կը տանի, սակայն սպաննուելու վտանգին առջեւ գտնուելով, կը փախչի եւ կրկին կ'ապաստանի Պերէճիքի քարայրը, ուր հայ քարկոփներու կը հանդիպի: Անոնց օգնութեամբ եւ քաջալերանքով կակուղ քարերը տաշելով, ան գաւաթներ եւ պնակներ կը շինէ ու կը ծախէ եւ այսպիսով իր ապրուստը կը ճարէ:

Ջարդը կը մեղմանայ եւ թրքական կառավարութիւնը ծննդավայր վերադառնալ ուղղներուն մէկ շարքուան հաց կու տայ: Գրիգորի ընկերը՝ Պետրոսը կը վերադառնայ ծննդավայրը՝ Շախշախ, Պոլսոյ մօտերը: 1917ի ամառը, եղբայրը դիպուածով մը Պետրոսէն իմանալով, որ Գրիգորը ողջ է, Պերէճիք կու գայ: Եղբայրները կը վերամիանան ու կ'երթան Մծբին: Գրիգոր գործի կը կանչուի թուրք Շէխոյին մօտ՝ այգիին մէջ ծառայելու համար: Բաւական դժուարութիւններէ կ'անցնին: Վերջապէս, իբր փորագրող ուսուցիչ, քրտական որբանոց մը կը մտնեն: Մինչեւ 1918ի վերջը, սինադոսարը, եղբայրները կ'աշխատին Այնթապի մէջ:


1919ին քեմալական շարժումը կը սկսի: 1920ի Ապրիլին կը սկսի Այնթապի հերոսամարտը: Գրիգոր Այնթապի ինքնապաշտպանութեան օրերուն իբր սուրհանդակ կը ծառայէ:

Այնթապի պարպումէն ետք, Գրիգոր կու գայ Պէրսոյ: Աշխատանքի համար կ'երթայ Շայֆա, Եաֆա եւ Երուսաղէմ, ապա կը վերադառնայ Պէրսոյ, ուր կը հաստատուի վերջնականօրէն:

Գերասմ Ահարոնեան (խմբագիր) գործակցութեամբ՝ Նապարէթ Թոփալեանի, «1915-1965. Յուշամարեան Մեծ Եղեռնի», Գ. Կապարութիւն [Ա. Կապարութիւնը՝ 1965ին], հրատ. «Զարթօնք» օրթ.ի, Պէյրութ, 1987, մեծ չափի 1115 էջ:

1) Ասատուր Յ. Մակարեան, «Ամփոփ Համայնապատկեր Բիթանիոյ Հայութեան Մեծ Ողբերգութեան», էջ 307-315:

Իթթիհապը երկիրը նոր վտանգներու տակ կը տեսնէր: Կիլիկիոյ 1909ի ջարդերը գալիք թաքուն ծրագիրը կը մտնէին: Պաքանեան պատերազմին մէջ իր պարտութիւնը, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ կողմէ պատրաստուած՝ երոպական հակակշռի տակ հայաբնակ նահանգներու նոր վարչաձեւը ու արաբական աշխարհի խլրվումը Թուրքիան կը դնէին իր անկախութեան վերացումին ահատը հեռանկարին առջեւ՝ Դաշնակիցներուն յաղթանակով:



Թուրքիոյ մէջ պօրակոչ կը հռչակուի: Նիկոմեդիոյ շրջանի հայերը ընդառաջ կ'երթան յայտարարուած պօրակոչին: 9 Օգոստոս 1914ին Պարտիզակի մէջ եւս պօրակոչ կը յայտարարուի: 1500 հոգի կ'արձանագրուի: Ապրիլ 1915ին Պարտիզակի երեւելիները եւ ուսույիչները Միջագետք կ'աքսորուին: Նոյն տարուան Մայիսին թուրքերը հայերէն կը պահանջեն զէնքերը յանձնել 10 օրուան մէջ: Այս պաշտօնական յայտարարութիւնը ուղղուած էր գիտլախումբերու ամբողջ բնակչութեան: Պարտիզակի կղերականները, ուսույիչներն ու երեւելիները ոստիկանատուն կը կանչուին ճիշդ այն ժամանակ երբ 40 չէթէներ քաղաքը կը պաշարեն: Հայերը դպրոց փոխադրելով կը խոշտանակեն եւ կը ծեծեն: Դուրսը

սպանություններ կը կատարուին: Շուտով, ատլի քան 2000 ընդհանրապես կը հրամայուի երեք օրէն մեկնիլ Պարտիզակէն: Երբ գաղթականները Նիկոմեդիա կը հասնին, հրաման կը փրփուի վիտոր փրփած ընդհանրները բռնագաղթէ վերձ պահել: Ասոնք, որոնք կը հաշունեն 200 հայ ընդհանր, շրջակայ գիտերը կը փրփածուին եւ մինչեւ վիտորադարը այդ գիտերուն մէջ կը մնան: Գաղթականները ճամբայ կ'իյնան դէպի Գոնիա, Էրէլի, Բալահիէ, Գաթմա, Մեսքէնէ, Ռաս-ու-Այն, Տէր Զօր, Մուսուլ, Քերքուք եւ այլուր: Պարտիզակի եւ Նիկոմեդիոյ փրփահանութենէն առաջ, փրփագրուած էր Օվաճըք, Տէօնկէլ, Արսլանպէկ, Գընճըլար, Գուրպալէլենկ, Արաբապար, Զաքարգիտ, Մանուշակ եւ ուրիշ գիտերու հայութիւնը: Պարտիզակ շափ փոհեր կու փայ սպանդին: Տեղահանութեան ընթացքին երբ գաղթականներէն մաս մը փանափան քաղաքներ հասած էր, հայ կաթողիկէները եւ բողոքականները գաղթէն վերձ պահելու հրաման կու գայ կառավարութենէն: Ոմանք Գոնիա կը հասփարուին եւ մինչեւ վիտորադարը յեփագայ փրփագրութենէն վերձ կը մնան:

Զիտորադարէն եփք, վերապրողները Նիկոմեդիոյ գաւառին գիտերը կը վերադառնան: Առաջնորդ Մրեփանոս արք. Յովակիմեան կը վերադառնայ Նիկոմեդիա՝ սփոփելու համար իր հօրը: Անոր պարփասարած վիճակագրութեան մէջ կը յիշուի, թէ Նիկոմեդիոյ գաւառի 70 հափար հայութենէն ողջ մնացած էր 15 հափար հոգի միայն: Պարտիզակի 12 հափար հայութենէն վերադարձած էր 2000 հոգի միայն:

Տեղահանութեան ընթացքին, իրենց վէնքերով լեռ կը բարձրանայ պարտիզակցի 250 երիփասարդ՝ Զալըմ Կարապետի գլխատրութեամբ: Մնունդի պակասի եւ հեփապնդումի սասփկութեան պարճառներով, խումբին մեձ մասը կը սրուի: Նոյնպէս, Օվաճըգ գիտէն 60 կրիճներ լեռ կը բարձրանան Տօնիկին (Տօնիկեան) գլխատրութեամբ: Ասոնք մինչեւ վիտորադար կը կռուին: Քեմալական շարժման դէմ շեն կրնար գոյարել եւ փոհ կ'երթան Նիկոմեդիոյ անգլիական փօրքերու հրամանափարի քաջալերանքներուն եւ խոսփամնադրձութեան: Աքսոբէն վերադարձին եւ Պարտիզակի երկրորդ պարսումէն եփք, խումբ մը պարտիզակցի երիփասարդներ լեռ կը բարձրանան եւ կը կռուին:

Մակայն, ատլի ուշ խումբին անդամները կը ցրուին եւ արգասահման կ'ապաստանին:

Չենկիլեր գիւղէն 80 երիտասարդ լեռ կը բարձրանայ եւ կը կռուի: Այս խումբը Տիւման Տաղ կը մնայ: Ասոնք ալ մաս առ մաս կը ցրուին:

Պոլսոյ մէջ ձերբակալուած հայ մտաւորականներէն մաս մը Նիկոմեդիոյ բանօր կը բերեն, ապա քաղաքի հայ եկեղեցին կը տեղափոխեն, ուր պանոնք կը խոշտանգեն, կը ծեծեն, իսկ ոմանք ալ, ինչպէս Արփաշէս Յարութիւնեանը եւ անոր ծերունի հայրը, կը սպաննեն:

Նիկոմեդիոյ մէջ կախաղան կը բարձրացուին շրջանի քանի մը հայ մտաւորականներ՝ պարտիզակցի Կարապետ Փաթթուքեանը, բժիշկ Սարգիս Քիթնեքեանը, օվաճրոցի Վահան Ժամկոչեանը, պարտիզակցի Բանտորը (այդպէս կը կանչէին զինք)՝ Երուանդ Թովուպեանը եւ ուրիշներ:

2) Բենիամին Ժամկոչեան, «Խարբերդի Եղեռնը», էջ 377-392:

1914ի ամրան, երբ Բենիամին Ժամկոչեան արձակուրդով կը գտնուէր իր եղբօրը մօտ, Տիգրանակերտի Հայնի գիւղը, «սեֆերպերիք» կը յայտարարուի: Ասոր կը հետեւի պինտորագրութիւնը: Մեպրեմբերին կը բաժնուի եղբօրմէն եւ կ'երթայ Մեպիթ (Խարբերդի նահանգ)՝ գերմանական միսիոնարութեան վարժարանին մէջ ուսումը շարունակելու համար: Երիտասարդները պինտոր կ'երթան: Պեպրութիւնը հայը ոչ հաւատարիմ տարր կը նկատուի: Հայ երիտասարդ պինտորներուն վէպերը կ'առնուին, եւ անոնք տաժանակիր աշխատանքով կը բանին աշխատատեղերու գումարակին (ամելէ թապուրի) մէջ: Փոքրաթիւ խումբ մը երկրագործական աշխատանք կը տանի: Հեղինակին ընկերները կը ստիպուին պինտորագրուիլ եւ այս բանակին մէջ վերտնուիլ Փասթոր Էհմանին դիմումով: Բենիամին կը մերժէ պինտորագրուիլ: Պեպրութիւնը կը ձեռնարկէ փնտրական ճնշումի քաղաքականութեան: Թեքելիֆի Հարպիյէ (պարտեպոմական ծախսեր) անուան տակ ամէն ապրանք կը բռնագրաւուի: Բոլոր հայերն անխտիր պարտաւոր էին իրենց ողջ ունեցածը յանձնել կառավար-

րութեան: Այս ապրանքները փոխադրելու պատրուակով ձի, ջորի, էջ, գոմէջ, եպ, կով եւ վերջապէս երիտասարդներ ու նոյնիսկ կիներ կը փարուին եւ իբր գրաստ կը գործածուին:

Թուրքիա պատերազմի մէջ կը մտնէր Գերմանիոյ կողքին: Կովկասեան ճակատին վրայ սկիզբը քիչ մը յառաջանալէ ետք, օսմանեան բանակը կը սփռուի նահանջել: Թուրք, քիւրտ եւ կարգ մը հայ զինուորներ բանակէն փախչիլ կը սկսին: Թուրք ոստիկաններ դասալիքները ձերբակալելու պատրուակով հապար ու մէկ անգթութիւններ, բռնաբարումներ եւ աներեւակայելի խենթ-շտիւններ կը կատարէին: Զէնքերը հաւաքելու պատրուակով հայերը կը ծեծեն, կը խոշտանգեն եւ նոյնիսկ կը սպաննեն: Առաջնորդ Պսակ վրդ. չղիմանալով ժողովուրդին չարչարանքներուն, քանի մը հեղինակատր անձերու հետ կը դիմէ կուսակալին, որ կը խոստանայ բռնութեանց վերջ տալ, եթէ ժողովուրդը ինքնաբերաբար յանձնէ վէնքերը: Հաւատարմով անոր խօսքին՝ հայ երեւելիները հրապարակ կ'ելլեն ժողովուրդը համոզելու: Փասթոր Էհման կը գործակցի անոնց:

Քափիթիլասիոնները, այսինքն երոպայիներու եւ ամերիկացիներու վայելած առանձնաշնորհումները կը ջնջուին եւ երեւութական վերահսկողութիւնը կը վերցնուի: Քողի տակէ կատարուած ծեծ, խոշտանգում իրենց այլազան տեսակներով եւ սաստիկութեամբ կը սկսին հրապարակաւ կատարուիլ: Ժողովուրդը անգլուխ եւ անպաշտպան ձգելու համար, երեւելիները կը ձերբակալուին 1 Մայիս 1915ին, կը բանտարկուին եւ աներեւակայելի չարչարանքներու կ'ենթարկուին: Հրամանը Պոլսէն եկած է: Այս օրերուն, բանտէն կ'արձակուին ամէն տեսակ ոճրագործ թուրքեր եւ քիւրտեր: Բոլոր ձերբակալուած հայերը Մեպիթի «Կարմիր Խոնախ» կոչուող բանտը կը հաւաքեն: Այս բոլորը՝ տեսնելով Փասթոր Էհման հեռագիրներ կը դրկէ Պոլիս՝ Գերմանիոյ դեսպան՝ Հանս ֆոն Վանկենհայմին եւ կը բացատրէ կատարուած անարդարութիւնները՝ խնդրելով միջնորդել թրքական վերին իշխանութեան մօտ:

25 Յունիս 1915ին դէպի Եդեսիա բռնագաղթի հրաման կու գայ: Փասթոր Էհման բազմիցս կը հեռագրէ դեսպան Վանկենհայմին, սակայն անօգուտ:

Կարմիր Խոնախի հայ բանփարկեալները կը տարուին Ծովքի եկերքը գրնոտող Շապկահան գիողը եւ մօտակայ ձորակի մը մէջ խժոժօրէն կը սպաննուին: Յուլիս 1ին ճամբայ կ'ելլէ առաջին կարաւանը: Գլխաւոր սպանդանոցներն են Եփրատի եկերքը գրնոտող Բփօղլի եւ Ծովքի եկերքը գրնոտող Շապկահան ու Քեչեն Խան գիողերը: Կարգ մը տեղեր, ինչպէս Մօրենիկ եւ Ծովքի Մր. Նշան կղզիին վրայ, ըմբօսութեան փորձեր կ'ըլլան:

Բենիամին Ժամկոչեան 7 Մայիսին խումբով կը փախչի դէպի Մասուն: Խմբապետն է ուսուցիչ Յովհաննէս Բզնունին (վանեցի): Մակայն, հապի ճամբայ ելած, խումբէն երկու ընկերներ դիակներու հոտերէն կը հիւանդանան եւ խումբը կը վերադառնայ: Այս միջոցին, Բենիամին կը լսէ, թէ ջարդուելու տարուած իր ընկերներէն մէկը փախչելով հասած է որքանոց, մօրէ մերկ վիճակով: Փասթոր Էհման կը յաջողի գերմանական որքանոցներու 1000-1500 տղաքն ու աղջիկները, ուսուցիչները եւ պաշտօնեաները արսորէ ապարել: Ամերիկեան հաստատութիւնները եւս կը յաջողին ապարել իրենց մօտ ապաստանած հայերը:

Չհաստատուած լուրի մը համաձայն՝ Տերսիմի քիւրտ աղաները պատրաստակամութիւն յայտնած են հայեր ապարելու, իրաքանչիւր մարդու համար 50 ոսկիի կամ «Մաուլէր» հրացանի մը փոխարէն: Այսպէս կը փախչի եւ կ'ապարի փրօֆ. Լիլլճեանը: Այս ճամբով կ'ապարի նաեւ Բենիամին Ժամկոչեանը 14 որբերու խումբի մը հետ:

3) Վահէ Ղայկ, «Ուղեւորութիւն Մահուան Ղեպ Մեծ Եղեռնի Խաւար Օրերուն», Ֆրեպո, էջ 553-582:

Օրերը կը սկսին վարթարանալ: Վահրամ երկար մտածումներէ ետք կ'որոշէ ամէն բան թողուլ եւ հեռանալ: Ղամաշխարհային պարերապմ կայ: Մահը կը մօտենայ եւ կը տարածուի հայկական բնագաւառները: Այս փոթորկալից վիճակը լաւագոյն առիթն ընծայած էր թուրքին, որպէսզի սուլթաններու հայակեր ընթացքին հետեւելով, փորձէր բնաջինջ ընել հայ տարրը աշխարհի երեսէն:

Երկու արիւնակից ընկերներ կը միանան Վահրամին եւ գաղտնի պատրաստութիւններ կը տեսնեն: Անոնցմէ մին՝ Տիրան, Խար-

բերդի ծանօթ ուսուցչապետին կրկնաբար գոյն պատկն է: Իր հայրը շաբաթներ է ի վեր Խարբերդի մրատրականներուն, եկեղեցականներուն եւ առեւտրականներուն հետ բանտարկուած էր:

Վահրամ եւ Տիրան կ'այցելեն բանտ՝ ուսուցչապետին ճաշ տանելու եւ փախուստի մասին անոր կարծիքը առնելու համար: Ուսուցչապետը համաձայն չէ փախուստին: Տիրան կ'որոշէ փանը մէջ թաքստոյ մը շինել եւ մնալ:

Բանտէն վերադարձին, կ'անցնին Խարբերդի շուկայէն եւ ակաւնապետ կ'ըլլան բանակէն փախուստ տուած հայ զինուորներու մահապարտներին: Դատապարտեալներէն մէկը իր վերջին խօսքին մէջ կ'ըսէ, թէ իրենք արտօնագրով արձակուողի եկած էին տուն, սակայն թուրք ոստիկանները մտած էին իրենց տուները, արտօնագիրը պատռելով զիրենք ձերբակալած եւ քանի մը շաբաթ բանտին մէջ չարչարանքներու ենթարկելէ վերջ բերած էին հրապարակ: Այս դէպքը Յունուարի թայ ու ցուրտ օրերէն մէկը կը պատահի:

1914ի սորահաւաքով՝ հայ տղամարդիկը բանակ տարուած էին: Մրատրականներն ալ անխտիր առնուած էին անոնց երեւէն: Ժողովուրդը մնացած էր անգլուխ եւ անպաշտպան: Կը սկսի կոտորածը: Ջանապան ճնշումներով քրիստոնէաներու, մասնատրապէս հայոց հարստութիւնը քաշել կը յաջողին: «Ջինտորութեան փոխարէն տուրքի» (պէտէլը էսքէրի) օրէնքով հայ մը կամ քրիստոնէայ մը զինտորութենէ վերջ կը մնար 44 ոսկի վճարելով: Թուրքերը ձեռք կ'առնեն քրիստոնէայ եւ հայ վաճառատուները ու կը վերցնեն անոնց մէջ եղած-չեղածը: Գիւղերու մէջ կը գրատուին բոլոր անասունները: Կը յայտարարեն, թէ հայոց տուներուն մէջ գտնուող բոլոր վէնքերը պէտք է յանձնուին: Շայերը իրար կ'անցնին, քանզի կառավարութեան յանձնելիք վէնք չունէին: Շայերը կը ձերբակալեն եւ բանտերը կը լցնեն: Ողբեր ու լացեր կը բարձրանան ամէնուրեք: Վահրամ սրտի կսկիծով կը տեսնէ ասոնք, անտանելի եւ սպառնական կը գտնէ կացութիւնը: Նորագիր հայ զինուորներու ձեռքէն կ'առնուին վէնքերը եւ վանոնք կը խառնեն գործատրական բանակին (ամելէ թապուրի): Վահրամի ուսուցիչը բանակէն կը փախչի եւ իր ընտանիքին մօտ կու գայ: Վահրամ կը տեսակցի անոր հետ եւ կ'իմա-

նայ, թե՛ բանակ երթալը ստոյգ մահ է: Նոր ձերբակալութիւններ եւ բանտարկութիւններ տեղի կ'ունենան:

Վահրամին երկու եղբայրները երկու-երեք տարի առաջ Ամերիկա գացեր էին: Վահրամին փախուստը կը դառնայ հրամայաւոր:

Վահրամ նախ կը դիմէ պինտորագրութեան, բայց տարիքը լրացած չըլլալով՝ կը մերժուի: Ապա իր մօրեղբօր ջանքերուն շնորհիւ կը յաջողի ընկերոջ՝ Յակոբի եւ երկու թուրք պատանիներու հետ Պոլսոյ կամ Երզնկայի մէջ բարձրագոյն ուսում ստանալու արտօնութիւն վերցնել: Այս միջոցին, շատ քիչեր փախուստ կու տան Տերսիմի ճամբով:

Վահրամ Յակոբին եւ երկու թուրք պատանիներուն հետ ճամբայ կ'ելլէ: Վահրամ եւ Յակոբ շատ պէտք ունէին երկու թուրք ուսանող տղոց բարեկամութեան: Առաջին կայանը կ'ըլլայ Խանգեղ գիւղին մէջ ախոռ մը: Առաւօտուն ճամբայ կ'ելլեն եւ կը հասնին Իվոլի: Նաւակով կ'անցնին Եփրատը եւ Մելիպինէ կ'ուղղուին: Հայ տղաքը հոս գնումներ կ'ընեն յաջորդ օրուան սնունդն ապահովելու համար: Վահրամ ու Յակոբ կը հանդիպին հայ ծերունի պատուելիի մը, որ պիտենք իր տունը կը հրաւիրէ: Վերադարձին խանին մէջ կը գտնեն իրենց ընկերակցող երկու թուրք պատանիները, որոնք լսած ըլլալով, թէ բանակը պիտի գրաւէ կառքերը, կը թելադրեն գիշերով ճամբայ ելլել: Կէս քուն, կէս արթուն, անոնք ճամբայ կ'ելլեն: Երկու շաբաթէ աւելի այս ճամբորդութեան ընթացքին ինչ գիտ եւ կայան որ կը հանդիպին, կը նկատեն, թէ հայոց վիճակը հետպիտէ անկարելի եւ անտանելի կը դառնար:

Սեբաստիայէն դէպի Կեսարիա ճամբուն վրայ կայ շատ վրանգատը կիրճ մը, որուն նկատմամբ հայ կառապանը իր մտաւորութիւնը կը յայտնէ: Կառապանին սիրտը դողի մէջ է, մինչ ուսանողները միամտութեամբ եւ հետաքրքրութեամբ կը սպասեն, որ այդ վայրէն անցած ըլլալին յայտնէր կառապանը: Վերջապէս կը հասնին գիտ մը՝ գիշերուան դէմ: Հայաբնակ գիտ մըն է: Կը գիշերեն հոն եւ կը հիւրասիրուին ծեր հայ կնոջ մը կողմէ, որու ամուսինը եւ երիտասարդ պաւակները տարած էին:

Վրանգատը ճամբորդութենէ մը ետք Կեսարիա կը հասնին:

Խանի մը մէջ առանձին սենեակ մը կը վարձեն՝ անշուշտ հայ փողոց դրամով: Թուրք երկու ուսանողները ես կ'ուրէին ու կը խմէին հայ փողոց քսակէն:

Կեսարիոյ մէջ Վահրամ եւ Յակոբ կ'երթան եկեղեցի եւ կը խօսին քահանային հետ: Անոնք կը պատմեն իրենց ուղեւորութեան նպատակը եւ մանրամասնութիւնները: Շուրջինները կը պարմանան: Տէր Հայրը կը թելադրէ բնաւ Արանա չմտնել, այլ Էրէլիէն շոգեկառքով Պոլիս երթալ, որովհետեւ Արանայի մէջ կրնան երկար քննութիւններու ենթարկուիլ: Ճամբայ կ'ելլեն դէպի Էրէլի, սակայն պահ մը կը կենան ոստիկանապաշտէն քիչ մը անդին եւ վրանգատը հարցաքննութեան մը կ'ենթարկուին, որմէ անվնաս դուրս կու գան: Շարունակելով ճանապարհը՝ կը հասնին Էրէլի: Հոս կը համաձայնին, առանց Արանա մտնելու, շոգեկառքի փոմսակներ ճարել եւ ուղղակի Պոլիս երթալ: Յակոբ եւ Վահրամ կը պատուին իրենց ընկերներէն եւ Էրէլիի մէջ հայու մը փան մէջ կը հիւրասիրուին: Կը լսեն Էրէլի գիտին մէջ հայոց խոշորագումներն ու հալածանքները: Երբ կ'երթան կայարան, հոն կը գտնեն իրենց թուրք ընկերները: Անմիջապէս կը տեսնեն կայարանի պաշտօնեան, որ ցաւ կը յայտնէ, թէ իրենք չեն կրնար Պոլիս երթալ: Իմանալով որ ան հայ մըն է, հայ փղաքը առանձնաբար կը խօսին անոր հետ եւ կաշառք կ'առաջարկեն: Պաշտօնեան կը մերժէ, սակայն մտածումներու մէջ կ'իյնայ օգնելու համար հայ փղոց: Երկար խորհրդակցութիւններէ ետք, կ'որոշուի երկու օր ետք բեռնափար շոգեկառքով դրկել փրենք: Էրէլիի մէջ երկու օր սպասելէ ետք, երեկոյեան կու գան կայարան եւ կը տեղափոխին շոգեկառքին մէջ:

Կը հասնին Հայփար Փաշայի կայարանը: Ծերունի հայ մարդու մը օգնութեամբ կը հասնին Երվրդի պալատը, ուր կը գտնուի իրենց ընտրած փնտրական դպրոցը: Ոչ ոք կրնար գուշակել թէ ի՞նչ պարհուրանքներ կային հոս հայ փղոց համար վերապահուած...:

4) Ներսէս Պալեան, «... Գէպի Եփրատ - Յուշագրական էջեր», էջ 583-591:

Յունիս 1916ին Ներսէս Պալեան կը գտնուի Այրան-Ինթիլի

փապուղիի մուրփին մօտ, երբ Արանայէն եկած թուրք ոստիկաններ հոն կը հասնին: Արդէն երկու ամիս առաջ, մարդահամար կատարելով, Արանա-Շալէյ երկաթուղիի գիծին վրայ աշխատող բոլոր հայոց անուններն արձանագրած էին: Հիմա երեսն հանուած էր այս մարդահամարի գաղտնիքը: Բռնագաղթէն վերօ մնալու համար՝ Ներսէս իր գերման մեծատրին միջնորդութիւնը կը խնդրէ, սակայն անօգուտ: Կարաւանը ճամբայ կ'ելլէ: Կան ամէն փարիքի ու սեռի հայ մարդիկ: Մեկնումէն երկու օր առաջ, բոլոր աշխատատեւրներուն վճարուած էր իրենց միամեայ աշխատավարձը եւ ամէնքը դրամ ունէին առաւել կամ նուազ չափով: Առաջին օրը, երեկոյեան կ'իջեւանին սարալանջի մը կողերուն վրայ: Հեռափետ մարդիկ դրամ կը հանգանակեն փալու համար ոստիկաններուն: Գոյացած գումարը դեղին ոսկիի վերածելով, կը յանձնեն ոստիկաններու մեծատրին: Սակայն վերջիններս կը գործեն վայրկեանի փառաբանութեան փակ, իրենց անասնային բնագործով: Օգտուելով գիշերուան մութէն ու խաւարէն, այս մարդակերպ գազանները լալիրջ խրախճանքներ կը սարքէին: Ճամբան շարունակելով՝ կարաւանը կ'անցնի Ֆրնւրճագ հայկական գիւղին մօտէն, որ խրոխտաբար կռուած էր թուրքերու դէմ: Ճամբուն երկու կողմերը կեցած էին այդ շրջանի թուրք եւ քիւրտ գիւղացիները, փութանալու եւ կամ արտրեալներու մէջէն ֆրնւրճագցիները անջարելու համար: Անոնք յանկարծ կը յարձակին կարաւանին վրայ, կը յաջողին անջարել ֆրնւրճագցիները, որոնք գիւղի ապստամբութենէն առաջ Ամանոս ապաստանած էին: Հապի դուրս ելած Ֆրնւրճագէն՝ կարաւանը կը կեցնեն, եւ Մարաշէն Պաղչէ գալու հարիւրապետ մը 1800 անձերէ բաղկացած կարաւանին մէջէն կը վարէ որոշ անձեր, որոնք հրացանավարկ կ'ըլլան: Կը գիշերեն բացառի մը մէջ:

Երրորդ օրը, Մարաշէն Պաղչէ վերադարձող 20 չէթներ կարաւանին առաջին շարքերու արտրեալներուն վրայ կրակ կը բանան: Ատոնց կը միանան ոստիկանները: Մարսափելի կոտորած փեղի կ'ունենայ: Միակ միսիթարականն այն էր, որ դրամ ունեցողները, դրամը աւազակին ձեռքը դնողները, վերօ կը մնային դաշունահար կամ գնդակահար ըլլալու վտանգէն: Հակառակ անոր, որ Ներսէս Պալեան միշտ կը խուսափէր ոստիկանի մը

մօտ ըլլալէ, իր դէմը կ'ելլէ ոստիկան մը այս միջոցին: Ան մերկ դաշոյնը սցած՝ դրամները կը պահանջէ իրմէ: Ներսէս իր մէկ քսակը անոր ձեռքին մէջ դնելէ ետք, ամբոխին մէջ կ'անյայտանայ: Այս կոտորածին՝ շարեր կը մեռնին եւ կը վիրատրուին, որոնք, բոլորն ալ, տեղւոյն վրայ կը թողուին եւ գիշարիչներու կեր կը դառնան:

Երբ կը հասնին Մարաշի մօտ՝ տեղացի հայ գաղթականներ կը միանան իրենց: Շարունակելով ճամբան՝ երեք օրէն Այնթապ կը հասնին: Այս ճանապարհորդութեան ընթացքին օդը սոսկալի տաք է, իսկ ջուրի տաքանալը օրուան խնդիրն է: Հանդիպած էին ջրհորի մը, բայց ոստիկանները արգիլած էին ջուր խմել: Այնթապի մօտ քարայրի մը մէջ կ'ապաստանին: Հանգիստ ժամեր կ'անցընեն՝ պահ մը մոռնալով իրենց տանջահար վիճակը, անօթութիւնը եւ թշուառութիւնը: Գիտացիներէն թան, պրոտը եւ այլ մանր-մունր բաներ կը գնեն: Գիշերը հանգիստ կը քնանան: Այնթապէն կոկիկ, տօնական հագուստներ հագած երկու աղջիկներ կը մտնեն քարայր: Անոնք մտադրած են քանի մը աղջիկներ իրենց պէս հագուեցնելով փախսնել, եւ կը յաջողին իրենց մտադրութիւնն իրականացնել:

Յաջորդ առաւօտ ճամբայ ելլելով Այնթապի եւ Պիրէճիքի միջեւ գտնուող Նիսիպ աւանը կը հասնին: Այստեղ շհասած, երբ տեղ մը կանգ կ'առնեն հանգստանալու, գիտացի մը պրոտներ կը բերէ ծախելու: Գաղթականները կը հաւաքուին պամբիւղներուն շուրջ: Ներսէս ալ գնելու մտադրութեամբ երբ հոն կեցած էր, ոստիկան մը վայն իբր քուրբայէ վարակուած, հայհոյելով վրան կը յարձակի եւ կ'ուզէ սպաննել: Ներսէս ճարտարութեամբ կը պայքարի ոստիկանին դէմ: Ուրիշ ոստիկան մը միջամտելով խնդիրը կը փակուի եւ Ներսէս կ'ապարի այս վրանգէն:

Աւելի հանդարտ եւ կանոնատր կերպով քալեցնելով վիրենք, կը հասնին Եփրատի ափը՝ Պիրէճիք գիտաքաղաքին մօտ: Այստեղէն, Ներսէս իր մէկ հայրենակիցին՝ իսլամացած ոսկերիչ Յակոբճանի միջոցաւ եւ Պիրէճիքի ոստիկան սօրայ հրամանատարը կաշառելով, Գըպըշ Օղլու գիտը կը հաստատուի:

5) Նշան Տոպոյենց (Տոքթ. Ն. Մարտիրոսեան), «Խում-

**նավիլի Եւ Կասմանի Վերոսներուն Ոգորումները Եւ Եղե-
րական Մահը Առաջին Աշխարհամարտին», Փրակա, էջ
592-600:**

Վերոսներ Վայկ եւ Արմենակ Սրապեան Նշան Տոբոյենսկին մանկութեան ընկերները եղած են: Անոնք Սյրեփան եւ Աղանի փոյգին Կասակներն են: 1915ին երբ ջարդերը եւ փեղահանութիւնը կը սկսին, անոնք կ'ապրէին իրենց ծննդավայրին՝ Տափիրէկի կամ Տիվրիկի շրջանի գիւղերէն Խոտնավիլի մէջ:

Յունիս 1915ին փեղահանութեան կարգը Խոտնավիլի կը հասնի: Հաւանական ըմբոստութեան մը առաջին առնելու համար, սկիպրը քսան փարեկանէն վեր եղող այրերը, այդ թիւին՝ Չաթալենց Վայկը (Վայկ Սրապեան) զինուոր կը փանին: Վայկն ու անոր ընկերները Օտոտ գիւղին արտերը հնձելու կը փանին: Վայոց հետ արտերը գացող թուրք զինուոր մը Վայկին գաղտնորէն կ'իմացնէ, որ հունձքը լմննալէ յետոյ հայ զինուորները պիտի սպաննուին: Վայկ կը փախչի եւ կ'երթայ քրտական Չիթմէն գիւղը ու խոտնավիլիներուն քիւրտ բարեկամ (քիւրվա) Ղարամանին փունը ապաստան կը գտնէ: Ղարամանին փոյն՝ Մեհմէփը Խոտնավիլի մէջ հայկական դպրոց կը յաճախէր եւ հայերէն կը խօսէր: Վայասէր Մեհմէփը Առաջին Համաշխարհային Պատերազմի չորս փարիներուն ընթացքին կ'օգնէ հայոց եւ մանաւանդ խոտնավիլիներուն՝ գաղթականներուն եւ փախստականներուն միջեւ իբր սուրհանդակ:

Չաթալենց Սյրեփանին բազմանդամ ընտանիքն ալ բոլորին նման փեղահան կ'ըլլայ: Երբ Բինկեան կը հասնին, Սյրեփանը եւ Կասակը՝ Արմենակ բոլոր այրերուն հետ կը Կասակն Կարաանէն, եկեղեցիի մը մէջ կը լեցնեն եւ կը սկսին սպաննել: Սյրեփան կը սպաննուի Արմենակի աչքերուն առջեւ, որ լայ ու կոծով կ'ողբայ հոր կորուստը: Ոստիկան մը Արմենակին աղաղակը փակելով՝ կը մեղքնայ անոր եւ ապա կը ձգէ Կայն: Արմենակ կը միանայ իր սիրելիներուն: Քանի մը օր ետք անոնք կը հասնին Էսկի Արաբկիրի մօտերը գտնուող Խումլուխ: Չելեմճի անունով թուրք մը, Չաթալենց եւ Արպենց Բիւպանդին ընտանիքը կարաւանէն Կասակը Էսկի Արաբկիր կը փանի աշխարհունելու համար: Արպենց Բիւպանդը, հունձքը վերջանալէն յետոյ, Չելեմ-

Ճիհն կ'ըսէ, թէ իր եղբայրը գանձ մը պահած էր Խոռոնավիլի մէջ: Ուստի, Բիւզանդը, Արմենակը եւ Չելեմճին կ'ողողոյն հոն՝ գանձը գտնելու համար, բայց ի վտուր կը փնտռեն: Վախնալով, որ Չելեմճին կը սրտնեղի ու կը սպաննէ զիրենք, Արվենց Բիւզանդն ու Արմենակը կը փախչին եւ կը հասնին Չիթմէն, ուր կը գտնեն Չաթալենց Վայկը՝ Արմենակին եղբայրը: Բիւզանդ իր բարեկամ քիւրտի մը քով կ'երթայ, սակայն ետքը չարաբաստիկ դիպուածով մը կը սպաննուի:

Վայկը եւ Արմենակը ձմեռը Չիթմէն՝ Ղարամանին փունը կ'անցընեն: 1916ի գարնան գիշեր մը իրենց հայրենի գիւղը՝ Խոռոնավիլ կ'երթան եւ ծառին տակ պահած ապրճանակը կը վերցնեն: Վերադարձի ճամբուն վրայ կը հանդիպին ոստիկանի մը, որ կը սպառնայ իրենց: Կը սպաննեն թուրք ոստիկանը եւ վէնքերը կը գրաւեն: Սպա կը հանդիպին ճակատի զինուորներուն պարէն տանող կարաւանին եւ կը գրաւեն պարէնը՝ իրենց թաքստոցը տանելու համար: Երկար ճամբայ կտրելով կը հասնին Ղարամանին փունը: Թէեւ Ղարաման հիւրասէր, հայասէր եւ բարի քիւրտ մըն էր, սակայն բեռ չըլլալու համար անոր, երկու եղբայրները կ'երթան Չիթմէնէն հեռու սարի մը կողերուն վրայ, թուփերուն մէջ թաքստոց մը կը շինեն: Հոս կը մթերեն պարէնը եւ անկէ բաժին կը հանեն Ղարամանին:

Վայկին եւ Արմենակին քոյրը՝ Ռեհան կու գայ Չիթմէն՝ Ղարամանին փունը, սակայն առանց եղբայրները տեսնելու կ'երթայ Տիվրիկ: Կասման գիւղի եկեղեցիին մէջ թաքնուած երիտասարդ մը կը միանայ Վայկին ու Արմենակին: Երեք ընկերներ, զինուած ու ծպտուած իբրեւ քիւրտ չէթէ, թուրքերու եւ ղըպըլպաշներու գիտերէն կ'ապահովեն իրենց պարէնը: Անոնք բազմաթիւ թաքստոցներ կը շինեն հայրենի լեռներուն վրայ, մացառներուն մէջ: Ամենէն մեծ թաքստոցը կը շինեն Խոռոնավիլի դիմացը գտնուող Ազ Տաղ կոչուող սարին կողին վրայ, Ուլուն Փունար կոչուող աղբիւրին մօտերը: Հոս կ'ամբարեն պարէնը եւ վէնքերը:

Մեհմէտէն իմանալով, որ Խոռոնավիլի մէջ բնակող թուրք ու քիւրտ գաղթականները կ'աւերեն փուները, երկու եղբայրները եւ Գէորգը Խոռոնավիլ երթալով կը սպաննեն գիւղապետ Ալիպը եւ

մուխթար Սլօն: Մնացածները, անապահով պզալով, ուրիշ տեղ կը փոխադրուին:

Օր մը այս տղաքը կալերուն մէջ աշխատող թուրք կանանց մէջ իրենց քոյրը՝ Ռեհանը կը նշմարեն: Իրենց պարէնէն բաժին կու տան Ռեհանին եւ միւս քոյրը՝ Հայկանոյշին: Անոնք իրարու կը հանդիպին Յամքրձորի մէջ: Հանդիպման ժամանակ թուրք փախստական պիտուր մը կ'անցնէր այդտեղէն: Տղաքը կ'ապրակեն պայն եւ վէնքերը կը գրանեն:

Թուրք կառավարութիւնը Ջառայէն բազմիցս զօրք կը հանէ ձերբակալելու եւ պարժելու համար այս յանդուգն հայորդիները, որոնք բանակին պարէն տանող կարաւանները կը կողոպտեն: Իրենց քոյրերն ալ իրենց միացած եւ մարտուած կռիւներու կը մասնակցին:

Ուրիշ անգամ մը թուրքերը կը պաշարեն Ազ Տաղը, բայց այս հերոս տղոց բռն ղիմադրութեան եւ յարձակման չղիմանալով՝ կը նահանջեն իրենց երեւ բազմաթիւ մեռեալներ եւ պինամթերք ձգելով:

Հայ քաջորդիները որեւէ տեղ երկար ապրեն չեն մնար, այլ՝ միշտ թաքստոց կը փոխեն: Անոնք եւ Ռեհանը չորս տարի կռուելով ոչ միայն իրենց գոյութիւնը կը պահեն, այլեւ կ'օգնեն Տիվրիկ ապաստանող իրենց հարապարներուն. չիթմենցի Մեմէտի միջոցաւ Հայկանոյշը յաճախ կ'այցելէր թաքստոցը եւ իր ընտանիքը այդտեղէն կը պարենատրէր:

Այս հերոսները ոչ միայն իրենց ընտանիքին, այլ նաեւ խտունավիւյիներուն եւ կասմնցիներուն համար մեծ քանակութեամբ սննդամթերք եւ վէնք հաւաքելով, կը պահեն նախճիրէն ճողոպրած խլեակները, վանոնք կը կերակրեն եւ կը պինեն:

Չորս հերոսները՝ Հայկը, Արմենակը, Գրիգորը եւ Ռեհանը իրենց քիւրտ բարեկամ Ղալիշի մարդոց կողմէ ցաւալիօրէն եւ սխալմամբ կը սպաննուին 1918ի գարնան:

6) Ենովք Արմէն, «Մեծ Եղեռնի Օրերուն», Մարտէլ, էջ 601-615:

1915-1916 դպրոցական տարեշրջանի համար, Ենովք Արմէն(եան) փնօրէն-ուսույիչի պաշտօնով կը գտնուի Արաբապար:

Փետրուար 1915ին քաղաքէն հաւաքելով մտաւորականները եւ երեւելիները՝ կ'աքսորեն դէպի Մուլթանիէ: «Փօլիս Մեճմուսար» պարբերաթերթը սուր լուրերով կը գրգռէ թուրք հասարակութիւնը: Տեղասպանութեան գեհենային ծրագիրին խմորումն է, որ կ'եռայ ու կ'ոռճանայ: Ենովք Արմէն ականապետ կ'ըլլայ քաղաքին մէջ առաջին ոճրային դէպքին. Պօլուէն հայ քահանայի որդի՝ երիտասարդ մը, մերժելով հայասպան թուրքերուն ծառայել իբր հեռաձայնի գրասենեակի պաշտօնեայ եւ վինտորագրուած սպայ, փախուստ կու գայ եւ հօրը տունը կը պահուրդփի: Հայրը եւ որդին կը ձերբակալեն ու կը կախեն:

Պոլսոյ կեդրոնական բանդի րնօրէն, նախկին հրոսակ քիւրք Գարա Բպրահիմ Պարփիպակի մէջ աներներ գործելէ ետք կու գայ Արաբապար: Յաջորդ օրը, քաղաքը կը պաշարուի եւ 200-300 հայեր կը ձերբակալուին ու հայոց Մը. Կարապետ եկեղեցին կը թխմուին: Առաօտուն Ենովք Արմէնն ալ կը ձերբակալուի ու կը տարուի թուրք ոստիկան-վինտորներով պաշարուած Մը. Կարապետ եկեղեցին: Երկարատեւ ու ջլատիչ սպասումէ ետք, Գարա Բպրահիմ կը ժամանէ եւ, տաճարին մէջտեղը կանգնած, հայ ձերբակալուածներուն կը հրամայէ բոլոր վէնքերը բերել եւ յանձնել, սպառնալով, որ հակառակ պարագային, կրտսակ-կրտսակ շարիքներ պիտի տեղայնէ անոնց գլխուն:

Ձերբակալուածներէն «Մխթար» Չալքեան խօսք առնելով կ'ըսէ, թէ վէնքեր բաժնած կուսակցութիւնները հիմա լուծուած են: Մպառնալիքներ կը տեղան ձերբակալուածներուն վրայ: Անոնք խորհրդակցութեան կը սկսին ուրքի վրայ: Այս միջոցին Չալքեան դուրս կը կանչուի: Արեն մը ետք կը վերադառնայ տաճար՝ խոշտանգուած եւ ծեծուած: Անմիջապէս ետք, թուրքերը կը խոշտանգեն եւ կը ծեծեն հայերը եկեղեցիին մէջ: Ծեծուողներուն ներքաններէն արիւնը կը ժայթքի: Այս խառնիճաղանձին մէջ Գարա Բպրահիմ կը մօտենայ Ենովք Արմէնին եւ ինքնութիւնը կը հարցնէ: Ան կը պատասխանէ, թէ Պոլսէն է եւ վէնք չունի: Ասոր վրայ, ոստիկանապետը կ'արտօնէ, որ Ենովք Արմէնը ապագորէն դուրս ելլէ սրահէն: Գեհենին վարհուրանքէն ապա արձակումը անհաւատալի կը թուի հեղինակին՝ նոյնիսկ եկեղեցիին պարիսպէն դուրս ելած արեն: Ան ամայի փողոցներէն սուկումով կ'անց-

նի: Տուներուն մէջ հայ ազգաբնակչութիւնը մեռելային անշարժուեան կը դարձապարտուի: Տասնեւչորս օր շարունակ ծեծը եւ խոշտանգումները կը շարունակուին եկեղեցիին մէջ: Տանջանքներու վարիւորելի տեսակներ, մինչեւ իսկ եղունգ քաշել, ի գործ կը դրուին: Զէնք յանձնողները ազատ կ'արձակուին: 13 կառք վէնք կը հաւաքուի: Տանջողներուն մէջ խենթացողներ, աչքի պայթում ունեցողներ եւ օրերով մահամերձ դիակի պէս անօթի-ծարաւ րուայրողներ կ'ըլլան: Երկու շաբաթ քաղաքը պաշարուած կը մնայ: Վերջին օրը, եկեղեցիին փանջահար բազմութիւնը կ'արձակուի:

Երկու օր ետք կը սկսի վանգուածային աքսորը: Արաբապարի քսան հազար հաշտող հայութիւնը ուրքի կը հանուի: Տարագիր բազմութեան առաջին վանգուածը ապրանքապար վակոններու մէջ կը լեցուի:

Վեղինակը կը մնայ փակալին չփրկահանուած հայութեան խումբին մէջ: Քաղաքին հայ միւսաբը կու գայ եւ կ'իմացնէ իրեն, թէ ոստիկանատունէն զինք կ'ուզեն: Փոխ-ոստիկանապետ Եուսուֆ Զիա իր ինքնութիւնը ստուգելէ ետք, կը հրամայէ առանձին քաղաքէն դուրս ելլել: Ենովք Արմէն իր օսմանցիութեան հանգամանքն օգտագործելով րարամբանօրէն կը խնդրէ որոշ ալեւն մը քաղաքը մնալ՝ պէտք եղած դիմումները կապարելու համար: Երեք օր պայմանաժամ կը ստանայ:

Կը ներկայանայ կուսակալ Ալի Ֆայիքին՝ երոպական րիպարով գերազնիւ անձ մը, որ յարգանքով կ'ընդունի զինք: Սիրալիր ընդունելութեան աւարտին, կուսակալը հեղինակին կը յուսադրէ քաղաքին մէջ մնալը արտօնել: Ժամանակաւոր կեցութեան պայմանաժամը կ'երկարաձգուի քննութիւն բացուելու համար թէ՛ Կուրինայի եւ թէ՛ Արաբապարի մէջ: Կուսակալը քաջաբար կը մերժէ հնազանդիլ հայերը փրկահան ընելու իրեն եկած հեռագրին:

Յիշատակելի է հոս, թէ Պուլտայ եւ Զմիւռնիոյ հետ Կուրինան չփրկահանուող երրորդ քաղաքը եղած է մինչեւ քեմալական արշաւանքը, երբ հայութիւնը խուճապահար փախած է սպառնացող կոտորածին առջեւէն:

Զինադադարին (1918) Ալի Ֆայիք շնորհագորկ կ'ըլլայ հայերը

պաշտպանած ըլլալուն համար: Ան աղքատութեան մէջ կը մահանայ:

Բացուած քննութեան իբր արդիւնք չեն արտօներ, որ Ենովք Արմէն քաղաքը մնայ: Ան Թավշանլը գիւղը կը հեռանայ: Շուքուրէն վարմանքով կը լսէ իր «վրանգատը եւ կասկածելի» ըլլալու մասին: Կ'այցելէ հայկական եկեղեցին: Իրեն հետ վախուդողով վերաբերող քահանան կը մերժէ րեղ մը գիշերելու ցուցում տալ իրեն: Բարեբախտաբար, իր գրական անունին ծանօթ երկու քաջասիրտ հայեր, ամէն վրանգ արհամարհելով, կը հովանատրեն վայն՝ իրեն օթեան ճարելով:

Բերնէ բերան տարածայնութիւն կը շրջի, թէ գաղթականներն իրենց րեղերը վերադառնալու արտօնուած են: Ենովք Արմէն կ'արտօրայ դէպի Կուրինա, սակայն հոս յուսախաբ կ'ըլլայ: Կը հալածուի, այս անգամ աւելի դաժան կերպով, իբր արքայազնի փախուստ փոտող մէկը: Պահուրդելէ վաւ ուրիշ ճար չի մնար: Չորսհինգ սքանչելի հայեր պաշտպանելով պինք, կը կազմակերպեն իր թաքնուիլը: Թեֆիք պէ անսովոր համակրութիւն ցոյց կու տայ իրեն հանդէպ: Անոր հետ կը ներկայանայ ոստիկանապետ Ջեքերիէին, որ կը մերժէ երեք օր երկարաձգել իր՝ քաղաք մնալը: Յուսահատութիւն չճանչցող Ենովք Արմէն մէկ տարի փախստական ապրելէ ետք Կուրինայի մէջ, կրակի գիծեր ձեռքելով կ'անցնի Պոլիս:

7) Ս. Պալաթոն, հապուած մը «Վերջին Թոնդրակեցիները...» վէպէն, «Էջ մը Խնուսի Գաւառի Ողբերգութենէն», Պէյրութ, էջ 621-622:

Ս. Պալաթոն 1914ի ձմեռնամուտին, Խնուսի մէջ կը նշմարէ առաջնորդարանին եւ դպրոցին բակը լեցուած տարօրինակ եւ օտարորդի հագուստներ կրող պինտորներ: Աւելի ուշ կ'իմանայ, թէ անոնք արաբական երկիրներէն Ճեմալ փաշայի հրամանով եկած պինտորներ են: Այս պինտորները բոլորովին անվարժ էին դաժան ձմեռին, որ կը հնձէ վանոնք բոլորն ալ՝ թիով մօտ 10,000 հոգի: Այս ողբերգութեան կը յաջորդէ Խնուսի մօտերը գտնուող Սայլու եւ Կարմրական Չորի հայոց բռնագաղթը: Կիսամերկ, անօթի եւ ծարաւ ծերեր, կիներ եւ մանուկներ կը հասնին Խնուս: Կառա-

վարութիւնը համաճարակի մը առաջին առնելու նպատակով, քիչ մը կը յերաձգէ Խնուսի բռնագաղթը:

Յունիս 1915ի վերջերը կը սկսի վերջին թոնդրակեցիներու տեղահանութիւնը: Գաւառի առաջնորդ Արգար Վարդապետի եւ Խնուսի ծխապէր քահանայ Տէր Աշոտի գլխատրութեամբ հայութիւնը հետիոտն կը հասնի Մուշ տանող ճամբուն վրայ Վարդոյի Չըռու Չապ կոչուած օձաբնակ կիրճը, ուր իրեն կը սպասէր թուրք եւ քիւրտ խուժանը: Մաստիկ կոտորած տեղի կ'ունենայ:

Ս. Պալաթոն եւ ընտանիքը տակաւին չէին տեղահանուած, երբ մայրը, մեծ մայրը եւ քոյրը կը մահանան:

Վերջապէս, Խնուսը եւ իր գիւղերը՝ Թոնդրակ, Արոս, Էլպիս, Չաուրմէ, Քաղքիկ, Ղարաշոպան, Դուման եւ Գոպալ կը տեղահանուին:

8) Յարութիւն Գարանֆիլեան, «Շապ Տխուր Յիշատակ Մը Զինուորական Կեանքէս», էջ 623-624:

Հոկտեմբեր 1916ին Յարութիւն Գարանֆիլեան իբր օսմանեան բանակի պիտուոր Պուլիս կը գտնուի: Պատրաստուած են մեկնելու Կալիպիոյ ճակատը, սակայն ծրագրի մը փոփոխութեամբ կ'որոշուի իրենց 16րդ զօրաբաժինը ուղղել Տամասկոս: Օր մը, գիշերով, գնացքը ճամբայ կ'ելլէ Հայտար Փաշայի կայարանէն: Հեղինակը մինչեւ Պոպանթի կը ճամբորդէ զօրաբաժինին հետ: Աւելի անդին կը սկսի իրենց իսկական գողգոթան՝ փոխադրական անբարարար միջոցներու պատճառաւ: Կը հասնին Այրանի կայարանը, անօթի-ծարաւ եւ յոգնասպառ վիճակի մէջ: Յարութիւնի առաջին գործը կ'ըլլայ հայ ճարել: Հոս անգլիական բանակի հնդիկ պիտուորներ գերի բռնուած էին: Անոնք ատելի թշուառ վիճակի մէջ էին: Յաջորդ առաւօտ Տարոսեան լեռներու մէջ բացուած փապոտիէն անցնելով կը հասնի Բնթիլի կայարանը՝ Բալահիէի մօտ: Երկաթուղիին մօտ կը տեսնէ բանուոր մը, որ իրեն հայրենակից կ'ելլէ: Յարութիւն կ'ողջագործուի անոր՝ գերմանացիներուն մօտ աշխատող Մարկոս Մկրտիչ Մարկոսֆի հետ: Վերջինիս ընկերակցութեամբ, հեղինակը կը մագուցի մօտակայ բարձունք մը, ուր իրենց առջեւ կը պարպուի պարհուրելի

տեսարան մը...

Տասը հազարի հասնող հայութեան այս բեկորները, գրեթէ ամբողջութեամբ կիներ, աղջիկներ եւ մանուկներ, ամենաթշուառ վիճակի մէջ... Մեծերը քար կը կոտրեն նոր շինուելիք երկաթուղիին գիծերուն ամրացման համար. 8-10 տարեկան մանուկները, ձեռքերնին մէյմէկ պամբիտ, կտրտուած քարերը շակելով, նշուած տեղերը կը փոխադրեն: Յոգնած եւ սպառած, այս թշուառները բացօդեայ կը գիշերեն. ո՛չ սնունդ կայ. ո՛չ ալ մաքրութիւն: Հսկողութիւնը կը կատարեն գաւազանով եւ խարապանով պինուած դաժան ոստիկաններ: Մահացողներուն հաշիւը չկայ:

Հոսկէ Յարութիւն ճամբայ կ'ելլէ եւ կը հասնի Հալէպ, ուր կ'այցելէ կրօնագործական արհեստանոց մը, որուն բոլոր գործատրուիկները գաղթական եւ ամուսինները սպաննուած, այրիացած հայ կանայք էին: Անոնք կ'աշխատէին պարզապէս պարտաւ մը չոր հացի համար:

9) Զարեհ Որբերեան, «Բոյեղէն Պարը» («Կարմիր Էջ Մը 1915ի Մեծ Եղեռնի Օրերէն»), Պէյրութ, էջ 625-631:

1915ի ջարդի ու տարագրութեան օրերուն, Հայաստանի գաւառներէն, քաղաքներէն ու գիւղերէն տարագիրներու կեդրոն դարձած էր Եդեսիա քաղաքը: Իրենց այրերէն սրտուած կիներ, աղջիկներ եւ մանուկներ, կողոպտուած կարաւաններու բեկորները, խոշտանգուած վիճակով Եդեսիա կը բերուէին եւ քանի մը օր ետք կը քշուէին դէպի Տէր Զօր: Կը պատահէր, որ կիներ ու աղջիկներ մօտակայ ասորիներու տները կ'ապաստանէին: Կարգ մը ստոր ասորիներ ասոնց թաքստոցները կը մարտնչէին: Այս տեսակէն էր ասորի կրօնագործ Աֆրէմը:

Եդեսիոյ հայոց հերոսամարտը վերջ գտած էր, երբ օր մը երեկոյեան, Ռիւզտի պէյ կոչուած թուրք սպայ մը կը կանչէ Աֆրէմը: Սպան հինգ գեղանի հայ աղջիկներ ուզած էր այդ երեկոյի համար...: Ռիւզտի պէյի եւ ընկերներուն բնակած շէնքը Մը. Պօղոս-Պետրոս եկեղեցոյ թաղամասին մէջ ասորի ընտանիքի մը կը պատկանէր՝ գրատուած թրքական իշխանութեանց կողմէ: Ռիւզտի պէյ Աֆրէմին դրամ տալով կը հրամայէ շուտով իրեն բերել հինգ գեղանի աղջիկներ, օղի եւ ուրեստեղէն:

Սպաներուն հետ ներկայ էր նաև գերմանացի պինտորական մը:

Ժամ մը ետք, Աֆրէմ կու գայ հինգ հայ աղջիկներով: Աղջիկները բակին մէջ սուինատը թուրք պահակները նշմարելով եւ իրենք վիրենք ծուղակը ինկած տեսնելով, սարսափահար կը հաւաքուին պատին մէկ անկիւնը եւ կը սկսին յուսահատական ճիչեր արձակել:

Այս սպաները իրենց 6000 թուրք պինտորներով եւ գերմանացիներուն հայթայթած վէնքերով ու թնդանօթներով Եդեսիոյ կտրիճ ժողովուրդը պարտութեան մատնելէ ետք, յաղթանակի անպզամ հովեր առնելով կը տոնքային եւ իրենց անասնական կիրքերը յագեցնելու կը պատրաստուէին:

Կերոլտումի սեղանին շուրջ, գերմանացի պինտորական Վեր (պարոն) Վոլցկիլտ օղիին սրուակը թուրք սպային ձեռքէն առնելով կը խմէ թուրք սպաներուն կենացը՝ մասնակից ըլլալով խնձոյթին:

Անպզամ Աֆրէմ իր սրախօս եւ շողոքոթ լեզուով երբ կը ջանայ աղջիկները համոզել՝ անոնք վրան կը յարձակին եւ կը պզգերնեն պայն: Աղջիկներէն մէկը Աֆրէմին գրպանէն սենեակին բանալին առնելով դուռը կը բանայ՝ փախչելու համար: Ուշ է սակայն...: Սուինատը պինտորներ արգելք կը հանդիսանան: Աղջիկները տեսնելով թուրք սպաները, դիտահարի նման սարսափած, պարտէսին մէջ կը սկսին հոս-հոն վազել: Միայն մէկը կը յաջողի ցանկապատէն փախչիլ: Ջինտորներու արգելքին հանդիպելով, աղջիկները կը մնան բակին մէջ: Սպաներէն իրաքանչիւրը կը յարձակի աղջկայ մը վրայ եւ կը փորձէ իր գիրկին մէջ առնել: Յետոյ պանոնք բռնի ուժով սեղան կը տանին եւ կը սկսին խմցնել: Աղջիկները պզայպիթկ կ'ըլլան: Ապա աղջիկները կը սթափեցնեն եւ անոնց կը ստիպեն պարել: Յիսնապետ մը այս խոշտանգուած աղջիկները բռնի կերպով կը մղէ պարելու: Ուրիշ մը կ'ուզէ անոնց պատրտուած հագուստները հանել: Չորս աղջիկները բռնի կերպով կը հակառակին: Ջինտորները բռնի կերպով կը մերկացնեն պանոնք: Չորսէն մէկը, կատաղօրէն դիմադրելով, կը յաջողի ինքզինք բակին ցանկապատէն դուրս նետել: Մնացեալ երեք կիսամեռ աղջիկները, ակամայ, կը պարեն: Թուրք սպաները իրենց վայելքին գագաթնակէտը կ'ապրին, մինչ Վոլցկիլտ,

քիչ մը հեռու նստած, այդ խենեշ արարքներն ու թրքափայ բարբարոսությունները կը դիպէ անտարբերութեամբ: Մինչ սպաները թրքավայել ձեռով կը խօսին աղջիկներուն հետ եւ կ'ուզեն զանոնք թրքայնել ու կրօնափոխ ընել, վերջիններս բռն պատրաստաններով կը դիմադրեն սպաներուն, որոնք կը յարձակին անոնց վրայ, կը ծեծեն զանոնք, ապա երեք հայ աղջիկներուն վրայ քարիտ թափելով՝ կ'այրեն...

Տարիներ ետք, 1922ին, երկու վերապրող հայ կանայք՝ այս ողջակիպուած երեք աղջիկներուն ընկերուհիները, յուզումէն դողահար քայլերով այդ նոյն շէնքէն ներս մտնելով կը յառաջանան դէպի անոնց հողակոյրը եւ արտաստուալից «Հայր մեր» մը կը փսփսան:

10) Արամ Ս. Շորվոյլեան, «Երգը Շրթներուն՝ Մահը Ծաղրեցին...», Հալէպ, էջ 632-635:

1921 թուականի ամառը քեմալական բանակներ կը պաշարեն Ջէյթունի գորանոցը, ուր քաղաքէն եւ շրջակայքի հայկական գիւղերէն 1000 հոգի ապաստանած եւ դիրք բռնած էին: Թուրքը կը պահանջէր անձնատուր ըլլալ: Շուրջ 600 հոգի՝ ծերեր, կանայք եւ անվէն տղամարդիկ, գորանոցէն դուրս գալով բանակատեղի կ'երթան եւ անձնատուր կ'ըլլան: Մնացեալները կը մերժեն յանձնուիլ: Կրակոցներն եւ ռմբակոծումը կը վերակահին: Պաշարուածներն ուրելիք գրեթէ չունին, ջուրն ալ թուրքերը կը կտրեն: Ջորանոցին մօտենալու թուրքերու բռնութիւնները կը ձախողին: Արամ եւ խումբ մը քաջ տղաներ կը կռուին եւ կը պաշտպանեն հեռագրատունը, ուրկէ թուրքերը կը նահանջեն: Կռուողներէն Միքայէլենց Խեչօն տոհմ կ'երթայ:

Թուրքերը երկրորդ անգամ հայոց կ'առաջարկեն յանձնուիլ, որոնք ժողով կը գումարեն եւ միաձայնութեամբ կը մերժեն թրքական որոգայթին մէջ իյնալ, Արամ Բէկի՝ վիպը թուրքին շանձնելու վճռական որոշումին վրայ: Ջորանոցին պարտիկ դուռը կը բացուի, եւ ամէն ինչ լքած, միայն զէնքերով, հայերը կռուելով կ'ընթանան գերեզմանոց տանող ճորակն ի վար, գետին ուղղութեամբ Անտալիայ եւ անկէ ալ Ասագկալին կռնակը կ'անցնին: Հոն հասնողներուն թիւը 350 հոգի է: Կասպանի վրայով Կիլիկիա՝ ֆրանսական

գրաւեալ գօրի անյնելու առաջին փորձը կը ձախողի: 10-15 օրուան մէջ Ջէյթունի լեռներուն մէջ սիրար գտնուողներուն թիւը կը հասնի 170ի: Մօտ երկու ամիս լեռնէ լեռ կը թափառին՝ թրքական կանոնաւոր սօրքին հետ բախումներ ունենալով:

Օր մը, Կարմիր Լեռան ստորոտը բռուն բախումի մը ընթացքին Արամ Բէկ կը գոհով: Թուրքերը, չարաչար պարտուած, կը նահանջեն եւ կը հեռանան:

Յովհաննէս Միմոնեանի ղեկավարութեամբ՝ կոռտոլ տղաքը կը հաւաքուին եւ լեռ կը բարձրանան: Իրենց հետ կ'առնեն նաեւ քարայրներուն մէջ պահուրդած կիները: Եօթը օր հանգստանալէ ետք, ճամբայ կ'ելլեն դէպի Օսմանիէ:

Մարաշ-Տէօնկէի ճամբով, Ճիհան գետը անցնելով կը յառաջանան՝ յաճախ բախումներ ունենալով թուրքերուն հետ: Ամենօրեայ կռիւներէն հրաշքով կ'ապաստին: Թուրքերը վիրենք պաշարելով անձնապոր ըլլալ կ'առաջարկէին: Բռուն կռիւներու ընթացքին, երբ թշնամին ձեռնառումբեր կը գործածէ՝ ուրջ քաջեր կը գոհով: Թուրքերուն կորուստը, ըստ ֆրանսական աղբիւրներու, հարիւրներու կը հասնի: Վերջապէս, կտրելով պաշարումի շղթան, անոնք կը յառաջանան եւ Օսմանիէ կը հասնին: Հոս կը ներկայանան ֆրանսական ոյժերու հրամանատարին, որ վարմանալով անոնց քաջութեան վրայ, առ ի գնահատանք, անոնց կ'արտօնէ վէնքով պարգիւ քաղաքին մէջ:

11) Բժիշկ Վ. Գ. Թոփալեան, «Հայ Եւ Արաբ Եղբայրութիւն», «Մահուան Շուքին Տակ (Զինուորական Յուշերէս Հարուած Մը)», Պէյրութ, էջ 636-643:

1915ի երկրորդ կիսուն բժիշկ Թոփալեան կը պաշտօնավարէ Պաղչէի հիւանդանոցին մէջ իբր վիրաբոյժ եւ պարենատրման պետ: Աշխատարանական գումարակի հայ պիւտրները տեսական սովէ եւ ծանր աշխատանքէ կը տառապէին եւ խնամքի կարիք ունէին:

1915ի ձիւն-ձմեռ եւ սառնամանիք օր մը բժիշկը երբ կը վերադառնար Մե Տովէն, կը հանդիպի Մուհամմադ Օնպաշի անունով թուրք պիւտրի մը, որ իր հետ խումբ մը հայ պիւտրներ եւ երկու հայոց դիակներ կը տանէր: Հարցուփորձելէ

երք կը հասկնայ, թէ անոնք երեք օրէ Ճամբան են եւ աշխարհա-
տրական գումարդակէն ելած կ'երթան Պաղչէ: Մանրամասնօրէն
հարց կու փայ այս խեղճերուն վիճակին մասին: Կը հասկնայ, թէ
անոնք շարքիչ անունդ կը սրանան եւ գիշերները փողոցը կը
պառնկին: Բժիշկ Թովալեան անմիջապէս վար կ'իջնէ ձիէն եւ իր
սպայի հանգամանքով կը խարապանէ թուրք վինտորը:

Պաղչէի հիւանդանոցը այս հայ եւ արաբ վինտորներու վերջին
կայանը եղած էր: Խումբ-խումբ վինտորներ հապի քանի մը օր
հոգեվարքի մէջ ըլլալէ ետք գերեզմանապտուն կը փարուէին: Շոս
հայն ու արաբը եղբայրացած էին:

Այս խեղճերը այնքան անբանելիօրէն ընդվզեցուցիչ վիճակ մը
կը ներկայացնեն, որ Պաղչէի հիւանդանոցի բժշկապետ Մուհամ-
մետ Ալին իսկ կը բողոքէ: Քաղաքին բնակիչներն ալ կը բողոքեն,
որովհետեւ ամէն կողմ դիակներ կային եւ գիշարիչ գազանները
շարերը կը բսկտէին: Բնակիչները կը սպառնան իրենց փունները
ձգելով հեռանալ: Վերջապէս, կառավարութիւնը կը հրամայէ երեք
բժիշկներէ կազմուած յանձնախումբ մը ստեղծել, որ կ'ուզէ բոլո-
րովին անկարող վինտորները փուն, իսկ առողջները՝ պարե-
րազմի ճակարդ դրկել: Այս յանձնախումբը, որու քարտուղարն էր
բժիշկ Թովալեան, օր մը քննութեան համար կը մեկնի դէպի Ագ
Բունար, եւ ճամբուն վրայ քննութենէ կ'անցընէ Պելկրապ Օրման,
Գուրպ Քեմէրի Պենպ եւ Քեմէր Պուրկապ կոչուած վայրերը:
Տեսարանը սահմոկեցուցիչ էր: Նոյնիսկ շրջանի թուրք բնակիչ-
ներն անէօք կը կարդային թրքական կառավարութեան հասցէին՝
ի տես հայ եւ արաբ վինտորներու դիակներու սարսափելի վիճա-
կին: Բաւական յոգնութենէ ետք կը շարունակեն ճամբան դէպի
գերմանացի դահճապետ Վոլֆ պէյի կեղոռնը: Իր անուան պէս,
Վոլֆ գայլի երեւոյթով գերմանացի փիպար մըն էր: Ան բացարձա-
կապէս կը մերժէ իր գործատրները որեւէ քննութեան ենթարկել:
Ընվեր փաշայի ստորագրութեամբ թուրք մը յանձնախումբի
անդամներուն երեսին ներելով, ան ուրիշ վրան մը կ'երթայ:
Բժիշկ Թովալեան կը փորձէ գրութիւն մը ստանալ Վոլֆ պէյէն,
սակայն կրկին կը մերժուի: Այս պահուն իրեն կը մօտենայ անոր
օգնականը՝ երկրաշափ Նուրէփոփինը: Շարքուփորձը կը սկսի:
Վերջապէս կը համակերպին եւ թոյլ կու տան, որ պէտք եղած

քննությունները կատարեն: Յանձնախումբը հինգ օր Ազ Բունար կը մնայ եւ քննություններ կը կատարէ: Այս աշխատատեղիէն մէջ հայ փռապաններ, կօշկակարներ եւ արհեստարարներ կային, որոնց իբր գրաստ կ'աշխատեցնէին բեռներ կրելու համար: Վոլֆ պէյն ու իր օգնական հրէշները չարաչար կը գործածէին հայ զինուորները՝ առանց նկատելի առնելու անոնց սնունդի կարիքները:

Փոխադրութեամբ ստացողները արաբ զինուորներ էին, որոնք շար գէջ պայմաններու մէջ կ'ապրէին: Վեղինակը կը տեսնէ նաեւ, թէ մօտ 3000 թուրք երիտասարդներ, տասնապետի աստիճանով, գրագիրի եւ հսկիչի հանգիստ պաշտօններ ունէին: Ասոնք, ըստ իրենց հաճոյքին, հայ եւ արաբ զինուորներուն սնունդի եւ հագուստի բաժինները կը կողոպտէին: Այս թուրքերը շար առողջ վիճակ ունէին: 2500 թուրք երիտասարդներ արձանագրուած էին հոս, սակայն Պոլիս, իրենց տներուն մէջ հանգիստ կեանք մը կ'անցընէին:

Թուրք եւ գերման սպաներու շահերուն պաշտպանութեան ի խնդիր, կամուրջներ ու ճամբաներ կը շինուին 150 հազար հայ եւ արաբ զինուորներու արհիւնով, ոսկորներով եւ անէծքներով շահախուած:

12) Արսէն Բրմոյեան, «Կարինէն Արիեաման՝ Վայ Ընդհանիքի Մը Ողիսականը...», Պէյրութ, էջ 644-652:

Առաջին Համաշխարհային Պատերազմն սկսած արեւն Արսէն Բրմոյեանի ընդհանիքը հինգ հոգի կը հաշուէր՝ հայրը, մայրը, քոյրը, եղբայրը եւ ինք: Վայրը Պոլիս կը մեկնի եւ ալ չի վերադառնար: 1920ին Խարբերդի մէջ կը լսեն, թէ ան յաջողած է անցնիլ ռուսական սահմանը եւ Երեւանի մէջ մահացած 1918ին: Մեծ եղբայրը՝ Պարգելը կը սպաննուի աքսորի ժամանակ:

Յունիս 1915ին Կարնոյ շրջականներու բոլոր գիտաբանները եւ Կարին քաղաքէն չորս կարաւան արդէն տարագրուած էին: 15 Յուլիս 1915ին, Արսէն եւ ընդհանիքը հինգերորդ եւ վերջին կարաւանով ճամբայ կ'ելլեն: Երպէսզէն ճամբուն վրայ մանչերը կը հաւաքեն: Սօրը ճարպիկութեամբ՝ Արսէն կ'ապարի այս միջոցառումէն: Կիներու առեւանգում, կողոպուտ եւ խռչանգում տեղի

կ'ունենան: Կը հասնին Երզնկա: Կը շարունակեն դէպի Քեմախ եւ ապա Ակն: Թուրքերը դիւրմամբ կ'ընկրեն լեռնային ճամբաները՝ յաւելեալ դժուարութիւններ յարուցելու համար արտրեալներուն: Անօթութիւն եւ ծարաւ կը տիրեն կարաւանին մէջ: 21 Օգոստոսին Արաբկիր կը հասնին եւ դէպի Մելիպիւն կ'ուղղուին: Այս ճամբուն վրայ, կը հաւաքեն կարաւանին բոլոր այրերը եւ պատանիները: Կը տանին նաեւ իր եղբայրը՝ 19 տարեկան հայրենասէր Պարգեւը:

Կարաւանի արտրականներուն թիւը օրէ օր կը պակսէր: Մօրը թախանձանքներուն վրայ, կարաւանին հսկող յիսնապետ մը Արսէնը եւ ընտանիքը կը յանձնէ Ապապէ անունով չէչէնի մը, որ վանոնք Արդեամանի մէջ իր տունը պահէ մինչեւ յիսնապետին գալը: Կը հասնին Ապապէին տունը: Քանի մը օր ետք յիսնապետը կը հանդիպի եւ Ապապէին պատուիրելով վանոնք ողջ պահել՝ կը մեկնի: Անոր մեկնելէն ետք Ապապէ վար կ'առնէ իր դիմակը եւ կը կողոպտէ վանոնք: Ան գիշերը կը փորձէ Արսէնի մայրը ջրհորին մօտ խեղդել, բայց քրոջ՝ Արեգնապի օգնութեան կանչերէն կը հաւաքուին դրայիները եւ Ապապէ իր մտադրութենէն կը հրաժարի: Յաջորդ օրը, ոստիկաններ Ապապէն իր ջորիներով ձակարկ կը տանին՝ ապրանք փոխադրելու:

Երկու օր ետք, ոստիկանները տունէ տուն կը պտուղին եւ պահուրդած հայերը խան մը կը տանին: Արսէնը եւ ընտանիքն ալ կը տարուին: Հոս, Արսէնի 36 տարեկան մայրը ծխախոտով վաճառ իսլամացած հայէ մը կը լսէ, թէ զիրենք Սամսապ գետին եզերքը տանելով պիտի ջարդեն: Մայրը իր ճարպիկութեամբ եւ ճարտար լեզուով կը համոզէ ոստիկան մը, որպէսզի խանէն դուրս գան: Ոստիկանը վանոնք կը տանի գայմագամին, որ Արսէնն ու անոր ընտանիքը իր տունը կը դրկէ:

Գայմագամին մայրը իննիսունական թուականներուն թրքացած հայուի մըն էր: Գայմագամը բարի մարդ մը ըլլալով, կ'ուզէ ապարել վանոնք: Յարգանքով կը վարուի եւ համեղ կիրակուրներով ու պտուղներով առատ սեղան կը պատրաստէ անոնց: Մինչեւ Նոյեմբեր 1915ի վերջը հոս կը մնան: Հակառակ գայմագամի բարեհոգութեան, Արսէնի մայրը թուրքին չի վստահիր եւ օր մը գաղտնօրէն կը հեռանան դէպի Մելիպիւն: Արսէնի մայրը

եւ քոյրը, թրքուհիներու պէս հագուած, ճարպիկ ջորեպաններու
օժանդակութեամբ երեք օրէն Մելիփինէ կը հասնին եւ Արսէնի
հօր բարեկամ Ջիա պէյի փունը կ'ողողօին: Այս մարդը հաճու-
թեամբ կ'ընդունի զանոնք: Քանի մը օր այսպէղ մնալէ ետք,
սենեակ մը կը վարձեն եւ հոն կը մնան: Մինչեւ 1917 թուականը
եօթը փուն կը փոխեն՝ ապահովական պարճառներով: Այս
ընթացքին, ծանօթութիւն կը հաստատեն ջարդերէն հրաշքով
ապարած եւ պահուրդած հայոց հետ: Սեպտեմբեր 1917ին կ'եր-
թան Արաբկիր: Հոս կ'ապրին Գալուստեաններու փունը, ուր ան-
խնամ մնացած էին անոնց երեք զաւակները՝ փան մեծերուն
սպանութենէն ետք: Արսէնի մայրը կը մահանայ, եւ հինգ անփէր
որբեր կը շարունակեն մութացկանութեամբ ապրիլ այս փան մէջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմը վերջ կը գտնէ, եւ
Արսէնն ու քոյրը լայն շունչ մը կ'առնեն: 1919ին Խարբերդ կը
հասնին եւ որբանոց կը մտնեն:

Գոկր. Յովհաննէս Ղահնապարեան, «Գողթան Գաւառ. Պատմագրութիւն Եւ Յուշագրութիւն» (Թեհրան), հրատ. «Գէորգ Մելիքիների Գրական Մրցանակի», րպ. «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», Անթիլիաս, 1987, մեծ չափի 285 էջ:

Ագուլիսի եւ շրջակայքի գիւղերու 24-25 Գեկտեմբեր 1919ի եղեռնը՝ էջ 241-285:

1917ի Հոկտեմբերեան յեղափոխութեան հետեանքով, ռուսական բանակները կը նահանջեն կովկասեան ճակատէն: Անդրկովկասի կառավարութեան հրահանգով՝ հայկական նորակազմ պինտորական միաորումներու ներկայացուցիչները Պոլսոյ մէջ կը ստանան րեղական կայապօրի բոլոր պահեստները: Սակայն թուրքերը հաշտ աչքով չեն նայիր այս իրադարձութեան: Անոնք վէտքեր կը գնեն նահանջող ռուս պինտորականներէն եւ նոյնիսկ կը բռնագրաւեն ամէն րեսակի վէտքեր: Գողթան գաւառի հայերը կը հաւաստիացնեն թուրքերուն, թէ իրենք որեւէ թշնամական կեցուածք չունին թուրք բնակչութեան հանդէպ: Բայց վերջինները րեստար կը պինտին:

Ագուլիսի մէջ լարուած մթնոլորտ մը կը րիրէ 1918ի սկիւրները: Սակայն, պինադադարի յայտարարումը կը մեղմացնէ մթնոլորտը եւ Խալիլ պէյ կը նահանջէ Կովկասի ճակատէն: Այս շրջանին 6-7 անգլիացի սպաներ կ'այցելեն Ագուլիս եւ հիացումով կը համակոտին րեսներով հայոց վանքերն ու եկեղեցիները, անոնց նիստ ու կայր: Ժողովուրդը իրօք կը հաւատայ, որ խաղաղութիւն հաստատուած է ու վախն եւ յուսալքումը կը վերա-



նան:

Նախիջեւանը կը միացուի Հայաստանի Հանրապետութեան: Եւրո չանցած, Եւրոյի-Նախիջեւանի թրքութիւնը կ'ըմբոստանայ հայկական իշխանութեան դէմ: Հայկական պինուած ուժերը գեներալ Եւկրովնիկեանի հրամանատարութեան փակ կը նահանջեն դէպի Դարալագեալ: Նախիջեւանի հեփապնդոյ թրքական պինուած ուժերը երեւ մնացած խումբը, քանի մը հապար հոգի, կը կոտորեն Մուսր գիւղին մօտ: Ագուլիսի հայերը օգնութիւն կը խնդրեն Երեւանէն: Հայերը կը համախմբուին Ագուլիսի եւ շրջակայքի գիւղերուն մէջ: Անհաւասար պայքար կը մղուի: Թուրքերու կեղրոնացած ուժերը կը գրնուին Օրփուպարի մէջ՝ Էրիֆ պէյի գլխատրութեան փակ: Կազմակերպուած ընդհանուր յարձակումը կը սկսի: Թաթարներ կը միանան թուրքերուն: Առաջին կոտորածին փոխ կ'երթայ Քաղաքիկ գիւղը, որու դիմադրութիւնը անյաջող կ'անցնի եւ բնակչութեան մէկ մասը կը կոտորուի, իսկ միւս մասը կը փախչի: Յաջորդ յարձակումը կը կեղրոնանայ Տանակերտ գիւղի վրայ: Աշոտ Մելիք-Մուսեանի եւ Մովսէս Գիւնապարեանի ջանքերով, գիւղին բնակչութիւնը կը նահանջէ Յոնա: Կարաղի կռիւներ կը սկսին Դեր ու Վերին եւ Ներքին Ալա գիւղերուն շուրջ: Թուրքերը թնդանօթներով յարձակելով, այս գիւղերը կը գրաւեն: Տանակերտը եւս կ'իյնայ: Վրանգը կը սպառնայ Ագուլիսի: Արդէն խառն բնակչութեամբ, Ագուլիսը վարչական կեղրոն կը դառնայ եւ ոստիկանական միատրներ կը կազմուին այս շրջանի ամենէն վայրագ մուսավաթական հայաբնակ աւազակապետներէն եւ մարդասպաններէն: Այսպիսի թրքական իշխանութեան մը ենթարկուելէն յետոյ, տեղացի հայերը կը կազմեն երկու մարմիններ, որոնք հաշտարար միջնորդի դեր պիտի խաղային եթէ թրքութեան դէմ որեւէ գործողութիւն սկսէր, իսկ թուրքերն ալ կը խոստանան Ագուլիսը պաշտպանել, սակայն իրենց խոստումը չեն յարգեր: Գրեթէ ամէն գիշեր քանի մը առեւանգում եւ կողոպուտ կը պատահին: Խմբապետ Ղազար Քոչարեան (Քաչալ Ղազար - խմբ.) Գողթն կու գայ՝ ինքնապաշտպանութեան գործը դեկավարելու համար:

Այս միջոցին, Քանգեպուրի պինտրական մարմիններն ու Նոնիկը կը գրաւեն կարգ մը թրքական գիւղեր, որոնք հայոց շար

վնասներ կը պատճառէին: Գողթան գաւառի եւ Նախիջեւանի թրքութիւնը կը կապողի այս իրադարձութիւններէն: Փոխանակ տեղահանուած թուրքերն ընդունելու Նախիջեւան քաղաքին մէջ, անոնց ցոյց կու տան Ազուլիսի ճամբան եւ վանոնք գիղաքաղաքի հարստութիւններով կը հրապտրեն: Ասոնք կը թափին Ազուլիս, ուր հայոց կայսրութիւնը կը վտանգուի: Տեղի պատրաստութիւններէն Արամ Տէր Միքայէլեան, որ բարեկամական կապեր ունէր Էրիֆ պէյի հետ, վերջինս Ազուլիս կը հրաւիրէ, որպէսզի քաղաքին բնակչութիւնը պաշտպանէ դուրսէն հաստատուած եկուորներու դէմ: Էրիֆ պէյ կու գայ եւ Տէր Միքայէլեանի բնակարանը կը հաստատուի 15-20 ոստիկաններով: Կայսրութիւնը ատելի կը վարթարանայ, եւ Դեկտեմբեր 1919ին թուրք խուժանը կը յարձակի հայոց վրայ: Էրիֆ պէյի «խորհուրդով» հայերը կը քեն իրենց տուները եւ կը հաւաքուին կեդրոնական թաղամասին մէջ, ուր Էրիֆ պէյը իբրեւ թէ պիտի պաշտպանէր պիտենք:


Վերջինակը իր ընտանիքին հետ կ'ապաստանի հօրեղբոր՝ Յարութիւն Վախնապարեանի մօտ, որ ապուստիկ մարդ մըն էր: Թուրքերը կը յարձակին տան վրայ: Բնքնապաշտպանական կռիւր կը սկսի թուրք պինտորներուն եւ պինուած խուժանին դէմ: Թուրքերը կը յաջողին հրդեհել տունը: Ալ ճար չկար մնալու, ուստի տունէն փախչելով՝ կը փորձեն Յոնա ապաստանի: Յովհաննէս պէնքը ձեռքին կը կռուի թուրքերուն դէմ, որոնք գերի կը բռնեն իր քորերն ու եղբայրը: Վայ կ'իներն ու մանուկները եւ այրերէն շարեր կը կտորտուին: Յովհաննէսը կ'ապապի սպանդէն: Վերջինակը այս դէպքերուն անցուդարձերը մանրամասնութեամբ կը նկարագրէ:

Գրի առաւ՝ Թորոս Թորանեան, պատմողը՝ Յակոբ Մոստիչեան-Կապոնեան, «Տարագիր Հայու Կենսագրութիւն», ԿԿ. «Տօնիկեան», Պէյրուս, 1987, միջակ չափի 54 էջ:

Յակոբ Մոստիչեան-Կապոնեան ծնած է 1893ին, Կեսարիա, ուր արաղձագործութեամբ կը վրադէր: 1915ին ընտանեօք կը փարագրուի Հալէպ եւ ապա Ռաքքա: Հոս արար Օճէյի ընտանիքը կ'օգնէ փարագրեալ հայոց՝ գործ հայթայթելով: Յակոբ եւ եղբայրը թիթելէ դոյլեր կը շինեն եւ կը վաճառեն: Անոնք շար դրամ կը շահին:

1914ին երբ Ա. Համաշխարհային Պատերազմը կը ծագի, Յակոբ Մամսոն կը գտնուի իր քրոջը եւ քեռայրին մօտ: Ռուսական նաւեր երեք օր Մամսոնը ոմբակոծելէ ետք, կը հեռանան: Թուրքերը կը գրգռուին հայոց դէմ եւ պանոնք շար կը նետեն:

Յակոբ Կեսարիա կը վերադառնայ: Հոս թուրքերը 13 միլիարական եւ առեւտրական հայեր կը կանչեն խորհրդակցելու պատրուակով: Ապա անոնց պարագաները կը կանչուին իբր թէ անոնց հետ խօսելու համար, սակայն 13ն ալ կախուած կը լռեն: Կեսարիայէն փարագրութիւնը կը սկսի: Կ'ուղղուին դէպի Թալաս: Յակոբ իր հօրը, մօրը եւ եղբօրը հետ է: Թալասի մէջ ուրիշ հայ գաղթականներ կը միանան իրենց եւ արտարականներուն թիւը 40 հազարի կը հասնի: Լեռնէ լեռ եւ ձորէ ձոր քշուելով, շար փառապանքներով կը հասնին Արանա՝ մնալով ընդամէնը 15 հազար հոգի: Կ'անցնին Գաթմա, ուր Յակոբ կը հանդիպի իր քրոջ ամուսինին՝ Յարութիւնին, որ Քիլիս պիտի երթար բռնուելու համար եւ փասը օրէն պիտի վերադառնար: Քիլիսի



մէջ թուրք բժիշկը կը թունաւորէ Յարութիւնը՝ անոր ոսկիներուն փիրանալու համար: Գաթմայի մէջ շափ նեղութիւններ կը կրեն, խոփ կ'ուրեն: Հոսկէ վանոնք կը փանին Թէլ Ապիափ եւ ապա Ռաքքա: Կարաւանը 10 հայ կը հաշուէր: Ռաքքայի մէջ երբ Յակոբի հայրը կ'աղօթէր, թուրք պինտոր մը հրացանի կոթով կը հարուածէ անոր գլխուն: Քանի մը ժամ փառապելէ ետք՝ հայրը կը մահանայ: Աքտրականները ճամբայ կը հանեն դէպի Տէր Ջօր: Յակոբ, զգալով ճամբորդութեան ահաւորութիւնը, կաշառք փալով ոսփիկանին, կ'առնէ մայրն ու եղբայրը եւ Ռաքքա կը վերադառնայ:

Երկու եղբայր գործ կը գրնեն Օճէյի ընտանիքին քով, իբր ափադձագործ: Անոնք կը բերեն իրենց մայրը եւ կը բնակին պարփէյի մը հիւղակին մէջ: Հոս բաւարար ճաշ կ'ունենան: Ընտանիքը Ռաքքա կը մնայ մինչեւ 1919ի վերջերը: Հոս Յակոբ կ'ամուսնանայ կարինցի Սիրանոյշ Գաբրիէլեանի հետ, որ Գուրգէն Եանիկեանի (Գուրգէն Եանիկեանը 27 Յունուար 1973ին Ա.Մ.Ն.ի Սանթա Պարպարա քաղաքի մէկ պանդոկին մէջ սպաննելով Լուս Անճելըսի մէջ Թուրքիոյ գլխատր հիւպատոսն ու անոր փեղակալը՝ սկիպրը դրաւ 20րդ դարու վերջի հայկական պինտալ ապարագրական պայքարին - ծնթ. խմբ.) մօրաքրոջ աղջիկն էր:

Կը թողուն Ռաքքան եւ կ'երթան Հալէպ: Ճամբան Մեսքէնէի մէջ կը կողոպտուին այդ շրջանին մէջ մնացած աւազակ թուրքերու կողմէ: Բայց ետքը անգլիացիները վանոնք կը փոխադրեն Հալէպ՝ յեփագային Հանանոյի (Սուրիոյ ֆրանսական գաղութարիքութեան դէմ ապստամբութեան ղեկավար Իպրահիմ Հանանօ - խմբ.) անունով կոչուած զօրանոցը եւ կը ձերբակալեն թուրք աւազակները: Այս զօրանոցին մէջ Յակոբ կ'աշխատի անգլիացիներուն քով, իբր ափադձագործ: Կը հաստատուին Հալէպ:

Շատարշան [Տ. Շատարշ Ասագ քինյ. Մեհրապեան], «Մեծ Եղեռն Հայոց», փպ. «Cooperativa Grafica», Պուէնոս Այրէս, 1987, միջակ չափի 390 էջ:

Գիրք Ա., հատոր Ա.՝ «Վերապրող Բեկորներ»:

Նեղինակը՝ ասպանի անունով՝ Համապասայ Մեհրապեան, ծնած է 1905ին, Բարձր Հայքի Դերջան գաւառի Դրնիկ գիղը: 1913ին Եղիսէ անունով քահանայ հօր եւ երկու քոյրերուն հետ կ'անցնի Պոլիս եւ մէկ տարի ետք՝ Կիլիկիա: 1915ի բռնագաղթի ժամանակ հօրը հետ կը գտնուի Մարաշ:

Զէյթունն ու Ֆրնփրճագը նուաճուած էին: Վերապրողները Մարաշի բանփերը եւ գաղթակայանները կը լեցնէին: Գաղթականներու կարաւանը ճամբայ կ'ելլէ Օգոստոս 1915ին:

Այս կարաւանին մէջ են Համապասայը եւ հայրը: Ճամբու ընթացքին ջարդարար վոհմակներ յաճախ յայտնուելով հրէշուփիններ կը գործեն: Կ'անցնին Եդեսիայէն եւ կ'ուղղուին դէպի Հալէպ: Կը հասնին Գաթմա: Հսկայ տարածութիւն մը փռուած դիակներ՝ այլանդակ կերպարանքներով, սցահան սպաննուած, կայնահար բեկորներ, հեռագրի թելի գերաններու վրայ խաչուած եւ անգղներէ ու շուներէ յօշոտուած մարմիններ... Վերապրողները, սնցոփներու մէջ ծուարած, կմախսացած, ամէն տարիքի եւ հասակի մարդկային էակներ, որոնց թիւը 100 հազարէ անելի կը հասնի: Անօթութիւն եւ ծարաւ: Համապասայի քահանայ հայրը, խաչը ձեռքին, փորել կու տայ հողը եւ բաւական չարչարանքներէ վերջ ջորի հոր մը երեւան կու գայ: Կարաւանը կ'ուղղուի դէպի Հալէպ, որ համայնական գաղթակայան դարձած էր: Եղիսէ Զահանայ եւ



նորից 50 է ատելի կղերականներ Առաջնորդարանին մէջ ժողով մը կը գումարեն: Օտար պեւոյթիւններու հիւպատոսները հայ ժողովուրդը փրկելու իրենց «անկարողութիւնը» յայտնած էին, սակայն թուրքերէն խնդրած էին գէթ եկեղեցականներուն խնայել եւ պանոնք Երուսաղէմ ճամբել: Եղիսէ Քահանայ կը նախընտրէ իր հօրին հետ մնալ:

Կառավարութիւնը կ'որոշէ գաղթականները տեղափոխել: Անոնք շոգեկառքի կայանը կը հաւաքուին: Կղերականները՝ դէպի Երուսաղէմ, իսկ ժողովուրդը՝ դէպի Ռաս-ուլ-Այն կ'որոշուին: Հեղինակին ընտանիքը կը հասնի Ռաս-ուլ-Այն: Գաղթակայանի դժուար պայմաններուն հետ կը ջանան հաշտուիլ: Աղօթք եւ պարարագ կը մատուցուին: Օրական հարիւրէ ատելի մեռելներ կը թաղեն հասարակաց փոսին մէջ: Հաղորդութեան ժամանակ ցորենի հարիկները նշխարի տեղ կը տրուին: Այսպիսով կը բռնորեն 1915ը, իսկ 1916ի սկիզբը Սբ. Ծնունդը եւ ջրօրհնէքը տօնելէ ետք, կրկին տեղահան կ'ըլլան: Ճամբուն վրայ կը կոտորեն ժողովուրդը: Տէր Եղիսէ եւս կը նահապակուի: Ողջ մնացողները կը հաւաքեն եւ նոր կարասան մը կը կազմեն, որ 10 հազար հոգի կը հաշուէ: Կ'անցնին Տիգրիսի միւս ափը: Կը հասնին Քախոյի մօտերը: Ճամբուն վրայ ժողովուրդը կոտորուելով եւ կոտորակուելով կը յառաջանայ: Կը հասնին Ճեպիրէ, կ'առեւանգուին գեղեցիկ աղջիկներն ու կիները: Համազասպ հրաշքով կ'ապարի կոտորածէն: Ան ուժաթափ գեպրնին վրայ պառկած է: Ուրքի ելլելը երկար ժամանակ կ'առնէ: Գանկէն եւ ուրքէն վիրատրուած՝ յուսահատութեան կը մատնուի: Կարասանին համբանքը կիսուած վիճակով ճամբայ կ'ելլեն դէպի Մուսուլ: Աքսորականներուն թիւը հետզհետէ կը պակսի: Գիշարիչ անգոյներ կ'ընկերանան անոնց: Կը հասնին Մուսուլի մօտ գիւղ մը եւ կը տեղատրուին: Հոս 24 պարանիներ, մէջերնին ըլլալով Համազասպը, կը բանտարկուին սոված ձիերու ախոռին մէջ: Անոնք յաջորդաբար հրաշքով ողջ դուրս կու գան ախոռէն: Երբ Էնվեր փաշա կ'այցելէ իրենց գաղթակայանը, այդ շրջանի պետի կիներէն ոմանք կը մօտենան անոր եւ կը խնդրեն հայ պարանիները որդեգրել: Արթոնութիւն առնելէն յետոյ, տասներկու հայ որբեր իրենց հետ գիւղ կը տանին: Խափիճէ 24 Ապրիլ 1916ին կ'որ-

դեգրել Համազասպը, կը լուայ անոր մարմինը եւ կը բուժէ անոր վէրքերը: Քանի մը օր ետք որբերը կը բերուին հրապարակ եւ գիտին ամբողջ բնակչութեան ներկայութեան եւ իսլամ կրօնատրի մը գլխատրութեամբ, իրաքանչիւրին իսլամական անուն մը կը տրուի: Համազասպը կը դառնայ Համզա: Այս գիտին մէջ հայ որբերը սակայն միշտ կը վանազանուէին փեղայցիներէն, որոնք վանոնք պիտո՞ կը նկատէին: Այս որբերէն մէկը՝ Վարդան կը մահանայ: Որդեգրող ընտանիքը անոր դիակը պիտո՞ նկատելով, կը նետէ աղբանոցին մէջ: Ընկերները կը հաւաքուին եւ Վարդանի թաղումը կը կատարեն պարզաճ կերպով:

Որբերու որդեգրումէն չորս ամիս անցած է արդէն: Գիտացիները կը ստիպեն, որ որբերը իսլամութիւնն ընդունին որպէս ճշմարիտ կրօնք: Համազասպ ջերմէ կը բռնուի: Որբերը խորունկ մտաւորանքութեան մէջ կ'իյնան եւ կ'որոշեն փախչիլ: Երեք ընկերներ՝ Համազասպը, Հայկը եւ Արամը կ'ոտոգորին դէպի Մուսուլի կամուրջը՝ քաղաք երթալու համար: Ճամբուն վրայ կ'օգնեն պետելի կնոջ մը, որ սիրենք կը կերակրէ եւ ճամբու կը դնէ: Կը հասնին Մուսուլի հայոց եկեղեցին ու կը մտնեն անոր բակը, ուր 2000է աւելի հայեր պարսպարուած էին: Հոս Համազասպը գիտէն փախած քանի մը ընկերներու կը հանդիպի եւ նորերու կը ծանօթանայ: Համազասպը եւ ընկերները խանութ խանութ եւ տունէ տուն կը շրջին՝ պարտաւ մը հացի փոխարէն ձրի աշխատանք կատարելու խնդրանքով:

Համազասպ սափրիչի աշկերտ կը դառնայ: Օր մը գործին մէջ թուրք պարանիի մը գլուխը ածիլած արեն, ձախաւեր արարքով մը, կը վիրատրէ պայն: Թուրքերը շուրջը կը հաւաքուին եւ ինք կ'իյնայ վրանգատր կացութեան մէջ: Մոլլա Մահմուտ անունով բարի կրօնատր մը կ'ապարէ պինք այս վրանգէն: Չգոհանալով այսքանով, Մոլլա Մահմուտ դպրոցի մը մէջ հսկիչի պաշտօն կու տայ Համազասպին: Վերոյիջեալ դէպքին համար Համազասպ դատարան կը կանչուի: Վճիռին գործադրութիւնը կը ձգուի Մոլլա Մահմուտին: Վերջինս, իր բարի տրամադրութեամբ, իր գիտցած ձեով օգտակար կը դառնայ Համազասպին:

Վեղինակին այս հանգիստ կեանքը քանի մը ամիս կը տեւէ, քանի որ Մոլլա Մահմուտ կը մահանայ: Համազասպ սէր-քոմիսէր

Մուլեյման պեյի Կան մէկ անդամը կը դառնայ: Սկզբնական շրջանին ան սերփօրէն կը բարեկամանայ Մուլեյման պեյի որդիին՝ պապանի Թեֆիքին հետ, սակայն ետքը կը սփիւտեն, որ իսլամանայ եւ թլիստի: Ոսրիկանապետ Մուլեյման պեյ արձանակով նոյնիսկ կը սպառնայ Համապասային, բայց ան վճռականօրէն կը մերժէ կրօնափոխ ըլլալ: Իբր հետեանք՝ ան Կունէն կը վտարուի: Հայ տղեկը կ'ոտոյնի գետեպետը: Պահ մը նոյնիսկ կը մտածէ անձնասպան ըլլալ: Ապա կ'երթայ հայոց եկեղեցին: Կը հանդիպի հասակակից ընկերներու եւ անոնց հետ միասին մտրացկանութեան կը սկսի: Մեծահարուստ սպայի մը ապարանքին մէջ Համապասայ գործ կը գտնէ, իբր պարփիպանի օգնական: Պարփիպանը, բարի հայ մը, կ'օգնէ Համապասային: Օրին մէկը սպան կը յայտնէ Համապասային, թէ պայն կ'ուզէ Էֆենտի ընել: Կարճ ժամանակ ետք սպան կ'որդեգրէ Համապասայը, ինչի շնորհիւ ան կ'ապրի ֆիզիքապէս ապահով, սակայն հոգեպէս Կանջանքներու մէջ: Դահիճներու վարձատրութիւնը՝ հայ որբացած աղջիկներու պարերը տեսնելով ան հոգեպէս կը Կանջուի: Այս Կանջանքներէն ապաւելու համար, ան կը փախչի, կը գտնէ որբ ընկերները, անոնց հետ կը շրջի փողոցները՝ գործ ճարելու համար: Այս Կանջուի ընկերները Կան կ'երթան թուրք ոճրագործ ճաշարանապետի մը ոճիւրին: Երեսն կու գայ, թէ այս մարդակերպ հրէշը սպաննած է Համապասային ընկերները եւ անոնց միտով ճաշ պարտաստած իր յաճախորդներուն համար: Ինք հրաշքով կ'ապարի: Բարեբաստիկ դիպուածով մը կ'աշխարհի եւ կ'ապրի Չիմերաններու ընտանիքին մէջ: Ան այս գերդաստանին կողմէ շատ կը սիրուի եւ որոշ արեւն մը հանգիստ կեանք կ'ապրի:

Շատարշան Յ. Շատարշ Ասագ քինյ. Մեհրասպեան], «Մեծ Եղեռն Հայոց», Կոպ. «Արմենիա Լուսաշխատանոց», Պուլնոս Այրէս, 1987, միջակ չափ 178 էջ (էջ 395-573):

Գիրք Բ., հատոր Բ.՝ «Գահիճներու Որջին Մէջ»:

Չիլմերաններու իբր պատակ որդեգրուած արեւն, Համապասպ օր մը կը կողոպտուի երբ ազարակէն Կոնն կը վերադառնար: Ան կը մնայ անապարհին մէջ: Կը հանդիպի թրքական Ե. Կորաբանակի կարաանին: Կառքին մէջէն սպայ մը Կինք կը հարցուփորձէ եւ անմիջապէս իր որդեգիրը կ'ընէ: Համապասպը անոնց հետ կառք կը բարձրանայ: Զինուորական կարաանը կ'ուղղուի դէպի արեւմուտք: Կը հասնին Նուսէյպինի մօտերը: Համապասպը սպային Կոնն մէջ կ'ապրի՝ սպային Կոնն ֆրանսերէնի ուսուցիչը դառնալով: Երեւան կու գայ, որ իր նախկին հոգաբար Կինուորականը՝ Բարահիմ Կաշան, այս նոր հոգաբարին՝ Սալահէրօին Կէյին եղբայրն էր: Համապասպ կը մտախոհուի, վախնալով որ իր ինքնութիւնը երեւան Կիփի ելլէ: Նուսէյպինի մէջ հաւաքուած թուրք սպաները, որոնք մէկական դահիճներ են, խնձոյք կը սարքեն եւ ճառեր կը խօսին: Համապասպը մօտէն ականապետ կ'ըլլայ այս իրադարձութիւններուն: Սալահէրօին Կէյին կինը Թագուիի անունով հայուի մըն էր, սակայն Կայն Լէյլա կը կոչէին: Համապասպ յարմար առիթով մը Թագուիիին կը յայտնէ իր հայ ըլլալը: Թագուիի իր կեանքին պարմութիւնը կը պարմէ Համապասպի: Ան կ'ըսէ, թէ իր ծնողներուն դահիճը եղած է իր ամուսինը: Համապասպ եւ Թագուիի կը մտերմանան եղբայրքոջ պէս: Անոնց ցարը հայոց դժբախտութեան ցարն է: Անոնք Կրեդակ կ'ըլլան թուրք սպաներու ոճրային արարքներուն, որոնք Կիփի գործադրուէին 12 հազար հայ գաղթականներուն վրայ: Անոնք կ'իմանան նաեւ, թէ Կորանոցը աշխատող բոլոր հայերը ծրագրած են ջարդել: Համապասպ անոնց անմիջապէս լուր կու տայ դաւադրութեան մասին: Երկու հայեր՝ Պրն. Յակոբը եւ Նուրիճանը, պարասխանապու դիրքերու վրայ են Կորանոցին մէջ: Համապասպ կը բարեկամանայ Կորանոցի հայոց հետ եւ հայկա-

կան Ջափիկը միասնաբար կը փօնեն: Նուսէյպիինի հայերը ջարդէ կ'ազատին:

Երբ կը հասնի 1918ի աշունը եւ օսմանեան բանակը կը նահանջէ, Համազասպ միւս հայոց հետ Հալէպ կը վերադառնայ:

Շատարշան թ. Շատարշ Ասագ քինյ. Մեհրասպեան], «Մեծ Եղեռն Հայոց», րպ. «Cooperativa Grafica», Պուէնոս Այրէս, 1987, միջակ չափի 209 էջ (էջ 575-784):

Գիրք Բ., հատոր Գ.՝ «Յարութիւն Մեռելոց»:

Համապասպ կը մտնէ Սապուն Խանի որբանոցը Հալէպի մէջ: Ան մտաւոր է իր երկու քոյրերով, որոնք Պոլիս մնացած էին երբ ինքն ու հայրը գաղթի ճամբան բռնած էին Մարաշէն: Որբանոցին մէջ կը մտերմանայ հայ պատանի Վահանին հետ, որու հետ փախուստ կու տայ որբանոցէն եւ շոգեկառքի կայարանը կ'երթայ: Բաւական դժուարութիւններէ ետք, Համապասպ կը յաջողի շոգեկառք ելլել, մինչ Վահան պահակին հետ կռուի կը բռնուի: Շոգեկառքը ճամբայ կ'ելլէ: Աւելի ուշ, Վահանը կը յաջողի շոգեկառք բարձրանալ: Կը հասնին Արանա, ուր հայ կամատրներու եւ փնտորներու կը հանդիպին, ականապետ կ'ըլլան հայկական ետուն կեանքին: Ճամբայ կ'ելլեն կրկին շոգեկառքով դէպի Գոնիա: Պատանի Վահանի սիրտը վրէժխնդրութեամբ լեցուած է Մեքաստիոյ թուրք գայմագամին (գաւառապետ) դէմ, որ այժմ Գոնիայի կուսակալն է: Շոգեկառքը կը հասնի Գոնիա, ուր Վահան վար կ'իջնէ եւ շոգեկառքը կը շարունակէ ճամբան: Համապասպ վերջապէս Հայտար Փաշայի կայարանը (Պոլիս) կը հասնի: Համապասպ կ'ողորմի Գալֆայեան աղջկանց որբանոցը, ուր կը գտնէ իր քոյրերը՝ Ջարմուհին եւ Մագդաղինէն:

Համապասպ կը մտնէ Գարակէօպեան որբանոցը, ուր կը հանդիպի Սողոմոն Թեւիլիբեանին: Ան նաեւ ուրիշ որբերու կ'ընկերանայ: Իրաքանչիւրը կը պատմէ անցած չորս տարիներու իր արտօրական կեանքը: 1919ի գարնան երեկոյ մը, երբ Համապասպ աչքէ կ'անցընէ հրատարակութիւնները, օրաթերթէ մը կ'իմանայ Գոնիայի կուսակալին սպանութիւնը: Հոս հեղինակը կը յիշէ իր ընկեր Վահանը: Աւելի ուշ երբ Վահան որբանոց կու գայ, կը տեսակցին եւ Համապասպ կը շնորհատրէ Վահանը իր հերոսութեան համար: Սակայն, Վահան զգուշութեան համար կը հերքէ իր մասնակցութիւնը Գոնիայի կուսակալի սպանութեան:

Շատարշան Յ. Շատարշ Ասագ քինյ. Մեհրապեան], «Մեծ Եղեռն Հայոց», ԿԿ. «Սարդարապատ Լուսաշարական Աշխարանոց», Պուլնոս Այրէս, 1991, միջակ չափի 119 էջ:

Գիրք Գ., հատոր Գ.՝ «Հօրս Նահապակութիւնը Եւ Ռասուլ-Այնի Ջարդը» (թարգմանութիւն-յուշեր), էջ 54-62:

Ռասուլ-Այնի գաղթակայանի երեսուն հազար հոգին կը հաղորդուին եւ երեք օրուան պարարագը կը վերջանայ: Եղիսէ Քինյ. Մեհրապեանի հրահանգով, ժողովուրդը միաբերան կ'երգէ «Ի Վերին Երուսաղէմ»ը: Չորս կողմէն թուրք զապաններ Տէր Հօր վրայ կը նետուին եւ կը սկսին խոշտանակելով սպառնալ, գլխուն փշէ պսակ կ'անցընեն, ձեռքին կու տան գաւապան մը եւ պայն ծաղրելով կը կոչեն «Հայոց թագաւոր», ինչպէս որ հրեաները Տիսուսը կոչեցին «Հրէից թագաւոր»: Թրքավարի հայեղանքներով եւ վրան թքներով, խոշտանակելով կը տանին եւ կը կապեն հեռագրական թելի սինին: Համապասպ կը կառչի իր հօր փէշերուն, մինչեւ որ զապան մարդիկ քաշկոտելով կը հեռացնեն սինը իր հօրմէն: Համապասպ կը շարունակէ «Հայրի՛կ, հայրի՛կ,....» ձչալ: Այս միջոցին, ոստիկանապետ մը ձեռքը թողթ մը ձօճելով, խօսքը կ'ողողէ հաւաքուած խումանին եւ Տէր Հօր ամբաստանագիրը կը կարդայ: Ըստ այս ամբաստանագրին՝ Եղիսէ Քահանայ 1914ի աշնան Խառնիկ մէջ ժողովուրդը բողոքելու առաջնորդած էր գերեզմանապտունէն ճամբայ բանալու դէմ, ապա, Ֆրնյորձագի ապստամբութիւնը առաջնորդած էր եւ Գաթմայի մէջ հոր փորել տուած էր:


Ապա խօսք կու տան Տէր Եղիսէին: Ան քարոզելու նման խրոխտ ձայնով կ'արտասանէ իր վերջին խօսքը: Ան բուն կերպով կը դարապարտէ թուրքերուն զապանավայել արարքները, հրաւիրելով պանոնք Անդրանիկի, Մերոբի, Մուրադի, Գէորգի, Քեռիի, Համապասպի եւ բիրատր հայ ֆեւրայիներու դէմը կենալ եւ ոչ թէ անպաշտպան եւ անպէն հայերը ջարդել:

Ոստիկանապետը շղիմանալով արդար խօսքերուն, կը սպառնայ Տէր Հօր լեզուն կտրել: Ան առաջինը Տէր Հօր կողը կը

մրցնէ եաթաղանը: Անոր կը հեփեի գազանացած ամբոխը: Հարուածները անընդհատ կը շարունակեն րեղալ: Կատաղութեամբ կը հարուածեն սինին, որ կը րապալի...: Ոստիկանապետը կը հրամայէ րոհին բերանը բանալ, եւ լեզուն դուրս քաշելով՝ կը կրփէ րայն: Դահիճ մը մարմնէն անջատուած գլուխը եաթաղանին ծայրը կ'անցընէ: Ամբոխն ապա կ'ոտորի դէպի սպանդանոց, ուր ջարդը աւեր կը գործէ: Ամբոխը «Ճիհա՛ր, ճիհա՛ր...» կը պոռայ: Սահմոկած այրեր ու կիներ Ասրուճոյ եւ Յիսուսի անունը կը մրմնջեն: Ձեռնառումբեր կ'անձրեւեն եւ ջարդոտողները վրայ-վրայի կը թաալին: Փախչիլ փորձողները կը դաշունահարուին կամ եաթաղանով կը խոցուին: Պապիկներ, մամիկներ, երիրասարդներ, աղջիկներ եւ մանուկներ դիրապասար կ'իյնան: Երեսուն հապարէ բողկացեալ բազմութեան միայն կէսը կը վերապրի այս գեհենէն: Իրար կը յաջորդեն որոքում, կայծակ, րեղարարափ անձրեւներ եւ աւերիչ փոթորիկ: Ջարդը մուգնօրէն կը շարունակուի: Տէր Եղիսէ Աագ Քահանայ Մեհրապեանի գլուխը Ռաս-ու-Այնի սպանդանոցի րարածքին կը ցուցադրուի:

**Կարապետ Ս. Մուքիասեան, «Հայրական Կրակ»,
տպ. «Արայ», Պէյրութ, 1987, փոքր չափի 96 էջ:**

Հեղինակը ծնած է 1868ին, Չմշկա-
ծագի Միաբուն գիւղը: 10 տարեկա-
նին կը մեկնի Պոլիս, որը քով, որ
աշխատելու գայած էր հոն: Գալա-
թիոյ Կեդրոնական Վարժարանը կը
յաճախէ: Փոքր եղած արեն, ան
թուրք լակոփներուն եւ սրահակնե-
րուն լաւ դաս մը կու տայ: Հայրը կը
մահանայ երբ ինք 15-16 տարեկան
էր տակաին: 1891ին կ'անդամակցի
Հնչակեան Կուսակցութեան: Անձ-
նական գործերով՝ երկու տարի Հա-
լէյ կը գտնուի: Իր ընկերներուն
խնդրանքին վրայ՝ Միաբուն կը
վերադառնայ եւ թղթատար կը
նշանակուի: 1894ին կրկին կ'երթայ
Հալէյ: Հոն կը ձեռքակալուի եւ կը դրկուի Խարբերդ, ուր 14 հայ
ձեռքակալուածներ կային, որոնցմէ չորսը՝ հնչակեան, իսկ մնա-
ցածը՝ անկուսակցական էին: Հարցաքննութեան ժամանակ սաս-
տիկ չարչարանքի կ'ենթարկուին եւ նոյնիսկ կը թունաւորուին:
Վեց ամիս բանտը մնալէ ետք սուլթանական հրամանով ազատ
կ'արձակուին:



Կարապետը 1895ին դարձեալ Հալէյ կը մեկնի: Կը մտադրէ
Զէյթուն երթալ՝ կռիւներուն մասնակցելու: Հարցաքննութենէ վերո
մնալու համար, ճամբուն վրայ կը դաշունահարէ եւ կը սպաննէ
տիւրահռչակ ոստիկան Թէնլէկսիյ Օղլը Ալին, որ ոճրագործ մը
ըլլալով, բանտէն արձակուած եւ ոստիկանութեան պաշտօնին
բերուած էր: Մը. Կարապետի մօտերը կռուած արեն, հեղինակը
կը կորսնցնէ իր ընկերները: Լեռները մնալէ ետք կու գայ Ֆռնու
ու ընկերներով կը վերակազմէ 95 հոգինոց խումբ մը՝ պաշար-
ուած Զէյթունին օգնութեան փութալու համար: Հաճի Պետրիկի

առաջնորդութեամբ կը յառաջանան դէպի Ջէյթուն, կը յաջողին մտնել արծուերոյնը ու կռուին միանալ: Երոտպական վեց պետութիւններու միջամտութեամբ համաձայնութիւն կը գոյանայ եւ մարտիկները կը փոխադրուին Մարսէյլ, Ֆրանսա: Կ'այցելեն Փարիզ, ապա կ'անցնին Լոնտոն, Ամերիկա, միջոց հաւաքարիմ մնալով Շնչակեան Կուսակցութեան: Կարապետ կ'անցնի Կիպրոս եւ ապա Եգիպտոս, ուր կ'ամուսնանայ: 1913ին Վալէպ կը հաստատուի եւ Պաղտատի երկաթուղիի գործարանը կ'աշխատի:


1917ին Վալէպի մէջ կը ձերբակալուի եւ երեք օր բանտարկուելով կը հարցաքննուի իբր անգլիական լրտես: Ազատ կ'արձակուի: Նոյն տարին կրկին կը ձերբակալուի դաւաճան Արշալիր Եսայեանի (Ճիշդը՝ Եսսեան - խմբ.) մատնութեամբ: Իրեն հետ ուրիշ չորս հայ բանտարկեալներ 8 օր գարշելի նկուղի մը մէջ պահելէ ետք, կ'աքսորեն Տէր Զօր: Զինք կ'աշխատեն արհեստանոցի մը մէջ: Բարեբաստիկ դիպուածով մը ձեմալ փաշայի հրամանով Վալէպ կը տարուի եւ ազատ կ'արձակուի:

Արմէն Գարեան եւ Անդրանիկ Երկանեան (խմբագիրներ), «Պատմագիրք Եոպկարի Եւ Երջակայի (Գամիրք) Հայոց», հրատ. Եոպկարի եւ Երջակայի (Գամիրք) Հայրենակցական Միութեան, րպ. «Հայ Տիպ Բոմփիկրաֆ - Թեքնոիքես», Պէյրութ, 1989, մեծ չափի երկսիւնակ 1029 էջ:

1) Նուարդ Ալեանաբեան (Արսլանեան), «Քելլերի Չորի Սպանդանոյէն Փրկուած Հայ Աղջնակի Սը Ողիսականը», էջ 482-502:

«Նուարդ Արսլանեանի յուշերը, ձեռագիր վիճակի մէջ, կ'ընդգրկեն 780 էջ: Հակառակ այլապէս հետաքրքրական իրենց բովանդակութեան, մենք, տեղի անձկութեան պատճառով, կը ներկայացնենք միայն այն մասերը, որոնք անմիջականօրէն աղերսուած են Մեծ Եղեռնին հետ» (խմբագիրներուն կողմէ):

1915, տեղահանութիւն Եոպկարին: Նուարդի հայրը եւ մօրեղբայրը կը ձերբակալեն 800 այր մարդոց հետ, կը քշեն Քելլերի ձորը եւ կը սպաննեն: Շատ չանցած՝ Նուարդ, մայրը ու երկու քոյրերը տեղահան կ'ըլլան: Կարաւանը կ'ողողոյի դէպի Կեսարիա: Երեկոյեան կը հասնին Սարը Թորքաքը, ուր կը գիշերեն: Իններորդ օրը Քելլէր կը հասնին: Հսկողութիւնը կը սաստկանայ: Ճամբայ կ'ելլեն նորէն, բայց քիչ անդին վիրենք կառքերէն վար իջեցնելով, հետիոտն կը տանին տափաստանի մը ծայրը, ուր կը հրամայեն նստիլ: Հոս թուրք մը կ'առեանգէ Նուարդը: Մարսափի սպիտակութեան տակ, ուշակորոյս, ան 2-3 օր կը քնանայ: Երբ կ'արթնայ՝ ինքզինք երկու կիներով եւ մէկ աղջիկով շրջապատուած



կը գտնէ: Իր անունը Վանըմ կը դնեն: Կիներէն մէկը Նուարդը կ'ուզէ ամուսնացնել իր խորթ տղուն հետ, որ վայն առուանգած էր: Նուարդ կը մտադրէ փախչիլ դէպի Եոզկապ, ուր իր մօրաքոյրը կ'ապրէր: Մօրաքոյրը ամուսինը ամերիկահայաբնակ ըլլալով, անոնք տեղահանութենէ վերո մնացած էին:

Իր բռնի տարուած գիտին մէջ Նուարդ կը հանդիպի ջարդէն վերապրած կիներու, որոնցմէ կ'իմանայ, թէ կարգ մը գիտերու հայ այրերը Չաթի լեռները ապաստանած են եւ թուրքերուն դէմ կը կռուին:

Նուարդ վերջապէս ճամբայ կ'իյնայ դէպի Եոզկապ: Եարաթներով կ'ընթանայ մուր ճամբաներէ, եւ ուժասպառ, անօթի ու ծարաւ կը հասնի գիտ մը: Հոս Աջէ անունով թուրք կին մը վիճք շակեղով իր տունը կը տանի: Նուարդ մէկ տարիէն ատի կը մնայ այս յեղամնայ գիտին մէջ:

Օր մը Կեսարիայէն տուրքերու գանձիչը կու գայ այս գիտը: Ան կ'առաջարկէ իր հետը տանիլ հայ աղջիկ մը իբր սպասուհի: Նուարդ կամատր կերպով կ'ընկերանայ այս մարդուն եւ կ'երթայ Կեսարիա: Որոշ ատեն մը, Նուարդ իբր սպասուհի կը ծառայէ անոր տան մէջ, ապա, ուրիշ հայերու կարգադրութեամբ, Մեթերիսեաններուն տունը կը փախչի: Այս հայ ընտանիքը կ'որդեգրէ Նուարդը եւ լաւ հոգ կը տանի անոր: Ընտանիքին հայրը՝ դեղագործ Կարապետ, Ջմիռնիա կը գտնուէր: Կ'ուզէին հոն երթալ: Բախտի բերմամբ Նուարդ կը լսէ, թէ իր Հայկապուն մօրեղբայրը ողջ է եւ վիճք կը փնտռէ:

Ընտանիքը կ'որոշէ երթալ Էրէլի եւ հոնկէ Ջմիռնիա անցնիլ: Ապահով կը հասնին Էրէլի, ուրկէ շոգեկառքով կ'երթան Գոնիա: Ետք դժուարութիւններու կը հանդիպին: Երեք ամիս Գոնիա կը մնան: Վերջապէս կը հասնին Ջմիռնիա եւ կը միանան Կարապետ Էֆենտիին: Նուարդ կը գտնէ իր մօրաքոյրները: Մօրեղբայրը կու գայ Պոլսէն եւ Նուարդը հետը կը տանի Պոլիս: Նուարդ ապա Ամերիկայի Միացեալ Նահանգներ կ'անցնի:

2) Մեսրոպ Մ. Մեսրոպեան, «Տեղահանութիւն Եւ Հաշուեյարդար», էջ 503-513:

15 Յունիս 1915ի առաւօտուն կը սկսին ձերբակալութիւնները

Եոզկարի մէջ: Բանարը դրուածները, 650 հոգի, դէպի Թաշ Բունար կոչուած գիւղը կը քշուին եւ Մերասարիոյ ճամբուն վրայ, Գանլը Տէրէի մէջ կը սպաննուին:

Տեղահանութիւնը կը սկսի Օգոստոս 1915ին: Ադամեան գերդասարանը կաշառքի շնորհիւ ձիակառքերով կը հասնի Մուրիա: Մնացեալ հայերը՝ 500 այր մարդիկ եւ Քէօհնէ գիւղաքաղաքէն 300 հոգի, կը քշուին դէպի Տէր Զօր: Անոնց կը յաջորդէ Բնձիրլիի հայութիւնը: Ասոնց երեւէն կը փարագրուին կիներն ու մանուկները: Լքեալ փունները կը կողոպտուին: Քելլէր գիւղի Եարաշ ձորին մէջ փեղի կ'ունենայ մեծ ջարդ մը Եոզկարի թուրք մեծամեծներուն ներկայութեան: Առաջին պահուն, հարիրապետ Գանարա Ըիլքիլի հրէշը քսանամեայ Լուֆիկ Մահրետի Թորոսեան անունով երիտասարդը կը փոխէ թուրք պարասլանապաններուն ուրբերուն առջեւ: Ասիկա ջարդին սպաննուածները կ'ըլլայ: Այս բոլորը կը կատարուին Եոզկարի գայմագամ Ալի Քեմալի հրամանով:

Ոմանք Եոզկար կը մնային փակուին, ինչպէս հեղինակն իր ընտանիքով: Ասոնք եւս երբը կը փարագրուին: Հապի ճամբայ ելած՝ ոսրիկան մը կ'անջարտէ Մետրոպի հայրը՝ Մանուէլը: Յաջորդ օրը կէսօրին կը հասնին Չալաթըր գիւղը: Գողութեան համար թուրքերը հոս կը խուսարկեն հայ բռնագաղթածները ու կը հրամայեն, որ այր մարդիկ բաժնուին կարաւանէն: Կը հաւաքեն նաև 17 մանուկներ, որոնց մէջ է Մետրոպը: Քիչ երբ Մետրոպ եր կը դրկուի մօրը քով՝ «10 փարեկան եմ» ըսելուն համար: Այրերը կը ջարդուին: Մնացածները՝ կիներ եւ մանուկներ, 49 հոգի, կաշառք փալով Գարա Քայա գիւղը կը հասնին: Մետրոպ եւ ընտանիքը հոս կ'ապաստանին լքուած սենեակ մը: Հայ փարագրեալներն այսփեղ փեղեակ կ'ըլլան, թէ Եոզկարի հայութիւնը մաս առ մաս բռնագաղթել փալով կը ջարդեն: Հայկական գերեզմանները կը սրբապղծուին եւ կողոպտուի կ'ենթարկուին: Հայր Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեանը եւս իր կարաւանով կ'անցնի Եոզկարէն: Այս հերթական բռնագաղթերը կը շարունակուին մինչեւ 1918ի գարունը, երբ Եոզկարի մէջ փակուին ողջ մնացածները անծանօթ վայրեր կը քշուին:

3) Ռաքել Քէշեան (Թաշխաշեան), «Հայուիներու Նա-

հատակութիւնը», էջ 514-515:

Եռակարի բոլոր այրերը կը քշուին խումբերով: Անոնց մէջ կային Եռակարի Առաջնորդը եւ ուրիշ մտաւորականներ: Երբ Սեբաստիա կը հասնին՝ անոնք կը ջարդուին: Կարգը կու գայ կիներուն ու մանուկներուն: Ռաքել եւ ընտանիքը շրջակայ գիւղերը կ'աքսորուին: Չորս ամիս հոն ապրելէ ետք, Ռաքել կը վերադառնայ Եռակար եւ ականապես կ'ըլլայ Փափազեաններու աղջկան՝ Բսկուհիի եւ ուրիշ հայ կոյսերու նահապետութեան:

4) Լոդոֆէթ Մկրեան, «Հայու Սը Կեանքը», էջ 516-519:

Տեղահանութեան սկիզբը Եռակարէն շուրջ քսան հայ ընտանիք Ադամեան ընտանիքին գլխատրութեամբ, կաշառելով օրուան կառավարիչը, սեփական կառքերով եւ ոստիկաններու պաշտպանութեամբ ճամբայ կ'ելլէ Եռակարէն Հալէպ:

Այրերը կը հաւաքուին եւ կը սպաննուին: Մնացեալները մաս առ մաս կը քշուին: Լոդոֆէթ ութ տարեկան էր 1915ին: Հայրը, փախստական, տունը կը մնար: Փարատն անունով եղբայրը եւ Լեւոն հօրեղբորորդին մազապտո՞ծ կ'ապարհին ջարդէն: Փախստական հայրը կ'որոշէ ինքնակամ եւ ընտանեօք միանալ գաղթի կարաւանին: Կ'անցնին Օսման Փաշա Թէքքէէն, Քելլէրէն եւ կը հասնին Պողպուեան: Ասկէ անդին կը սկսի սպանդը: Լոդոֆէթ սպանդի ժամանակ նուազած ըլլալով, ողջ կը մնայ ուրիշ երկու մանուկներու հետ: Երեք մանուկները եօթներորդ օրը դուրս կու գան ձորէն՝ անօթի, ծարաւ եւ ուժասպառ: Անոնք կը հանդիպին թուրք կնոջ մը, որ հայ կու տայ անոնց եւ իր գիւղը՝ Էրքիլէթ կը տանի պանոնք: Երեք ամիս հոս մնալէ ետք, կառավարութեան հրամանով երբ թուրքերու տուններուն մէջ մնացած հայերը կը հաւաքեն, ինք կը դրկուի Կեսարիա, ուր 50 հայ որբեր հաւաքուած էին: Ռեճիպ անունով թուրք մը կ'որդեգրէ զինք եւ իր տունը կը տանի: Անունը Մեհմէտ կը դնեն: Լոդոֆէթ Կեսարիոյ բանտը գտնուող իր Եփրեմ հօրեղբորը կ'այցելէ՝ հայ ու չամիչ տանելով: Երկու հօրեղբայրը կը փոխադրեն Անգարա՝ կախադան հանելու համար, բայց 1917ին ան հրաշքով կ'ապարհի մահավճիռի գործադրութենէն: Հօրեղբայրը 1918ին Կեսարիա գալով կը միանան եւ կ'անցնին Եռակար: Ապա Լոդոֆէթը կ'երթայ Կեսար-

իա եւ կը գտնուէ իր Լեւոն հօրեղբօրորդին, որ կառապանութիւն կ'ընէր:

Լոդոֆէթ Մերսին կ'անցնի, նաով կ'երթայ Ալեքսանդրէթ, ուր կը գտնուէ իր քոյրը՝ Ֆիլեանէն:

Հալէպի մէջ Լոդոֆէթ կը գտնուէ իր Ղապարոս եղբայրը: Վերջապէս կը հաստատուի Լիբանան:

5) Երուանդ Քեսպեքեան, «Էջեր Մեր Արիւնոյր Աքսորէն - Թապուր Աղասի Գասըմ Պէյ Եւ Ճիւճէ Ընկրի», էջ 520-523:

1915ին կը սկսի Եոզկապի տեղահանութիւնը: Երուանդ իր ծնողքին հետ կը յառաջանայ: Կը հասնին Ջալաթըր Քէօփրիսի կոչուած դաշտը, ուր Եփրեմ աղա Արսլանեանի գլխաւորութեամբ կը կաշառեն հրամանաւոր Գասըմ պէյը, բայց ջարդէ վերջ չեն մնար: 12 տարեկանէն վեր այր մարդիկը կը հաւաքեն ու կը տանին, իսկ մնացեալները՝ կիներն ու մանուկները, շրջակայ գիւղերը կը սրտուն, ուր անոնք ամիսներով իրենց կեանքը քարշ կու տան: Կը վերադառնան Եոզկապ եւ բռնի կերպով կ'իսլամանան:

6) Գրիգոր Պարիկեան, «Աքսոր Գէպի Հալէպ», էջ 524-527:

Հեղինակը ծնած է Եոզկապ քաղաքը: 1915ին ձերբակալութիւնները կը սկսին Եոզկապի մէջ: Ինք տունը կը մնայ ու որմնադարանի մը մէջ կը պահուրդի: Ոստիկաններ կը խուսափեն տունը, բայց սինք չեն գտնուիր: Քիչ ետք ոստիկաններու երկրորդ խումբ մը կու գայ: Գրիգոր այս անգամ պարտէ կը փախչի: Քանի մը դրացի հայ ընտանիքներու հետ միասին կը կաշառեն կառավարիչ Ալի Միւնիր Ճեմալը, որ կը կարգադրէ այս ընտանիքները ապահով կերպով Հալէպ հասցնել: Իրենց կարաւանը կ'անցնի Քելլէրէն եւ Պողայլեանէն, ուր կը կողոպտուին, սակայն ջարդուելէ վերջ կը մնան: Այս ճամբուն վրայ սարսափելի տեսարաններ եւ ջարդի հետքեր կը տեսնեն: Ճամբան թուրք խումբանը կը յարձակի, սակայն իրենց կարաւանին չէրթել պահակները կը կրակեն եւ խումբանը կը շեղէ իր ուղղութիւնը: Կը շարունակեն ճամբան մեծ դժուարութիւններով: Ոստիկանները կը նեղեն սինք

րենք, մինչև որ 30 հնչուն ոսկի կաշառք կը ստանան: Կը հասնին Կեսարիա, ուր Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեանին եւ անոր խումբին կը հանդիպին, ապա կ'երթան Տարսն (Թարսոս), Օսմանիէ եւ Իսլահիէ:

Գրիգոր Հալէպ կը հասնի առանց կորսնցնելու իր ընտանիքին որեւէ մէկ անդամը:

7) Յարութիւն Ժամկոչեան, «Հրաշքով Ազատած Մը», էջ 528:

Յուլիս 1915. ձերբակալութիւն, բանտ, սպանութիւն եւ տեղահանութիւն: Մանկահասակ Յարութիւն կը գտնուի այն կարաւանին մէջ, որ Քելլերի մօտերը կը ջարդուի: Ան դիակներուն փակէն հրաշքով դուրս կու գայ եւ կը վերապրի:

8) Յովհաննէս Ինճէ Յակոբեան, «Ինչպէ՞ս Սկսաւ Եղակարի Աքտորը», էջ 529:

Յուլիս 1915ին կը սկսին այր մարդոց ձերբակալութիւնները: Ձերբակալուածներուն մէջ կը գտնուի Յովհաննէսին հայրը: Անոնք կը քշուին Սեբաստիոյ ուղղութեամբ եւ ամբողջովին կը ջարդուին ձորի մը մէջ (հեղինակը կ'ակնարկէ Եարաշ անունով ձորին): 30-35 հայ հարուստ ընտանիքներ կաշառելով կառավարիչը, կը գաղթեն Հալէպ: Ասոնց մէջ են նաեւ Յովհաննէսն ու անոր ընտանիքը: Վրասաքաղաքէն փախչելով, անոնք Հալէպի ծայրամասային թաղերուն մէջ իրենց կեանքը վեց ամիս քարշ կու տան: Բախտը կ'ունենան փոխանակ Տէր Զօրի, Հարապլուսի կամ Պերէճիքի գիտերէն մէկը արտորուելու: Զինադադարէն ետք Յովհաննէս Պոլիս կ'անցնի:

9) Գրի առաւ` Ներսէս Մկրտչեան. պարամեց` երեւանաբնակ Օլեմի` Էգաճի Գամայէլի փոքր աղջիկը, էջ 530-531:

Եոզկարի 1915ի տեղահանութիւնը կը սկսի: Ոմանք ձիաքարշ կառքով, ուրիշներ եզներու սայլով, իսկ շապեր ալ հեղիտուն կ'ընթանան: Կարաւանը շուք փասը հապար հոգի կը հաշուէ: Օլեմի կ'ընկերակցի իր երեք քոյրերուն: Կը հասնին Քելլերի ձորին բերանը: Նախ կը կողոպտուին: Ապա իրենց կը հրամայեն

ձորն ի վար իջնել: Խուժանը ամէն տեսակ վէնքերով կը յարձակի Կոհերուն վրայ: Ջարդը 3-4 ժամ կը տևի: Օլեմի, վիրատը, գետրին կ'իյնայ: Առաւօտուն ան կը լսէ մարդկային խօսակցութիւններ: Կը տեսնէ Կարեյ կին մը եւ անոր հարսը, որոնցմէ կը խնդրէ Կինք սպաննել: Կեսուրը Օլեմիին կը խղճայ եւ իր Կունը Կանելով կը խնամէ աղջկան վէրքերը: Անոնք ղըզըլպաշ էին: Չէրքէյ երիտաւարդ մը գալով կ'առեւանգէ Օլեմիին, իր Կունը կը Կանի եւ կը սպառնայ սպաննել եթէ փորձէ փախչիլ: Այդուհանդերձ, Օլեմի բարեբաստիկ դիպուածով մը կ'ապարի:

Եռվկարի հայոց ջարդին պատասխանատուները եղած են Աֆիֆ Ֆիյապ պէյ եւ Պէօյիք Միֆթի Ալի էֆենդի:

10) Բսահակ Ղարիպեան, «Մպանդանոցի Ճամբուն Վրայ», էջ 532-534:

Նախակրթարանը ասարտելէն ետք, ուսումը շարունակելու համար, հեղինակը կը մեկնի Կեսարիա եւ Սբ. Կարապետ վանքը կը մտնէ: 1914ին Առաջին Համաշխարհային Պատերազմին ծագումով, ինչպէս ամէն տեղ, Կակնուրայութիւն կը սկսի նաեւ Կեսարիոյ մէջ: Բսահակ Կասնեակէ մը աւելի հայ երեւելիներու կախաղան բարձրացման ակնապրես կ'ըլլայ: Ան հօրմէն նամակ մը կը ստանայ, որու մէջ հայրը կը յորդորէր վերադառնալ ծննդավայրը՝ Պողպլեան: Վերադարձի Ճամբուն վրայ Բսահակ կը հանդիպի ձերբակալուած այր մարդոց կարաւանի մը, որուն մէջ կը տեսնէ իր հայրը: Կը հասնի Պողպլեան: Կը ձերբակալուի, սակայն շուտով ապար կ'արձակուի իր Կարիքին փոքրութեան շնորհիւ: Այս կ'ըլլայ ջարդէն իր ապարելուն պարճառը:

11) Յարութիւն Քիրքճեան, «Գայմագամ Քեմալի Գարավարութեան Վկան», էջ 535:

Եռվկարէն ճամբայ կ'ելլեն դէպի Քելլէր: Ճամբուն վրայ հայրը կը Կանին: Կ'առեւանգեն քոյրը, որ ոճրագործներէն կը խնդրէ Յարութիւնն ապարել Քելլէրի ձորին մէջէն: Թորքերը կ'ապարեն Յարութիւնը եւ գիտ կը Կանին: Քոյրը կը թունաւորեն:

1919ին Յարութիւն Պոլիս կը հասնի: Ռեմպի էֆենդիի թելադրութեամբ, բնիկ եռվկարցի փաստաբան Լեւոն Յարութիւնը եւ

անոր ազգականուհի Ասնի Քապաքեանը Քելլեր ձորի ջարդէն իբրև սկանապես վկաներ կը ներկայացնէ Պողապլեանի հայակեր գայմագամ Քեմալի դատավարութեան: Քեմալ կը դատուի եւ կախադան կը բարձրացուի:

12) Կարապետ Միաբանեան, «Մահուան Ճանապարհին», էջ 536-537:

1915ին Եոզկարի բոլոր երեւելի հայերը կը ձերբակալուին: Մեծահարուստ ընտանիքներ կը գաղթեն դէպի Արաբիա: Կարաանը ճամբայ կ'ելլէ Կեսարիոյ ուղղութեամբ: Կը հասնին Էլեքճիլէր: Աւելի քան 10 հազար մարդիկ կը խուսաբկուին եւ կը կողոպտուին: Ճամբայ կ'ելլեն եւ Քելլեր հայաբնակ գիտաքաղաքը կը հասնին: Կը տարուին Եարաշ ձորին բերանը, ուր թուրք խուժանը վիճուած կը սպասէր: Մօրը աղաչանքին վրայ՝ ոստիկան մը կ'ապարկէ Կարապետը, որ ողջ կը մնայ:

13) Յարութիւն Պէրպլեան, «Պողապլեանէն Երեւան - Անձնական Յուշեր Եւ Ականատեսի Վկայութիւններ», էջ 538-544:

Պողապլեանի գայմագամ Քեմալի հրահանգով կը ձերբակալեն հայ երիտասարդները եւ Ապպասի ջրաղացը փակելով կը ջարդեն: Պողապլեանի երեւելի հայերը լսելով այս դէպքին մասին, կը փութան այցելել Քեմալի, բայց բոլորն ալ կը ձերբակալուին ու բանտը կը դրուին: Նոյն օրը՝ 5 Յուլիս 1915ին, Պողապլեանի բոլոր հայազգի այր մարդիկը, 300 մարդ, այդ թիւին՝ Յարութիւնի հայրը՝ Տ. Յակոբ քահանայ Պէրպլեանը, կը ձերբակալուին: Կը հաւաքուին 500 այր մարդիկ եւ կը դրկուին Կեսարիոյ Եսվր Ջեփնի գիտը, ուր փակուած կողոպտելի երբ կը սպաննեն: Հայակեր Քեմալ դարձեալ կը յաջողի 250 այր մարդ ձերբակալել եւ փակուած դրկել Կեսաուր Տէրէսի կոչուած ձորը, ուր կը կոտորուին:

Յարութիւնն ալ կը ձերբակալեն, կը ծեծեն ու կը շարժարեն: Չայն միւս բանտարկեալներուն հետ կը փակուին Կեսաուր Տէրէսի, որու սպանդէն ան կը փախչի ուրիշ երկու հայերու հետ եւ քննիին տունը կ'ապաստանի: Իր պահուրդուած փեղէն ան Կեսաուր Տէրէսի տարուող կիներ եւ մանուկներ կը տեսնէ: Յաջորդ

օրը կը փեսնէ նոյնքան կիներ եւ մանուկներ, որոնք Գարա Գոչ ձորը կը փարուէին: Անոնց մէջ Յարութիւն կը փեսնէ մայրը, կինը եւ զաւակները: Ան կաշառքով կ'ազատէ իր կինը եւ զաւակները: Հոս կը մնայ մինչեւ զինադադար:

14) Խաչեր Պէրպէրեան, «Պողապլեանի Զարդը», էջ 545-546:

6 Յուլիս 1915ին Պողապլեանի հայ այրերը կը ձերբակալուին եւ կը բանտարկուին: Խաչերի եղբայրը իրենց փան պարտէզին մէջ կը թաքնուի եւ Խաչերը բանտ կը դրկէ իր քահանայ հօրմէն լուր առնելու համար: Տէր Հայրը որդիներուն գրատր կը թելադրէ իսլամանալ՝ ողջ մնալու համար: Յաջորդ օրը բոլոր բանտարկեալները կը փանին սպանդանոց-ձոր մը եւ կը սպաննեն:

15) Պապմեց՝ Վերոնիքա Պէրպէրեան-Մկրտիչեան, գրի առաւ՝ Ն. Մկրտիչեան, «Զարհուրանքի Օրեր Պողապլեանի Մէջ...», էջ 547-552:

Գայմագամ Զեմալ 4 Յուլիս 1915ին ձերբակալել կու փայ Պողապլեանի հայագի այր մարդիկը եւ փանոնք ջարդել կու փայ Ապպաս կոչուած ջրաղացին մէջ: Յաջորդ օր նորէն փղամարդոց ձերբակալութիւն փեղի կ'ունենայ: Վերոնիքայի փունը կը խուժեն եւ իր քահանայ մեծ հայրը կը փանին: Այս ատեն Վերոնիքա 8 փարեկան էր: Երեւելի մարդիկը բանտ, իսկ մնացեալները՝ զօրանոց կը դնեն: Զօրանոց փարուածները Գարա Գոչ գիտին ձորը կ'առաջնորդեն ու կը սպաննեն: Յաջորդ օրը նոյնը կ'ընեն բանտը գրնտողներուն հետ: Հօրեղբայրն իր արհեստին բերմամբ չի ձերբակալուիր, այսուամենայնիւ, ան կը թաքնուի փան մէջ: Բազմաթիւ հայ ընտանիքներ կը փեղահանեն եւ մերձակայ գիտերը կը դրկեն ձրի աշխատանքի համար:

Գայմագամ Զեմալ 6 Փետրուար 1916ին կը կազմակերպէ ուրիշ ջարդ մը, այս անգամ Կեսուր Տէրէսիի մէջ:

Երբ խուժանը կը հասնի Պէրպէրեաններու փան բակը, բարեկամ ոստիկանի մը միջոցաւ անոնք վնասուելէ եւ փեղահանութենէ վերջ կը մնան:

Գումգոյուցիներու հերոսական դիմադրութեան պատճառով

գիտը քարտուքանդ կ'ըլլայ: Վերապրողները Պողոսյան կ'ապաստանին, ուր հանդիպելով նոր վրանգներու, մօտ 50 կիներ եւ մանուկներ անձնասպան կ'ըլլան: Վերոնիքա ասոր ականապետ կ'ըլլայ:

Դրացի թուրքի մը փունը հայ կին մը անձնասպան կ'ըլլայ թոյն խմելով: Վերոնիքայի մեծ մայրը այդ փարաբախտ հայուհիին երեք որբերը իր փունը կը բերէ:

Վերոնիքայի Յարութիւն հօրեղբայրը բանակ կը փարուի: Ան 1917ին կը փախչի եւ փուն կու գայ:

Բաբերդցի Աննիկ անունով կին մը իրենց փունը կ'ապաստանի: Պէրպէրեանները բոլորէն գաղտնի կը պահեն այս եղբոր թիւնը: Վերոնիքայի ընտանիքը այսպէս կ'ապարէ հարիւրատը հայեր եւ անոնց հոգ կը փանի: Պէրպէրեանները մինչեւ 1918ի վինադարը Պողոսյան կը մնան:

16) Կարապետ Մելիքունեան, «Գարահալլըի Հայու Մը Կեանքին Վէպը», Երեւան, 1969, էջ 553-556:

1915ին Կարապետ 8 փարեկան էր: Գարահալլըի այր մարդիկը կը հաւաքեն եւ կը կոտորեն: Անոնց մէջէն ընդամենը մէկ երիտասարդ կ'ապարի, որ գիտ կը վերադառնայ, եւ, վինուելով, կը մասնակցի Ագրտի չորս փարի փետած ինքնապաշտպանական կռիւներուն:

Կարգը կու գայ գիտի կանանց, աղջիկներուն եւ մանուկներուն: Կարապետ իր եղբոր եւ ուրիշ ընկերներու հետ կը պահուրդի գոմին մէջ ու այսպիսով կ'ապարի: Երկար թափառումներէ ետք ան կը հասնի Անգարա, ուր մարդ մը կ'որդեգրէ վինք եւ հոգ կը փանի իրեն: Յեղափոխին Կարապետ կ'անցնի Ջմիւռնիա, ապա՝ Պոլիս, յետոյ՝ Պէրոյթ: Մեծ հայրենադարձութեան ժամանակ կ'երթայ Խորհրդային Հայաստան եւ հոն կը հաստատուի:

17) Պարսում Հաճի Եղիայեան, «Բռնագաղթ, Կոտորած Եւ Աքսոր (Գարահալլըին՝ Պուխոս Այրէս)», էջ 557-559:

1915ին Պարսումը 14-15 փարեկան է: Հօրը եւ գիտացիներուն հետ սայլերով Անգարա կ'երթայ փութերը վճարելու: Վերադարձին կը հանդիպին վրանգներու, որովհետեւ ջարդերն արդէն

սկսած էին: Ճամբան դիակներ կը տեսնեն: Մայրը սինք կը յանձնէ թուրք գիտացիի մը, որու մօտ կը մնայ որոշ ամիսներ: Գարահալլըի հայերը կը ջարդուին: Վրանգը նախապետելով, Պարսում կը փախչի շերքէյ մարդու մը քով՝ աշխատելու համար: Եղբորմէն նամակ կը ստանայ, անոր կը հանդիպի Կեսարիոյ մէջ եւ մինչեւ պինադադար հոն կը մնայ: Կ'անցնի Պէրթոթ եւ ապա Արժանթին:

18) Ալպեր Էլէնճեան, «Էլէնճեցի Մօր Մահը», էջ 560-562:

Եոզկապրի Էլէնճէ գիտէն Ալպերը 1915ին 10-11 տարեկան էր, քոյրը՝ 9: Գիտին մէջ շատ քիչ երիտասարդներ մնացած էին, անոնք ալ փախստական էին: Մեծ մասը ստրակոյի պատճառով բանակ գացած էր:

Գումգոյու գիտը կ'որոշէ դիմադրել: Մայրը Ալպերն ու քոյրը առնելով Գումգոյու կ'երթայ, յետոյ կը վերադառնան Էլէնճէ: Շատ դժուարութիւններու եւ վրանգներու կը հանդիպին: Մայրը եւ քոյրը կ'որոշեն Եոզկապր երթալ: Ճամբան գամբներ մայրը կը յօշոտեն: Ալպեր քրոջը կը տանի Եոզկապրի որբանոցը եւ ապա ինք կը միանայ անոր:

Ալպեր կ'անցնի Կեսարիոյ Սր. Կարապետ վանքի որբանոցը: 1925ին ան Լիբանան կը հաստատուի:

19) Երուանդ Զէքիեան, «Շայ Վերոսի Մը Խաչելութիւնը», էջ 563-564:

Ոստիկան-պինտորներ կը խուժեն Եոզկապր քաղաքի հայ տները՝ սինք փնտրելու պատրուակով: Յաջորդ օրերուն կը ձերբակալեն Առաջնորդը՝ Ներսէս արք. Դանիէլեանը եւ միւս երեսելիները, պանոնք կը քշեն Սեբաստիոյ կողմերը եւ կը կոտորեն ձորի մը մէջ: Կը հրամայեն ստրուներու ընտանիքները արտրել: Տարագրութեան առաջին եւ երկրորդ կարաւաններէն ետք 350 այր մարդիկ կը ձերբակալեն, որոնց կը տանին Մարը Թոփ-րաքլըի կողմերը եւ կը սպաննեն, իսկ Եոզկապրի մէջ մնացած հայերը շուրջի գիտերը կը սպաննեն:

Առաքել աղա Մարկոսեան եւ քաջասիրտ եղբայրը՝ Արիստոյմ

կը պարպեն Էյլենճէ գիւղը ու դիրք կը բռնեն Գումգոյու գիւղի քաջերուն հետ: Անոնց կը միանայ բէօհրէնկցի հոչակատր մարտիկ Շաճի Պէյ Փափապեանը: Մէկուկէս ամիս կռուելէ ետք անոնք կը կտրեն պաշարումի շղթան: Արիստողոմ կը բռնէ Պուտուն Գըշլայի ուղղութիւնը, ուր մափնուելով կրօնափոխ հայու մը կողմէ, կը ձերբակալուի եւ չարչարանքներով կը նահապակուի:

20) Հայրապետի Չուաքեան, «Թերպիլիցի Որբի Մը Յուշերը», էջ 565-566:

Հայրապետի հայրն ու մեծ հայրը կը ձերբակալուին Թերպիլի գիւղաքաղաքին մէջ, չարաչար ծեծի կ'ենթարկուին եւ կը սպաննուին գիւղին այր մարդոց հետ: Ամրան կէսին գաղթի հրաման կու գայ: Սայլերով ճամբայ կ'իյնան բոլորը: Կարաւանին առջեւէն քալող 10-12 փարեկան մանչերը կը փանին եւ կը սպաննեն: Կը հասնին Գապարգ շէրքէվարնակ գիւղը, ուր իրենց կ'ըստի, թէ այլեւս ապար են: Մայրը կ'առնէ վինք եւ կը վերադառնայ Թերպիլի, ուր մայրը կը մահանայ: Երկու հայեր Հայրապետը կը պարսպարեն եւ Եոզկափի որբանոցը կը դրկեն: Երբ քեմալականները Եոզկափը կը գրաւեն եւ որբանոցի փնտրէնն ու մափակարարը կը սպաննեն, որբերը Կեսարիա կը փոխադրուին, ապա Մերսինի միջոցով Պէրտոթ կը փարուին:

21) Լեֆթէր Պաղամեան, «Էջ Մը Սարսափներու Գիրքէն...», էջ 567:

Վեդինակը ծնած է 1908ին, Թերպիլի: 1914ին հայրը սինտոր կը փարուի: Յուլիս 1915ին ոսրիկանները փեղահան կ'ընեն կիներն ու մանուկները եւ պանոնք մերձակայքի թրքական գիւղերուն կը բաժնեն իբր պարտերապմական գերիներ: Մայրը եւ փոքր եղբայրը հիւանդանալով կը մահանան: Լեֆթէրը Մէօլէմէվ թրքաբնակ գիւղը կը մնայ: Զինադադարին հայրը գիւղ կը վերադառնայ, բայց սրտի կսկիծէն կը մահանայ: Վորտըբայրը Լեֆթէրը Եոզկափի որբանոցը կը դնէ: Քեմալականները կը յարձակին որբանոցին վրայ, կը կողոպտեն եւ փնտրէնն ու քանի մը հոգի կը սպաննեն:

22) Աբրահամ Պարսամեան, «Թերպիլի Կոտորածը», էջ 568:

Քանի մը թուրք ռճրագործ պատասխանատուներ 70 ձիաորով Թերպիլի կու գան: Մուներիկի մը միջոցաւ այրերը կը հաւաքեն եւ կը սպաննեն, մնացեալները կը չարչարեն, գեղեցիկ հարսերն ու աղջիկները կը խլեն ու բազում չարչարանքներ կը գործադրեն անոնց նկատմամբ: Աբրահամ կ'ապարի հայ փղամարդոց ջարդէն: Նոյն ճակատագրին կ'ենթարկուին Քարա Եաղուպ, Մըրըխար Չաթ, Մենթեշէ եւ Իւրնէճ հայկական գիւղերը:

23) Յ. Բուշանեան, «Եւ Կեանքս Կը Պարտիմ Մեր Շան...», էջ 569-571:

Յ. Բուշանեան՝ 8-10 ամսուայ երեխայ, մօրը գիրկը, Չորխուրանի կարաւանին մէջ մորթուելու կը փարտի 1916ի Յուլիսին կամ Օգոստոսին: Մայրը կայինի հարուածը վիպին սպանալէ ետք, կը սողայ եւ վաւակը ժայռի մը ու մայառի մը քով կը թողու: Մայրը կը նահապակուի: Հայրը եւս կը նահապակուի՝ կռուելով թուրքերուն դէմ: Իրենց շունը՝ Չափար, կը գրնէ մանուկը, իր մօրեղբօրորդիին՝ Մամուլի եւ հովիւներու ներկայութեան: Հովի Իպրահիմը կ'ապարէ երախան, կը մեծցնէ պայն ու հոգ կը փանի անոր: Զինադադարին՝ Մամուլի որբանոց կը դնէ երախան եւ ապա Ֆրանսա կը փանի:

24) Անդրանիկ Աւերիսեան, «Իյրէլիի Զարդը», էջ 572:

Իյրէլիի եւ շրջակայքի հայկական գիւղերու երիտասարդութիւնը պօրակոչի կ'ենթարկուի: Միջին փարիքի մարդիկ եւ պատանիներ պօրքին պարէն փանելու պատրուակով՝ Անգարա կը դրկուին: Այսպիսով գիւղերը իրենց այր մարդոցմէ կը պարպուին:

Իյրէլիի մօտերը կայք հաստատած չէրքէպներու գիւղապետը Յուլիս 1915ին վինեալներով գիւղ կը մտնէ եւ Գրիգոր Գալուստեան մեծահարուստին փան մօտ դիրք կը բռնէ: Կռիւր կը սկսի եւ չէրքէպներէն հինգ հոգի կը սպաննուի: Երեք օր յետոյ 500 ոստիկան-վիստորներ գիւղ կը մտնեն, մնացած հայ փղամարդիկը կը ձերբակալեն ու մօտակայ ձոր մը փանելով կը սպաննեն: Ասկէ վեց-եօթը ամիս ետք փեղի կ'ունենայ գիւղին կիներուն եւ

մանուկներուն ջարդը:

25) Ա) Մելվինապ Եսայի Տէրպէրեան, «Արիւնոյր Պապկերներ Կիւլեճիէն», էջ 573-574:

Վեղինակը ծնած է 1889ին, Պողապլեան գաւառակի Կիւլեճի գիւղը, որ շուրջ չորս հարիւր հոգի կը հաշուէր: Օր մը, գիշեր ատեն, թմբուկի ձայն կ'առնեն: Թուրքերը կը հաւաքեն հայ տղամարդիկը եկեղեցիին մէջ: Առաւօտուն վանոնք չորս-չորս իրարու կապելով կը փանին եւ կը սպաննեն Կեսաուր Տէրէսի կոչուած ձորին մէջ: 15 օր ետք, կիները եւ մանուկները սայլերու վրայ կը փանին ձոր մը, ուր սինուած թուրք խուժանը կը կոտորէ վանոնք: Մելվինապը բախտով ողջ կը մնայ քանի մը ուրիշ տղոց հետ: Թուրք կին մը իր տունը կը փանի վայն իբր սպասուի: Ջինադադարին կ'անցնի Պոլիս եւ ապա 1927ին՝ Խորհրդային Ղայասփան:

Բ) Բարունակ Յովհաննէս Քեշիշեան, էջ 574:

Այրերը կը ջարդուին Յունիս 1915ին, իսկ կիները եւ մանուկները՝ 15 օր ետք: Բարունակը ողջ կը մնայ ականատես ըլլալու համար ուրիշ չորս երախաներու սպանութեան: Մայրը, որ առեւանգուած էր, սինք կը գտնէ: Ջինադադարէն ետք Բարունակ կ'անցնի Պոլիս եւ Խորհրդային Ղայասփան կը հայրենադարձուի 1927ին:

26) Կարապետ Աւագեան, «Մենթեշի Ողբերգութիւնը», էջ 575-576:

Ղայրապետ էֆենտի անդամ ըլլալով Պողապլեանի կառավարութեան՝ տեղեակ կը դառնայ իթթիհատականներուն ոճրային ծրագիրներուն: Մենթեշի հնչակեանները երկու նամակ կը խմբագրեն, մէկն ուղղուած Եոզկատի Առաջնորդին, միւսը՝ Ղնչակեան Կուսակցութեան Կեսարիոյ կեդրոնին: Արդէն ուշ էր: Այրերը կը հաւաքեն եւ կը սպաննեն: Կիներն ու մանուկները աւելի ուշ կը կոտորուին: Շատ քիչեր կ'ապարին:

27) Յակոբ Ելէլէնեան, «Ղրաշքով Վերապրած Ղայ Մա-

նուկ Մը», էջ 577:

Մենթեշէ գիտի հայ Կոմարտիկը Կարած էին: Փախստական հայերը թաքնուած էին: Օր մը կը հաւաքեն կիներն ու մանուկները եւ կը քշեն: Անոնք գիտէ գիտ կ'անցնին: Տեղ մը թուրք խուժանը կը յարձակի իրենց վրայ: Յակոբի եղբայրը ուրնակոյս կ'ըլլայ: Մայրը հիանդ ըլլալով՝ չի կրնար քալել: Թուրքերը զայն ողջողջ կը թաղեն, մնացեալները կը կոտորեն եւ հորի մը մէջ կը նետեն: Յակոբ երեք օր հորին մէջ կը մնայ: Թուրք անցորդ մը լսելով անոր լացին ձայնը, կ'ապարէ եւ կ'որդեգրէ զայն, բայց ապեն մը ետք Կոմունիստ Կոմունիստ կը նետէ: Յակոբ ամիսներով փողոցները կը թափառի՝ քարջ Կոմունիստ իր կեանքը: Ան կը գտնէ իր հայրը, որ ողջ մնացած էր:

28) Վահան Նազարի Գալթաքեան, «Այսպէս Ապրեցանք՝ Մեռնողներուն Երանի Տալով...», Երեւան, 1970, էջ 578-583:

Վահան ծնած է 1908ին, Եոզկատ գաւառի Պողոսեան գաւառակի Մենթեշէ գիտը: Տարագրութեան ժամանակ հայ այրերը կը հաւաքեն եւ չարչարանքով կը սպաննեն: Կը մնան կիները եւ մանուկները: Թուրք դրայիները իրենց հարստութիւնները կը պահանջեն: Այս միջոցին, Ագուաղ կոտող չորս ապստամբութիւններ իրենց Կոմունիստ կ'այցելեն: Մեծ մայրը կ'ընդունի զանոնք: Թուրքերը անոնց մուտքը նկատելով՝ դուռը կը բխեն: Հայ քաջերը երկու ոստիկան կը սպաննեն դրան առջեւ: Կատուած թուրքերը իրենց Կոմունիստ կրակի կու տան:

Մնացեալ կիներն ու մանուկներն ալ գաղթեցնելու հրաման կու գայ: Վահան եւ քոյրը չէրթէվ ձիաւորի մը շնորհիւ կ'ապարին: Մնացեալները կը կողոպտուին ու կը կոտորուին: Զիրենք ապարած Հաճի Աղան Վահանի մօրեղբօր կիներ առեւանգած էր: Անոնք միասին կ'ապրին:

Նոյեմբեր 1918ին, Վահանը եւ քոյրը Հաճի Աղային մօտէն դուրս գալով կ'երթան Մենթեշէ, խնամապար հայ ձեռքերու կը յանձնուին եւ Կեսարիոյ որբանոցը կը Կոմունիստ: Թուրքերը որբանոցին հայ ուսուցիչները կը ձերբակալեն: Որբերը կ'ապրին ահ ու դողի մէջ եւ Թալասի որբանոցը կը փոխադրուին: Հոնկէ Վահանը եւ մօրեղբօրորդին կը փախչին ու կ'երթան Մենթեշէ: Կը

վերադառնան Կեսարիա: Ապա Մերսինն էն նա առնելով կը հասնին Յունաստան: Վահանը Խորհրդային Հայաստան կը հայրենադարձուի 1932ին:

29) Կիլիպէնկ Բ. Վարդանեան, «Անհետ Կորած Հայ Գիւղի Մը Ողբերգութիւնը», էջ 584:

Հեղինակը Մեծ Եղեռնի ժամանակ 14 տարեկան էր: Ծնած է Եոզկար գաւառի Մըրըլսար Չաթ գիւղը: 1915ի գարնան թուրք սուրբականներ գիւղին տուները խուժելով սնտուրահաւաք կ'ընեն, իրենց հանած աղջիկները եւ հարսերը կը խլեն: 1915ի ամառը այրերու ձերբակալութիւն տրեղի կ'ունենայ: Ապա կիները եւ մանուկները կը քշեն: Վերջին կարասնը կը տարուի Քերփիչձեք գիւղը, ուր կը ջարդուի: Այս ջարդէն ապաւած Կիլիպէնկը ուրիշ մանուկներու հետ գիւղ կը վերադառնայ: Անոնց պէս ուրիշներ ալ վերադարձած էին: Հոս ամենօրեայ չարչարանքներու եւ հալածանքի կ'ենթարկուին: Վերջապէս կը ձերբակալեն Կիլիպէնկը եւ Եոզկար կ'ուղարկեն: Ճամբան ան կը յաջողի փախչիլ եւ թուրքի մը տունը ապաստանիլ, ուր ամենօրեայ հացի կտորի մը համար կ'աշխատի, ապա Կեսարիոյ որքանոցը կը պարսպարուի: Այնուհետեւ կ'անցնի Յունաստան, իսկ 1932ին կը հայրենադարձուի Խորհրդային Հայաստան:

30) Պարմէյ Լեոն Բելլեձեան, «Ինճիրլիէն Մինչեւ Ամերիկա», էջ 585:

Հեղինակը ծնած է 1903ին, Ինճիրլի գիւղը: 1915ին հայ տղամարդոց հետ Լեոնն ալ կը ձերբակալուի եւ կը կապուի հօրը հետ: Հօր թուրք բարեկամը Ճամբան կ'ապարէ Լեոնը եւ իր տունը կը տանի, ուր կը մնայ մէկուկէս տարի, ապա ուրիշ գիւղ մը կը փախչի: Ետը թափառումներէ ետք վերջապէս կ'ապաստանի Ավանըզի ենթակայ Սէէրի թիրքմէնաբնակ գիւղը՝ իր հօր բարեկամ Ռիպա էֆենտի կոչուող բարի մարդու մը քով: Աւելի ուշ, միջոցներ գտնելով, կը մեկնի Ամերիկա:

31) Գրեյ Յակոբ Իրիրեան, պարմէյին Յակոբ եւ Զամիդա Մարեան, «Ուսումնորի Ջարդը», էջ 586-587:

1915ի Յուլիսին, Ուլունլուի մէջ թուրքերը հայ պատանի մը կը սպաննեն, որու կը յաջորդէ ես երկու հայոց սպանութիւնը: Այրերը կը հաւաքեն եկեղեցին եւ քշելով ամայի ձոր մը՝ կը սպաննեն: Փետրուար 1916ին կարգը կու գայ կանանց ու մանուկներուն, սակայն Սիմէր էֆենդի անունով բարեսիրտ թուրք մը կը հակառակի ջարդին եւ իր փոս մէջ 40 կիներ, աղջիկներ ու մանուկներ կը պատսպարէ: Անոնց մէջ է նաեւ Ջամիդա Սարեանը: Ուլունլուի երեւելիներէն վեց հոգի, նախազգալով վտանգը, ապաստանած էին այգիին մէջ: Օր մը թուրքերը աստնցմէ հինգը կը սպաննեն: Վեցերորդը իր վէնքով կը դիմադրէ, սակայն կը սպաննուի:

2500 հայ բնակիչ հաշուող Ուլունլուէն միայն յիսնեակ մը հայեր կ'ապարհին:

32) Պատմեց՝ Բենիամին Նաճի Մանուկեան, «Երբ Ուլունլուցին Կը Յիշէ», էջ 588-590:

Նայ Կողմարդիկը հաւաքելէ եւ ջարդելէ ետք, Սեպտեմբեր 1915ին Կեղահան կ'ընեն ամբողջ Ուլունլուի բնակչութիւնը: Աքարականները 60 քլմ. հեռու եղող Պէքթաշլը կը հասնին: Արեն մը ետք կը վերադառնան Ուլունլու: Նոս բաւական նեղութիւններու կը հանդիպին: Մով կը սկսի: Նարուստ մարդ մը Բենիամինը գործատր կը փոսնի իր մօտ: Արեն մը ետք Բենիամինին մայրը փնք փուն կը բերէ: Կը մտնէ Պողապլեանի որբանոցը, իսկ 1923ին մօր հետ Պէրուք կը փոխադրուի:

33) Պատմեց՝ Կիրճի Քելեշեան, «Չաքմաքի Եղեռնը», էջ 591-598:

Չաքմաք գիւղի հայերը կը Կեղեկանան Ապպասի ջրաղացի ջարդին մասին: Անոնք կը պատրաստուին ինքնապաշտպանութեան համար Ագրաղ բարձրանալ: Զգալով հայոց ոյժին Կելարութիւնը, թուրքերը գիւղը կը խուժեն՝ ջարդն սկսելու համար: Միսաք Քելեշեան իր խումբով գիւղին ծայրը դիրք բռնած՝ կը դիմադրէ: Թուրքերը կը ձեռքակալեն գիւղին մէջ մնացած այր մարդիկը՝ շուրջ 250 հոգի եւ Եողունիսի կոչուած գիւղին մօտ կը սպաննեն Կանոնք: Կիրճիի հայրը՝ Յովհաննէս Քելեշեան, որ Անգարայի

բանսն էր, ապա արձակուելով կու գայ Չաքմաք: Ան իր բարեկամն՝ Ճամպապ Մեհմէտին կը խնդրէ իր ընտանիքը պաշտպանել: Մեհմէտ Յովհաննէսի ընտանիքը կը տեղատրէ Պայրագըր գիւղի շէրքէպներուն մօտ: Հայրը Ագրաղի ճամբուն վրայ կը սպաննուի իր 45 ընկերներով, իսկ մայրը Թեքքէ թրքական գիւղը կը տարուի: Կիրճի ակնապետ կ'ըլլայ Քելլէրի գիւղերու 4000ի հասնող կանանց եւ մանուկներու ջարդին: Կիրճի Մեհմէտի գործին բերումով գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք կը շրջի:

Մայրը, քոյրը եւ ազգականները նոր ջարդի մը ստիպուելով կ'երթան Եոզնուի գիւղին մէջ՝ շուրջ 100 հայ կանանց եւ երախաներու հետ: Կիրճի պարսպարան կը գտնուի երկու բարի թուրք կանանց մօտ:

Կիրճի 19 տարեկանին, 1922ին, Պողոսեանի մէջ անցագիր կ'առնէ եւ դուրս կու գայ Թուրքիայէն:

1966ին Պէրուքէն Չաքմաք կ'այցելէ եւ իր տունը կը տեսնէ:

34) Գրեյ՝ Նորիցա Փիլիպպոսեան (ծնեալ՝ Թալեան), «Չաքմաք Գիւղաքաղաքի Պաշարումը», էջ 599-602:

Ապաասի ջրաղացի ջարդէն ապաւած Ջանիէլ Թորոսեանն իր ձիով Չաքմաք կը հասնի եւ բնակիչները կը ստիպուի: Չաքմաքիները խորհրդակցական ժողով կը գումարեն: Կը դիմեն Պայրագըր Պեքիի, որ պաշտպանէ վիրենք, սակայն ի ստիպում: Պարտիքակ կը դրկեն Պոռնուս Գըշլայի հայրութեան: Բայց ապարդին: Կազմակերպուելու ժամանակ չի մնար: Թուրքերը այրերը կը հաւաքեն հայոց եկեղեցիին մէջ, ապա կը սպաննեն ստիպումը, ինչպէս նաեւ Անգարայէն վերադարձող սայլապանները: Գիւղին մէջ կը հաստատուին թուրք ոստիկաններ, որոնք կողոպտուր եւ սպանութիւն կը գործադրեն:

35) Պապուեյ՝ Հաճօ Թալեան, «Ակնապետ Վկաներ՝ Զարհուրանքով Լեցուն Տոսմ Մը», էջ 603-605:

Հաճօ ծնած է 1900ին, Չաքմաք: Մեծ Եղեռնին՝ այրերը սպանելէ ետք, կը յարձակին գիւղին վրայ եւ սպան կը պաշարեն: Վարժուի Նորիցա Թալեան-Փիլիպպոսեան իբր հայ բողոքական հեռագիր կը դրկէ Պոլիս՝ Ներքին Գործոց Նախարարութեան:

Հրահանգ կու գայ ջարդերը դադրեցնել: Այս միջոցին բազմաթիւ հայ գիտաւոյններ շրջակայ գիտերը կը սրուին: Հաճօ Եողուն-Հիսար կ'երթայ եւ կ'ապաստանի թուրքի մը մօտ, իբր հովի: Իր հովուութեան շրջանին, հայոց նկարամամբ թուրքերու գործադրած բազմաթիւ ոճիրներու ականատես կ'ըլլայ եւ իր կեանքին սպառնացող վտանգներու կը հանդիպի:

36) Յակոբ Վ. Գասպարեան, «Չաթի Պատանիի Մը Ողիսականը», էջ 606-607:

Մեծ Եղեռնի սկիզբի տարին Յակոբը 13 տարեկան եղած է: Արանայի Միքայէլ եւ ետակարոյի Մանուկ Չաթ գալով երիտասարդներուն խորհուրդ կու տան յարձակիլ ռուսականներուն վրայ եւ անոնց սպանելն ու սպանները գրաւել: Մակայն, Չաթի երեւելիները արգելք կ'ըլլան: Միքայէլ եւ Մանուկ կը ձերբակալուին, Անգարա կը դրկուին եւ կախաղան կը հանուին: Ոստիկանները Չաթ մտնելով կը ձերբակալեն բոլոր տղամարդիկը, ծերերը, պատանիներն ու կիները եւ բոլորը կը կոտորեն Արէն կոչուած դաշտին մէջ: Յակոբի մայրն ու ծօկեր եղբայրը հոս կը նահատակուին: Ինք հօրը հետը լեռն ըլլալով կ'ապաստանի: Յակոբ չորս տարի տառապալի կեանք մը կ'ունենայ:

Հայրը, հօրեղբայրը, եղբայրը եւ ինք լեռնէն վար իջնելով Կեսարիոյ մօտերը Ջինճիրտէի ամերիկեան գոլէճը կ'ապաստանին: Հայրը եւ հօրեղբայրը կը վերադառնան Ագտաղ եւ իրենց մինչեւ վերջին շունչը կը կուտին: Հոս ու հոն բաւական թափանելէ ետք Թալասի ամերիկեան գոլէճը կը հասնին:

37) Ռուբէն Յ. Էմմիեան, «Չորխտտանէն Վերապրողի Մը Պատմութիւնը», էջ 608-610:

Ռուբէն ծնած է 1904ին, Պողոսեանի Չորխտտան գիւղը: Ծնողները սոցիալական կ'ընտան 1915ի ջարդերուն եւ ան որք կը մնայ: Իր հօրը բարեկամ Մալիք էֆենտին, որ Չանտրըր գիւղին մէջ կը բնակէր, սայն իբր ծառայ կը տանի իր տունը, ուր կը մնայ մինչեւ 1919ի վերջերը: Նոյն տարին կը տարուի Պողոսեանի որբանոցը, հոնկէ՝ Թալաս, Կեսարիա եւ ապա Պէրտոյ: 1926ին կ'անցնի Ֆրանսա, իսկ 1946ին կը հայրենադարձուի Խորհրդային Հայաստան:

րան:

Ռուբէն կը յիշէ, թէ ինչպէս 1914ի գարնան, բանակ փանելու պատրուակով 1845 փարեկան փղամարդիկը հաւաքեցին եւ կոտորեցին: Կը պարմէ նաեւ 1915ին պատահած առեւանգումներու, կողոպուտներու եւ սպանութիւններու մասին:

38) Գարեգին Թաշճեան, «Պոռուն Գըշլայի Ջարդը», Պէյրութ, 1968, էջ 611-612:

Զանիէլ Թորոսեան, ապաքած ըլլալով Ապպասի ջրաղացի ջարդէն, 4 Յուլիս 1915ին սեւ լուրը հաղորդած էր նախ՝ Չաքմաք, ապա իր ծննդավայրը՝ Պոռուն Գըշլա, որպէսզի ժողովուրդը ինքնապաշտպանութեան դիմէ: Ան շիփակ Ագփաղի լեռները կ'ողողոյի: Թուրքերը հայ հովիւները կը սպաննեն: Պոռուն Գըշլայի մեծատրներէն չորս աղաներ կ'ապաստանին Սելիմի գիւղը՝ իրենց թուրք բարեկամ Սալիֆ Գարաքելլէի մօտ: Քսան օր ետք թուրքերը իմանալով գաղտնիքը, կու գան եւ կը սպաննեն պանոնք: Կը հաւաքեն 120ի չափ այրեր եւ Պողպլեանի մէջ ջրաղացները փլել կու փան փոհերուն վրայ: Կը կողոպտեն Պոռուն Գըշլայի եկեղեցին եւ շուկան, կը յարձակին փոսներու վրայ եւ մշտապէս կը կողոպտեն:

Վայրար պէյ օր մը հեփախուսութեան ժամանակ քարայրի մէջ պահուրդած երեք հայեր կը նշմարէ: Վայերը ինքնապաշտպանութեան կը դիմեն վէնքերով, բայց ի վերջոյ կը ձերբակալուին: 35 հոգի ապաստանած էին թաքստոց մը, փոքր թուրքերը կը պաշարեն: Վայերը ինքնապաշտպանութեան կը դիմեն, բայց ի վերջոյ գերի կ'իյնան: Ոմանք փախուստ կու փան: Արիստողոմ Առաքելեան կը դիմադրէ հերոսաբար, բայց անձնատուր կ'ըլլայ, կը փորձէ փախչիլ, բայց կը սպաննուի: Պոռուն Գըշլայի հայերը փրկահան կ'ըլլան: Կիներէն եւ մանուկներէն ողջ մնացողները շրջակայ գիւղերը կը ցրուին: Առաջին ջարդէն վերապրողները հաւաքելով՝ 1916ի Փետրուարին երկրորդ ջարդը կ'իրականացնեն:

39) Վայրապետ Պէնլեան, «Կոտորածի Ճանապարհներուն Վրայ», էջ 613-616:

Վայրապետ ծնած է 1899ին, Պոռուն Գըշլա: 1915ին ուսումը

կիսաւարտ թողելով՝ Կեսարիայէն ծննդավայրը կը վերադառնայ: Այրերը կը հաւաքեն եւ կը տանին: Կը պատահի Ապպասի ջրադայի սպանդը: Թուրքերը հայ հովիւները կը սպաննեն: Պողպալեանի երկու քահանայ հայրերը կը ձերբակալեն եւ Հայրապետի մեծ հայրը՝ Տուրսունը, կը սպաննեն: Թուրքերը կը խուժեն Պուռուն Գըշլայի տուները եւ այրերը նորէն կը հաւաքեն, կը տանին Ախարճա ձորը ու կը սպաննեն:

Հայրապետը, հայրը եւ ուրիշներ կը մտնեն թաքստոց մը, սոր թուրքերը կը գտնեն: Հայրապետը կ'ապարի եւ կանայի հագուստներ հագնելով կ'ապաստանի իր մօրեղբօր տան թաքստոցը: Ընտանիքին բարեկամ թուրք վաճառական Նայիլ պէյ Հայրապետը իր մօր կ'առնէ որպէս գրագիր: Այս միջոցին գայմագամ Քեմալ պէյ Փետրուար 1916ին կրկին կը հրահանգէ սպաննել մնացած հայերը: Նայիլ պէյ Հայրապետը կ'աշխատուի հողագործութեան մէջ: Հայրապետը հնարքով մը կը յաջողի հասնիլ Ագփաղ Մարէն՝ իր հօրը բարեկամ Ֆայիք էֆենտիին մօր: Այս վերջինը պայն իր պաշտպանութեան տակ կ'առնէ: Հայրապետը դրամ կը վաստակի հոս եւ մայրն ու ուրիշ որբեր իր մօրը կը բերէ: Մինչեւ 1919 հոն կը մնան: 1923ին ընտանիքին հետ կ'անցնի Բսկէնտէրուն, ապա՝ Պէրուք:

40) Հռիփսիմէ Հաճը Յարութիւնեան, «Ականապետի Վկայութիւններ Սունկուրլուին», էջ 617-618:

1915ին Հռիփսիմէ 11 տարեկան էր: Քսանեակ մը հնչակեաններ բանտը կը դրուին: Ամասիայէն եւ Մարտուանէն հայ աքաղաղականներ կը հասնին՝ Եոզկար դրկուելու համար: Կը ձերբակալուին Սունկուրլուի հայ տղամարդիկը, ապա կը հաւաքուին կիներն ու տղաքը, թիով 350 հոգի, եւ Եոզկարի ճամբուն վրայ Գասըլը Պողպալի մէջ կը ջարդուին: Հռիփսիմէ եւ մայրը կը գտնուին կիներու երկրորդ կարաւանին մէջ, որ 480 հոգի կը հաշուէ: Զիրենք Սունկուրլուի պանդոկը կը հաւաքեն: Գայմագամը հոս 100 աղջիկ կ'ընտրէ թուրք հարէմներուն նուիրելու համար եւ անոնց կ'առաջարկէ իսլամանայ: Ոչ ոք կ'ընդունի: Ուստի, անոնք ճամբայ կը հանուին եւ երեք օր վերջ Գասպաթ Թեմիէ կոչուած վայրը կը հասնին: Ապա կը տանին ձոր մը, ուր սինուած

խուժանը կը յարձակի իրենց վրայ: Ոստիկան Նուրի, որ իրենց ընտանիքին ծանօթ էր եւ օգտուած անկէ, իր պաշտպանութեան փակ կ'առնէ Հռիփսիմէն եւ ազգականները՝ թիով 26 հոգի: Յաջորդ առօրէի, այս նոյն ոստիկանը ծեր կիները սպաննել կու տայ: Երրորդ օրը Նուրի վիրենք գիտի իմամին կը յանձնէ: Նուրի Հռիփսիմէի 9 փարեկան եղբայրը՝ Սեպուհը, կ'որդեգրէ: Եռակարգի թուրք բարեկամ մը վիրենք կը փեղատրէ ցանապան յարմար փունտրու մէջ:

41) Վահէ Կեօկերեան, «Մունկուրլուին Մինչեւ Գորֆու Եւ Երեան», էջ 619-620:

1915ի ամառը հեղինակին հայրը կը ձերբակալուի: Քանի մը օրուան մէջ կը ձերբակալեն Մունկուրլուի բոլոր այր մարդիկը եւ Չանդըրը փանելով փոսի մը մէջ կը սպաննեն: Շատ չանցած՝ ամբողջ բնակչութիւնը փեղահան կ'ընեն: Գիշերը կը հասնին Գորըք կոչուած փոքրիկ գիտը, ուր կողոպտուի եւ յարձակման կ'ենթարկուին: Վահէի մեծ մայրը կը սպաննուի: Կը վերադառնան իրենց ծննդավայր գիտը: 1918ին Արանայէն օգնութեան կը հասնի Վահէի մօրեղբայրը: Մայրը իր երեք ցաւակները որքանոց կը յանձնէ: Կը փարուին Գորֆու: 1925ին Վահէ որբերով կը հասնի Մակեդոնիա՝ Ալիստրափ գիտաքաղաքը: Հոս որբերը կը վաճառուին փեղայիներուն: Վահէ ալ կ'երթայ մարդու մը հետ (Երեանի անունը թէ՛ եւ յիշարակուած է վերնագիրին մէջ, սակայն շարադրանքին մէջ ան կը բացակայի):

42) Փանոս Զորդեան, «Մունկուրլուի Մը Եղեռնի Յորձանուրին Մէջ», էջ 621-625:

Անգարա ուսանող եղած շրջանին, հեղինակը հօրմէն նամակ կը ստանայ Մայիս 1915ին, եւ կ'իմանայ, թէ յիսունէ աւելի սունկուրլուի հնչակեաններ, ներառեալ՝ իր հօրեղբայրը, ձերբակալուած են: Փանոս բանտ կ'այցելէ: Երկրագործական վարժարանի իր թուրք ընկերը կ'իմացնէ իրեն, թէ բոլոր հայերը պիտի կոտորուին: Մէկ շաբաթ ետք ան կրկին բանտ կ'այցելէ, բայց հոն մարդ չի գտներ: Բոլորն ալ փարած եւ սպաննած էին:

Հայերը պիտի բնաջնջուէին Թուրքիոյ որոշումով եւ Գերման-

իոյ հաւանութեամբ: Տարուան հունձքը քաղելու համար աշխատող ձեռքեր պիտի չըլլային: Ասոր համար Գերմանիա հապարատը հնձող մեքենաներ յանձնած էր Թուրքիոյ: Այս մեքենաները ուսանողները գործի պիտի դնէին: Եոզկապի քաղաքապետ Վաճի Ահմէտը պէյ կ'ըսէ Փանոսի, որ անոր բաժին ինկած է Եոզկապի արեւելեան եւ հարաւային շրջանները: Փանոս կը մեկնի Քէօհնէ: Վասնելէն քիչ ետք ան նամակ մը կը ստանայ Վաճի Ահմէտէն, որով իրեն կը հրահանգէ Պողպալեան երթալ: Մակայն Փանոս փոխանակ Պողպալեանի, կը մտադրէ Եոզկապ երթալ: Դեռ չհասած, կ'իմանայ, թէ սկսած է Եոզկապի տեղահանութիւնը: Կը վերադառնայ Քէօհնէ, կը տեսնուի իր դասընկեր Ֆուսիի հետ եւ կ'երթան քաղաքապետարան: Նոյն Ֆուսիի ցուցումով՝ Փանոս բանտ կը դրուի: Ան դրամաբան տնօրէն Ասըմ պէյի նամակ կը գրէ: Նոյն օրը երեկոյեան ապա արձակուելով կ'այցելէ Ասըմ պէյի, որ կը խոստանայ Փանոսը արտօրէ վերժ պահել: Տնօրէնը Փանոսին կ'առաջարկէ կրօնափոխ ըլլալ:

Վերելեալ օրը, չորումիներու կարաւանը կը հասնի Եոզկապ: Փանոս ականապետ կ'ըլլայ անոնց թշուառութեան: Թուրքերը անոնց կ'առաջարկեն իսլամանալ: Անոնք «ո՛չ, ո՛չ, ո՛չ» կը պոռան: Չորումիները ճամբայ կը հանուին: Ապա կը հասնի սունկուրլուիներու կարաւանը, որոնց մէջ Փանոս իր հօրը կը հանդիպի:

Փանոս կրօնափոխ կ'ըլլայ եւ գործի բերումով գիտէ գիտ կը շրջի՝ ականապետ ըլլալով հայոց թշուառութեան:

43) Աղեքսանդր Ճղալեան, «Մայրս Չի Կրնար Խեղդել Իր Երեխան...», էջ 626:

Աղեքսանդր ծնած է 1921ին, Եոզկապի Տէլի Վամպա կամ Մարը Վամպա գիւղը: Յուլիս 1915ին թուրքերը եկած եւ Ագրաղ լեռան լանջին գտնուող այս գիւղը պաշարած են ու բոլոր տղամարդիկը ձերբակալած: Թաքստոյները պահուրդած այրերը ապարած են եւ ետքը Ագրաղ բարձրացած են: Վայրը սպաննուած է: Փետրուար 1916ին երկրորդ ջարդ մըն ալ պատահած է: Աղեքսանդրի հօրեղբայրը՝ Յովսէփը կազմակերպած է մնացած գիւղացիներուն Ագրաղ բարձրացումը: Եղբայրը՝ Յաւակը ճամբու

ընթացքին մշտապես կու լար: Կիները մօրմէն կը պահանջեն խեղդել երախան՝ թուրքերուն չմարնուելու համար: Մայրը չի կրնար այդ ընել: Ան երախան ժայռի մը մօտ կը ձգէ ու կը հեռանայ կարաւանին հետ: Աղեքսանդրի միւս հօրեղբայրը՝ Այվազ Ճղալեանը, քննելու նպատակով կարաւանի յեղասամասը կը շրջի եւ երախան տեսնելով կ'ազատէ վայն: Այվազ կ'ամուսնանայ Աղեքսանդրի մօրը հետ: Այս ամուսնութենէն կը ծնի Աղեքսանդր, 1921ին: Անոնք 1924ին Իսկէնդէրուն կու գան:

44) Հայկազուն Յ. Եափուճեան, «Յիշատակարան Բումփիկինի», էջ 627:

Բումփիկինի կոտորածին մասին ներկայացուած այս ամփոփ տեղեկութիւնները քաղուած են Հայկազուն Եափուճեանի «Յիշատակարան Բումփիկինի» գործէն, լոյս տեսած Պէրոթ, 1967ին:

Առաջին Համաշխարհային Պատերազմը բռնկելէն երկու ամիս ետք, Բումփիկինի թուրք եւ հայ բնակչութեան միջեւ կռիւ մը կը ծագի, վոր մեծ ծաւալ կը ստանայ: Յաջորդ օր Պողապլեանէն ոստիկաններ կը հասնին: Անոնք Բումփիկինի երեւելիներէն 40 այրեր կը ձերբակալեն: Ուրիշներ ալ կը ձերբակալուին եւ Ապպասի ջրաղացին մէջ կը սպաննուին:

Բումփիկինի այրերը պիտորահաւաքի պատրուակին տակ կը տարուին եւ կը սպաննուին Թարաման գիւղի դիմացի Ֆրըրն Տէրէսի ձորին մէջ: Պողապլեան տարուած բանտարկեալները եւս կը սպաննուին Ճավլախ Տէրէ կոչուած ձորին մէջ:

Կը սկսի կանանց ու երախաներու աքսորը: Ճամբան թուրքերը գեղեցիկ աղջիկները, հարսերը եւ տղաները կը վատեն ու իրենց հետ կը տանին: Մնացեալը կը կոտորեն Օրոցիկ կոչուած լեռան երեւը գտնուող Օթման ձորին մէջ: Հոս-հոն մնացած հայեր Բումփիկինի մէջ կը հաւաքուին եւ գիւղէն դուրս հանուելով կը սպաննուին:

45) Աբրահամ Ազատեան, «Անհաւատարի Փախուստ Մը՝ Թրքական Բանտէն», էջ 628-629:

Հայթրքական միջադէպերը անպակաս էին Բումփիկինի մէջ: Թուրք ոստիկանները ամէն յանցանք հայոց վրայ կը բեռնէին:

Այդ օրերուն Աբրահամը իր ծնողներուն հետ կը գտնուէր իրենց ազարակը Բումբիկինէն դուրս: Միջադէպ մը կը պատահի գիտաքաղաքին մէջ, եւ քանի մը երիտասարդներ ձերբակալութենէ խուսափելու համար կ'ապաստանին իրենց քով՝ ազարակը: Ոստիկանութիւնը կը պաշարէ ազարակը եւ կը ձերբակալէ քանի մը երիտասարդներ, որոնց մէջ նաեւ ինքը՝ Աբրահամը: Նախ կը բանտարկեն Պողոպլեանի մէջ եւ ապա կը տանին Եոզկատ, որու բանտին մէջ կը չարչարեն սիրենք: Անկի ուշ կը փոխադրեն Աեսարիոյ բանտը, ուր Մեծն Մուրատի (Համբարձում Պոյաճեան) եւ անոր ընկերներուն կը հանդիպին: Աբրահամի կրտսեր եղբայրը՝ 14 տարեկան Գրիգորը յաճախ կ'այցելէ իրենց բանտին մէջ, ուր թուրքեր ալ կային: Բանտին մէջ կ'իմանան, թէ Բումբիկինի մէջ թուրքերը սինտրահաւաք եւ կողոպուտ կատարած են: Թուրք բանտարկեալներու ազգականները, քաջալերուած Գրիգորի բանտ ապաստանէ մտնել-ելլելէն, անոր երկաթեայ իրեր կու տան: 40 բանտարկեալներ ծակ մը բանալով բերդին տակ՝ կը փախչին: Անոնց մէջ է նաեւ Աբրահամ Ապարեանը:

46) Յովհաննէս Քեշիշեան, «Գերդաստանի Մը Միակ Վերապրողին Կրակը», Երեւան, 1969, էջ 630-631:

Յովհաննէսը ծնած է Եոզկատ գաւառի Պողոպլեան գաւառակի Գարահալլը գիւղը (200 բնակիչ): 1914ին այրերը բանակ տարուած էին: Յովհաննէսի հօրեղբայրը իմանալով շրջակայ գիւղերուն մէջ թրքական պետութեան գործադրած սպանդին մասին, խորհրդակցական ժողով մը կը գումարէ ինքնապաշտպանութեան մղելու համար Գարահալլը գիւղը: Մակայն, շատ ուշ էր: Նոյն օրը թուրքերը կը խուժեն գիւղը, կը ձերբակալեն տղամարդիկը եւ Գըզըլ Թէփէի ստորտորը՝ Թաշ Օճախ կոչուած ձորին մէջ կը սպաննեն: Ամիս մը ետք կը հաւաքեն կիներն ու մանուկները եւ կը տանին Պապա Եաղմուր գիւղի Պայաճըք կոչուած ձորը եւ կը սպաննեն: Յովհաննէսի մայրը եւ երկու տարեկան քոյրը կը սպաննուին, իսկ ինք դաշոյնի հարուած մը կը ստանայ, սակայն ուրքի կ'ելլէ ու հոս-հոն կը վազէ: Կը հանդիպի քիւրտ հովիտի մը, որ կ'ապաստանէ պայն եւ Ահմէտ անունով մարդու մը կու տայ: Ահմէտի մայրը իսկական եւ հարապատ մօր պէս հոգ կը տանի անոր: Հոս կը

մնայ մինչև 1922ը, երբ կ'իմանայ թէ հորեղբայրը՝ Աւերիս Թեշիշեանը Ֆարխալը կը գրնուի: Յովհաննէս կը գրնէ հորեղբայրը, որ սինք Կեսարիա Կանեղով՝ բարեկամ թուրքի մը մօտ իբր աշկերպ կը դնէ: Հոսկէ Յովհաննէսը Պոլիս կ'անցնի, եւ հոնկէ ալ Խորհրդային Հայաստան՝ 1929ին:

47) Միմոն Փոլարեան, «Բէօհրէնկէն Պաղպատ», էջ 632-634:

Միմոն ծնած է Եոզկապ գաւառի Բէօհրէնկ գիւղը: Ան կը վարէ իր հօրենական առեւտրի խանութը: Թուրք սինեալներ կ'ուզեն առեւանգել սինք, բայց միջամտութեամբ կ'ապարի: Օր մը ոստիկան-սինտորներ բռնոր այրերը կը հաւաքեն եկեղեցին: Միմոնն ալ հոն է: Մէկ շաբաթ հոն բանտարկելէ ետք կը կողոպտեն սինքն եւ Աղպուճաք գիւղը կ'առաջնորդեն: Հոս չէրքէսները կը վնստեն սանտք կապող թուրքերը եւ իրենք յանձն կ'առնեն: Չէրքէսները կը քակեն անոնց կապերը եւ կ'ուղղուին դէպի Պողպուսեան: Թէօհնէն, Թելլէրէն եւ Եոզկապէն հայ գաղթականներ կը միանան կարաւանին եւ կ'ուղղուին դէպի Նիյոլ: Կ'անցնին Բնճեսու գիւղը եւ ապա Պոլսանթի լեռները: Գերմանացի սինտորներ տեսնելով իրենց թշուառ սինքը, սինսանակ խղճալու, կը ծիծաղէին: Կը հասնին Բնթիլի եւ կը մտնեն ճանապարհաշինութեան գործին մէջ: Որոշ արեն մը ետք, սանտք շոգեկառքով Ռասուլ-Այն կը սինսաղրեն: Հոսկէ երեսուն-քառասուն օրէն Մուսուլ կը հասնին: Ճամբան կողոպտուրը կը շարունակուի: Կիներն ու աղջիկները կը ծախեն: Միմոն երեք ընկերներով երկրագործութիւն կ'ընէ օրական վարձքով, ապա կ'աշխատին գերմանացիներուն քով իբր ձիաբոյժ: Անգլիացիները կը մտնեն Մուսուլ:

48) Իլիմոն Օրապաշեան-Տիլանեան, «Կորսուած Հայ Գիւղի Մը Միակ Վերապրողը», Պէրոյթ, 1969, էջ 635:

Իլիմոն ծնած է Թերսիլի գիւղաքաղաքին շար մօտ գրնուող Պեպէք գիւղը: Թուրքերը 1915ի ամառը 40-50 այր կը սինտորագրեն: Աւելի մեծ թիով այր մարդիկ ալ կը հաւաքուին եւ կը կողոպտուին Էսէրպէյ Տէրէսի կոչուած ձորին մէջ: Ոմանք կ'ապաստանին Եոզկապ՝ թուրք բարեսիրտ Աքիպ փաշայի տունը:

Կիներն ու մանուկները շրջակայ թրքական գիւղերը կը ցրուին: Օգնութեան կը հասնի Ագրադի դիմադրութեան ղեկավարներէն Մամուլի Չաուշ Բնճէեան, որ մերթ անակնկալ կերպով կ'երեւէր շրջանին մէջ:

49) Սիրական-Մեդրակ Տեմիրճեան, «Յուշեր Քելլեր Գիւղաքաղաքէն», էջ 636-637:

Վեդինակը ծնած է Եոսկար գաւառի Պողապլեան գաւառակի Քելլեր գիւղաքաղաքը: Դրօշի փակ կանչելու պապրուակով, այր մարդիկը՝ 800 հոգի 1915ի սկիզբները կը հաւաքեն եւ Եարաշ կոչուած ձորին մէջ կը սպաննեն: Երկու երիտասարդ վիրատր վիճակի մէջ կէս գիշերին գիւղ կու գան: Անոնք դարմանուելէն վերջ Ագրադ լեռները կը բարձրանան՝ ինքնապաշտպանութեան խումբին միանալու համար:

Օր մըն ալ կը հաւաքեն կիներն ու երախաները եւ Եարաշի ձորին մէջ կը սպաննեն: Չէրքէզները կողոպուր ընելէ վաղ կը խլեն 35-40 աղջիկներ եւ մանուկներ, որոնց մէջ Սիրականը, եւ իրենց գիւղերը կը փանին:

Սիրական մինչեւ պինադադար կը մնայ Պայրագլը գիւղը, չարաչար աշխատելով իր խնամակալին քով: Ան, հայ որբա-հաւաք Սողոմոն Ելէէնեանի օգնութեամբ կ'ապարէ իր քոյրը եւ Եոսկարի որբանոցը կը տեղափոխէ: Քելլերէն կ'ապարի 35-40 հոգի միայն:

Սիրական-Մեդրակ կը մնայ Քելլեր, կ'ամուսնանայ որբուհիի մը հետ եւ կը վերականգնէ իր պապենական օճախը: Քեմալականները կը պինտորագրեն պինք եւ կը փանին Կարին: Վոնկէ փախուսար փախով կու գայ Կեսարիա եւ ապա կ'անցնի Պէյրութ: 1947ին կը հայրենադարձուի Խորհրդային Վայասարան:

50) Մեդրակ Վորիմեան, «Քելլերէն Աթէնք Եւ Երեւան», Երեւան, էջ 638-641:

1914ի ամառը երբ ընդհանուր սօրակոչ կը յայտարարուի՝ Մեդրակ ուր փարեկան էր: Օմար Օնպաշը կոչուող եոսկարցի թուրք դահիճին հրամանով վէնքերը կը հաւաքուին: Բոլոր խելացի մարդիկը Կը ձերբակալեն:

Քելլերը 1915ի ամառը կը պաշարուի: Երբ կանանց եւ մանուկներու կարասանը կը յառաջանար, Պայրազը գիղէն բարի շէրքէս մը Սեդրակը եւ եղբայրը՝ Գրիգորը իր մօտ կը փանի առանց բռնութեան: Հայրը բանակէն կը վերադառնայ Դեկտեմբեր 1915ին, եւ վերամուսնանալով, իր մօտ կ'առնէ իր երկու որդիները: 1920ին հայրը զինք կը փանի Պողապլեանի որբանոցը: Երեք օր անց զինք կը փոխադրեն Թալասի որբանոցը, ուր կը մնայ մինչեւ 1922ը: Ապա կը փոխադրուին Լիբանան՝ Ճիպէյի որբանոցը: 1923ին կը միանայ Գրիգոր եղբօրը՝ Յունաստան: 1946ին կը հայրենադարձուի Խորհրդային Հայաստան:

51) Պատմեց՝ Եղսա Մանուկեան, գրի առաւ՝ Կիւպէնկ Կիրակոսեան, «Մահէն Դէպի Կեանք», էջ 642-643:

Օգոստոս 1915ի պայծառ ու շար փայտ օրերէն մէկը, Քելլեր գիղին բնակիչները գաղթի ճամբան կը բռնեն: Կը հասնին Եարաշ ձորը, ուր թուրքերը կայիններով, սուրերով եւ այլ գործիքներով կը սպաննեն վանոնք: Մայրը եւ եղբայրները կը մեռնին: Եղսա կայինի հարուած մը կը ստանայ վիպէն եւ գետին կ'իյնայ: Երբ գիշերը կ'արթննայ՝ ճամբայ կ'ելլէ, կը հասնի ջուրի աղբիւր մը եւ կը քնանայ խողովակի մը մէջ: Աշար կիներ կը գտնեն զինք: Անոնցմէ մէկը Եղսան իր փունը կը փանի, կը բուժէ եւ հոգ կը փանի անոր: Եղսա չարաչար աշխատելով հոն կը մնայ չորս փարի: Կը վերադառնայ Քելլեր եւ կ'ամուսնանայ Սողոմոն Մանուկեանին հետ: Երբ քեմալական շարժումը կը սկսի ծալիլ, կը գաղթեն Լիբանան, իսկ 1946ին կը հայրենադարձուին:

52) Վկայեց՝ Միսաք Տօնանեան, «Քելլերի Ջարդը», Պէրուր, 1960, էջ 644-649:

1914ին Քելլերի մէջ զէնքերը կը հաւաքուին: 20-45 փարեկան այրերը բանակ կը կանչուին, բայց բանակի պարենատրման պատասխանատու Սողոմոն Հաճի Մանուկեանը Պողապլեանի փեղակալին քով երթալով երեք ամիսով կը յետաձգէ պինտորագրութիւնը, մինչեւ հունձքի եւ կալի եղանակին վախճանը: Շար չանցած, թուրքերը պայն խեղդամահ կ'ընեն Քերփիչճէք գիղին մէջ:

Յուլիս 1915ին Քելլէրը կը պաշարուի եւ այր մարդիկը կը ձերբակալուին: 423 այր մարդիկ կը փարուին Եարաշ ձորը ու կը սպաննուին: Տուներու թաքստոցները խուսարկելով 225 այր մարդիկ կը գտնեն եւ կը սպաննեն:

15 Օգոստոս 1915ին կը սկսի բնակչութեան գաղթը: Այս միջոցին Միսաք, հայրը եւ ուրիշ քանի մը հոգի փունէն դուրս կ'ելլեն չձերբակալուելու համար: Անոնք երբ գիտին մօտ ցորենի արտերու մէջ պահուրդած էին, կը փնտնեն Եոզկափի հայոց կարասանը, որ կը փարուի Եարաշ ու կը ջարդուի: Գիշերը կը փութան հոն՝ հայ վիրաւորներ ապարելու յոյսով: Կը վերադառնան գիտ՝ պարսպարուելու համար: Հոն թաքնուած ուրիշ 11 հոգիի կը հանդիպին, որոնցմէ կ'իմանան, թէ ուրիշ պահուրդածներ ալ կան: Անոնք իրենց հետ վէնքեր ալ ունէին: Այսպիսով խումբը 31 հոգի կ'ըլլայ: 14 հոգի կ'որոշէ կրկին Եարաշի ձորը այցելել՝ վերապրողներ գտնելու յոյսով: Անոնք ճամբուն վրայ կը թաղեն երկու մանուկներ, Կորս թուրքերը մորթած էին Քեմալ պէյի ուրբերուն առջեւ:

Այս խումբէն փասը հոգի կը բաժնուի եւ կ'ուղղուի դէպի Եարապուսուն յունարնակ գիտը, բայց աղէտի հանդիպելով, կը սպաննուի: Մնացեալ 21 հոգին, անոնց մէջ՝ Միսաքը եւ հայրը, կ'որոշէ Ագրաղ լեռները բարձրանալ: Ճամբայ կ'ելլեն, կը հասնին Պոտուն Գըշլա, որու հայերը փակաին հոն էին: Այս գիտին մէջ, հայրը եւ ուրիշ քանի մը փախստականներ կը սպաննուին: Միսաք եւ քանի մը ուրիշներ կալերուն մէջ կը պահուրդին: Երեք օր ետք դուրս կու գան: Հայ կիներ կը շրջապատեն վիրենք, բայց կրօնափոխ դաւաճան հայ մը՝ Լեւոն աղա, որ Ալի վերակոչուած էր, շուրջով վանոնք ոստիկանապուն կը յանձնէ: Հոս երկար հարցումներէ ետք Արիֆ Չաուշ, Ալիին հետ վանոնք կը դրկէ Թաշճեաններու փունը՝ աշխարհուելու համար: Մէկ շաբաթ արտին մէջ աշխարհելէ ետք, չէրթէյ Ապրալլա էֆենտի վանոնք կը խլէ եւ իր գիտը կը փանի: Այս միջոցին Պոտուն Գըշլայի հայ բնակչութիւնը կը քշուի: Մէկ ամիս կ'աշխարհին եւ կրկին կը յանձնուին Արիֆ Չաուշին: Այս վերջինը վիրենք կը ծախէ չէրթէյ Ճին Հասանին: Երեք ամիս հոս աշխարհելէ ետք, Միսաք կը փախչի եւ Քելլէր կու գայ: Էօմէր Օնպաշին սինք կ'աշխարհուէ իր

մօտ՝ Էօմէրլի գիտը, ուր կը մնայ մէկուկէս րարի: 1923ին կը հաստատուի Լիբանան:

53) Կիւպէնկ Կիրակոսեան, «Քելլէրէն՝ Լիբանան, Ջարդերէն Գէպի Կեանք», Պէյրութ, էջ 650-660:

Վերինակը 1914ին երբ չորս րարեկան էր, թուրք սինտորները Քելլէր կը խուժեն, գիտին այրերը կը հաւաքեն եւ մօտակայ ձոր մը րանելով՝ կայիններով կը սպաննեն:

Վրաման կու գայ գիտի բնակիչներուն, որ սայլերով գաղթեն: Այս շրջանին՝ հայրը Պաքանեան պարերպամին մասնակցելու գացեր էր իբր թրքական բանակի սինտոր: Մայրը, եղբայրը՝ ութ րարեկան Արշակը եւ ինք րան մէջ կ'ապրէին: Մայրը անասունները դուրս կը բերէ գոմէն: Ատնք սայլերուն չեն ուզեր կատուի եւ կը փախչին: Այս առիթէն օգտուելով, մայրը սինք, եղբայրը, հօրեղօր կինը՝ Բերունը եւ անոր երկու րուակները յարդանոցին մէջ կը թաքցնէ՝ րան դռները բայ թողնելով: Երեք օր անօթի եւ ծարաւ կ'անցընեն: Չորրորդ օրը գիշերը, մայրը յարդանոցին պարը ծակելով, մառանէն հայ ու չոր կը բերէ: Վերջապէս կը փախչին եւ կ'ապաստանին Պարպալ կոչուած դըրըպաշական գիտը, Թեֆիք աղային րունը, որ Կիւպէնկի հօր բարեկամն էր: Շու 15 օր կը մնան: Ուրիշ բարեկամ թուրք մը՝ Թըլսը Պեքիր, գիշերով կու գայ եւ րանոնք Դըրըշու գիտի իր րունը կը րանի: Պեքիր Բերունը եւ րուակները կու րայ ուրիշ բարեկամի մը, որ կը ծախէ րանոնք: Կիւպէնկ, եղբայրը եւ մայրը մինչեւ սինադար հոս կը մնան եւ կ'աշխարին Պեքիրի մօտ:

Ջինադարէն ետք Քելլէրի իրենց րունը կը վերադառնան: Արեն մը այստեղ մնալէ ետք Եոզկապ կը փոխադրուին: Մայրը կ'աշխարի րուներուն մէջ լուսայք ընելով, մինչ երկու եղբայրները շուկային մէջ բեռնակիր կ'աշխարին: Ապա Քելլէր կը վերադառնան ու մօրաքրոջը րունը կ'ապաստանին: Կիւպէնկ Պողապլեանի որբանոցը կը դրուի: Ապա որբերը կը փոխադրեն Թալաս, այնուհետեւ՝ Լիբանան:

54) Արսէն Մահպետեան, «Յուշեր Արհաւիրքի Օրերէն», էջ 661-666:

Արսէն ծնած է 1903ին, Քելլէր: 1915ի ամառը Կողմարդիկը կը հաւաքեն եկեղեցիին եւ գոմի մը մէջ: Յաջորդ առաւօտ, Կանոնք իրենց թեւերէն իրարու կապելով կը փանին Եարաշ Տէրէսի կոչուած ձորը ու կը կոտորեն: Այսպէս փասը օր շարունակաբար, ոստիկաններ փունէ փուն մկնելով, այր մարդիկը ձերբակալելով Սարը Ղայայի կողմերը կը փանէին եւ կը սպաննէին:

Շար չանցած, Տէր Ջօր գաղթելու հրաման կու գայ: Թուրք գիղայիները Քելլէր կը խուժեն: Սարը Ղայա գիղէն բարեկամ թուրք մը, Արսէնի մօր խնդրանքին վրայ, իր երէց եղբայրը հետը կը փանի: Երբ կը մօտենային սպանդանոցին, մայրը թուրք խուժանին մէջ նկատելով Թահեր անունով թուրք բարեկամ մը, Արսէնը եւ փոքր որդին անոր կը յանձնէ: Համագիղայիները Կանոնք Սիեահ գիղը կը փանին: Կարաւանը Սիեահ գիղէն անցնելով, կը փանին Եարաշ Տէրէսի ու կը կոտորեն: Սիեահ գրնուած միջոցին Արսէն կ'իմանայ, թէ Գումգոյու գիղը ինքնապաշտպանութեան դիմած է, բայց կործանած:

Խուրջիփի կինը կը մերժէ պահել Արսէնը եւ Խուրջիփ կը ստիպուի Կայն փալ Խալի անունով ուրիշ թուրքի մը, որ իր փունին մէջ արդէն երկու հայ աղջնակներ կը պահէր: Անլի ուշ, Խուրջիփին կինը կու գայ եւ Արսէնը կրկին իր փունը կը փանի ու կը սկսի լաւ վարուիլ անոր հետ: Հրաման կու գայ թուրքերու փուները ապաստանած բոլոր հայերը հաւաքել ու սպաննել: Եղբայրը՝ Հայրապետ, Կոհ կ'երթայ այս ջարդին: Փոքր եղբայրը՝ Սեդրակ կը փախչի եւ իր մօտ կու գայ, սակայն այս րեւի անյարմար գրնելով՝ նախկին րեղը կը վերադառնայ:

1918ի աշնան գողեր կը կողոպտեն Խուրջիփը, որ երկրորդ յարձակումի մը արեւն կը սպաննուի: Խուրջիփի եղբայրը՝ Թահեր, Արսէնին կու փայ հորթ մը, մալոզաշ եզ մը, երկու այծ եւ ցորեն, որպէսզի Քելլէր երթայ եւ իր պապենական փունը շէնցնէ:

Արսէն կու գայ Քելլէր, ուր ուրիշ վերապրողներ կը գտնէ: Քեմալական շարժումին ծաւալումով, հայոց կեանքը հետզհետէ անփանելի կը դառնայ Թուրքիոյ մէջ: Արսէն իր Կարմիկներուն հետ Ղէրուօ կը փոխադրուի:

**55) Աւերիս Բեկեշեան, «Թուրք Հոճայի Սը Եահապա-
կութիւնները», էջ 667-668:**

Եոզկապրի մօտակայ շէն ու խաղաղ հայկական գիւղերը ամայայացած էին, տուները՝ քանդուած, ձորերը՝ հայոց անհամար դիակներով լեցուած: Սով կը տիրէր: Փոքրիկն Աւերիս ապաստան գտած էր Եռդուն-Շիսար գիւղին մէջ, թուրքի մը տունը: Գիւղին թուրք հոճան, որ առժամաբար Պէքթաշլը կը մնար, կը կեղեքէր ժողովուրդը: Աւերիս իր տիրոջ բացակայութեան հոգ կը տանէր անոր բոլոր գործերուն եւ թոյլ շէր տար, որ հոճան սանձարձակ կերպով կեղեքէր իր տէրը: Օր մը երբ Աւերիսի տէրը կը վերադառնար գիւղ, հոճան սայն տեսնելու եւ Աւերիսը սրբաբարբելու կը փութայ: Ան այնքան յառաջ կ'երթայ, որ կը հրամայէ մորթել «անհաւապ», այսինքն կետուր Աւերիսը: Տէրը անմիջապէս կ'ըմբռնէ կայսրութիւնը եւ կը վտարէ հոճան՝ սպառնալով անոր: Հոճան կը ներկայացնէ իսկական թուրք ոճրագործի տիպարը:

Տ. Ներսէս Աւագ Քահանայ Թաւուզճեան, «Տառապանքի Օրագիր», խմբագրեց՝ Թորոս Թորանեան, րպ. «Հայ Տիպ Բովիիկրաֆթեքնոիքեա», Պէյրութ, 1991, միջակ չափի 408 էջ:

Տէր Ներսէս Թաւուզճեան ծնած է 1870ին, Այնթապ: 1909ի աղէտէն ետք ան կը մասնակցի նպաստաբաշխ յանձնախումբին, մինչեւ Անտիոք եւ Քեսապ, ուղղուելով Հալէպէն: 1915ին կը փախազրուի եւ կը հասնի Համա: 1916ին, փրենք Երուսաղէմ փանելու պատրուակով, օսմանցիները խումբ մը քահանաներ կը փախազրեն Տամասկոսի կողմերը, ուր քանի մը ամիս փառապանքով ապրելէ յետոյ Համա կը վերադառնան: Հոկտեմբեր 1918ին անգլիացիք այդ քաղաքը կը մտնեն: Համայի մէջ կը հանդիպի անգլիացի եւ ֆրանսացի պատասխանատուներու հետ: Ապրիլ 1919ին հայերը կը սկսին Համայէն մաս առ մաս առաքուիլ դէպի Այնթապ եւ ուրիշ քաղաքներ: Ինք կը մեկնի Հալէպ, ապա կ'անցնի Այնթապ: 1920 Մարտէն մինչեւ Մայիս կը փրեն Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւները (Այնթապի ինքնապաշտպանութիւնն սկսած է 1920ի Ապրիլի սկիսքը եւ փրեւած մօտ 1 փարի - խմբ.): Մայիսի վերջերը ֆրանսացիներու օգնութեամբ առաջին կարաւանը ճամբայ կ'ելլէ: Ատր կը հեղտին ուրիշներ: Տէր Ներսէս 24 Սեպտեմբեր 1920ին կը թողու Այնթապը եւ կը հասնի Հալէպ, ապա կ'անցնի Պէյրութ: Մէկ ամիս ետք դարձեալ կը վերադառնայ Այնթապ: Այս շրջանին կարաւան առ կարաւան Այնթապը կը պարպուի հայութենէ: Տէր Հայրը 8 Նոյեմբեր 1921ին վերջնականապէս կ'անցնի Հալէպ: Մօտ 100,000 հոգի հաշուող Կիլիկիոյ հայութիւնը 1921ի վերջը արդէն փախազրուած էր: Օրագրութիւնը կը շարունակուի մինչեւ 1933՝ յիշատակելով եկեղեցական եւ սպառնալից դէպքեր:



Գառնիկ Բանեան, «Յուշեր Մանկութեան Եւ Որբութեան», փպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1992, միջակ չափի 280 էջ:

Գառնիկ Կիրինի մէջ բարեկեցիկ կեանք մը կ'ապրէր հինգ փրեկանին, երբ 1915ին ամբողջ ընտանեօք կ'աքսորուի: Հեղինակը կը հասնի Համայի գաղթակայանը, ուր իր սիրելիներէն շարեր կը մահանան: Որբանոց կը դրուի իր մեծ հօրը ձեռքով: Քանի մը ամիս ետք որբերը Լիբանան կը փոխադրեն եւ Այնթուրայի թրքական որբանոցը կը տեղափոխեն: Շար փառապանքներէ ետք, որբանոցը կը հայանայ 1918ին: Արդարեւ, պինադադարը կնքուելէն անմիջապէս յետոյ, հայ տնօրէն, ուսուցիչներ եւ պաշտօնէութիւն դպրոց ժամանելով, կը ստանձնեն որբանոցը: Կը վերադառնայ Կիլիկիա եւ ապա՝ Պէյրութ:




Reverend Garabed S. Tilkian, "Musa Dagh Boy", «Ապրիլ» հրատ., Լոս Անճելոս, 1992, միջակ չափի 142 էջ [Վերապատուելի Կարապետ Ս. Թիլքեան, «Մուսա Տաղի Տղան», անգլերէն]: [էջ 1-48]

Հեղինակը ծնած է 1906ին, Մուսա Լեւան Պիթիաս գիղը: 1910ին Պիթիաս 200 ընտանիք կը հաշուէր:

Անտիոքի կառավարիչ Մաարուֆ պէյ 13 Յուլիս 1915ին հրահանգ կու տայ իր փոխանորդին՝ Խալէփ Էֆենտիի՝ ութը օրէն Մուսա Լեւան եօթը գիղերը տարագրել: Տեղւոյն պատասխանատուները խորհրդակցական ժողով մը կը գումարեն Տէր Աբրահամ Տէր Գալուստեանի եւ Վերապատուելի Տիգրան Անդրէասեանի գլխատրութեամբ: Ժողովը կ'որոշէ չենթարկուիլ թրքական կառավարութեան հրամանին: 4200 մուսալեռնի լեռ կը բարձրանայ եւ 53 օր կը կռուի թուրքերուն դէմ: Ֆրանսական «Փրովիփանս» նաւը վերենք կ'ապարտէ եւ 13 Սեպտեմբերին Եգիպտոս կը տանի: Հաստատուելով Փոր Սայիտ, անոնք կ'անցնին անգլիական հոգածութեան տակ:

Փոքր խումբ մը, մեծաւ մասամբ Պիթիաս գիղէն, կը հնարանդի թրքական կառավարութեան որոշումին: 31 Յուլիս 1915ին երկու ոստիկաններու հսկողութեամբ 64 ընտանիքներ ճամբայ կ'ելլեն անտրոշ ուղղութեամբ: Ասոնց մէջն է Կարապետ Թիլքեան իր ընտանիքին հետ: Երեք օրէն Համա քաղաքը կը հասնին: Մեծ հայրն ու մեծ մայրը կը մահանան: Համայի կառավարիչը՝ Խայիր Ֆերուպան Էֆենտի, բարի մարդ մըն էր: Ասով հանդերձ, դժուարութիւնները, անօթութիւնն ու համաճարակները կը շրջապատէին վերենք: Կային նաեւ բռնութեամբ իսլամացնելու փորձերը:



1917ին սովոր կը սկսի: Մայրը կը ստիպուի աշխատիլ՝ փոռի մը համար վառելիք փայտ հայթայթելով: Նաեւ քոյրը կ'աշխատի ուրելիքի համար: Եղբայրը՝ Յակոբ կը սկսի սանտրեր շինել, իսկ միւս եղբայրը՝ Յովհաննէս զանոնք կը վաճառէ: Այս վիճակին մէջ 10 տարեկան Կարապետ մեծ ջանք կը թափէ փորը կշտայնելու համար: Ան մինչեւ իսկ մտրացկանութեան կը դիմէ: Սառա անունով քոյրը կը մահանայ թիֆիսէ: Ծանր աշխատանքի հետեւանքով՝ հայրը կը մահանայ 1916ին Պաղեստինի մէջ: 1917ին անօթութենէ եւ հիւանդութենէ կը մահանայ նաեւ մայրը: Կարապետ որբանոց կը մտնէ:

1918ի ամառը պատերազմը վերջ կը գտնէ Պաղեստինի մէջ: Որբերը կը փոխադրուին ատլի մեծ որբանոց մը՝ Հալէպի մէջ: Յովհաննէս եղբայրը նոյն որբանոցը կը դրուի: Որբերը Այնթապ, այնուհետեւ Լիբանան կը փոխադրուին:

Արամ Հայկազ, «Չորս Տարի Քիրքիսպանի Լեռներուն Մէջ», հրատ. «Գէորգ Մելիքիների Գրական Մրցանակ»ի թիւ 6, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1972, միջակ չափի 512 էջ:

Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութեան պայքարը վերջ գրած էր: Յուլիս 1915ի սկիզբն էր: Արամ Հայկազ եւ մայրը բռնագաղթուածներու կարաւանին հետ կը քալեն: Չորրորդ օրը կը հասնին Այծպըր կողմը հայկական գիւղը, որ 300 րուն բնակչութիւն ունէր: Զիրենք գիւղէն դուրս երկու գոմերու մէջ կը հաւաքեն: Յաջորդ օրը գիւղ կը փակեն եւ խանի մը ախտը կը լեցնեն: Հոս, գիշերը, գաղթականներուն մէջէն հայ աղջիկներ կ'առեւանգեն: Կիներէն ոմանք կը թրքանան եւ գիւղը կը մնան:



Կարաւանը ճամբայ կ'ելլէ: Կը հանդիպին թուրք խուժանին, որ կը կողոպտէ եւ կ'առեւանգէ: Մայրը կը խրատէ Արամը՝ թուրքի մը պաշտպանութեան փակ անցնիլ եւ աշխատանքով հաստատուել: Արամ փորձ մը կ'ընէ, բայց ետ կու գայ: Մակայն, մնալը ստոյգ մահ է: Երկրորդ փորձ մը կ'ընէ եւ Պարփիս քրտական ցեղախումբէն Ալի բէկին որդեգիրը կը դառնայ Աղըլլար գիւղին մէջ:

Ալի բէկը երեք կին ունի: Աագը՝ Ֆեթիհէ հանըմ, չէչէն է, երկրորդը՝ լապ է, երրորդը՝ Քեամիլէն է, նախկին Հայկանոյշը, հապի 15 օրուան հարս: Խորէն անունով հայ փոքր մըն ալ կայ փան մէջ: Կան նաեւ սպասաւոր Օսմանը եւ ուրիշ ծառայողներ՝ Կիլոն, Մարօն, Հագգըն, Շեվգըն եւ հայ պարսնի մը՝ Գրիգորը իր երկու քոյրերով: Բարաքանչիւր պարսնի իր պաշտօնն ունի: Անոնք բոլորն ալ Ալի բէկին համար կ'աշխատին: Օսման Կիլիպար անունով հայ աղջկայ մը հետ կ'ամուսնանայ: Օսման եղբայրական սիրով կը վարուէր Միւլիմ անունափոխուած Արամի եւ հայ փոքր հետ: Արամ Ալի բէկի ետները կ'արածէ Օսմանի հետ:

ու անոր հետ կը մտերմանայ: Կիլիկիայի յղութիւնը կ'ողտկցուի հիւանդութեամբ մը, որ կարճ ժամանակ րառապեցնելէ ետք Կիլիկիայը, անոր մահուան պատճառով կը մահանայ:

Արամ պարտաճանաչ ձեռով իր պաշտօնը կը կատարէ քիրտերու մօտ: Ան յարգանքով կը վարուի Ալի բէկին հետ, որ, սգայուած Արամի վերաբերմունքէն, կ'որոշէ որդեգրել Վայն եւ կը մտադրէ պեղական արձանագրութիւններու մէջ պատշաճ գործողութիւնները կատարել անմիջապէս որ պատերազմը վերջանար: Տան մէջ բոլորին կը թելադրէ բարեացակամօրէն վարուիլ Արամի հետ:

Տան մէջ Արամին գործը դժուար չէր: Ան ժամանցի ժամանակ ալ կ'ունենար: Եզները արածելու ապեն թէ փանը, միջոց հետաքրքրական եւ հաճելի սրբազանք կայ իրեն համար: Տան գամբող եւ ձագերը բաւական կը սուրճայնեն Վինք:

Փետրուար 1916ի վերջերը լուր կը հասնի իրենց, թէ ռուսերը Կարինը գրաւած են: Իրենք շատ հեռու չէին Կարինէն: Նոյնիսկ այս ժամանակ, թրքական կառավարութիւնը առիթ կը գտնէ եւ շրջանին մնացած հայերը վերստին հաւաքելով կրկին կ'աքսորէ: Ալի բէկ եւ միւս բէկերը, չուկերով ձրի ծառայողներէ եւ գեղեցիկ կիներէ սրկուի, իրենց մօտ գտնուող բոլոր հայերը կը պահեն: Մակայն, ուրիշ հարիւրաւոր դժբախտ հայեր, ահաւոր այդ սուրտերուն կը հաւաքուին եւ քսորուելու պատրուակով կը կոտորուին:

Կարինէն փախած թուրք սիւնուորներ կ'անցնին Չօպանլը գիւղէն՝ իրենց տղերը հասնելու համար: Ալի բէկ իր հանուցին չօռէ (հիւանդութիւն մը) սարկած հաւերը կարմրցնելով անոնց կը ծախէ: Քրախառն ալիւրով եփած ապուր մը կը հրամայնէ անոնց: Բէկին հրամանով՝ վիրաւոր սպայ մը գոմին մէջ կը հիւրընկալուի: Հասի շարժելու եւ շնչելու կարող, ան խնամքի եւ կարեկցութեան շատ պէտք ունէր: Արամ կ'ատէր այդ սպան: Մինչեւ այդ օրը, ան գոմին մէջ անասուններու ընկերակցութեամբ երապանքի հաճելի ժամեր անցուցած էր: Գոմին մէջ կար «Երլուրը» անունով եռանդուր եզ մը, սոր Արամ շատ կը սիրէր: Վիրաւոր սպային գալէն ետք Արամ չէր ուզեր գոմ մտնել: Գիշեր մը Երլուրը եւ միւս կենդանիները անօթի մնացած էին. Երլուրը կատրած էր եւ վիրաւոր սպան իր ոտքերուն տակ անշնչացուցած:

Ռուսական բանակը Ապրիլ 1916ին կը գրաւէ Երզնկան:

Վերապրող հայերը յոյսի, անձկութեան, սպասման եւ անորոշութեան օրեր կ'ապրին: Քիւրտերը ինը հայ տղաք կը հաւաքեն՝ վանոնք թլփափելու համար: Արամ եւս կը թլփափուի: Այս անորոշութեան ժամանակ, քիւրտ բէկերը կը տարամահին՝ մնալ իրենց կալուածներուն մէջ, թէ՞ մեկնիլ:

Այս օրերուն էր, երբ Խորէն եւ Արամ տան մօտ կը հանդիպին Շամիտ անունով մօտաւորապէս 22 տարեկան թուրք գաղթականի մը, որ Բասէնի դաշտին գիւղացի մըն էր: Վայ տղաքը թէեւ տարիքով փոքր էին, սակայն գիտակից էին անցողիկութեան եւ ոխ կը պահէին թուրքերուն հանդէպ: Շամիտ անունը կը պատմէ իրենց տան մէջ իբր ծառայ ծառայող հայ աղջկան մը ստիպողաբար իրեն ենթարկուելուն մասին, ապա, լկտիաբար կը չարախօսէ հայոց մասին: Լիճին մէջ բոլորը միասին լողալու ժամանակ, Խորէն եւ Արամ կը յաջողին այս թուրքը խեղդել:

Ալի բէկ կը հիւանդանայ: Գիշերով բժիշկը փուն կու գայ եւ կը քննէ վայն: Պէտք եղած դեղը կը պակսէր: Բէկին աւագ կինը՝ Ֆեթիիէ հանրմ կը հրամայէ քիւրտ ծառաներուն, որ երթան բէկի հօր՝ Իպրահիմ բէկի մօտ եւ դեղը բերեն: Անոնք կը մերժեն, որովհետեւ գիշերով գերեզմաններու քովէն անցնելու կը վախնային: Արամ կ'ըսէ հանրմին, թէ կամաւորապէս պիտի երթայ եւ բերէ դեղը: Երբ կինը կը հարցնէ Արամին, թէ գերեզմաններէ չէ՞ր վախնար, Արամ կը պատասխանէ բացասաբար, «բայց կը վախնամ մարդերէ...»: Կ'աւելցնէ ան՝ թուրքերը նկատի ունենալով: Արամ կ'երթայ, բայց ձեռնուտնայն կը վերադառնայ: Քանի մը օր ետք, Ալի բէկ կը մահանայ: Անոր մօտ մնացող հայ պաշտպան-տալները կը փխրին:

Քիւրտերը, փոխանակ փունի ու դաշտի գործերով սրբազան, Երզնկայէն փախած թուրք սինտորները կը սպաննէին եւ վանոնք կը կողոպտէին: Այս թուրք սինտորներուն թիւը հետզհետէ կը շարունակէր: Անոնք ժողովուրդին կը թելադրէին այդ շրջաններէն հեռանալ:

Ալի բէկի հայրը՝ մեծ բէկը մտաւորապէս էր: Ան յաճախ կը սրբազան Արամի հետ: Օր մը ան կ'ըսէ Արամին, թէ հայերն են, որ ռուսական բանակը կ'առաջնորդեն: Արամ համարձակօրէն կը պատասխանէ, որ եթէ թրքական կառավարութիւնը ջարդած չըլլար հայե-

ըր, այսօր անոնք հաւանաբար առաջնորդէին օսմանեան բանակը:

Բպրահիմ բէկի գերդաստանին բոլոր անդամները եւ ծառաները ճամբայ կ'ելլեն, բայի մէկ որդիէն՝ Ռիֆէթ բէկէն, որ կը նախընտրէ մնալ իր տան մէջ եւ դիմագրաւել ռուսերուն գալուստը: Կեանքը ցոյց տուաւ, թէ անոր ընտրած ճամբան ճիշդ էր, որովհետեւ ռուսերը չեկան:

Մեծ բէկի կարաւանը կը հասնի Պողոս Վերան գիղը: Այի բէկի այրին անհերթօք պատճառներով ոյս կը պահէ Արամին դէմ:

Այի բէկի եղբայրը՝ Գուճուրպպէ Նապըմ բէկը Ջառայի գայմագամութեան միւրիւրի (գաւառակապետ) պաշտօնը կը ստանայ: Ան ունի երկու կին՝ Նայիլէն եւ Մեհրուսէն: Նախապէս Արամի հետ լաւ յարաբերութիւն ունեցող Նայիլէն իր մօտ կ'առնէ վայն: Նապըմ բէկ իր առաջին կնոջմէն՝ Նայիլէնն ունէր երկու դուստր՝ Գապրիէն եւ Ֆախրիէն: Գապրիէն գեղեցիկ աղջիկ մըն էր ու գրեթէ տարեկից Արամին:

Նապըմ բէկի ընտանիքը եւ Արամ տուն մը վարձած էին Գարաճա Վերան գիղին մէջ: Տանտիրոհին՝ Ջէնապ եւ անոր հարսը՝ Ալմաս նոյն շրջափակին մէջ կ'ապրէին: Ջէնապի քանի մը օրուան բացակայութենէն օգտուելով, Արամ եւ Ալմաս սեռական բնոյթի թեթեւ արկածախնդրութիւն մը կ'ունենան:

Նապըմ բէկ պաշտօնանկ կ'ըլլայ պինտորականութեան հետ ունեցած տարակարծութեան եւ վիճաբանութեան պատճառաւ: Ան Գանկալի Ելլիճէ գաւառակի միւրիւր (կառավարիչ) կը նշանակուի: Բոլորը յառաջիկայ ճամբորդութեան կը պատրաստուին: Մեկնելէ քանի մը օր առաջ, Նապըմ բէկ Արամը կը դրկէ գիղին ամենէն լաւ նշանառու Վասանի մօտ՝ պինավարժութեան: Արամ այս փորձէն յաջող դուրս գալուն առթիւ Նապըմ բէկ Արամի դառնալով կ'ըսէ. «Ջուր տեղը չէր, որ բերդ էիր ելած»: Ան գիտէր, թէ Արամ շապինգարահիսայի էր եւ ինքնապաշտպանութեան կոնիւներուն բերդը գտնուած էր:

Գարաճա Վերանը ձգելով՝ ճամբայ կ'ելլեն: Մուխթարին կողմէ Վամպա Քրվա կոչուող մարդ մը առաջնորդ տրուած էր: Բաւական տեղ անվտանգ ընթանալէ ետք փորձանքի կը հանդիպին՝ իրենց հետեւող երկու աւապակ կը նշմարեն: Վամպա ձայն կու տայ անոնց ու կը հասկցնէ, թէ կառավարական մարդիկ են եւ

քիւրտեր: Լարուածութիւնը կը փարափի եւ ճամբան կը շարունակեն: Արամ լարուած մթնոլորտին մէջ մտերմութիւն ցոյց փութած էր Քապրիէի, անոր վստահութիւն ներշնչեր էր եւ քովէն կը քալէր:

Իրիկուան դէմ կը հասնին լերան գագաթը, ուր Իսկիթ Բէկի փուններն են: Հոն կը գիշերեն: Յաջորդ իրիկուն կը հասնին Քապագ Չէվլիկ գիւղը, ուր բնակարան մը պատրաստուած էր իրենց համար: Կը հաստատուին այս գիւղին մէջ: Հոս հեղինակը յարաբերաբար լաւ օրեր կ'անցընէ: Գիւղին մէջ իրեն պէս ապաստան գտած հայեր եւ հայուհիներ ալ կան:

Արամ խորունկ համակրանք ունէր Քապրիէի հանդէպ: Մակայն ան իբրեւ գիտակից հայ՝ գիտէր իր սահմանը: Քապրիէ միշտ յոյս ունէր Արամի հետ ամուսնանալու: Նստած Բէկ, օր մը, շատ գինով վիճակի մէջ, կը փորձէ լլկել իր իսկ աղջիկը՝ Քապրիէն: Արամ արգելք կը հանդիսանայ եւ կը փրկէ Քապրիէն:

Ընտանեօք կը փոխադրուին Պէյ Փունար: Հոս ալ հեղինակը կ'ունենայ իր կեանքի սովորական եւ անսովոր դէպքերը: Արամ արդէն լաւ գիտէր ձիավարել: Զինավարժութիւն ալ ըրած էր:

30 Հոկտեմբեր 1918ին Թուրքիա կը պարտուի եւ սկսեցին վարկը դնել: Արամ իր ունեցած-չունեցածը գրպանները լեցնելով օր մը ճամբայ կ'ելլէ: Բայց հապի կէս մղոն քալած՝ կը վերադառնայ. ան կը սիրէր Քապրիէն եւ չէր ուզեր աղջիկէն բաժնուիլ: Հեռա՛նա՞լ, թէ՞ ոչ: Քապրիէն Արամի հայութենէն ատելի՞ կ'արժէր: Արամի միտքը՝ «ո՛չ», իսկ սիրտը՝ «այո՛» կը պատասխանէր:

Արեն մը ետք, հաւանաբար Մայիս 1919ին, բաւական փայտամսելէ ետք, ան հետիոտն ճամբայ կ'ելլէ: Երկար ժամանակ քալելէ ետք Արամ կը հանդիպի կնոջ մը, որ Նստած Բէկի բարեկամ Խալիլ աղայի փունը ցոյց կու տայ: Արամ Խալիլ աղային քով ընդունելութիւն կը գտնէ եւ հոն կը գիշերէ: Կը հասնի Զիմառա (Ժողովուրդը իր խօսակցութեան մէջ Զառա կ'ըսէր) քաղաքը: Հոս հայ սրճարանափրոջ մը օգնութեամբ կը գտնէ իրեն ծանօթ ընտանիք մը: Կարճ ժամանակ մը հոս մնալէ ետք, կը մեկնի Սեբաստիա: Անկէ կ'անցնի հօրաքրոջը քով՝ Պոլիս:

Պոլսոյ մէջ Արամ կը փափաքէր արհեստի մը հետեւիլ: Հօրաքրոջը կը համոզէ Վինք, որ պէտք է դպրոց մտնէ: Դպրոցն աւարտելէ յետոյ Արամ Ամերիկա կ'անցնի:


Peter Balakian, "Black Dog of Fate", "Broadway Books", New York, 1997, միջակ չափի 289 էջ [Փիթեր Պալաքեան, «Ճակատագրի Սև Ծունը», անգլերէն]:

Նեղինակը ծնած է Ա.Մ.Ն., 1951ին: 1960ական թուականներուն սկիզբը ան յարաբերելի շփման մէջ էր իր մօրական մեծ մօրը՝ Տիգրանակերտ մեծցած Նաֆինայի հետ, որու միջոցաւ ան տեղեակ կ'ըլլայ հայ ազգի Սեօ Եղեռնին եւ ցաւերուն: Կը յիշէ իր մանկութեան լսած «հին երկիրի»՝ Վայաստանի մասին: Նեղինակին մօր կար հայրենիքի ոչ մէկ շօշափելի գոյութիւն, ոչ մէկ պարկեր. իր երեւակայութեան մէջ միայն Նաֆինան էր, որ կը մարմնացնէր Վայաստանը:

Նաֆինան ծնած էր 1890ին եւ մահացած 1964ին: Անոր մահէն ետք, Փիթըր յաճախ կը յիշէ պայն եւ անոր խօսքերը: Ան կը յիշէ մանաւանդ իր մեծ մօր խօսքը, երբ ան բարի եւ չար ոգիներու մասին խօսած արեւն, չար ոգիներու իբր հոմանիշ կը գործածէ «թուրքեր» եւ «ոճրագործներ» բառերը: Նեղինակը իր պարանոթեան շրջանին յաճախ կը յիշէ Վայաստանի մասին Նաֆինայի պարամունքը, տեղանուններով հանդերձ, որոնք իր մտքին մէջ կը փայտորոտին:

Նեղինակի՝ պարանոթեան շրջանի յուշերէն են իր մօր հետ ունեցած խօսակցութիւնները, որոնք յաճախ կ'ըլլային Վայաստանի եւ Արարատ լեռան մասին:

Փիթըրի հայրը Պոլիս ծնած էր: Պարանոթեան իր յուշերը հորը հետ՝ Պոլսոյ շուրջը կը դառնային: Նիւ Եորքի հայկական ճաշարաններու անուններէն ոմանք այդ շրջանի անուններ կը կրէին:



Վեդինակը դպրոցական շրջանին կը մրադրէ ուսումնասիրութիւն մը պատրաստել Հայաստանի մասին: Գրադարանին մէջ աղբիւրներուն մեծ մասը Թուրքիոյ կը վերաբերէր: Ան վարմանքով կը նկատէ, թէ այս աղբիւրները պարմական Հայաստանի մասին ո՛չ մէկ յիշատակութիւն ունէին:

Աւելի ուշ, երբ ան երիտասարդութեան սեմին կը գտնուի, հայրը զինք Հայաստանի եւ հայ ժողովուրդին մասին գիրքեր կարդալու կը մղէ: Փիթըր կը կարդայ դեպքան Մորկընթաուի յուշերը: Վեդինակը իր նիւթերը քաղելով հաւաստի աղբիւրներէ եւ լսելով ականատեսներէ, կը նկարագրէ Հայոց Եղեռնը եւ անոր հետ առնչութիւն ունեցող իրադարձութիւնները: Ան բաղդատակաւ կ'ընէ հայ ազգի չարչարանքներուն եւ հրեաներուն հանդէպ Գերմանիոյ նայիներու գործադրած ոճիրներուն:

Պատանութեան եւ երիտասարդութեան շրջանին, Փիթըր Պալաքեան կը լսէ նաեւ իր մօրաքոյրներուն պարմածները հայկական ջարդերուն մասին:

Մօրաքոյրներէն մէկը Փիթըրին կը պարմէ իր մօր վարմուտի Տովի (Աղանի) յուշերը, ինչպէս լսած էր անկէ: «Տիգրանակերտի մէջ խաղաղ կեանք մը կ'ապրէինք մինչեւ 1915ի ամառը: Այդ ամառ կը լսենք, թէ քաղաքին մէջ խանութպանները կը տարուին անյայտ ուղղութեամբ: Մանուկներ չեն վերադառնար դպրոցէն, տղամարդիկ տուն չեն վերադառնար արտերէն: Կիներ, մասնաւորաբար երիտասարդ կանայք, կ'անյայտանան բաղնիքէն վերադարձի ճամբուն վրայ: Շատ խանութներ եւ գորգի մթերանոցը կը կողոպտուին քաղաքին մէջ: Հայկական դպրոցի Խանձեան անունով ուսուցիչ մը կը սպաննուի: Կը լսեն «տեղահանութիւն, ձերբակալութիւն, բանտ եւ կախաղան» բառերը: Այս բաները կը պատահէին Վանի, Կարինի, Սեբաստիոյ եւ ուրիշ քաղաքներու մէջ եւս:

Շուրջով կայութիւնը կը վաւթարանայ Տիգրանակերտի մէջ ալ: Զինահաւաքի խուփարկութիւններ կ'ըլլան տունէ տուն: Կու գան նաեւ իրենց տունը: Մայրը հօրը արքանակը կը յանձնէ: Թուրքերը կը հաւաքեն նաեւ միս կտրելու դանակները:

Առաւօտ մը, երբ Աղանի կ'արթնայ, հրդեհի հոտ առնելով, իսլամական փաթոց մը իր մարմնին շուրջն առնելով կ'իջնէ

փողոց, ուր կիներու պոռչարութի ձայներ կը լսէ: Երբ անլի կը յառաջանայ, կը հանդիպի թուրք ամբոխին, որ կը սկսի քարկոծել ւինք: Աչքին մէկը ծանրօրէն կը վիրատրուի: Պատերը շօշափելով եւ խարխափելով կը վերադառնայ Կոնստանդնուպոլիս: Ամբողջ դէմքը վիրատրուած էր: Յաջորդ օրը հայրը ճամբորդութենէն կը վերադառնայ:

Օր մը երեկոյեան, թուրք ոստիկաններ իրենց Կոնստանդնուպոլիս քաղաքը դուրս կը բախեն: Հօրմէն Կոնստանդնուպոլիս քաղաքը դուրս կը գնալով: Քանի մը վայրկեան խօսակցութիւն տեսի կ'ունենայ. հայրը կ'ըսէ թէ ինք քրիստոնէական ծնած է եւ քրիստոնէական ալ պիտի մեռնի: Յաջորդ առաւօտ երբ Կոնստանդնուպոլիս քաղաքը կ'ելլեն, կը տեսնեն, թէ իրենց հայրը խաչուած էր բակին մէջ:

Աղանի օր մը առաւօտուն դուրս կ'ելլէ Կոնստանդնուպոլիս քաղաքը մէջէն: Թուրք ոստիկաններով շրջապատուած 10-15 հայ կիներ եւ մանուկներ կը տեսնէ հրապարակին մէջ: Ոստիկանները կը մտնեն կիները եւ մանուկները՝ հրամայելով պարել: Կիները կ'աղօթեն: Քիչ ետք, ոստիկանները քարիտ թափելով կ'այրեն Կոնստանդնուպոլիս:

Յաջորդ առաւօտ, Աղանի իր մօրը, քրոջը եւ եղբայրներուն հետ տեսնուած կ'ըլլայ: Առաջին գիշերը Կոնստանդնուպոլիս Տիգրիսի ափերուն՝ բաց երկինքի տակ: Օրական տասնութեայ ժամ կը քալեն: Իրենց ուրեղիքի պաշարը երրորդ օրը կը հափնի: Ամբողջ ժամանակը անոնք ուրեղիք ճարելու կը ձգնին: Հինգերորդ օրը Աղանիի տղայը եւ հիանդայած մայրը գետին կ'իյնայ ճամբուն վրայ եւ հոն կը մնայ:

Կը շարունակեն քալել: Ոստիկանները կը մտնեն եւ յաճախ դրամ կը պահանջեն: Անոնք սուկալի վայրագ ոճիւրներ կը գործեն, կը ծեծեն, կը չարչարեն, կը խոշտանակեն եւ կը բռնաբարեն: Աղանի եւս կը բռնաբարուի:

Անլի յառաջանալով, կը հասնին Եփրատի ափը, ուր կը հանդիպին հայոց դիակներու, որոնք շար գէշ կը հոգնեն: Հոս բազմաթիւ կիներ եւ աղջիկներ Եփրատը նետուելով անձնասպան կ'ըլլան՝ բռնաբարուելէ խուսափելու համար:

Կարաւանը անապատային շրջաններ կը հասնի կոտորակուած վիճակով: Եղբայրը՝ Տիգրանը կը մահանայ: Աղանի օր մը աւագ

ներուն վրայ սգայապիլի կը քնանայ ու յաջորդ առօրու ինքզինք կը գտնէ քիւրտի մը ձիուն վրայ: Այս քիւրտը սայն հինգ տարի կը պահէ: Ան քիւրտին երկու զաւակներ կու տայ»:

Ապա, Փիթըր Պալաքեան կ'անդրադառնայ իրեն սպգական Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեանի յուշերուն եւ վկայութիւններուն, կը մէջբերէ հատուած մը անոր՝ Պերլինի մէջ Թեհլիրեանի դատարանական վկայութենէն:

Վեդինակը համոզում կը յայտնէ, թէ Հայոց Յեղասպանութեան Թուրքիոյ ուրացումը մարդկային պարմութեան մէջ եզակի արարք մըն է:


Վեդինակն այնուհետեւ կը վերադառնայ իր մեծ մօրը՝ Նաֆինային: 1915-1918ի ջարդերէն ետք, ան իր ամուսնոյն Ա. Մ. Ն.ի քաղաքացի ըլլալուն հանգամանքով, բողոքագիր մը կը ներկայացնէ թրքական իշխանութիւններուն, որու մէջ ան կը յիշէ իրենց ընտանիքի անդամներուն սպաննուիլը թուրքերու կողմէ, իրենց ունեւորածքին գողցուիլն ու փճանալը եւ ամբողջ ազգի մը բնաջնջումը: Ան այս հարցը ներկայացուցած էր դատարանի մը, որ կը պատկանէր Արեւմտուրքի եւ ոչ թէ Թուրքիոյ, որ քրիստոնէաները եւ փոքրամասնութիւնները կը ճնշէր եւ կ'իրաւարկէր: Վեդինակը մտովին կը պատկերացնէ իր մեծ մայրը՝ Նաֆինան, երկու աղջնակներու 29 տարեկան այս մայրը, որ Հալէպի փողոցներուն մէջ 1915ին հոս ու հոն կը շրջի՝ հին բարեկամներ եւ ծանօթներ գտնելու յոյսով: Նաֆինա վերջապէս կը փոխադրուի Նիւ Ճըրպի, Ա. Մ. Ն., եւ իր վկայութեան ձայնը հին աշխարհէն կը բերէ դէպի նորը:

Harry Artinian, "Memoirs of a Rascal Boy During World War I - The Godless and The Infidels", Writers Club Press, U.S.A., 2000, միջակ չափի 125 էջ [Քերրի Արթինեան, «Չարաճճի Մանուկի Մը Յուշերը Առաջին Համաշխարհային Պատերապմէն - Անսարուածն ու Անհասարները», անգլերէն]:

Քերրի Արթինեան գրի առած է վերապրող Յովսէփ Պալեանի յուշերը: Վերջինս ծնած է 1905ին, Հաճըն: Չորս փարեկանին կը կորսնցնէ հայրը: Մայրը, երկու քոյրերը եւ ինք կը փոխադրուին Արանա եւ կ'ապրին երէց եղբօրը եւ փրկնոջ հետ: Մանկութիւնը խաղաղ կ'անցնի Արանայի մէջ: Ունի երկու սերտը ընկերներ՝ Մանուկ եւ Պօղոս:

Յովսէփի քոյրը՝ Հռիփսիմէ կը նշանուի եւ մէկ շաբաթ ետք կը պսակուի իրենց դրացի հաճընցի երիտասարդի մը հետ: Պսակէն ետք փեղի ունեցած խնձոյթին ընթացքին չորս ոստիկաններ կու գան եւ կը հրամայեն փեսային՝ իրենց ուղեկցիլ վիճուորութեան երթալու համար: Յովսէփի եղբայրը կ'ընդդիմանայ: Ոստիկանապետ Սուլեյման պէյ կը սպառնայ: Հոն գտնուող փարեց մարդիկը վայն կաշառելով կը հանդարտեցնեն: Խնձոյթի վերջաւորութեան անոնք կը ձերբակալեն փեսան:

1915ի գարնան, պեղական հրամանով, գաղթի ճամբան կը բռնեն: Երբ Օսմանիէ կը հասնին, գիշերով կը կողոպտուին: Քանի մը օրէն կը հասնին Գաթմա: Աւելի յառաջանալով, կ'անցնին Պապ քաղաքէն եւ կը յառաջանան դէպի Մեսքէնէ, որու արուարձաններուն մէջ կ'ապրին վրաններու մէջ: Չմեռը կ'անցը-



ներն քարայրներու մէջ: Հոս կը գործեն անօթութիւնը, ծարսն ու հիւանդութիւնները: Վերջապէս, 1916ի գարնան, պայմանները քիչ մը կը բարելաւուին:

Գաղթականներու նոր կարաւաններ կը հասնին: Դէպի Սպուս Հարար ճամբայ ելլելու հրաման կու գայ: Երբ հոն կը հասնին, Յովսէփ կը նկատէ, որ իրեն հետ են միայն մայրն ու քոյրը, զորս կը կորսնցնէ դէպի Ռաքքա Ճամբուն վրայ: Ռաքքայի մէջ ան կը գտնէ իր մեծ քոյրը՝ Հռիփսիմէն ու կը մնայ բարի հայ կնոջ մը հետ: Ետք շանցած՝ նոր կարաւան մը կը հասնի Ռաքքա, որու մէջ Յովսէփ իր մայրն ու կրտսեր քոյրը կը գտնէ: Երէջ քոյրն ալ կու գայ իրենց մօտ ու կը վերամիանան: Մայրը հիւանդացած էր: Այս վերջին կարաւանին մէջ ան իր լաւագոյն ընկերները՝ Պօղոսը եւ Մանուկը կը գտնէ: Փոքր քոյրը խեղդամահ կ'ըլլայ Եփրատին մէջ: Յաջորդ օրը մայրը կը մահանայ: Յովսէփ երկու օր երէջ քրոջը վրանին մէջ կ'անցընէ: Երբ կը վերադառնայ բարի կնոջ վրանը, հոն չի գտներ զայն. կինը թիֆուսէ մահացած էր եւ ամէն ինչ՝ այրած: Իր Մանուկ ընկերն ալ կը կորսնցնէ մայրը եւ քոյրը, որոնք փոթորիկին եւ հրդեհին զոհ կ'երթան:

Երեք ընկեր կ'որոշեն Մեսքէնէ վերադառնալ: Առաւօտ մը ճամբայ կ'ելլեն: Ետք դժուարութիւններու կը հանդիպին, նոր մորթած դիակներ կը տեսնեն: Արաբ կիներ հացով կը կերակրեն զիրենք: Վերջապէս կը հասնին Մեսքէնէ: Յովսէփ կը գտնէ իր եղբայրը, իսկ Մանուկ՝ իր հայրը: Եղբայրը շատ ջերմութիւն ցոյց չի փար իր հանդէպ, իսկ Մանուկի հայրը կը մերժէ հոգալ իր որդիին: Եղբայրը Հալէպ կը փախչի եւ կը մերժէ զինք հետը փանի:


Երեք ընկեր միասին կ'ապրին Մեսքէնէի մէջ: Յովսէփ չի յիշեր, թէ ճիշդ քանի՞ ամիս անցած է: Անօթութիւն, ծարսու եւ վրանգ յաճախ կ'ընկերակցին իրենց:

Օրին մէկը ոստիկան մը կը յայտարարէ, թէ նոր վրաններ եւ օրական երեք անգամ ճաշ պիտի տրուին: Այդպէս ալ կը պատահի, բայց սա կը տեսնէ երեք օր միայն, որմէ ետք բռնի կերպով ճամբայ կը հանուին դէպի անապատ: Գիշեր եւ ցերեկ ճամբորդելով՝ անօթի եւ ծարսու կը հասնին Քեմալ փաշայի պօստոնը Տէր Զօրի մօտ: Զիրենք հոն հասցնող հայ կառապանները կը

սպաննուին: Այս հաւաքավայրը փոքրերուն համար է: Մեծահասակները ուրիշ տեղ կը տարուին: Հոս շատ գէշ օրեր կ'անցընեն: Ապա գանոնք Մուսուլ տանելու հրաման կու գայ: Կը հաւաքեն Եփրատի ափին, իրաքանչիւրին անունը կ'արձանագրեն եւ հայ կու տան: Բայց հայը շատ աղի ըլլալուն պատճառով չեն կրնար ուրել: Պէտք է անցնին Մուվարէն, Շեքրատէն եւ Հասիչէն՝ Մուսուլ հասնելու համար: Այս ճամբուն վրայ կը տառապին անօթութենէն, ծարաւէն եւ սաստիկ տաքէն: Կարաւանն առաջնորդող չէթէները աղջիկները եւ կիները կը բռնաբարեն: Կը հասնին Խապուր գետի ափը, ու շարունակելով ճամբան, կը հասնին Շեքրատէի մօտերը հաւաքավայր մը, ուր գաղթականներ կանգ առած էին: Հոս շատ թշուառ պայմաններ կը տիրեն: Երեք ընկերները գաղթակայանէն դուրս կու գան՝ ուրելիք փնտռելու համար անապատին մէջ, բայց ոչ մէկ բան կը գտնեն եւ կը վերադառնան գաղթակայան: Կը հրամայուի ճամբան շարունակել: Կը հասնին խոշոր փոսի մը առջեւ: Չէթէները զիրենք փոսին մէջ կը նետեն: Երեք ընկերները հոն կ'իյնան: Յովսէփ ողջ կը մնայ եւ դուրս կու գայ: Միւսները մնացեալ գաղթականներուն հետ կ'այրին փոսին մէջ: 75,000 հոգինոց այս կարաւանէն կ'ապարի տասներկու հոգի միայն: Ողջ մնացողները հինգ օր փոսէն դուրս կը փորձեն ելլել ու վերջապէս կը յաջողին: Կը վերադառնան Շեքրատէ: Հոս կը հալածուին չէթէներուն կողմէ, սակայն կը յաջողին փախուստ տալ անապատին մէջ: Կը հանդիպին արաբ իշապանի մը, որ զիրենք գիտ մը կը տանի: Պետելի արաբներու գիտ մըն էր՝ վրաններով լեցուն: Արաբ կին մը Յովսէփը իր վրանը կ'առաջնորդէ եւ հոգ կը տանի անոր: Հոսկէ նոյն գիտին մէջ ուրիշ, անելի հարուստ ընտանիքի մը վրանը կը փոխադրուի:


Շատարշ Նարդունի, «Աքսորի Օրագիր», «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ» մատենաշար, րպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2000, մեծ չափի 71 էջ:

Անուանի գրողին այս գիրքը արտրի, ջարդի եւ փառապանքի ապրուած վկայութիւն մըն է: Տարագրութիւնը կը սկսի 13 Օգոստոս 1915ին Արմաշէն, ելի սայլերով եւ ապա շոգեկառքով: Աքսորի երթուղին է՝ Արմաշ-Տէրպէնի-Ղարապաղ-Պապարլու Արմաշ-Խասպաղ-Քանդրա-Քոճա Քէոյ-Գուրու Տէրէ-Արաբապար: Կարճ օրագրութիւններով գրուած այս վկայութեան մէջ հեղինակը ամփոփ ձեռով իրենց ամէնօրեայ ապրումները, ապագայի անորոշութեան սարսափը, սննդեղէնի պակասը, հիւանդութիւններու եւ մահուան անմիջական գոյութիւնը ներկայացուցած է: Նկարի առնելով, որ օրագրութիւնն արձանագրուած է քսորի պայմաններուն մէջ, անիկա կիսափ ձգուած է: Սա յստակօրէն կ'երեւի օրագրութեան փերակէն պատճենահանուած որոշ էջերուն մէջ, որոնք փայուած են գիրքին վերջատրութեան:



Տիգրան Ճեպեճեան, «Ապրուած Օրեր Հայաստանութենէն. Տէր Զօր, 1915», հրատ. «Վիոյկեր Ճեպեճեան Գրադարան»ի, «Կիլիկիա» հրատարակչարուն, Հալէպ, 2001, միջակ չափի 55 էջ:

1915ի Օգոստոսին յիսուն ընտանիքներով եւ երկու ժանտարմաներու հսկողութեամբ ճամբայ կ'ելլեն Այնթապէն: Երկու օրէն կը հասնին Պապ, ուրկէ Տէր Զօր կը տարուին: Այդ ժամանակ Տիգրանը 27 տարեկան էր: Տէր Զօրի կուսակալը հայասէր եւ ասնի Ալի Սուսար պէյն էր, որուն, Թալաաթի հրամանով, արհեսարքու չէչէն Ջեքին կը փոխարինէ: Վերջինիս Տէր Զօր հասնելէն ետք, կայտութիւնը կը վարանայ: Ան, Ռաքքայէն դէպի Տէր Զօր Եփրատի գետերէքն ասարող բոլոր հայերը Տէր Զօր բերել կու տայ եւ մօտաւորապէս 100,000 հայ գաղթականներ կը համախմբէ: Ջեքի փաշա յայտարարել կու տայ սուր լուր մը, թէ կառավարութիւնը եւ զինուորականութիւնը իրարու հետ համաձայն չեն, եւ թէ անոնք որոնք զինուորականութեան կը յարին՝ Ռասուլ-Այն պիտի մեկնին, իսկ կառավարութեան յարողները գետին միւս կողմը՝ Ճեպիթէ պիտի մեկնին: Այսպիսով, ան հայութիւնը երկուքի կը բաժնէ՝ հաւանական ապստամբութեան մը առաջքն առնելու համար: Պանդոկները հաւաքուածները Եփրատի ափին կը քարոզուին, իսկ միւս մասը Խապուրի գետերէքքը կը տարուի:



Այրերը կիներէն բաժնետու հրաման կու գայ: Տիգրանը եւ իր ընկերը՝ այնթապցի Մարգիս Լալէյեանը կը հարկադրուին Սուսարէն ճամբայ ելլել 600 հոգիով: Ստոյգ մահը տեսնելով՝ եօթը ընկերներով կ'որոշեն փախչիլ: Վեղինակը կը յիշեցնէ, որ պէտք չէ կարծուի, թէ հապարատը հայեր միայն երկու ժանտարմաներու հսկողութեան տակ կը տարագրուէին. 50ի չափ չէչէններ եւ 200

կառավարական սինտորներ կը հսկէին հեռուէն:

Եօթը հոգի անապատին մէջ գիշերով ճամբայ կ'իյնան: Գիշերները կը ճամբորդեն, իսկ ցերեկները կը պահուրդին: Կը հանդիպին արաբ սինեալներու, որոնք կը կողոպտեն սինեալներ, նոյնիսկ ջուրը եւ ուրեղիքները կը խլեն: Սարգիս իր մէկ ոսկին կը կլլէ: Այս դէպքէն ետք անոնք մերկ վիճակով կ'ուղղուին դէպի գետեւերք: Հոս՝ Քէօրէ, կը հանդիպին ուրիշ արաբներու, որոնք կը հիւրասիրեն սինեալներ եւ երիտասարդներէն հինգը գործի համար կը պահեն: Մնացեալ երկուքը կ'երթան Ռաքքայի ուղութեամբ:

Տիգրան արաբի տարսով Տէր Զօր կը վերադառնայ եւ փախստական կ'ապրի: Քաղաքէն դուրս պանդոկ մը կ'ապաստանի՝ հոնկէ Հալէպ երթալու համար: Կառապանը ճամբայ կ'ելլէ, բայց իր հայ ըլլալը յայտնի ըլլալով՝ Թէպնի շհասած Տիգրան կը հեռանայ կառքէն: Ճամբան կը հանդիպի վրանգներու, բայց հրաշքով կ'ապարի եւ կը հասնի Մեսքէնէ: Երկու օր հոս մնալէ յետոյ, շատ դժուարութիւններով կը հասնի Հալէպ, իր հօրեղբօր՝ Արմենակ Ճեպեճեանի մօտ:

Հեղինակը կ'անդրադառնայ իր երէց քրոջ՝ Արաքսիա Ճեպեճեանի նահապետութեանը Տէր Զօրի մէջ: Աւարտելէ ետք Այնթապի Հայկանոյշեան վարժարանը, Արաքսիա կը հետեւի Աղջկանց Ամերիկեան Վարժարանին եւ յետոյ Աղջկանց Ամերիկեան Գոլէճին Մարաշի մէջ: Ուսուցչական պաշտօններ կը վարէ Մարաշի Գոլէճին եւ ուրիշ, ապագային վարժարաններու մէջ: Կը մեկնի Անգլիա եւ Ուուր Պրոք Գոլէճի դասընթացքներուն կը հետեւի: Անգլիայէն վերադարձին նորէն ապագային դպրոցներուն մէջ կը ծառայէ: Երբ պատերազմը կը ծագի, կ'աքսորուի Տէր Զօր, ուր մեծ ծառայութիւններ կ'ընէ փարագրեալներուն եւ կը քարոզէ: Հոն կը բանտարկուի եւ չարչարանքներով կը նահապետուի:

1916ին, Տէր Զօր եղած ապեն, Արաքսիա նամակ մը կ'ուղղէ Գերմանիոյ Հալէպի հիւպատոսին, նկարագրելով թուրքերու ի գործ դրած վայրագութիւնները եւ հայ քստրականներուն թշուառ վիճակը: Նաեւ նամակ մը կ'ուղղէ մեծ հայասէր օրդ. Պէտրիս Ռոհնրին՝ նոյն նպատակով: Ուրիշ նամակներ ալ դրկած է փարքեր ուղղութիւններով:

**Վահան Պահարեան, «Աքսորեացի Գողգոթան»,
«Զանգակ-97» հրատ., Երևան, 2001, միջակ չափի
114 էջ:**

Վահան Պահարեան կը հրատարակէ պէլլանցի Կարապետ Պոյաճեանի գողգոթայի յուշերը, Կորս գրի առած է նոյնպէս պէլլանցի Ռաֆայել Վրթանէսեանը:

Կարապետ Պոյաճեան իր հարապատերու եւ 25-30 պէլլանցի ընդանիքներով արտորած էր Տամակոսի մօտ Խանը Շեխ գիւղը եւ կ'աշխատէր ճանապարհաշինութեան վրայ: Թուրքերը հոնկէ Կանոնք Ռասուլ-Այն կը փոխադրեն: Արարները ամէն օր իրենց աղջիկները կ'առեանգէին: Չէրքէյները նոյնպէս կը կեղեքէին Կիրենք: Հոս շատ քառասանքներ կ'ապրին:



Կարապետ մահացող կնոջ մը վերմակը վերցնելով՝ մէջէն ոսկի կը գտնէ: Մակայն չէրքէյները մարտիչի մը միջոցաւ իմանալով՝ կը յափշտակեն ոսկիները եւ Կարապետը կը ծեծեն: Ճեպիրէի մօտ, Կարապետ կը հասնի Թիրֆեք ասորի գիւղը, ուր ասորիները հոգ կը փանին հոն հասած հայոց:

Ճամբան կը շարունակեն եւ Մուսուլ կը հասնին: Քաղաքը մտնելու չեն արտօնուիր, ուստի Մուսուլէն դուրս վանք մը կ'ապաստանին: Որոշ ժամանակ անոնք ապար կը մնան եւ Մուսուլ կ'երթան: Օսմանեան Տէրութիւնը հացի դրամ կը բաշխէր հայ գաղթականներուն: Այդ օրը դրամ բաշխուելուն արգելք կ'ըլլան խումբ մը թուրք փնտորներ ու Կիրենք 15 օր բանտը կը դնեն՝ ետքը կոտորելու համար: Քաղաքին ասորիները կը բողոքեն գայմագամին եւ հայ բանտարկեալներն ապար արձակել կուտան:

Կարապետ եւ եղբայրը կ'ուղղուին դէպի Թիրֆէք, ուր կարող էին հաս գտնել: Այդ գիշեր եղբայրը կը մահանայ: Այսպիսով, 25 հոգինոց ընդանիքէն միայն Կարապետը կը մնայ: Մէկ ամիս ետք ան Մուսով կը վերադառնայ:


Կարապետ իր ընկերոջ հետ Պաղտատ կ'անցնի: Հոս հայերը կը խնամեն զինք: Անգլիացիները կը գրաւեն Պաղտատը եւ Կարապետ կը սկսի անգլիացիներուն մօտ աշխատիլ: 17-18 տարեկան հասակին ան կը միանայ հայ կամաւորներու խումբին: Անգլիացիք զիրենք կը փանին Փոր Սայիտ եւ ապա Կիպրոս՝ մարտումներու համար: Կը վերադառնայ Փոր Սայիտ, ապա կը դրկուի Նապլուս ու կը մասնակցի Արարայի ճակատամարտին:

Պարերազմը կը վերջանայ: Կարապետ Արանա կ'երթայ: Չորք Մարգպանի մէջ Կարապետ կը գտնէ իր Աբրահամ եղբայրը ու միասին Պէլլան կը հաստատուին:

Աւերիս Փափապեան, «Հայերի Յեղասպանութիւնը Թուրք Քաղաքական Գործիչների Յուշագրութիւններում», «Ջանգակ-97» հրատ., Երևան, 2001, միջակ չափի 160 էջ:

«Թուրք Պետական Գործիչ Մեհմէթ Քեամիլ Փաշան Արեւմտեան Հայաստանի 19րդ Դարի Վերջին Քառորդի Իրադարձութիւնների Մասին» (էջ 19-103)

Մեհմէթ Քեամիլ փաշան սուլթան Ապտուլ Համիդի գահակալութեան շրջանի հանրայայտ պետական գործիչներէն մէկն է: Իր յուշերուն մէջ ան կ'ըսէ, թէ խոհեմութիւն է ջնջել եւ վերացնել հայերը, որ պէսպիսի օտարներուն առիթ չտրուի միջամտելու Օսմանեան Պետութեան գործերուն: Ան Անգլիան Թուրքիոյ պինակից կը համարէ այս գործին մէջ: Թուրքերն ունին բոլոր միջոցները (քիւրտ, չէրքէզ, կուսակալ, դափաւոր, հարկահան, ոստիկան, եայլն), իսկ հայերը ո'չ մէկ բան ունին:



1894ի Մասունի կոտորածներուն ժամանակ, սուլթանական կառավարութիւնը մեծ ջանքեր կը թափէ հանդարտեցնելու միջազգային հասարակութեան կարծիքը: Այս առթիւ Քեամիլ փաշան Ապտուլ Համիդին խորհուրդ կու տայ հետաքննող յանձնաժողովին վեկոյցը շրապ կերպով հրատարակել Անգլիոյ մէջ, որպէսպիսի ընդհանուրին տրամադրութիւնը հանդարտի: Այս նպատակին հասնելու համար, բաւարար է, որ նշուած վեկոյցը հրատարակուի օտար պաշտպանեալներու ստորագրութեամբ:

Կարարուած ջարդերուն առնչութեամբ սուլթան Ապտուլ Համիդի հերքումները, լոյս տեսած երոպական մամուլին մէջ, իրենցմէ սպասուած արդիւնքը չեն տար: Այս առիթով ռուսական պետա-

կան խորհրդական Ժափովսքին արտաքին գործերու նախարարութեան ուղղուած պեկոյսին մէջ կը յայտնէ, թէ երոպական մամուլին մէջ սուլթանին հերքումները չկրցան հասարակութեան ընդվզումը հանդարտեցնել: Այս պատճառով, Թուրքիան արտասահմանեան բոլոր թերթերու երկիր մուտքն արգիլեց:

Թուրքերը նկատի չեն առնել Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսաստանի դեսպաններուն ներկայացուցած առաջարկներն ու բարենորոգումներու ծրագիրը: Մեպտեմբեր 1895ին փետի կ'ունենայ պոլսահայոց ջարդը: Կոտորած փետի կ'ունենայ նաեւ Տրապիզոնի մէջ: Այս ուղղութեամբ Քեամիլ փաշան իր յուշերուն մէջ կը շեշտէ, թէ քիւրդերու վինաթափումը եւ քրիստոնէայ պաշտօնեաներու նշանակումը ծանր անդրադարձ կրնան ունենալ քիւրդերու վրայ, ուրեմն բարենորոգումներուն կիրարկումը կապուած է դժուարութիւններու հետ:

Անգլիական, ֆրանսական եւ ռուսական պետութիւններու՝ միաձայնաբար Բարձր Դրան յղուած յուշագրին իբր արդիւնք, սուլթան Ապտուլ Համիտ անհրաժեշտ միջոցներ ձեռք կ'առնէ: Այս առնչութեամբ սուլթանին արձակած հրամանին առիթով, Քեամիլ փաշա իր կարծիքը կը յայտնէ սուլթանին:

Ուրիշ մէկ գրութեամբ Քեամիլ փաշա կը վերլուծէ եւ իր կարծիքը կը յայտնէ հայաբնակ վիլայէթներուն մէջ բարենորոգումներ կատարելու կապակցութեամբ երեք մեծ պետութիւններու՝ 6 կէտերէ բաղկացած առաջարկին նկատմամբ:

1895ի Պապը Ալիի Յոյսը Մեծ Վեպիր Սաիտ Փաշայի Յուշագրութեան Մէջ

Սաիտ փաշան (Մեհմէտ Եափուր Չելեպի, 1838-1914) 19րդ դարու վերջին քառորդի թուրք ականատր քաղաքական գործիչներէն մէկն է: Սուլթան Ապտուլ Համիտի գահակալութեան շրջանին ան ինը անգամ նախարար նշանակուած է: 1908 թուականին՝ կը միանայ «Միութիւն Եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան: Իր յուշերէն կը յայտնուի, թէ ան Հայկական Հարցը բանակցութիւններու եւ դիւանագիտական միջոցներով լուծելու կողմնակից եղած է:

Ա. Պոլսոյ Պապը Ալիի հայկական ցոյսին մանրամասնօրէն

անդրադառնալով, Սահյր փաշա կը յիշէ թէ պեւոթինը նախօրօք
տեղեակ էր այդ ցոյցէն: Ան կը ձգտի վիճարական միջա-
մութեամբ կանխել թուրք խուժանին եւ հայ ցուցարարներուն
բախումները: Սակայն Ապրուլ Վամիտ եւ ռազմական նախա-
րարութիւնը դիպումնատր կերպով կը ձգձգեն այդ միջամտու-
թիւնը, որպէսզի վիճուած ամբոխը հաշուեյարդար տեսնէ հայոց
հետ: Ապրուլ Վամիտ ծրագրած էր հայկական ջարդ կազմա-
կերպել: Ան գաղտնի կերպով կը պինտ սոֆթանեն ու իսլամ
խուժանը, որուն մէջ կային ծպտուած վիճարարներ եւ կը դրկէ
ցուցարարներուն վրայ: Միջազգային հասարակութիւնը խստօրէն
կը դատապարտէ այդ յանցագործութիւնները եւ կը պարտադրէ
իր կառավարութիւններուն՝ ապրու միջոցներ ձեռք առնել: Ասոր
իբր արդիւնք, Բարձր Դուռը կը վաւերացնէ «Մայիսեան Բարեն-
րոգումներ»-ու ծրագիրը, որ հիմնուած էր Պերլինի Վեհաժողովի
61րդ յօդուածին վրայ: Այս կոտորածներուն Կոնստանտնուպոլսի
հազար անմեղ հայեր: Սեպտեմբեր-Նոյեմբեր 1895ին վանգուա-
ծային կոտորածներ տեղի կ'ունենան Տրապիզոնի, Դերջանի,
Բաբերդի, Երզնկայի, Քղիի, Չարսանձաքի, Բաղէշի (Պիթիս),
Եդեսիոյ, Կարինի, Մելիտինի, Խարբերդի եւ Տիգրանակերտի
մէջ: 1894-1896 թուականներուն, հայ զոհերուն թիւը 300,000ի կը
հասնի:

Օսմանիպմի Գաղափարախօսութիւնը Երիտթուրքական Գործիչ Ճեպալ Նուրիի Երկերուն Մէջ

Օսմանիպմի գաղափարախօսութիւնը ծնունդ առած է 19րդ
դարու կէսերէն եւ կարեւոր տեղ գրաւած պեւրական մարմիններու
գործունէութեան մէջ: Օսմանիպմը կը ձգտէր միաձուլել ոչ-իսլամ
ժողովուրդները «օսմանեան ազգ»ին մէջ: Այի եւ Ֆուստի փաշա-
ները օսմանիպմի ջարագովներն էին: Այս գաղափարախօսութի-
ւնը պարտաւոր մը դարձաւ, որովհետեւ ան մէկ կողմէ կը ձգտէր
պահպանել իսլամի տիրապետող դրոյթները եւ միւս կողմէ
հաւասարութիւն դնել իսլամին եւ քրիստոնէային միջեւ: 1860-1870
շրջանին, «Նոր Օսմանները» յարակօրէն կը շեշտէին թուրքերուն
տիրապետող դիրքը:

1908ի Երիտթուրքերու յեղափոխութենէն ետք, օսմանիպմը կը

վերակենդանանայ, սակայն շուրջով կը մոռցուի: 1910ին Երիտթուրքերու՝ Մալմեիկի մէջ տեղի ունեցած ժողովին, Թալաաթ յարակօրէն կը շեշտէ, թէ չի կրնար հաւասարութիւն գոյանալ թուրքին եւ քրիստոնէային միջեւ: Աւելի ետք, իթթիհապականներու 1911ի համագումարին մէջ կը շեշտուի, թէ Թուրքիոյ բոլոր հպարակներու օսմանականացումը պէտք է իրագործուի ոչ թէ համոզումով, այլ՝ պէնքի ոյժով:

1912-1913ի Պալքանեան պարտերազմի շրջանին, համաթրքականութիւնը (փանթուրքիզմ) եւ համիլամականութիւնը (փանիսլամիզմ) կը դառնան Երիտթուրքերուն քաղաքականութեան առանցքը: Այս գաղափարախօսութիւններու ներկայացուցիչներէն էին Զիա Կէօքալփը, Եուսուֆ Աքչուրան, Ֆուատ Քէօփրիպիւն, Բամայիլ պէյ Գասփրիսպիւն եւ Ճելալ Նուրին:

Ճելալ Նուրին իր երկերուն մէջ ոչ-իսլամ ժողովուրդներէն յարակօրէն կը պահանջէ հաշտուիլ իրենց իրաւագործ վիճակին հետ եւ ազգային ձգտումներէն հրաժարիլ:

Ղեկնակը՝ Աւերիս Փափապեանը թարգմանաբար կը ներկայացնէ Ճելալ Նուրիի «Օսմանիզմի Ապագան» գիրքէն հատուածներ, ինչպէս նաեւ «Հայկական Եւ Քրդական Հարցերը» գրութիւնն ու «Ապարամարտ» թերթին ուղղուած բաց նամակ մը: Փափապեանը կ'ընդգծէ, թէ Ճելալ Նուրին եւ երիտթուրքերը երկդիմի ու ազգայնամոլական ծրագիրներ ունեցած են հայ եւ քիւրտ ժողովուրդներուն հանդէպ:

Հայկական Հարցը Եւ Մեծ Եղեռնը Ճեմալ Փաշայի Յուշագրութեան Մէջ

5 Յուլիսի 1919ին Կ. Պոլսոյ ռազմական արտակարգ պատեանը մահուան վճիռ կ'արձակէ Թալաաթի, Էնվերի, Ճեմալի, Նապըմի, Պեհաւերպիւն Շաքիրի եւ ուրիշներու նկատմամբ: Այս որոշումէն կարճ ժամանակ ետք Թալաաթն ու Ճեմալը (որոնք փախուստի մէջ էին) կը ձեռնարկեն իրենց յուշերը գրել: Այս յուշերուն մէջ, երկուքն ալ, ստեղծով, իրենք վիրենք մեղաւոր ու յանցաւոր չեն նկատեր Հայոց Մեծ Եղեռնին համար:

Ղեկնակը կանգ կ'առնէ Ճեմալ փաշայի յուշերուն մէջ «Հայկական Հարցը» խորագրով գլուխին առջեւ: Ճեմալ 1915 թուական

նի ողբերգութեան դրդապարճառները կը վերագրէլ ցարական Ռուսիոյ վարած քաղաքականութեան: Ըստ իրեն՝ Ներսէս արք. Վարժապետեան Պապրիարքը Սան Սթեֆանօ գացած էլ ցարին հովանաւորութիւնը խնդրելու հայոց անկախութեան հարցով, մինչդէռ ան գացած էր ո՛չ թէ անկախութիւն հայցելու, այլ որոշ չափով վերջ տալու հայոց հանդէպ կապարտող ճնշումներուն, հարստահարութեան եւ խտրականութեան: Ճեմալ փաշա ակնարկելով 1894-1896ի ջարդերուն, կ'ըսէ թէ թուրքերը անբարեացակամ վերաբերում չունեցան հայոց հանդէպ: Ան կը նշէ, թէ ինք եւ երիտթուրքերը խստագոյն կերպով կը դաւապարտեն այդ իրադարձութիւնները:

Ճեմալ փաշա 1909ի Արանայի ջարդերուն պարասխանաւորութիւնն ամբողջովին կը բեռնէ Վնչակեան կուսակցութեան անդամ Մուշեղ եպիսկոպոսի (Արանայի հայոց թեմի Առաջնորդ Մուշեղ եպս. Մերոբեան - խմբ.) եւ Արանայի նահանգապետ Ճեասր պէյի վրայ: Ըստ իրեն՝ Ճեասր պէյ պէտք է զգար վրանգը եւ վնասակերծէր եպիսկոպոսը: Այսպէղ Ճեմալ փաշա եւ ուրիշ երիտթուրք պարասխանաւորներ դիտումնաւոր կերպով խեղաթիրած են ճշմարտութիւնը, քանզի Արանայի ջարդերը նախօրօք կազմակերպուած էին: Աւելի յառաջ երթալով՝ Ճեմալ կ'ըսէ, թէ 1914ի պատերազմի նախօրեակին, թուրքերը կը ձգտէին թուրքոսական համաձայնագրով իրենց սրանձնած պարտականութիւններն իրագործել: Սակայն ճշմարտութիւնն այն է, թէ անոնք բռնի տեղահանեցին եւ ջարդեցին արեւմտահայերը: Ճեմալ հայերը կը նկատէ դաւաճան եւ թրքական բանակը թիկունքէն հարուածող, մինչդէռ հայերը տեղահան եղան եւ ջարդուեցան պատերազմի ճակատէն շար հեռու վայրերու մէջ:

Ճեմալ փաշայի յուշերուն վերլուծումը ցոյց կու տայ, թէ անոր տեսակէտները կեղծ եւ խեղաթիրուած են:

Վայոց Ցեղասպանութեան Գլխաւոր Յանցագործ Թաւաթ Փաշայի Յուշագրութեան Մասին

1941-1942 թուականներուն Թուրքիոյ մէջ կը խմորուին ուրիշ սպգերու նկատմամբ անհանդուրժողական ու թշնամական կեցուածքներ եւ գրգռիչ քարոզներով հանդէս կու գան բարձրաս-


տիճան պեղական ու հասարակական գործիչներ, ինչպես վարչապետ Երվրի Սարաճողուն, որ համաթրքական մըն է: Թրքամու Օղու պ թիւրքանը կ'ըսէ, թէ համաթրքականները կը հաւատան, որ թրքական ցեղը եւ թուրք ազգը ուրիշ ցեղերէ եւ ազգութիւններէ բարձր են: 1942ին, այսպիսիներու նախաձեռնութեամբ Պերլինէն Պոլիս կը բերուին Թալաաթի աճիւնները: 1946ին Վիսլին Ճահիտ Եալչընի համառօտ յառաջաբանով լոյս կը տեսնեն Թալաաթի յուշերը: Անհրաժեշտ է նշել, թէ գիրքը հեռու է յուշագրութիւն ըլլալէ: Փոփոխութեան ենթարկուած է արդեօք օսմաներէն բնագիրը ժամանակակից թրքերէնի վերածուելու ժամանակ մեզի համար անյայտ է: Պարզ է, որ գիրքը հրատարակուած է որոշ նպատակով ու կը համապատասխանէ փոփոխ ժամանակի ոգիին: Այնպէս ամէն ձեռով նենգափոխուած են փաստերը եւ պատմական իրականութիւնը: Նպատակը Անդրկովկասի մէջ թուրքերու նուաճողական նկրտումներէն ելլելով թուրք հասարակութեան շրջանակին մէջ թշնամանք եւ արեւութիւն սերմանելն է հայ ժողովուրդին հանդէպ:

Վեղինակը՝ Աւետիս Փափապեանը մանրամասնօրէն կը թուէ գիրքին մէջ ուրիշ աղբիւրներէ առնուած մասերը եւ խեղաթիւրումները: Արեւմտահայութեան վերաբերող նիւթերը միտումնաւոր կերպով աղաատուած են եւ իրականութեանը չեն համապատասխաներ: Այս յուշերուն հեղինակին ինքնութեան հարցը շատ կասկածելի է: Թերեւս Թալաաթ ունեցած է օրագրութեան կամ յուշերու ձեռով շարադրուած էջեր, սակայն հրատարակիչները նենգ նպատակներով ընդարձակած են անոր ծաւալը, զայն խմբագրած եւ անոր շինծու փաստաթուղթեր կցած (Թալաաթի յուշերու՝ Թուրքիոյ մէջ վերջերս վերահրատարակուելուն առթիւ պարզուեցաւ, որ այդ յուշերու նախորդ հրատարակութիւնները պակասաւոր եւ խեղաթիւրուած եղած են - խմբ.):

«Եղեռնը Վան-Վասպուրականյիների Յուշերում», «Զանգակ-97» հրատ., Երևան, 2003, միջակ չափի 152 էջ:

1) Կալիփսէ Սուլախեան, «Գժուխային Տառապանքի Մի Երկար Ճանապարհ», էջ 5-33:

Կապմակերպուած ինքնապաշտպանութեան շնորհիւ Վանի հայութիւնը յաղթական դուրս կու գայ, սակայն կը հարկադրուի գաղթել: Գաղթը անկապմակերպ եւ փարերային կ'ըլլայ: Վերջերս իր պատկը կորսնցուցած Կալիփսէ ճամբայ կ'ելլէ իր բոլոր ազգականներով միասին: Երբ փակաին քիչ մը քալած էին, Կալիփսէի ամուսնոյն 93 փարեկան մեծ մայրը փուն կը վերադառնայ՝ ինքզինք ճակատագրին յանձնելով: Կալիփսէի հօրեղբօր աղջիկը՝ Եղոկիան մեծ դժուարութիւններով կը ծննդաբերէ մանչ պատկ մը, Աւանցի մէջ:



Ճամբու ընթացքին շարերն իրենց հարապարները կը կորսնցնեն: Հիւանդներ եւ անկարներ փառապելով կը յառաջանան: Այս խառնիճադանճին մէջ Կալիփսէ եւ քոյրը Վիրար կը կորսնցնեն: Հոնկէ անցնող քոպաքները զայն ինկած փեսնելով ճամբու եզերքին, կը վերցնեն եւ կառքով կը փանին: Սակայն ան խղճի խայթ ունենալով, կ'իջնէ կառքէն եւ իր հարապարները կը փնտրէ: Ան կը հանդիպի հայ կամատրներու, որոնցմէ ձի մը կը խնդրէ եւ Բգրիը կը հասնի: Հոս կը փեսնէ, թէ իրենց ծնողները կորսնցուցած 80 երախաներ դրուած են սայլի մը վրայ եւ կը սպասեն: Ան հոգ կը փանի անոնցմէ ամենափոքրին, որ իր մահացած պակին՝ Յակոբիկին շար նման էր: Եփելը մնացողները կոտորածի կ'ենթարկուին: Վերապրողները Բգրիը կը հաս-

նին: Կալիփսէ իր հարապատերը կը գտնէ: Շուրով իր ամուսնոյն՝ Արքաշէսի պարագաները կը հասնին: Իգգիթի մէջ Կալիփսէ կը հիւանդանայ: Նալպանտեան անունով հայ ծանօթ մը կը դասատրէ, որ պայն շոգեկառքով Թիֆլիս փոխադրեն ուրիշ հիւանդներու հետ միասին: Կալիփսէն կը տանին Աղեքսանդրապոլ, ուր Մովսէսեան անունով հայու մը տունը կը հանգստանայ: Մայրը եւ քոյրը կը հասնին իր մօտ: Շուրով Կալիփսէ կ'ապաքինի: Սակայն, անոր մայրը կը հիւանդանայ եւ հիւանդանոց կը տարուի: Կալիփսէ եւ քոյրը կ'աշխատին հիւանդանոցին մէջ եւ իրենց մօրը հոգ կը տանին: Շար չանցած՝ մայրը կը մահանայ: Աղեքսանդրապոլ կու գայ իր հօրեղբօրորդի Ղեւոնդը: Կալիփսէ ուրիշ վանեցի բարեկամներու կը հանդիպի, եւ «Հորիպոն» թերթէն կ'իմանայ, թէ Արշակ Սաֆարեան անունով ծանօթ մը սինք եւ քոյրը կը փնտրէ ու կ'ուզէ, որ Թիֆլիս երթան: Թիֆլիս կը մեկնին եւ Շէյթան կոչուած թաղամասը կը տեղատրուին: Սաֆարեանի միջոցաւ, Կալիփսէ գործ կը գտնէ Հայրենակցական Միութեան որբանոցին մէջ: Թիֆլիսի մէջ Կալիփսէ իր գերդաստանի անդամներէն շարունակ մահը կ'իմանայ:

Կալիփսէի ծառայած որբանոցը կը գտնուէր Ծիրանատր վանքին մէջ: Իր գործակիցներուն հետ ան մեծ ջանք կը թափէ լաւագոյն կերպով օգնելու համար մանուկներուն: Կալիփսէի գլխատութեամբ՝ հիւանդ երախտները Գիլիջանի որբանոցը կը դրկեն: Մարտ 1918ին ան կը տեղափոխուի Երեւան եւ որպէս ուսուցչուի աշխատանքի կ'անցնի Քայեանեան երկրորդական վարժարանին մէջ: Երբ Երեւանի Պետական Համալսարանը կը բացուի, Կալիփսէ իր ուսումը այնտեղ կը շարունակէ:

2) Գրիգոր Իսկենտրեան (Իսկանդարեան), «Մարտընչողները Յաղթեցին, Բայց Բռնեցին Գաղթի Ճանապարհը», էջ 34-50:

Ճեւրէթ փաշայի հրամանատարութեան տակ գտնուող թրքական սորքերը, վանեցիներու ինքնապաշտպանութեան պարճառու, 27 օր ետք, 3 Մայիս 1915ին կը ստիպուին նահանջել: Վանի հայութիւնը յաղթական է: 6 Մայիսին յառաջապահ հայ կամատրները եւ ռուսական բանակը մուտք կը գործեն Վան: Յաջորդ օրը

ռուսերը Արամ Մանուկեանը Վանի նահանգապետը կը նշանակեն:

Գրիգոր Բսկենյուկեան իր ընտանիքին հետ թաքստուցէն կը փոխադրուի Կոնստանտնուպոլիս, որ քանդուած վիճակի մէջ էր: Քանի մը օր վերջ, իրենց Կոնստանտնուպոլիս քաղաքը կը քանդուի: Կը պարսկացի, թէ սպանութիւնը ոչ-դիպլոմատը է՝ կամատը մը կը փորձէր իր վէնքը յիմարօրէն...

Օրերը յուսադրող են եւ ժողովուրդը պայծառ գալիքին կը սպասէ: Վանեցիին կը կարողանայ երկուրորէն ամսուան ընթացքին վերանորոգել քանդուածը: Բայց կը գոժէ ահաւոր լուր. վանեցիին պէտք է բռնէ գաղթի ճամբան, որովհետեւ ռուսական բանակը կը հեռանայ եւ թուրքերը Վանի կը մօտենան:

Կը սկսի խուճապային գաղթը: Եօթը օր ետք Վան կը լեցուի շարժուող հայ գաղթականներով: Կը պարսկացի, թէ միայն Անդրանիկը իր հազար հոգինոց բանակով թրքական ահեղ բանակին առջեւ փակած էր, որպէսզի Եւֆրատի ժողովուրդը կարենայ գաղթել: Ճամբուն վրայ Անդրանիկ քրտական ցեղերու եզները բռնագրաւելով բաժնած էր գաղթականներուն: Այս եզներէն կը բաժնէ նաեւ Վանի բնակիչներուն: Գրիգորի հայրը եւ հօրեղբայրը եզներ կը ստանան եւ ճամբայ կ'ելլեն իրենց ընտանիքներով ու երեք օրէն Բերկրի կը հասնին: Օրական 10-12 ժամ կը քայլեն: Գիշերը հրացանաձգութեան ձայն կը լսեն: Գրիգորի հայրը նախապետելով, թէ Զիլանի քիւրտերը կրնան յարձակիլ եւ կամուրջը փակել, կը հրահանգէ իր խումբին շարժիլ եւ կամուրջը անցնիլ: Այդպէս ալ կ'ընեն: Վերջապէս իր ընտանիքով կը մնայ իր տեղը: Նոյն գիշեր կոտորած տեղի կ'ունենայ եւ հօրեղբայրն ու ընտանիքը կը սպանուին: Այս ջարդէն ողջ մնացածները կը վերադառնան Վան եւ ետքը Անդրանիկի ոյժերուն հետ կը գաղթեն Պարսկաստան, ապա Ճուֆայէն անցնելով կը հասնին Երեւան:

Կամուրջը անցնելէն ետք, Գրիգորի ընտանիքը կը յառաջանայ առանձին՝ Բանդիմահու գետին եզերքէն: Առաւօտուն, անոնք ռուսական բանակի ետ մնացած հայ կամուրջներու կը հանդիպին: Եօթներորդ օրը, ծարաւ, յոգնած եւ անօթի, կը հասնին Բգրի: Կը խմեն ճահճային ջուրէն, որու պարճառու շարժեր կը հիւանդանան: Գրիգորի հայրը նախապէս այս տեղերէն անցած

ըլլալով եւ գիտնալով այս ջուրերուն մասին, թոյլ չի փար, որ իր ընտանիքէն որեւէ մէկը խմէ անոնցմէ: Ճամբան կը շարունակեն եւ կը հասնին Էջմիածին, ուր գիշեր մը անցընելէ ետք կ'անցնին Երեւան: Գրիգորի հայրը, մեծ դժուարութեամբ, Շանթաղ թաղին մէջ սենեակ մը կը վարձէ իր ութը հոգինոց ընտանիքին համար:

Գրիգոր կը յիշէ Երեւանի մէջ անցուցած փարիները՝ հիւանդութիւն, սով, դժուարութիւններ եւ յարաբերաբար լաւ օրեր: Կը յիշէ Ամերկոմի («Մերձատր Արեւելքի Նպաստամատուց» ընկերութիւնը - խմբ.) ըրած օգնութիւնները, դաշնակցական կառավարութեան հեռացումը եւ Կարմիր հեծելազօրքին՝ Քանաքեռի ճամբով մուտքը Երեւան 29 Նոյեմբեր 1920ին (Ճիշդն է 2 Դեկտեմբեր 1920-ը - խմբ.), երբ ինք 14 փարեկան էր:

3) Էրուարտ Կորակեան, «Վանի Վիլայէթի Էրերին Գիտի Գաղթը 1915ին», էջ 51-59:

Վեդինակը իր գրածը լսած է Եղեռնի սարսափները ապրած իր մեծ մօրմէն՝ Վայկանոյշէն:

Վայկանոյշ ծնած է 1896ին, Վան, արհեստագործ Պէտրոս Մարաճեանի ընտանիքին մէջ: 1896ի դէպքերուն, թուրքերը իրենց փունը կը խուժեն եւ հայրն ու հօրեղբայրները կը սպաննեն: Մայրը՝ Կարարիւնէն, իր երեք աղջիկներով (որոնցմէ ամենէն փոքրը Վայկանոյշն է), իր եղբօր փունը կ'ապաստանի: Շատ չանցած՝ Կարարիւնէ կը մահանայ: Վայկանոյշ կ'ուսանի Վանի Օրիորդաց ութամեայ վարժարանին մէջ: Ան 15 փարեկանին կ'ամուսնանայ Էրերին գիտի ուսուցիչ Արմենակ Կորանեանի հետ: Վայկանոյշ 1913ին կը ծննդաբերէ Վայկը՝ հեղինակին հայրը, իսկ 1915ին՝ Սիրարփին: Վանի 1915ի ինքնապաշտպանութեան յաղթանակէն քանի մը ամիս ետք երբ ռուսական զօրքը կը նահանջէ, քաղաքի եւ շրջակայքի գիտերու հայերը գաղթական կ'ելլեն:

Էրերին գիտը Վանէն 20-25 քլմ. հեռու կը գտնուի: Բնակիչները ամբողջ փարին փառելի կ'որսային եւ նաւաշինութեամբ կը քրահէին: Անոնք լաւ լողորդներ էին: Ունէին 300-350 մանր եղջերաւոր անասուն, 45-50 գլուխ կով, գոմէշներ, եզներ, ձիեր եւ աւանակներ: Գիտին մէջ երկու ջրաղաց կար, նաեւ՝ ձկնորսութեան համար երեք լաստանաւ:

1915ին օր մը Էրեբին գիտի բնակիչները գաղթի ճամբան կը բռնեն: Անոնք իրենց ուրելիքին հետ կը վերցնեն նաև պէնքերը: Կը շարժին դէպի հիւսիս: Կամատրները կը քաջալերէին ժողովուրդը, որ շրապ կերպով անցնի Բերկրիի ձորը:

Հայկանոյշը եւ ամուսինը կը գրկեն իրենց երկու տարեկան որդին (ապագայ հերոսը) եւ վեց ամսական դուստրը ու ճամբայ կ'ելլեն: Բանդիմահու գետը կտրած արեն թշնամի քիւրտեր կրակ կը բանան: Ետերը գետին մէջ կը պարնուին եւ կ'իյնան: Հայկանոյշը եւ ընտանիքը գետը կ'անցնին մեծ դժուարութեամբ: Ռուս ձիատր մը կ'օգնէ իրենց: Յաջորդ օրը կէսօրին քիւրտերը կրկին կը յարձակին կարաւանին վրայ: Հայ կամատրներ դիրքեր բռնելով կը կռուին եւ կը պաշտպանեն գաղթականները: Այս կռիւտեր կը վերջանայ, գաղթականները իրենց հարապարտները կը սկսին փնտրել: Քանի մը փանջալից օրերէ ետք անոնք Իգգիլը, ապա Արարատեան դաշտ կը հասնին: Հայկանոյշի պարագաները իմանալով, որ հոս այգիներ եւ պտղատու ծառեր կան, Ղամարլու (Արտաշատ) կը հաստատուին: Անոնք իրենք վիրենք բախտատր կը նկատեն, որովհետեւ մարդկային զոհ չէին տուած:

Ետը չանցած, Հայկանոյշ եւ ընտանիքը կը տեղափոխուին Երեւանի մօտակայ Նորագաւիթ գիւղը, ապա՝ Երեւան, ուր Աստաֆեան (յերագային՝ Արովեան - խմբ.) փողոցը ապրող ազգականի մը տունը կը պատսպարուին:

4) Վահան Կորանեան, «Լիմ Անապատում», էջ 60-81 (պատմեց 15 Սեպտ. 1947ին, Ֆրոյլենթալ հիւանդանոցին մէջ [Գերմանիա]):

Ապրիլ 1915ին Էրեբին գիտին բնակիչները կը լսեն, թէ Վանի մէջ կռիւ կայ թուրքերուն դէմ: Երիտասարդները կ'ուզեն անապաման մասնակցիլ կռիւներուն, իսկ տարեցներ կը մտածեն Վանայ լիճի Լիմ կղզին ապաստանիլ: Բերկրիի գայմագամ Ռիպա պէշը մօտ երկու հարիւր ոստիկաններով եւ քանի մը հարիւր թալանչի քիւրտերով կը յարձակի Աստուածածին կամ Տիրամայր գիւղին վրայ եւ բոլոր տղամարդիկը կը կոտորէ, ապա կ'անցնին Չոնիկ գիւղը ու վայն ալ կը կոտորեն: Քիւրտերու գիւղերով շրջապատուած խիրկուրիւնցիները, տեսնելով այս բոլորը, Լիմ կղզի կը

տեղափոխումին: Այս փոխադրության կը հսկէ փիրկարիբցի խմբապետ Միրունը իր 25-30 փնուած փղաներով, որոնք ահատր եւ անհասար կռուի մէջ կը մտնեն թուրքերուն եւ քիւրտերուն դէմ՝ Չոնիկ գիւղի գաղթականները պաշտպանելու համար: Լիմ Անապարի վանահայր Յովհաննէս Ծ. վրդ. Հիւսեանը օգնութեան կը հասնի եւ վանքի ուրելիքները միաբանութեան հետ մակոյկով կը տեղափոխէ կղզին: Միաբանները պարարագ կը մատուցեն: Հապի պարարագը վերջ գրած, կը նշմարեն, թէ նաւ մը կը մօտենայ կղզին: Մտուգելէ ետք՝ կ'արտօնեն անոր մուտքը եւ կ'իմանան, թէ Ալշվալի Օվանի խումբն է եկողը: Վարդապետը դժուարութեամբ կը համոզէ զանոնք, որ ծովափը կռիւ մղող Միրունի խումբին օգնութեան հասնին: Արդարեւ, Օվանի խումբը կը հասնի ծովափ եւ Միրունն ու անոր խումբը կ'ապարէ մղձաւանջային վիճակէն: Յաղթանակը հայերունն էր:

Այս կռիւներուն յաջորդ օրը, Լիմ Անապարին մէջ խորհրդատր յուարկատրութեամբ կը թաղուին երկու նահապակ հերոսներ՝ Խժիշկի կռիւներուն փոխուած սուրթաբոյի Տիգրանը եւ նաւուն մէջ սպաննուած ոգմեցի Ապօն: Այս վերջինը գտնուած էր Էրեբին գիւղին մէջ, երբ Օվանի խումբը Փեպրուար 1915ի վերջերը հոն եկած էր: Հեղինակը կը յիշէ, թէ մեծերը ինչպիսի՛ գովասանքներով կը խօսէին ոգմեցի Ապոյին մասին:

Օմար էֆենտին Մարտ ամսուան մէջ 30 ոսրիկաններով կը պաշարէ Էրեբին գիւղը: Գիւղացիները կ'որոշեն գաղտնի կերպով հեռացնել Օվանը եւ անոր խումբը, որպէսզի կռիւ տեղի չունենայ: Անոնք ոսրիկանները կը հրաւիրեն իրաքանչիւրն իր փան մէջ սեղան նստելու, որպէսզի զինեալ փողոց գիւղէն դուրս գալը չտեսնեն: Մէկ ոսրիկան միայն կը յամառի մնալ փանիքին վրայ: Գիւղացիները ճաշերը կը փանին անոր մօտ եւ կը շրջապարեն զայն: Մակայն, կը պարահի անբաղձալին, եւ այս ոսրիկանը, նշմարելով քաջերուն դուրս գալը, կը կրակէ: Հրացանաձգութիւնը կը սկսի եւ հայ սուրհանդակ մը կը վիրատրուի: Այս միջոցին ոգմեցի Ապօն ոսրիկանին գլուխի գլխարկը կ'ապարով կը թոցնէ: Յաջորդ օրը Էրեբին գիւղը կը շրջապարտուի Պուրհանէփրին պէյի գլխատրած 200 ոսրիկաններով ու կրակի կը փրուի: 17 փարեկանէն վեր բոլոր փղամարդիկ կը բանտարկուին:

Տուները կողոպտելու ժամանակ, երբ լսվում են նույնիսկ մեծ աղմուկներ, բարեկամ ոստիկան մը կը մտնուի և արգելք կը հանդիսանայ: Վահան և ոստիկան մը կը դիմեն Պոլիսի Գործակալին և պահանջ կը արձակեն՝ փողով հարկերը վճարելու համար: Վերջինս կ'արգելի Վահանի փողով հարկերը վճարելու և նույնիսկ ամբողջ թաղի փողով հարկերը հրկիպուելի վերժ կը մնան: Ձերբակալուածներուն մէջ կար նաև Վահանի մեծ եղբայրը, որ Վան կը փախուի, բայց երբ 103 հոգիներու հետ միասին ապար կ'արձակուի:

Էրեբին գիւղի հրկիպման յաջորդող օրերուն, քանի մը խելահաս մարդիկ կ'որոշեն Լիմ կղզին ապաստանի: Վահանի հայրը՝ Մկրտիչ Կարանեան և ուրիշներ ընտանեացի կղզի կը փախուցանուին: Քինուրական իշխանութիւնը կը վարէ գաղթականներուն բոլոր գործերը: Խմբակներ Միտունի և այլոց կողմէն առաջնորդարանի անդամ կը նշանակուի Մկրտիչ Կարանեան:

Էրեբին գիւղի բնակիչները Լիմ փոխադրելու համար նաև մը կը փախուցանուին: Այս ժամանակ Էրեբինէն խումբ մը երիտասարդներ ծովափը քիւրտերուն հետ անհասարակ կռուի կը բռնուին ու կը նահապետուին: Վահանի մայրը և քոյրերը Էրեբին կը մնան:

Լիմ կղզիի վրայ կեանքը հետզհետէ կը դժուարանայ: Ժողովուրդը կը շարունակ և մթերքը կը պակսի: Հիւանդութենէ օրական 60-70 հոգի կը մահանայ:

Այս միջոցին, Տիրամայր գիւղի ջարդերէն հայ փոքր մը կ'ապարի բարեկամ քիւրտի մը օգնութեամբ և կղզի կու գայ: Ան իր բարերարէն լսած էր, թէ ռուսերը կը մտնեն: Տղան այս լուրը կղզիի գաղթականներուն կը յայտնէ: Ոմանք կ'որոշանան, մինչ ուրիշներ չեն հաւատար: Հակառակ չհաւատարացողներուն՝ ժողովուրդը ուրախութեան մէջ է:

Վանի ինքնապաշտպանութեան յաղթանակէն ետք, կամատրներ Վանէն Լիմ կու գան: Ժողովուրդը նաև փախուցանուի և կու գայ և իր գիւղերը կը վերադառնայ:

**5) Արժունի Յարութիւնեան, «Եւ Ամբողջ Մի Ընդուն
Քաղաք Ամայացաւ», էջ 82-90:**

Հեղինակը կը յիշէ 1915ը, երբ ինք՝ վեց-եօթը տարեկան երախայ, կ'ընկերանայ Վանէն դուրս եկող կարաւանին: Տակափն նոր ճամբայ ելած էին, երբ իրենց կովը (Մարալ) կը յամառի քալելու՝ բողոքելով իր վրայ բեռնուած ապրանքներուն դէմ: Վանի Այգեստանին մէջ իրենց փունը կը գտնուէր Չաղլի Փողան (փողոց): Հօրեղբայրը՝ Արթին աղան թաղին ջրաբաշխն էր: Արծրունի կը յիշէ ջրամբարները, առուակները եւ Այգեստանի պարփակները:

Հայրը՝ Ուստա Մարտիրոսը դերձակ էր: Կը յիշէ հօրը աշխատանոցը, ենթավարպետը, թաղին ոստիկանը, ձկնավաճառը, ոսկերիչ Տրդատը, իր մեծ մայրը՝ Զարուհին եւ ուրիշներ: Արծրունի կը յիշէ, թէ ինչպէս Տէր Արթինենց մայրը՝ Զարուհի, կը մերժէ փունը թողուլ եւ գաղթել: Զարուհի յոյս ունէր, թէ իրենք օր մը պիտի վերադառնան Այգեստան: Կը յիշէ նաեւ ոսկերիչ Տրդատին երրորդ փունդարձը, երբ անոր փունը չկար այլեւ: Քաղաքը քանի մը անգամ ձեռքէ ձեռք անցած էր:

6) Նորա Մելիքեան, «Մեր Շէն Տնից Փրկուեցինք Երկուսս», էջ 91-101 (պատմեց իր Վարդիթեր հօրաքոյրը):

1915ի աղէտին, Վարդիթեր 11 տարեկան էր: Հայրը՝ Խաչատուրը Պոլիս կ'աշխատէր: Մայրը՝ Մաքրուհին, 28-30 տարեկան, չորս պատկի փէր փանտիկին էր: Կը բնակէին Չաղլի Փողան, Այգեստան, Վան:

Երբ Վարդիթեր հիւանդ պատկած էր, հայրը Պոլսէն փուն կու գայ եւ կ'ուզէ ընտանիքը հոն փոխադրել ապահովութեան համար: Երբ Վարդիթեր կ'ապաքինի եւ կրնային ճամբայ ելլել դէպի Պոլիս, այս անգամ ուրիշ արգելք մը կը յայտնուի: Մօրեղբայրը՝ Վահանը Պաղտատ ճամբորդած էր:

Այգեստանը թրքական զօրքերով կը պաշարուի: Չափահասները վէնքի կը դիմեն ինքնապաշտպանութեան համար: Կռիւներէ ետք վանեցիք ի վերջոյ կը վայելեն յաղթանակի բերկրանքը: Մակայն ուրախութիւնը երկար չի տևեր: Օր մըն ալ, եկեղեցիին պանգակը Այգեստանի ժողովուրդը հրապարակ կը հրաւիրէ: Կ'առաջարկուի գաղթել եւ հեռանալ նահանջող ռուսական զօրքին հետ:

Եւ կը սկսի գաղթը:

Սկիզբը, մայրը կը մերժէ գաղթել: Ինը տարեկան Վարապոզապ եղբայրը, որ իր կարողութիւններուն չափովը մասնակցած էր ինքնապաշտպանութեան, կը պնդէ գաղթելուն վրայ: Մայրը տեղի կու տայ եւ ճամբայ կ'ելլեն:

Երբ բաւական ճամբայ կտրած էին, իրենց կը հասնի ֆերայի դարձած մօրեղբայրը եւ խորհուրդ կու տայ հասնիլ Թիֆլիս՝ միւս մօրեղբայրներուն՝ Տիգրանի եւ Աղավարդի մօտ: Ճամբուն վրայ առաջին փորձանքը իրենց կը հանդիպի Բանդիմահու գետին մօտ: Իրենց կովը կը փախչի: Մայրը յաջողութեամբ բոլորն ալ գետը ապահով կ'անցընէ: Ապա, Բերկրիի ձորին մէջ անոնք կ'ապրին մահուան սարսափը՝ քիւրտերու յարձակման ենթարկուելով: 30-40 պինուած հայ երիտասարդներ, բարձրանալով շրջակայ լեռները, կը կռուին քիւրտերուն դէմ: Շարերը կը սոսկան: Հայերը կը յաղթեն, սակայն միայն 10-15 երիտասարդներ կը վերադառնան կարաւանին: Մայրը կը հիւանդանայ եւ Արաքսը չանցած, Մարգարա գիղին մէջ կը մահանայ: Վարդիթերի երկու փոքր քոյրերը եւ եղբայրը՝ Վարապոզապ մեծ յոյսով իրեն կառչած կը մնան: Վերջապէս օգնութեան կը հասնին հայ պինուորներ եւ կարաւանը կը հասցնեն Էջմիածին: Անոնք որքանոց կը յանձնուին:

Փոքր քոյրերը իրենցմէ պատելով՝ փոքրերու որքանոց մը կը տանին: Վարդիթեր եւ Վարապոզապ կը մնան միասին: Անոնք կը հիւանդանան: Երբ կ'ապաքինին, կ'այցելեն այս փոքրերու որքանոցը, ուր իրենց կը յայտնեն, թէ փոքր քոյրերը մահացած եւ թաղուած են:

Այսպիսով կ'ապաքին ընդամէնը մէկ քոյր եւ մէկ եղբայր: Վարդիթեր կը մահանայ 1987ին:

7) Յարութիւն Պէրպլեան, «Արիւնոտ Պատկերներ Արհաիրքի Օրերից», էջ 102-106:

Պողպալեանը Եոզկապի մօտ, Անգարայի շրջանին մէջ գաւառական վարչական կեդրոն մըն էր 23 գիղերով եւ 1200 տուն բնակչութեամբ: Ան 700 հայ եւ 400 թուրք տուն կը հաշուէր: Այս շրջանի հայերը Վան-Վասպուրականէն եկած էին: Այս իրողու-

թինը փաստուեցաւ 1908 թուականին, երբ Պողապլեանի գերնափոր եկեղեցոյ թաքստոցէն 10 մագաղաթեայ կտորներ գտնուեցան:

1915 թուականի սկիզբները եկեղեցոյ աւագ քահանան Յարութինի հայրն էր՝ Տէր Յակոբ Պէրպլեանը, որ բոլորէն սիրուած էր:

Կառավարիչը իր մօտ կը կանչէ Տէր Յակոբը եւ անոր կ'իմացնէ, թէ մեծ վտանգ մը կը սպառնայ հայոց. կա'մ պէտք է իսլամանայ, թրքանայ եւ կա'մ ընդհանուր հեռու ու ապահով տեղ մը գաղթել ու ապարիլ աքսորուել: Տէր Յակոբ երկու ընտրութիւններն ալ կը մերժէ եւ կը նախընտրէ իր հօտին հետ մնալ: Յաջորդ օրը կը սկսին հաւաքել տղամարդիկը եւ կը բանտարկեն: Կը պարսպուի, թէ աքսորի անուան տակ կ'ուզեն ժողովուրդը բնաջինջ ընել: Քսաներեք գիղերու ծաղիկ երիտասարդութիւնը կը հաւաքեն եւ բանտերը կը լեցնեն: Ատոնց մէջ էին հեղինակին մօրեղբօր որդիները՝ դատական պաշտօնեայ Սիսակը եւ փաստաբանի օգնական Սեդրակը: Երբ Յարութին ուրելիք կը տանի բանտ, կը նկատէ, թէ անոնք այնքան խոշտանգուած են, որ ծամելու ոյժ չունին: Այդ օրերուն շրջակայ գիղերէն 60 երեւելիներ կը հաւաքեն եւ Պողապլեանի հայկական դպրոցին մէջ կը բանտարկեն, ապա, գայմագամ Քեմալի հրամանով, ուրիշ 200ի չափ տղամարդիկ կը հաւաքեն: Հայ բանտարկեալները պատելով ճամբայ կը հանեն: Անոնց երեւէն կը հասնի արինախում Խոյլիս պէյի գլխատրած հեծեալներու խումբ մը: Երբ կը հասնին Ապպասի ջրաղացը, հայերը հոն կը լեցնեն ու անոնց մեծ մասը կը սպաննեն: Միայն քանի մը հոգի կը յաջողի փախչիլ:

Երկրորդ օրը երեւելի հայերէն բաղկացած 300 հոգինոց խումբ մը կը ջարդեն Դուրս Տէրէսի կոչուած ձորին մէջ: Ամէն օր թաքստոցներէն կը հանեն 30-40 հոգի եւ կը սպաննեն: Յարութին 50 օր կը մնայ թաքստոցին մէջ: Քեմալ 500 հայ տղամարդիկ Կեսարիոյ բանտը կ'ուղարկէ:

Ապա կը սկսին անտէր մնացած կանանց եւ երախաներու գաղթն ու ջարդը: Յարութին Պէրպլեանի կինը թոյն խմելով կը փորձէ անձնասպան ըլլալ, սակայն Յարութին իր քրոջ օգնութեամբ եւ օգտագործելով 10 հակիթի դեղնուցներ, մահէն կ'ազա-

տէ իր կինը:

Յարութինն եւ իր ընտանիքը սահմեկեցուցիչ ողբերգութեան մը ականապես կ'ըլլան. շրջակայ գիւղերէն գաղթած կիներ, թուրքերուն ձեռքը չիյնալու համար, իրենց դրացիի գոմին մէջ կախադաններ կը շինեն եւ մէկը միւսը կարգով կը կախէ:

Այսպէս, չորս տարի շարունակ, թուրքերը ամէն տեսակի գազանութիւններ կը գործադրեն:

8) Վարապդապ Յարութինեան, ««Կեանքիս Քառուղիներում» Յուշապատումի», էջ 113-136:

Վարապդապ Յարութինեան 1914ին երբ հինգ տարեկան մանուկ էր, կը յիշէ արեւի խաւարումը եւ անոր ընկերակցող չարաբաստիկ յուրերը: Պատերապմը կը պայթի: 1915ի սկիսբը Վանի շրջակայ գիւղերու կոտորածը կը սկսի: Լաւ կը յիշէ Իշխանին յողարկատրութիւնը եւ Վանի կուսակալ Ճեւրէթ պէշի կատարած սպանդները: Վանի հայութիւնը կը ստիպուի պիւնուիլ եւ ինքնապաշտպանութեան դիմել:

Ինքնապաշտպանական կռիւները, յաղթանակը, ռուսական բանակին ու հայ կամաւորներուն մուտքը Վան, Այգեապան եւ ուրախութիւն: Ասոնք բոլորն ալ իր յուշերուն մէջ տեղ կը գրանեն:

Ան կը յիշէ գաղթը իր մօրը՝ Կալիփսէի, քրոջ՝ Արփենիկի եւ եղբօրը՝ Գուրգէնի հետ: Կը հասնին Բգտիր: Հոս թշուառութիւնը եւ հիւանդութիւնը կը տիրեն: Գուրգէն եղբայրը կը հիւանդանայ ու կը մահանայ: Ապա կ'անցնին Վաղարշապատ: Դրութիւնը տագնապալի է: Թշուառութիւն, անօթութիւն, ծարաւ եւ հիւանդութիւն: Հայրը, պահպանելու համար ընտանիքը, պայն անմիջապէս Թիֆլիս կը փոխադրէ: Թիֆլիսի մէջ ունին երկու ազգական ընտանիքներ, որոնք 1896ի ջարդերէն ետք հոն հաստատուած էին: Հայրը, մայրը, Արծրուն եղբայրը եւ ինք Արամեանցի հիւանդանոցը կը տեղափոխուին: Թիֆլիս գալուն երկրորդ ամիսը հայրը կը մահանայ: Վարապդապ Ծիրանատր վանքի որբանոցը կը տեղափոխուի: Միրանոյշ քոյրը եւ Արծրուն եղբայրը իրեն հետ են: Մօրը հետ կը մնան Աղասի եղբայրն ու Արաքսի եւ Արփենիկ քոյրերը: Վարապդապ արդէն 7 տարեկան է եւ կը կրէ 204 թիւ որբանոցին մէջ:

Զիրենք այստեղէն ուրիշ որբանոց մը կը տեղափոխեն Շաղապարի մէջ: Մնունդը կը պակսի հոս եւ վանազան հիանդութիւններ յառաջ կու գան: Օր մըն ալ Վարապդապ, եղբայրն ու քոյրը, ձեռք-ձեռքի տուած, թոյլտուութեամբ իրենց մօր մօտ կ'երթան: Անոնք այսպիսով փախուստ կու տան եւ կը մնան իրենց մօր մօտ: «Աղբիւր-Տարապ»ի հրատարակիչ Տիգրան Նապարեան իր ճաշարանի այգիին մէջ տեղ կը տրամադրէ գաղթականներուն, որոնց մէջ են իրենք: Տպարանի բանտոր Աղասի եղբայրը կը հիանդանայ եւ կը մահանայ:

Վարապդապի քոյրերէն Արաքսին կ'ամուսնանայ եւ Վարապդապ, Արծրուն ու անոր ընկերը փեսայի կօշիկի մաքրման խանութը կ'աշխատին: Անոնք կը տեղափոխուին փեսային վարձած տունը, Թիֆլիսի մէջ:

Վահան Յ. Համամճեան, «Յուշեր Տարագրութեանէն», րպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1968, միջակ չափի 183 էջ: Եղյնին անգլերէն թարգմանութիւնը կարարած է Դոկր. Յակոբ Տէր Կարապետեան: Թարգմանութիւնը վերնագրուած է «Վահանին Յաղթանակը - Հայկական Յեղասպանութենէն Փրկուած Երիտասարդի Մը Կենսագրութիւնը», հրատարակուած Եի Բնկընըր (Ա.Մ.Ն.), 2004, միջակ չափի 144 էջ:

1915ին, Վահանին հայրը կը բան-
 արկուի եւ կը սպաննուի Պեհեսնիի
 մէջ: Վահան իր երեք քոյրերուն եւ
 մօրը հետ կը փարագրուի: Կ'անցնին
 Եդեսիայէն, Սուրուճէն եւ կը հասնին
 Պապ: Եր փարուին Համա եւ Հոմա:
 Ճամբուն ընթացքին Վահան կը կոր-
 սնցնէ իր բոլոր սիրելիները: Հոմսի,
 ապա Հալէպի մէջ որբանոց կը
 մտնէ: Զինադադարին կ'անցնի
 Արանա, ապա Տարսոն եւ Մերսին,
 յետոյ՝ Պէրուք, ուր կը սկսի վերա-
 կազմել իր կեանքը, երբ արդէն
 մօրատրապէս 18 փարեկան էր:



«Վերապրողները Կը Վկայեն», կապճող՝ Գուկր. Սեդա Քիլճեան, Համապատասխանի «Վահէ Սէթեան» տպ., Պէյրութ, 2005, փոքր չափի 125 էջ:

Ժողովածուն կ'ընդգրկէ հակիրճ վկայութիւնները Մեծ Եղեռնէն հետեւեալ վերապրածներուն.

- 1) Արուսեակ Մարտոպեան (Մալմանեան), ծնեալ 1892ին, Արանա:
- 2) Եղիսաբէթ Մարգիսեան (Ջուլումեան), ծնեալ 1895ին, Տիգրանակերտ:
- 3) Մանուկ Չոլաքեան, ծնեալ 1898ին, Կիրիսի Աշոտի գիղը:
- 4) Նուրիճա Աշխարեան (Ֆրնուլեան), ծնեալ 1900ին, Էյալէ:
- 5) Փերուկ Բզմիրլեան (Մալլախեան), ծնեալ 1903ին, Արանա:
- 6) Մարիամ Մանուկեան (Գասպարեան), ծնեալ 1905ին, Սեբաստիա:
- 7) Բարսեղ Շաթոյեան (արաբագէտ), ծնեալ 1905ին, Տիգրանակերտի Տըպլի գիղը:
- 8) Միհրան Դաշնակեան, ծնեալ 1906ին, Բումպիկին:
- 9) Միսաք Չոլաքեան, ծնեալ 1906ին, Միս:
- 10) Մարիամ Զարիկեան (Արթինեան), ծնեալ 1907ին, Միս:
- 11) Միրվարդ Մերճանեան (Սօլաքեան), ծնեալ 1907ին, Պոլիս:
- 12) Արաքսի Պէրպէրեան (Խանիմէ Ֆէլէկեան), ծնեալ 1909ին, Արանա:
- 13) Արեգնապ Միքայէլեան (Հաճի Յակոբեան), ծնեալ 1909ին, Չոմախլը:
- 14) Զաւէն Չագրբեան, ծնեալ 1909ին, Էվէրէկ (Դարաքէօյ):
- 15) Կիլվիպան Ճէօմէպեան, ծնեալ 1910ին, Միս:
- 16) Գասպար Գասպարեան, ծնեալ 1910ին, Լափաշ:
- 17) Գրիգոր Մկրտիչեան, ծնեալ 1910ին, Լափաշ:
- 18) Արամ Թաշճեան, ծնեալ 1910ին, Եոզկապ:



- 19) Աշխէն Բէրէնեան (Մարգիսեան), ծնեալ 1910ին, Քիլիս:
- 20) Մայրենի Աթիկեան (Հաճի Մանուկեան), ծնեալ 1910ին, Եոզկապ:
- 21) Միրանուշ Արցունանեան (Սանճեան), ծնեալ 1911ին, Մարաշ:
- 22) Լուսին Գլաւեան (Մատուկեան), ծնեալ 1912ին, Կիլիկի:
- 23) Իգապէլ Գալայճեան, ծնեալ 1912ին, Այնթապ:
- 24) Շաղիկ Գոյումճեան (Շողոպեան), ծնեալ 1914ին, Բումպիկի:
- 25) Լուսիա Գրիգորեան (Դարբինեան), ծնեալ 1914ին, Միս:
- 26) Մաքրոսի Պաաքլինի (Մերոբեան), ծնեալ 1915ին, Ջէյթուն:
- 27) Մարգրիտ Միմոնեան (Չըլըքեան), ծնեալ 1915ին, Պուրսա:
- 28) Պէաթրիս Եագուպեան (Անտրիսեան), ծնեալ 1918ին, Ադանա:

Գոնասյօ Գուարչ, «Հայկական Տոհմաժառը», սպաներէնէ թարգմանեց Մերի Սուքիասեան, Հայաստանի Գրողներու Միութեան հրատարակչութիւն, Երեւան, 2005, միջակ չափի 400 էջ:

1) Տարօն Նոխուրեանի (բնագիրին մէջ միշտ տպուած է «Նախուրեան» ձեւով) խոստովանութիւնը

Մայրը՝ Մարի Նոխուրեանն է: Տղամարդը, որմէ ծնունդ առած է ինք, կը կոչուի Քեմալ Համիտ: Սա պատմութիւն է այն մասին, թէ թուրքերն ինչպէս իրագործեցին Հայոց Ցեղասպանութիւնը, թէ ինչպէս որոշ քաղաքական գործիչներ իշխանութեան հասան եւ այս ոճիրը գործադրեցին: Պատահեցաւ այն, ինչ պէտք չէ ըլլար:

Մարի Նոխուրեանի ծնողներուն Տրապիզոնի տունը իրեն մնացած էր: Ցեղասպանութեան տարիներուն այս տունը վերածուած էր մեծ պահեստի, ուր հեղինակին հայրը՝ Քեմալ Համիտը կը կուրակէր իր ասարը, համոտուած թէ ո՛չ մէկու հաշի պիտի տայ: Մարի Նոխուրեան բնաւ չէր խօսեր այս տուփերուն պարունակութեան մասին:

Տարիներու ընթացքին մայրը ինքնամփոփ, ներփակ, պինք շրջապատող իրականութեան հանդէպ անտարբեր կը դառնայ: Անոր կեանքի վերջին տարիներուն Տարօն ո՛չ մէկ բառ լսած էր անկէ: Տարօն շուրտով կը հասկնայ ասոր պատճառը: Մայրը չէր կրցած դիմանալ իր ամբողջ ընտանիքը կորսնցնելու ցափին: Չէր կրցած տանիլ սարսափելի ցեղասպանութեան այդ ահաւոր ցնցումը, որ իր կեանքը փշուր-փշուր ըրած էր:



2) «Արմապոնները Փնտրելիս»

Տարօնի մայրը՝ Մարի Նոխուրեան, որդիին շափ քիչ բան պատմած էր պատահած դէպքերու մասին: Ան միշտ կը պնդէր, թէ ինք Ապարուիի Նապարեանի եւ Պօղոս Նոխուրեանի դուստրն էր: Տարօն իր հօր՝ Քեմալ Համիդի հայրը՝ Օսման Համիդը հեռաւոր ու արեւի կերպարի մէջ կը տեսնէ:

Տարօն եւ մայրը կ'ապրէին Պոլսոյ մէջ: Տան մէջ գիրքերով եւ արձանագրութիւններով լեցուն շափ դարակներ կային: Օր մը Տարօն հոն կը գտնէ բոլոր արձանագրութիւնները, կանաչ ժապաւէնով կապուած ծրարի մը մէջ: Յանկարծ կը մտածէ, թէ ինք բան չի գիտեր իր ընտանիքին պատմութեան մանրամասնութիւններուն մասին: Արդեօք ի՞նչ կատարուած է իրականութեան մէջ: Կը ճանչնայ իր մօր՝ հայերէն գրուած ձեռագիրը, ուր արձանագրուած էր հետեւեալը.

«Ապարուիի Նապարեան (հայուի), դուստրը Պետրոս Նապարեանի եւ Ջեմիտ Արապեանի: Ծնած է Եդեսիա, 1876ին եւ մեռած Տրապիզոն 1915ին: 1895 թուականի կոտորածներու արեւն, ան առեւանգուած եւ բռնաբարուած է Տիգրանակերտի նահանգապետ Օսման Համիդի կողմէ եւ ասոր իբր հետեւանք ծնած է Մարի Հ. Նոխուրեանը: Այս մականունը տրուած է անոր, որովհետեւ Ապարուիին կրցած է փախչիլ եւ ամուսնանալ Պօղոս Նապարեանի հետ, որմէ ունեցած է երկու զաւակներ՝ Օհաննէս եւ Ալիք Նոխուրեանները»:

Ապարուիի Նապարեանի Պատմութիւնը.

Նապարեանները Եդեսիա կ'ապրէին: Ապարուիիի հայրը ծխախոտի գործով կը վրադէր: 1894ին երբ հայրը կը մահանայ, անոնք իրենց հարստութիւնները հետզհետէ կը կորսնցնեն:

Մուլթան Ապարու Համիդի հրամանով կը սկսին 1894ի ջարդերը: Գիշեր մը, թուրքերը կ'այրեն հայոց պահեստանոցները, որոնց մէջ՝ Նապարեաններունը: 1 Յունուար 1895ին կը սկսի կոտորածը Եդեսիոյ մէջ: Հայերը կ'ապաստանին եկեղեցին, սոր թուրքերը կրակի կու տան: Ապարուիի մազապարծ կ'ապարի, բայց ճամբան քարկոծուելով գետին կ'իյնայ ուժաթափ: Ինքզինք կը գտնէ թուրքի մը ապարանքին մէջ: Կը պարզուի, թէ Տիգրանակերտի եւ ապա Եդեսիոյ նահանգապետ՝ Օսման Համիդի

տունն է: Օսման Վամիդը պինք Մալիմա կը կոչէ: Նահանգապետը լկտիօրէն կ'ըսէ, թէ Ազատութիւն փրկած է պարզապէս անոր փրփանալու համար: Հակառակ Ազատութիւն ընդդիմութեան, Օսման բազմաթիւ անգամ կը բռնաբարէ վայն: Ազատութիւն կ'ըմբռնուի եւ արհամարհանքով կը նայի անոր, յուսալով իր մահը գրնէլ անոր ձեռքով եւ ազատիլ ստրկութենէն: Ազատութիւն լազիտէր, թէ հայոց դէմ կատարուող բոլոր դէպքերուն պատասխանատուն Օսման Վամիդն է:

Կը պարզուի, թէ Ազատութիւն յոյ է: Ան կ'ուզէ սպաննել իր վառակը, սակայն աւելի ուշ կը հրաժարի այդ միտքէն: Օսմանի միակ ցանկութիւնն էր Ազատութիւն վառակ մը ունենալ: Ազատութիւն կ'ողբայ իր ծնողները, եղբայրները, քոյրերն ու ամբողջ ընտանիքը, ինչպէս նաեւ Եդեսիոյ եկեղեցիին մէջ այրած բոլոր հայերը:

Ազատութիւն կ'որոշէ յարմար առիթով մը փախչիլ: Ան համոզուած էր, որ ծնելիք վառակը աղջիկ մըն է եւ կը մտադրէ վայն Մարի կոչել: Այս միջոցին, պատասխանատուներուն գաղտնի հրաման կու գայ դադարեցնելու հայոց դէմ հալածանքները եւ սպաննելները՝ վերծ մնալու համար երոպական ճնշումներէն: Օսման շրտապ կերպով Պոլիս կը կանչուի: Ազատութիւն առիթէն օգտուելով կը մտնէ անոր գրասենեակը եւ գաղտնի նամակ մը կը կարդայ: Նամակին պարունակութիւնը երոպական ճնշումներուն եւ հալածանքը դադարեցնելուն մասին էր:

Ազատութիւն Նապարեանի պարմութիւնը հոս անաւարտ կը մնայ:

Տարօն անպայման կ'ուզէ իմանալ անցեալի մասին: Իրեն բարեկամ անգլիացի Ճէյմսի օգնութեամբ ան Անգլիոյ արտաքին գործերու նախարարութեան գլխաւոր արխիւներէն կ'օգտուի եւ դուրս կը բերէ հետեւեալ տեղեկութիւնները.

Բանակի սպայ եւ ապա Տիգրանակերտի նահանգապետ Օսման Վամիդը (1856-1920) ամուսնացած էր Այշա Շուգարի հետ: Անոնց որդին՝ Քեմալ Վամիդը (Տարօնի հայրը) պատասխանատու դեր խաղցած է հայկական կոտորածներուն մէջ: Օսման Վամիդը բացառիկ անգթութիւն ցուցաբերած է հայոց եւ ընդհանրապէս քրիստոնէաներու, ու բացառիկ հաւատարմութիւն՝ սուլթա-

նին հանդէպ: Յմահ բանտարկութեան դատապարտուելէ յետոյ, 1920 թուին անձնասպան եղած է Պոլսոյ զինուորական ուղղիչ կալանավայրին մէջ:

Մեղադրեալ Օսման Ղամիպը կանխամրածուած դաժանութեամբ գործած է հայոց կոտորածները: Իր ղեկավարած սորամասի բոլոր հայ նորակոչիկները սպաննած է: Երբեք գերի չէ վերցուցած: Ան հպարտացած է «այրած հողի» իր ռազմավարութեամբ: Եղեախոյ փխտոր ղէպքերուն ժամանակ աննկարագրելի դաժանութիւն ցուցաբերած է այրելով քրիստոնէայ հայերով լեփլեցուն եկեղեցիներ:

Տարօն իր հօրը՝ Քեմալ Ղամիպի մասին եւս տեղեկութիւններ կը գտնուէ: «Երբ զինք հայր կը կոչեմ, խորշանք կը սգամ»,- կ'ըսէ Տարօն: Ան կը կարդայ Քեմալ Ղամիպի յուշագրութիւնները, ուր վերջինս լրբօրէն կ'արդարացնէ իր գործած ոճիրներն ու կեղեքումները հայոց դէմ: Յուշերուն մէջ ան կը յիշէ, թէ թուրք մոլլա մը կ'արդարացնէ այս ոճիրները ըսելով, թէ Մստուած թուրքերուն հետ է: Կը յիշէ Աթիֆ պէյ անունով իթթիհապական մը, որ զինուորականները կը հրահրէ հայոց դէմ: Քեմալ կը միանայ իթթիհապական կուսակցութեան: Մոլեռանդ թուրքերը կը կազմեն «Յարուկ Կազմակերպութիւն» (Թեշքիլատի Մախսուսէ) անունով մարմինը՝ հայերը բնաջնջելու իբր գործիք: Անոնք Քեմալին կը տրվեցնեն արել եւ խաբել մեծ սառնասրտութեամբ: Ջայն կը դրկեն Գերմանիա, ուր կը տեսակցի քանի մը անձնատրութիւններու հետ, որոնք սայն հայութեան դէմ կը հրահրեն: Կը հանդիպի նաեւ իթթիհապական պատասխանատու բժիշկ Նապըմին: Գերմանացի պատասխանատուներ անոր կը պատմեն Մերասփոյ մէջ իրենց գործած ոճիրներուն մասին:

Տարօն ամօթ կը սգայ ոչ այնքան Քեմալի արիւնը ժառանգելու, որքան՝ խաւարամիտ եւ անհոգի նախնիներ ունենալու համար: Ան կ'ըսէ, թէ Քեմալ իրեն ծնունդ տուած է ոչ թէ վառակ ունենալու համար, այլ՝ իր մայրը բռնաբարելու նպատակով: Տարօն վարմանք կը յայտնէ, թէ Քեմալ կ'արդարացնէ այն ոճիրները, որոնք ան եւ անոր նման շարքերը գործադրած էին: Աւելի սարսափելի է սոցոմի բացակայութիւնը յուշերը սառնասրտօրէն գրելու ժամանակ:

3) Ալիք Նոխուրեան

1965ի օրերէն մէկը Ալիք Նոխուրեան կը թակէ Մարիի եւ Տարօնի փան դռըրը Պոլսոյ մէջ: Ան ինքզինք կը ներկայացնէ Տարօնի, որ փայն կ'առաջնորդէ իր մօրը՝ Մարիի սնարին մօտ: Մարի թէեւ հոգեվարքի մէջ էր, բայց կը ճանչնայ Ալիքը: Քիչ ետք Ալիք դուրս կու գայ եւ կը վրայէ Տարօնի հետ: Ան կը պատմէ, թէ գրած է իր եղբայրը՝ Օհաննէսը Գահիրէի եւ անոր որդի Տաճարը՝ Փարիզի մէջ: Ալիք կ'իմացնէ, թէ երբ ինք հապի 15 փարեկան էր, Քեմալ Համիտ վինք բռնաբարած էր եւ ինք վառակ մը ունեցած էր Գրիգոր անունով, որ խռովարար հիթլերական մը դարձած էր յետագային: Վուֆի անուանափոխուած Գրիգորը պատերազմէն ետք կը հաստատուի Տամասկոս եւ չ'ուրեր փեսնել իր մայրը՝ Ալիքը: Երբ փակաին Ալիք փան մէջ կը գտնուէր, Մարի կը մահանայ:

1915ին երբ խռովութիւնները կը սկսին Թուրքիոյ մէջ, հայոց մեծ հալածանքն ու սպանդը եւս սկիսք կ'առնեն: Պողոս Նոխուրեան կը ծրագրէ ընդհանուր երկրէն հեռանալ: Կինը՝ Ապարուհի Նապարեան կը մահանայ: Պողոս իր ընդհանիքը կ'առաջնորդէ նաւահանգիստ, սակայն հոն թուրքերը կը յարձակին եւ ընդհանիքը ցիր ու ցան կ'ըլլայ: Ալիք բարեկամ ձկնավաճառ փնտորի մը ձեռքով կ'ապարի, սակայն շուտով կը ձերբակալուի եւ կը միանայ փեղահանուած հայոց կարաւանին: Բազում չարչարանքներէ ետք, նօսրացած կարաւանը կը հասնի արաբական անապատ, ուր պետեի ընդհանիք մը կ'որդեգրէ Ալիքը: Երեք փարի հոս կ'ապրի: Թուրքերը կը յարձակին իրենց վրայ, կը փանին Ալիքը ու կը յանձնեն իրենց պատասխանատու սպային՝ Քեմալ Համիտին: Ճակատագիրն այսպէս փնտրինած էր:

Մարին, չմեռած, իր յուշերը գրելով յանձնած էր իրեն հոգ փանող բուժքոյրին՝ Մամիա Սուրուֆին, որ յուշերը պարունակող ծրարը կու փայ Տարօնին: Իր կարգին, Տարօն փայն կու փայ Ալիքին, որպէսզի վերջինս բարձրաձայն կարդայ:

1915ին, նաւահանգիստին մէջ թուրքերու յարձակման ապեն, Մարի մինակ կը մնայ «Միրզայ» կոչուած շոգենաւին վրայ, որ իր խորթ հօրը՝ Պողոս Նոխուրեանին կը պատկանէր: Նաը կը բախի հաստատուն բանի մը եւ ջուրին մէջէն անծանօթ մը

կ'ապարէ Մարին: Անծանօթը իրեն հետ կը խօսի ֆրանսերէնով: Կը հասնին նաւահանգիստ եւ Մարին պարզաբարկով դուրս կը հանեն: Ան կ'ապրէր հայու մը տունը: Օր մը կու գան եւ պայն կը փանին նաւահանգիստ՝ ըսելով, թէ ընտանիքին մօտ կը փանին: Մարին փանողը բժիշկ Նապլմ կը կոչուէր: Նաւը կը հասնի Պոլիս եւ Մարին կը փանին Օսման Համիտի մօտ, որ պայն շոգենաւով Տրապիզոն կը փանի ու կը յանձնէ իր որդոյն՝ Քեմալի, որու հանդէպ Մարի առաջին վայրկեանէն ապելութիւն եւ արհամարհանք կը փածէ: Քեմալ կը բռնաբարէ Մարին, որ կը յղիանայ: Ջինք խնամող հայ դեղագործը Նադիր Կարի (Քապիր [արար.] խմբ.) կը կոչուէր: Երբ սպասուի Սալիման սենեակէն դուրս կու գայ, Մարի կ'իմացնէ դեղագործին, որ զինք առեւանգած են: Կը ծնի Տարօնը:

Երբ Թուրքիա պարտութեան ճամբան կը բռնէ եւ դէպքերը ի նպաստ Դաշնակիցներուն կ'ընթանան, Քեմալ, առնելով Մարին եւ Տարօնը, նաւով կը փախչի: Ճամբան Քեմալի նաւը կը հանդիպի ռուսական նաւու մը, որուն մէջի զինուորները կը հրամայեն յանձնուիլ: Քեմալ կը մերժէ եւ անձնակազմով միասին ծովը կը նետուի: Նաւը կրակ կ'առնէ, զոր ռուսերը կը յաջողին մարել:

Օրեւայի մէջ Մարին կը հանդիպի քեռի Մուրադեանին: Երեք տարի Օրեւս կը մնայ: Քեռին կ'որդեգրէ զինք: Պարտապաճ վերջանալէ ետք անոնք կ'անցնին Պոլիս, ուր Մուրադեան կը մահանայ եւ իր հարստութիւնը կը թողու Մարիին:

4) Օհաննէս Նոխուրեանի վկայութիւնը

Ալիքն ու Տարօնը Գահիրէ կը մեկնին եւ Օհաննէսին ու անոր ընտանիքին կը հանդիպին: Կը ծանօթանան Օհաննէսի փիկնոջ՝ Նորա Ապարեանին եւ որդոյն՝ Տաճարին: Կը գրուեն եւ կը խօսին մինչեւ առաւօտ: Ապա Նորան Տարօնին կը յանձնէ Օհաննէսի յուշագրութիւնը:

Օհաննէսի համար ամէն ինչ սկսած է իր մօրը թաղման օրը, երբ թուրքերը կը յարձակին եւ ընտանիքը ցիր ու ցան կ'ըլլայ: Օհաննէս կը յաջողի փախչիլ եւ տուն հասնի: Հոն կը հանդիպի իր հօր մօտ աշխատող նաւավար Յարութիւն Անդրէասեանին: Վերջինս Օհաննէսին խորհուրդ կու տայ թրքական փարպազ հագ-

նիլ եւ փախչիլ: Ան կը քալէ դէպի հիւսիս-արեւելք՝ նաւահանգիստ հասնելու համար: Ճամբան կը հանդիպի կարինցի փախստական հայ ընտանիքի մը եւ անոնց հետ նաւահանգիստ կը հասնի մեծ դժուարութեամբ:

5) Պատգամ Լէյլային

Լէյլա դուստրն է Գրիգորի եւ Նարիա Հալիւի: Նարիա կը կապուի Ալիքի հետ եւ պայն Տամասկոս կը հրաւիրէ իր թոռնուհին՝ Լէյլային հետ հանդիպելու համար: Նախապէս Նարիան եւ Ալիքը Փարիսի մէջ հանդիպած էին: Տարօն կը մեկնի Դամասկոս եւ կ'այցելէ Նարիային: Տարօն Նարիայի կը պատմէ իր ընտանիքի անցեալին պատմութիւնը: Միրալիր մթնոլորտի մը մէջ, Նարիան Տարօնի կը ներկայացնէ իր 12 տարեկան դուստրը՝ Լէյլան: Ապա Նարիա Տարօնի կը յանձնէ թուրքէ ծրար մը, որ Նարիայի մայրական մեծ հօր՝ Մուհամմէտ փաշայի յուշագրութիւնը կը պարունակէր:

Մուհամմէտ փաշա 1875ին կը մեկնի Փարիս՝ շոգեկառքի ճարտարագիտութիւն ուսանելու: Հինգ տարի ուսանելէ ետք կը ստանայ իր վկայականը, կը վերադառնայ Պոլիս եւ Օսմանեան երկաթուղիի տնօրէն կը նշանակուի: Ժողովներու կը մասնակցի նախարարին եւ այլ պատասխանատուներու հետ: Ուղղամիտ մարդ ըլլալով՝ ան կ'օգնէ հալածուած հայոց: Պանք Օթոմանի դէպքէն ետք ան կը հովանատրէ 200 հայոց՝ շոգեկառքով փախուստը դէպի հարա: Նոյն գիշեր ան հայր կը դառնայ աղջիկ պաւակի մը՝ Լամիային:

Հայոց օգնած ըլլալուն համար Մուհամմէտ փաշա կը պրկուի իր պաշտօնէն: Շուրջ սակայն պինտորական մարակարարումներու պատասխանատու Բամայիլ Հաքիրը իրեն կ'առաջարկէ ղեկավարել Պաղտատի երկաթուղիի ծրագիրը:

Մուհամմէտ փաշա 1915ին անձնասպան կ'ըլլայ Պաղտատի մէջ:

Տարօն կ'եպրակացնէ, թէ սխալ է մեղադրել ամբողջ թուրք ժողովուրդը իբր յանցակից հայկական ջարդերուն: Հայերը կը ներեն, սակայն չեն մոռնար:

6) Հելինի փոհմածառը

Հելինը Օհաննէս Նոխուրեանի որդւոյն՝ Տաճարի փիկինն է: Տարօն իր մայրական մեծ հօր՝ Լուի Տէօ Վիլելի եւ մայրական մեծ մօր՝ Նոյեմի Մոսկեանի յուշերը կը կարդայ Տաճարին այցելութիւն մը փութած ատեն, Նիւ Եորքի մէջ:

Այս յուշագրութիւններուն մէջ կ'երեւին Օսմանեան Թուրքիոյ՝ հայոց դէմ գործադրած հալածանքները, կեղեքումները եւ ոճիրները:

Տարօն կը կարդայ նաեւ Հելինի հայրական մեծ հօր՝ Ժագ Վարչի յուշերը:

7) Էօմէն Վարչի օրագիրը

Տարօն կը կարդայ Հելինի հօր՝ Էօմէն Վարչի օրագիրը, որ կ'ընդգրկէ 1914ի եւ 1915ի քանի մը ամիսները: Օրագրին մէջ յստակ կ'երեւի հայութեան դէմ սարքուած հալածանքը: Էօմէն իբր հոգեբոյժ Պոլսոյ մէջ ականատես կ'ըլլայ հայութեան ապրած նեղութիւններուն:

8) Նափիայի արմարները

Տարօն Նափիային եւ անոր Լեյլա դստերը կ'այցելէ Պոլսոյ իրենց փան մէջ: Նափիան խոստացած ըլլալով Տարօնի օգտակար ըլլալ իր փնտրութիւններուն մէջ, անոր կը յանձնէ իր հօր՝ Խալիլ պէյի յուշագրութիւնը, որ կ'ընդգրկէ 1909 թուականը, երբ Խալիլ պէյ կը ծառայէր սուլթանի Տօլմապահչէի ապարանքին մէջ:

Նափիա Տարօնի կը յանձնէ իր մօր՝ Լամիայի յուշերը եւ:

9) Կորած վեկոյց (Նոյեմբեր 1996)

Տարօն իր բարեկամներէն Զօրավար Նուրիի օգնութեամբ ձեռք կը ձգէ թրքական բանակի արխիւներէն վեկոյց մը, որ կ'ընդգրկէ նաեւ գաղտնի փեղեկութիւններ հայոց դէմ գործադրուած ոճիրներուն մասին:

10) Տարօն Նոխուրեանի պատմութեան աւարտը՝ Արամ Նոխուրեան (Պաքու, Ապրիլ 1997)

ԱՄՆ.ի արտաքին գործոց նախարարության պաշտօնեայ, 34 փարեկան Արամ Նոխուրեանը Փենթակոնի տրամադրած օդանավ Նիւ Եորքէն դէպի Անգարա կ'ուղղուի: Ասիկա գործով այցելութիւն մըն է այն երկիրը, որ մօտ անցեալին Հայոց Ցեղասպանութեան հեղինակը եղած է: Անցեալի մասին իր մօրմէն տեղեկացած Արամը իր ճամբորդութեան ընթացքին անդադար կը խորհրդածէ: Ան պատերազմական օդանավ կ'անցնի Պաքու, ուր մահափորձի կ'ենթարկուի ինքնաշարժի արկածով:


11) Լէյլա Ղ. Խալիլ

Լէյլա կ'այցելէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն՝ Ստեփանակերտ: Ան հեռաձայնով կ'իմանայ, թէ Տարօն Պոլսոյ մէջ հիանդանոց տարուած է: Լէյլա կը վերադառնայ Պոլիս, ուր Տարօնէն կ'իմանայ, թէ Արամ Նոխուրեանը ծանր վիրատու է Պաքուի մէջ, թէն ապաքինման յոյսը մեծ է:

**Ալեքսանդր Թօփճեան, «Եւ Անգամ Մահից Յե-
տոյ», վէպ, Հայաստանի Գրողներու Միութեան
հրատարակչութիւն, Երևան, 2005, մեծ չափի 591
էջ:**

Ա. մաս. Էրոսի Եւ Թանաքոսի Միջեւ կամ Taedium Vitae (Խորշանք Կեանքից)

Պոլսոյ Միլիվրի թաղամասի երկաթագործ Յովհաննէս Չիլինկիրեանի որդին՝ Ռուբէն (Մեակ) շոգեկառքով կը ճամբորդէ դէպի Լոսան, Ջուիցերիա: Ան մտադրած է բժշկութիւն ուսանիլ: Ճամբուն վրայ կը ծանօթանայ թուրք երեւելի փաշայի մը որդոյն՝ Քենանին, ինչպէս նաեւ կոմստի Ալիսին: Խօսակցութեան ընթացքին, Քենան Ռուբէնի կ'ըսէ, թէ օսմանցիք երէկուանը չեն այլևս: Անոնք փոխուած են, շա՛ր փոխուած են...:



Հասնելով Լոսան, Ռուբէն համալսարան կը մտնէ: Բր դասախօսներէն ամենէն շար մօտէն կը ծանօթանայ դոկտոր Ռոփ հեպ: Յաճախ երեկոները անոր հեպ աղքատ հիւանդներու կ'այցելէ:

Ռուբէն ուրիշ ուսանողներու կը ծանօթանայ: Անոր նախագահութեամբ կը կազմուի «Արմենիա» միութիւնը, որ յարկապէս կարիքատու ուսանողներու պիտի օգնէ:

Ռուբէն Քենանէն կ'իմանայ, թէ անոր փաշա հայրը ձերբակալուած է Պոլսոյ մէջ եւ աքտորուած: Աւելի ուշ կը լսէ անոր խեղդուիլը Գոնիայի բանտին մէջ:

Ռուբէն Միլիվրիի իր հարազատներէն զատ, «Լոյս», «Արեւելեան Մամուլ» եւ «Մասիս» թերթերու խմբագրութիւններէն նամակներ կը ստանայ:

Արդէն առաջին փարին ան դոկտոր Ռոյի հետ Կեսաձ Էր Զուրկերիոյ սփռուրոյ կողմերը՝ թշուառութիւն, անարդարութիւն եւ մարդկային էութեան քարմնելի դրսեւորումներ: Մակայն, կոմ-սուիիին սենեակը ակամայ լսած հարցերը բոլորովին ուրիշ բան կ'ըսէին իրեն:

Բ. մաս. Երոպայի Առեւանգումը

Ռուբէն թիֆլիսահայ ուսուցչուիի մը նամակէն կ'իմանայ, թէ Միամանթօ Լէյպէնի (Զուրկերիոյ մէջ գիւղ մը) թոքախտաբաններէն մէկուն մէջ կը գտնուի: Լէյպէն մեկնելով, Միամանթոյի կ'այցելէ եւ կը խօսակցին:

Համալսարանին մէջ թէ շրջապատը՝ կեանքը կը շարունակուի իր փխտուր եւ ուրախ կողմերով: Ռուբէն 17ամեայ գերմանուիի Եաննիին կը սիրահարի:

Երիտօրութեան բռն գործունէութիւն ծաւալած էին Զուրկերիա ուսանող թոքահայտաբաններուն մէջ: Առանձնայատուկ նախաձեռնութեամբ անոնք կը հետապնդէին երիտասարդ ուսանողները՝ խօսելով Սուլթան Ապտուլ Համիդի բռնապետութեան դէմ: Շարքայներ կային հրապարակի վրայ: Թոքահայտաբան հայ ուսանողներուն գրեթէ բոլորը չէպոք, սպասողական դիրք բռնած էին եւ կը փորձէին ամէն փորձով հեռու մնալ այդ վրայներէն:

Միւս կողմէ, Փարիսի մէջ, երիտօրութեան ղեկավարները բաւական կը «մշակեն» Քենանը՝ սուլթանին հանդէպ անոր անձնական վրէժը նկատի ունենալով:

Ռուբէն կը վերադառնայ Պոլիս՝ արձակուրդով: Վերադարձը երիտօրութեան յեղաշրջման օրերուն կը փութադիպի: Չքնաղ նշանախօսքեր եւ խոստումներ կը լսէ ան յեղափոխական թուրք պիւնտրներէն: Բռնապետութիւնը վերջ կը գտնուի...:

Ռուբէն Պոլսոյ մէջ, իր ընկերներուն հետ կը գործակցի թափերական ասպարէզին մէջ: Ռազմական նախարարութենէն ծանուցում կը հրապարակուի պիւնտրագրուելու: Ռուբէնի հայրը նախապէս 45 ոսկի պետել (պիւնտրութեան փոխարէն փոքր) վճարելով ապարած էր: Հիմա ալ նոյն բանը կարելի է ընել, սակայն դժուարութիւններ կան: Ռուբէն իր բարեկամ Քենանի հետ կը ներկայանայ գնդապետին եւ հարցը կը լուծուի 60 ոսկի վճարով:

րելով: Քենան եւ գնդապետը իթթիհապական էին ու նախապէս ալ զիրար կը ճանչնային: Ռուբէն Լօզան կը վերադառնայ:

Երբ Լօզան կը հասնի՝ Եաննիի հետ կը թղթակցի: Թերթին մէջ կը նշմարէ «Արանա», «Տարսոն», «Տէօրթ Եօլ» եւ ուրիշ ծանօթ անուններն ու 20,000-25,000 թիւերը: Կը պարզուի, թէ Կիլիկիոյ մէջ ջարդեր տեղի ունեցած են (1909):

Ռուբէն կ'ամուսնանայ Եաննիի հետ: Կ'ունենան մանչ մը եւ դուստր մը, զորս Լեւոն եւ Շամիրամ կ'անուանեն:

Ռուբէն կ'աւարտէ բժշկական ուսումը եւ ընտանեօք Պոլիս կը դառնայ:

Գ. մաս. «Երթա՛լ...»

Պոլիս հասնելէն ետք, Ռուբէն սկսած է աշխատիլ հիւանդանոցի մը մէջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմը կը սկսի: Օր մը երկու զինուորներ տունը կու գան եւ իբրեւ թէ պայն հիւանդի մը քով կը տանին, Բերա: Ան պարզապէս բանակ կը տարուէր իբր բժիշկ սպայ: Եաննի լսած ըլլալով քաղաքին մէջ կատարուող ձերբակալութիւններուն մասին, գիշերը մտադրանքով մէջ կ'իյնայ: Հիւմի փաշա, զոր Ռուբէնը բուժած եւ մահէն փրկած էր Լօզանի մէջ, կը փորձէ ապարել պայն: Եաննի Հիւմիին հետ գործակցաբար կը դիմէ գերմանացի զինուորականներուն, որոնք վստահաբար կրնային ապարել Ռուբէն Սեւակը: Ակնյայտ էր, որ այդ օրերուն, գերմանական դեսպանատունը Պոլսոյ թրքական ղեկավարութեան տէրն ու տիրականն էր: Եաննի գերմանացի զինուորական Կոնստանդին ֆոն Նոյրաթին կը դիմէ:

Գաւառներէն եկած լուրերը հայոց կոտորածները կը գուժին: Ռուբէն Սեւակ արձակուրդով տուն կու գայ: Դանիէլ Վարուժան կ'այցելէ անոր: Երկու բանաստեղծները կը զրուցեն: Ապա կը վերադառնայ բանակ՝ իր պաշտօնին:

Նոյրաթ կը յաջողի գտնել անլի բարձր պաշտօնով գերմանացի զինուորական մը՝ Եոհանը, որ Եաննիի հօրեղբայրն էր: Եոհան եւս կը ջանայ ապարել Ռուբէնը: Անոնց նպատակն էր Ռուբէն Սեւակը եւ ընտանիքը Գերմանիա փոխադրել:

Շոգեկառքը կը շարունակէ ճամբան եւ կ'ուղղուի դէպի Էնկիւ-

րի (Անգարա): Ճամբուն վրայ տեղ մը կանգ կ'առնեն: Ոստիկան մը Ռուբէն Մեակը հետը առնելով կ'ուղղուի դէպի մօտակայ աղբիւր մը իբր թէ ջուր բերելու: Կը մտնեն ամայացած գիտ մը, ուր ընդամէնը մէկ թուրք ընփանիք կը բնակէր: Ընփանիքին հայրը իրենց կը պատմէ, թէ ինչպէս հայերը տեղահան ըրին իրենց տուներէն, զանոնք տարին գիտին եկեղեցին, եւ քարիտ թափելով անոնց վրայ, կրակի տուին: Ռուբէն Մեակ կը տեսնէ այդ եկեղեցին:

Մեակի տիկինը՝ Եաննի գերմանացի պինտրականներուն հետ ջանք չի խնայեր ապարելու համար ամուսինը:

Շոգեկառքը կը հասնի Էնկիւրի, ուր Մեակ հայապարկան քանդուած եւ այրած տուներ կը տեսնէ: Հայերը տարագրուած են այստեղէն: Ոստիկանները զայն ոստիկանատուն կ'առաջնորդեն: Ոստիկանապետը Ռուբէն Մեակը ռազմական դատարան կ'ուղարկէ: Կառքով կ'անցնին ջարդեր տեղի ունեցած վայրերէ եւ գիշերը կը հասնին Գալեճիք: Ամէն տեղ կողոպուտ եւ մահ սփռուած էին: Բժիշկը հոս կը հանդիպի «Ապարամարտ»ի մէջ աշխատող Յակոբիկին: Ոստիկանները պիտենք գտնելու եկերքը կը տանին: Բազմաթիւ հայ մտաւորականներ հոս իրարու կը հանդիպին, ապա ճամբայ ելլելով կը հասնին Չանղըրը: Հոս բոլորին կ'առաջարկեն իսլամանալ՝ հինգ վայրկեան պայմանաժամ տալով: (Բալամայողները չէին տեղահանուեր, այլ՝ կը շարունակէին մնալ իրենց բնակավայրերուն մէջ): Հայ մտաւորականներու խումբէն ոչ ոք կը համաձայնի իսլամանալ: Թուրք սպան կը հրամայէ ճանապարհը շարունակել ուրքով: Բռնագաղթը սկսած է: Մտաւորականները կը մնան Չանղըրը: Քիչ անդին, աներեւակայելի բաներ կը պատահին: Ծեծ, խոշտանգում եւ ջարդ: Չանղըրը 700 հայերէն ողջ կը մնան միայն 70ը, որոնք դէպի կիրճերն ու ձորերը կը քշուին:

Հայ մտաւորականները իրարու քով կը հաւաքուին եւ կը պուրջնէին: Հոն են Դանիէլ Վարուժանը, Բիւզանդ Քեչեանը, Տիրան Քելեկեանը, Կոմիտաս Վարդապետը եւ ուրիշներ: Անոնք բոլորն ալ ժամանակատրապէս կը մնան Չանղըրը:

Գերմանական պինտրական կեդրոնը Լօզանէն կը ստանայ գնդապետ Ֆրանց Սպելի գրած նամակը: Գնդապետը Եռհանի

ապգական էր: Ան կը միջնորդէր Ռուբէն Մեակի ապար արձակման համար:

Եաննի կրկին կ'այցելէ Գերմանիոյ դեսպանին, եւ խօսակցութեան ընթացքին կ'ըսէ, թէ հայոց կեանքը դժոխքի վերածուած է:

Չանդըրը քաղաքի տէրն ու փիրականը արապաճիպաշը (կառապան) Իսմայիլն էր, որ դուստր մը եւ եօթը որդի ունէր: Ռուբէն Մեակ կը բուժէ անոր հիւանդ աղջիկը՝ Այշէն, որու թոքերը մրսած էին: Այս առիթով Ռուբէն արապաճիպաշը Իսմայիլէն նահանգապետը տեսնելու արտօնութիւն կը վերցնէ: Ան նահանգապետէն կ'իմանայ, թէ Թալաաթ փաշա հրահանգած է հաշուել Չանդըրի արքայութեան թիւը եւ պանոնք շուրտով ճամբայ հանել դէպի Այաշ:

Այս օրհասական օրերուն, հայ մտաւորականները կրկին կը հաւաքուին ու կը խորհրդակցին: Անոնք միաձայնաբար կը մերժեն իսլամանալ եւ կ'որոշեն պայքարիլ մինչեւ մահ: Հոն են Գրիգորիս վրդ. Պալաքեանը, երկու քահանաներ, բժիշկ Վահան Ալթունեանը, Միքայէլ Շամբանճեանը եւ ուրիշներ:

Որոշուած էր Ռուբէն Մեակը, Գանիէլ Վարուժանը, Օննիկ Մաղապաճեանը, Վահան Քեհեայեանը եւ հայագործ Յարութիւնեանը Այաշ ուղարկել: Չեռնաշղթաներով արքայականներուն թուրք սպիկաններ կ'ողեկցին: Ճամբուն վրայ 10 պաշրպօստք աւազակներ անոնց ճամբան կը կտրեն եւ հինգ արքայութեանը կը սպաննեն Օգոստոս 1915ին:

15 Հոկտեմբեր 1915ին, Ռուբէն Մեակի փոխարէն՝ Եաննի իր երկու պաւակներուն եւ մօրը հետ կը մեկնի Ջուիցերիա՝ վերջնականապէս թողելով այն երկիրը, որ գերեզման դարձաւ ողջ հայ ժողովուրդին համար:

Յակոբ Խաչիկեան, Ժան-Իվ Սուսի, «Ամառ Առանց Այգաբայի», ֆրանսերէնէ թարգմանեց՝ Ամալիա Եահումեան, «Հայ Գրողներու Միութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 2005, միջակ չափի հասարկեկ 762 էջ (վէպ):

Նախաբանին մէջ հեղինակները պարմական ակնարկ մը կը ներեն Օսմանեան Կայսրութեան պարմութեան վրայ, ապա կը ներկայացնեն Գոնիայի մէջ կարարուած խժոժութիւնները եւ դեպքան Մորկընթաուի այցելութիւնը Թալասթի, յայտնելու համար իր վրդովմունքը հայոց դէմ կարարուած անարդարութիւններուն:

Հեղինակները կը նկարագրեն Սեբաստիա քաղաքը, որմէ դուրս գրնտող վիճտրական հիւանդանոցին մէջ Վարդան Պալեանը բժիշկ սպայ էր: Սեբաստիայիներու փեղահանութեան հրամանը եկած էր: Օսմանեան բանակին մէջ Վարդանի ծառայութեան համար, անոր ընտանիքը պէտք է վերծ մնար փեղահանութենէն: Այդուհանդերձ, 38 փարեկան Վարդանը միշտ պզոյշ է: Անոր հայրը՝ Թովմաս Պալեանը Սեբաստիոյ մէջ ափիոնի արտեր ունէր եւ ափիոն կ'արտածէր Երոպա ու Ամերիկա՝ բժշկական նպարակներով գործածուելու համար:

1896ի դէպքերը ապրած էին Վարդանի վրայ եւ անոր նախասիրութիւնը քաղաքականութիւնը դարձուցած: Հայրը կ'ուկէր, որ Վարդան քիմիագէտ դեղագործ դառնար՝ օգրական ըլլալու համար իրենց ափիոնի գործին: Բոտն վիճարանութիւններէն ետք, Վարդան սրիպուած կ'ենթարկուի հօրը կամքին եւ Պոլսոյ հայկական Կեղրոնական Վարժարանը աւարտելէ ետք Ռոպըրթ Գոլէճը կը մտնէ: Ան իր մօրեղբօր՝ Մեսրոպ Մեսրոպեանի փունը կ'ապ:



րէր: Մեսրոպի աագ որդին՝ Պարգեւը Նիւ Եորք կը մնար եւ Պալեաններու ափիոնի գրասենեակը կը ղեկավարէր: Կրպսեր որդին՝ Տիրանը շար մտերմացած էր Վարդանի հետ: Ան եւս քաղաքական հակումներ ունէր Վարդանի պէս, այն րարբերութեամբ որ Տիրան վինուած պայքարի ջարագով էր, մինչ Վարդան կը հաւաքար սահմանադրական բարեփոխումներուն:

Վարդանի ուսանած ժամանակ հայրը կը մահանայ: Երեք ամիս երբ կը մահանայ մայրը՝ Թագուհին: Վարդան այլեւս պարտաւորուած չի սգար րուն վերադառնալու, որովհետեւ իր եղբայրը՝ Նուպարը յանձն առած էր ընրանեկան գործին կառավարումը: Ան Պոլսոյ մէջ Երիգուլէի հայկական հիւանդանոցը պաշտօնի կը կոչուի:

Վարդան քսան րարեկան էր, երբ իր յօդուածներն սկսան հրատարակուիլ արրասահմանի մէջ: Ան կապ հասրարած էր Անաբոլ Ֆրանսի հետ: Զգուշանալով թշնամիին հետ գործակցելու ամբասարանութենէ, ան քանի մը ամիս իր թղթակցութիւնները կը դադրեցնէ: Վարդան հրատարակած էր շար մը աշխարութիւններ, որոնց ամենէն նշանաւորն էր «Ազգերու Կայսրութիւն» գիրքը: Երիբթուրքերը կասկածով կը նայէին անոր, եւ ան մէկ րարի կը սրիպուի պահուրբած կեանք մը ապրիլ իր ընկերներուն մօտ, յաճախ փոխելով հասցէն: 1908ին սահմանադրութեան հռչակումով՝ Վարդան ապարութիւն կը գրնէ: Ան օսմանեան բանակ կը մրնէ եւ կը սկսի ծառայել որպէս բժիշկ-դեղագործ: Կառավարութեան մէջ Էնվերի եւ Թալասթի մեծ ազդեցութիւնը կը վրդովեցնեն Վարդանը:

Վարդանի կինը՝ Մարօն մրահոգ էր Մեբասրիոյ մէջ կարարոող անցուդարձերով: Երբ ան իր մրարանջութիւնը կը յայրնէ ամուսնոյն, վերջինս կը հանդարրեցնէ վայն ըսելով, թէ րեղահանութեան որոշումը չի կիրարկուի րինուրականներուն եւ անոնց ընրանիքներուն նկարմամբ:

Վարդանի Մեբասրիոյ րան մէջ կ'ապրէին ինք, կինը, վոքանչը՝ Ազնիւր եւ Վարդանի ու Մարոյի որդին՝ Թովմասը: Ատոնցմէ վար կային 11 րարեկան երկու քիւրր սպասուիիներ՝ Ճամիլան եւ Զէյնապը: Հօրաղ Արշակն ամէն աուրու կու գար եւ կովերը արածելու կը րանէր: Վարդանի ձիուն անունը Հուր Կրակ էր:

1915ի ամրան առաօտը մը Վարդանի եւ Մարոյի խօսակցութեան նիւթ կը դառնան հայոց տեղահանութիւնն ու ընդհանուրին սպառնացող վտանգը: Քիչ ետք երբ Վարդան Հուր Կրակը հեծնելով աշխատանքի վայրը կը հասնի, կը հանդիպի մոլլայի մը, որ պինք կ'ուզէր տեսնել: Վարդան երբ իր վրանը կը հրաւիրէ մոլլան, կը պարզուի, թէ ան յեղափոխական Շիրակ Թեւոնեանն է: Վարդան եւ Շիրակ կը պրուցեն Անապոլոյի հայերը ապստամբութեան առաջնորդելու նիւթին շուրջ: Քիչ ետք Շիրակ, վրդոված, կը բաժնուի Վարդանէն:

Ներքին գործոց նախարարի հրահանգով՝ անոր օգնական Գանի պէյ Սեբաստիա կը ժամանէ: Ան կը հանդիպի ոստիկանապետ Մուսթաֆա Ռահմիին, որ կ'իմացնէ Գանի պէյին, թէ հրամանը կատարուած է եւ գաւառապետ Մուսթաֆա պէյ՝ սպաննուած: Վերջինս հայոց նկատմամբ մեղմ էր եւ լաւ յարաբերութիւններ ունէր անոնց հետ:

Թովմասի կնքահայրը՝ Արմէն Միրմելեան, իր հետ առնելով իր սանիկը, կ'ուղղուի Մբ. Մինաս եկեղեցին, ուր քահանային եւ եկեղեցոյ խորհուրդին հետ ժողով կը գումարեն՝ տեղահանութեան հարցը քննելու համար: Ներկաներէն Շիրակ Թեւոնեանը կողմնակից է պինտալ պայքարի գաղափարին, սակայն անդամներուն մեծամասնութիւնը կը հակառակի: Երբ ժողովը վերջ կը գտնէ եւ պատարագը կը սկսի, երեւի շարքերէն մէկը կը նկատէ, թէ ոստիկանները կը շրջապատեն եկեղեցին: Ոստիկանութիւնը իմացած էր, թէ Շիրակ իր պինտալներով կը գտնուէր եկեղեցիին մէջ: Ժողովուրդին մէջ իրարանցում կը սկսի: Եկեղեցին գրնոտողները արագ քայլերով դուրս կու գան: Արմէն Թովմասին ձեռքէն բռնած կ'ուղղուի դէպի տուն: 15 երիտասարդներ կը ձերբակալուին: Հրացանաձգութիւնը կը սկսի Շիրակի մարդոց եւ ոստիկաններուն միջեւ: Թուրքերը եկեղեցին կրակի կու տան, ուստի քաջերը, ստիպուած, դուրս գալով կը յանձնուին: Շիրակ Թեւոնեան վիրատու վիճակի մէջ կը ձերբակալուի: Տէր Խորէն քահանան եւ ուրիշ կղերականներ ալ կը ձերբակալուին:

Այս միջոցին, Վարդան հիւանդանոցը կը գտնուէր աշխատանքի: Երբ ան դուրս կու գայ, իր ձին պահող թուրքը արելութեամբ եւ խեղաթիրումներով կը պատմէ պատահած բաները: Վարդան

ապա Կոնստանդին Կոստանյանը թրքական թաղերէն, որոս գրգռուած եւ ապրիլական ոգիով ամբողջը փողոց իջած էր:

Այդ օրը՝ 30 Յունիս 1915ը Թովմասի վեցերորդ փարեղարքն էր: Կնքահայրը՝ Արմէն Միրմէլեան եւ Կիկիւնը՝ Արաքսին ճաշի հրաւիրած էին Վիրենք: Այդ երեկոյ Պալեանները կ'որոշեն այդ գիշերն իսկ հեռանալ Մեքասփայէն: Արմէնի եւ Արաքսի մեկնումէն ետք, անոնք մեկնելու պատրաստութիւններ կը տեսնեն: Վարդան յանկարծ պատուհանէն կը տեսնէ, թէ հրապարակը լուսաւորուած է եւ իրարանցում մը կայ: Ան գիտէ, թէ թուրք խուժանը հայկական թաղերուն վրայ յարձակելու կը պատրաստուի: Վարդան ձին կը հեծնէ անմիջապէս եւ կը փութայ հրապարակ, ուր նահանջող զինուորներու կը հանդիպի: Օգտուելով իր սպայի հանգամանքէն, զինուորներուն կը հրամայէ խուժանը կանգնեցնել: Կը յաջողի: Մակայն իրեն մօտիկ բարեկամ կարծուած գնդապետ Բարահիմ Ալիպապէն հեծեալներով կը հասնի դէպքերուն վայրը, կը ձերբակալէ Վարդանը եւ ոստիկանատուն կը տանի Վայն: Մուսթաֆա Շիւմի անոր ձեռքերը կապել կու տայ, ապա անոր զինուորական համազգեստը հանել տալով Վայն նկուղը կը բանտարկէ: Բարեկամ գնդապետ Բարահիմը Վարդանի ձին Կոնստանդին Կոստանյանը կը տանի եւ կը յանձնէ Մարոյին:

Բանտի խուցէն հանուելով, Վարդան կը տարուի Գանի պէշի մօտ՝ հարցաքննութեան: Պէշը Վարդանին կ'առաջարկէ իսլամանալ եւ գործակցիլ իրենց հետ: Պոլիս եղած միջոցին Վարդան ամբաստանուած էր օտար միջազգային թերթերու մէջ Օսմանեան Պետութեան դէմ յօդուածներ գրելու համար: Վարդան կը հաստատուէ, թէ ինք շինիչ քննադատութիւններ չըրած է միայն:

Գնդապետ Բարահիմ կ'այցելէ Վարդանին իր խուցին մէջ եւ կը տեղեկացնէ, թէ ինք կը ջանայ դատարարութիւնը զինուորական արեանին մէջ կատարել տալ:

Վարդանի կիներ՝ Մարօն, թուրք կնոջ հագուստներով կ'ուղղուի բանտ եւ կը տեսակցի Գանի պէշի հետ: Մարօ կը պաշտպանէ Վարդանի անմեղութիւնը: Գանի պէշ կը խոստանայ իր կարելին ընել: Մարօն եւ Արմէնը կ'այցելեն Կոնստանդին Կոստանյանը՝ տեղահանութենէն առաջ Թովմասը հոն տեղափոխելու համար: Այս միջոցին ոստիկաններ կը կոտորեն Կոնստանդին Կոստանյանը եւ

ներս մտնելով կը բռնագրաւեն ձիերը: Երբ Ազնիւ խանումը կը հակառակի, ոստիկան մը բռունցքով կը հարուածէ անոր դէմքին: Խեղճ կինը գետին կը փռուի:

Վարդան անգամ մը եւս կը տարուի Քանի պէյի մօտ եւ կտրուկ կերպով կը մերժէ իսլամանալու կամ համագործակցելու առաջարկները: Այս մերժումին վրայ, Քանի պէյ սուր վկայի մը միջոցաւ ամբաստանութիւն կը յօրինէ Վարդանի համար, թէ Մումթապ պէյը սպաննողը Վարդանն է: Քանի պէյ Վարդանը հրապարակին մէջ կախաղան բարձրացնելու վճիռ կու տայ:

Վարդանի ընտանիքը կը պատրաստէ սայլերը՝ մեկնելու համար: Տեղահանութիւնը կը սկսի: Արմէն, իր կարգին, Արաքսիի հետ միասին կը պատրաստէ սայլը:

Մարօն, Թովմասը եւ Ազնիւ խանումը սայլին վրայ կը բարձրանան եւ ճամբայ կ'ելլեն: Արմէնի սայլը առջեւէն կ'երթայ, իսկ Մարօն կը հետեւի անոր: Կարաւանը դէպի հարաւ կ'ընթանայ: Ճամբու ընթացքին ոստիկանները կը կողոպտեն պիրենք: Կ'անցնին Վալիսի (Ալիս գետ) հովիտը եւ կը հասնին լեռնալանջերու առջեւ, այնուհետեւ՝ Յուդայի վանքը: Հոս կրակոցներ կը սկսին: Գաղթականներէն մեռելալներ եւ վիրատուներ կ'իյնան: Կը պարպուի, թէ վանքը հայ պինուած երիտասարդներով եւ գաղթականներով լեցուն էր: Մէկ ժամ փետոյ կռիւէ ետք՝ հայերը կը յանձնուին: Ոստիկանները կը սպաննեն յանձնուող երիտասարդները: Կարաւանը ճամբան կը շարունակէ: Լերան գագաթը հասնելով՝ հոն կը գիշերեն: Թուրք ոստիկանները հոս գիշերով ժողովուրդը խոշտանգումներու, բռնաբարումներու եւ կողոպուտի կ'ենթարկեն:

Առաւօտուն, երբ գաղթականները ճամբայ ելլելու կը պատրաստուին, քիւրտ աւազակներ կը յարձակին: Անոնցմէ մէկը կը փորձէ առեւանգել Մարօն, բայց կը ձախողի: Աւազակները կը սպաննեն Արմէնը երբ ան կը փորձէր Մարօն պաշտպանել:

Քիչ ետք երբ քաղաքի մը կը մօտենան, ոստիկանները աղջիկներն ու փոքր վաճառքի կը հանեն այդտեղի ժողովուրդին: Կը յառաջանան եւ ձորի մը յարակը կը հասնին: Հոս Արաքսին եւ միւսները կը թաղեն Արմէնը: Քիչ ետք, Երզնկայէն եկող կարաւան մը կը միանայ իրենց կարաւանին: Մարօ կը նկատէ, թէ

Արաքսին ալ ինկած է Արմէնի գերեզմանին վրայ եւ մահացած:

Գնդապետ Իպրահիմ Վարդանը կախադանէն կ'ազատէ վերջին վայրկեանին՝ անձնական նախաձեռնութեամբ: Ան Վարդանը կառավարչարուն կը Գրանի, ուր Վարդան կը հանդիպի հին բարեկամ Խալիպ փաշային: Իրենք միասին «Ազատութիւն Եւ Յառաջդիմութիւն» (Ճիշդն է «Միութիւն Եւ Յառաջդիմութիւն» - խմբ.) կոմիտէին մէջ էին եւ միասին խորհրդարանի անդամ էին: Անոնք կը խօսին հայոց կրած չարչարանքներուն մասին: Վարդան իր բարեկամներուն հրաժեշտ կու Գրայ եւ կը սկսի իր ընդհանրքը փնտրել: Իպրահիմ Վարդանի ձին՝ Ղուր Կրակը եւ ապրճանակ մը կու Գրայ անոր:

Կարաւանը կ'ընթանայ: Իբր յի կին ծպտուած Մարօն, Ացնի խանումը եւ Թովմասը առանձին կը քալեն: Այս միջոցին հայ ֆեւրալիներ կը յարձակին թուրք պահակ եւ աւազակ ոստիկաններուն վրայ ու կռիւր կը սկսի: Ոստիկանները կը հաւաքեն գաղթականները եւ քարայրի մը մէջ կը Գրեղաւորեն:

Մարօ ոստիկաններու մեծաւորին դիմելու գաղափարը կը յղանայ: Ռիպա պէյ կ'ընդունի Գրայ իր վրանին մէջ: Մարօ կը յայտնէ, թէ իր ամուսինը՝ Վարդան Պալեան սպայ է օսմանեան բանակին մէջ եւ հեղուաբար, իր ընդհանրքը պէտք չէ Գրա-գրուել: Ան կը յայտնէ իր հիւանդ մօր եւ Թովմասի մասին: Ռիպա պէյ իր պաշտպանութեան Գրակ կ'առնէ Գրանոնք: Մարօ կը փութայ քարանձաւ՝ մայրը եւ որդին Ռիպա պէյի մօտ Գրանելու համար: Քարանձաւին մէջ մայրը՝ Ացնի խանումը կը մահանայ, եւ Մարօ, իր հետ առնելով Թովմասը, կ'ուղղուի Ռիպա պէյի մօտ:

Միս կողմէ, գնդապետ Իպրահիմ կը դատուի եւ կը պարտուի՝ Վարդանը ազատած ըլլալուն համար:

Մարօ եւ Թովմաս կը նստին Ռիպա պէյի կառքին մէջ եւ ճամբայ կ'ելլեն: Կառքը կը պաշտպանուէր Գրանեակ մը հաւա- Գրարիմ արաբ հեծեալներով: Կը հասնին Տերենտէ եւ պանդոկ մը կ'իջեանին: Այս միջոցին, Վարդան, ձիուն վրայ նստած, կը հասնի Մելիքինէ: Ան փնտրութի մէջ էր եւ կը շրջէր: Իր փնտրութի ժամանակ ան յօշոտուած դիակներ եւ մարդկային խարոյկներ կը Գրենէ: Վարդան կը հանդիպի Գալստեան այրիին (սվապի), որ խոփաբոյսերով դեղեր կը պարտաստէր եւ անկէ

տեղեկություններ կը քաղէ իր ընդամենին մասին: Ապա ան կը հանդիպի պոլիտերիակական միսիոնարութեան որքանոց եւ կը տեսակցի անոր մեծատրին հետ:

Անելի հարաւ իջնելով, Ռիպա պէյի կառքը կը մտնէ Այնթապ, ուր կը գտնուի անոր բնակարանը: Մայրը՝ Պէօյիք խանումը կ'ընդունի Վիլհելմը: Ռիպա պէյ քանի մը կին ունի: Ան մօրը կը ներկայացնէ Մարօն եւ Թովմասը: Մայրը շարք տուալ կերպով կ'ընդունի Վիլհելմը: Ռամապան ամիսն է: Տան մէջ հայ սպասուհիներ կային:

Վարդան երեք օր կը մնայ պոլիտերիակական միսիոնարութեան տան մէջ: Իր գրած նամակներուն եւ յօդուածներուն առաքումը ան կը վստահի օրիորդ Լանկէին: Գիտի մը մէջ Վարդան կը հանդիպի թուրք գիտացիի մը, որ Վիլհելմը իր տան մէջ կը հիւրընկալէ, քանի որ ջերմախտով կը տառապէր: Տնեցիք Վարդանի հոգ կը տանին՝ իբրեւ բանակի սպայ: Սակայն, թուրք գիտացիին կը կասկածի, որ Վարդան Վիլհելմի սպաննած մէկը կրնայ ըլլալ ու վայն կը յանձնէ ոստիկաններուն, որոնք կը կողոպտեն Վարդանը եւ սաստիկ խոշտանգուած ու վիրատր վիճակի մէջ վայն փոսը կը ձգեն ու կը փախչին: Վարդանի ձրի դաստիարակութիւններէն օգտուած գիտի աղքատ երախաները վայն տուն կը տեղափոխեն եւ անոր հոգ կը տանին: Կը պարզուի, թէ Վարդան կը գտնուի Բրիտանացի գիտի մերձակայքը, Կեսարիոյ մօտ: Այրի Խալիպէն եւ ուսուցիչ Քերիմը կը հիւրասիրեն Վիլհելմը: Կը բացայայտուի, թէ Խալիպէ Արուսեակ անունով հայուի մըն է:

Գանի պէյ Պոլսէն նամակներով կը մեղադրէ Այնթապի գաւառապետ Ռիպա պէյը: Իր նամակներուն մէջ ան կը յիշատակէ Վարդան Պալեանի՝ արեւմտեան երկիրներու մամուլին մէջ լոյս տեսած յօդուածները թուրքերուն դէմ:

Մարօ նամակ մը կը յանձնէ սպասուհի Այլային (Վարդուհի), որպէսզի շուկայի հայ վաճառականի մը միջոցաւ հասցնէ Պոլիս՝ Մեսրոպ Քեռիին: Նամակը չարաքաստիկ դիպուածով մը Ռիպա պէյին ձեռքը կ'անցնի, որ կ'արգիլէ վայն ուղարկել: Ռիպա պէյ կը յանձնարարէ իր օգնական Պետրիին՝ հսկել Մարոյի վրայ եւ որեւէ թղթակցութիւն ամէն կերպ արգիլել:

Այս միջոցին Վարդան թաքնուած կը մնայ Խալիպէի (Արուս-

եակ) մօտ: Ոստիկանութիւնը երկու անգամ խուսափելուց ետք կու գայ իր գրնուած փունը, բայց ան կ'ապարի: Ապա Ռիպա պէյի օգնական Պերրին կու գայ փուն եւ Խալիփէն կը հարցաքննէ:

Ուսուցիչ Քերիմը Կեսարիայէն կը վերադառնայ եւ Վարդանին կը բերէ քանի մը թրքական թերթեր, որոնք հայոց վիճակին կ'անդրադառնային եւ կառավարութեան կեցուածքը կը պաշտպանէին: Անոնք կ'ակնարկէին նաեւ օտար թերթերու մէջ տպուած թուրքերը վարկաբեկող յօդուածներուն: Վարդան կը շարունակէ անգլերէն յօդուածներ եւ գիրքեր գրել Հայաստանի եւ Կիլիկիոյ մասին:

Ծպրուած եւ երաժիշտներու ընկերակցութեամբ՝ Վարդան Արանա կը մեկնի: Հոս եւս Վարդան յօդուածներ կը գրէ հայութեան կրած չարչարանքներուն մասին եւ արտասահմանեան մամուլին կ'ողարկէ: Ան հայ որբ աղջնակ մը կ'ապարէ փողոցէն եւ կը տեղատրէ հայու մը փան մէջ:

Մարօն եւ Թովմասը տակաւին Ռիպա պէյի փունը կ'ապրէին: Մարօ կը հիւանդանայ: Կը կարծեն, թէ փիֆէ բռնուած է: Կանչուած բժիշկը կ'ըսէ, թէ Մարօ թունաւորուած է: Ռիպա պէյ կը կասկածի իր երրորդ կնոջմէն: Բժիշկը Ռիպա պէյին նաեւ կը յայտնէ, թէ Մարօ յղի է:

Վարդան երաժիշտներուն հետ միասին շոգեկառքով կ'ողողոյի դէպի Հալէպ: Օսմանեան իշխանութիւնները չէին կրցած թրքացնել Հալէպը, որ Անապոլոյի քաղաքներէն կը տարբերէր իր խանդավառ կեանքով եւ բազմազգ բնակչութեամբ: Փողոցներուն մէջ աւելի յաճախ արաբերէն կը լսուէր, քան թրքերէն: Հալէպի մէջ Վարդան կը շրջի հայկական թաղերուն մէջ՝ գրնելու համար Մարօն եւ Թովմասը: Վարդանը եւ ընկերները Նահիյէ խանը իջեւանած էին: Վարդան կը դիմէ ամերիկեան անտարանական միսիոնարութիւններուն՝ փնտրելով իր հարապարները: Ան կը տեսակցի փիկին Մաթիոյի հետ, որ Վարդանին կը յայտնէ, թէ իր ամուսինը ամիսներէ ի վեր կը փափաքէր իրեն հետ տեսակցիլ եւ քաղաքականութեան մասին խօսիլ:

Յաջորդ առփու Վարդան կը դիմէ Տէր Գէորգ քահանային՝ Մարոյի եւ Թովմասի մասին տեղեկութիւն ստանալու համար:

Վարդան կը վերադառնայ Արգունայ՝ Արուսեակի մօտ: Անոնք

հայ որբ մանուկներ կը խնամեն, ապա զանոնք որբանոց կը յանձնեն:

1917ի Մարտ ամիսն է: Անգլիացիները Պաղտատը կը գրանեն: Ռիպա պէյ կը գիտակցի, թէ Թուրքիա շուրջով պարտութիւն պիտի կրէ: Մարտ Ռիպա պէյէն զուարթ մը կ'ունենայ՝ Նուրհանը: Թովմաս կը փախչի Գոննէն: Ռիպա պէյ իր բոլոր կարելի միջոցներով փնտրել կու տայ Թովմասը Այնթապի եւ շրջակայ գաւառներուն, նոյնիսկ Վալէպի մէջ:

Այս միջոցին Ռիպա պէյ թրքական թերթերուն մէջ կը նկատէ Վարդան Պալեանի յօդուածներուն մասին գրութիւնները: Ան ջանք կը թափէ եւ կ'աշխատի, որ Մարտն Վարդանի ողջ ըլլալը չիմանայ:

1918 տարուան վերջը կը մտնենայ: Թուրքիա կը պարտուի: Թալատ ռուս միւս ղեկավարները կը հրաժարին: Այս ժամանակ, Վարդան Պալեան իր երաժիշտ ընկերներուն հետ կը հասնի իր ծննդավայր Աֆիոն-Գարահիսար, կ'այցելէ իր մանկութեան եւ երիտասարդութեան տունը՝ անոյժ յուշեր ապրելով:

Իրկիւպի մէջ Վարդան ծանօթացած էր Արամ անունով վրիժառու հայու մը: Վարդան կը հանդիպի իր ապագամանը նպաստած, իրեն բարեկամ պինտորականին՝ Խալիպ փաշային: Պետրի կը սպաննէ Խալիպ փաշան, սակայն այդ միջոցին Արամը յայտնուելով՝ կը դաշունահարէ Պետրին: Վարդան թոյլ չի տար, որ Արամ սպաննէ Պետրին: Վարդանն ու Արամը կը փախչին: Վերջինս Վարդանին կը պատմէ, թէ Պետրիի մարդիկն ինչպէս պինք եւ Արուսեակը սոսկալի չարչարանքներու ենթարկած էին Իրկիւպի մէջ եւ Արուսեակ մեռած էր:

Արամ կը յայտնէ, թէ Մարտն եւ Թովմասը Այնթապի գաւառապետին տունը կը գտնուին: Անցեալ տարիներու ընթացքին Վարդան արդէն սկսած էր Արուսեակը սիրել:

Վարդան եւ Արամ շոգեկառքով Պոլսոյ Վայտար Փաշա կայարանը կը հասնին, կ'ողորմին Կալաթա եւ կ'այցելեն Մետրոպօլիտին ու ընտանիքին: Վարդան կ'իմանայ, թէ Մետրոպօլիտ որդին՝ Պարգելը իբր կամատր միացած է Սուրիոյ մէջ կռուող ֆրանսական բանակին: Անոնք կը խօսին անցած դէպքերուն մասին: Կը յիշեն, թէ Վարդան անդադար յօդուածներ կը դրկէր

արեւմտեան մամուլին՝ պաշտպանելով Վայկական Վարքը:

Վարդան յաջորդ օրը կը դիմէ՝ Մերձատր Արեւելքի Օգնութեան (Ճիշդը՝ Նպաստամատոյց - խմբ.) Կոմիտէին, որպէսզի իր կիներու վաւակը իր քով բերեն Այնթապի գաւառապետ Ռիպա պէյի մօտէն: Մէկ օր ետք, Վարդան նոյն հարցով Մեծն Բրիտանիոյ դեսպանատունը կը դիմէ: Դեսպանատունէն դուրս գալով, ան իր քեռորդի Տիրանին հետ արձարան մը կը նստին, Վայաստանի կենացը կը խմեն, նկարի ունենալով, որ Վայաստանի Վանրապետութենէն պապոտիրակութիւն մը Պոլիս կը գրնուէր:

Ռիպա պէյ Մերձատր Արեւելքի Օգնութեան (Ճիշդը Նպաստամատոյց - խմբ.) Կոմիտէին կը պարասխանէ, թէ իր մօտ որեւէ հայուի չի գրնուիր:

Վարդան իբր դեղագործ կ'աշխատի Պոլսոյ հայկական գլխատր հիւանդանոցին մէջ: Երեկոյ մը ան կ'երթայ Թոքաթեանի պանդոկը եւ կը հանդիպի ամերիկացի լրագրող Տեսարնի հետ: Երկուքով կը պրուցեն Վարդանի յօդուածներուն, ապա Մարոյի եւ Թովմասի մասին:

Վարդան կ'նողդուի բրիտանական դեսպանատուն եւ կը հանդիպի քարտուղար Տէյվիտ Պուրնամի հետ, որ կ'ըսէ, թէ Ռիպա պէյ կը պնդէ Մարոյի հետ իր օրինատր կերպով ամուսնացած ըլլալուն վրայ: Տեղին է յիշել, թէ այդ ժամանակ Ռիպա պէյ կը գործակցէր անգլիացիներուն հետ:

Արամի, Տիրանի եւ ուրիշ ընկերներու օգնութեամբ Վարդան կ'առեւանգէ Ռիպա պէյը եւ կը հրամայէ անոր՝ ապա արձակել Մարօն եւ Թովմասը: Ռիպա պէյ կը յայտնէ, թէ Թովմաս երկու րարիէ ի վեր անյայտացած էր: Յաջորդ օրը Պոլսոյ թերթերը կը հաղորդեն Այնթապի գաւառապետին առեւանգման լուրը:

Երկար բանակցութիւններէ ետք, Պետրի կառքով Պոլիս կը բերէ Մարօն, եւ միասին նստած Թոքաթեանի պանդոկը՝ համաձայնութեան գործադրման կը սպասեն: Բոլորը մէկ կը հասնին Բայ դաշտ մը, ուր Մարօ կը հանդիպի Ռիպային եւ կը յիշէ Նուրհանը, ապա կռնակը անցեալի դարձուցած, կը յառաջանայ դէպի Վարդանը եւ կը գրկախառնուի անոր հետ: Այս միջոցին Պետրի կը պարտաստուի կրակել Մարոյի վրայ, սակայն ան շարարագորէն կ'իյնայ ֆերայի Արամի գնդակով:

Վարդան եւ Մարօ կը միանան ու կ'ողողոյն Վարդանի վարձած փունը Պոլսոյ մէջ: Մայրաքաղաքի թերթերը յաջորդ օր կը գովաբանեն բրիտանական դեսպանատան դիւանագէտները, որոնք բանակցած էին Ռիպա պէյի հետ եւ ապաքած Մարօն:

Վարդան արդէն իմացած էր, որ գնդապետ Իպրահիմ մահացած էր չարչարանքներու փակ, իսկ իր ապարմանն օժանդակած Խալիպ պէյը նոյնպէս սպաննուած էր:

Երուսաղէմէն կը ժամանէ Վարդանի եղբայրը՝ Նուպար Պալեանը իր փիկնոջ՝ Տիրուհիի հետ:

Վարդանի յօրուածներուն պարճառու, թշնամիներ իր բացակայութեան կը կոտորեն փան կղպանքը եւ փունէն ներս կը մտնեն: Այս դէպքը վրանգ եւ անապահովութիւն կը ներշնչէ Վարդանի եւ Մարոյի:

Ջոյգը նամակ մը կը ստանայ զուիցերական միսիոնարութենէն: Կարդալով նամակը՝ անոնք կ'իմանան, թէ Պաղտատէն բերուած Թովմասը Ժընեւի որբանոցը կը գտնուի: 10 Մայիս 1919ին Վարդան եւ Մարօ Ժընեւ կը ժամանեն ու որբանոցին մէջ կ'ողջագորտին Թովմասի հետ: Ապա երեքը միասին կ'ողողոյն Մարսելլ եւ անկէ՝ Ա.Մ.Ն.:

Վարդան Պալեանի եւ իր ընտանիքին Ա.Մ.Ն. մեկնելէն քանի մը ամիս ետք, Պոլսոյ դատարանը մահապարտիժ կ'արձակէ օսմանեան կառավարութեան նախկին ղեկավարներուն դէմ, որոնք յանցատր կը նկատուին հայկական փոքրամասնութեան բնաջնջման փորձի համար:

Տորա Սաքայեան, «Զմիռնիա 1922 - Բժիշկ Կարապետ Խաչերեանի Օրագիրը», խմբագիր՝ Լաուրա Մանուկեան, Վայոյ Տեղասպանութեան Թանգարան-Քնարհիդրոյի հրատարակութիւն, «Նահապետ» հրատարակչութիւն, Երեւան, 2005, միջակ չափի 224 էջ:


Գիրքին սկիզբը կայ Թեասա Հոֆմանի գրած նախաբանը Զմիռնիոյ մասին: Ապա հեղինակը՝ Տորա Սաքայեան կու գայ իր մօրական մեծ հօր՝ բժիշկ Կարապետ Խաչերեանի կենսագրութիւնը:

Կարապետ Խաչերեանի օրագրութիւնը կը սկսի 15 Օգոստոս 1922ին եւ կ'աւարտի 7 Ապրիլ 1923ին: Գիրքը կը բովանդակէ նաեւ Խաչերեան գերդաստանին փոհմածառը, ներածութիւն, քարտէսներ եւ լուսանկարներ:

Կարապետ Խաչերեան կը բնակի Զմիռնիոյ Չալգըճը Պաշը թաղը, իր կնոջ՝ Էլիփայի եւ փասկներուն հետ: 1922ի Օգոստոս ամիսն է: Իր բոլոր փասկները, բայց կրկուսեր դուստրէն՝ Վարդուհիէն, մեկնած են ԱգՎիսար՝ իրենց մօր ծնողքին մօտ: Բժիշկ Խաչերեան երեք փարի անդադար աշխատելով Զմիռնիոյ մէջ՝ յաջողած է գոհացուցիչ դիրքի մը հասնիլ:

Այս օրերուն, Օգոստոս 1922, շշուկներ կը փարածուին Զմիռնիոյ մէջ, թէ թուրքերը յարձակում գործած են Աֆիոն Գարահիսարի ճակատը եւ փոքրիկ յաջողութիւն մը արձանագրած: Այս լուրը կարեւորութենէ վուրկ կը համարեն: 29 Օգոստոսին այս լուրը բերնէ բերան կը շրջի, սակայն ամէն մարդ իր գործով զբաղած է:

Օգոստոս 30, Չորեքշաբթի օրը պաշտօնական հաղորդագրութենէ մը կը հասկցուի, թէ հելլէնական բանակը կը լքէ Աֆիոն



Գարահիսարը: Արտագաղթը կը սկսի: Հայերը լեղապարտ կը փախչին հալածող թուրք խուժանին առջեւէն: Հիւանդանոց կը հասնին Տումուփրնար լեռներուն վրայ վիրատրուած կիներ եւ տղամարդիկ: Երեկոյեան շոգեկառքով Ջմիռնիա կը հասնին հայ գաղթականները, որոնք կը տեղատրուին Մր. Ստեփանոս եկեղեցիին բակը եւ Մեսրոպեան վարժարանին մէջ: Հայկական Կարմիր Խաչը կ'այցելէ գաղթականներուն:

Օգոստոս 31, Հինգշաբթի օրը ստոյգ կը դառնայ, թէ քեմալական բանակը ճեղքած է ռազմաճակատը: Յունական բանակը կը նահանջէ դէպի հարաւ: Թուրքերը մեծ քանակութեամբ սինամթերք եւ ուրեստեղէն կը գրաւեն: Ուշաքը պարպելէ առաջ յունական բանակը այրած է վայն:

Ուրբաթ, 1 Սեպտեմբերին, Գարահիսարէն, Ուշաքէն, Ալաշեհիւրէն եւ ուրիշ վայրերէ փախած գաղթականները կը լեցնեն Ջմիռնիա քաղաքը: Ամէն մարդ այլեւս կը հասկնայ, թէ հելլէնական բանակին քայքայումը սկսած է: Բժիշկ Խաչերեան, տազնապած, կը մտածէ իր զուակներն ու ազգականները Ջմիռնիա փոխադրելու կերպի մը մասին:

Յաջորդ օրը եւս քաղաքը շար խճողուած է: Ունեւոր դասակարգը կը պարբաստուի մեկնելու Ջմիռնիայէն: Խուճապը մեղմելու համար, կառավարութիւնը կը հրապարակէ պաշտօնական հաղորդագրութիւն մը՝ իբր թէ թրքական բանակի նահանջի գիծը կտրուած է եւ քեմալական կարգ մը գունդեր գերի ինկած են:

Գաղթականներու կողքին կայ նաեւ վիրատրներուն հարցը: Բժիշկը կ'երթայ կայարան եւ հոն կը տեսնէ հարիւրաւոր յոյն վիրատր սինտրներու փոխադրութիւնը: Ուրախութեամբ կը դիմատրէ իր զուակները, իր աներորդի Կոստանի ու անոր տիկնոջ՝ Մարիի ընկերակցութեամբ: Անոնք Ազ-Հիսարի յոյն քաղաքապետին տիկինը իրենց հետ բերած էին: Կոստան կը տեղեկացնէ, թէ յունական կառավարութիւնը վճռած է պարպել ո՛չ միայն գաւառները, այլ՝ նաեւ Ջմիռնիան: Կացութիւնը շար լուրջ է, սակայն անհաւանական կը թուի, թէ Ջմիռնիոյ մէջ խժոժութիւններ կրնան տեղի ունենայ, որովհետեւ քաղաքին բնակչութեան կարեւոր մասը թուրքերուն անկեղծ բարեկամ իտալացիներէ եւ ֆրանսացիներէ կազմուած է:

3 Մեպարեմբեր, Կիրակի օրը կը լսեն, թէ յունական բանակը կ'այրէ քած քաղաքները՝ Ալաշեհիրը, Նապիլին, Գասապան եւ այլն ու խժոժութիւններ կը գործադրէ: Իրենց պէնքերը ծախող դասալիք յոյն զինուորներ կը տեսնուին Ջմիռնիոյ մէջ:

Յաջորդ օրը խճողում եւ իրարանցում կը տիրեն փողոցներուն մէջ: Յոյն զինուորներ եւ քրիստոնէայ գաղթականներ իրենք զիրենք նաւահանգիստ թափած են՝ որեւէ միջոցով Յունաստան երթալու համար: Քաղաքին մեծամասնութիւնը կը հաւատարման, թէ շնորհիւ ֆրանսական եւ իտալական զրահանաւերուն եւ անոնց առեւտրական շահերուն, ու քաղաքաբնակ ֆրանսացիներուն եւ իտալացիներուն, քաղաքը քեմալական յարձակումէ վերձ պիտի մնայ:

Հայը եւ սննդամթերքը կը պակսին քաղաքէն: Բժիշկին ընդհանրօրէն փոքր փոքր սննդեղէն կը պարտաւորէ եւ արժէքատու իրերը կը ծրարէ: Բժիշկն ալ շար ուրիշներու պէս կը հաւատարման, թէ քաղաքը քեմալականներուն ձեռքը պիտի չանցնի: Իտալիոյ հիւպատոսը կը հաւատարման, թէ քաղաքին մէջ որեւէ դէպք չի կրնար պարտահիլ եւ Հայնոյր (հայկական թաղը) ստատու կերպով պիտի պաշտպանուի:

Ագ-Հիսարի յունական իշխանութիւնները կ'ուզեն քաղաքը պարպել յոյներէն եւ հայերէն ու վայն կրակի տալ: Մակայն հայերն ու յոյները թուրքերուն հետ ժողովի նստելով եւ երկուստեք երդուելով կը համաձայնին զիրար պաշտպանել եւ քաղաքը չհրկիպել:

6 Մեպարեմբերին Ջմիռնիա կը հասնի բժիշկին քեռայրը՝ առանց Ագ-Հիսարէն անցնելու: Ան տեղեակ չէր այդտեղի տագնապալի կացութեան:

Ունետուր հայերը Ջմիռնիայէն կը մեկնին: Զինուորական տարիք ունեցողներէն շատերը կ'երթան: Կարապետ Խաչերեան թուրքերուն դէմ որեւէ սխալ բան չէր գործած, այլ հաւատարմարար ծառայած էր իբր բժիշկ: Հերետարար, ան Ջմիռնիայէն հեռանալու կարիքը չի սգար:

Ջմիռնիոյ մէջ այլեւս անիշխանութիւն է, նաւահանգիստը՝ իրարանցումի մէջ: Ոմանք սակայն տակաւին կը կարծեն, թէ քաղաքը ապահով է, որովհետեւ նաւամատոյցը լեցուն է ամենազգի տրահատրներով: Մեկնողներուն համար անցագրային գործողութիւններ չկան այլեւս: Կոստանն ու Մարին Կիպրոս կ'երթան:

8 Մեպոլեմբերին, Ուրբաթ օրը, ճամբաները կը տեսնուին յոյն դասալիք պիւնտրներ, որոնք դէպի նաւահանգիստ կը շփապեն: Ոմանք անկէ անդին՝ դէպի Չէշմէ կ'երթան:

Յոյները պարպած եւ այրած են Մենեմէ քաղաքը: Բժիշկը նաւահանգիստէն փոխ վերադարձի ճամբուն վրայ կը հանդիպի ֆրանսական հիւպատոսարանի փաստաբան Պրն. Յարութին Միսլեանին: Վերջինս կը հաւաստիացնէ բժիշկին, թէ այս անգամ որեւէ վտանգ չի սպառնար եւ թուրքերը Չմիւռնիա կը մտնեն քաղաքակիրթ ձեւով:

9 Մեպոլեմբեր, Շաբաթ. փառլոկայի գիշեր մը անցընելէ ետք, բժիշկը գործով Կոկար Եալը կը մեկնի: Ճամբուն վրայ եւ ամէն փոքր նահանջող յոյն պիւնտրներ կը տեսնէ: Կը լսէ, թէ անգլիացիներու հրահանգով, յունական սրահատրները կը հեռանան Չմիւռնիոյ նաւահանգիստէն: Բժիշկը կը մեկնի Կէօք Թեփէ: Ճամբան կը հանդիպի նահանջող հելլէն պիւնտրներուն: Վերադարձին՝ շոգենաւին մէջ ձեռքը կ'անցնի հրեաներու հրապարակած ֆրանսերէն թերթ մը, որ կը տեղեկացնէ, թէ յոյն պիւնտրներ թուրքերուն ձեռքը գերի ինկած են: Թերթը կը փառաբանէ Մուսթաֆա Քեմալը եւ անոր յաղթական բանակը:

Թուրք յառաջապահներու ժամանման պատճառով, Հայնոցը անկարգ վիճակի մէջ է: Թրքական հաւանական յարձակումներէ վերժ մնալու համար՝ հայերը կ'որոշեն նաւահանգիստի շրջանը փոխադրուիլ գէթ կարճ ժամանակուան մը համար: Բժիշկը ետ ընտրանէք կը փոխադրուի Պերճ Միվրիհիսարեանի փունը, նաւահանգիստի շրջանին մէջ: Հոս նոյնիսկ, բժիշկը իրարանցում եւ անապահովութիւն կը տեսնէ: Կէսօրին քեմալական հեծելազօրքը կը մտնէ ծովափ: Թուրքերը կեղծ ու պատիւ խօսքերով կը հանդարտեցնեն քրիստոնէաները, բայց նոյն իրիկունն իսկ կը սկսին կողոպուտը: Կարապետ Խաչերեան կը տեղեկանայ նաեւ, թէ Հայնոցի մէջ թուրք խուժանը եւ պիւնտրները կը կողոպտեն եւ կը սպաննեն: Ան կ'որոշի կ'ամբարցնէ նախապէս պարգել ստացած օսմանեան շքանշանը:

Կիրակի, 10 Մեպոլեմբերի առաւօտուն, կ'արթննան հանդարտութեան մէջ՝ գոհ, որ թրքական գրաւումը տեղի ունեցած է առանց արհեստագործութեան: Սակայն, շուրջով փողոցը կը նկատեն

15-ամեայ պատանիի մը դիակը: Կ'ուղղուին դէպի Հայնոց: Ճամբուն վրայ հայ երիտասարդներէ կ'իմանան, թէ Հայնոցը ենթարկուած է կողոպուտի եւ հայ կիներ ու աղջիկներ առեւանգուած են, Սբ. Սյրեփանոս եկեղեցին ու Առաջնորդարանը՝ պաշարուած: Բարեկամները նաւահանգիստի շրջանը կը վերադառնան, իսկ Կարապետ Խաչերեան եւ սպասուի Արաքսի բժիշկի փրկող շրջակայ թաղերը կը շրջին: Հայոց փրկուածները կողոպուտուած են: Բժիշկը երբ կը փորձէ իր փրկող դուռը բանալ՝ չի յաջողիր: Կողոպուտը փճացած է...: Ան կու գայ այն եզրակացութեան, որ թուրքը միշտ նոյնն է ամէն փողով շարդարար եւ կողոպուտի:

Գիշերային լուսնու մէջ թնդանօթի որոտներ եւ կրակոյցի ձայներ կը լսեն:

11 Մեպտեմբերի առաւօտեան բժիշկը շուկայ կ'երթայ միս գնելու: Մեծ բազմութիւն մը խմբուած է շուկան: Թրքական փրկարարներով մարդիկ շատ ապար եւ համարձակ կերպով կը շրջին քաղաքին մէջ: Կը վերադառնայ փրկուած: Տիկին Վերգին կը ծննդաբերէ փոքր մանչեր՝ մէկը՝ առողջ, երկրորդը՝ մեռած:

12 Մեպտեմբերին ձմեռակալութիւնները կը սկսին: Հալածանքներն ուղղուած են մասնաւորապէս հայոց դէմ՝ պարզապէս անոր համար, որ գաւառէն եկող հայ գաղթականները Առաջնորդարանը եւ դպրոցը ապաստանած էին: Հայերը դուրս եկած էին միայն ֆրանսացի պիտուներու ընկերակցութեամբ: Առաջնորդ Ղեւոնդ արք. Գորեանը դուրս եկած էր լատին կղերականներու հետ: Բժիշկը իր փրկուած կ'այցելէ եւ պարզօգամէն կը փրկուի, թէ ձմեռակալուած քրիստոնէաները խումբ առ խումբ կը փրկուին փարբեր ուղղութիւններով:

Յաջորդ օրը, բժիշկը նորէն կ'այցելէ իր փրկուած Չալգրճը Պաշը թաղին մէջ: Մարդիկ իրենց փրկուածներուն վրայ ֆրանսական եւ իտալական դրօշներ կը պարզեն՝ յարձակումներէ վերջ մնալու համար: Յոյները իրենց թաղերուն մէջ թրքական դրօշակը կը պարզեն: Բժիշկը կ'իմանայ, թէ Հայնոցի մէջ կարգ մը փրկուած յարձակումի ենթարկուած են: Երբ փրկուած կը վերադառնայ, կը նշմարէ, թէ հայկական թաղերէն ծովս կը բարձրանայ: Կրկին ձամբայ կ'ելլէ սպուգելու համար պատահածը: Առաջնորդարանին շրջակայքն է, որ կը հրկիպուէր դիտումնաւոր կերպով: Հայնոցի

հրդեհը ասելի ընդարձակ եւ ծաւալուն է: Կարապետ Խաչերեան սարսափով կը դիպէ փախուստը հայ գաղթականներուն, որոնք յունական եւ իտալական հիւանդանոցները կը լեցուին: Այս հրդեհը բժիշկին համար աննկարագրելի եւ անբացատրելի կը դառնայ: Կրակը նաւահանգիստի գեղակերպ շէնքերը կը փարածուի: Մահուան սարսուռ կ'ապրին: Տան բնակիչները դուրս գալու եւ Փունթայի արտերուն մէջ պարսպարուելու կը պարտաստուին: Հինգշաբթի, 14 Սեպտեմբերին, կապոյները պարտաստած կը սպասեն մինչեւ առաւօտ: Բժիշկը ընդհանուր փողոց կ'իջնէ փախչելով հրդեհէն, սակայն կրակոցի ձայներ լսելով ետ կը դառնան դողահար:

Թուրքերը բռնագրաւած էին առագաստանաւերը եւ կոտորած մակոյկները, քրիստոնէաներուն՝ պրահանաւեր բարձրանալն արգիւելու համար: Միայն օդարահպարակները հանգիստ կերպով նա կը բարձրանան: Բժիշկը եւ ընդհանիքը կ'ապրին ծովեզերեայ պարտէշի ետին: Այս միջոցին հրայանի ընդհար-ընդհար ձայներ կը լսեն: Անոնք յուսահարական վիճակի մէջ են: Ահա այսօրէ բժիշկը կը գիտակցի իր սխալին՝ պէտք էր հեռանալ նախքան քաղաքին գրաւումը: Ոմանք ծով կը նետուին, լողալով կը մօտենան պրահատրներուն ու կը բարձրանան անոնց նաւերուն վրայ: Բժիշկին եւ ընդհանիքին անդամներուն թախանձագին աղաչանքները մակոյկ վարողներուն՝ ապարդիւն կ'ըլլան:

Այս միջոցին բժիշկը կը նշմարէ պրահատրներուն վրայ շարժանկարի գործիքներ, որոնցմով նաւաները մահուան սարսափն ապրողներուն դժբախտութիւնը կը լուսանկարէին՝ առանց միջամտելու դէպքերուն: Անդին հրդեհը կը շարունակուի Հայնոցին մէջ: Բաւական թափառելէ ետք՝ Ադամեան եւ Խաչերեան ընդհանիքները Միվրիհիսարեաններու փունը կը վերադառնան: Կէսօրէ ետք հայ որբերու խումբ մը ամերիկեան դրօշի պաշտպանութեան տակ կը փարտի նաւահանգիստ՝ Պոլիս դրկուելու համար: Քանի մը ընդհանիքներով նաւահանգիստ կ'իջնեն փորձ մը եւս կարարելու համար եւ ապարդիւն կը վերադառնան: Գիշերը չեն կրնար քնանալ, հակառակ անոր որ աներեւակայելի շարժարանքներէ շար յոգնած էին:

Ուրբաթ, 15 Սեպտեմբերի առաւօտը նաւահանգիստին մէջ հայ

գաղթականները կուրակուած էին ոչխարի հօտերու նման: Հայնույն մինչև Փունթայի շրջակայքը 24 ժամուան ընթացքին աւերակ դարձած էր հրդեհէն: Թրքական թերթերը կը գրեն, թէ հայ յեղափոխականները այրելէ ետք Մաղնիսան, այժմ կրակի կուրան Ջմիռնիան: Մինչդեռ հայերը եթէ այդպիսի բան ուզէին ընել՝ թրքական թաղերէն կը սկսէին:

Իթթիհապական թուրքերը Հայնույը ոմբակոծելու եւ վայն կրակով փճայնելու մտադրութիւն ունէին երբ Դաշնակիցներուն արահատրները Ջմիռնիա հասնէին: Եթէ այն ժամանակ, հանգամանքներու բերումով, հարկ չտեսան այս աւերիչ ծրագիրն իրագործելու, այժմ քեմալականները կ'ընէին այս գործը:

Բժիշկ Կարապետ Խաչերեանը հանդիպած էր թուրք անհայներու, որոնք միտումնաւոր կերպով կրակի րուած էին քրիստոնէական եւ մանաւանդ հայկականը թաղերը: Անոնք այս յայտնութիւնն ըրած էին բժիշկին՝ վայն թուրք կարծելով:

Մունտրիկը կը յայտարարէ, թէ րուները այրած քաղաքացիները կրնան կառավարութեան դիմել, որպէսզի իրենց բնակատեղի յարկացոյի: Մակայն, Ջմիռնիոյ կամ Թուրքիոյ որեւէ մասին մէջ այլեւս մնալն անխոհեմութիւն կը նշանակէր հայուն համար:

Բժիշկը Արամ Առաքելեանի հետ դուրս կու գայ րունէն՝ Չալգըճը Պաշրի իրենց սեփական րուները ստուգելու համար: Ճամբուն վրայ ականատես կ'ըլլան հրդեհին ստեղծած ահատր ու դժոխային վիճակին: Բազմաթիւ թրքուիներ ու թուրք պատանիներ կիսաւեր րուները կողոպտուի իջած են: Երբ կը շարունակեն Ճամբան, երկուքով կը ձերբակալուին ու կը բանտարկուին: Բժիշկը գիշերը անքուն կը մնայ: Ամբողջ գիշեր ան իր ականջներովը կը լսէ վարի յարկին մէջ 12 թուրք պիտուրներու բռնաբարած մանկամարդ կնոջ մը աղաղակը:

Շաբաթ, 16 Մեպրեմբերի առաւօրուն, ոստիկանները եւ կարգ մը բանտարկեալներ կը մեկնին: Բժիշկը Արամ Առաքելեանի հետ կը խորհրդակցի ոստիկանապետը կաշառելով ազատ արձակուելու մասին: Ան պատշգամէն կը տեսնէ քսանէ աւելի հրկիպուած մարդկային դիակներով բեռնուած սայլ մը: Քիչ ետք ոստիկանատունը բազմաթիւ նորեկ բանտարկեալներով կը լեցուի: Բժիշկը ականատես կ'ըլլայ հայ երիտասարդի մը բրբօրէն

ծեծուելուն: Անելի ուշ կը բերուին 6-7 հայ երիտասարդներ, որոնք երկաթուղիի կայարանի պաշտօնեաներ էին:

Մեպտեմբեր 17, Կիրակի առաւօտուն բժիշկը եւ ուրիշ բան- փարկեալներ Վորանոյ կը փանին: Բանփին մէջ թէ Վորանոյը ան միշտ ոստիկան Վիսէնի օգնութիւնը կը խնդրէ միջամտելու եւ նուէրներ կը խոստանայ: Այս պահուն վինք կը դասեն 45 փարիքէն վեր եղողներու մէջ եւ յաջորդ օրը ազատ արձակելու յոյս կու փան: Ժամը ուշ ըլլալուն՝ գիշերը հոն կ'անցնեն:

Երկուշաբթի, 18 Մեպտեմբերի ամբողջ օրը Վորանոյին բակը կ'անցնեն: Ոստիկանները քանի մը անգամ կը փորձեն կողոպ- փել բժիշկը, որ կ'ընդդիմանայ: Յաջորդ օրը, երիտասարդ բան- փարկեալները կը փանին Բունար Պաշրի ուղղութեամբ: Ճամբան կը կողոպտեն, կը խոշտանգեն եւ կը սպաննեն: Այդ օր կը հան- դիպի ծանօթներու, որոնք կը պատմեն պատահած դէպքերը:

20 Մեպտեմբեր, Չորեքշաբթի: Ջօրանոյին հրապարակը լեց- ոած է աղտոտութեամբ: Դուրսէն բերուող բանփարկեալներուն բազմութիւնը հեղուկացի կը մեծնայ: Բժիշկը յոյս ունի, որ մինչեւ իրիկուն վինք ազատ կ'արձակեն: Բայց երեկոյեան Վորանոյ կը բերեն 2000ի չափ մարդիկ եւ ընդհանուր թիւը 10000ի կը հասնի: Ջինտորները իրենց գիշերային կողոպտութիւն կը սկսին: Անոնցմէ մէկը ուղղակի բժիշկին կը մօտենայ եւ դրամ կը պահանջէ: Բժիշ- կը կը դիմադրէ: Այդ գիշերուան ժամերը իր բանփարկութեան եւ թերեւս ամբողջ կեանքի ամենասարսափելի ժամերը կ'ըլլան:

Վինգշաբթի, 21 Մեպտեմբերի առտուան ժամը 8ին մէկ կողմ կը շարեն փարեցները, որոնց մէջ է բժիշկը: Քննութիւն անցնելէ ետք, ան անպարտ դուրս կու գայ: Ոմանք կ'ըսեն, թէ ազատ պիտի արձակեն, ուրիշներ՝ թէ քստորի պիտի հանեն: Վերջապէս, դուրս գալու հրամանը կը փրոյի: Բանփի հրապարակէն դուրս կ'ելլեն եւ շարքով, պահակ վինտորներու հսկողութեան փակ կ'ուղղուին դէպի նաահանգիստ: Ջինտորները կը գոռան. «Կեց- ցէ՛ Սուրթաֆա Քեմալ փաշան, կեցցէ՛»: Ոմանք կը կրկնեն: Այս մաղթանքը կատարելէ ետք պահակ վինտորները ազատ կ'արձա- կեն վանոնք:

Բժիշկ Խաչերեան Սիվրիհիսարեաններու փունը կը հասնի վերջապէս: Առաջին գործը կ'ըլլայ լոգանք առնել: Ապա կը խորհր-

դակցին Ջմիռնիայէն հեռանալու մասին: Կը տեղեկանան, թէ ամերիկեան հիւպատոսարանին մէջ շոգենաւի տոմսեր կը վաճառուին: Կը գնեն տոմսերը եւ կ'ողողին ամերիկեան հիւպատոսարանին պաշտպանութեան տակ գտնուող շէնք մը՝ Էլմաստեաններուն տունը, ուր մեծերուն՝ հայ, իսկ փոքրերուն՝ խորացուած կաթ կը տրուի: Մէկ շաբաթ անքուն մնացած բժիշկը հոն հանգիստ քուն մը կը քաշէ:

Ուրբաթ, 22 Սեպտեմբերը սպասման օր կ'ըլլայ: Էլմաստեաններուն տունը հետպիտեղ կը խճողուի նորանոր փախստականներով:

Յաջորդ օրը, Շաբաթ, բժիշկը կը յաջողի իր բարեկամներէն 21 հոգի հասարակ հնարամտութեամբ մը տունէն ներս առնել: Այդ օր եւս շոգենաւ կը սպասեն, բայց չի գար:

Կիրակի, 24 Սեպտեմբերին կը տեղեկանան, թէ շոգենաւ բարձրանալու համար Փունթայի կայարանը պէտք է երթալ: Անվտանգ կը հասնին հոն: Վազար տեսակ դժուարութիւններով, հրելով եւ հրմշտկելով բժիշկը եւ ընտանիքը, ուրը հոգի, նաւ կը բարձրանան: Նաւուն մէջ անոնք յարաբերաբար հանգիստ տեղ մը կը գտնեն գիշերելու համար:

Կէս գիշերէն ետք նաւը Միտիլիին կը մօտենայ: Միտիլիին ծանօթ է բժիշկին: Տասը տարի առաջ անոր կառավարիչն էր հայոց համակիր, ծագումով քիւրտ Ֆայիք Ալի պէյ բանաստեղծ բարեկամը: Ան միակ անձն էր, որ ընդհանուր տեղահանութեան ժամանակ երբ Կուրինայի կառավարիչն էր, յաջողած էր արտոյն վերծ պահել այդ գաւառի հայերը՝ վանոնք ամէն կերպ երաշխատրելով:

Բժիշկը ուրախ եւ հանգիստ է, որովհետեւ իր քոյրը Միտիլի կը գտնուի: Ընտանեօք կը հասնին քրոջը տունը, ուր անոնք կը հաստատուին ակամայ: Բժիշկ Կարապետ Խաչերեան ամէն օր կողմին նաւահանգիստը կ'այցելէ մօրմէն, եղբօրմէն եւ սպգականներէն լուր մը առնելու ակնկալութեամբ: Դէպքերէն առաջ անոնք ԱգՎիսար կը գտնուէին: ԱգՎիսարի քրիստոնեաներուն եւ մանաւանդ հայոց մասին սարսափելի տեղեկութիւններ կը ստանան:

Բժիշկը Միտիլիին մէջ կը սկսի աշխատիլ, բայց եկամտաւոր գոհացուցիչ չէ: Ան կը մտածէ Եգիպտոս երթալու մասին, սակայն Սելանիկ կը հաստատուի:

Միմա Քեշիշեան, «Յուշեր Հայկական Ջարդերին», անձնական հրատարակություն, ՊԷՅՐՈՒՔ, 2005, միջակ չափի 260 էջ, արարերէն:

Հեղինակը 1987ին պարահմամը կը հանդիպի ծերունի Յովսէփ Մալտոյեանին, որ իր կեանքին դրուագներէն կը պարմէ Միմային: Վերջինս Յովսէփէն կը խնդրէ ատելի մանրամասնել իր յուշերը: Միմա մէկէ ատելի հանդիպումներու ընթացքին գրի կ'առնէ պանոնք ու Յովսէփին կը խոստանայ այդ յուշերը հրատարակել:

Յովսէփ Մալտոյեան ծնած է Մարաշ, 1904ին, հայ կաթողիկէ բազմանդամ ընտանիքի մը մէջ: Ան վեց եղբայր եւ երկու քոյր ունէր:

Տեղահանութեան հրամանը կու գայ: Հայրը կառք մը կը վարձէ եւ ընտանեօք կը միանան կարաւանին: Կ'ընթանան դէպի հարաւ: Կը հասնին Հալէպ, ապա կարաւանով կ'ոտորոին դէպի Հոմս:

Հոմս հասնելուն յաջորդ օրը Կիրակի էր: Յովսէփ հօրը հետը եկեղեցի կը մտնէ: Պարարագէն ետք ան կը տեսնէ հոգեւոր հովիւը՝ Գէորգ Վարդապետը եւ կը պրուցէ անոր հետ: Վարդապետը կ'առաջարկէ հօրը, որ Յովսէփը թողու իրենց մօտ: Հայրը կը համաձայնի: Յովսէփ վանքին որբանոցը կը մտնէ: Վանքին մէջ պայն «եղբայր Լուիս» կը կոչեն: Գէորգ Վարդապետ Յովսէփը կը խոստանայ դրկել Լեռնալիբանանի Քեսրուանի շրջանի Ջմմառի վանքը՝ ուսում ստանալու համար:

Յովսէփ շոգեկառքով կը հասնի Ջահլէ՝ Լիբանան: Հայ կաթողիկէ եւ օտար վարդապետներ որոշ արեւն մը պայն իրենց մօտ կը պահեն, ապա Յովսէփը իշապանի մը հետ Ջմմառ կը դրկեն:

Յովսէփ կը սկսի ուսանիլ Ջմմառի վանքին մէջ: Սակայն, կը



պարզուի, թէ ան ուսումի արակ չէ: Անելին՝ ան չի փափաքիր կրօնական դառնալ ապագային: Այս պարճառաւ, պարասխանարու րնօրէնը վայն վանքէն կը վրարէ: Յովսէփ սկիզբը կը շուարի, թէ ո՞ր երթայ: Բաւական թափառումներէ եւ դժուարութիւններէ ետք, կը հասնի Պէյրութ, ուր իր ապրած կեանքին դրուագները շար են: Արեն մը Սբ. Եղիա հայ կաթողիկէ եկեղեցոյ շրջափակին մէջ յաճախ կը հանդիպի վարդապետի մը, որ վայն սիրալիր կերպով կ'ընդունի եւ կը հիւրընկալէ:

Պարերազմն արդէն վերջացած էր: Յովսէփ որբանոցէն ելլելով կը գտնէ իր մօրեղբայրը Թրիփուլիի մէջ: Ան երիտասարդ րարիքին կը սկսի աշխարհիլ ճաշարանի մը մէջ: Գործին բերմամբ, պերական մարդոց հետ կը ծանօթանայ: Յովսէփ կ'ամուսնանայ եւ Պէյրութ կը հասարարուի:

Երուսանդ Օրեան, «Անիծեալ Տարիներ. 1914-1919 (Անձնական Յիշատակներ)», Բ. հրատարակութիւն, Հայոց փառերի գիտի 1600ամեակի մարտնաշար թիւ 6, Թեհրան, 2005, փոքր չափի 479 էջ:

Հեղինակը 12 տարի Պոլսէն դուրս, յարկապէս Անգլիա, Ֆրանսա, Վիեննա եւ Եգիպտոս մնալէ ետք, 1909ին Պոլիս կը վերադառնայ: Առաջին Համաշխարհային Պատերազմը ծագելէն ետք, քանի մը ամիս հեռու կը մնայ տունէն՝ չձերբակալուելու համար: 1915ին կը բանտարկուի եւ կ'աքսորուի: Տարագրութեան ճամբան՝ Պոլսէն Նիկոմեդիա, ապա՝ Տարսոն եւ Հալէպ: Վախնալով, որ զինք Տէր Զօր կ'ուղարկեն՝ կը փախչի Համա՝ իր մօրեղբօր քով: Մարտնոթեան մը հետեւանքով, ուրիշներու հետ կ'աքսորուի Հալէպ, ապա Տէր Զօր:



Զանոնք կը տանին Տէր Զօրէն ալ անդին՝ Եփրատ եւ Խապուր գետերուն միջեւ Էլ-Պուսէյրա: Կը փորձէ անգլիացիներու գրասօձ Պաղտատ փախչիլ: Չի յաջողիր: Փախուստ կու տայ Տէր Զօր, ուր նախ կը բանի աշխատանոցի մը մէջ, ապա գերմանական բանակարեղիին մէջ իբրեւ թարգմանիչ: Դարձեալ կը փախչի, այս անգամ՝ Հալէպ, ուր կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Գոնիա: Չեն թողուր, որ Գոնիա մնայ, այլ՝ կ'աքսորեն Սուլթանիէ, ուր քանի մը ամիս մնալէ ետք հաստատագիր մը ձեռք անցընելով կը հասնի Պոլիս՝ Սուլթանիէէն Յակոբ անունով 12 տարեկան որբ տղայ մը իր հետ առնելով:

Կարապետ Գաբրիելյան (Գուժկան Սեբաստիոյ), «Եղեռնապարուն», վերահրատարակություն (Ա. հրատարակությունը՝ Պոսթրն, 1924), Կոպ. Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիպաս, 2006, միջակ չափի 629 էջ:

Կ. Գաբրիելյան հնչակեան էր: Չույե-
 լով վրանգել իր պարագաները, կամա-
 տը կերպով կ'աքսորոյի ընկանեօք:
 Կ'անցնի Քէօր Տոպլայի աղահանքէն,
 Ուլաշ գիտի դիմացի մարգագետինէն,
 շրջակայ գիտերէն երիտասարդներու
 հետ կը գիշերէ Ալաճա Խան գիտին
 մէջ, ապա կ'անցնի Քէօթի Խանէն:
 Ճամբան կը տեսնէ սամսոնցի հայ տա-
 րագրեալ կանայք, մանուկներ եւ երեք
 մայրապետներ՝ բոլորն ալ սպաննուած
 քիւրկերու կողմէ: Կը հասնի Սեբաս-
 տիա-Խարբերդ ճամբուն վրայի Հասան
 Չելեպի գիտը: Հոս տղամարդիկը կը հաւաքեն եւ կը սպաննեն:
 Կարապետ որոշ հնարամտութեամբ մը կը պահուրդի եւ ուրիշնե-
 րու հետ կ'ապարի սպանդէն: Այստեղէն շատ դժուարութիւններով
 կը հասնի երկրորդ սպանդարան մը՝ Հեքիմ Խան: Ետ անօթի եւ
 ծարաւ, վերջապէս կը հասնի Մելիտինէ եւ կ'իջեւանի քաղաքէն
 դուրս, ուրկէ կ'ուղղուի դէպի շատ սպանդներ տեսած Ֆըրընճըլար
 աննչան գիտը: Հոս երբ բոլոր տարագրեալները կը հաւաքուին,
 կառավարիչը անոնց սայլերն ու եզները կը գրաւէ: Ստիպուած,
 արտարականները իրենց ճամբան կը շարունակեն հետիտուն, ետին
 ձգելով հիւանդներն ու անկարները: Հեղինակը կը պատմէ ամբողջ
 ճամբու ընթացքին (Եղեսիա, Սուրուճ, Ռաքքա, Համամ, Հալէպ)
 եղած սպանդներուն ու կողոպուտներուն մասին:




Կարապետ Գաբրիելյան 1919ին կ'ամուսնանայ սեբաստացի այրի
 փրկին Ապնիի հետ: 1920ին 11 որբերու հետ կ'ուղղուի Երուսաղէմ՝
 Ժառանգատրացի մէջ ուսուցչութեան համար:

Յովակիմ Գիշդիշեան, «Տէր Զօրի Անապարներում...», Վ. Վի Գիպոթիսնների Ազգային Ակադեմիայի «Գիպոթիսն» հրատարակչություն, Երևան, 2006, միջակ չափի 270 էջ:

Յովակիմ Գիշդիշեան ծնած է 1906ին, Զիլէ:

1915ի ամառը բռնագաղթը կը սկսի: Զիլէ առանին հայ տարագրեալները չորս ամիս թափառելէ յետոյ Հոկտեմբերին կը հասնին Պիլեճիք: Անոնք չորս հարիւր հոգի մնացեր էին, որոնց մէջ՝ նաև Ամասիայէն բռնագաղթածները, մինչդեռ գաղթէն եւ ջարդերէն առաջ Ամասիա եւ Զիլէ 15 հազար հայութիւն կը հաշուէին: Երբ Պերճիք կը հասնին՝ Յովակիմի բազմամտամ գերդաստանէն մնացած էին ինք, Աննա քոյրը եւ հօրաքրոջ աղջիկը միայն:



Երկու շաբաթ Պերճիք մնալէ ետք Մեսքէնէ կը քշուին: Հօրաքրոջ աղջիկը կը մահանայ: Քոյր եւ եղբայր գաղթականներուն հետ լաստերով կը հասնին Ռաքքա: Յովակիմ եւ Աննա այսպէս գիտէ գիտ եւ քաղաքէ քաղաք քարշ կու տան իրենց գոյութիւնը: Ենտրիի իր ստրված քանի մը արաբերէն բառերուն, Յովակիմ իբր թարգման կը վարձաւորուէր քանի մը դրուշով: Այսպիսով կը հասնին Տէր Զօր, ուր շատ դժուար օրեր կ'անցընեն: Իրենց ունեցած խեղճուկրակ ինչքերը ծախելով կը վաստակին 11 դրուշ, զոր թուրք տղաներ շուտով կը գողնան իրենցմէ: Յովակիմը, Աննան եւ հասակակից ընկերներ խումբ մը կազմելով, ուրելիքի, վառելիքի եւ այլ պարասխանապտութիւնները կը բաժնեն իրենց միջեւ: Քոյրը որբանոց կը տարուի: Անծանօթ հայ կին մը մահանալով՝ կնկան գոյքերը կը ծախեն եւ 100 դրուշ կը շահին: Նոյն օրը Յովակիմ քոյրը դուրս կը հանէ որբանոցէն: Խումբը կը ցրուի

եւ կը մնան երեք հոգի՝ Յովակիմը, քոյրը եւ Յարութին անունով ընկեր մը:

Տէր Զօրէն հայ գաղթականներու կարաւաններ կ'երթան դէպի Մուսուլ: Յարութին կը յաջողի միանալ երկրորդ, իսկ Յովակիմն ու քոյրը՝ չորրորդ կարաւանին: Անոնք կը յառաջանան ճամբուն վրայ խոյեր ուրելով: Կը հասնին Էլ-Խիապին գիւղը, ուր արաբները բարեացակամ վերաբերում ցոյց կու տան իրենց նկատմամբ: Ապա կը հասնին Սուվար: Հոս կը մնան երեք օր՝ իրենց գոյութիւնը պահելով գարի ուրելով: Կը յաջորդեն սոսկալի անօթութիւնն ու ծարարը: Ասկէ ետք կենցաղային պայմանները յարաբերաբար կը բարելաւուին: Յովակիմ կը ծանօթանայ արաբ ազնիւ առեւտրականի մը, որ կը խոստանայ զինք եւ քոյրը թողուլ արաբ ընտանիքներու մօտ իբր հոգեպաւակ: Կարաւանը կը հասնի Այն Կապել գիւղը: Տաւուր անունով արաբ մը կ'որդեգրէ Յովակիմը եւ կը տանի իր տունը՝ Սինճարի գիւղերէն մէկուն մէջ: Այսպիսով ան կը բաժնուի իր 11 տարեկան քրոջմէն՝ Աննայէն:

Տաւուրի տան մէջ Յովակիմ շատ մեծ հիւրասիրութիւն եւ հոգաբարութիւն կը գտնէ: Քոյրը՝ Աննան վերագտնելու մեծ փափաք մը կը զգայ, սակայն կը հիւանդանայ եւ 15 օր անկողնին կը ծառայէ: Չի յաջողիր գտնել Աննան:

1918ի աշնան անգլիացիները Մուսուլ կը մտնեն: Հայերն այսուհետեւ ամէն տեղ ապար են: Սկիզբը Յովակիմ կը տարամսի, սակայն ետքը կ'որոշէ վերադառնալ հայ ազգին: Ան կը միանայ Մուսուլէն Հալէպ գացող կարաւանի մը, Հալէպ կը հասնի ու Ահարոն Պապուելիի (վեր. Ահարոն Երաճեան - խմբ.) որբանոցը կը մտնէ: 1920ին Պէրթոթ եւ ապա Պոլիս կը տանին զինք: Հոնկէ կ'անցնի Յունաստան, ուրկէ 1924ին Խորհրդային Հայաստան կը հայրենադարձուի:


Նորայր Արալեան, «Մեռ Քառակուսի Կարմիր Անապարտում», «Լուսաբայ» հրատարակչություն, Երևան, 2008, միջակ չափի 287 էջ:

1918ի գարունն է: Երզնկայի մէջ, ջարդերէն եւ փարագրութիւններէն վերապրողները եւ սուրիական անապարտներէն վերապրած հայերը անգամ մը եւս կը պարտաստուին գաղթելու, այս անգամ՝ դէպի արեւելք, Կարինի ճամբով, դէպի Մարաբեան դաշտ եւ անկէ ալ՝ Երևան:

1915էն ի վեր Տերսիմի, Ակնի, Մասնոյ, Մուշի եւ Երզնկայի մէջ Սեբաստիայի Մուրադի գլխատրած կռիւներուն մասնակցած Ներսէս Աթոնեան այս գաղթը կառավարողներէն մէկն է: Պարտաստուողներուն մէջ է հեղինակին հայրը՝ Մարտիրոս Արալեանը: Ներսէսի օգնականն է Վահրամը, որ քանի մը շաբաթ առաջ ծպտուած Երզնկա կու գայ Մուրադի յանձնարարութեամբ՝ ողջ մնացած հայոց փրկափոխութեան գործը կազմակերպելու համար: Դէպի Կարին ճամբան նախընտրելի է եւ յուսատու:

173 մարդէ բաղկացած կարաւանը կ'երկարէր լեռներով շրջապարտուած կանաչ դաշտին մէջ, ուր Եփրատը կը հոսէր: Միայն Արմենակ Մեփեթճեանն իր ընտանիքով կը մնայ Երզնկա, որով հետեւի մայրը շարժեր էր: Առաջապահները կ'ընթանան հեծեալ՝ Վահրամի առաջնորդութեամբ: Ներսէս Աթոնեան կարաւանին երեւէն կ'ընթանայ: Թուրքերը անոր ծնողքը եւ երեք քոյրերը յօշոտած էին: Ներսէս իր խումբին մէջ հաւաքագրած էր հայ մարտիկներ Վայաստանի վանապան շրջաններէն:

Որոշուած էր գիշերը հանգստանալ Բլուան գիղը: Ներսէս դադար կու տայ կարաւանին: Գաղթականները կը ճաշեն եւ պահ



մը հանգիստ կ'ընեն: Երբ ճամբայ ելլելու կը պատրաստուին, յանկարծ եկեղեցիին դռանցները կը լսեն: Երբ լռութիւն կը փոխէ՝ ճամբայ կ'ելլեն: Կը հասնին Բզուան եւ հոն գիշերելով կը պատրաստուին յաջորդ օր շարունակելու երթը: Ներսէս գիտին շուրջը պահակներ կը կարգէ, որովհետեւ շրջակայքը թուրքեր կային:

Առաստուան կարաւանը կը շարժի: Երբ կարաւանը երեք ժամէն Վասկերպի հովիտը կտրած էր, Եփրեմ քառասունի չափ պինտալ քիւրպեր կը նկատէ: Հրապանաձգութիւնը կը սկսի: Կը պարզուի, թէ անոնք թուրքեր են եւ ոչ թէ քիւրպեր: Կարաւանին մէջ խուճապ եւ իրարանցում կը սկսին: Կռուի ընթացքին, թուրքերը միշտ կը փորձեն կարաւանին հասնիլ եւ ջարդի սկսիլ: Հայ ապարամարտիկները բռուն կերպով կը դիմադրեն: Ներսէս հեռուէն կը տեսնէ թուրք Բամայիլը, որուն հանդիպած էր գիշերը՝ Բզուանի մէջ: Թուրքերը յանկարծ կը սկսին նահանջել: Հայ տղաքը կը հալածեն վանոնք: Հայերը 37 նահապակ կու տան: Ներսէս կ'ըսէ Վահրամին, որ այս կռիւն ապարած Նանէին վէնք տայ: Ներսէս Նանէին հանդիպած էր առաջին գիշերը Բզուանի մէջ: Լաւ օրերուն ան Նանէի ուսուցիչը եղած էր:

Կարաւանը կը շարունակէ ճամբան ու երեք օր կը քալէ Քեշիշ Տաղ կոչուած լեռնաշղթայի լանջերուն վրայէն: Գաղթականները կը հասնին Գերձան գաւառի Աղկալայի դաշտը, ուր կրկին կը հանդիպին Եփրատին: Այս ճամբուն վրայ կը մահանան երկու մանուկներ, չորս կիներ եւ հայ պինտոր մը, որ Վասկերպի մէջ վէրքեր ստացած էր:

Ճամբուն ընթացքին բոլորին ուշադրութիւնը կը գրաւէ 18 տարեկան, յղի եւ այրի Սուսանը: Ան ծնած էր Կեչուրիկ գիւղը եւ քանի մը ամիս առաջ Երզնկա հարս եկած էր: Բոլորը կ'աղօթէին անոր համար: Պարս խօսակցութիւն մը կը սկսի անոնց միջեւ, թէ ծնելիք վառակը ի՞նչ պիտի դառնար, ի՞նչ արհեստով պիտի զբաղէր: Իրաքանչիւրը արհեստ մը կը յիշէ, սակայն Սուսան կը պատասխանէ, թէ ինք կ'ուզէ որ իր վառակը Ֆեդայի դառնայ հօրը պէս: Ներսէս Ալթունեան կ'ոգեւորուի այս խօսքով եւ բոլորը կը լռեն:

Նանէ, արդէն վէնքը ձեռքին, կը մասնակցի թուրքերու եւ քիւրպերու դէմ կռիւներուն: Ներսէս կը հետաքրքրուի բոլորին հան-

գիստով եւ ապահովութեամբ: Կը հասնին Օձնի վանքը, կը Գարածուիին անոր շուրջ ու կը պառկին, կ'ուրեն, կը խնամեն հիւանդները եւ կը վրուցեն: Քանի մը օր հոս կը մնան:

Այս միջոցին, Գրասնապետ Նապիմ, 15 զինուորներով եւ առջեւն ձիով ընթացող Մոթոյի առաջնորդութեամբ, կ'անցնի Մեպոսի լեռներուն արեւմտեան ստորոտներէն: Մոթօ պահ մը կը մտածէ լքել Նապիմը եւ փախչի: Անոնք կ'երթային Մուրափը ձերբակալելու անոր խրճիթին մէջ: Մոթօ ինքզինքը կը զգայ երկու կրակի միջեւ: Առջեւ՝ Մուրափն էր, ետեւ՝ Նապիմը: Մոթօ լաւ գիտէր, թէ Մուրափի հետ հաշի մաքրելը դիւրին գործ չէ: Կը հասնին եւ կը մօտենան այն խրճիթին, ուր Մուրափը պէտք է գտնուէր: Կը շրջապատեն խրճիթը եւ կը կանչեն Մուրափը: Ոչ մէկ արձագանգ: Խրճիթէն կը կրակեն: Մոթօ գետին կը պառկի պաշտպանուելու համար: Նապիմ հրաման կու տայ ողջ բռնել Մուրափը: Խրճիթէն դարձեալ կը կրակեն: Նապիմ կը կրակէ խրճիթին ուղղութեամբ: Կը փորձեն դուռը ջարդել: Մուրափի ձերբակալութեան հրամանը փոտողը Մեմփոսի Մաթան է: Այս միջոցին կամայով դուրս կու գայ Մուրափի կինը՝ Մարիամ, ձեռքին մանուկ մը գրկած: Կը սպառնան Մարիամի: Նապիմ Մարիամի կ'առաջարկէ թրքանալ եւ իր կինը դառնալ, բայց կը մերժուի: Մոթօ արագ շարժումով մը կը փորձէ սպաննել Մարիամը: Նապիմ թոյլ չի տար եւ կը սպաննէ Մոթօն, քանի որ գիտէր, թէ Մոթօն ալ հայ է: Նապիմ վեհանձնօրէն ողջ կը թողու Մարիամն ու երախան, եւ կը հեռանայ: Մուրափը գտնել եւ ձերբակալել անկարելի կ'ըլլայ:

Կարաւանը կանգ կ'առնէ Կարինէն քիչ մը հեռու գտնուող ձորակին մէջ: Ներսէս Վահրամն ու Յարէթը քաղաք կ'ուղարկէ՝ լուր բերելու համար հոն փրոջող կացութեան շուրջ: Քանի մը ժամէն անոնք կը վերադառնան յայտնելով, թէ քաղաքը թուրքերուն ձեռքն անցած էր: Անդրանիկ իր զինուորներով եւ ողջ մնացած ժողովուրդով Մարիդամիչ-Կարս անցած էր: Մուրափէն ոչ մէկ տեղեկութիւն կայ: Կարաւանը ծանրօրէն ու դանդաղօրէն կը շրջանցէ Կարինը, կ'ուղղուի դէպի արեւելք ու Կապուոս գաւառը կը մտնէ: Տղաքը կը հսկեն կարաւանին: Ներսէս կ'ընթանայ առջեւն: 113 հոգի են: Կ'անցնին Ագթիլիսա գիւղէն եւ բացօթեայ

տեղ մը կը հասնին: Սուսան հոս ծննդաբերութեան ժամանակ կը մահանայ: Քար լռութիւն կը տիրէ: Կարաւանը երեք օր կ'ընթանայ Կաղպուան գաւառին մէջէն՝ անցնելով Ագարակ, Չուրուկ, Ենիճա, Շարեւան, Ճալալ, Պաշքէ գիւղերէն: Կ'ուրէին ծաղիկներ, խոտ, ծառերու քարայած խէժը, արմատ ու կեղեւներ: Եփրեմը, Մկրտն եւ Յարէթը կ'երթան Սարիղամիշ՝ պարէն բերելու: Հոն կը տեսնեն, թէ թրքական զօրքը եւ խուժանը կը ջարդեն ողջ մնացած հայերը:

Կարաւանը, առանց մտնելու Կաղպուան, կը յառաջանայ հարաւի ուղղութեամբ եւ Արաքսի ձորաբերանը կը մտնէ: Մայիս 1918ի վերջաւորութիւնն է: Կարաւանին մէջ յանկարծ աղմուկ եւ իրարանցում կը սկսին: Կը փնտռեն Արարապետան դաշտ տանող ճամբայ մը: Կռիւ կը սկսի եւ տղաքը կը յաջողին վրանգը հեռու պահել կարաւանէն: Թուրքերը կը փախչին եւ կարաւանը աւելի ապահով վայր մը կը մտնէ: Կը պարզուի, թէ այս կռիւին՝ Նանէ վէնքը ձեռքին նահապակուած է: Ներսէս իր ձեռքերով եւ դաշոյնով կը փորէ հողը ու կը թաղէ Նանէն: Կը հասնին Բագարան, ուր մէկ շաբաթէն աւելի կը մնան: Կը հանդիպին թուրք կանանց, սակայն Ներսէս թոյլ չի տար պանոնք սպաննել ու «թրքանալ», այսինքն՝ կիներ սպաննել:

Կրկին կը հանդիպին թուրք պինտորներու: Կռիւր կը սկսի: Հայերը թէեւ տոհմեր կու տան, սակայն ապահով կը հասնին Արարապետան դաշտ:

Ճիւան Արիստակէսեան, «Այրուող Նորիպոններով Քայլողը», գրական խմբագիր՝ Գէորգ Գիւլանց, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2008, միջակ չափի 240 էջ: (էջ 1-131)

Ճիւան Արիստակէսեանը ծնած է 1906ին, Դերջանի Խնկրի գիւղը:

Ան կը յիշէ իր մանկութիւնը, մայրը, մեծ հայրը (որուն ինք կը կոչէ Տայոս), հօրեղբայրները եւ հօրեղբորորդիները՝ Թորգոմն ու Սափաթը եւ գիւղին լաւ օրերը: Կը յիշէ նաեւ 1914ի վիճակը հայաստանը: Այն օրերուն, գիւղին մեծատուն էր Ալի Օսման կոչուող թրքացած քիւրդը:

1915ի օրերէն մէկը, երբ արտին մէջ կ'աշխատէին, անծանօթ քիւրդ մը վազելով իրենց մօտ կը բերէ կոպորածին գոյժը: Անոնք գիտ կը վերադառնան: Շուտով այրերը կը հաւաքուին եւ կը տարուին: Երբ

մանուկները կը հաւաքեն, անծանօթ քիւրդ մը կ'ապարէ Թորգոմը, Սափաթը ու Ճիւանը եւ վանոնք իր տունը կը տանի: Գիւղին բարեկէցիկ քիւրդերը կու գան եւ կը տանին Ճիւանը՝ որդեգրելու կամ արտերուն մէջ աշխատանքի տեսակէտով: Քիւրդ վերցնողը ծեր եւ բարի մարդ մըն էր՝ Շապանէնց Իսմայիլը: Աւելի ուշ, Ճիւան կ'իմանայ, թէ կիները տարած էին Թորոս լեռան կողմը, կողոպտած, խռչուանգած, առեւանգած եւ սպաննած: Ողջ մնացած քիւրդը վերադարձած էին գիտ եւ կ'աշխատէին քիւրդերու մօտ՝ կտոր մը հացի փոխարէն: Այսպէս, ան մասամբ մը իրապէս կ'ըլլայ այս կոպորածին մանրամասնութիւններուն: Քիւրդերը Ճիւանին կու տան Խալիլ նոր անունը:

Անհոգ անցեալը Ճիւանի համար այլեւս երազ կը դառնայ, եւ ան Իսմայիլի մօտ կ'աշխատի իր ոյժերուն ներած չափով: Ամէն



կողմ դիակներ եւ ոսկորներ կը տեսնէ: Ճիւան կը հաւաքէ ոսկորները եւ դամբարան մը կը շինէ, մտքին մէջ ունենալով իր մեծ հայրը՝ Տաչուն: Ան կը յիշէ, թէ երբ ռուսերը կը գրաւեն Կարինը, թուրք պինտորները փախուստ փախով կը նահանջեն: Խնկրի գիղի քիւրտերուն փոքր մասը կը մտադրէ հեռանալ: Ողջ մնացած հայ կիները կ'ուզեն ռուսերուն գալուստն ու ողջ մնացած հայ մանուկներուն ապագան: Այի Օսման եւ Բամայիլ ճամբայ կ'ելլեն միասին: Ճիւան կ'ընկերանայ Բամայիլի կարաւանին: Երբ Ճորոխ գետի ափը կ'իջեանին, Ճիւան կը տեսնէ իր հօրեղբորորդիներ Թորգոմն ու Մաւրաթը, երբ Բամայիլի յանձնարարութեամբ եզները արածելու կը տանի: Թորգոմ եւ Մաւրաթ լսելով, որ ռուսերը մօտեցած են՝ կը փախչին դէպի Խնկրի: Ճիւանը չի յաջողիր հասնիլ անոնց: Կը շարունակեն ճամբան եւ կը հասնին Ալպիստանի գիղերը: Արեն մը հոս կը մնան: Կարաւանին հետ եկող քանի մը հայ տղոց կը հանդիպի: Ճամբան շարունակելով կը հասնին Չայան գիղը: Կարճ ժամանակ հոս կը մնան, ապա կ'ուղղուին դէպի արեւմուտք ու Չիֆլիք գիղը կը հասնին:

Այս միջոցին քիւրտերը կ'իմանան, թէ ռուսերը հեռացած են ու կը վերադառնան Խնկրի: Աշնան վերջաւորութեան էր: Ամէն կողմ սով: Կարճ ժամանակով հոս կը մնան ու կը գաղթեն Կարինի կողմերը, լսած ըլլալով բռնահանուած հայոց ինչքերուն մասին: Ճամբուն ընթացքին Ճիւան կը նկատէ, թէ հայու ոչ մէկ հետք մնացած է: Մամախաթունի մէջ կը տեսնէ շաքարով, ալիւրով եւ ուրիշ ուրեստեղէնով լեցուն ամբարները, որոնք ռուսերը ձգած գացած էին: Կային նաեւ պինամթերքի պահեստներ: Հայ գաղթականները Կարինէն կ'անցնին, կը յառաջանան ու կը թեքուին դէպի Օլթի: Այս կողմերու հայերը ամէն ինչ թողած, փախած էին: Բամայիլի կարաւանը կ'ուղղուի դէպի Կարս: Բաւական թափառումներէ ետք կը վերադառնան Խնկրի՝ ահագին պաշարով: Կը մահանայ Բամայիլի որդին՝ Զիա, երկու ամիս անց՝ միւս որդին՝ Մեմետը: Բամայիլի հարսերը կը ցրուին եւ օտար տուներ կ'երթան: Բամայիլի միակ ժառանգորդը Ճիւանը կը դառնայ: Ան կ'ուզէ ապագային Ճիւանը ամուսնացնել իր թոռնուհիին՝ Ալլիի հետ: Բամայիլ Ճիւանը գործով Տրապիզոն կը դրկէ քիւրտերու հետ: Ճամբու ընթացքին, ան կը հանդիպի Կոպմա անունով յոյն

տղու մը, որ իրեն կ'ըսէ, թէ ամէն տեղ սկսած են հայ որբերը հաւաքել եւ թէ Տրապիպոնի մէջ ալ հայոց համար որբանոց կայ:

Երբ կը հասնին Տրապիպոն, գործի կը լծուին: Վերջին օրը, հայ որբեր դիպուածով մը կ'իմանան Ճիւանի հայ որբ ըլլալը եւ անմիջապէս կ'իմացնեն իրենց պատրասխանապատ՝ Պարոն Սհարոնին: Այս վերջինը հարցաքննութիւն մը կ'ընէ Ճիւանին եւ անոր ընկերակցող քիւրտերուն: Այդ երեկոյ Ճիւան կ'երթայ քիւրտերուն հետ այն յոյսով, որ Պարոն Սհարոն յաջորդ առաւօտ կրկին պիտի գայ իրենց մօտ: Յաջորդ օրը, Ճիւան հայ գնելու պատրուակով քաղաք կ'երթայ եւ կը փնտռէ որբանոցն ու հայկական եկեղեցին: Դիպուածով մը կը հանդիպի Կոզմային, որ փնք որբանոց կը յանձնէ: Ուրեմն, 1918ին է, որ ան կը մտնէ Տրապիպոնի «Սահակ-Մեսրոպեան» որբանոց-դպրոցը, որուն առաջնորդը Գարեգին վարդապետն է (Գարեգին վրդ. Խաչատուրեան, յետագային՝ արքեպիսկոպոս, Կ. Պոլսոյ պատրիարք, գրչանունը՝ Տրապիպոնի - խմբ.), իսկ ընդհանուր տնօրէնը՝ ամերիկացի հիւպատոս, հայասէր, լաւ հայերէն եւ թրքերէն գիտցող Մթեփթոնը: Ուսուցիչները հայեր էին: Լեզուներու եւ թուաբանութեան կողքին աշակերտները կը սորվէին նաեւ երաժշտութիւն, նկարչութիւն, մարզանք եւ թատրոն: Տրապիպոնի հայութիւնը նիւթապէս կ'օժանդակէ այս որբանոց-դպրոցին: Ընտրիւ մարզանքի եւ լողալու դասերուն, բոլոր աշակերտները լաւ լողորդ կը դառնան: Ճիւան մեծ հաճոյքով հայերէն գիրքեր կը կարդայ եւ լաւ շարադրութիւններ կը գրէ:

Երկրին իրադարձութիւնները կը սկսին փոխուիլ: Քեամիլ փաշա Տրապիպոն կ'այցելէ: Հայերը, յոյները եւ քրիստոնեաները վախով ու մտահոգութեամբ կը մասնակցին բարի գալուստի շքերթին, իսկ լսներն ու թուրքերը շատ կը խանդավառուին: Փաշան կ'այցելէ նաեւ որբանոցը, որ պայն կը դիմատրէ անոր ու Մուսթաֆա Քեմալի նկարներով եւ թրքական դրօշակներով:

Քեմալական շարժումը կը ծաւալի եւ կը սաստկանայ: Որբերը 1923ի աշնան Յունաստան կը փոխադրուին: Ամերիկեան «Նիւ Իսթ Ռիլիֆ»ը կ'որոշէ որբերը հաւաքել Յունաստանի Լուրթաքի ծովեզերեայ գիւղը: Ճիւանը չորս տարի Յունաստան մնալէ ետք, 1927ին կը հայրենադարձուի Խորհրդային Հայաստան:

Ճիւան Արիստակէսեան, «Իմ Մօրաքոջ Յիշողութիւններից», էջ 141-146:

Ներքինական մօրաքոյրը ծնած է 1895ին, Դերջանի գիղերէն Գառնփեթակ: Նայրը Տէր Աւերիք Քահանայ Խոսրովեանն է: 1911ին հարս գաւազ է Խարփին գիղը:

1915ին Ճիւանի մայրը՝ Պահար, չղիմանալով աքաղաղի եւ սպանդի պայմաններուն, ինքզինք Կոթերի կամուրջէն վար կը նետէ:

1915ին երբ մօրաքոյրը ճաշի նստած էր, իրենց համագիտացի, Մամախաթունի մէջ պաշտօնէայ Նամբարձում աղան ներս կը մտնէ եւ կը գոմէ, թէ թուրքերը պիտի կոտորեն հայերը, եթէ կրօնափոխ չըլլան: Գիղին հայերը կը պապասխանեն, թէ իրենց հայութիւնը յանձնարարական է եւ հայութեան հաւատարմութիւնը կը պահուին: Երեկոյեան՝ թուրք զօրքը եւ վիճուած խուժանը կը մտնեն գիղ ու կը սկսին կոտորել, առեւանգել եւ հալածել: Մօրաքոյրը թուրք դրացի Մեմետի տունը կ'ապաստանի: Թուրքերը մնացածները կը հաւաքեն եւ տարածքը թոնրատունը կը լցնեն: Մօրաքոյրն ալ դրացիին տունէն դուրս կը հանեն: Բոլոր կիները կ'որոշեն գետը նետուիլ եւ անձնասպան ըլլալ: Այդպէս ալ կ'ընեն: Մօրաքոյրը իր գիրկի պառակին հետ ջուրը կը նետուի, սակայն հոսանքը դուրս կը քշէ վայն: Թուրքերը կը բանտարկեն վայն եւ ապա կ'աշխարհացնեն: Ապա, երբ հայերը կրկին կը հաւաքեն եւ կը կոտորեն, ան իր մանուկին հետ կը յաջողի փախչիլ: Նորէն կ'ապաստանի Մեմետ աղայի տունը: Դարձեալ վրանգի հանդիպելով իր երախտային հետ կը փախչի Գառնփեթակ: Թուրք կին մը հոս վիճք կը ճանչնայ եւ իր տունը կը տանի: Մակայն, տնեցիք կ'ուզեն, որ ան ամուսնանայ իրենց տղան հետ եւ պառակը սպաննէ: Մօրաքոյրը, այս վրանգատը պայմաններու տակ ընկճուած, պառակը ջուրը կը նետէ եւ նորէն կը փախչի: Կրկին կը փորձէ խեղդամահ ըլլալ գետին մէջ, բայց կ'ապարի: Կը հասնի Բագատիճ գիղը: Նոս կը լսէ, թէ ամուսինը՝ Անդրանիկ ողջ է թրքական բանակին մէջ եւ Նոզեկ գիղը կը գտնուի: Կը գտնէ ամուսինը: Միասին կը փախչին քիւրտերու մօտ: Ամուսինը կ'երթայ Գումակ, ուր հաւանաբար ձերբակալուելով ուրիշ հայ երիտասարդներու հետ՝ կը տանին Մեքաստիոյ կողմերը եւ կը ջարդեն:

Մօրաքոյրը առանձին կը մնայ: Գիտէ գիտ անցնելով կը հասնի Չամուտ Տէրէ, ուր կը գտնէ իր մօրաքոյրը: Ան առանձինն կ'երթայ Ագարակ: Հոս կ'աշխատի քիւրտի մը տան մէջ, մինչեւ որ ռուսական բանակը գիտ կը մտնէ:

Բոլոր հայերը իրենց գիտերը կը վերադառնան: Հիւանի մօրաքոյրը կը վերամուսնանայ ազգականի մը հետ, որ հայդուկ մըն էր: Երբ ռուսերը կը նահանջեն Երզնկայէն, անոնք կրկին կը փախչին: Երկրորդ ամուսինը կը գոհուի կռիւի ընթացքին: Մօրաքոյրը կը հասնի Մամախաթուն, ապա, Մուրադի եւ դարաբաղցի տղաներու օգնութեամբ՝ Կարին: Հոս կու գայ Զօրավար Անդրանիկը եւ կը խօսի Կարինի հայութեան: Կարինէն նահանջի ընթացքին Իջեւան կը հասնի: Հոս երրորդ անգամ կ'ամուսնանայ եւ ստակներու ու թռոններու տէր կը դառնայ:

Վահրամ Կարաւեան (Վիքթոր Կարպոն), «Կեանքի Կանաչ Արեւը», Ֆրանսերէնէ թարգմանեց Աւերիս Եափուճեան, թերթին «Չարթօնք» օրթի թիւ 53, Պէյրութ, 1964, միջակ չափի 216 էջ:

Գիրքը հեղինակին մանկութեան յուշերն են Վանի մէջ: Վահրամ կը յիշէ իր մէկ ապգականին՝ Հմայեակի նշանփութը Պայծառի հետ: Զինուորական ծառայութեան փոխարէն փութքը չվճարելուն պատճառաւ ոստիկանները նշանփութի ժամանակ կու գան ձերբակալելու Հմայեակը, որ քիչ առաջ արդէն փախուստ փութած էր: Հմայեակ կը սիրէր Վահրամի պարմուհին՝ Հայկանոյշը, սակայն նախընտրեց Պայծառը, որուն հայրը հարուստ ըլլալով, խտրացած էր Հմայեակի եղբայրը ապարել բանալէն:



Վահրամ կը յիշէ, թէ Վանի մէջ իր մանկութեան ինչպէս կատուի ձագեր կը բերէր փուն եւ յարդանուցին մէջ կը պահէր եւ կամ ինչպէս գարնանը ծիրան կը հաւաքէր: Նկարագրով ըմբոստ ըլլալով, ինք բնաւ չէր հանդուրժեր անարդարութիւնը: Կը մատնանշէ այն արեւնուան ստրկամտութիւնը: Կը պատմէ, թէ ինչպէս իր ոսկերիչ հօրը՝ Յարութիւնի յաճախորդներէն թութք մը որսորդութեան ժամանակ իրենց պարտկալին մէջ կը սպաննէ սոխակ մը եւ ինք շատ ընդվզելով՝ կը յարձակի մարդուն վրայ: Հեղինակը իր մանկութեան շրջանին պատահած միջադէպ մը կը նկարագրէ, շեշտելով թութք ոստիկանապետին կողմնակալութիւնը եւ արեւութիւնը հայոց հանդէպ: Այս միջադէպին մէջ թութք փողէկ մը կը սպաննուի, սակայն Վահրամ անմեղ ըլլալով՝ պարտիժ չի կրեր:

Հեղինակի յուշերուն մէջ մեծ փող կը գրաւէ իր մեծ մայրը՝ «Մեծմա»: Ան պինք եկեղեցի կը փանի, կարկանդակ կը շինէ եւ

կը բուժէ Կրան հիւանդները, ինչպէս բուժեց Վնայեակը:

Վահրամ Վնայեակի եւ Պայծառի պսակադրութեան խաչեղբայրը կ'ըլլայ: Վայկանոյշ անձնասպան կ'ըլլայ:

Վահրամի մօրաքոյրը՝ Ալմաստի թուրքերու թաղը կը բնակէր: Թուրք դրացիներէն մէկը անոր աղջկան՝ Սիրարփիի վրայ աչք դրած էր եւ կ'ուզէր վայն կնութեան առնել: Այս պատճառաւ Սիրարփի կը մնար Վահրամի տունը՝ «Մեծմա»ին մօտ:

Վեղինակը ականապես կ'ըլլայ իրենց Կրան մէջ իր հօր մօտ հաւաքուած արմենականներու ժողովին: Վայկական գիտերը յարձակումի ենթարկուած էին եւ գաւառներուն մէջ դէպքերը՝ բազմապատկուած: Նոյն գիշեր հոն կը հասնի Վահրամենց Կրան սպասաւոր Մարգիսի եղբայրը՝ Մարտիրոս, դաշունահարուած վիճակի մէջ: Ոսկեհատ Մեծման կը խնամէ վայն: Վնու հեղինակը կը մտնան 1908ին պատահած դէպքերը: Դէպքեր եւ ջարդեր կը պատահին նաեւ Վանի մէջ, սակայն Յարութիւն եւ եղբայրները ուրիշ հայերու հետ միասին ուշ գիշեր Կրան կը հասնին ֆրանսական հիւպատոսարանին օգնութեամբ:

Այն պահուն, երբ Վահրամ քաղաք՝ Ալմաստի մօրաքոյր մօտ գացած էր Սիրարփիի կիսակօշիկները բերելու, Կրան դրացիները կը յարձակին եւ կը սպաննեն Սիրարփիի հայրը՝ Թովմասը, Ալմաստը եւ անոնց երեք աղջնակները: Այս միջոցին, կօշիկները բերելու համար ձեռնարկը բարձրացած Վահրամը հոն սպասող կը մնայ: Ան յետոյ կ'իջնէ եւ երեւի պարտէզին մէջէն կ'ուղղուի Կրան ու կը պարմէ պատահածը:

Թուրք ոստիկանութիւնը խիստ հսկողութեան տակ կ'առնէ Վանի Այգեստանը, ուր հայ վիճակներ գաղտնի գործունէութիւն կ'ունենային: Ոստիկանները կը սպաննեն հայ քաջերէն Մեայուհը, որ Արաբկիրէն եկած էր: Կարօ կը ձերբակալուի որսորդական վէճքեր պահած ըլլալուն համար: Ձէնք յայտնաբերուող Կրան տէրը կը ձերբակալուէր եւ Կրանը կրակի կը Կրուէր:

Թուրքերը կը սպաննեն Վահրամենց դրացի Մաթենիկը, որուն ամուսինը Պարսկաստան կը գտնուէր:

Վեղինակին հայրը, հօրեղբայրները եւ հայ սպաւորները կը թաքցնեն իրենց վէճքերը Կրան գաղտնաբանին մէջ: Մակայն ուրիշ գաղտնաբան մը գտնելով, թուրքեր քսանհինգ

քաջեր կը ձերբակալեն:


Թուրքերը կը յարձակին Ակրփիի վրայ, հայերը կը սպաննեն եւ անոնց փոսերը կը հրկիզեն: Հոնկէ փախած 18 փարեկան աղջիկ մը՝ Արաքսին կը հասնի Վահրամենց պարտէզը:

Դուրսի լռութիւնը յանկարծ կը փոխուի գոռում-գոչումներու, որոնք կ'աւերեն սուրբան Ապրույ Համիդի անկումն ու «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան իշխանութեան փիրանալը:

Վահրամ Կարաւեան (Վիքթոր Կարպոն), «Զմբուխարակիր Ասպետը», ֆրանսերէնէ թարգմանեց Աւետիս Եափուճեան, թերթօն «Զարթօնք» օրթի թիւ 57, Պէյրութ, 1965, միջակ չափի 562 էջ:

Այս հատորը շարունակութիւնն է հեղինակի «Կեանքի Կանաչ Արեւը» յուշագրութեան:

Օսմանեան սահմանադրութեան հռչակման յաջորդող օրերուն էր: Վահրամ օր մը երբ փունը մէկը չկար, որմնադարանին դուռը բանալով ներս կը մտնէ եւ կը գտնէ մագաղաթ մը ու ասպետի մը նկարը՝ ձեռքին խաչ: Խաչին վրայ պնդուլստ մը կար: Մագաղաթին վրայ գրուած էին ոսկիի եւ գոհարեղէնի պահուած փետերը, Վարազայ լերան մօտերը:



Վահրամեան փան մէջ արմենականներու հաւաքներ փետի կ'ունենային, Կարոյի, Եկարեանի եւ թուրք պորավար Մելիմ պէյի ներկայութեան:

Տան խօսակցութեանց մէջ հեղինակը կը մատնանշէ «Մեծմա»ին ողջմտութիւնը սահմանադրութեան վերահռչակումին նկատմամբ: Ան չի վստահիր թուրքին, մինչ իր պաակները սահմանադրութեան վերահաստատումին մէջ հաւասարութիւն, արդարութիւն եւ եղբայրութիւն կը փեսնեն:

Վահրամի հօր՝ Յարութիւնի յաճախորդ Մախր Շիւմի Էֆենտի անունով արաբը կը պգուշայնէ Յարութիւնը, որ Երիտասարդ Թուրքերու (Բթթիհատ) խոստացած «պպարութեան» հաւաքը չընծայէ: Ան կը մատնանշէ սահմանադրութեան յայտարարութենէն քանի մը ամիս ետք Արանայի մէջ փետի ունեցած ջարդերը, որուն 30 հապար հայեր փոհ գացած էին:

Իբր արմենական Կուսակցության պարզամատր՝ Յարութին Պոլիս կը մեկնի:

Վահրամի փան մէջ էր իր վարմուհիներէն Արաքսին, որուն ծնողները վերջին դէպքերուն սպաննուած էին: Ան կը սիրէր դրացիին փղան՝ Ջաքարը, որուն հայրը անոնց ամուսնութեան համաձայն չէր: Այս պարճառաւ, Ջաքար օր մը կը փախչի ու կ'ողողոյի Դիւման՝ իր մօրեղբօր մօտ, սակայն Ոսկեհատ մեծ մայրը կ'ըսէ, թէ անոր մօրեղբայրը այլեւս Դիւման չէ, այլ՝ Թիֆլիս, եւ Վահրամի հօրեղբայր Սարգիսն ու Վահրամը կը դրկէ Ջաքարի երեւէն, որպէսզի ետ բերեն զայն: Ճամբան Սարգիսն ու Վահրամը կը գիշերեն բարեկամ քիւրտերու մօտ, որոնց մեծատրը՝ Պաշ Աղա, Սարգիսի միջոցաւ կը զգուշացնէ Յարութինը, որպէսզի վէնք հաւաքեն իրենց մօտ, բարեկամանան հայտարանցի եւ մամկանցի քիւրտերու հետ՝ ինքզինքնին իթթիհատական թուրքերէ պաշտպանելու համար: Սարգիս եւ Վահրամ յաջորդ առօրու Ջաքարը կը գտնեն Պաշքալէի մէջ եւ կը վերադառնան Ոսկեհատ Մեծմային մօտ:

Յարութին, Պոլիսէն վերադառնալով, իր փան մէջ արմենական ընկերներ կ'ընդունի: Խօսակցութիւնը կը կեդրոնանայ այն իրողութեան վրայ, թէ իթթիհատական կառավարութիւնը կ'ուզէ ոչնչացնել հայերը, մինչ Պոլսոյ մէջ բնակող արմենականներ բարեկամ կը նկատեն Իթթիհատը:

Քանի մը օրով անոնք արմենական ընկերներու ընկերակցութեամբ կ'երթան Վարագայ լեռը՝ գանձերը փնտրելու: Կը յայտնաբերեն փասը կարասներ, որոնք սակայն հողով լեցուած էին: Անոնք պինտալ կռուի կը բռնուին քիւրտերու հետ: Շայ քաջերը 14 քիւրտ սպաննելով, կ'աւարեն անոնց վէնքերը եւ փամփուշտները: Դէպի Ռուսիա իր ճամբուն վրայ, Ջաքար սպաննուած էր հաւանաբար այս քիւրտերուն ձեռքով:

Վրայ կը հասնի Առաջին Շամաշխարհային Պատերազմը: Գնդապետ Սելիմ պէյ Վահրամի վարմուհի Արաքսիի ձեռքը կը խնդրէ, խոստանալով զիրենք բոլորը պաշտպանել գալիք չարիքներուն դէմ: Ան յաճախ Յարութինի փունը եւ խանութը կ'այցելէ: Յարութին բանակ կ'երթայ:

Ռուսերը Պաշքալէն կը գրաւեն, ապա կը նահանջեն: Թուրքերը

քրիստոնեաներուն, ասորիներուն եւ հրեաներուն մեծ ջարդ կու տան Պաշքալէի մէջ: Հրեայ Հեփթալէի, անոր դուստրն ու որդին կ'ապաստանին Վահրամենց տունը՝ ընտանիքին միւս անդամներն սպաննուած ըլլալով:

Վանի կառավարիչ Թահսին պէյը, իր տան սպասները ոսկեփոփել տալու նպատակով, Յարութիւնը բանակէն բերել կու տայ: Բանակին մէջ ծառայող արմենական Յովակիմը ականատես կ'ըլլայ հայ պիւտրներու գնդակահարման՝ խրամներ փորած ատեն: Ան կ'ապարի դուրս գալով դիակներու մէջէն եւ տուն կու գայ:

Գիւղերու մէջ ջարդը արդէն սկսած էր: Ճեւրէթ Պէյ Վանը պաշարելու վրայ էր: Արմենական Կարօն եւս հնարքով մը փախուստ կու տայ բանակէն: Դաշնակցական գործիչներ Վռամեան եւ Իշխան կ'այցելեն Յարութիւնի՝ անոր տան մէջ խորհրդակցելու համար: Իշխանն ու ընկերները կը սպաննուին նենգութեամբ, իսկ Վռամեան կը ձերբակալուի:

Վանի ինքնապաշտպանութեան կռիւները կը սկսին: Վահրամ կռուող հայ մարտիկներու խումբին մէջ կը մտնէ: Ան կը գործէ որպէս սուրհանդակ: Հայերը քաջաբար կը կռուին եւ կը յաջողին թուրքերու պորանոցը պայթեցնել: Շրջակայ գիւղերէն վերապրած գաղթական հայեր կը լեցընեն Այգեստանի տները, ինչպէս նաեւ Վահրամենց տունը: Մեծման իր տան մէջ կը խնամէ վիրատորները: Վերջապէս, ռուսական բանակը կը մտնէ Վան, եւ թուրքերը, տեղի տալով, կը նահանջեն:

Սակայն, կարճ ատեն մը ետք, ռուսերը կ'որոշեն նահանջել եւ Վանը իր ժողովուրդէն պարպել: Գաղթը կը սկսի: Մեծման եւ Յարութիւնը սայլով, իսկ մնացեալը քալելով կը հեռանան: Անոնք շատ մեծ դժուարութիւններով կ'ընթանան: Վահրամ իր հարապարները կը կորսնցնէ Բերկրիի մէջ եւ կը հանդիպի ռուսահայ պիւտրներու, որոնց հետ միասին թուրքերուն դէմ օրհասական կռիւներ կը մղէ Բերկրիի ամրոցին մօտ: Ջարդուող գաղթականներուն մէջէն ան Միհրդատ անունով պպրիկ տղայ մը կ'ապարի: Անոնք կը հանդիպին հայ գաղթական կիներու, որոնք իրենց հետ քիչ մը ուրելիք ունէին: Կիները Խաչուն գիւղէն էին:

Վահրամ եւ Միհրդատ խումբը կը կորսնցնեն եւ առանձին կը

ման: Գիշերով աստղերուն ուղղութեամբ անոնք կ'ընթանան դէպի հիւսիս: Կը հասնին Թանկուրէկի մօտերը, ուր ռուս սին-նորներ բանակած էին: Ակին մօտը կը հանդիպին Միշա անու-նով ռուս սինտորի մը, որ իրենց հոգ կը տանի: Ճամբայ կ'ելլեն դէպի Պայասիպ: Կը հասնին Քվըլտուս, ուր Վահրամ կը գտնէ իր եղբայրը՝ Վարդգէսը, Մեպուհը հիւանդ վիճակի մէջ եւ Տիգ-րան հօրեղբայրը: Վարդգէս կ'ըսէ, թէ մնացեալները սայլով Բգ-տիր գացած են: Անոնք կառքով կ'երթան Բգտիր եւ կը գտնեն միսները, սակայն Մեծման չկար: Բգտիրի մէջ Մեպուհը կը մահանայ:

Բգտիրի մէջ, Վահրամ գրադարանէն գիրքեր կ'առնէր եւ կը կարդար: Ան կը մասնակցի արմենականներու ժողովին:

Վահրամ կը մեկնի Թիֆլիս իր հօրը՝ Յարութիւնի մօտ եւ Ներսէսեան Ճեմարանի երկրորդ դասարանը կը մտնէ: Այս միջո-ցին ռուսերը կրկին կը գրաւեն Վանը: Տիգրան հօրեղբայրը կը մտադրէ Վան վերադառնալ՝ անյայտացած Մեծման փնտրելու համար:

Victor Gardon (Vahram Gakavian), "L'Apocalypse Ecarlate" [Վիքթոր Կարյոն (Վահրամ Կարաեան), «Երկակարմիր Յայրնությունը», Ֆրանսերէն], éditions Stock, Փարիս, 2008, միջակ չափի էջ 667-1027 [Առաջին տպագրություն՝ "Calmann-Levy" հրատարակչություն, 1970]:

Այս եռահատոր գիրքը առաջին անգամ ֆրանսերէն լոյս տեսած է 1970ին. առաջին երկու հատորները Աւետիս Եսփուճեանը թարգմանած է հայերէնի եւ որպէս թերթօն լոյս տեսած են «Զարթօնք» օրաթերթին մէջ 1964ին եւ 1965ին [ամփոփումը տեսնել վերը], իսկ 2008ին լոյս տեսաւ ֆրանսերէն Բ. տպագրութիւնը "Le Vanetsi, Une enfance Armenienne" («Վանեցին, Հայկական Մանկութիւն Մը») վերնագրով:



Ներկայումս գաղթականի վիճակով Թիֆլիս կը գտնուի: Մայրը՝ Աղանի, հայրը՝ Յարութիւն, հօրեղբայրները՝ Նրանդ եւ Տիգրան, պարմուտիւն՝ Սիրարփի, որդեգրուած քոյրը՝ Արաքսի եւ եղբայրը՝ Վարդգէս իր հետ եւ: Վահրամ դպրոց կը յաճախէ հինումաշ կօշիկներով:

Այդ օրերուն հայկական գաղութը Թիֆլիսի հայոց եկեղեցւոյ մէջ կ'ընդունի Ռուսիոյ Նիքոլայ Բ. ձարին այցելութիւնը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրբնեանցին ներկայութեամբ: Վահրամ հոն ներկայ է իր դասընկերներով եւ ուսուցիչներով: Զարին ներկայութեան ան երգ մը կ'երգէ՝ արժանանալով ռուսաց կայսեր 500 ռուբլի պարգեւատրութեան: Այդուհանդերձ, Վանէն գաղթելու եւ հնամաշ կօշիկներով մնալու իրականութեան պատասխանատուն 13 տարեկան պատանին ձարը կը նկատէ:

Վահրամի ամենէն մեծ մտաւարանջութիւնը իր մեծ մօր անյայ-

տրայումն է: Ան կը մտադրէ դրամ հաւաքել եւ իր մեծ մայրը՝ Ոսկեհատ Խաթունը փնտռել: Յաճախ, այդ մտադրութեան իրագործման ծրագիրներ կը մշակէ իր ուղեղին մէջ: Այս նպատակով ան առանձին կ'երթայ երկաթուղագիծի կայարանը:

Թիֆլիսի մէջ հայ գաղթականները յաճախ իրարու մօտ կու գան: Վահրամ Ֆընտրճագէն, Խնուսէն եւ այլ վայրերէ եկած պատանիներու եւ աղջիկներու կը հանդիպի:

Գաղթական աղջիկները - երեք քոյրեր - կը պատմեն, թէ թուրքերը ինչպէս Վիեննա գրած եւ հանած էին թաքստոցէն: Իրենց ամուսինները նախապէս բանակ տարուած էին: Մնացած երիտասարդները, որոնք ձերբակալուած էին, բոլորն ալ սպաննուած եւ դիակները հրապարակը իրարու վրայ նետուած էին: Այս տեղեկութիւնը «Վան-Տոսպ» թերթին մէջ կը հրատարակուի:

Վահրամ երբ կը լսէ, թէ փոխարքան Թիֆլիս պիտի ժամանէ, կը խնդրէ իրենց դրացուի Գուշանէն ընկերանալ իրեն իբր թարգման: Անոնք կ'երթան եւ կը յաջողին մօտենալ փոխարքային եւ խօսիլ հետը: Գուշան կը թարգմանէ Վահրամի խօսքերը: Վահրամ արտօնագիր մը կը խնդրէ փոխարքայէն, որ օգտակար կրնար ըլլալ իրեն՝ իր մեծ մայրը փնտռելու մէջ:

Վահրամ շոգեկառքով առանձինն կը մեկնի Երեւան՝ իր մեծ մայրը փնտռելու: Նոյն շոգեկառքին մէջ կը գտնուէր Տիգրան հօրեղբայրը: Վահրամ կը հանդիպի շատ հայերու, որոնցմէ կը փորձէ տեղեկութիւններ հաւաքել իր մեծ մօր մասին: Երբ Երեւան կը հասնի, ան Վորանոց կը դիմէ ու փոխարքային արտօնագիրը կը ներկայացնէ: Ոստիկանապետը՝ *Լէթենսնթ* (հարիւրապետ, տեղակալ) Փերթով իրեն թարգման մը եւ երեք ոստիկան կը յարկայնէ: Ար պարզուի, թէ արտօնագիրը խտրին մէջ հրաման մըն էր փոխարքայէն՝ ուղղուած Ռուսական Կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր քաղաքական եւ պինտորական հեղինակութիւններուն՝ փնտռելու եւ գտնելու Ոսկեհատ Խաթունը: Ռուս ոստիկանները Վահրամը բանտարկեալներու մօտ կ'առաջնորդեն: Անոնցմէ մէկը՝ Պաշ աղայի որդին՝ քիւրտ Ջուլիալը, կը ճանչնայ Վիեննա եւ տեղեկութիւն կու տայ Ոսկեհատ Խաթունին մասին: Ջուլիալ կ'ըսէ, թէ ինք եւ իր հայրը Վահրամին մեծ մայրը ապարած են թուրքերու ձեռքէն Բերկրիի մէջ եւ թէ ան ներկայիս

կ'ապրի իրենց աշիրէթին հետ: Վահրամ դուրս կու գայ եւ կ'աւերէ Տիգրանին, թէ Ոսկեհապ Խաթունը ողջ է: Վահրամ ներս կ'առաջնորդէ Տիգրանն ու անոր բարեկամը՝ Կարօն, որ լա քրտերէն կը խօսի: Կարօ կը խօսակցի Ջուլիային հետ: Այս միասին կը մեկնին տեսակցելու համար Երեւանի կառավարիչին հետ: Վերջինս, լսելէ ետք Վահրամին հարցը, կ'ըսէ թէ պէտք է երթալ Պայակիտ, ինչը բացարձակապէս արգիւտած էր: Վահրամ անմիջապէս ցոյց կու տայ փոխարքային արտօնագիրը: Կառավարիչը իսկոյն կը խոստանայ յաջորդ օրը առաւօտուն իրենց տրամադրել փնտորական ձիակառք մը դէպի Պայակիտ երթալու համար: Կառավարիչը նկատի ունէր այն իրողութիւնը, թէ կայսերական պահակագունդի հրամանատար Քաբիթէն (հապարապետ) Սերկէյ Ալեքսանդրովիչ Պեհպութովը, բացառիկ առաքելութեամբ մը կը գտնուի Պայակիտ: Կառավարիչը Պեհպութովին ուղղուած նամակ մը կը յանձնէ Վահրամին: Հրաժեշտի պահուն, Երեւանի կառավարիչը մինչեւ դուռը կ'ողտկայի Վահրամին:

Յաջորդ օրը, փնտորական ձիակառքը Վահրամը եւ Տիգրանը Երեւանէն Պայակիտ կը փոխադրէ: Երեւանէն տասը վանեցի ձիատրներ իրենց կ'ընկերանան: Պայակիտի փորանոցին մէջ Վահրամ Քաբիթէն Պեհպութովին կը յանձնէ Երեւանի կառավարիչին նամակը: Քաբիթէնը կը յօժարի օգնել իրենց, արտօնելով որ քիւրտ Ջուլիայը բանտէն արձակուի եւ իրենց ընկերակցի մինչեւ իր գիտը, ուր կը գտնուի Ոսկեհապ Խաթունը: Պեհպութովը անձամբ, վեց քապարներ եւ վանապան ոլորտներու մասնագէտներու խումբ մը կ'ընկերանան իրենց: Ճամբուն ընթացքին Պեհպութով կը պրուցէ Վահրամին հետ: Խօսակցութեան ընթացքին Վահրամ կ'ըսէ, թէ Վանի մէջ իր հայրը եւ ընկերները հայոց բնաջնջումի հրամանները յայտնաբերած են: Նախապէս այս վայրերէն անցած Տիգրանը կը վերջիջէ այդ տեղերը ինկած հայ նահապարակներու դիակներուն տեսարանները:

Խումբը Մուշ կը հասնի: Ճամբուն վրայ կը հանդիպին հայոց, որոնք թուրքին ձեռքէն փախչելով սահմանը կ'անցնէին: Պեհպութովի խումբը ճամբուն վրայ օրինապանց թուրքեր եւ քիւրտեր կը ձերբակալէ:

Վահրամ եւ Ջուլիա իրենց հանդիպած քիւրտ մը կը հարցու-

փորձեն: Ան կը տեղեկացնէ, թէ Ոսկեհապ Խաթունը կը գտնուի Միրափան լեռներուն շուրջը, որ իրենց գտնուած վայրէն երկու երեք օրուան ճամբայ հեռու էր: Պեհպոթովին ընկերակցող բժիշկը կ'ըսէ, թէ հոն կարելի է հանդիպիլ Ռուբէն փաշային:

Տիգրան եւ Վահրամ կը խօսակցին վերապրող հայ կանանց հետ, որոնք իրենց տառապանքը կը պատմեն: Կ'անցնին Արածանի գետին վրայի Մուրվսի կամուրջէն ու կը հանդիպին Ռուբէն փաշային: Վահրամ կը տեսակցի անոր հետ: Այս մեծ խումբը ժողով մը կը գումարէ եւ կ'որոշէ փնտրուիլ շարունակել: Խումբը Մուշ կը վերադառնայ: Ռուբէն փաշայի օգնականները՝ Մուշեղ եւ Մկօ, աշխոյժ կերպով կ'օգնեն խումբին: Անոնք ճամբուն վրայ կը վերցնեն հայ վերապրող աղջիկ մը, Թագուհի անունով:

Խումբը կը հասնի Գարապեկան, ուր Զուլհալի հայրը կը գտնուի: Այստեղի քիւրտերը կ'ըսեն, թէ Ոսկեհապ Խաթունը տասը օր առաջ դէպի Երզնկա մեկնած է: Պեհպոթով կը հանդիպի Պաքունէ եկած թուրք պինտորական Քապիւհի, որ հայոց դէմ կ'արտայայտուի: Գիւղի մը մէջ կը հանդիպին Արմէն անունով թրքացած հայ տղու մը, որ իր հայրը կեղեքող եւ սպաննող Բարահիմ պէյի տունը ցոյց կու տայ: Այնտեղ քանի մը թրքացած հայ աղջիկներ կը գտնեն եւ կ'ազատեն զանոնք: Երբ կը յառաջանան Երզնկա տանող ճամբուն վրայ՝ հայոց դիակներ կը տեսնեն: Վահրամ, Զուլհալ եւ Տիգրան Երզնկայի մօտակայ Բոլմոր գիւղը կը մտնեն գամփռի մը առաջնորդութեամբ: Հոս Վահրամ վերջապէս կը գտնէ իր մեծ մայրը՝ Ոսկեհապ Խաթունը, քիւրտի մը շքեղ տան մէջ: Մեծ մայրը հարց կու տայ Վահրամին, թէ ինչո՞ւ Վան չեն վերադարձած: Վահրամ կ'ըսէ, թէ Ռուսիոյ ձարը հայոց Վան վերադարձը չի փափաքիր: Ոսկեհապ Խաթունը կը հարցնուի որ՞ով Վահրամը իրենց ընտանեկան պարագաներուն մասին: Վահրամ իր մեծ մօրը կը պատմէ իր փնտրուիլին բոլոր մանրամասնութիւնները: Այս քիւրտին շքեղ տան մէջ խումբին անդամները կը պրուցեն տեղի ունեցած բոլոր անցուցարձերուն մասին: Հիմնական նիւթը հայկական ջարդերն են...: Ալմաստ անունով հայ աղջիկ մը կը ծառայէ այս տան մէջ:

Խումբը վերադարձի ճամբան կը բռնէ՝ Ոսկեհապ Խաթունը եւ

թրքացած ու քրդացած հայ աղջիկներ եւ մանչեր իր հետ առնելով: Անոնք Թիֆլիս կը հասնին: Մեծ մայրը Յարութիւնին եւ միսնէրուն կը միանայ:

Վահրամ կը վերադառնայ դպրոց ու կ'իմանայ, թէ պարմութեան ուսուցիչը Միպերիա արտորուած է, իսկ ուրիշ ուսուցիչներ հայկական կամատրական շարժման միացած են: Դասարանին մէջ Վահրամ կ'առաջարկէ Անի քաղաքը այցելել դպրոցական կազմով: Պարմութեան նոր ուսուցիչը գաղափարը կը հանի, իսկ Կոնստանտնուպոլիս կը վաերայնէ: Շոգեկառքով ճամբայ կ'ելլեն: Վահրամի այս շրջապարտիւն ընկերակցողներէն է Անաստաս անունով դասընկեր մը, որու հետ Վահրամ կը խօսակցի: Կ'անցնին Ղարաբաղ, Մանահին, Լավար եւ Բարսիլի գիւղերէն ու Անի կը հասնին:

Սկզբնական շրջանին, ռուսերէնի դասընթացները Վահրամին դժուար կը թուին:

Վահրամի հայրը՝ Յարութիւնը արմենականներու հանդիպում մը կը կազմակերպէ: Անոնք կը նշեն Վանի ինքնապաշտպանութեան առաջին փորձարձը: Մէկ վայրկեան յոյնկայս լռութեամբ կը յիշեն Վանի մէջ եւ գաղթականութեան ճամբուն վրայ ինկած նահապակները:

Ոսկեհար Խաթունը անյայտ կորսուած համարուող իր պաւկէն՝ Վահրամէն (որու անունով կոչուած էր թոռը՝ Յարութիւնի որդի Վահրամը) ծրար մը գրութիւններ կը ստանայ: Երէջ Վահրամը օսմաներէն կը պարմէ իր կեանքին պարմութիւնը: Ան Պոլիսէն անցած էր Արանա, ապա Ղալէպ, հասած Տիգրանակերտ, թրքացած եւ Պահրամ պէյ անունն ընդունած: Ան Տիգրանակերտի վիճակական հրամանատարի պաշտօնին նշանակուած էր: Իր պաշտօնավարութեան շրջանին ան հոգ կը փանի հայոց եւ կը պաշտպանէ վանոնք: Տեղասպանութեան փորձերուն ապրած անոր կեանքը ցոյց կու տայ փառապող հայոց դրուագները: Ան կապ ունէր թուրք բարձրաստիճան բազմաթիւ վիճակականներու հետ: Անոնց միջնորդութեամբ եւ օգնութեամբ՝ փախստական եւ փառապող շարք հայեր կ'ապարէ: Ան կը պարմէ նաեւ Եդեսիոյ ինքնապաշտպանութեան հետ առնչուող դէպքեր, մանաւանդ Մկրտիչ Եօթնեղբայրեան հերոսին մասին:

Յարութիւն կը մեկնի Վան, ուրկէ նամակով մը կ'իմացնէ, թէ իրենց րունը քանդուած է, մրգաստանը եւ այգին՝ չորցած, ջուրերը՝ ցամքած:

Օր մը, երբ Վահրամ դպրոց կ'երթայ, ճամբան քիչ մը ամայի կը գտնէ: Դպրոց հասնելուն, կ'իմանայ, թէ յեղափոխութիւն ծագած եւ ձարը տապալած էր:

Մեծ մայրը Թիֆլիսի մէջ պարտէզով րուն մը կը գնէ իրենց համար:

